ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

(Վերախմբագրված հրատարակություն)

891.981

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա 109628

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՊՈԵՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 821.19-1Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Թ 950

Թումանյան Հովհաննես
Թ 950 Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով. Հովհ. Թումանյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2019.
Հատոր երրորդ: Պոեմներ.- 584 էջ:

ՀՏԴ 821.19-1Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)-5

Հատորը հրատարակվում է Արտաշես և Անահիտ Թումանյանների ընտանիքի հովանավորությամբ:

ISBN 978-9939-1-0881-0
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2019

Հովհաննես Թումանյանի տասը հատորով երկերի լիակատար ժողովածուի վերահրատարակման խմբագրական կոլեգիայի կազմը

(ցանկը բերվում է այբբենական կարգով)

Խմբագրական խորհրդի նախագահներ՝ Դևրիկյան Վարդան, բ.գ.դ., Թուխիկյան Նարինե, տեղակալ՝ Կիրակոսյան Վլադիմիր, բ.գ.դ., պրոֆ., պատասխանատու քարտուղար՝ Եղիազարյան Անի, բ.գ.թ.

Աբեղյան Հասմիկ (բ.գ.թ.), Ավետիսյան Զավեն (բ.գ.դ., պրոֆ.), Դոլուխանյան Աելիտա (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Եղիազարյան Ազատ (բ.գ.դ., պրոֆ.), Իսահակյան Ավետիք (բ.գ.դ., պրոֆ.), Հովհաննիսյան Սուսաննա (բ.գ.դ.), Մարգարյան Միրանուշ (բ.գ.թ., դոցենտ), Մկրտչյան Նունե (բ.գ.թ., դոցենտ), Մնացականյան Եվա (բ.գ.թ., դոցենտ), Մուշեղյան Ալբերտ (բ.գ.դ.), Մուրադյան Սամվել (բ.գ.դ., պրոֆ.), Որսկանյան Հերիքնազ (բ.գ.թ.), Սուվարյան Յուրի (ակադեմիկոս)

Վերահրատարակության բնագրերը պատրաստեցին՝
Հասմիկ Աբեղյանը և Անի Եղիազարյանը
Ծանոթագրությունների խմբագրումներն ու լրացումները՝
Վ. Դևրիկյանի

Հատորի խմբագիրներ՝ Վլ. Կիրակոսյան, Ա. Եղիազարյան

ԳԴԳ 84Հ1
Թ 950

Տպագրվում է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

Էդ. Մ. Ջրբաշյան *(գլխավոր խմբագիր)*, Խ. Մ. Գյուլնազարյան, Թ. Հ. Թումանյան, Լ. Մ. Կարապետյան, Լ. Հ. Հախվերդյան, Գ. Հ. Հակոբյան, Հ. Կ. Հովհաննիսյան, Ս. Ն. Սարինյան

Բնագրերը պատրաստեցին
Ֆ. Ս. Հակոբյանը և Ա. Մ. Վարդանյանը

Նախաբանական հոդվածը և ծանոթագրությունները՝ Էդ. Մ. Ջրբաշյանի

Հատորի խմբագիր՝ Հ. Կ. Հովհաննիսյան

ОВАНЕС ТУМАНЯН
ПОЛНОЕ СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
в десяти томах
Том третий
Поэмы
(на армянском языке)
Издательство АН Армянской ССР
Ереван, 1989

© Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989
Մեջբերումների համար

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի վերահրատարակության այս հատորում ևս կառուցվածքային որևէ վերանայում չի արվել. խմբագրական ու սրբագրական միջամտությունները մեծ մասամբ ոչ սկզբունքային մասնավոր բնույթ են կրում:

1. Տողատակերին ավելացվել են դժվար հասկանալի և հնացած բառերի ու արտահայտությունների բացատրությունները, երբեմն նաև հեղինակայինները, որ նախորդ հրատարակության մեջ անուշադրությամբ նկատի չեն առնվել:

2. Ուղղվել են բացահայտ ուղղագրական վրիպակները:

3. Ինքնագրերի և այլ սկզբնաղբյուրների հիման վրա վերականգնվել են մի շարք բառերի հեղինակային մեծատառով գրությունը: Դրանցից են Տեր, Աստված, Արարիչ, Բարձրյալ և այդ իմաստով գործածված Նա, Ինքը, Նրան, Իրեն և այլ բառաձևեր, որոնց փոքրատառով գրությունը նախորդ հրատարակության մեջ իր հայտնի պատճառն ուներ:

4. Ճշգրտվել են ինքնագրում սխալ ընթերցված կամ անընթեռնելի համարված որոշ բառեր:

5. Տարբերակների և սևագիր ու անավարտ գործերի բաժիններում ավելացվել են առանձին տողերի նոր տարբերակներ:

6. «Անուշի» բնագիրը պատրաստելիս նկատի է առնվել նաև պոեմի «Ժամանակակից» մատենաշարով առանձին հրատարակությունը (Կ. Պոլիս, 1921), որ նախորդ հրատարակության մեջ վրիպել է ուշադրությունից:

7. Որոշ խնդիրներ են առաջացել «Դարձ» սևագիր պոեմի բնագիրը պատրաստելիս: Այդ բնագիրը առաջին անգամ տպագրվել է «Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» հինգհատորյակի առաջին գրքում (1964) ամբողջապես չափածո ձևով: ԵԼԺ 3-ի խմբագրությունը, տպագիր տեքստը համեմատելով պահպանված ինքնագրի հետ, պարզել է, որ պոեմի մի քանի հատվածներ գրված են արձակ: Այդ ձևով էլ զետեղվել է ակադեմիական հատորում: Վերահրատարակության

խմբագրությունը, երկու տպագիր բնագրերը նորից համեմատելով միմյանց և արդեն բավական քայքայված և դժվարընթեռնելի ինքնագրի հետ, նպատակահարմար գտավ վերահրատարակության մեջ նույնությամբ պահպանել ակադեմիական հրատարակության բնագիրը՝ մի քանի բառերի ճշգրտումով:

8. Զգալի լրացումներ են կատարվել ծանոթագրությունների բաժնում՝ կապված ավանդական ժողովրդական հավատալիքների և եկեղեցական ծիսակարգերի հետ, որոնք կարևոր նշանակություն ունեն պոեմների բնագիրը ճիշտ մեկնաբանելու համար:

ՊՈԵՄՆԵՐ

ՄԱՐՈՆ

I

Մեր գյուղն էն է, որ հրպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին՝
Ձեռը տրված ճակատին՝
Միտք է անում տրխրադեմ.
Ինչ է ուզում՝ չըգիտեմ...
Պաս չենք էնտեղ մենք ուտում,
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն օր.
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վընաս
Գալիս են մեզ անպակաս:
Ահա պատմեմ ձեզ մի դեպք,
Մի պատմություն, որ երբեք
Հիշատակով տրխրալի
Սըրտիս հանգիստ չի տալի:

II

Մեր գյուղից վեր մինչ էսօր
Կա ուռենի մի սրգվոր:
Մեծ անտառից նա զատված,

20 Մարդու կացնից ազատված՝
Կանգնած է դեռ ու շոգին
Հով է տալի մըշակին։
Գիժ, լեռնային մի վըտակ
Խոխոջում է նըրա տակ,
25 Խաղում կանաչ մարգերին։
Էն առվակում կեսօրին,
Երբոր շոգից նեղանում,
Գընում էինք լողանում։
Տըկլոր, աշխույժ խըմբակով,
30 Աղաղակով, աղմուկով
Խաղում էինք, վազվըզում
Գույն-գույն մանրիկ ավազում։
Կամ հետևում հևիհև
Թիթեռնիկին ոսկեթև,
35 Ու միշտ հոգնած ժամանակ,
Էն մենավոր ծառի տակ
Նըստում տըխուր մի քարի,
Գերեզմանին Մարոյի...

Մարո՛, անբա՛խտ, վաղամե՛ռ,
40 Դու մանկությյան իմ ընկեր,
Ո՞րքան ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՛լ...

III

Ժիր էր Մարոն, դուրեկան,
Նոր էր ինը տարեկան,
45 Նըրանց տունը երբ մի օր

Եկան երկու եկավոր:
Ու Մարոյի մայրիկը
Երբ որ բերավ, դրավ լիքը
Խոնչեն նըրանց առաջին,
50 — Շնորհակալ ենք մենք, ասին.
Տաշտներըդ լի հաց լինի,
Դուռներըդ միշտ բաց լինի.
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տըվեք մեզ ձեր տանից...
55 Էն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն ու ասաց.
— Կամքըդ լինի, տեր Աստված...
Նըշանեցին Մարոյին,
60 Տըվին չոբան Կարոյին:

IV

Չոբան Կարոն սարերի
Մի հովիվ էր վիթխարի.
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարզանդ էր գալիս.
65 Բայց զոքանչը անսահման
Սիրում, փարում էր նըրան:
Շատ էր սիրում և Մարոն.
— Լավն է, ասում էր, Կարոն,
Բերում է ինձ ամեն օր
70 Կանփեթ, չամիչ ու խընձոր...

V

Մին էլ Կարոն աղմուկով
Եկավ զուռնով-թմբուկով,
Ու Մարոյին զուգեցին,
Երեսին քող ձրգեցին,
Հինա դրրին ձեռքերը...
Եկավ խաչով տերտերը,
Տարավ ժամում կանգնեցրեց.
— Տեր ես, որդյա՛կ, հարցրրեց:
— Տեր եմ, ասավ մեր Կարոն,
Լուռ կանգնած էր միշտ Մարոն...
Հայրն էլ եկավ ու ծեսին
Էսպես օրհնեց իր փեսին.
— Ջաղացիդ միշտ հերթ լինի,
Մեջքդ ամուր բերդ լինի...
Իսկ երբ հնչեց «տարան-հա՛»-ն,
Նրրան փեսի տուն տարան:
Պսակեցին Մարոյին,
Տրվին չոբան Կարոյին:

VI

Թե գրրբացի չար ջանքով,
Գիր ու կապով, բրժժանքով
Մանուկ սիրտը կրտրեցին,
Կամ թե նրրա հանդերձին,
Էն անհոգի չար ջադուն
Քրսեց գիլի ճրրագուն...

95 Էդ չիմացավ ոչ ոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարոն ատեց իր մարդուն.
Փախավ, եկավ ետ հոր տուն:
Եկավ լացեց նա վըշտոտ.
100 — Ես չեմ գընալ նրա մոտ.
Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինեմ կին...

VII

Հայրիկն էնժամ բարկացավ,
Ծեծեց նըրան ու ասավ.
105 — Դո՛ւրս իմ տանից, սևերե՛ս,
Ետ չընայես դեպի մեզ,
Ոտ չըդնես էլ տունրս,
Մըրոտեցիր անունս...
Լալով, ծածկած իր դեմքը,
110 Թողեց Մարոն հոր շեմքը:

VIII

Ու հալածված իր հորից,
Փախած չոբան Կարոյից,
Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով:
115 Կուչ էր գալիս խըզճալի
Օջախի շուրջ օտարի

Կամ թափառում մեն-մենակ
Մեր հանդերում շարունակ:

IX

Շատ ամիսներ անց կացան...
Դիմաց սարից մի չոբան
Ձեն էր տալիս մի օր մեզ,
Թե՝ իմացեք, որ էսպես
Կարմիր շորով մի խիզան
Ընկավ ձորը, մի կածան...
Դուրս թափվեցինք մենք գյուղից,
Հեռու կանգնած, երկյուղից,
Տեսանք՝ ահեղ էն ձորում
Ոնց էր լալիս ու գոռում
Մարոյի հայրն ալևոր,
Մայրը ճըչում սրգավոր:
Շատ լաց եղավ և կարոն...
Մեռա՛վ, գնաց մեր Մարոն:

X

Սակայն անբախտ նըրա դին
Պապի կողքին չըդըրին:
Գյուղից հեռու մինչ էսօր
Կա ուռենի մի սրգվոր:
Էն մենավոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,

Առանց ժամ ու պատարագ
Մեջը դըրին Մարոյին,
Էն սև քարն էլ տաշեցին,
Բերին վըրեն քաշեցին:

XI

Շատ եմ տեսել, երբ սըգվոր
Մայրը մենակ, սևաշոր,
Կորանալով էն քարին՝
Ձեն էր տալիս Մարոյին.
— Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՛ն,
Ո՞վ անիծեց, Մարո ջա՛ն,
Ո՞ւր փախար դու, Մարո ջա՛ն,
Տուն արի՛, տո՛ւն, Մարո ջա՛ն,
Խո՛ր ես քընել, Մարո ջա՛ն,
Ձե՛ս զարթնում էլ, Մարո ջա՛ն...
Կորանալով էն քարին՝
Ձեն էր տալիս Մարոյին.
Խունկ էր ծըխում, մոմ վառում,
Որ գիշերվան խավարում
Փայլփըլում էր մեն-մենակ
Հեռվից երկար ժամանակ:

Ա 109698

ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

I

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:

Ներանց ոտքերում՝ գազազած գալի՝
Գալարվում է գիժ Դև-Բեդը մոլի,
Խելագար թրռչում քարերի գլխով,
Փրրփուր է թքում անզուսպ երախով,
Թքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
— Վա՜շ-վի՜շ, վա՜շ-վի՜շ...

Մութ անձավներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ՝ հրտպիտ՝ ձայներով
Դևի հառաչքին արձագանք տալի,
Ծաղրում են նրրա գոռոցն ահռելի

*Հրտպիտ - խեղկատակ, ծաղրածու, միմոս

Ու կըրկնում են գիժ-գիժ.
— Վա՜շ-վի՜շ, վա՜շ-վի՜շ...

Գիշերը լուսնի երկչոտ շողերը
20 Հենց որ մըտնում են էն խավար ձորը՝
Ալիքների հետ խաղում դողալով,
Անհայտ ու մռայլ մի կյանքի գալով՝
Ոգի է առնում ամեն բան էնտեղ,
Շընչում է, ապրում և մութն և ահեղ:

25 Էս տախտի վըրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կըռինչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գլխից, լուռ մարդու նման,
30 Նայում է ձորին մի հին խաչարձան:

II

Էն ձորի միջին ահա մի տընակ:
Էնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ:
Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.
Սատանի նման՝ նա էլ էս գիշեր
35 Գընացել է տուն: Սարերի չոբան —
Գյուղիցը հեռու, հազար ու մի բան,
Ով գիտի՝ պարկում շընալի՞ր չըկար,
Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար,
Ուզեց զոքանչի ձըվածեղ ուտել,
40 Թե՞ նըշանածին շատ էր կարոտել —

Ոչխարը թողել՝ գնացել է տուն:
Այնինչ՝ համկալը հենց առավոտը
Դեպի սարերը քշեց իր հոտը:
Ու Սաքոն անքուն,
45 Թաց տըրեխները հանել է, քերել,
Գուլպան բուխարու վըրա կախ արել
Ու թինկը տըվել,
Մեն- մենակ թըթվել:

III

Թեկուզ և մենակ լինի փարախում,
50 Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում:
Հապա մի նայի՛ր հըսկա հասակին,
Ո՞նց է մեկնըվել: Ասես ահագին
Կաղնըքի լինի անտառում ընկած:
Իսկ եթե տեղից վեր կացավ հանկարծ,
55 Գըլուխը մեխած մահակը ձեռին՝
Ձեն տարավ, կանչեց զալում շըներին
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպես սար,
Էնժամ կիմանաս, թե ընչի համար
Թե՛ գող, թե՛ գազան, հենց դատարկ վախից,
60 Հեռու են փախչում նըրա փարախից:

Ու իրեն նըման իրեն ընկերներ
Ապրում են սիրով երեխուց ի վեր:
Աստծու գիշերը գալիս են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են օդեն,
65 Շրհուն ու պըկուն խառնում են իրար,
Ածում են, խաղում, խընդում միալար...

IV

Բայց խուլ ու խավար օդում էս գիշեր
Մենակ է Սաքոն ու չունի ընկեր:
Բուխարու կողքին լուռ թինկը տրված
Մըտածում է նա... ու մին էլ հանկարծ,
Որտեղից որտեղ, էն ձորի միջին
Միտն եկան տատի զըրույցները հին...
Միտն եկան ու մեր Սաքոն ակամա
Սկսավ մըտածել չարքերի վըրա,
Թե ինչպես ուրախ խըմբով միասին,
Ծուռը ոտներով գիշերվան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած,
Երևում են միշտ միայնակ մարդկանց...
Կամ ինչպես քաջքերն այրերի մըթնից,
Երբ նայում է մարդ քարափի գըլխից
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով,
Ու մարդկանց նըման խընջույք են սարքում,
Ջուռնա են ածում, թըմբուկ են զարկում...
Ու տատի խոսքերն անցյալի հեռվից
Ուրվաձայն, երկչոտ հընչեցին նորից.

— Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի՛ մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Սիրուն-ջահել հարսն-աղջիկ:

Ինձ մոտ արի՝ ձվածեղ անեմ...
Ինձ մոտ արի՝ բըլիթ տամ...

Ես քո հոքիրն... ես քո նանն եմ...
Ես էլ ազիզ բարեկամ...

95 Սաքո՜, Սաքո՜, մեզ մոտ արի,
Էս աղջիկը, տե՜ս, ինչ լավն ա...
Տե՜ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Տարա-նի-նա՜... տարա-նա-նա՜...

Ու խոլ պատկերներ տրգեղ, այլանդակ,
100 Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց
Երևութք եղան, անցնում են կամաց,
Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Չար ժըպիտներով ժանտ ու սևերես...

V

105 Սրընթաց պախրա՞, թե գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Այծյա՞մը հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գըլորեց ոտով,
Գիշերվան հովից տերև՞ն էր դողում,
110 Երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Թե՞ ոչխարների թույլ մընչոցն էր այն,—
Սաքոյին թըվաց, թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վըրա,
Կանգնեց ու լըռեց...
115 Ականջ դըրավ նա...

VI

— Ո՞վ հող թափեց բուխուրակից...
էն ո՞վ նայեց լիսածակից...
էս ո՞վ կըտրից անցավ թեթև,
Շունչ է քաշում դրռան ետև...
— Ո՞վ ես, էհե՛յ... ի՞նչ ես անում.
Ի՞նչ ես լըռել, ձեն չես հանում...

Պատասխան չըկա. լըռության միջում
Ջորագետն է միայն մըրափած վըշշում:
— Հա՛, իմացա, Գևոն կըլնի.
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...
Վախեցնում է... հա՛, հա՛, հա՛, հա՛...
— Գևո՛...
Ձեն - ձուն չըկա:

Միայն ահավոր լըռության միջում
Ջորագետն է խուլ, մըրափած վըշշում:
Եվ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին.
Քընած է աշխարհ, քընած է քամին.
Անքուն չարքերը չեն միայն քընած,
Վըխտում են ուրախ՝ ձորերը բըռնած,
Խավարում կազմած դիվական հանդես,
Վազում, վազվըզում ըստվերների պես,
Մինչև որ մենակ մի մարդ կըգըտնեն,
Ճիչով-քըրքիջով... փարախը մըտնեն...
Աչքերը հանգչող կըրակին հառած՝
Ծանըր է շնչում հովիվն ահառած,

Ու վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու:
— Չէ՛, քամին էր էն... էն գիլի շըվաք...
Էն աստղերն էին աչքերի տեղակ,
Որ լիսածակից ներս էին ընկել...
Ուզում էր վերև մըտիկ տա մեկ էլ՝
Ու սիրտ չի անում:
Ականջ է դընում...
Գալիս են կըրկին թեթև, կամացուկ
Դրռան ետևից փըսփըսում ծածուկ.
— Էստեղ է նա,
Հա՛, հա՛, հա՛, հա՛.
Տե՛ս-տե՛ս, տե՛ս-տե՛ս.
Նայիր էսպե՛ս,
Մըտիկ արա՛,
Հա՛, հա՛, հա՛, հա՛...
Սաքոն շարժվեց փըշաքաղած,
Դեպի շեմքը նայեց, դողաց...
Շըրըխկ... հանկարծ դուռը բացվեց,
Թուրք կանանցով տունը լըցվեց,
Տունը լըցվեց թուրք կանանցով,
Ճիչ-գոռոցով, հըռհըռոցով...

VII

Ահռելի ձոր է: Մի կըտոր լուսին
Նայում է գաղտուկ, թաքչում ամպերում:
Էն մութ, ահավոր գիշերվա կիսին
Վազում է Սաքոն Լոռու ձորերում:

Զարքերը ընկած նըրա ետևից,
Հերարձակ խըմբով, ճիչ-աղաղակով՝
Հասնում են մեջքին, բռնում են թևից,
170 Զարկում են, զարկո՛ւմ օձի մըտրակով...
Քաջքերն էլ այրից զուռնա-դըհոլով
Ճըչում են, կանչում ծանոթ ձայներով.

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք,
175 Տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք գալի՝
Սիրո՛ւն, ջահել հարսն-աղջիկ:

Ինձ մոտ արի՝ ձվածեղ անեմ...
Ինձ մոտ արի՝ բըլիթ տամ...
Ես քու հոքիրն... ես քու նանն եմ...
180 Ես էլ ազիզ բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Էս աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի.
Տարա-նի-նա՛... տարա-նա-նա՛՛...

185 Այնինչ Դեբեդից ալքեր են թրուչում,
Ալիքներն ելնում, ալիքներն ուռչում,
Խավարի միջին ծըփում են կայտառ՝
— Բըռնեցե՛ք, փախա՛վ Սաքոն խելագար...

1889

ԱԼԵՔ

I

Ինչ փարթամ է Արմենիան,
Ինչ սիրուն է, աննման.
Լեռներ չքնաղ, հովասուն
Կատարներով պսպղուն.
Ծեր ծմակներ ծառախիտ,
Ջրեր անուշ ու վճիտ.
Դաշտեր բերրի, արգավանդ.
Եվ լիություն երկնավանդ.
Երկինքը ջինջ, բաց կապույտ,
Ամպերն ազատ և անփույթ,
Թեթև, անհետ, իբր անուրջ,
Պտտվում են նրա շուրջ.
Ջնաշխարհիկ այն երկրին
Մարդիկ դրախտ կոչեցին:
Ոչ դրախտ է, ոչ եդեմ,
Բայց Աստուծո, բախտի դեմ,
Չէ տրտնջում տեղացին,
Այլ յուր ամոթն երեսին,
Հարևանի հետ միշտ հաշտ
Ունենում է սար ու դաշտ:
Նա առողջ է և զվարթ,
Դեմքը կարմիր, ինչպես վարդ,
Բայց թե ուժը յուր բազկի

Չէ գործ դնում չար ճամփի.
25 Իրան դառը քրտինքով
Աշխատում է անվրդով:
Հենց եզերքն հորիզոնի
Վաղորդյան շառագունի,
Գոհանում է Արարչից—
30 Մաճկալը բռնած մաճից,
Երեսին խաչ է հանում,
Գնում իրան վարն անում,
Հովիվն էլ դեպ արոտը
Քշում տանում է հոտը.
35 Եվ խաղաղ էր նրա կյանքը,
Կարծես, Աստծո օրհնանքը
Նրա վերա իջել էր:
Անդորրությամբ աճել էր
Այս ժողովուրդը բարի.
40 Սակայն, ահա, այս տարի
Հայտնվեցավ թուրք Ալին,—
Մի պատուհաս երկնային:

II

Ալին ծեծեց... Ալին տարավ...
Ալին այսօր թալան արավ.
45 Ալին երեկ մարդ սպանեց.
Ալին սարիցն ապրանք քշեց.
Կրակ տվեց սրա դեզը,
Խլեց նրա մի լուծ եզը.
Ալին հանդում քաղվոր ճանկեց,
50 Մի նորահարս առևանգեց.

Ալին ծեծեց... Ալին տարավ...
Ալին խլեց... Ալին կերավ...

III

«Ո՞վ է Ալին, այդ լիրբ թուրքը,
Հարցրեց մի օր քաջ Ալեքը.
55 Ինչ է շինում մեր սարում նա,
Որ սպանի կամ գողանա»,—
Եվ սնաչից* կախ արած
Հրացանն առավ ու գնաց:

IV

«Ալե՛ք, Ալե՛ք, ո՞ւր ես գնում,
60 Վա՛յ իմ գլխին, ի՞նչ ես անում.
Այն գազանից հեռու կացիր,
Արի՛, որդի՛, արի, դարձի՛ր,
Գեթ խնայիր քո խեղճ նանին.
Քեզ կըսպանի այն հարամին:
65 Հարևաննե՛ր, ինձ օգնություն
Եկե՛ք, հասե՛ք, Աստծու սիրուն.
Եկե՛ք, հասե՛ք, որդուս կալեք.
Փախա՛վ, գնա՛ց, Ալե՛ք, Ալե՛ք...»:
Խեղճ պառավը դողդողալով,
70 Յուր ծնկանն ու գլխին տալով,

*Սնաչա - վրանի մեջտեղի միակ սյունը, որի վրա ամրացնում են ճիպոտները վրանի (հեղ.):

Նայեց, մինչև Ալեքն անցավ
Դիմացի սարն, անհայտացավ:

V

Բայց տեսել ես այն լեռները,
Որոնց հպարտ կատարները,
75 Թանձր մեգով փաթաթված,
Ճերմակ ձյունով են միշտ պատած.
Գագաթներից այն ձյունապատ,
Պսպղալով, ինչպես արծաթ,
Աղբյուրներից գոյացած
80 Վտակները իջնում են ցած
Եվ ոռոգում են լիառատ
Հովիտները դալարազարդ:
Երկնահամբույր այն լերանց
Օդը բուրմունք է ծաղկանց.
85 Հովիվ Ալեքն այն սարերում
է մեծացել, միշտ ոչխարում:
Յուր սիրելի շների հետ
Դեպի լանջերն խոտավետ
Ամեն Աստծո առավոտ
90 Ոչխարը տանում է արոտ.
Իրիկները մութն ընկնելիս
Բերում, ուրթումն* արխաջ** տալիս,
Նստում իրանց պարզ վրանում

*Ուրթ - այն որոշյալ տեղն է, ուր արձակում են վրանները սարվորի (հեղ.):

**Արխաջ - ոչխարին գիշերվան մնալու, հանգստանալու տեղն է (հեղ.):

Ու ղովտիցը* շհուն հանում,
95 Ածում, կանչում, զվարճանում,
Մինչև հոգնում է, քունը տանում:
Նա բարի է, խոնարհ և հեզ,
Իրան անմեղ գառների պես,
Բայց և... ահա այսօր
100 Հրացանն առավ ու գնաց, որ
Ղաչաղ թուրքին անե հարցում —
Ինչ է շինում այդ սարերում:

VI

Վերջալույսի վառ շողերը
Կանաչ լերանց այն կողերը
105 Ոսկեզօծել են, և կիզում,
Բարի գիշեր են ասում:
Այս ժամերին այն սարերում,
Երբ տավարը կիթ են բերում
Հարայ հրոց է միշտ լինում.
110 Սակայն այսօր թուրքի բինում,
Որ մարդկանցից էլ դատարկ է,
Ուրիշ աղմուկ, աղաղակ է.
Շուն չէ հաչում, կով բառանչում,
Կանայքն են միայն «հարա՛յ» կանչում:

*Ղովտ - սրնգի երկայնությամբ սնամեջ փայտ է, նրա մեջ են պահում սրինգը - շվին (շհու) (հեղ.):

VII

115 Իսկ այն ո՞վ է այս ժամանակ
Կանաչ հովտում պառկած մենակ,
Անփույթ փռել է ձեռքերը:
Ապա ո՞ւր են յուր զենքերը.
Եթե, իրավ, իգիթ է նա,
120 Թող վեր կենա, ճամփեն գնա,
Թե մի ճամփորդ է նա հոգնած,
Կամ թե հովիվ անուշ քնած:
Սակայն ահա, նայի՛ր, վերի
Մոտիկ բինից թուրք սարվորի
125 Կարմրագգեստ մի խումբ կանանց
Արագաքայլ գալիս է ցած.
Եկավ ահա, եկավ հասավ,
Եվ հենց արնոտ այն դին տեսավ,
Ճիչ արձակեց մի ցավալի,
130 «Վա՜յ իմ Ալի, իգիթ Ալի...»:

VIII

«Հավա՜ր, հասե՛ք, այն սնիծված
Շուն Էրմանին դեսը գնաց,
Ա՛խ, թե թվանք ունենայի
Մի գնդակով կըսպաններ:
135 Այն Ալեքն էր, ճանաչեցի,
Դիմաց սարից նկատեցի,—
Վրա տվեց երբ այն դալին,
Թվանքն առավ իգիթ Ալին,
Ու քիչ մնաց, պրծած բան էր,

140 Որ դուշմանին պիտի սպաներ,
Բայց ընկերներն իսկույն կորան
Եվ էրմանին հաղթեց նորան։
Նրանց գլխին կընկա լաչակ,
Անունները դրած ղաչաղ,
145 Ջամաչեցին գեթ փափախից,
Փախան անսիրտ հայի վախից...
Գնդակահար ընկավ Ալին,
Նրա խանչալն և այնալին,
Որ արծաթով էր պատած զուտ
150 Տարավ հաղթողըն այն անգութ,
Տարա՜վ, փախա՜վ... դեսը գնաց...»։
Ձեռքն Ալեքի ճամփին մեկնած
Մղկըտալով բոթաբերը
Մինչ պատմում էր այս խոսքերը,
155 Տխուր ողբով յուր իգիթին
Գովաբանում և Ալեքին
Անիծում է թուրքի կինը,
Իսկ մարդիկըն իրանց դինը
Վրկա կանչում և երդվում են —
160 Թեկուզ Ալեքին չըգտնեն,
Գեթ մի ուրիշ հայ սպանել.—
Ալնի ղսասը միայն հանել։

IX

Վերջին շողերն արևի
Կատարներին ծառերի
165 Դողդողացին ու հանկարծ
Թռան ծայրերը լերանց։

Ժանգառքն արդեն ընկնում է,
Քաջ Ալեքը գնում է.
Մութն ու լուռ է ծմակը,
170 Միայն նրա ոտի տակը
Ջոր խաշամն է խշխշում,
Երկչոտ երեն խլըշում
Արագ փախչում է դեպի
Մթին խորքերն անտառի:
175 Հավքերն էլ կամաց կամաց,
Ռիգնաժամը վերջացրած,
Ճղների վրա թրթռում,
Թառ են լինում ու լռում:
Բայց ահա լուռ ծմակի
180 Միջին հանկարծ Ալեքի
Սուր ականջին հասավ մի
Քաղցրամրմունջ մեղեդի:
Սակավ ևս առաջ գնաց,
Եվ ահա նրա դիմաց
185 Դուրս եկավ մի ձիավոր,
Տեսքով պարթև, փառավոր,
Անգեն նստած վեհապանծ,
Անփույթ կերպով վար թողած
Լայն քղանցքը սև շորի
190 Կողքերից երիվարի.
Իսկ ալեխառն մորուքը
Ցրիվ բռնած ողջ կուրծքը
Անհոգ ձայնով ինքն իրան
Երգում էր մի շարական:
195 Տեսավ նրան Ալեքը,

Զվարթացավ, աջ ձեռքը
Բարձրացնելով դեպի վեր
Զայն տվեց. — Օրհնյա ի Տեր:
— Աստված օրհնե քեզ, որդի.
Բայց չէ որ մի տղամարդի
Համար, անշուշտ, շատ են շատ
Ամեն զենքից երկու հատ:
— Ճիշտ է, տեր հայր, սակայն դուն
Չըգիտես, որ մինչև տուն
Ավարն հաղթողն է տանում.
Որ այնքան ձայն էր հանում
Զարիքներովն անսովոր,
Այն թուրք Ալին հենց այսօր
Մամմադի դրախտը գնաց,
Իսկ զենքերն ինձ մնաց:
— Սիրուն ավար ես արել,
Բայց ավարիցդ առավել
Գործքդ է սիրուն, ես իմ հոգին,
Գովեց տերտերն Ալեքին:
— Փառավորիս դուն, տերտեր,
Լավ խոսեցիր. աջըդ բեր,
Մի համբուրեմ, որ մեղքիս
Թողությունն էլ ես տալիս:
— Ապրես Ալեք, շատ ապրես,
Թող Աստված զորացնե քեզ,
Որ Ալնի պես լիրբ թուրքին
Գիտես պատժել յուր կարգին:
Վկա է սուրբ օծումս,
Մի նշխար կա ծոցումս,

225 Իբրև պարգև կենարար
Քեզ եմ տալիս դրա համար:
Դուն ոչ թե մեղք ես արել,—
Մի սուրբ պարտք ես կատարել.
Անիրավ մարդու դիմաց
230 Վրեժխնդիր է և Աստված:
Վրեժխնդիր է և Աստված,—
Ծեր անտառը որոտաց:

1890

ՄԵՀՐԻ

I

— Սիրելի Մեհրի, չէ՛, ամեն երկրում
Մարդիկ այսպիսի նեղություն չեն կրում.
Այս ի՞նչ երկիր է. տեր չըկա կարգին,
Ամեն ավազակ տեր է մեր գլխին...
Դողալով մնում է մարդ ամեն վայրկյան,
Թե ահա իսկույն, ուր որ են, կըգան,
Կնոջս տանից կառնեն-կըտանեն,
Որդիս կըխլեն կամ ինձ կըսպանեն...
Հալալ հաց չունենք թուրքիցն անկշտում,
Դառն աշխատում ենք ու դատարկ նստում.
Գետինը ձգած սերմը չենք վերցնում...
Այս ընչի՞ կյանք է, դե՛ քեզ եմ հարցնում:
— Ես գիտեմ, Մհե, ինձ ու՞ր ես ասում,
Այսպես է, հոգիս, դուն ի՞նչ ես ուզում...
— Մեզանից հեռու, ասում են, որ մի
Աշխարհք կա, Մեհրի, բարեկարգ ու լի.
Այնտեղ չէ իշխում գազանի կիրքը,
Այնտեղ չէ հարգվում կեղծավոր դիրքը,
Եվ մարդիկ այնտեղ իրար հետ սիրով
Ապրում են հանգիստ, թուրքից ապահով.
Իսկ փողը՝ այնտեղ հողի պես լի է,
Ես էլ կըգնամ, շատ կարելի է...
— Օ՛, այս ցավերիցն ես դուն հեռանում,

Ապա ես, Մահե, ինձ ի՞նչ ես անում...
— Քեզ... քեզ կը հանձնեմ Տիրոջ խնամքին,
Իսկ ես հնազանդ նրա սուրբ կամքին,
Կը գնամ, հոգի՛ս, աշխատանք կանեմ,
Գուցե շուտով գամ ու քեզ էլ տանեմ...
— Այստեղ աշխատի՛ր, մի՛ գնալ, Մահե,
Ինձնից հեռանալ չեմ թողուլ, չէ՛, չէ՛,
Լավ է միասին մեր ցավը քաշենք,
Քան իրար կարոտ, սիրտներս մաշենք...
— Սիրելի Մեհրի, ինձ հետ հավասար
Դուն քարշ ես եկել, ընկել քարեքար,
Միշտ պակաս օրով, կիսակուշտ փորով,
Շատ անգամ տկլոր, բոբիկ ոտներով:
Ի՞նչ ենք աշխատել, ցո՛ւյց տուր ինձ, հոգիս,
Ի՞նչ, ի՞նչ ես տեսնում տանս կամ հագիս.
Բայց ուրիշ բան է, թե այնտեղ գնամ,
Տես ինչպես պիտի շուտ հարստանամ:
— Այն հարստությունն ես ի՞նչ եմ անում
Ա՜խ, Մահե, Մահե, դուն չես իմանում,
Ինչ է ինձ տանջում, թե որ իմանաս...
Այն օտար երկրում որ հիվանդանաս,
Գոնե, ո՞վ պիտի քեզ սառը ջուր տա,
Պատուածդ կարի, կեղտդ լվանա...
Ազիզ օր կըգա, դուն անտուն, մենակ,
Կուչ կըգաս սրա-նրա պատի տակ...
Լցվեց, հեկեկաց Մեհրին դառնագին.
Սիրտ տվեց Մահեն.— «Բան չըկա, ա՛յ կին» ...

II

Մի աշնանային ցուրտ իրիկուն է.
Ծխոտ ու փլեկ հին գլխատուն է.
Ածխակոթերը մլում են տխուր.
Օջախի շուրջը նստոտած են լուռ.
55 Մեր սկեսար կողքին հարսն է կուչ եկած,
Մհեն նստած է երկուսի դիմաց:
Հազիվ են նկատվում նրանց դեմքերը.
Տխուր են մարդ ու կին, տխուր է ծերը,
Հոնքերի տակից փայլում էր թախիծ,
60 Եվ ահաբեկված մի գաղտնի վախից,
Բերանն անատամ, դողդոջուն ձայնով
Այսպես բաց արավ՝ իրան պահելով.
— Ո՞ւր ես կամենում գնալ, իմ Մհե,
Այնտեղ ի՞նչ կա, ի՞նչ, նպատակդ ի՞նչ է,
65 Ինչո՞ւ ես թողնում քո հոր օջախը,
Ալևոր հորդ, քո օղլուշաղը:
Ես ծերացել եմ, առաջվանը չեմ,
Որ ամեն ցավի ետևից թռչեմ.
Արդեն հասել են մահվանս օրերը,
70 Դուն էլ գնում ես, ո՞վ է մեր տերը:
Կաց այստեղ, որդի, հորդ ականջ դիր,
Ձեռքդ չեն բռնում, այստեղ աշխատիր:
— Այստեղ ի՞նչ կա, հայր, որ ինչ աշխատեմ,
Հենց թեկուզ, ասենք, մնամ, աշխատեմ,
75 Ի՞նչը կըպրծնի անօրեն թուրքից,—
Մարդու հացն անգամ խլում են ձեռքից:
— Ոչ ոք չի դիպչիլ քո արդար հացին,

Տուր փարեն՝ պրծիր չարեն, ասացին
Մեր լուսահոգի խելոք պապերը։
80 Կատարի՛ր, որդի, նրանց պատվերը.
Սոված չես մնալ, բախտավոր կըլնես,
Թուրքն էլ քաղցր աչքով միշտ կընայե քեզ։
— Աշխատանք չըկա, հայրիկ, աշխատանք,
Եղած չեղածն էլ որ թուրքերին տանք,
85 Իսկ մենք ինչ անենք, սոված կոտորվենք.
Մինչև ե՞րբ պիտի այսպես չարչարվենք։
— Մեր ցավն է, որդի, մենք պիտի տանենք,
Դուն ո՞նց ես ուզում, ուրիշ ի՞նչ անենք.
Եթե ձեռքիցդ մի բան է գալիս,
90 Դե արա՛, ո՞ւմ ես էլ մտիկ տալիս,
Թե չէ, ինչո՞ւ ես կորչում հողեց հող,
Ո՞վ է քեզ համար այնտեղ կտրել փող։
— Չըգիտես, հայրիկ, այդ ինչ ես ասում,
Այն երկրում փողը թիով են դիզում.
95 Դուն չես հավատում Մկոյի խոսքին,
Որ այնտեղ խանով են չափում ոսկին։
— Խանով ոսկին քեզ համար չեն չափում,
Ցնորքներ են, որդի, քեզ շլացնում, խաբում.
Դարձի՛ր այդ ճամփից, լսի՛ր ծեր հորդ,
100 Պանդխտության մեջ կըսևացնես օրդ։
— Ես չեմ ուզում, հայր, օրեր սևացնել,
Այլ մեր սև օրին մի ճար հասցնել.
Ես պիտի գնամ, և երբ որ Աստծով
Կըվերադառնամ ջեբս լի ոսկով,
105 Կըգովես որդուդ, թե ինչպես ճարեց
Այդ հարստությունն, քեզ մխիթարեց։

— Դուն գիտես, որդի, գնա՛, Տեր ընդ քեզ,
Բայց տե՛ս, մտիցդ երբեք չընձգես
Պապիդ օջախը, քո հայրենիքդ,
110 Ծերունի հորդ, ջահել կնիկդ.
Թե սրանց, Մհե, դուն կըմոռանաս,
Իմացի՛ր, թեկուզ թագավոր դառնաս,
Օր չես քաշելու քո արած մեղքից:
Բարի ճանապարհ. թող քեզ ուղեկից
115 Լինի այն հրեշտակն, որ երբեմն տարավ
Տովբիթի որդուն դեպի Մարաստան.
Իսկ ես հայրական սրտով վիրավոր
Քեզ համար աղոթք կանեմ ամեն օր —
Է՜հ, գնա՛, որդի, գնաս-գաս բարով...
120 Վերջացրեց խոսքը ծերունին զոռով...

III

Տանջվում էր, տանջվում խղճալի Մեհրին.
Խառնվում էին նրա վշտերին
Եվ սնունդ էին տալիս անհամար
Կասկածանքները տխուր ու համառ:
125 Սարսափում էր նա, երբ ամեն վայրկյան
Մտաբերում էր ժամըն անջատման.
Մի օր էլ մնաց, մի օրը վերջին,
Որ ճամփու դնե Մեհրին Մհեին:
Եվ արտասվելով խեղճ կինը կարեց
130 Մի սիրուն ղայլուխ ու վրեն շարեց
Գույնզգույն հուլունքներ վզի շարանից,
Մարդուն հիշատակ տվեց իրանից:

— Դե՛հ, մնաք բարով, ծերունի հայրիկ,
Նազելի Մեհրի, սիրուն հայրենիք,
135 Սրտակից տղերք, ընկեր-հարևան,
Մոտիկ բարեկամ, արյուն-ազգական...
Ասաց սրտաբեկ երիտասարդը,
Եվ, անիծելով իրան չար բախտը,
Ճանապարհ ընկավ. այնինչ ջրատար
140 Մեհրին ետևից նայում էր երկար:
Մհեի հայրն էլ, զառամ ծերունին,
Դողալով հենված յուր գավազանին,
Բերանը բացած, ձեռքը ճակատին
Նայում էր ապշած Մհեի ճամփին:
145 Դեռ երևում էր սև կետի նման,
Այն էլ չքացավ, և ամենայն բան
Վերջացավ պրծավ. ծերուկն ու Մեհրին
Ապշած ու քշված, կանգնած մնացին:
Մհեին ճամփու դնելու համար
150 Հավաքվածները, իբրև մխիթար,
Մեհրուն ու ծերին հուսադրական
Խոսքեր խոսացին, կամաց հեռացան:
Բայց երկա՜ր, երկար, մի ձայն թույլ, չնչին,
Այսպես խոսում էր նրանց ականջին.—

* * *

155 — Սիրելի Մեհրի, մնացիր բարով,
Աչքերդ լցրած, տխուր երգերով

Զրհիշես էլ ինձ, մոռացիր, հոգիս,
Զրկանգնես երկար, չընայես ճամփիս.
Թե աչքդ մնա, կրխաբե նա քեզ,
160 Թե հանկարծ շեմքում ոտնաձայն լսես,
Հանգի՛ստ, սիրելիս, գիշերվան ժամին
Գիտե միշտ խաբել խաբուսիկ քամին:
Գուցե թե գիշերն անքուն աչքերով
Ուզես իմանալ վիճակս աստղերով,
165 Եվ հանկարծ մինը ծոր տա ու թռչի,
Մութ հորիզոնի սահմանում կորչի,
Խռոված հոգով և հազար ու մին
Մտածմունքներով մտնես անկողին,
Մի տխուր երազ կրգա կազդե քեզ,
170 Որ քո Մհեին էլ տեսնելու չես...

* * *

— Իսկ դուն, ո՛վ անբախտ և չարատանջ մարդ,
Դո՛ւն, իմ ծերունի հայրիկ ալեզարդ,
Երբ որ կրխնդրես արդեն չորացած
Քո բազուկներդ երկինք տարածած
175 Ու էլ չես գտնիլ ծերության նեցուկ,
Որքան արտասուք կրթափես ծածուկ.
Ո՛հ, ինչպես պիտի քո ճերմակ միրքի
Վրայից հոսեն հորդ արտասուքի
Աղի շիթերը, թրջեն վշտակոծ
180 Մազոտ, մերկ կուրծքդ, և ինչպես սև օձ,
Կրթունավորեն օրերդ ծերության
Գաղտնի կասկածներդ Մհեիդ մահվան:
Քո որդու ձեռքի հողին անբաժան

Կրխփես, հայրիկ, աչքերդ հավիտյան.
185 Անմխիթարանք և որդուդ կարոտ.
Բայց և քո տխուր գերեզմանի մոտ
Չի կանգնելու քո Մահեն երբեք...
Դուք այնտե՛ղ, այնտեղ իրար կըգրկեք...

V

— Վարդիթեր քույրիկ, գիշերս երազում
190 Դոնիցն ականջիս մի ձայն է հասնում,
Տնքում է երկա՛ր և ծանր հառաչում,
Հանկարծ մի կամաց Մեհրի է կանչում:
Դուրս եկա, տեսնեմ՝ Մահեն է կանգնած
Մի սև ձի հեծած, թռավ ու գնաց.
195 Ետնուց կանչեցի՝ Մահե՛, կաց, արի՛.
Հենց այս կանչելումն աչքս բաց արի:
Էլ ետ չընայեց, սև ձիուն հեծած,
Սև շորեր հագած, սև ճամփով գնաց.
Քամու նման էր այն սև ձին վազում.
200 Ինչ է, Վարդիթեր, սև ձին երազում:
— Մեհրի, Տեր Աստված բարին կատարի,
Տիրամոր առաջ մի ջուխտ մոմ վառի:
— Երեք օր առաջ Շողերի գարին
Թեև մոտիկ էր ցույց տալիս բարին,
205 Բայց չար հարամին (նա այսպես ասաց)
Ճամփա չէ տալիս առաջը կտրած:
— Մեհրի, Տեր Աստված բարին հառաջի,
Գրավ խոստացի՛ր սրբի ու խաչի:
— Իսկ այս առավոտ մի ագռավ եկավ

210 Երդիկին վեր եկավ, սիրտս դող ընկավ,
Երբ բերան բացեց, գլուխն ուտե իրան,
Բոթաձայն կռավեց ճիշտ երեք բերան:
— Մեհրի, Տեր Աստված բարին կատարի,
Տիրամոր առաջ մի ջուխտ մոմ վառի:

VI

215 Ճամփա է տանում դեպի Հայաստան.
Այն ճամփու վրա կա մի գերեզման,
Որ միշտ հայացքով լուռ, ողորմելի,
Անցվորից խնդրում է մի ողորմի:
Ջունի այն քարը չարաշուք դրած
220 Ոչ տապանագիր, ոչ անուն գրած,
Որ մարդ իմանա, թե այս վայրենի,
Ամայի վայրում ո՞վ պիտի լինի
Հանգստանալիս անտաշ քարի տակ:
Արդյոք խստակյաց մի սուրբ նահատակ,
225 Փախած աղմուկից մեղքոտ աշխարհի,
Եկավ և այստեղ, այս ճանապարհի
Վերա հաստատեց իրան օթևան,
Իբրև Աստծուց կարգած պահապան.
Թե չար մարդիկը, դեռ կիսաճամփի,
230 Կտրեցին թելը ճամփորդի կյանքի.
Գուցե մարդկանցից քշված, հալածված
Ավազակը վես յուր գլուխը ցած
Դրեց այստեղ, և այս ճամփու տակին
Ավանդեց իրան մեղավոր հոգին...

VII

235 Մի օր մի քանի հայ անցվորական
Քրտնքամխած այն ճամփովն եկան,
Կանգ առան այնտեղ ու շունչ քաշեցին,
Փոշոտած դեմքից փոշին սրբեցին:
Դեպ այն շիրիմը նրանցից մեկը
240 Երկչոտությունով մեկնեց յուր ձեռքը
Եվ այսպես հորդոր կարդաց մյուսներին.
— Եղբայրք, ողորմի տվեք Մհեին.
Սրանից առաջ մի քանի տարի
Եկանք տեսանք, որ այս ճանապարհի
245 Վերա հավաքված գիշակեր թռչուն,
Գիշատող գազան, մի լեշ են ուտում,
Քշեցինք նրանց,— տեսնենք մի դիակ
Ինչպես սոսկալի, ինչպես այլանդակ
Շատ տգեղ էին և զարհուրելի
250 Սիպտակ շարքերը բաց ատամների.
Դատարկ աչքերի փոսից էլ, կարծես,
Տխուր հայացքով նայում էր նա մեզ:
Դեմքին ու լեշին երկար նայեցինք.
Վերջը շորերից միայն ճանաչեցինք,
255 Եվ պատառոտած նրա դիակը
Քարշ տվինք հասցրինք այն ծառի տակը:
Թաղեցինք այնտեղ և փախանք թաքուն:
— «Աստված ողորմի Մհեի հոգուն».
Մի բերան ամենքն ասացին սրտով
260 Եվ ահակալած հեռացան փութով:

VIII

Գնում է ճամփան մտնում մի ավան,
Տխուր, կիսավեր հայի բնակարան,
Եվ այդ ավանի նույնիսկ առաջին
Տան շեմքում կանգնած դեռահաս մի կին,
265 Երեսը ծածկած բարակ քուշուշկով,
Առաջին ճամփին նայում է ուշքով.
Այդ ճամփով մի օր նրա սիրելին
Գնաց հեռու տեղ, չըդարձավ կըրկին:

IX

Տարիներ անցան, և աչքը ճամփին
270 Մնաց նայելիս նորահարս Մեհրին.
Ձեռքերը ծոցին, աչքերը լցված
Նայում էր, խոսում նա տարակուսած.
— Ա՛խ, մի ծիտ դառնամ, թռչեմ ու գնամ,
Գտնեմ Մհեիս, տեսնեմ մի անգամ.
275 Բայց ո՞վ կըտա ինձ թռչելու թևեր...
Երնեկ իմանամ, երնեկ մինն ասեր,
Թե այս բոպեին նա ինչ է անում:
Գո՞ր ունի արդյոք, հաջո՞ղ է գնում,
Արդյոք մի անգամ ինձ միտն է բերում,
280 Գիտե՞, թե օրերն ինչպես եմ համրում.
Ով գիտե, գուցե այնտեղ մի սիրուն
Խանում կին սիրեց, մոռացավ Մեհրուն,
Կամ, գուցե, հիվանդ տնքում է հիմա,
Չորս կողմը նայում՝ յուր Մեհրին չըկա.

285 Թե չար թշնամին, ձեռքը չորանա,
Սուրը բարձրացրեց Մհեին վերա.
Զըլինի թե վաղուց, Մեհրի ու աշխարհք
Մոռացած, թողած, նա սև հողի տակ...
Ա՜խ, ինչո՞ւ է, ինչո՞ւ այսքան տանջանքը,
290 Միթե սա՞ է, Տեր, Քո տված կյանքը.
Միթե ա՞յս էր ինձ համար պատրաստած,
Ինչ արի քո դեմ, անարդար Աստված:

X

Գնաց ու գնաց, չըդարձավ կրկին.
Բայց, ահա, մի օր նկատեց Մեհրին,
295 Որ հեռվից մի բան սևին է տալիս.
«Ղարիբությունից ոքմին է գալիս»,
Մտքումն ասաց Մեհրին և ծովծով
Աչքերի արցունքը սրբեց գոգնոցով:
Սիրտը սկսեց արագ բաբախել,
300 Վաղուց էր, խեղճ կինն այդպես չէր եղել:
«Օ՜, տառապածի ողորմած Աստված»,
Մրմնջաց Մեհրին աչքերը լցված,
Ուրախությունից արցունքը հետին
Ցավերը պիտի ողջ թափեր գետին:
305 Արդեն եկավորըն եկավ մոտեցավ,
Քանի մոտեցավ այնքան շատացավ.
Եվ ահա, մի խումբ թուրք ավազակներ,
Գյուղը քանդեցին, արին տակն ու վեր.
Լեղապատառ տուն ընկած Մեհրուն
310 Տանից հանեցին, նստեցրին ձիուն.

Նրա ալևոր սկեսարն ընկավ
Թուրքերի սրից և իսկույն հանգավ.
Ծերի անեծքի հետ ի միասին
Տարան թուրքերըն յուր խոնարհ հարսին:

XI

315 Ճամփա է տանում դեպի Հայաստան.
Այն ճամփու վրա կա մի գերեզման,
Գերեզմանի մոտ մի ծառ է կանգնած.
Այն հովանու տակ ահա մի հոգնած
Ջիավոր իջավ, և նորա թարքին,
320 Իրան փաթաթված, նստած էր մի կին.
Եվ տղամարդը զենքերում կորած,
Կանաչ խոտերում երբ ձիուն թողաց,
Դարձավ դեպի այն վաստակած կինը,
Յույց տալով մատով մոտիկ շիրիմը.
325 — Մեհրի, ճանաչի՛ր իգիթ Օսմանին.
Նայիր առաջիդ այդ գերեզմանին.
Այդտեղ թաղած է, մի քանի տարի
Առաջ, իմ ձեռքով մեռած գյավուրի
Հոտած մարմինը. երբ որ նրան ես
330 Թալանում էի, հայհոյում էր մեզ:
Շատ համարձակ էր այն լիրբ գյավուրը,
Բայց երբ Օսմանի կտրուկ կեռ թուրը
Նրա գլուխը ուսերից պոկեց,
Էլ բան չըխոսեց և խելոք պառկեց:
335 Գրպանում, ծոցում ոչինչ չըգտա,
Աղքատի մինն էր, միայն այս առա.

Ասաց գրպանից հանեց դայլուխը,
Մեհրու արյունը տվեց գլուխը.
— Ես պիտի քնեմ, Մեհրի, դու մնա,
340 Լավ նայիր, որ ձին հեռու չըգնա.
Մինչև հովն ընկնի, այնպես վեր կենանք,
Աստըծուն կանչենք, մեր ճամփեն գնանք:

XII

Մեհրին քարացած, որպես շանթահար
Այն գերեզմանին նայում էր երկար
345 Ուշքը վերացած, ոչինչ չէր տեսնում.
Ուրիշ երկրում էր ականջին հասնում
Անլուռ աղմուկը մոտիկ առվակի,
Արձագանքն իրանց պատող ծմակի.
Այնինչ աչքերը փայփայում էին
350 Զվարթ երեսով առողջ Մհեին:
Նայում էր Մեհրին, նայում էր միայն,
Եվ ահա բարակ, ողորմուկ մի ձայն
Հասավ ականջին այն գերեզմանից.—
«Առ իմ արյունը, Մեհրի, Օսմանից»:
355 Սարսափեց, դողաց ու միանգամից,
Ինչպես որ հանկարծ զարթնում են քնից,
Սթափվեց Մեհրին, նայեց դես ու դեն,
Ինչպես նայում է վախեցած երեն,
Եվ մի միտք նրա դեմքըն այլայլեց.—
360 Խոշոր աչքերում վրեժը փայլեց,
Վայրենի ձևով, զգույշ ու կամաց
Մի քանի քայլով թուրքին մոտ գնաց,

Ձեռքերը փռած, քնած էր թուրքը,
Ծանր ու երկար շնչում էր կուրծքը.
365 Կամաց խանչալը պատենից քաշեց,
Օսմանը հանկարծ բազուկը շարժեց,
Թեթև թռիչքով ետ թռավ Մեհրին,
Խանչալը պահեց գոգնոցի տակին
Եվ անշարժ մնաց, մինչև որ դարձյալ
370 Օսմանը սկսեց հանգիստ խռըմփալ:
Փայլեց պողպատը վառ արևի տակ.
Եվ Մեհրին, ինչպես հոգեհան հրեշտակ,
Խանչալը ձեռքին մնաց խոր քնած
Իգիթի գլխին մի բոպե կանգնած.
375 Դարձյալ դես ու դեն խենթի պես նայեց,
Զգույշ կորացավ, շունչն իրան պահեց,
Խանչալի ծայրը դնելով կրծքին
Յուր բոլոր ուժով հարեց դաստակին:
Օսմանը գոռաց, վեր թռավ տեղից,
380 Մեհրին սարսափած փախս առավ վախից.
Վագրի թռիչքով ցատկեց Օսմանը,
Հասավ ու բռնեց թիկունքի ծամը.
Ետ դարձավ Մեհրին ահից կատաղած,
Դարձյալ թուրքի դեմ խանչալը շողաց,
385 Մռնչաց ուժգին. մազերը թողած,
Կրակոտ աչքերն արյուն կոխած,
Կիսաշունչ թուրքը թուրը պտտեց.
Ծղրտաց Մեհրին, աչքերը մթնեց.
Վայր իջավ թուրը, նրա հետ Մեհրին
390 Մի թույլ ճիչ հանեց, խանչալը ձեռին,
Կուրծքը պատառած, արյունաթաթավ,

Մհեի շիրմի վերա վայր ընկավ.
Վայր ընկավ նաև Օսմանը,
Եվ երեք դարձավ մի գերեզմանը:
395 Դեռ իրար կողքի հանգչում են այնտեղ
Չար սպանողն ու սպանվողն անմեղ.
Եվ ամեն տարի գարունը գալով
Հավասար պճնում է նրանց դալարով:

1890

ՄԵՐԺԱԾ ՕՐԵՆՔ

I

Բարձրադիր լանջում բարձր սարերի
Աղոթք է անում լուռ կանգնած մենակ
Հին հիշատակը հին-հին դարերի —
Քրիստոնեից միանձանց մի վանք:
Նրա սրբածայր գմբեթը քարյա
Բարձրանում է վեր — դեպի երկինքը,
Խաչակնքելով աշխարքի վերա
Օրհնում է մշակի արդար քրտինքը:
Այնտեղ խստակյաց միաբանություն
Ճգնում է միտքը աղոթքի տված,
Անհաղորդ երկրի վայելքին ունայն,
Մինչև որ յուր մոտ կըկանչե Աստված:
Չեն լսվում երբեք սուրբ հայրերի մոտ
Մարդոց խնջույքի ուրախ երգերը,
Եվ ոչ կանացի հայացքը խանդոտ
Հուզում է մեղքով խաղաղ սրտերը:

II

Երեք օր առաջ վաղ առավոտյան
Համընթաց մի սայլ մոտեցավ վանքին.—
Հեռու կողմերից ուխտավորք եկան
Երկրպագելու սրբոց մասունքին:
Եվ դղրդալով բարեպաշտ մարդկանց

Առջև բացվեցան դռներն Աստծո տան,
Եվ մի ահավոր երկյուղով լցված,
Խաչակնքելով նրանք ներս մտան:
Սուրբ կամարները, սևացած արդեն,
Մի անգամ դարձյալ ծածկվեցան ծխով.
Ծխի մեջ վառվող մոմերի առջև
Ծունկ չոքած աղոթք արին երկյուղով:
Ջոհը զենեցին և բաժանեցին,
Ապա սրբազան նըվերներ տարան
Այն աղոթարար միաբաններին.—
Մեղքի թողություն, օրհնություն առան
Բայց կատարվեցավ այլ մեծախորհուրդ
Ուխտ և ողջակեզ կյանքի հաշտության,
Փրկեց ակներև մահից մի հոգի,
Որ պիտի անմեղ կորչեր հավիտյան:
Ոչ արյուն թափվեց, ոչ հուր բարձրացավ,
Ոչ տեսանելի կանգնեցավ սեղան,
Հոգիները միայն անձայն խոսեցան —
Վերածնվեցավ մատաղ աբեղան.
Եվ մաշված կրծքում կրքերը մարած
Ավելի սաստիկ եռացին նորից,
Իսկ այն ընտանիքն, ուխտը կատարած,
Դուրս գնաց արդեն վանքի դռներից:

III

Մարդոց մեղքով լի շեներից հեռու,
Սուրբ անապատը գիշերվա մթնում,
Ինչպես մի հսկա, ահռելի ուրու,

Ահա կանգնած է ահավոր, տրտում:
Նրա խցերից մեկում միայնակ
50 Մի երիտասարդ, տժգույն, դալկահար,
Ձիթի ճրագի աղոտ լույսի տակ,
Անկողնում անքուն տանջվում էր երկար:
Հազիվ հեռացան հախուռն մտքերը,
Որ քունն աչքերին մոտ չէին թողնում,
55 Հազիվ ծանրացան արտևանունքները —
Քնեց աբեղան յուր կոշտ անկողնում,
Եվ հանկարծ կանգնեց նրա գլխի մոտ
Լուսեղեն մարմնով մի կույս երկնածին,
Կարեկցությամբ լի, բայց սաստիկ կրքոտ,
60 Աշխույժ հայացքով նայեց քնածին:
Նայում էր առ ժամ և կամաց-կամաց
Հասուն, լի կուրծքը ուռչում-իջնում էր,
Կարծես՝ երեսին մեղմածուփ ալյաց
Ճերմակ փրփուրը խաղալիս լիներ:
65 Ապա շնորհալի և խիստ հեզանազ
Շարժվածքով ճկուն մեջքը խոնարհեց,
Եվ տաք համբույրով վարդերանգ շրթանց
Քնածի տխուր ճակատը այրեց:
Զարթնեց աբեղան և զգաց հոգում
70 Մի ցավ, որ սաստիկ տանջում էր իրան.
Այնինչ այցելու ոգին երկնքում
Փայլատակում էր մի աստղի նման:
Դուրս նայեց տեսավ նորեկ արևը
Երկնքի ծայրը հրդեհ էր ձգել,
75 Նայեց աշխարքին, նայեց վերևը,
Եվ ուզեց իսկույն բոլորը գրկել...

IV

Փոխվեցավ այսպես վանականն անմեղ,—
Յուր խուցը դարձավ առավել նեղլիկ,
Եվ մեղմ աղոթքի անդորրության տեղ
80 Հայտնվեց հոգում անծանոթ մրրիկ:
Ո՜վ զարմանք, արդեն սիրալի սրտով
Մի գիշերվա մեջ կարոտել էր նա,
Եվ ափսոսում էր, թե ինչու շուտով
Գնացին վանքի հյուրերն երեկվա:
85 Կարոտել էր նա. և նրա աչքին,
Քավության ճերմակ շապիկը հագին
Միշտ երևում էր այն գերդաստանի
Վայելչահասակ դուստրը գեղանի: —
Երևում էր նա գլխակոր չոքած
90 Լուռ աղոթելիս սեղանի առաջ,
Կամ այստեղ նստած, կամ այնտեղ կանգնած՝
Թախծալի, քնքուշ դեմքով սիրատանջ:
Ամենայն անգամ նրա տեղերին
Մոտիկ գնալիս, կամ թե կանգնելիս
95 Ծնկներն ու սիրտը դողդողում էին,
Եվ մարմնին ախորժ թմբիր էր գալիս:
Երկար ժամերով քարացած-անշարժ
Մի տեղ մնում էր նստած, գլխաքարշ —
Ապրում էր մտքում երազած օրով,
100 Եվ ցնորմունքից ուշաբերվելով
Հաճախ անհանգիստ նա շարշարվում էր,
Լալիս էր ծածուկ, վանքից կորչում էր,
Եվ կատաղում էր, որ մի մարդ չըկար՝
Յուր ցավն ափոփեր, կամ գեթ հասկանար...

V

105 Արդեն հրեղեն գունդն արեգակի
Ուժասպառ, հոգնած դեպի մայր թեքվեց.
Փուլ եկավ դարձյալ սիրտն աբեղայի —
Գիշեր է հասնում. նա տրտում երգեց.—
«Արևը թռավ
110 Թռցրրեց, տարավ
Փայլուն շողերը.
Խավար գիշերը
Ծանրացավ ահա
Դաշտերի վերա:
115 Գերին արևի
Գլուխը դեպի
Արևմուտ ծռած
Մնաց սալարած:
Սպասում է նա,
120 Թե երբ կերևա
Երկնակամարից
Արևը նորից:
— Ա՛խ, շուտո՛վ բացվիր,
Արև կենսաձիր.
125 Գուրգուրիր կրկին
Արևածաղկին:
Հեռացար և դու
Անհայտ սիրատու.
Բոցոտ հայացքով
130 Լցրիր կըրակով
Սիրտս վշտահար

Եվ քեզ հետ տարար
Ուշքս ու միտքս...
Մթնեց երկինքս.
135 Ես էլ ծաղկի պես
Սպասում եմ քեզ.—
Ահա շվարած
Գլուխս ծռած,
Ես էլ եմ նայում,
140 Քո ճամփեն պահում.
Ծագիր դու նաև,
Իմ հոգուս արև»:

VI

Գիշերվա մթնում նեղ լուսամուտից
Երևում է լույսն աղոտ լամպարի.
145 Յուր անձուկ խցում նստած է հանգիստ
Ժիր վերակացուն հին սրբավայրի:
Կծղել են երկայն մազ ու միրուքը
Այն խստակրոն ծեր վանականի,
Հանգել են աչքերն, և հեգ ծերուկը
150 Ջունի երեսին մի գիծ կենդանի:
Արդեն չորացած երկայն մատներով
Յուր սև համրիչի հատերն է քաշում,
Եվ խաղաղությամբ, դրախտի հուսով
Կյանքի մնացած ժամերը հաշվում:
155 Մահի հարվածից նա չի սարսափում,
Եվ բան չի խլում մահը նրանից,—
Երկրի հետ նրան ոչինչ չի կապում,
Ողջ սպասում է նա գերեզմանից:

VII

Փոքրիկ դռնակը բացվեցավ.
160 Մի մեռելատիպ, բայց երիտասարդ,
Աչքերը վառված սևաշոր մտավ.
Եվ հարցրեց նրան ծերուկը հանդարտ.—

Ծեր վանահայրը

Ինչ ունես, որդյակ:

Երիտասարդ աբեղան

Հայրիկ, ներիր ինձ,
165 Այսպես տարաժամ որ քեզ մոտ եկա.
Սիրտս ուզում է դուրս թռչել տեղից...
Այլևս համբերել չըկարողացա...

Վանահայրը

Համբերություն տա թող Բարձրյալը քեզ.
Բայց ինչո՞ւ համար հուզված ես այդպես:

Աբեղան

170 Ինձ ասա՛, հայր սուրբ, գաղտնիքը կենաց
Արդյոք օրենք է Աստծուց սահմանա՞ծ...

Վանահայրը (ընդհատելով)

Այո՛, Տեր Աստված աշխարքին, որդյակ,
Ապրելու համար տվել է օրենք,
Եվ մենք սրբությամբ, ինչպես օրինակ,
175 Այն օրենքները պիտի կատարենք:

Աբեղան

Կատարենք, հայր սուրբ... ապա, երբ որ կա
Խնդրում եմ Տիրոջ այն սուրբ օրենքով,
Որով ապրում են մարդիկը Նորա,
Նաև մարդկային իմ իրավունքով...

Վանահայրը (ընդհատելով)

180 Էլ ի՞նչ իրավունք... դու պաշտոնյա ես,
Մի սպասավոր Աստծո տանը,
Պիտի տաճարի սեղանին նայես,
Աղոթես, ճգնես. այս է քո բանը.
Եվ դրա համար չես մնալ անմաս —
185 Բոլորի վարձը այնտեղ կըստանաս:

Աբեղան

Ես ծառայում եմ, և իմ պաշտոնում,
Տեսնում ես, ահա, պակասավոր չեմ,
Երկնքի վարձը չեմ արհամարհում,
Բայց մի՞թե երկրում ես պիտի կորչեմ...

Վանահայրը

190 Մի մազ չի կորչիլ գլխիդ մազերից.
Մի՛ սնուցանիր սրտումդ կասկած:

Աբեղան

Սակայն չէ՞ որ մեզ այս լեռ քարերի
Ճգնության համար չըստեղծեց Աստված:
Իմ օրերն այստեղ տխուր են անցնում.
195 Վառվում է սրտումս հուրը կենսական,
Ինչու եք նրան դուք զոռով հանգցնում
Մահաշունչ գրկում խուլ առանձնության.
Կարոտ է հոգիս, թռչում է հրաթև,
Այս մենաստանի բարձրը պարսպից,
200 Չեմ կարող մնալ ես այսուհետև,
Եվ երբեք, մինչդեռ զրկված եմ կյանքից...

Վանահայրը

Այստեղ է կյանքը, այս սուրբ հարկի տակ.
Աղոթի՛ր, ճգնի՛ր, կըգտնես որդյակ:

Աբեղան

Չէ՛, չեմ գտնում, հայր, աղոթքների մեջ
205 Եվ ոչ հոգեբուխ մեղեդիների,
Դարձյալ մնում է նա սաստիկ մի տենչ,
Մի տենչ անկատար, անհասանելի,
Սարսափում եմ ես.— մոտ է վտանգը —

Իմ մահն ինձանից մոտիկ է, մոտիկ.
210 Այստեղ չեմ գտնում մխիթարանքը,
Որով շնչում են, ապրում են մարդիկ:

Վանահայրը

Ուրեմն չըկա, ինչ որ ուզում ես,
Եվ այդ ցնորք է, կամ փորձությունով
Նզովյալ չարը խարբալում* է քեզ
215 Հոգի կործանող յուր պատրանքներով:

Աբեղան

Եթե նա չըկա, ոչինչ չեմ հարգում,
Ատում եմ և ինձ, իմ անձս միայնակ,
Ոչինչ չեմ գտնում այլևս աշխարքում —
Լոկ խաբեություն և անմիտ տանջանք.—
220 Թող այնուհետև քանդվի նա խպառ,
Նրա երեսին էլ կյանք չըծաղկի,
Թող մեռնեն մարդիկ, թող ուտեն իրար...
Ես էլ չեմ խղճում այստեղ ոչ ոքի:
Սակայն չէ, նա կա. անբա՛խտ ալևոր,
225 Կուրծքդ երևի դեռ չէ եռացել,
Մենակ է աճել հասակդ բոլոր
Եվ առանց կյանքի հանգել, ծերացել.
Բայց երբ սոսկալի առանձնության մեջ
Ինձ պաշարում է սարսափը մահու
230 Եվ ունայնության մտքերն հոգեմաշ

*Խարբալել - վրդովել, խռովել, փորձել

Ինձ երևում են տխուր, ահարկու,
Շուրջս չեմ գտնում փրկության նշան:
Իսկ մահը, կարծես, չոքել է կրծքիս,
Միմիայն խորափոս, խավար գերեզման,
235 Միմիայն դժոխքն է երևում աչքիս,
Նա այն ժամանակ վրա է հասնում
Ինչպես լուսավոր շողն արևլուսի,
Փարատում հոգուս մռայլությունը,
Վանում մահաշունչ մտքերն մեկուսի,
240 Կյանքի ջերմությամբ լցվում է սիրտս...
Եվ ես զգում եմ, որ այն քաղցր ու նուրբ
Զգացմունքով է կենդանի մարդս.
Բայց ափսո՜ս, որ դու չըգիտես, հայր սուրբ:

Վանահայրը

Այն սուրբ հոգին է, կամ մի սուրբ հրեշտակ,
245 Որ այցելում է, ո՛վ արժանավորդ,
Եվ կյանքի մասին աստվածաբնակ
Այս սուրբ տաճարում քեզ տալիս հաղորդ:

Աբեղան

Օ՜, չէ՜, չէ, հայր սուրբ, նա չէ իջանում,
Ինչպես սուրբ հոգին, Աստծո խորանից,
250 Եվ ոչ հրեշտակի պաշտոն է տանում,
Բայց ես շա՛տ հեռու, հեռու եմ նրանից:
Ա՜խ, նա պակաս է, նա չըկա այստեղ,
Մերժած է անգամ նրա անունը,

Եվ ահա դատա՛րկ, դատարկ է ահեղ
255 Օրենքի պաշտպան Աստուծո տունը:

Վանահայրը

Այդ խաղաղության թշնամին է չար,
Որ միշտ հեռու է ահիցը վանքի:

Աբեղան

Նա չար չէ, հայր, այլ միակ հաշտարարը
Մարդու և կյանքի:

Վանահայրը

260 Ապա սո՞ւրբ է նա:

Աբեղան

Սո՛ւրբ, ինչպես Աստված է և յուր օրենքը
Եվ սիրելի է, որքան և կյանքը...
Ես մեղք չեմ անում, հավատա հայրիկ...
Դուք ինչո՞ւ համար ինձ այստեղ բերիք.
265 Ես ի՞նչ եմ արել, չէ՞ ես էլ եմ մարդ,
Նրանցից մեկը, որ այնքան ազատ
Ապրում են իրանց ցանկություններով,
Որ աղոթում են ուրախ սրտերով...
Ինչո՞ւ համար է իմ աղոթքն այստեղ,
270 Ո՞ր մեղավորին կըտանե եդեմ...

Ինչո՞ւ համար եմ չարչարվում անմեղ,
Եվ եթե այսպես ես այնտեղ մեռնեմ,
Ձեզ կամ Աստծուն ի՞նչ շահ իմ մահից...
Ուզում եմ ապրել. հա՛յր. կյանք տվեք ինձ...

Վանահայրը

275 Կյանք տալը Նրա ձեռքին է, որդի,
Մարդս ի՞նչ կաներ, որ շատ էլ ուզեր,
Բայց ասա՛, տեսնենք իղձը քո սրտի —
Ի՞նչ ես կամենում:

Աբեղան

Մի աղջկա սեր...

Վանահայրը

280 Պապանձվի՛ր, ո՛վ լիրբ, աչքիցս հեռացի՛ր,
Մի՛ ապականիր և մեր աղոթքը,
Շուտո՛վ, հեռացի՛ր, կամ գետինն անցիր,
Ձըպղծի տաճարի սյամը քո ոտքը:
Քո սրտին արդեն տիրել է չարը,
285 Հեռացի՛ր, Աստծո բարկությունը տար,
Որ չըկործանե և այս տաճարը
Քեզ հասանելի պատուհասն արդար:
Կամ ապաշխարիր պահքով, աղոթքով,
Հեռու հալածիր դիվական կիրքը,
290 Էլ այդպիսի բան չանցնի քո մտքով...
Շո՛ւտ, առանձնացի՛ր, կարդա սուրբ գիրքը:

Չէ՛, էլ չեմ կարող. հերիք էր ինչ որ
Առանձնության մեջ տանջվեցի լռած,
էլ չի բռնանալ այս տենչատոչոր,
295 Սուրբ սիրո վրա քու սիրտը մեռած:
Արդ ես համարձակ խոստովանում եմ
Քո և աշխարքի առջև իմ սերը,
Եվ բոլոր հոգով արհամարհում եմ
Անցած դարերի խավար ծեսերը:
300 Դու էլ ես ապրել նախնյաց օրենքով,—
Ապրել ես միայնակ, մարդոց անօգուտ,
Այլև անկանոն, ցավալի կյանքով,
Մեղքեր ես միմիայն վաստակել հոգուդ:
Դու էլ, հնազանդ քո նախնյաց կարգին,
305 Ուխտեցիր տանել կյանքը վանական,
Բայց հաղթեց խավար բնության կամքին
Միշտ ամենազոր օրենքը բնության...
Չէ՛, չեմ ճանաչում, ես չեմ դավանում
Այնպիսի Աստված, օրենք անիրավ,
310 Որ անարգում է սերն ամուսնական.
Օրհնի՛ր, ծերունի, և մնաս բարյավ:
Սիրավառ սրտի համարձակ լեզվով
Ծերունու դիմաց խոսաց աբեղան,
Որ, բարկությունից սաստիկ դողալով,
315 Աստծո անունով նզովեց նրան:
Եվ մեծ դարպասը լուռ մենաստանի
Ծանրը ճռնչաց ու լայն բացվեցավ,
Վանքից մի հոգի հեռու ավանի
Ճանապարհն ընկավ. օրը լուսացավ...

ՀԱՌԱՋԱՆՔ

(Հատվածներ)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Լեռնե՛ր, ներշընչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցված,
Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախուռն երամով:

5 Ձե՛զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կյանքի տըխրության ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր:

Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՛ն տրտմություն,
10 Վեհափառ դայակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ չէիր ինձ հանգիստ տալիս՝
Սըրտիս ականջին խոսելով թաքուն...

Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձևերով,—
15 Ոգևորության հըզոր թևերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեգ:

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
20 Էդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ:

Զորե՜ր, ա՜յ ձորեր, սև, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վերքերի նըման.
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել:

Դուք էլ խոսեցե՜ք, դուք էլ պատմեցե՜ք
Ձեր անդունդներով եկեք չափվեցե՜ք,
Դուք ի՞լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Մի քանի տարի սըրանից առաջ,
Երբ որ հայրենիք էի ես գնում,
Այն մըթին ձորում, ուր որ քաղցրավաչ
Մեղեդու ձայնով Դեբեդն է վազում,

Ժայռերի գլխին, ուր բազկատարած
Աղոթք են անում Հաղպատ-Սանահին,
Գիշերը հասավ, ու ես դադարած
«Ղոնաղ» մնացի ծեր այգեպանին:

Նա տրտնջալով ծերության ընդդեմ
Քըթքթում էր յուր ծառերի տակին.
«Բարի օր, պապի», ու խոժոռադեմ
Ծերը ետ նայեց ձեռքը ճակատին:

Մի կասկածավոր ու խիստ հայացքով
Ջննելուց հետո հոնքերը կիտեց,

Սաստիկ սառնությամբ պատասխան տալով
Դեպի յուր դափեն ինձ առաջնորդեց:

45 Նրա ետևից անխոս գընացի,
Փընթփնթացնում էր նա իմ առաջին —
«Մեր բանը պրծավ, երբ էս ձորերի
Մըտերը սրանք էլ եկան սովրեցին:

Սա էր մնացել, սա էլ անպատճառ
50 Մեր գլխին մի նոր կրակ է բերում,—
Նոր դրած բեգյար, կամ իզուր մի շառ,
Թե չէ ինչ ունի էս խուլ ձորերում:

Եկած կըլինի, որ խաբար տանի,
Թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա,
55 Ով յուր դռանը անասուն ունի,
Կամ որի կնգա աչքերում յուղ կա:

Կամ հին գերեզման քանդող կըլինի,
Կամ թե կըհամրի ծմակի ծառերը,
Կամ նրա համար, թե օրը քանի՞
60 Զու են ածում մեր գյուղի հավերը...

Ո՞վ գիտի, հիմա ով վեր է կենում
Գլխին էս տեսակ գդակ է դնում...»
Լռեց ծերունին ծանրը տնքալով
Ու առաջ գնաց թին դիմհար տալով:

65 Իսկ երբ որ հասանք աղքատիկ դափին՝
Ինձ հրրավիրեց, և յուր ունեցած

Շորի կտորը փռեց իմ տակին,
Ինքը առաջիս մնաց լուռ կանգնած:

Ճերմակ գլուխը ապա բարձրացրեց,
70 Հոնքերի տակից ազդու նայելով,
Որոտող ձայնով այսպես հարցըրեց,
Զզվանք ու զայրույթն հազիվ պահելով:

— Աղա՛, հարցնելը ամոթ չըլինի,
Հրամանքդ ինչ մարդ ես, կամ որտեղից ուր...
75 Եվ չըսպասելով մի պատասխանի՝
Ինքը շարունակ խոսեց կցկտուր.

— Ով էլ որ լինիս՝ բարով ես եկել,
Անփորձանք լինի քո ճանապարհը,
Աստված կյանք տա ձեզ, որ հարցնեք դուք էլ,
80 Թե ինչ ցավ ունի խեղճ ռանչպարը:

Աղքատ մարդիկ ենք, մեր ձորերի մեջ
Անց ենք կացնում մեր սև-սև օրերը.
Թե որքան ենք զուրկ, որքան ենք մենք խեղճ,
Էդ հաստատ գիտե Ինքը — միայն Տերը:

85 Բայց դու էլ խելոք մի մարդ ես գիտուն,
Քո բարի աչքով տեսնում ես էլի,
Տկլոր ու սոված էսպես տարին բուն
Քարի-հողի հետ կռիվ ենք տալի:

Թե որ ձեռներս էլ մի բան է ընկնում,
90 Չենք կարողանում բերան հասցընենք...

էսքան տանջվելով քրտինք ենք անում,
էլ էն սևերեսն, էլ էն սովածն ենք...

— Ինչիցն է, պապի, այսքան ճոխ երկրում,
Ինչպես ասում ես, դժվար եք ապրում,
95 Վարձատրություն չե՞ք ստանում հողից,
Թե՞ նեղություն է գալիս մի տեղից:

— Մեր նեղությունը... քեզ ինչպե՞ս հայտնեմ,
Թող հաստատ լինի մեր թագավորը.
Ես ընչի տեր եմ, խոսեմ նրա դեմ,
100 Բայց Աստված կտրի մեր քաշած օրը...

Ինչ անես, ախպե՛ր, ումի՞ց խռովես,
Պետք է համբերել, թե լավ թե օսալ...
Բայց դու չասացիր հրամանքդ ով ես,
Ուզում եմ քեզ հետ լիասիրտ խոսալ:

105 — Ես քաղաքումը կարդում եմ, պապի:
«Հա՛, տիրացու ես, բա ինչո՞ւ չասիր...»
Կանչեց ծերունին ու իրեն դափի
Դռնից հեռացավ. «Մի քիչ սպասիր»:

ՀԱՏՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Մըթնեց: Ծերունին լուռ չարչարանքով
110 Մի քանի կոճղեր դըրեց կըրակին,
Նորից բարևեց իր երկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին:

Ու նըստոտեցինք իրար դեմ ու դեմ
Սաստությամբ վառվող կրակի շուրջը,
115 Մեր առջև ձորն էր թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը:

Գիշերվան անքուն հավքերն են տըխուր
Ծըվում, ծըկլթում խավարի միջում,
«Որբն» է եղբորը կանչում ցավալուր,
120 Բուն է իր դաժան վայը կռընչում:

Ու ողջ միասին մի խորունկ թախիծ,
Մի մութ զարզանդ են գիշերին տալի...
Ահա տարածվեց հեռու ծըմակից
Եվ ձիգ ոռնոցը սովատանջ գիլի:

* * *

125 Ծանըր տընքալով թեք ընկավ ծերը,
Երկար կոթավոր չիբուխը լըցրեց.
Գիշերվա նըման կիտած նոթերը
Խուլ որոտալով էսպես հարցըրեց.

— Ինչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ,
130 Իմանամ, ես էլ ուրիշին ասեմ.
Մեռնող-ապրողից, թանգ ու էժանից,
Կամ նոր դուրս եկած գազեթից, բանից...

Երեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, որ էսպես լինի,

135 Խորհուրդ են արել, որ այսուհետև
Իր թախտից զըրկվի, ով կռիվ անի:

Ո՞վ է իմացել էսպես հրաշք բան:
Էլ ինչ թագավոր կամ էլ ինչ իշխան,
Որ կռիվ չանի, ուրիշին չըտիրի,
140 Մարդ չըկոտորի, երկիր չավերի...

— Էհ, Աստված սիրես, թող դրանց, պապի,
Ես շատ եմ զըզվել քաղքից, գազեթից,
Ինչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից:

145 — Ինչ ես կորցըրել — ընչի ման գալի,
Խոսեց ծերունին դառը խնդալով,
Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի,
Ամեն մեռնողի երանի տալով:

Մեր ապրուստն ինչ է.— մի կտոր չոր հաց,
150 Էն էլ հըրեն հա՛ — երկընքից կախված:
Մի մարդ որ նըրա երեսը պահի՝
Նըրա ապրուստը ինչ պետք է լինի...

Ես քեզ օրինակ: Էս խոր ձորերում
Էս է չորս քսան տարիս լըրացավ,
155 Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքըս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ
Պըտիտ եմ գալի էս ձորի միջին,

Կըռիվս եմ տալի հազար ցավի հետ
160 Ու չեմ կարենում — չեմ հասնում վերջին:

Վազներից էնքան օգուտ չի գալի,
Ինչ նրանց համար ես փող եմ տալի.
Գըլուխը քարը, գոնե փող լիներ,
Էլ ինչո՞ւ էսքան մարդ գանգատ կաներ:

165 Ջախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
Սրա համար էլ փող եմ վըճարում:
Էս դափեն ի՞նչ է — մի երկու լատան,
Հինգ ու վեց անգամ տարան դատաստան:

Ասում են՝ գեջ ես կտրել դու մերին:
170 Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,
Մինչև չըտեսնես մեծին, պիսերին.
Հիմի տես նրանք ինչքան են ուզում:

Գողն էլ մի կըռնից, գելն էլ մյուս կըռնից,
Աչքըդ թեքեցիր — բանիդ տերը չես.
175 Քաշում են տանից, քաշում են դըռնից,
Ու չես իմանում որ կողմը թըռչես:

Թե տանուտերին գանգատ եմ գնում,
Բան չեմ վաստակում բացի դուշմանից.
Գողերի հետքը իր տունն է տանում,
180 Համեցե՛ք դիվան ուզիր սըրանից:

Նստեցնում է քեզ մի երկու բաժակ
Տաք ջուր խմեցնում կամ մի թաս օղի.

— Դու գնա, պա՛պի, միամիտ քընիր,
Ես աչքի լուսը կըհանեմ գողի...

185 Դարձել է աշխարքն, ա՛խպեր, առ ու փախ,
Սերը դարձել սուր ու ջուրը — արին,
Ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ վախ,
Վայը եկել է տարել տըկարին:

Երեկ իրիկուն էդ կողքիդ սընից
190 Կախ էին արած երեք հըրացան.
Տղեք են՝ փախած տանից, դիվանից,
Եկան ու ծեքին էլ ետ հեռացան:

Ո՞վ է մեղավոր... Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով է մեղավոր:
195 Հենց էն եմ տեսնում — մութն, անգետ մարդիկ,
Էլ մենք ենք մեջտեղ տանջվում ամեն օր...

Մեր բանն էլ, ախպեր, էսպես է եկած,
Մենք լեզու չունենք — ուժեղը Աստված:
Մեր հին ադաթից ընկել ենք, զըրկվել,
200 Նորն էլ չըգիտենք թե ինչ է եկել:

Էստեղ մեզ մոտիկ թավադներ ունենք,
Ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
Փորներն ողողած, փոխկները թողած,
Կըռները կանթած՝ կըտերը կանգնած:

205 Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի,
Թըքես մի ծերից մյուս ծերը կընկնի.

Ոչ ինքն է վարում, ոչ տալիս մեկին,
Բուռն է հավաքել գյուղացու հոգին:

Գնում է ուրշի ապրանքը տանում,
210 Թաքուն հավաքում իր հանդն է անում,
Աղմուկով քըշում իր հանդի միջից,
Շտրափ է առնում անմեղ տիրոջից:

Պարում է ձմեռն հարսանիքներում,
Կամ մեծավորի թեփշի է լիզում,
215 Մինչև մի քանի շահի է ճարում,
Էն էլ տանում է լափում թիփլիզում:

Մի օր սա եկավ, թե չոբան Զատին
Ոչխարը թաքուն իմ հանդն է քաշել.
Զատին էլ կուլ չի գընաց թավադին.
220 — Թող գա մի տեսնենք — էդ ո՞վ է տեսել:

Աղաչանք արի, պաղատանք արի.
— Ա՛յ տղա, ասի, ետ քաշվի, հեռի՛,
Բեր ձեռը վեր կալ, անեծք չար բանին...
Բայց ինչ հասկացնես բըռի չոբանին:

225 — Չէ՛ որ չէ՛, ասավ, էն լեռ սարի պես
Գընաց դիք կանգնեց գեղի մեյդանում.
Էս դատաստանը, էս թավադն, էս ես,
Թող գա մի տեսնենք ինձ ինչ է անում:

Եկան իրարու, խոսք խոսքի հասավ,
230 Զատին մի քանի կոշտ խոսքեր ասավ.

Դե մարդիկ երբոր կռիվ են անում,
Մեջտեղ փըլավ չեն իրար բաժանում:

Մեր տանուտերն էլ, Աստված է օրհնել,
Էսպես մի բան էր պակաս նըրան էլ.
235 Մեկի պոչը միշտ մեկելի տակին,
Եկավ տաքացած, ճիպոտը ձեռքին:

Եկավ էս Զատնիս հաչիցը կապեց,
Ինչքան որ գիտես՝ քո ասած թակեց,
Թե՝ պետք է կորցնեմ քեզ էնքան հեռու,
240 Որ էլ չըտեսնես արևը լոռու:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի ոտը խընդիրքով,
Ինչքան որ տվինք, ավել խընդրեցինք —
Բանը վերջացնի գեղական կարգով:

245 Ախպեր, ասեցինք, ինչ արիք իրար,
Խոսք եք կռվացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տըվիր, համ ըշտրափըդ առ,
Արի վերջացրու, բոլ էլավ, հերիք:

Սա ոտը դրեց վերի թարեքին.
250 — Էսքան ու էսքան բերեք, որ ներենք...
— Էս է ունեցածն Աստըծու տակին,
Էլ չըկա, ախպեր, որտեղից բերենք:

Ինչ արինք՝ չարինք, չեկավ հավատի,
Գընաց ավելի բարձըր գանգատվեց,

255 Թե՝ ինքըս Թավադ, Թավադի որդի,
Ու չոբան Զատին ինձ ուշունց տըվեց...

Վերևից մի մարդ եկավ քննություն,
Միրուքը հաչա, աստղը ճակատին,
Եկավ, վեր եկավ, մըտավ քյոխվի տուն,
260 — Ո՞րտեղ է, ասավ, էն չոբան Զատին...

Զատին էլ եկավ անճոռնի ու մեծ,
Էն փետի նըման մեջտեղը տընկվեց.
Ոչ օրենք գիտի, ոչ կարգն ու լեզուն,
Բերանը կապած սարի անասուն:

265 Քննությունն արին, բըռնեցին գյադին,
Թե՝ ինչպես ուշունց կըտաս Թավադին.
Բաց արին տեսան գըրած զակոնում,
Թե չոբան Զատին Սիբիր է գընում:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
270 Գնացինք Թավադի ոտը խընդիրքով,
Ինչ ուզեց տըվինք, հետն էլ խընդրեցինք՝
Բանը վերջացնի գեղական կարգով:

Ա՛խպեր, ասեցինք, ինչ արիք իրար,
Խոսք եք կռվացրել, արին հո չարիք.
275 Համ ծեծել տըվիր, համ ուզածըդ առ,
Արի վերջացրու, բոլ էլավ, հերիք:

— Հո՛ գիտեք, ասավ, ես էլ խըղճի տեր,
Չեմ ուզում ընկնեմ արինն էդ տըղի,

Դրրա խիզանը մենակ էս գիշեր
280 Պետք է որ գրցի տեղը էս աղի...

Մարդը խիղճ ունի՝ էսպես է ասում.
Սրրանից ավել էլ ինչ եք ուզում.
Բայց տրղամարդը, որ նամուս ունի,
Լավ է իմանում ինչ պատասխանի...

285 Երեկ իրիկուն էդ կողքիդ սընից
Կախ էին արած երեք հրրացան:
Քանի՜-քանի մարդ կորավ իր տանից,
Քանի՜-քանի մարդ դառավ մարդասպան...

Ո՞վ է մեղավոր: Միտք եմ անում, միտք,
290 Ու չեմ հասկանում ով է մեղավոր.
Բայց իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում —
Ապրիլ չի լինիլ էսպես ամեն օր:

Մինը իր կամքին՝ ինչ ասես անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի.
295 Ես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Էն որ Աստվածն է կարգ դրրել էսպես...

Երկուսն էլ հայ են, ունեն մի հավատ,
Էլ ընչի մուժիկ, կամ էլ ինչ թավադ.
Նրրա արինը կարմիր է մերից,
300 Թե՞ ավել հունար դուրս կրգա ձեռից:

Թե չէ՝ թավադ ես՝ ինչ ուզես անես,
Ես չրկարենամ քեզ մի խոսք ասե՞լ...

Էհ, մի՛ խոսեցնի, Աստված կըսիրես,
Թե չէ մի դաշաղ կըդառնամ ես էլ...

305 Լռեց ծերունին: Իրար դեմ ու դեմ
Թիկնած էինք թեժ կըրակի շուրջը,
Մեր առջև ձորն էր թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը:

ՎԵՐՋԵՐԳ

Այստեղ, բարեկամ, ծերունու տրտում
310 Պատմության մասին խոսքս լրացավ.
Միառժամանակ գուցե քո սրտում
Օրվան խնջույքի ձայնը խլացավ.

Եվ քո հայացքը փայլից շլացած
Ակամա ընկավ այն մթին ձորը,
315 Ուր որ, տակավին բախտից հալածված.
Քաղցած ու վշտոտ վռչում* է ծերը.

Թերևս և քեզ յուր աղքատ դափում
Ներկայանում է մռայլ ծերունին,
Գուցե մի րոպե նաև քո հոգում
320 Նրա խոսքերը արձագանք տվին.

Գուցե ծերունու երգը ցավալի
Տրտմություն ազդեց նաև քո սրտին,
Բայց այդ դեռ այն չէ, որ այսքան տարի
Տանջեց այցելու երիտասարդին...

*Վռչալ - հառաչել

ԱՆՈՒՇ

ՆԱԽԵՐԳԱՆՔ
(Համբարձման գիշերը)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թրռչելով՝
Փերիները սարի գլխին
Հավաքվեցին գիշերով։

5 — Եկե՛ք, քույրե՛ր, սեգ սարերի
Զրքնաղագեղ ոգիներ,
Եկե՛ք, ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ։

Օխտն աղբյուրից ջուր է առել
10 Կույս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրրել,
Խընդիրք արել աստղերին,
15 Փափագ սրրտով խընդիրք արել՝
Բարի ժրպտան իր սերին...

Ափսո՜ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու յարին.
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերին...:

Ու նըրանց հետ՝ ցող-արցունքով
Լըցված սըրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխուր սյուքով
Հառաչեցին էն գիշեր:

— Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու յարին...
Վուշ-վո՛ւշ, Սարո՜, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

— Եկե՛ք, քույրե՛ր, սեգ սարերի
Զըքնաղագեղ ոգիներ...
Ու փերիներն էսպես տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հընչյուններով դյութական,
Ու հենց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուզվեցին ակն աղբյուրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վըտակների
Ալիքները պաղպաջուն:

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

I

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Էն չըքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն ահա փըռած տիրաբար՝
Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն:
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղո՛ւց կարոտով ըսպասում են ինձ,
Ու ձըմռան երկար գիշերը նըստած՝
Խոսում են Լոռու հին-հին քաջերից:
Դեպ էն սարերը, որ վես, վիթխարի,
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկա՛ շուրջպարի բըռնած երկընքում,
Հըրճվում են, ասես էն մեծ հարսանքում
Պերճ Արագածի նազելի դըստեր,
Որ Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ,
Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լոռի:

II

Է՛յ հին ծանոթներ, է՛յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա ու միտըս ընկան,
Առաջըս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չըկան:
Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
Որ անցած գարնան կային ձեր լանջում.

Անցել ձեր գլխի հերվան ձյունի պես,
Բայց եկել եմ ես նրանց եմ կանչում:
65 Ողջո՛ւյն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թռչուն կարոտով փընտրում ձոր ու լեռ,
Դյութական ձայնով կանչում է հանդես:
Դո՛ւրս եկեք կըրկին շիրմից, խավարից,
70 Դո՛ւրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լըսեմ,
Կյանքով շընչեցե՛ք, ապրեցե՛ք նորից,
Լըցրե՛ք պոետի հաճույքը վըսեմ...

III

Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թավուտ ծըմակի լըռին խորքերից,
75 Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում եմ նորից:
Թընդում է զըվարթ աղմուկը բինի,
Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից,
Ու բոլորն, ահա, նորից կենդանի
80 Ելնում են աշխույժ վաղորդյան մութից,
Ու թա՛ռմ, ցողապատ լեռների լանջում...
Սո՛ւս... ակա՛նջ արա,— հովիվն է կանչում...

IV

— Աղջի՛, անաստված, նըստի՛ր վըրանում,
Ինչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
85 Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,

Խաղեր կապելով,
Ջոլեր չափելով,
Ոչխարքս անտեր,
Ընկել եմ հանդեր:

90 Ամա՜ն էրեցիր սիրտքս քու սիրով,
Ոտքս կապեցիր թել-թել մազերով.
Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զոռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
95 Ա՛յ դու կարմրաթուշ,
Թուխամազ Անուշ:

Քու հերն ու մերը թե որ ինձ չըտան,
Արին կըթափեմ ես գետի նըման.
Սարերը կընկնեմ, կորչեմ անգյուման,
100 Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
Աղջիկ, քեզ համար:

V

Երգում է Սարոն, ու չի կարենում
105 Աղջիկը հանգիստ նըստի վըրանում:
— Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ,
Դու չե՞ս իմանում... ականջ արա, տե՛ս...
— Հերի՛ք է, Անո՛ւշ, ներս արի դագեն,
Քանի՛ դուրս թըռչես, նայես դես ու դեն,

110 Տեսնողն էլ կասի — ինչ աղջիկ է սա...
Հազար մարդի մոտ կերթա, կըխոսա:
— Մըտիկ տուր, նանի՛, էն սարի լանջին,
Ինչքան ավլուկ է տալիս կանանչին...
Նանի՛, թող գընամ քաղեմ ու հյուսեմ,
115 էն սարի լանջին «ջան գյուլում» ասեմ:
— Հանգի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
Ինչ ունիս ջահել չոբանների մոտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի՛, ամոթ է, ամո՛թ:
120 — Ա՛խ, սիրտըս, նանի՛, չըգիտեմ ընչի,
Մին լաց է լինում սևակնա՛ծ, տըխո՛ւր,
Մին թև է առնում, ուզում է թըռչի,
Չըգիտեմ՝ թե ո՛ւր, չըգիտեմ՝ թե ուր...
Նա՛նի ջան, նա՛նի, ես ինչպես անեմ,
125 Ինչ անի անքուն, անհանգիստ բալեդ.
Նա՛նի ջան, նա՛նի, կուժը թող առնեմ,
Աղբյո՛ւրը գընամ աղջիկների հետ...

VI

Կըժերն ուսած՝ թըռվըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
130 Խընդում իրար ուսի տալով,
Երգը զընգում սարն ի վեր:

— Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
Էն ո՞ւմ յարն է նըստած լալի
135 Հոնգուր-հոնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
Որ գալիս եք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չոլեր,
Յարս էլ խըմե՞ց էդ ջըրից։

140 Յարաբ խըմե՞ց, յարաբ հովցա՞վ։
Վառված սիրտը էն յարի,
Յարաբ հովցա՞վ, յարաբ անցա՞վ
Անքուն ցավը ջիգյարի...

— Աղջի՛, քու յարն եկավ անցավ
145 Վառված, տարված քու սիրով,
Էրված ջիգյարն՝ եկավ անցավ,
Զըհովացավ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
150 Ա՛խ, իմ ազիզ յարն է լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում։

VII

Ու պառավ նանի սըրտի մեջ հանկարծ
Ջեն տըվավ թաքուն մի խավար կասկած.
— Էն ե՛րբ էր՝ Անուշն իր կուժը առավ,
155 Աղբյուրը գընաց ու ետ չըդառավ...
Ամպերն եկել են սարերը պատել,
Ջորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,

Հազար ջահելներ վրխտում են հիմի...
160 Ու ելավ տեղից պառավը հանկարծ.
— Ո՞ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մազրդ կըտրած...
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զավակին:
— Աղջի՛, սևասի՛րտ, քու ահը կըտրի,
165 Աղջիկը մենակ ձո՞րը կըմըտնի.
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՞նչ ես կորցըրել՝ չես կարում գըտնել...
Աղջի, հե՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ...
Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ».
170 Ու ձորի գըլխին մոլորված կանգնած
Նայում է ներքև սիրտը սևակնած:
Ամպերն եկել են սարերը պատել,
Ջորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար շար ու շառ, հազար հարամի.
175 Հազար ջահելներ վրխտում են հիմի:

VIII

— Թո՛ղ, կանչում են ինձ... մերըս կիմանա...
— Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի՛ քիչ էլ մընա...
— Չէ՛, թող ես գնամ... ա՛խ, ի՞նչ խենթ եմ ես...
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,
180 Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես ե՞րբ եմ եկել էստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրա՛վ,

185 Էնքան մընացի՝ աչքըս ջուր դառավ.
Ինձ չես լըսում,
Չես ափսոսում,
Էլ չես ասում՝
Ինչ կըլնեմ ես...
190 Ես կըվառվեմ,
Հուր կըդառնամ,
Ես կըհալվեմ,
Ջուր կըդառնամ,
Ես չըգիտեմ՝
195 Ինչ կըդառնամ,
Թե որ մին էլ
Էսպես մընամ...
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես,
200 Մընում էր յարին,
Ու չեկավ նա տես:
Խեղճը դողալով՝
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ,
205 Ուռենի դարձավ:
Ջըրերի վըրա
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
210 Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ո՞նց է մոռանում...

— Ա՜խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում.
215 Բա դու չե՞ս լսում,
էն, որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում...
էն, որ գիշերով շրհու եմ փըչում,
էն ո՞ւմ եմ կանչում...
220 էն, որ մոլորված նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում...
էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
էն ո՞ւմ եմ հիշում...
Ա՜խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անասելի՜ Անո՛ւշ...
225 Արբեցա՜ծ, անո՛ւժ
Հառաչեց հովիվն ու սըրտին ընկավ,
Հալվեցա՜վ, հանգա՜վ...

IX

— Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...
Կանչում է մերը, հառաչում, կանչում:
230 — Գալիս եմ, գալի՜ս, գալիս եմ, նանի՛...
Ջորից աղջըկա ձենն է ղողանջում:
Ու մազերն անկարգ տըված թիկունքով
Ու ցըրված շիկնած այտերի վըրան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից
235 Անուշը՝ փախած եղնիկի նըման:
Նա կուժը դատարկ ետ բերավ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաշոր չըկա,
Թողել է էն էլ ջըրի եզերքին...
Ա՜խ, անհոգություն ջահել աղջըկա...

240 — Նանի՛, վախեցի, գանգատվում է նա,
Եվ ուզում է լալ, չի կարողանում.
— Նանի՛, ներքևում ես մարդիկ տեսա,
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում...
Անիծում է ծեր մերը բարկացած
245 Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անեծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ
X
(Համբարձման առավոտը)

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով:
250 Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով:

— Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սև սարեր, յա՛յլա,
255 Յա՛յլա ջան, յա՛յլա:

Երգ ու բույր խառնած,
Թև-թևի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
260 Ծաղկի հետ խաղում,
Ինչպես թիթեռներ:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Լավ օրեր, յա՛յլա,
265 Յա՛յլա ջան, յա՛յլա:

Եկավ Համբարձում՝
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում.
— Ո՞վ է մեզ գբրված:
270 — Ա՛յ ջան տղա, չոբա՛ն տղա, ո՞ւմն ես դու:
— Աստված գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դե հանի՛ր, ա՛ղջի,
Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
275 Էն իգիթ յարին:

— Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի,
Ինչ դարդ ունեմ, քանի նա կա աշխարհի:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
280 Հուր սըրտեր, յա՛յլա:
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մեկին իր երազն ու սեր,
285 Մյուսի մուրազը սըրտումն է մընում:

XI

Պըտույտ է տալիս վիճակը նորից՝
Քուշուշքը գըլխին ծաղիկ ծաղկամեր,
Թընդում «ջան գյուլում» մատաղ սըրտերից,
Հետը գըվգըվում էն ծաղկոտ սարեր:

290 — Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգյարին գյուլլա դիպչի
Ով որ քեզ սիրի, աղջիկ:

— Ո՞հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,
295 Սևաբախտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորված, ապուշ:

— Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա.
300 Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա՛, ջան գյուլում ասա:

— Ա՛խ, չէ՛, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ.
Ես երբե՛ք, երբե՛ք բախտ չեմ ունեցել...
Ես միշտ էլ էսպես անբախտ կըլինեմ.
305 Մանուկ օրից են դեռ ինձ անիծել...
Ասում են՝ մի օր, ես օրորոցում,
Մի պառավ դարվիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,

Իմ նանը նրրան բաժին չի տալի.
310 — Կորի՛, ասում է, կորի՛ մեր դրռնից,
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա՛...
Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ,
Թե՝ դրրա օրը լացով անց կենա...
Ա՛խ, էն դարվիշի անեծքին անգութ
315 Ու էս վիճակին տեղյակ է Աստված.
Սիրտըս էլ միշտ փա՛կ, սիրտըս էլ միշտ մո՛ւթ,
Ի՞նչ կա, չըգիտեմ, իմ առջև պահված...
— Մի՛ տըրտմիր, Անո՛ւշ, մի՛ լինիր համառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
320 Մի խելառ դարվիշ, մի անեծք հիմար,
Ու լալիս ես դու էդպես սրրտաճա՛ք...
Հանգի՛ստ կաց, քուրի՛կ, մի՛ վախիր էդքան,
Կյանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Էդ քո նորահաս մատաղ կուսության
325 Առաջև դեռ կան երջանիկ օրեր:
Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա,
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գյուլում ասա:

(Խումբը երգում է)

330 Աղջի, բախտավո՛ր,
Երնե՛կ քու սերին,
Քու սարի սովոր
Սև-սև աչքերին:

Համբարձում, յա՛յլա,
335 Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սեր-օրեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Մեռնեմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
340 Սարի պես մեջքիդ
Կանգնած յար ունես:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սար-յարեր, յա՛յլա,
345 Յա՛յլա ջան, յա՛յլա:

(Անուշը մենակ)

Ա՜խ, իմ բախտը կանչում է ինձ,
Չեմ հասկանում՝ դեպի ուր...
Դողում է պաղ նըրա ձենից
Իմ սիրտը սև ու տըխուր:

350 Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք,
Թաքուն մի ցավ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն է արցունք,
Սիրտներըդ սև ու տըխուր:

Ա՜խ, ծաղիկներն էս աշխարհքում
355 Տանջվում են միշտ էսպես զուր,

Տըրորվում են ու թառամում՝
Սիրտները սև ու տըխուր:

(Խումբը հեռվից)

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
360 Վառ ցավեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

XII

Ջըմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի.
Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
365 Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լեն հըրապարակ
Բաց արին մեջտեղն արձակ գըլխատան,
Զուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
370 Հարա՛յ են տալի — «քաշի՛ հա, քաշի՛...»
Ու դուրս քաշեցին զոռով երկուսին.
Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
Անդրանիկ եղբայր գառնարած Մոսին:
Ողջ գյուղը կանգնեց պարըսպի նման,
375 Ջոկվեց, բաժանվեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,

Կանգնեց թիկունքին տըղերանց մեկի։
Գոռում են, գոչում երկու բանակից.
— Սըրտապինդ կացեք, մի՛ վախեք, տըղերք,
380 Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք։
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
Փեշերը հավաք խըրում են գոտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
385 Իրար են հասնում թափով մոլեգին...
Ադաթ կա սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց ադաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին։
390 Ու իրար բըռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի.
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դըժվար է իբրև հաղթել մեկ մեկի։
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
395 Զուր սըրտատըրոփ նայում աղջիկներ,
Եվ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել ինչպես մի պատկեր։
Անուշը կանգնած... Սարոն նըկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ.
400 Աչքերի առջև մըլարը պատեց,
Մոռացավ ընկեր, ադաթ ու աշխարք։
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արավ Սարոն, ծընկեց կատաղի,
405 Գետնեց ընկերին ու չոքեց վըրեն։

Ամբոխը թափվեց հարա-հրրոցով,
Վեր թրռցրեց ջահել փահլևաններին,
Եվ ուրախության աղմուկ-գոռոցով
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:
410 Ցընծության ձայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:

XIII

Վեր կացավ Մոսին, իրեն կըտրատում,
415 — Թող գա՛, գոռում է, որ բըռնենք նորից,
Թե չէ նամարդը, արևս եմ երդվում,
Էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից:
Վե՛ր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
Մեյդան բաց արեք, թող մին էլ մեջ գա...:
420 Ու ամեն կողմից ուրախ հրոհրռում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

— Ջե՛լավ, էդ չե՛լավ,
Վեր չի գըցել դեռ,
Մոսին թոլ էլավ
425 — Խոզապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
Շատ էլ լավ կանի.
Մեջքը թա՛փ տըվեք,
Թող մին էլ բըռնի...
430 Հա՛, հա՛, հա՛, տըղերք,
Մեջքը թա՛փ տըվեք...:

XIV

Եվ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր.
Արյուն է կաթում սևակնած սրրտից,
Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
— Ամո՛թ քեզ, Մոսի՛, թո՛ւք ու նախատինք,
— Ամո՛թ քեզ Նըման գոված իգիթին,
Մի անունդ հիշիր, մի բոյիդ մըտիկ,
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:
Ինչպես վեր ընկար դո՛ւ սարի Նըման,
Երբոր նայում էր ողջ գյուղը կանգնած...
Դո՛ւ... կուչ գաս տակին Սարոյի ծընկան,
Նըրանից հետո երևաս կանանց...
Եկա՞ծ էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դե մեռի՛ր, էլի՛, գետինը մըտի՛ր,
Տանը վե՛ր ընկիր՝ իլիկ պըտըտիր...:

XV

— Վա՜յ, վա՜յ, Մո՛սի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
Սըրանից հետո չե՛մ սիրիլ Նըրան...
Վախենում եմ ես... ղամեդ տեղը դիր...
Սիրտըս դողում է տերևի Նըման...
Խնդրում էր լալով եղբոր առաջին
Անզոր ու դալուկ իր քույրը չոքած.
Մոսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել Նըրան աչքը բաց:

— Դե իմ անունով երդվիր, անըզգամ,
Որ էլ Սարոյին դու չես սիրելու,
Թե չէ՝ տեսնում ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրտըդ եմ խըրելու։
— Քու ոտի հողն եմ, Մոսի ջան, Մոսի,
Դու քու եսիրին երդում ես տալիս...
Ես էլ Սարոյին չեմ սիրում՝ ասի,
Տեսնում ես չոքած ինչպես եմ լալիս...
— Դու խաբում ես ինձ, սուտլիկ, խաբեբա.
Չես սիրում ասիր. էն ինչ է հապա,
Էն ինչ է հապա, որ տեղն ենք մըտնում՝
Հեկեկում ես դու գիշերվա մըթնում.
Էն ինչ է հապա, որ դու երազում
«Սարո ջան, Սարո... Սարո» ես ասում...
— Մոսի ջան, Մոսի, գըլխովըդ շուռ գամ,
Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
Ինձ մի՛ ըսպանիր, դամեդ տար հեռու...
Քու քույրը չեմ ես... իմ Մոսին չես դու...

XVI

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
Ախպեր տըղերքը էս դեպքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտության չեղավ մի հընար։
Անկոտրում Մոսին էլ ո՞ր Մոսին էր,
Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,

Իրեն հարազատ քըրոջը տեսներ
Նամարդ ընկերի՝ Սարոյի գըրկում.
Գուցե գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
485 Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
Սարոյի անունն ու սերը թաքուն
Խանչալի ծերով սըրտիցը հանի:
Ո՞վ գիտի, գուցե հենց էս գիշեր էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու համառ,
490 Մեկմեկու հոտից ոչխար են քըշել,
Մեկմեկից վըրեժ առնելու համար:
Կարող է նույնպես պատահել հանկարծ,
Որ մեկի դեզը, արդյունքը հընձի,
Գիշերվա ժամին, հըրով բըռընկված,
495 Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նման՝
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Զաթինդաղ լերան
Նոր է արևը պըռունգը հանում:
500 Գյուղում աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծերերին կանայք հավաքված,
Տըղերքը դեպի քարափն են վազում՝
Հըրացանների կիսերից բռնած:

XVIII

Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովված տըղերանց միջին,
Մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ
Էսպես նա պատմեց զոռ տալով չիբխին.
— Էս գիշեր, կեսը կըլներ գիշերվա,
Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մեջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա՛, հալալ կեսը կըլիներ գիշերվա,
Շունը վեր կացավ էս կըռան վըրա.
Հե՛յ-հե՛յ, կանչեցի, ձեն տըվող չելավ.
Շունը գազազեց, շունը վեր կալավ...
Հե՛յ գիդի, ասի ինքս իմ միջում,
Ի՞նչ է մընացել առաջվան տըղից.
Քընում էի վաղ մենակ արխաջում,
Մի ձեն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն էի ասում, քնել չէի դեռ.
Կըլիներ դառը գիշերվան կեսը,
Երկու մարդկային սև կերպարանքներ
Շան առջև փախած՝ ցած իջան դեսը...
Էս որ լըսեցին, դես ու դեն ցըրված
Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
Ու մըտի տակին՝, ճամփիցը ծըռված,
Երկու մարդու թարմ ոտնատեղ գըտան:

՝Մըտի տակին /բրբ./ - քարափից իջնող ատիճանաձև ճանապարհ

XIX

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տրվեց՝
530 Զոբան Սարոյին գըտնելու համար,
Որ սարիցն իջավ, Անուշին փախցրեց։
Մի ամսից հետո տըղերքն եկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.
— Հալալ է տըղին, ա՛յ իգիթություն,
535 Ահա թե ինչպես կըփախցնեն աղջիկ։
Մենակ Անուշի ախպերը — Մոսին
Մընաց հանդերում. երդում կերավ նա,
Ուր որ էլ լինին՝ նըրանց միասին
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանա։
540 Մնաց հանդերում։ Եվ ահա մի օր,
Քաղվոր կանանց մեջ, մըթան հետ, թաքուն,
Շորերը պատռած, տըխուր գըլխակոր
Անուշը ձորից եկավ հորանց տուն։

XX

— Աղջի՛, Վա՛րդիշաղ, թե հոգիդ սիրես,
545 Մի գարիդ գըցի՛ր, տես ինչ է ասում.
Աչքըս խավարի, տեսիլք դառնամ ես,
— Տեսիլք եմ տեսել գիշերըս երազում։
Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,
Անբախտ Սարոյի ոչխարը կանգնած,
550 Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձեն ձենի տըված...

Մի գարիդ գըցի՛ր, թե որդով խընդաս,
էս երազն իսկի ես լավ չեմ փորձել.
Ողորմած Աստված, Քու դուռը բանաս,
555 Քու ոտի հողն ենք — Դու էս ըստեղծել...
Անբան գառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձենով լալիս,
Սարոյի նանն էլ նըրանց առաջին
Աղլուխ էր փռել ու պար էր գալիս...
560 — Աղջի՛, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էնպես դուրս եկավ.
Էս չարն, էս բարին... Սարոն է էս էլ...
Տե՛ս, ահա, Սարոն սև ճամփեն ընկավ...
Աստված խընայի ջահել-ջիվանին,
565 Աստված խընայի իր անբախտ նանին...

XXI

Ու ման է գալի սարերը ընկած
Սարոն փախցրած եղջերվի նըման,
Օրհասն առաջին, գընդակն ետևից,
Հանդերը՝ դըժոխք, ընկերը՝ դուշման:

570 Եվ երբ երեկոն, հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խավարն է պատում,
Նըրա բայաթին ողբում է տըխուր,
Ընկեր սարերին խոսում, գանգատվում:

— Բարձըր սարեր, ա՛յ սարեր,
575 Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,

Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք,
Իմ դարդերի թայ սարե՛ր:

Որս եմ՝ բութես ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
580 Կուզեմ կորչեմ անգյուման,
Էս աշխարքից բեզարած:

Կորչեմ բեզար դատարկուն,
Քար-սարեսար դատարկուն,
Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
585 Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ, կըմեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թե հանկարծ իմանա,
Ես ազատվեմ էս ցավից,
Աչքը լալով նա մընա:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

XXII

590 Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խոսք չեն գըտնում ասեն անարգված,
Տարած, ետ բերած, անբախտ աղջըկան:
Աստված խընայեց՝ կոպիտ ախպերը
595 Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռադեմ ալևոր հերը

Սկսավ փըրփըրած թըքել, անիծել։
— Դո՛ւրս գընա, կորի՛, ա՛յ լիրբ, անըզգա՛մ,
Սև ու սուգ լինի թագ ու պըսակըդ.
600 Կորի՛, չերևաս աչքիս մյուս անգամ,
Գետինը մըտնի երկար հասակըդ։
Տեսա՛ր, որ նըրան ատում է Մոսին,
Ջեն ուզում, տեսար, նըրան հերն ու մերդ.
Դու քա՞նի գըլուխ ունիս քո ուսին,
605 Որ վեր ես կենում փախչում նըրա հետ։
Խըռնված գյուղացիք կըտուրից իջան՝
Մեղմելու կոպիտ բարկությունը հոր,
Հայտնըվեց նույնպես գյուղի քահանան,
Մի պատկառելի հըսկա ալևոր։
610 — Դո՛ւրս գընացեք, դո՛ւրս, գոչեց տերտերը,
Անուշը թողեք ուղիղն ինձ ասի,
Թողեք նա հայտնի իր միտքն ու սերը,
Նըրանից հետո բանը կըպարզի։
Մի լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
615 Սիրո՞ւմ ես նըրան, քու կամքո՞վ փախար...
Եթե սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
— Ինչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տե՛ս,
Որ դուրսը հանկարծ աղմըկեց էսպես...
620 Ո՞վ է ըսպանել... Մոսի՞ն... ո՞ւմ... ո՞ւր...
— Անո՛ւշ, հե՛յ Անո՛ւշ.... ջուր հասցրե՛ք, ջո՛ւր...

XXIII

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջներ,

Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց,
625 Գյուղից սրլացան մի խումբ կըտրիճներ:
Ցավից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թրռչում են, ասես ահից հալածված,
Ու նըրանց առջև ահռելի բացվում,
Թըշշում է ձորը արյունով լըցված:
630 Գյուղը դատարկվեց մի ակնթարթում,
Քարափի գըլխին կանգնած անհամբեր,
Լո՛ւռ, սըրտատրոփ ականջ են դընում,
Նայում են ներքև... ձեն չի գալիս դեռ.
Դեբեդն է մենակ անդընդում՝ հուզված՝
635 Խըլաձայն ողբով սողում դեպի ցած:

XXIV

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:
640 Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խոսելու, սևակնած, դաժան,
Մոտեցավ սրահին, կախ տըվավ սընին
Սև հըրացանը՝ սև օձի նըման:
Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,
645 Ոչ ոք ծըպըտալ չի համարձակվում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
Մեռած չոբանի պառավ նանն է նա՝
Ցավից խելագար բառաչում, լալիս.

650 Տարաբախտ ծընող, վազում է ահա,
Զորիցն է տըխուր գոռոցը գալիս:

XXV

Սըգավոր կանայք նըրա ետևից
Հարայ կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ հիշելով նորից՝
655 Դիակի շուրջը կարգով շարվեցին:
Իգիթին վայել սըրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին ձեն ձենի տըված.
Տըղեքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր,
Մընացին մոտիկ քարերին նըստած:
660 Ողբացին անշունչ դիակի վըրա
Անտեր մընացած ոչխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ յարի մասին.
Եվ նըրա մասին, որ ընկերները
665 Հանդը գընալիս Սարո կըկանչեն,
Որ սարից փախած սոված շընները
Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն:
Ծանըր չոմբախը, գըլուխը մեխած,
Օճորքում դըրած պիտի մըրոտի,
670 Երկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մընա ու ժանգը պատի...
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գնալ առանց Սարոյի:
Սև շորեր հագած կընըստի տանը,
675 Անցած օրերը միտը կըբերի:

Եվ ամեն մի խոսք, մի հիշողություն
Կըտրատում էին սիրտը ծեր նանի,
Եվ աղաչում էր նա մեռած որդուն՝
Մի անգամ խոսի, աչքը բաց անի:
680 — Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արև, կյանք ու ջան՝ որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Թըշնամի՛ որդի, դավաճա՛ն որդի...
Բայց չէին բացվում աչքերը փակված,
685 Շուրթերը սառել չորացել էին.
Նըրանց արանքից ատամները բաց՝
Սիպտակ շարքերով երևում էին:
Ու նա կատաղած՝ հանդուգն անեծքով
Ծառս եղավ դուշման երկընքի դիմաց,
690 Եվ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
Եվ լալիս էին ձեն ձենի տըված...
— Կարմիր արևից ընկած, Սարո ջա՛ն,
Կանանչ տերևից ընկած, Սարո ջա՛ն...
Արևս հանգավ, Սարո ջա՛ն,
695 Գիշերս ընկավ, Սարո ջա՛ն...
Գիշերը իջավ, թանձրացավ մութը,
Եվ նըվաղեցին ձենները տըրտում,
Հոգնեցի՛ն, հանգա՛ն... Ծերուկ Դեբեդը
Սըգում էր մենակ խավար անդընդում:
700 Սըգվոր գետը՝
Ծեր Դեբեդը,
Սիրտը քըրքըրած,
Ջուրը փըրփըրած,
Քարոտ ափին,

705 Լեռ քարափին,
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

XXVI

Եվ մի քանի ընկեր-տղերք
Ջորում, գետի եզերքին,
710 Փոս փորեցին ու սրտաբեկ
Հողին տվին հովվի դին:
Ծառ ու ծաղիկ սրվսրվալով
Բյուր խընկեցին դյուրեկան,
Ծեր Դև-բեդն էլ ահեղ ձենով
715 Երգեց վրսեմ շարական:
Ու տղերքը տրխուր ու լուռ
Վերադարձան դեպի տուն,
Ջորում թողած մի սև բըլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

XXVII

720 Գարունը եկավ, հավքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,
Գետի եզերքին շըրջում է մոլոր,
Շըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
725 Երգեր է ասում ու ման է գալիս:
— Սիրուն աղջիկ, ինչ ես լալիս

Էդպես մենակ ու մոլոր,
Ինչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերում ամեն օր:
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կըգա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,
Ա՜խ, նա գընա՜ց, նա գընա՜ց...
Արտասվելով, լալով էդպես
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգցընում ես
Ջահել կըրակն աչքերիդ:
Նըրա անբախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբյուրի,
Դու էլ գընա նոր սեր արա,
Էդպես է կարգն աշխարհի:

— Շնորհակալ եմ, անցվոր ախպե՛ր,
Աստված պահե քու յարին.
Ճամփիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սերը
Վայելեցեք անթառամ,
Ինձ արցունք է տըվել Տերը,
Ես պիտի լամ, պիտի լամ...

Ու ման է գալիս
Երգում ու լալիս:
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նըման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,

755 Ու միշտ էն անմիտ տըրտունջն է խոսում,
Թե ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Սարերը մընացին որբ ու անչոբան,
Թե ինչպես հանկարծ նա գընաց հեռու,
760 Էլ չի՛ դառնալու, էլ չի՛ դառնալու...
— Ե՛տ դառ, ե՛տ, իգի՛թ,
Ե՛տ դառ, անիրա՛վ,
Կարոտած յարիդ
Աչքը ջուր դառավ։
765 Ոչխարդ էն սարով
Շուռ տուր, տո՛ւն արի,
Փախի՛ր գիշերով
Ու թաքուն արի...
Ա՛խ էն կանանչ սարի լանջին
770 Ո՞վ է քընած էն տըղեն,
Վըրեն քաշած սև յափընջին.
Կուռը հանած էն տըղեն...
Ջա՛ն, իմ յարն է, ջանի՛ն մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
775 Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մո՛ւշ, անուշ մըրափել։

Վե՛ր կաց, վե՛ր, իգի՛թ,
Վե՛ր կաց, անիրա՛վ,
Ոչխարըդ բեր կի՛թ,
780 Օրը ճաշ դառավ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Քու գալուն մեռնեմ,

Թուխ չոբան, արի՛,
Կարոտըս առնեմ:

785 Տեսե՛ք, տեսե՛ք, դափ ու զուռնով
Ինչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով
Չի են խաղում, չափ տալի...
Աղջի՛, աղջի՛, մըտիկ արեք,
790 Էս ինչ տեսիլք ես տեսա.
Ո՞վ է տեսել էսպես հարսնիք
Ո՛չ հարս ունեն, ո՛չ փեսա...

Բերում են հըրեն,
Ամա՛ն, մեր տան դեմ...
795 Վե՛ր դըրեք, վըրեն
Հյուսերըս քանդեմ...
Ես էլ եմ գալիս,
Էդ ո՞ւր եք տանում...
Ինձ էլ թաղեցեք
800 Իր գերեզմանում...

Ա՛խ, չէ՛, ամա՛ն, ասում են դա
Մի դիակ է լո՛ւռ, հոտած,
Արյունը չոր դեմքի վըրա.
Աչքերն անթա՛րթ, սպիտակած:
805 Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս է ցողոտ, շաղոտ
Հանաքներով ու խաղով...

Արի՛, ջա՛ն իգիթ,
810 Արի՛, անիրա՛վ,
Կարոտած յարիդ
Աչքը ջուր դառավ:
Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել...
815 Էլ մի՛ լացացնի,
Ես շատ եմ լացել...
Տե՛ս, կըխռովե՛մ,
Լաց կըլեմ ես է՛լ...
Չեմ խոսիլ քեզ հե՛տ...
820 Չեմ սիրիլ քեզ է՛լ...

XXVIII

Անլըռելի վըշվըշում է
Պըղտոր ջուրը Դեբեդի,
Ներա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի:
825 Ներա շուրջը հեգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձեն է տալիս իր Սարոյին
Ու պըտըտվում մոլորված:
Ու հոսում է գիշեր-ցերեկ
830 Արցունքն անբախտ աղջըկա,
Բայց իր սիրած տըղան երբեք
Չըկա՛, չըկա՛ ու չըկա...
Վըշվըշում է գետը — վո՛ւշ, վո՛ւշ,
Ու հորձանք է տալիս հորդ,

835 Ու կանչում է «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ յարիդ մոտ...»

— Անու՛շ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...
Կանչում է մերը վերևից, կանչո՛ւմ.
Լո՛ւռ են ձորերը, լո՛ւռ են ահռելի,
840 Դուշման Դեբեդն է մենակ մըռընչում:

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու յարին...
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

XXIX

845 Համբարձման գիշեր, էն դյութիչ գիշեր,
Կա հըրաշալի, երջանիկ վայրկյան.
Բացվում են ոսկի երկընքի դըռներ,
Ներքև պապանձվում, լըռում ամեն բան,
Ու Աստվածային անհաս խորհըրդով
850 Լըցվում բովանդակ Նըրա սուրբ գըթով:
Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
855 Գալի՛ս՝ կարոտով մի հեղ՝ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում:

՝Հեղ - անգամ

1894-1903

ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ

I

Հընչում էր փըրփրուն վըտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապույտում...
Առանց հոգսերի ու առանց վըշտի
Խաղում էինք մենք էն երազ հովտում,
Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրող.
— Չես կարող, չէ՛, չե՛ս կարող...

Չէի կարենում բըռնել ես նըրան:
Ճերմակին տալով՝ ծառերի ետև
Ծածկըվում էր նա աչքես անգուման*,
Կըրկին հայտնըվում ճապուկ ու թեթև,
Ու թընդում էր միշտ ծիծաղը ծաղրող.
— Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող...

Մին էլ ես ճարպիկ մի շարժում արի,
Բըռնեցի նըրան: Հանկարծ նա ճըչաց,
Ձեռքումըս դառավ ճերմակ աղավնի,
Ու թևին արավ, ու թըռա՛վ, գընա՛ց.
Գընա՛ց ճախրելով էն երազ հովտում,
Սուզվեց, չըքացավ պայծառ կապույտում...

---

*Անգուման - անսպասելի

II

Վեր թռռա քընից, դուրսը նայեցի.
Արևը ուրախ զարկել էր սարին,
Բընությունն անհոգ, թարմ ու նազելի
Զուգվում էր, ժըպտում մանուկ արևին:
Գիշերն անցել էր. բայց իր ետևից
Մըռայլ էր թողել դեռ ցած՝ հովիտում:
Էդպես տակավին անցած երազից
Խավար մի բան կար նըստած իմ սրըտում:
Թեկուզ երազին չես էլ հավատում,
Բայց օտար տեղում, քո տանից հեռու,
Սիրտըդ մի համառ կասկած է մըտնում,
Թե՝ մի մահագույժ սև բոթ է գալու...
Հասմիկն երազում աղավնի դառավ,
Աղավնի դառավ՝ իմ ձեռքից թըռավ...
Լոկ երազ էր այս: Բայց երազն ինչ է:
Երազ, թե իրոք — այդ միթե մի՞ն չէ,
Երազն էլ երբ որ կարող է կանչել,
Կարող է հուզել, խընդացնել, տանջել...
Հասմիկն ապրում էր — Հասմիկը մեռավ...
Երազը եկավ — երազը թըռավ...
Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք,
Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք:
Եվ թե հաստատուն մի բան կա անմահ,
Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա,
Որ թե հարթըմնի և թե երազում
Ապրում է, տեսնում, ըզգում ու հուզվում...
Ու... գիր է գալիս ահա իմ տանից,
Թե՝ կինըս հիվանդ — ըսպասում է ինձ...

III

Տո՛ւն, տո՛ւն, դեպի տուն
Թրռչում եմ արթուն,
Ինչպես երազում։
Շուրջըս ամեն բան
Հշտապ, ինձ նըման,
Անցնում է, վազում։
Շըշմած գըլխիս մեջ
Գալիս են անվերջ
Ու ճընշում իրար
Զանազան դեպքեր,
Հուշեր ու մըտքեր,
Պայծառ ու խավար...

Տեսնում եմ նըրան՝
Կանգնած է գարնան
Շողերի միջին,
Ու ժըպտում է ինձ
Իր պատուհանից՝
Ծաղիկը լանջին...

Տեսնում եմ մեռած,
Ծաղկով զարդարած,
Դըրած դագաղում.
Տըխրալի մի օր,
Արտասուք, սըգվոր,
Սևեր ու թաղում...

Տո՛ւն, տո՛ւն, դեպի տուն.
Ու մյուս իրիկուն
Մեր տան դեմ ելա:
Մի սև-սև զանգված՝
75 Կուտակված, կանգնած
Մեր դրռանն ահա...

Պրտույտ է գալիս
Աշխարքը գլխիս,
Երկինքը մթնում...
80 Ողջ կանգնած են լուռ,
Ու ներսից տրխուր
Ձայներ են թընդում...

IV

«Հասմի՛կ ջա՛ն, եկա՛վ... դե վեր կա՛ց... վեր կա՛ց...»
Դուրս հոսեց դեմքս տրրտում ու հոգնած
85 Նրրա մոր ողբը... խունկի ծխի տակ
Աչքովքս ընկավ դագաղը ճերմակ,
Ու շուրջքս մթնեց: Տեղքս կորցրրի...
Մարդից, արևից, աշխարքից հեռի,
Մի անտակ ձորում, սև՛ ու խոր ջրրում
90 Տարվում էի ես, խեղդվում, շարշարվում.
Բարձր էին ափերն, ողորկ ու դրժար,
Մի թուփ չըկար գեթ բռնելու համար,
Չըկար կենդանի ձե՛ն, ըստվե՛ր, նըշա՛ն,
Որ կարենայի կանչել օգնության...

V

95 Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, զըվաբթ քըրքիջով
Մի ծիծաղ անցավ փողոցի միջով։
Ես ուշքի եկա, աչքըս բաց արի,
Տեսա աշխարքը ու լույսն արևի,
Տեսա՝ նըստոտած մարդիկ շըշընջում,
100 Անտարբեր թեքված՝ իրար ականջում
Խոսում են ուրիշ բաների վըրա,
Ու ոմանք ժըպտո՛ւմ, ժըպտում աշկարա...
Իսկ կողքիս նըստած ալևոր մի մարդ
Խրատում էր ինձ միալար, հանդարտ.
105 — Մի՛ լար, սիրելի՛ս, երեխա չես դու,
Ինչքան էլ որ լաս — իզուր ես լալու.
Քո ձենը երբեք էլ չի լըսիլ նա,
Ոչ կըհասկանա, ոչ էլ ետ կըգա։
Էսպես կամեցավ Աստված, երևի,
110 Որ նըրա օրը շուտով խավարի...
Մենք հողեղեններս՝ անճար ու չընչին,
Ինչ ենք Աստուծո կամքի առաջին...
Բաց է էս ճամփեն ամենքիս համար.
Ծեր, երիտասարդ, մեղավոր, արդար,—
115 Ամենքդ, ամենքը, էստեղ ինչ որ կան,
Էսօր թե էգուց ամենքը կերթան.
Ով որ կըմընա,
Թող նա պարծենա։

VI

Ես լըսում էի... Ու հանկարծ ես էլ
Ուզեցի հաշտվել հըզոր մահի հետ.
Անճար, ակամա սկսա մըտածել,
Թե մահը լավ է, միայն մենք՝ տգետ,
Մենք խեղճ, կարճամիտ, ու չենք հասկանում՝
Ինչպես է գալիս և ուր է տանում,
Թե՝ և՛ կյանք, և՛ մահ — անցավոր, ունայն
Մի մեծ հավերժի ձևերն են միայն,
Ինչպես որ ահա «երեկն» ու «էսօր»:
Էսօրն ինչ է որ,— մի երեկ է նոր,
Էսօրն էլ կանցնի, երեկ կըդառնա,
Եվ սակայն կըրկին միևնույն է նա:
Եվ էսպես անվերջ էսօր ու երեկ
Փոփոխվում են միայն, միշտ մընում է մեկ —
Մեկ մեծ ժամանակ: Էսպես էլ հոգին
Փոփոխում է միայն կեղևն արտաքին —
Մարմինն՝ էսօրվան օրին նըմանակ,
Իսկ ինքը անվերջ, ինչպես ժամանակ:
Կամ ևս սիրուն,— հոսանուտ մի գետ,
Որ հազար ալիք ու ծրփանք ունի.
Գալիս են ալիք, անցնում են անհետ,
Անցնում են դեպի անդունդն օվկիանի,
Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ
Ապրում է դարձյալ անվերջ, անընդհատ...
Էսպես փոխվելով հոսում է, գընում,
Գընո՛ւմ անհունի անճառ սահմանում,
Դեպի գերազանց վիճակն երջանիկ,

Ակն երջանկության, սիրո հայրենիք,
Ուր չըկան մարդիկ և ոչ ըզգացում,
Ուր ողջին մի մեծ կյանք է միացնում...
Եվ ի՞նչ է սիրո իմաստը վերին,
150 Ի՞նչ երջանկության խորհուրդը խորին,—
Հալվե՛լ, միանա՛լ,
Իրեն մոռանալ...

Եվ անշուշտ մի օր, հանդերձյալ կյանքում,
Երկրում թե այլուր, վերև՝ երկընքում,
155 Էն անհայտ ճամփով, որով նա գընաց,
Ես էլ կըթըռչեմ՝ աշխարքը թողած,
Ու կըզգամ նըրան, կապրեմ նըրա հետ
Մի ուրիշ անվերջ կյանքով երկնավետ...

VII

Բայց ես միշտ թաքուն մի հույս ունեի,
160 Թե կարող էր նա լինել... կենդանի...
Մի տեղ մի անգամ էդպես է եղել.
Տարել են մեկին, ուզել են թաղել,
Շիրմի փոսի մեջ զարթնել է հանկարծ,
Կարող էր և մեզ լինել պատահած...

VIII

165 — Ո՛չ, ո՛չ, նա գընաց, էլ ետ չի գալու,
Եվ էդպես դու միշտ մեղք ես մընալու:
Թեկուզ և հագնես երկաթի տըրեխ,

Փընտրես՝ կանչելով աշխարհ բովանդակ.
էլ չես հանդիպիլ նրրան ոչ մի տեղ,
170 Ոչ մի աշխարքում, ոչ մի ժամանակ...
Էն պաղ դիակն էլ, որ տեսնում ես դեռ,
Էն էլ հողի տակ կրծածկեն հիմա,
Կրգա՜ն, կրգնա՜ն տարիքն անտարբեր,
Ու նա կրփրտի, նա հող կրդառնա.
175 Անունն էլ ապրող աշխարքի համար
Դատարկ մի հնչյուն, անխորհուրդ մի բառ...
Էն էլ կրկորչի, ինչպես որ չրկա
Անունն ու հետքը էն հին աղջրկա,
Որ ձեզնից առաջ հազար տարիներ
180 Նույնպես սիրահար ու ժրպիտ ուներ:
Եվ ի՜նչ է մարդը, և ի՜նչ իրեն կյանք.—
Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ:
Հավերժականը չունի կերպարանք,
Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...
185 Անողոք մի ձեն էսպես ինձ կանչում,
Տանջում էր հոգիս, խորտակում, ճրնշում:
Ճիգ էի անում նրրան լրռեցնել,
Սիրտրս էլ հետը պոկել, հեռացնել
Ու գրտնել մի ձեն, մի հրնչյուն, մի բառ,
190 Որ կյանքի, հույսի նրշույլ ունենար...
Ուզեցի «Աստվա՜ծ» մին աղաղակել,
Բայց չէ՞ որ Նա էր էն մահն ուղարկել:

IX

Մի անհուն ցավի մրրմուռի նրման
Ծավալվում էին զանգերը թաղման,

195 Ու ժամի ծըխոտ կամարների տակ
Կանգնած էր արդեն տըխուր պատարագ,
Տըխուր պատարագ, տըխուր մեղեդիք,
Տըխուր աղոթքներ ու տըխուր մարդիկ,
Մեջտեղը ճերմակ դագաղը նըրա
200 Դըրած սևասքող սեղանի վըրա,
Ու նա դագաղում, ասես թե քընած,
Հարսնական ճերմակ շորով պճնըված,
Անփո՛ւյթ, անզգա՛ կյանքին ու մահվան,
Իր դագաղն ածած վարդերի նըման...
205 Էստեղ՝ բռնըված մի նոր տագնապով՝
Ուզեցի գըտնեմ մըտքի մի թափով,
Թե ի՞նչ էր արդյոք, էն ի՞նչ էր լինում,
Ի՞նչ էր պատահել, նա ո՞ւր էր գընում...
Եվ իսկույն, ասես, դիպա մի քարի:
210 Մըտքերըս հատան: Առանց մըտքերի
Կանգնած էի ես խորտակված ու պաղ:
Լուռ էր: Հոգևոր երգերը մենակ
Ծավալվում էին վըսեմ ու խաղաղ:
Ես լըսում էի, լըսո՛ւմ շարունակ:

215 «Այս անցավոր երկրի վըրա
Լըցան օրերն պանդըխտության.
Երկնասըլաց գընում է նա,
Հագած մարմին անապական,
Անմահացա՛ծ մահկանացուն՝
220 Միանալու իր Աստըծուն:

Այնտե՛ղ, Վերին Երուսաղեմ,
Օթևանում հրեշտակաց,
Ուր որ Ենովք ու Եղիաս,
Աղավնակերպ կան ծերացած,
225 Այն աշխարհո՛ւմ անտրխրական
Արդարքն ապրում են հավիտյան:

Յոթնաստեղյան լույս խորանում,
Ուր ցավ չրկա, ոչ հեծություն,
Ընտրյալ հոգիքն ուրախանում,
230 Խայտում են միշտ անվերջ, անհո՛ւն
Բերկրանքներով հարազբվարճ,
Աստծո զբվարթ աչքի առաջ:

Այնտեղ նրրանք, միշտ բախտավոր,
Նայում են Հոր լույս երեսին,
235 Նրրա առջև պաղատավոր
Նրրանց համար, որ թողեցին.
Ու իջնում են, մրխիթարում
Մեզ տրրտմալի այս աշխարհում...»

Թովված, կախարդված, տարված էն երգին,
240 Վերացավ, թրռավ իմ վշտոտ հոգին
Դեպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,
Անհայտ ու հեռու, անծանո՛թ, օտա՛ր...
Եվ էն աշխարհը հրրաշալի՛ էր.
Ո՛չ սուգ կար էնտեղ, ո՛չ վայելք, ո՛չ սեր,
245 Ոչ կարելի էր կորցրնել մի բան
Եվ ոչ ունենալ քաղց ագահության.

Ինչպես գերեզման և ունայնություն՝
Լուռ էր ու դատարկ, անփառք ու անհուն.
Ինչպես հայացքը մեռելի աչքի՝
Մի միտք ուներ միշտ առանց հուզմունքի,
Հողեղեն մարդուն անհայտ խորհրդով
Հավիտյան սառած, խաղաղ, անվրդով...
Ու անշարժ կանգնած, դալուկ ու լռիկ,
Ստվերներ էին, անմարմին մարդիկ,
Տրժգույն, անարև, աղոտ լուսի մեջ
Աղոթում էին անձայն ու անվերջ,
Աղոթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում.
Ո՛չ ազատություն, ո՛չ մահ, ո՛չ խընդում...

X

Հանկարծ լռությունն ինձ ուշքի բերավ,
Աչքիս առջևից հրաշքը թռավ:
Պատարագն արդեն վերջացրել էին:
Դագաղը շարժվեց, թընդաց ահագին
Սասանիչ երգը մահվան սարսափի,
Էն լացն ու կոծը, օրհներգը մահի,
Որով մեռելին հրաժեշտ են տալիս
Դեպի գերեզման ճամփու դընելիս,
Երբ ծառս է լինում վիշտը մայրական
Դեպ գահն Արարչի — ղըրկողը մահվան,
Արձակում ցասկոտ իր ճիչը ետին
Ու թույլ, հուսահատ ընկնում է գետին:

XI

Դուրս եկանք դուռը: Նայեցի վերև:
Վերևն, ինչպես միշտ, փայլում էր արև.
Բոլորն աշխարքում կարգին ու հանդարտ,
Ու ինչպես երեկ՝ էնպես ամեն մարդ...
Բայց երկինքն էնքա՜ն պայծառ էր այնօր,
Եվ պայծառությունն էնքա՜ն էր տըրտում,
Տըրտմությունն էնքան խոր, հանդիսավոր,
Որ թըվում էր ինձ, թե ջինջ կապույտում՝
Վերջին հըրաժեշտ տալով աշխարհքին՝
Ճախրում էր նըրա հեռացող հոգին...
Ու մըտքովս անցավ հանկարծ ակամա,
Թե արդյոք նըրա աչքերը անմահ
Նայո՞ւմ են ներքև, տեսնո՞ւմ են ինձ էլ,
Թե ո՛նց եմ ցավիս տակին կորացել...
Եվ կամ ո՞րն է նա. էն շո՞ղն է պայծառ,
Որ զվարթ խաղով, աշխույժ ու կայտառ
Կորչում է, մըտնում թուխպ ամպի ետև,
Ազատ, երկնաչու էն ա՞մպն է թեթև,
Թե՞ էն աղավնին, որ հիմա թըռավ,
Անփույթ ճախրելով՝ ջինջ օդում կորավ...

XII

Հանդո՛ւգըն մտքեր, ո՞ւր եք սըլանում:
Ի՞նչ եք որոնում էն մութ սահմանում:
Ահա մեր կյանքի սահմանը վերջին,
Էս սև ու տըխուր թումբերը չընչին...

295 Լո՛ւռ գերեզմաններ. քանի՞ սրգավոր
Ձեր եզերքներին կանգնել են մի օր,
Էս դատարկ կյանքին, անհաստատ բախտին
Անեծքներ տալով բեկվել, հեռացել,
Երբ որ սիրածի դագաղը մըթին
300 Վիհ են իջեցրել ու դեմքը ծածկել...
Եվ որքա՜ն ըղձեր, սըրտեր ու զգացմունք
Թաղված են, մարած ձեր լուռ փոսերում.
Ահա և՛ մի նոր բարձրացրած սև թումբ,
Դեռ թաց է հողը, դեռ խունկ է բուրում,
305 Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,
Որ ապրում էր դեռ երկու օր առաջ...
Եվ անշուշտ մի օր սըրա շիրիմն էլ
Կըծածկի նույնպես մամուռը կանաչ,
Կանի հավասար քարին ու հողին,
310 Ինչպես դըրացու անկողինը հին:
Նըրանից հետո դե՛ եկ՝ իմացի՛ր,
Թե ո՞վ է թաղված քո ոտի տակին,
Ի՞նչ ցեղից էր նա, ի՞նչ ձիրքեր ուներ,
Անահ հերո՞ս էր, գեղանի մի կի՞ն,
315 Անհոգ մի ջահե՞լ, անկըշտում ագա՞հ,
Աղքա՞տ, թե հարո՞ւստ,— ձեն, նըշան չըկա...

XIII

Եվ... իջնում էր նա ընդմիշտ իմ աչքից,
Կյանքից, արևից, էս լուս աշխարքից...
Կորացա, վերջին համբույրս տըվի,
320 Ու էն համբույրով դագաղում դըրի

Խընդում, սեր, ըղձեր, ամեն, ամեն բան...
Ինձ ետ քաշեցին, մի կողմը տարան:
Իսկույն հետևեց խուլ գըրգըռոցը,
Քարով ու հողով լըցրին էն փոսը,
325 Դագաղն էլ, ինքն էլ ծածկվեցին հանկարծ,
Ասես թե բընավ աշխարհ չէր եկած,
Եվ այսուհետև երբեք, հավիտյան
Էլ չէր տեսնելու արևը նըրան...
Հուղարկներն այնժամ մոտ եկան մի-մի.
330 — Էհ, Աստված նըրա հոգուն ողորմի.
Մի օր էլ մենք ենք էսպես գընալու,
Կյանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
Ո՞վ է աշխարքիս վըրա մընալու.
Անցավոր են ողջ — բախտ, վայելք ու փառք...
335 Ասացին՝ հանգիստ հոգոց հանելով,
Ու դարձյալ հանգիստ զըրույց անելով
Գընացին իրենց տընները անհոգ:
Շուրջըս նայեցի, չէր լալիս ոչ ոք.
Երկինքն էլ էնպես պայծա՛ռ ու հանդարտ...
340 Եվ ինչպես երեկ, էնպես ամեն մարդ...

XIV

Եկավ գիշերը: Իմ հոգնած հոգուն
Իջավ տանջալի մի խաղաղություն:
Վայր ընկա, ինչպես ուժաթափ մի բան,
Որ զգում է միայն կարոտ հանգըստյան,
345 Բայց ճըգնում է դեռ, աշխատում ունայն,
Ուզում է հիշել, թե ինչ բան էր այն.

Մի խառըն երազ էր, մի աշխարք ուրիշ,
Գինու մի քեֆ էր, ծաղրը, թե պատիժ...

Մըրափը սակայն ծանրը ու դանդաղ
350 Զոքեց ինձ վըրա՝ սև թևերը կախ,
Միտքըս իր թելը կըտրեց ու թըռավ,
Անհուն, խավարշտին քաոսում կորավ.
Մահ, մեռել, շիրիմ — թեթև հեռացան,
Ու հեռանալով՝ փոխվեցին, դարձան
355 Ամպեր, ըստվերներ, կետեր երերուն,
Դողացին, հանգան, ու մըթնեց հեռուն...
Կարճատև մի քուն եկավ ինձ վըրա,
Եվ ես մյուս անգամ երազում տեսա.

XV

Հընչում էր փըրփրուն վըտակն արծաթի,
360 Արևը խաղում պայծառ կապույտում.
Առանց կորուստի ու առանց վըշտի
Կանգնած էի ես էն երազ հովտում:

Շուրջըս շուշաններ, անվերջ շուշաններ,
Լիքն էր անտառը անուշ բուրմունքով,
365 Եվ եդեմական ներդաշնակ ձայներ
Փառք էին տալի թովչական երգով.

«Փա՛ռք անպատում մըխիթարչին,
Փա՛ռք խորհուրդին անմահության.
Նա է կըրում հույսը վերջին

370 Ու շոգն անշեջ, արարչական.
Փա՛ռք խորհուրդին անմահության:

Նա գընում է բարձր ու անվերջ
Դեպի անհունն ու հավիտյան,
Վիշտը հանգչում է նըրա մեջ,
375 Ապրում սերը անապական.
Փա՛ռք խորհուրդին անմահության...»

Ու լսում եմ ես էն խաղաղ օդում
Քընքույշ ու զըվարթ ձայնը սիրելի,
Անհայտ ու անտես կանչում է նա ինձ,
380 Կանչում գերազանց մի ուրիշ կյանքի.

«Արի՛ ինձ հետ, իմ թըշվա՛ռ,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չըկա մահ, անջատում,
Ու սերն անվե՛րջ, անհատնո՛ւմ...

385 Արի՛, թըռի՛ր, գընա՛նք ինձ հետ,
Անցա՛վ, անհո՛գ, անհո՛ւշ, անհե՛տ...»:

1900-1901

ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

Նըստած եմ մի օր ու միտք եմ անում.
Միտք եմ անում, միտք, ու չեմ կարենում
Մի հընար գըտնեմ ցավերըս հոգամ...
Վեր կենամ, ասի, մեկի մոտ գընամ,
5 Կըրկին պարտք անեմ, գըլուխը քարը,
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը:
— Ողջո՛ւյն Պառնասի գըլխից սըրբազան...
Ետ նայեմ տեսնեմ իմ ծանոթ Մուսան:
— Վե՛ր կաց, բանաստեղծ, կանչում է էսպես,
10 Վե՛ր կաց, ներշընչվի՛ր, դուրս արի հանդես,
Տանջվում են ահա եղբարքըդ թըշվառ,
Հեծում, հալածվում աշխարհից աշխարհ:
Երկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա՝ քեզ համար բերել եմ ավյուն,
15 Հույս տուր վըհատին, ըսփոփիր որբին,
Ուժ տուր պանդըխտին իր երկար ճամփին:
Նայիր՝ աղջիկը ինչպես ծաղկել է,
Աչքերի մըթնից պայծառ ծագել է
Կյանքի արևը ու սիրտ է հուզում,
20 Անձնըվեր սիրո երգեր է ուզում...
Ուրախ ու անհոգ գարունն էլ ահա

Բազմել է կանաչ սարերի վրա,
Ձորերը լցվել, փրռվել հովիտում.
Հավքերն երգում են, ծաղկունքը փրթթում...
25 Դու էլ ըսթափվի՛ր, երգիր քեզ նըման,
Ողջունի՛ր շըքեղ գալուստը գարնան:
— Հերիք է, Մուսա՛, երկինքը վրկա,
Էլ համբերելու սիրտ ու տեղ չըկա.
Էնպե՛ս կանեմ քեզ, որ դու մոռանաս
30 Արյուն ու գարուն, պոետ ու Պառնաս:
Անիծված լինի էն օրն ու տարին,
Որ գերի դառա ես քո քընարին.
Քեզ հետ մըտերիմ դառնալու օրից
Ձըրկված մընացի կյանքում բոլորից...
35 — Էն տաղանդը, էն ձիրքն հապա,
Որ տըվել եմ...
— Ա՛յ խաբեբա,
Ահա ես էլ էդ եմ լալիս.
Ինչո՞ւ էս ձիրքն էիր տալիս:
40 Ձըգիտեի՞ր միթե այնժամ,
Թե ինչ աշխարք պիտի ես գամ:
Թող լինեի մի կեղեքող,
Հավաքեի միշտ փող ու փող.
Առաջ թեև «գազան» ու «ցեց»,
45 Կըդառնայի շուտով ես մեծ,
Վեհ բարերար
Ազգի համար.
Մեռած օրըս էլ պըսակ տային.
«Իր որբ ազգից — միակ հային»:
50 Կամ թե տերտեր լինեի թող,

Խաչը վրդիս մեռել թաղող,
Սուփրի վերև միշտ նըստեի,
Իմ ապրուստը դըրըստեի.
Ազգն էլ աչքը տընկեր վըրաս.
— Իմ փըրկողը դու ես, որ կաս:
Ահա էսպես բան լիներ մարդ,
Գընար ապրեր լի ու հանդարտ:
Կամ սընգուրված մի ճոխ հիմար,
Որ ապրում է լոկ իր համար,
Ուտում-քընում, ելնում-ուտում,
Լի՛, գո՛հ, ինչպես աղբակույտում
Հանգիստ ապրող որդը պարարտ:
Կըլինեի հարգի մի մարդ,
Նույնիսկ եթե գըլուխըս այնժամ
Դատարկ լիներ հազար անգամ,
Քան թե հիմա իմ գըրպանը:
Ահա կյանքում էս է բանը.
Թե չէ՝ լինել ի ծնե գերի
Մերկ Մուսայի ու երգերի,
Որդիք ու կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,
Ուժից ընկել անժամանակ—
Թե պոետ եմ... օ՛, ո՛չ, Մուսա՛,
Մի անարդար պատիժ է սա:
Եվ ինձ մոտիկ,
Փորձված մարդիկ
Դեռ շատ վաղուց նըկատեցին,
Կըռիվ արին, խըրատեցին,

80 Թե աշխարքին մըտիկ արա.
Շատն էլ խընդաց խելքիս վըրա...
Իսկ ես, ա՜խ, ես,
Միշտ խենթ էսպես,
Գիշեր-ցերեկ թերթում գըրքեր,
85 Շինում էի դատարկ երգեր,
Միշտ քո քամով էի թըռչում,
Ու միշտ բախտից հեռու փախչում:
— Ա՜յ ապերախտ, ի՞նչ ես ասում.
Էն ո՞ր բախտն ես դու ափսոսում,
90 Որ չեմ տըվել քեզ իմ ձեռքով.
Աստվածային հըզոր ձիրքով
Էս ցած կյանքից հեշտ ու անթև
Թըռչել երկինք, վերև՜, վերև՜,
Ցավեր, հոգսեր ողջ մոռանալ,
95 Դըժոխք իջնել, դըրախտ գընալ,
Անհուն ըզգալ, թովիչ երգել...
Ո՞ր բախտից եմ ես քեզ զըրկել:
— Օ՜, ո՞ր բախտից... ա՜յ սևերե՜ս,
Ահա շարեմ հիշիր ու տե՜ս:
100 Ինձ մի անգամ առան-տարան
Հաշվապահի ուսումնարան,
Շատ խոսեցին,
Համոզեցին,
Թե կավարտես էս դըպրոցում,
105 Ատեստատը հետո ծոցում,
Ուր որ գընաս,
Տեղ կունենաս,
Լա՜վ փողով տեղ բուղգալտերի.

Խազեյինդ էլ տարեցտարի
110 Միշտ կավելցընի քո ռոճիկը,
Վերջը վըրան և... աղջիկը։
Բայց դու եկար միտքըս մըտար,
Ինձ չըթողիր տեղըս դադար.
Դավթարն աչքիս դարձավ դաժան,
115 Թիվ, կոտորակ, թըվանշան
Ուղեղիս մեջ դարձան որդեր,
Քիչ էր մընում սիրտըս պայթեր.
Ես էլ խըրտնած խենթ երեխա՝
Փող ու աղջիկ թողի, փախա,
120 Թե չեմ կարող, ես չեմ կարող,
Ես գըրող եմ, գըրո՛ղ, գըրո՛ղ։
Սակայն էլի բախտըս ժըպտաց,
Ձեռըս բըռնեց տարավ հանկարծ
Ու պիսերի տըվավ պաշտոն։
125 Ո՛չ լի օր կար ինձ և ոչ տոն։
Մեծավորըս էնքան սիրեց,
Հին գըրչակոթն ինձ նըվիրեց.
Ընկերներս էլ ինձ դաս տըվին—
Ոնց պըլոկել խընդրատըվին։
130 Բայց դու էլի եկար գըտար,
Խաղաղ գործիս մեջը մըտար.
Ես էլ հիմարս՝ իսկույնևեթ
Վեճ բաց արի ամենքի հետ.
Թե ինչ բան է՝ խեղճ գյուղացուն
135 Գերի շինել՝ ողջ տարին բուն
Տանել, բերել ու թալանել,
Այրու պըղինձն աճուրդ անել...

Էս բոլորը քիչ էր կարծես,
Էնքան արիր, սատանի պես,
140 Որ գըրեցի մեծիս պարսավ.
Նա էլ — կո՛րի, կո՛րի, ասավ,
Մենք ենք տալի քեզ փող ու վարձ,
Դու, Մուսայի խելքով ընկած,
Վեր ես կենում մեր դեմ խոսում.
145 Էդպես պիսեր մենք չենք ուզում:
Սակայն Աստված մեծ է գութով.
Հայտնի կանտոր ընկա շուտով:
Լավ էր, ասի, այսուհետև
Կապրեմ ազատ, գործըս թեթև:
150 Հետըս եկար մըտար կանտոր,
Գործերըս արիր խառնուփընթոր.
Քու երեսից հենց նույն տարին
Իմ պաշտոնից ինձ դուրս արին:
Էսպես եղա ես խայտառակ,
155 Համ էլ ընկա պարտքերի տակ.
(Հո պոետի պարտքն էլ գիտես.
Էդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ առակ,
Վեճ ու վըճիռ ծանր ու բարակ):
160 Ո՞ր մեկն ասեմ, ո՞րը թողնեմ.
Երբ որ տեսան շընորհք չունեմ,
Այնուհետև քանի անգամ
Ծանոթ, ընկեր, լավ բարեկամ՝
Տերտերության տըվին խորհուրդ.
165 — Ա՛յ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք,

Հարստություն, հանգիստ, հեշտ կյանք...
Իսկ ես՝ անփորձ, անխելք հիմար,
Ողջ մերժեցի լոկ քեզ համար.
170 Պատրաստ կյանքից, բախտից փախած,
Գանձանակի թեփշին թողած,
Քընարն առա,
Պոետ դառա,
Երգ ու տաղով մըտա հանդես,
175 — Հե՛յ, Մուսայի ընկերն եմ ես,
Ձեն տըվի ես ոգևորված:
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, բիրտ հրոհրոաց
Ժողովուրդը միաբերան,
Թըոցրել է խելքն էս խեղճ տըղան:
180 Հեռո՛ւ կորի, խենթ պատանի,
Որ անպիտան գործի, բանի,
Ուշք ու միտքըդ տըվել երգին՝
Մի չես նայում էս աշխարքին...
Մենք մարդիկ ենք — գործ ենք անում,
185 Խենթ-մենթ բաներ չենք հասկանում:
Ես գոչեցի.— խավա՛ր ամբոխ,
Պաշտում ես դու լոկ փայլ ու փող,
Չես հասկանում դու պոետին.
Ե՛ս, երկընքի քընքույշ որդին,
190 Երգում եմ սե՛ր, ճըշմարտությո՛ւն...
Ու գընացի խըմբագրատուն:
— Տեր խըմբագիր, պոետ եմ նոր,
Բերել եմ ձեզ ոտանավոր.
Ահա կարդամ ակա՛նջ դըրեք,
195 Ձեր հանդիսում տեղավորեք:

«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք օր ու գիշեր,
Նայում եք անթարթ իմ հոգու խորքում...
Ինչո՞ւ չեք քընում, ինչո՞ւ չեք փակվում.
200 Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել՝
Ուզում է քընել, հավիտյա՛ն քընել...
Դուք էլ քընեցեք, սևորա՛կ աչքեր,
Ցերեկըս անցել է, գիշեր է, գիշեր...»

— Ոչինչ, կոկիկ է: Խոսելով անկեղծ՝
205 Դուք վատ չեք գըրում, պա՛րոն բանաստեղծ.
Ամեն տողում տասն են վանկերը,
Բայց ինձ աղքատ են թըվում հանգերը:
Հապա մի տըվեք, ուղղեմ ես հիմա,
Տեսեք՝ թե որքան սահուն դուրս կըգա:
210 Ուղղում եմ ես միշտ մեր պոետներին,
Էսպես եմ պոետ շինել բոլորին:

«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք դուք ինձ ինչպես քաջքեր...»

Ես իսկույն ինչպես հալածված քաջքից՝
215 Փախա խըմբագրից ու իրեն աչքից,
Երգերըս ուղիղ տարա տըպարան.
Դուրս եկավ էսպես մի նոր երգարան:
Այնժամ մըտրակող մի թունդ պուբլիցիստ,
Հայտնի քըննադատ, բազմագետ ու խիստ,
220 Սաստիկ վըրդովված, անաչառ հոգով
Ծաղրի առավ ինձ իրեն «ակնարկով»:

— Ես դեմ եմ, ասավ, բանաստեղծության,
Զըզվեցնում է ինձ էդ երգի Մուսան:
Ո՞չ մըտքեր են պետք, ո՞չ ձիրք և ոչ խելք,—
225 Բառեր ու հանգեր — և ահա քեզ երգ:
Հենց նոր դուրս եկած էս խակ տըղան էլ
Գըլխից էս տեսակ բաներ է հանել:
Ուրի՞շ բան էին հին պոետները...
Նըրանք էլ մեռան, տարան հետները
230 Տաղանդ ու երգեր. ամե՞ն, ամեն բան
Մըտավ նըրանց հետ խավար գերեզման...
Դարձավ անապատ... էլ ո՞վ է մընում...
Էլ ուրիշ պոետ մենք չենք ընդունում...
Որքան ծաղրում ենք, սըրանք չեն լըռում,
235 Ոչ էլ մեր ուզած բաներն են գըրում:
— Ո՞վ բըրետների, կույրերի երկիր:
Դու մի՞ հավատար, իմ հե՞գ որդեգիր,
Ես էն հանգուցյալ լավերից նույնպես
Լըսել եմ հաճախ գանգատներ պես-պես:
240 Սպանում են դեռ ծաղրով ու թույնով,
Ապա պըճընվում նըրանց անունով.
Լափում են նըրանց վաստակը արդար,
Ու նորից... նույն հին կըռիվը վատթար...
Երդվում եմ ահա ճառագող օրով,
245 Վառ Ավրորայի մաքուր շողերով,
Խոսում ես դու էն չըքերի մասին,
Որ միշտ անտեղյակ առաջին լուսին,
Ջեն հըրճվում նըրա ծագման հանդիսով,
Միայն կեսօրին ապուշ երեսով,
250 Ելնում են մըռայլ, տեսնում քընեած

Գլխների վերև արևը կանգնած.
Ու ծունկ են չոքում,
Օրհներգ են երգում.
Հի՜ն օրհներգություն ու հի՜ն հրեշներ...
Բայց մի՞թե նըրանք ապրում են անմեռ,
Եվ էդպես անհաշտ էսօր էլ քեզ հետ...
— Ինչ հրեշ, Մուսա՛, ինչ կույր ու բըրետ,
Ինչ բաներ ես դու քեզնից հընարում...
Ես էն եմ ասում, թե մեր աշխարհում
Պոետները ողջ տըխրել են, ցավել,
Որ իրենց երգի քընար ես տըվել...
Ես էլ... ինչ ասեմ... մեղավոր եմ ես,
Ծույլ ու անշընորհք. անպետք, սևերես...
Մեր խեղճ տանըցիք ո՞րքան նախատում—
Բայց ես՝ միշտ համառ, չէի հավատում,
Մինչև լըսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի:
Մի օր ինձանից արավ հարցուփորձ.
— Ունի՞ս, հարցրեց, մի պաշտոն կամ գործ:
— Բանաստեղծ եմ ես, հայտնեցի հըպարտ:
— Դըժվար է, ասավ, երբ անգործ է մարդ:
— Բանաստեղծ եմ ես, կըրկնեցի մեկ էլ:
— Հասկացա՜նք, ասավ, պարապ ես եղել...
Եվ խեղճ ընկերըս երբ որ՝ սըրտացավ՝
Սա էլ պետքական մի մարդ է, ասավ,
Էնպես ծիծաղեց մեր աղան փառփառ,
Որ և հասարակ և մեծ վեհափառ,
Ով որ իմացավ,
Ծիծաղը պըրծավ:

280 Բայց վերջն ավելի պարզեց խընդիրը,
Երբ հոդված գըրեց մեր լըրագիրը։
— Բանաստեղծն, ասավ, թող մի գործ շինի
Որ հացի, վարձի դառնա արժանի.
Թե չէ համառի ու մընա պոետ՝
285 Ինչ հաշիվ ունի ազգը նըրա հետ.
Ազգը հո նըրան չի խընդրում գըրի,
Թերթն էլ փող չունի՝ թե որ վըճարի...
Թող գընա ապրի իրեն գըրիչով...
Էսպես ենք դատում մեր մաքուր խըղճով։
290 Ներշընչման համար
Էսպես է հարմար.—
Ով սովից մեռել՝
Նա՛ է լավ գըրել։
Կարող ենք մենք էլ
295 Էսպես մըտրակել
Ու ծաղրել մի-մի,
Որ առաջ դիմի...։
— Ո՛վ ախոռ-երկիր, մըտրակի մարդիկ...
Դե՛, ե՛կ, սիրելի՛ս, տանեմ քեզ երկինք.
300 Էնտեղ երջանիկ ոգիների հետ
Զըվարթ կըխընդաս ու կերգես հավետ.
Կամ կուզես թըռցնեմ, հանեմ Ոլիմպոս,
Որ նեկտար ըմպես, ճաշակես ամբրոս։
— Իմ ազնի՛վ Մուսա՛,
305 Ա՛յ, էդպես խոսա։
Իրավ, էս կյանքից ես շատ եմ զըզվել։
Ինչ երանություն՝ երկընքում սուզվել,
Էն չըքնաղներին, որոնք, անկասկած,

Նրման չեն իսկի մեր Հայոց կանանց—
310 Լինել միշտ ընկեր
Ու սիրո երգեր
Հորինել,
Զոնել,
Երկրային չընչին հոգսերը թողած.
315 Կամ, ոտներն հանգիստ ժայռերից կախած,
Նըստել Պառնասի երջանիկ գըլխին
Ու բարձրից նայել էս հիմար խալխին:
Բայց ես ունեմ կին, շատ երեխաներ,
Նըրանց բանն էնտեղ ինչպես կըլիներ...
320 — Օ՛, երբ Պառնասի գագաթ վերանաս,
Ջավակներ ու կին պիտի մոռանաս:
— Ո՛վ դու անիրավ, ինչ եմ արել քեզ,
Որ ինձ իմ տանից էդպես բաժանես:
Չէ՛, լավ է կըրկին, որ երկրում մընամ,
325 Ծաղրի, նեղության մի կերպ դիմանամ...
— Քո կամքը լինի, ազատ բանաստեղծ.
Ընտրի՛ր, ուր կուզես՝ երկինք թե երկիր,
Բայց միշտ, ամեն տեղ եղիր դու անկեղծ,
Մաքուր, սըրտալի քո ե՛րգը երգիր:
330 Կանգնի՛ր միշտ վերև,
Ու ինչպես արև՝
Նայի՛ր լուսավոր,
Պայծառ ու հըզոր,
Քո կոչումն է դա.
335 Եվ, ինձ հավատա՛,
Բոլոր գանձերը, գոհարներն անգին
Չարժեն կարճատև քո ներշընչանքին:

— Ա՛յ, դու սատանա՛, էլ կուզես խաբել,
Մեծ-մեծ խոսքերով աչքերըս կապել.
340 Ա՛յ, դու կեղծավո՛ր, սիրուն անպիտան.
Ես լավ եմ տեսնում այժմ ամեն բան:
Դու ինձ ես մենակ միամիտ գըտել.
Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ,
Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ կընկանը—
345 Ասա՛, թե մենակ փողը չի բանը...
Բայց ի՞նչ եմ ասում. Հայոց գըրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը.
Եվ երկար, երկար մեր ողջ հանճարով
Մըտածել ենք մենք դըժար օրերով,
350 Գըրողի պըսակ,
Թե՞ փողի քըսակ...
Եվ լավ ենք վըճռել...
Դեհ, գընա՛, Մուսա՛.
Գըրադարանս շինում եմ կասսա,
355 Թըքում եմ և քեզ և քո պըսակին,
Երկըրպագում եմ փողի քըսակին:
«Փողի քըսա՛կը, փողի քըսա՛կը,
Բարձրացընում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հըրեշ տըգեղին,
360 Սըրբագործում է գարշն ու աղտեղին:
Ընրա ուժն է՝ որ դարձընում է լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույսին, զառամին մոտեցնում իրար,
Զարին, վաշխառվին շինում բարերար,
365 Պըճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի:

Նա է միշտ շարժում դատողի լեզուն,
Նա՛ է հասցընում աղոթքն Աստծուն,
Նրրա վրրա է աշխարքը կանգնած.
370 Նա մեր հոգին է, մեր երկրորդ Աստված:
Պոետն էլ բընավ թե խոսել է վատ,
Տուժել է սաստիկ, զրղջացել է շատ,
Եվ այժըմ, ահա, խելքի է եկել,
Սկսել է նրրան օրհնություն երգել»:
375 Երգըս որ լըսեց իմ դրժբախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա-փուսան.
— Դե՛հ, մընաս բարյավ,
Անսի՛րտ, անիրա՛վ,
Ես էսքան տարի
380 Ինչ որ քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար...

ՍԵՎԱԳԻՐ ԵՎ ԱՆԱՎԱՐՏ ԵՐԿԵՐ

<1890>

ԴԱՐՁ

Մնացեք բարով, օրեր հեծության.

Մարդ
Դո՛ւն, ո՛վ խաբեբա, սևաշոր կախարդ.

Մնացեք բարով, օրեր հեծության.
Եվ հիմար ցնորք անմեծ մեծության.

Եվ ահա մի օր սևաշոր մի մարդ,
Ժպիտը դեմքին,
Պիսեր Սուրենին մոտեցավ հանդարտ.

Հիշում էր իրան մանկությունն բոլոր հրապուրանքներով:

Եվ պատահում էր, որ նրա [կինտո] տղերք[ը]արգանով գիշերը գալիս էին հարբած, արգանի ձայնով և աղաղակներով խուլ ներքնատունը աղմկում հանկարծ: Սուրենը դեռևս [սարի] այծյամի նման նայում էր սրա[ն] ու նրա[ն] [նայում էր] երեսին ապշած, բայց նա էլ սովորեց կամաց-կամաց, ուրախանում նրա հետ միասին:

Շատ ու շատ անգամ հարբած մղդըսին
ա [Քելեխից] հարսանիքից, մեռելատնից
բ Հարսանքից կամ թե մեռելատնից,
Վերադառնում էր գիշերվան կեսին,
Դուռը բաց անում, տուն մտնում,
ա (Նորա ետևից գրքերը ձեռքին

Սուրենն էր մտնում)
բ Մղդսու դատարկ ձեռքին նայելով
Սուրենն էր մտնում թուքը կուլ տալով:
Վառում էր [մոմը, ապա խոսալով]
Անկողին փռում,
Թե այնքան ժամանակ պահում է նրան,
Ոչինչ չէ ստացել, ոչինչ չեն ղրկում,
ա Եվ երբեմն կոպիտ հայհոյանքներով,
բ Վերջացնում կոպիտ հայհոյանքներով,
Ու երեսին մի քանի խաչակնքելով,
Սոված թողնելով գյուղացի տղին,
Մոմը հանգցնում, մտնում անկողին:

Պառկում էր Սուրենն շունչն իրան քաշած ու մտածում էր ինքն իրան. [և երազում իրանց լիքը տուն] այս է պանդխտությունը, որ մայրս լաց էր լինում ինձ ճամփու դնելիս: Չէ՛, ո՞վ գիտե, գուցե բոլորն էլ այսպես են ապրում, շատ կարելի է ես ավելի երջանիկ եմ:

Բայց չըկարծեք, թե միշտ այսպես անմխիթար անցնում էր Սուրենի կյանքը մղդսու մոտ: Լինում էին երբեմն, երբ երեկոյան ուխտավորի[ն] [տված] մատաղի թոքերը [կամ ոտն ու գլուխը] անում էին խորոված և կամ մի շարեք կարմիր գինին մավի դաջած սուփրի վրա ծալապատիկ նստած, թիկն տված մղդսու ծնկան տակին, և կես հաց, մահճակալի առաջ նստում էր Սուրենն ու մեծ հրճվանքով կամ լսում էր մղդսու երգած շարականը, կամ [ինքն] առակները, և կամ ինքն էր ոգևորված իրան սովորած պատմություններից հրաշքներ պատմում, թե ինչպես մի մարդ թագավոր է դարձել, կամ ինչպես թագավորի մինը մյուսին հաղթել, և կամ իրան գրածները մղդսին բերանբաց [բերանը բաց]

լսում էր նրան և շատ անգամ քեֆի ժամանակ, գովում էր նրան, և [թե]

Հանաք չիմանաք,
Մեծ մարդ կդառնա սա մի ժամանակ,

[Մղդսու մշտական այցելուն էր, որ գլխին ուներ] մի սևածայր սև փափախ և մահուդ չուխա, թևերը կախած, մի [քանի] անգամ պատտված գոտկին սիպտակ միրուքը հասնում էր: Լայն շալվար ու ծայրերին [երկար] երեք մեխանի կրընկներավոր մահմուտներով չեքմեքը հագին [երեք բարձր մեխ նրանց կրունկն էին]: Սուրենն երբեմն սրանց պատկերը նկարում էր ու ցույց տալիս իրանց, ծիծաղում էին ու իրար նայում [և] զարմանում նմանության վրա:

[Շատ ապրես], Սուրեն, Աստված շնորհք տա,
Երբեմն Սուրենը [ընկերներին] համփսոններին
Նախշում էր իրանց գինու գավաթով,
Մղդսու երկայն չիբուխը ձեռին,
Սամփսոնին իրա երկար փափախով,
Եվ նայում էին հարբած աչքերով,
Զարմանալով իսկության վրա,
Ծիծաղում իրար ուսի խփելով
Շատ <...>
ա [Եվ երբ որ մի օր հարցրին]
բ Երբ տանտիրոջից հարց արին մի օր,
Թե որ որդին է Սուրենն իր[ան] հոր,
Առջի որդին է, պատասխանեցին:
[Երկայն միրուքով, մեծ-մեծ բեխերով], և չէր <...>
Մղդսին ուներ մի ծերուկ համփսոն,

ա [Որ կընշանակե փողով ընկեր],
բ [Որ կընշանակե և գինու ընկեր],
ա [Կարճահասակ էր], անունը Սամփսոն,
բ Մի պարապ մարդ էր, անունը Սամփսոն,
Սոված շրջում էր, մինչև որ ճանկեր
Երկայն, սրածայր, սև փափախ գլխին,
Մի կողմը ծալած, ծռած ականջին,
Եվ մահուդ չուխա, թևերը կախած
Դեղին լայն շալվար, փողքերը թողած։
Թե կարդաս, մի կարաս
գինի խմես

Սուրենանց տանը ջահել ժամանակ ծերուկն եղել էր, իրան պատմելով, և ճանաչում էր նրա նախնիքին, պատմում էր նրանց քաջություններից, պատմում էր, [ինչպես նրանք] Երևանն առնելիս, ինչպես քաջությամբ էին կռիվ տալիս Դաղստանում, կամ ինչպես նրանք քառասուն հոգով Հասան խանի դեմ [կռվել էին հաջող] կռիվ են արել, հաղթել են [մեծաշուք] փառքով և ուրիշ ինչ-որ գործ են կատարել։ Աղջկերանց վրա, տասը տարեկան, նամակ էր գրում կամ ոտանավոր —

Իմ աղավնյակ, իմ սիրական...
Հոգուս հատոր... սրտիս կտոր...
Մանկությունը, օ՜, պիղծ ձեռքով
[Իսկ անցյալը, ա՜խ, թող մնա]
Ջեմ բացելու այդ վարագույրն
Եվ ոչ կաշառված, շինծու խոսքով
ա Պատմելու իմ <1 անընթ.> հրապույրն
բ Պատմելու իմ այն հրապույրն։

[Միայն] Սակայն այսքանը պիտի իմանաք, որ պարզության մեջ էր նա մեծացել, [և] ունևոր օջախի հարկի տակ [պակասության] չքավորության մասին դեռ չէր [զգացել] մտածել [և] քնքույշ գգվանքով մերձավորների և ծնողների խանդակաթ սիրով:

Եվ նստած իրան տատերի գոգում,
Ականջ էր դրել [նրանց] հեքիաթին,
Կամ ինչպես իրան պապերն աննկուն
ա [Պատերազմել էի դեմ անհավատին].
բ Ախոյան էին կանգնել հավատին
գ Պաշտպան էին կանգնել հավատին
Ականջ էր դրել Սուրեն<ը>
Երբ որ իրանց հին սրահի առաջ
Հավաքվում էին ծերերը մռայլ
Եվ զրույց անում անցած օրերից:

Այսուհետև այսպիսի հիմարություն չանես,
Թե չէ ուշ կըլնի, երբ կըփոշմանես:

Եվ նա հիշում էր
Խաղաղ իրիկունն յուր հայրենիքի,
Երբ որ աստղալից երկնքի տակին
.....
Եվ լուսնի դիմաց պատմել էին նրան
Ավանդություններն իրանց աշխարքի:

Գիշերն անքուն նա մտածում էր
Ձարերի վրա:
Բայց թողնենք մի կողմ
[Եվ թեև սրտում] ձարերի ահը

Սիրում էր անչափ զենքն ու զրահը։
Եվ երդկից ընկած լուսնի շողքի տակ
Մի քաջք <...> խաղում է ահա.

Հիշում էր ինչպես յուր հայրն ալևոր
Իրանց գյուղացի մի հարուստ մարդուց
ա Տասնևհինգ մ<անեթ> փող առավ մի օր
բ Տասնևհինգ մ<անեթ> առավ մի օր
Եվ տվեց նրան մի մուրհակ պարտոց
Գյուղամեջ գնաց հպարտանալու
ա Որ իրան տղին մտքումը կա
բ Թե իրան տղին մտքումը կա
Այս երկու օրս քաղաք տանելու
Որ Ներսեսական դպրոցում կարդա։
Եվ երկա՛ր-երկար բացատրելով
Կնոջը ուսման գինն ու հետևանքը,
Ապագա իրանց երջանկությունով
Յույց տալով իրան ամբողջ բերկրանքը,
Մյուս օրը նրանք դեռ լուսաբացին
[Վեր կացան ու ձի նստեցին]
Պատվիրեց շուտով պաշար թխելու,
Արտասուքները կուլ տալով
Եվ հեկեկալով գրկեց յուր որդուն
Սուրենի մայրը, նստացրեց ձիուն,
Մի ճիպոտ տվեց, որ քշե յուր ձին,
Գյուղաքաղաքում ծանոթների հետ
Սուրենը ուրախ նստեց ֆուրգոնին
Եվ ճանապարհին խեղճ մալականին
ա [Գլխահան արավ], սովորեց гони-ն
բ Ջահլեն տանում էր, կրկնելով гони-ն։

Առաջին գիշերը ճանապարհին
Առաջին օրերում դեռ նա տանջվում էր,
ա Նրան կարոտն ամեն իրիկուն
բ Ծանր էր կարոտը մանկական հոգու,
Կարծես Սուրենին յուր մոտ կանչում էր
ա Մայրական ձայնը [դեպի տուն]
բ Մայրական ձայնը ամեն իրիկուն:
[Եվ] իրանց երեխանց ուրախ աղմուկը
Հասնում էր նրա ականջին.
ա Օ՜, ինչպես էր ուզում Սուրենը մանուկ
բ Օ՜, ինչպես էր ուզում աշխույժ մանուկը,
գ Որ դուրս գա մի րոպե <1 անընթ.> ֆուրգոնեն
բ Որ դուրս գա մի րոպե նրանց միջեն:
<....> [ատեց ֆուրգոնին]
[Եվ կամաց-կամաց սովորեց «гони»-ն]
Երբոր մոտ եկան նրանք քաղաքին,
ա Ջաստավի նախշուն փայտի տակին,
բ Ջաստավի նախշուն գերանի տակին,
[Անցնելուց հետո Սուրեն<ը> ետ նայեց
Եվ հետաքրքրված հորը հարցրեց]
— Որ քաղքից փախչես, գլխիդ կըձգեն <....>:

<1890-ական թվականներ>

<1>

ԳՐԱԳԻՐ ՄՈՒՉԱՆ

Սեկրետարն եկավ — դե փախի՛ր, Մուզա,
Թե չէ որ [այստեղ] տեսնի, կըխոսա.

[Բայց տերտերներ կան դռանը կանգնած,
Դու չես ուզում տեսնել նրանց,
(Ինչպես նրանք էն օրը քեզ
Ծաղրեցին [քեզ ու իր] համար —
Էլ չեն ուզում տեսնել իրար)

Վերնագրի նախնական տարբերակը՝ «Գրագիր-պոետ Մուզան»։ Վերնագրի դիմաց՝

«Հետո
Տիրացու Մուզան».

1-2 տողերի դիմաց՝

«Վերջում — թեև մենք այսքան ենք առնում քահանա շինելու համար — բայց քեզ ձրի կըշինենք — եկ դարձիր տերտեր — և ապա՝ «Տիրացու Մուսան»։

1 Սեկրետարն եկավ — օ՛, փախի՛ր, Մուզա,

3 Բայց դռանը տերտերներ կան

1-2 տողերի դիմաց, աջ լուսանցքում.

[Օ՛,] հազիվ թե [այստեղ] ներս մտա, ընկեր,
Ճշմարիտ ամո՛թ, այս ո՞ւր ես ընկել,
Դուրսը կանգնած տերտերները
Այսպես ծաղրում են <...>

Դե եկ այստեղ արխիվ մտիր,
Մեր Կարապետն էլ է պոետ,—
10 Բայց չէ, հոգիս, կացիր, կացիր,
Այնտեղ գուցե կորչես անհետ,
Շատ են գործերն խառնափնթոր.
[Կամ] թե հանկարծ [չար մենտոր]
Քեզ էլ կուտեն չար մենտոր,
15 Ինչպես վեհի կոնդակները,
Կամ թոզի մեջ կըխեղդվես,
Կամ թե խարփուխ կընկնես ցրտում...
Ինչպես մեր խեղճ Կարապետը,
Արի կողքիս ակոշկից թռիր,
20 Այնտեղ ապակի չի լինում [երբեք],
Բայց, չէ, չըլնի [թե] ոտդ կոտրես,
Հետո մենակ ինչ անեմ ես —

---

8 Դե եկ այստեղ արխիվը մտիր,
12 Գործերը շատ են խառնուփնթոր.
14-16 Քեզ էլ կուտեն — այն ինչպես որ
Վեհափառի կոնդակները,
Կամ թե խարփուխ կընկնես ցրտից...
8-16 տողերի դիմաց, աջ լուսանցքում.
Տեր Դարեգինն էն օրն ասաց,
Որ այդ սաստիկ տանջող ախտ է —
Դրանով բանաստեղծն այդ անբախտ է —
Ինքն էլ էր երբեմն պարապում բանաստեղծությամբ
(Մինչև անգամ տեր Կոստոն հիացել էր)
20 տողերի դիմաց
Միմիայն սարդի ոստայն

Թևդ ծալիր առժամանակ,
Արի մտիր թղթերիս տակ —
25 Իսկ եթե կուզես,
Սեկրետարին տես,
Խոստացիր դու էլ
Հրաման գրել...
Դարձիր գրագիր,
30 Որ կարողանանք միասին լինել —
Իսկ թե կուզես —
Մի բան տուր մեզ,
Տերտեր շինենք <...>
Ինչ շատ է տխուր —
35 Շատ է նեղ —
Սովորել ես հա՛ — թռչել վերևից
Սարերի օդին — երկնքի հոտին —
Եվ, այո՛, չես նայել վերևից.
Արի նստիր — գրիր —

---

23 Թևերդ հավաքիր միառժամանակ

28 Թղթերը գրել

34-39 տողերի դիմաց, աջ լուսանցքում

«16 մանեթ — 66 կոպեկ տարեկան, 10 մ. էլ պարգև, բայց չպետք է խոսաս բաներ

[Բայց ձեր] տանը պետք է խելոք լինես —

Թե չէ [այստեղից] հանկարծ դուրս կանեն քեզ —

[Նույնպես պետք է բանը չըխոսաս]

Ու կըգրես, որ ոչ մեկն էլ —

Չըհանդգնի քեզ ձեռք մեկնել —

40 Ահա <2 անընթ.> պատրիարքը գրում է.
Այ հենց թեկուզ այս հրամանը —
... Մենակ թողած յուր կնկանը,
Եվ յուր մանրիկ որդիքն անճար,
Բացակայեց օտար աշխարհ...
45 Արդ՝ սրբազան, ձեզ ենք դիմում,
Ասում են ձեզ հանձնյալ թեմում,
Մտել է մի ռուսի ջաղաց...
Տասնևիննը տարի փախած —
Ինքը կույր է, գլխին կեղծամ —
50 Կարճահասակ, վաթսունվեց ամ,
Միրուքը սև ... մեծ քիթ ունի,
Հիմա գուցե ընկած լինի.
Արդ՝ աղաչեմք, սրբազան հայր,
Ղրկեք նրան ծննդավայր...»
55 Բայց հրամանը դեռ չըգրած,
Գործակալի փեշը փուփռաց,

---

41 Այ հենց այս շրջաբերականը —

41-43 տողերի դիմաց՝

Թե հարմարեցին քաչալ ավաք,
Ջահել կնիկ, մանրիկ զավակ
Անօգնական, թողած անճար.

54-55 տողերի միջև՝

Եվ [մենք] արդ ահա մենք այսպես խիստ հրամայել գործակալին՝
Փութով գտնել այս քաչալին,
Եվ ուղարկել յուր հայրենիք
Առ յուր որդիք և առ կնիկ...

Եկավ կարդաց թղթերը,
Եվ հենց իսկույն ևեթ պատասխանեց...
— «...Շատ գուն գործեալ և ոչ գտաք
60 Զհամարեցին քաչալ Աւաք,
Զորմէ յայտնեմք խոնարհաբար
Ոչ ճանաչեմք զայդպէս օտար...»
Եվ դեռ ասում են, թե մեր Ատյանում
Արագ չեն ազգի գործերը գնում...
65 Այս էլ ապա գրիր շուտով —
«...Հրամայել ձեզ յոյժ փութով
'Ի կատարումն հրամանի սորին
7 անցեալ ամսին
Ստանալ զգինս շարականի
70 Յայրուոյ մեռեալ տէր Անբանի...»

Ահա սակայն մի այլ խնդիր,
Ես կըկարդամ, դու ականջ դիր.
Արդարադատ և սուրբ ատյան
Պատիվ ունեմ... տերտերն իմ տան,
75 Որ մենակ ծեր հորս է թաղել,
Ուզում է շատ օգուտ քաղել.
Հիսուն ռուբլին չի ընդունում
Եվ աղմուկ է գլխին հանում,
Չի կամենում հաշիվ դրստել,

---

57 ա Եկավ կարդաց <...> հանեց
բ Եկավ կարդաց իսկույն ևեթ
գ Եկավ կարդաց և հենց կոնսիստորում
65 [Ապա] Այս հրամանն էլ գրիր շուտով
66 Հրամանագրել ձեզ յոյժ փութով

80 Ասում է ինձ՝ թանկ է նստել

Լուսանցքում կատարված հավելումներ.

Որ ստացեալ էր շարական
'Ի վիճակային ատենէդ
Եւ մնացեալ էր պարտական
Վաթսունուհինգ արծաթ մանեթ,
85 Որովհետև ոչ գիտէր նստա
'Ի լուսանցս գրեալ է սչստա
Ահա այսպես. «Մարտի մեկին
Պետրոս քյոխվի նոր մանուկին
Մկրտեցի, չըգրեցի
90 Լուսագինը ջեբս դրեցի»:
Իսկ [շարականն ամենևին]
Դարձել էր հին.
Շատ տեղ ցխոտ, շատ տեղ ճղեալ,
Բոլորովին խարաբ եղեալ
95 Եվ դարձել է հին.
Արդ, սուրբ հայրեր,
Այժմ սրբեր և տիրուհին [չեն]
<2 անընթ.>
[Լաց են լինում
100 Աղաչում են <1 անընթ.>]
[Որքան նեղում եմ ու պահանջում] տանջում.
Արդ — խնդրում եմ սուրբ ատյանին

88 Ահա այսպես. «Ամսի մեկին

92 Եվ շարականն խարաբ եղեալ

Ինչ անեմ այս տիրուհու հետ
[— Կտրի]
— Մերժել այրոց [խնդիրն] ու լացը,
Կապել նորա կալահացը,
Մինչ լրանա շարականի գինը,
Այո, մենք այսպես խիստ ենք, անաչառ,
[Մենք գործ ենք շինում] —
[Այստեղ հոգևոր ատյան է արդար —
Մեզ համար չըկան ոչ <...> կին,
Ոչ մանրիկ որբեր՝ արցունքն աչքերին,
Մեզ համար միայն կա օրենք]:

<2>

ԳՐԱԳԻՐ ՄՈՒՋԱՆ

Ո՜հ, ինչ տանջանքով ներս մտա, ընկեր,
Ճշմարիտ ամոթ, այս ո՞ւր եմ ընկել,
Դուրսը կանգնած տեր հայրերը
Անտեղի ծիծաղեցին ինձ <...>

Նայիր, [նայիր] գլխի սև խոպոպին —
Դա նման է միայն հոպոպին.

Իսկ մեկն եկավ — թե իմ ծուխ դարձիր,
Հազիվ մտա նախատինքով,
Ծառան եկավ — շնորհավոր նոր տարի,
Ութ ամիս է անցել —
Թե չեք հասկանում — մի բան բաշխեցեք —

Բայց դու ինձ այն ասա —
Ո՞ւր այստեղ եկար, անհանգիստ Մուսա.
Հիմա ինչ անեմ քեզ — երբ տերտերները գան.
15 Երբ սեկրետարը տեսնի —
Որտե՞ղ պահեմ քեզ <...>

<3>

Բայց դու ինչու հանկարծ այդպես
Գունատվեցիր ... վեր թռար —
Ո՞վ գիտի, դու հենց իմացար
Երկրաշարժի <...>
5 — Հանգիստ կացիր — տիրացուն է,
Քննություն է տալիս ներսը —
Շարական է ասում նոտով —
Բայց որովհետև տգետ էր,
Երկու շաբաթ ժամանակ տվին,
10 Որ պատրաստվի մի անտաշի մոտ,
Որ սովորի կրոն ու գիտություններ.
Մի՞թե սրանից դժվար <...>
Դու չես ճանաչում այն վարդապետին,
Որ մի բարձր դպրոց են կանչում,
15 Որ լինի աստվածաբան.
Ասում է՝ ես չըգիտեմ աստվածա<բանություն>.
Երեք ամիս ժամանակ են տալիս —

8-9 Բայց որովհետև կրոն չըգիտեր,
Վեց օր ժամանակ տվին,

Որ դառնա աստվածաբան ևն, և այլն —
— Էհ, հեր օխնած, մի զարմանար,
20 Վեց օրը տերտեր դառնալու համար
Դու փոքր միջոց մի համարիր։
Վեց օրում Աստված աշխարհք ստեղծեց —
[Ինչ կա. մի քանի <...>]
Յոթներորդն էլ ավել եղավ —
25 Նա մի տգետ [աղքատ] մարդ էր,
Միշտ ուզում էր դառնալ տերտեր,
Այդքան, հարկավ, բավական էր,
Բայց կան նաև քանի բաներ,
Որ <1 անընթ.> գիտելիքներ և նոր, և հին.
30 «Ուսմունք պատշաճ քահանային»։

---

19 — Էհ, հեր օխնած, ինչ ես զարմանում,

21 Միթե վեց օր քիչ ես համարում —

27 Բայց այդ տգիտությունը իհարկե բավական էր,

30 «Պատշաճ ուսմունք քահանային»

<ՄԻ ԱՆՀԱՅՏ ՊՈԵՄԻ ՍԿԻԶԲԸ>

Ես վայր եմ իջնում Հայոց լեռներից
Գալիս են ինձ հետ հովիվն ու հովեր.
Ես ձայն եմ տալիս Հայոց դաշտերից,
Լալիս են ինձ հետ գեղջուկն, իր ցավեր։

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ՄԱՐՈՆ
(էջ 11)

Առաջին տարբերակ, ԲՄ II

ՄԱՐՈ

(Գյուղացի մանկան պատմությունը)

I

Մեր գյուղն այն է, որ հպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին,
Ձեռքը տված ճակատին
Մտածում է տխրադեմ.
Ինչ է ուզում, չըգիտեմ...
Այնտեղ մենք պաս չենք ուտում,
Եվ ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն օր,
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վնաս
Մեզ հասնում են անպակաս։ –
Ահա, պատմեմ ձեզ մի դեպք,
Մի պատմություն, որ երբեք
Հիշատակով սգալի
Սրտիս հանգիստ չի տալի։

II

Գյուղից վերև, ճամփի վրա
Տերևախիտ մի ծառ կա.
Անտառիցը նա զատված,
Մարդու կացնից ազատված,
Դեռ կանգնած է և շոգին
Հով է տալիս մըշակին.

Իսկ նրանից ոչ հեռու
Մի լեռնային պարզ առու
25 Դուրս գալով մութ ծմակից
Խոխոջում է փրփրալից։
Սակայն շատ չէ նա խորին.
Այն առվակում կեսօրին,
Երբ որ տապից նեղանում,
30 Գնում էինք լողանում.
Խաղում էինք, վազվզում,
Գույն-գույն մանրիկ ավազում,
Եվ մեր ճիչը մանկական
Միանալով մի առ ժամ
35 Այն վտակի աղմուկին
Խաղաղանիստ, խուլ հովտին
Կենդանություն էր տալիս։
Ա՛խ, ո՞րքան էր դյուր գալիս,
Երբ որ տկլոր խումբը մեր
40 Աղաղակով վազում էր
Թիթեռնիկի ետևից,
Որ թռչում էր թփերից...
Եվ միշտ հոգնած ժամանակ
Հանգչում էինք ծառի տակ։

III

45 Այն ժամանակ այնտեղ կար
Այժմ կորած շիրմաքար.
Իմ քույրերս նրա մասին
Այսպիսի բան ինձ ասին.–
«Այս քարի տակ մամռոտած
50 Սիրուն Մարոն է թաղած։
Ժիր էր նա և դյուրեկան.
Նոր էր ինը տարեկան,
Նրանց տունը երբ մի օր

Եկան երկու եկավոր։
55 Խնամխոս էին մարդիկը,
Եվ, Մարոյի մայրիկը
Երբ որ նրանց առաջին
Խոնչա դրեց, ասացին –
«Շնորհակալ ենք հաց-աղից,
60 Հող տվեք ձեր օջախից»։
Այն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն և ասաց –
Կամքդ լինի, Տեր Աստված...
65 Նշանեցին Մարոյին,
Տվին չոբան Կարոյին։

IV

Գիտե՞ս ով էր Կարոն. նա
Մի հովիվ էր ածդահա,
Բոյ-բուսաթին նայելիս
70 Մարդու սարսափ էր գալիս։
Բայց զոքանչը անսահման
Սիրով սիրում էր նրան.
Մարոն ասում էր նույնպես
(Նրանից եմ լսել ես) –
75 «Կարոյին շատ եմ սիրում,–
Ինձ համար միրգ է բերում»։

V

Մի օր էլ Կարոն ընկերներով
Եկավ զուռնա-դհոլով,
Եվ Մարոյին զուգեցին –
80 Երեսին քող ձրգեցին,
Հինա դրին ձեռքերը...
Ապա եկավ տերտերը

Խաչ ու ավետարանով,
Օրհնեց օծած բերանով
85 Կռնաբռնուկ արած
Հարս ու փեսին, և կամաց
Տարավ ժամում կանգնեցրեց,
«Տեր ես, որդյակ», հարցըրեց.
«Տեր եմ», ասաց մեր Կարոն,
90 Բայց լուռ կանգնած էր Մարոն.
Եվ տերտերը նրան այսպես
Խրատ տվեց – «երբ որ քեզ,
Հնազանդ ես, որդյակ, ասեմ,
Գլուխ կըտաս, դե տեսնեմ».
95 «Եվ դու, որդյակ, հնազանդ ես»,
Մարոն շարժվեց, «այ, ապրես»:
Մարոյի հայրն էլ ծեսին
Այսպես օրհնեց յուր փեսին –
«Ջաղացիդ միշտ հերթ լինի,
100 Մեջքդ ամուր բերդ լինի...»:
Իսկ երբ հնչեց «տարան հա»-ն,
Նրան փեսի տուն տարան:
Պսակեցին Մարոյին,
Տվին չոբան Կարոյին:

VI

105 Թե գրբացի գիր-ջանքով,
Սրտակտուր բժժանքով
Նրա սիրտը կտրեցին,
Կամ, թե նրա հանդերձին
Այն անհոգի չար ջադուն
110 Քսեց գայլի յուղ թաքուն,
Այդ չիմացավ ոչ ոք պարզ,
Միմիայն փոքրիկ նորահարս
Մարոն ատեց յուր մարդուն,

Փախավ եկավ հորանց տուն։
115 Շատ խրատեց տերտերը,
Խրատեցին մեծերը,
Խրատելով էլ կրկին
Տարան տվին կարոյին։
Գնաց Մարոն, բայց դարձյալ
120 Չուզեց նրա մոտ մնալ,
Որ ծեծում էր անխնա,
Թե միշտ իրան մոտ մնա...
Չուզեց Մարոն, և թաքուն
Փախչում, գալիս էր հոր տուն.
125 Այնտեղ էլ հայրն էր ծեծում,
Մայրն էր թքում անիծում,
Որ գնա փեսի մոտ կրկին,
Սիրե նրան, ինչպես կին։
Մարոն սկսում էր լալ,–
130 «Ես նրա մոտ չեմ գնալ...
Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինել կին»։

VII

Մի օր էլ հայրը բարկացած
Ծեծեց նրան և ասաց.
135 «Դուրս իմ տանից, սևերես,
Ետ չընայես դեպի մեզ,
Էլ չըմտնես իմ տունս,
Մրոտեցիր անունս...»։
Լալով, ծածկած յուր դեմքը
140 Թողեց Մարոն հոր շեմքը.
Ուրիշ մարդ էլ, ով տեսավ,
«Աղջիկ, ամոթ քեզ, ասավ,
Լավ է մեռնելդ ապրելուց,
Որ փախել ես քո մարդուց»։

VIII

145 Եվ, հալածված հոր տանից,
Յուր ամուսնուց, մարդկանցից,
Սոված, պատռած շորերով
Նա կորչում էր օրերով.
Բայց թե մի մարդ հոգեսեր
150 Ձեռքը բռներ և ասեր,–
Մեզ մոտ արի, այ թշվառ։
Մի քիչ հաց կեր, կամ մի լար.
Նրա հայրը անաստված
Հայհոյում էր բարկացած,
155 Որ չեն թողնում նորատի
Աղջկանը խրատի։
Եվ ամուսնու մոտ ատված,
Կամ հոր տանը նախատված,
Կամ կուչ գալով խղճալի
160 Օջախի շուրջ օտարի,
Ամեն սրտի ցավ տալով,
Ապրում էր նա միշտ լալով։

IX

Այսպես տարիք անց կացան.
Դիմաց սարից մի չոբան
165 Մի օր մեզ ձայն էր տալիս,
Թե իմացեք, որ քարից
Կարմիր շորով մի խիզան
Ընկավ ձորը – մի կածան։
Դուրս թափվեցանք մենք գյուղից,
170 Հեռու կանգնած երկյուղից,
Տեսանք բարձրը քարի տակ
Ընկած կնոջ մի դիակ։
Մարդիկ իջան ու բերին

Ջարդ ու փշուր Մարոյին.
175 Եվ ասացին մեկմեկի
Այսպես խոսքեր անհոգի.–
«Վաղուց պետք է այս աներ,
Կամ թե իսկի չըծնվեր...»:
Աղի լալիս էր հայրը,
180 Կուրծքը կոծում էր մայրը,
Այնինչ Մարոն պապանձված
Ոչինչ, ոչինչ չըխոսաց.
Մեռավ, գնաց խեղճ Մարոն,
Բայց դեռ ապրում է Կարոն:

X

185 Սակայն նրա փոքրիկ դին
Պապերի մոտ չըդրին.–
(Մեր տերտերի սուրբ գրքում
Գրած էր, թե նրա հոգում
Չարեր էին բուն դրել...
190 Նաև հաղորդ չէր առել).
Առանց ժամ ու պատարագ
Այն ճյուղաշատ ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Ամփոփեցին Մարոյին,
195 Այս լեռ քարն էլ տաշեցին,
Բերին վրեն քաշեցին:

XI

Շատ եմ տեսել, երբ նրա
Խեղճ մայրիկն այս քարի վրա
Կորանալով ինքը միայն
200 Լաց էր լինում կիսաձայն.
Խունկ էր ծխում, մոմ վառում,

Որ գիշերվան խավարում
Երևում էր մեն-մենակ
Հեռվից երկար ժամանակ:

Հեղինակի ծանոթագրությունները (ԲՄ II)

58 Խոնչա – փայտյա մատուցարան, որով հաց ու կերակուր են տալիս հյուրերին:

60 Հող տվեք ձեր օջախից – փոխաբերական դարձված է. կնշանակե՝ ձեր աղջիկն ուզում ենք:

101 «Տարան հա՜» – զուռնայի մի եղանակ է, որ հնչում են հարսին հորանց տանից ամուսնու տունը տանելիս:

110 Քսեց գայլի յուղ թաքուն – կախարդելու միջոցներից մեկն է:

ԲԹ բնագրային տարբերությունները

Վերնագիրը – ՄԱՐՈ

1 Մեր գյուղն այն է, որ հրպարտ,
4 Ձեռքը տրված ճակատին՝
7 Պաս չենք այնտեղ մենք ուտում
15 Հիշատակով սրգալի
17 Մեր գյուղից վեր մինչ այսօր

23-24 տողերի փոխարեն՝

Իսկ նրրանից քիչ հեռու
Ձարաճրճի մի առու
Դուրս է փախչում անտառից,
Կարկաչելով փրրփրալից՝
26 Այն առվակում կեսօրին,
27 Երբոր տապից նեղանում,

29-34 տողերի փոխարեն՝

Խաղում էինք վազվզում
Գույն-գույն, մանրիկ ավազում.
Ու մեր ճիչը մանկական
Միանալով լեռնական
Գիժ վըտակի աղմուկին՝
Լուռ ու խաղաղ այն հովտին,
Աշխուժ կյանք էր միշտ տալի:
Ախ, որքան էր դյուր գալի,
Երբ մեր տըկլոր խըմբակով
Վազում էինք աղմուկով
Թիթեռնիկի ետևից,
Որ թռչում էր թըփերից,
36 *Այն մենավոր ծառի տակ*
50 *Շնորհակալ ենք, ասացին.*
55 *Այն ժամանակ Մարոյի*
66 *Սիրով սիրում էր նըրան:*
70 *Ջամիչ, կանֆետ ու խընձոր...*
82 *Այսպես օրհնեց իր փեսին*
94 *Քսեց գայլի ճըրագուն...*
95 *Այդ չիմացավ ոչ ոք պարզ,*
103 *Հայրիկն այնժամ բարկացավ,*
118 *Անտառներում շարունակ:*
119 *Այսպես տարիք անց կացան.*
121 *Ջայն էր տալի մի օր մեզ,*
125 *Դուրս թափվեցանք մենք գյուղից,*
135 *Գյուղից հեռու մինչ այսօր*
141 *Էն լեռ քարն էլ տաշեցին*
146 *Ջայն էր տալի Մարոյին...*

147-154 տողերը ԲԹ-ում բացակայում են:

Թումանյանը նախապես մտադիր է եղել տեղադրել «Մարոն» ԲԲ-ում, սակայն հետագայում հրաժարվել է այդ մտքից: ԳԱԹ ԹՖ №142(100ը)-ում պահպանվել է պոեմի շարվածքի վերջին էջը (ընդամենը ութ տող) հետևյալ ուղղումներով ու լրացումներով.

144 Մերը մենակ, սևաշոր,
146 Ձեն էր տալի Մարոյին...

146 տողից հետո ավելացրել է հետևյալ հատվածը մի քանի տարբերակով.

ա Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան,
Ո՞վ անիծեց, Մարո ջան,
Ո՞ւր փախար դուն, Մարո ջան,
Տուն արի, տուն, Մարո ջան,
Խորն ես քնել, Մարո ջան,
Ձես զարթնում էլ, Մարո ջան:
բ Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան,
[Շատ խաղ արիր, Մարո ջան],
Ո՞ւր փախար դուն, Մարո ջան,
Տուն արի, տուն, Մարո ջան
Խորն՝ ես քնել, Մարո ջան
Ձես զարթնում էլ, Մարո ջան:
գ [Քեզ ո՞վ ծեծեց, Մարո ջան,
Ումնի՞ց ես խռովել, Մարո ջան,
Տուն չես գալի էլ, Մարո ջան,
Օրըդ խավար, Մարո ջան]:
158 Հեռվում երկար ժամանակ:

«Մարոն» պոեմից մի հատված (ընդամենը 13 տող) Թումանյանը, իբրև առանձին բանաստեղծություն, «Վտակ» վերնագրով զետեղել է «Լուսաբեր» դասագրքի 1907 թ. (Ա տարի, էջ 86) և 1908 թ. (Բ տարի, էջ 117) հրատարակությունների մեջ: Այդ հատվածը համապատասխանում է պոեմի 17-18, 23-24, 26-32, 35-36 տողերին:

---

*[ոնց]

Հատվածի տեքստային տարբերությունները.

18 Մի հին ծառ կա մենավոր:
23 Պարզ լեռնային մի վտակ
26 էն վրտակում կեսօրին,
29 Մեր գիժ, տկլոր խմբակով,
36-37 Նստում էն հին ծառի տակ:

«Մարո» պոեմի նույն հատվածը «Կեսօրին» խորագրով (18 տող) տպագրված է «Լուսաբեր» դասագրքի 1920 թ. (երրորդ տարի, 12-րդ տիպ) հրատարակության մեջ: Հատվածը համապատասխանում է պոեմի 17-36 տողերին: Կրճատված են 29-30 տողերը:

Հատվածի տեքստային տարբերությունները.

17 Մեր գյուղից վեր մինչև էսօր
22 Հով է տալի մըշակին:
25 Խաղում կանչում մարգերին

29-30 տողերը չկան:

36-37 Նըստում էն հին ծառի տակ:

ԼՈՌԵՅԻ ՍԱՔՈՆ
(էջ 18)

Առաջին տարբերակ (ԲՄ 1)

ԼՈՌԵՅԻ ՍԱՔՈՆ

I

Խոր ձորի միջին ահա մի տնակ.
Այնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ.
Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր,
Տուն է ուղարկել նրան այս գիշեր,
5 Այնինչ համկալը հենց առավոտը
Դեպի սարերը քշեց յուր հոտը:

II

Ոչինչ, թե միայն է նրա փարախը,
Սաքոյի համար ինչ բան է վախը.
Շատ անգամ միայն ձեռքի մահակով
10 Քշել է գայլերին ամբողջ ոհմակով.
Գող թուրքերին էլ մի ահ է տվել,
Որ սիրտ չեն անում աչքները խփել,
Եվ մեր գյուղացիք աներկյուղ հովվին
Արժանի «իգիթ» անունը տվին:

III

15 Դեռ նոր ադամա մութը փարատված,
Եվ հորիզոնից դեռ կամա՛ց-կամաց
Նոր է լուսաստղն երեսը հանում,
Որ Սաքոն ոչխարն արոտ է տանում:
Շքեղադալար լերանց թարմ օդը
20 Եվ շաղաթաթախ ծաղիկն ու խոտը,

Անհայտ դրախտի կնդրուկի նման,
Անույշ բուրմունքով, շնչով կենսական
Լցնում են կուրծքը, վերացնում հոգին:
Ինչը կըհասնի Սաքոյի կյանքին.
Ամեն առավոտ տեսնում է, ինչպես
Արևելքումը շքեղահանդես,
Ամպերի միջից արջնաթույր և թուխ
Բացվում է արշալույսն ինչպես հրաբուխ,
Կամ թե բոցավառ հրդեհի նման,
Որ թանձր ծխից հայտնում է իրան:
Եվ առաջին շողն արևագալին,
Երբ ընկնում է լերանց կատարին,
Կարմըրին տալով, ասես թե քրքում,
Վես գագաթները վարդերանգ ներկում,
Այնինչ դեռ նոր է մութը նահանջում,
Միգապատ լերան բարձրուղեշ լանջում
Այս ժամանակին մեր Սաքոն կանգնած,
Հովվական երկայն մահակին հենված,
Գլխարկը ծռած, յափնջին ուսին,
Շիկնած, կարմըրած վառ արևլուսին,
Սեգ ու վայրենի հայացքը մեխած,
Նայում է երկնի տեսքով զմայլած.
Կամ թե ոչխարի վերևը թինկը
Տված, ածում է իրան սրինգը.
Կամ ժայռի գլխին, բարձր այունաձև,
Արծվի հայացքով նայում է ներքև,
Այնտեղ, որին, մթին անդընդում
Գետը զայրագին գոռում է, թնդում:

IV

Սև-սև ամպեր են գալիս հավաքվում.
Մթնում է երկինքն ու փայլատակում,
Սառած սասանած երկիրը վախից

Ուզում է, կարծես, փախչել յուր տեղից,
Եվ թանձր անտառը, սաստիկ հողմակոծ,
Երբ ֆշշացնում է ինչպես մի սև օձ,
55 Թեքվում է, տնքում ծառը հաստարմատ,
Ամբողջ ծմակը հեծծում հուսահատ:
Գոռում են ամպերն մթնած երկնքից,
Գետինը դողում, շարժվում է հիմքից.
Ապա երկինքը պատռված, կարծես,
60 Հեղեղ է թափում կժով ջրի պես,
Հեղեղ, որ պետք է քո աչքով տեսնես,
Շիթերից բռնես, երկինքը հասնես: –
Սաքոն ոչխարը ծմակն է քաշում,
Մի տերևախիտ ծառի տակ կանգնում,
65 Եվ հետևում է հանգիստ հայացքով
Թխպոտ ամպերին, որ համր ընթացքով
Գնում են դես-դեն, խառնվում, կուտակվում,
Սև ծոցի միջից շանթեր արձակում.
Կամ դաշտի միջին, քարի կողք մտած,
70 Հին հրացանը, մահակը խտրտած
Ու գլխին քաշած մաշված յափնջին
Անխռով լսում է. նրա ականջին
Խլաձայն հասնում են որոտն ամպերի,
Կայծակի ճայթյունն, վշշոցն անձրևի...
75 Ազատ է, ազատ բնության որդին.
Միահավասար մոտ են նրա սրտին
Բնության բոլոր տեսք ու ձայները.–
Թե ականակիր մթնագիշերը,
Թե խաղաղ, շքեղ գարնան առավոտ,
80 Աղբյուրի խոխոջ, կայծակի որոտ...
Ա՜խ, մարդու լեզուն տկար է, տկար,
Բնության տեսքը պատմելու համար.
Բայց նրա հոգին, երբեմն անարգել,
Երկինք ու գետինք կարող է գրկել:

V

85 Նրանց փարախում Աստծու գիշերը
Հավաքվում ձորի ողջ մզդուրները,
Շհուն ու պկուն խառնում են իրար,
Խաղում են, ասում, խնդում միալար.
Եվ նուրբ սուլոցը սրնգի հովվական
90 Խոսում է կարծես.– մին հովվի նման
Ոչխարի շանն է ձայն տալիս, կանչում,
Մին էլ շան նման հաչում, կլանչում:
Լսել ես, երբ լուռ գիշերվան ժամին
Տերևներն զգույշ շարժում է քամին,
95 Եվ կամ թե ճնշված լեռնային կիրճում
Ոնց է հուսահատ հողմը մռնչում:
Ակամնջ ես դրել, թե ոնց է երգում
Առվակի կարկաչն անտառի խորքում.
Լսել ես հեզիկ խոխոջն աղբյուրի...
100 Ահա բնության այս ձայներից մի
Կազմած քաղցրալուր ներդաշնակություն
Հնչում է իգիթ Սաքոյի շհուն:
Իսկ ընկերներից մեկը սրտալի
Երգում է, կանչում ինչքան ձայն ունի:
105 Եվ մելամաղձոտ նրանց բայաթին
Գովեստ է տալիս վեհանձն իգիթին,
Կամ հայրենիքի հողին ու քարին,
Սիրավառ կանչում սևաչյա յարին:
Եվ ամեն մի ձայն այն երգում այնքան
110 Պարզ է և զորեղ, այնքան բնական,
Որ մարդ նույն ժամին, կարծես, սրտաթունդ
Ելնում է, իջնում երկինք ու անդունդ:
Ապա խաղում են հերթով կենդապար.
Ետ-առաջ վազում, ցատկում անդադար,
115 Եվ հանկարծ կանգնում, իրան կոտրատում,
Ոտներով արագ գետնին վերհատում:

Կոնաբռնուկ են անում իրար հետ,
Շրջան են կազմում, զոփի են տալիս,–
Երկու ոտն առաջ, իսկ մեկ ոտըն ետ
120 Գնում ու դառնում, պտույտ են գալիս:
Դեռ ըսկըսում են կամաց ծանրապար,
Իսկ հետո միջակ. աստիճանաբար
Արագացնում են, և պտույտ առած
Ամբողջ շրջանը գնում է թռած:
125 Երբեմն ուռուցիկ կուրծքերն ուռցնում,
Աղաղակում են, սուլում, շվացնում,
Մին էլ միասին հանկարծ կորանում,
Ու կրկին դքվում, կրկին տաքանում
Եվ ոգևորված գետինը դոփում.
130 Օճորքը դողում և հող է թափում:
Նստում են հետո, գիտեցածներից,
Իրանց պապերից, ծիծաղ բաներից
Պատմում են երկար, երկա՛ր մինչև ուշ
Գիշերվան կեսը, և քնում անուշ:

VI

135 Սակայն այս գիշեր լռություն է տիրում
Նրանց փարախում, և խորը ձորում
Մենակ է Սաքոն. տխուր թեք ընկած,
Նա մտածում է յուր տատի պատմած
Ջարքերի մասին, որոնք միասին,
140 Ծուռը ոտներով գիշերվան կիսին...
Թուրքի կնանոնց կերպարանք առած
Հայտնվում են միայն մենակ մարդկերանց.
Կամ ինչպես քաջքերն այրերի միջից,
Երբ մեկը նայում է քարի գլխից,
145 Կամ թե ուշացած անցնում է ձորով
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով,
Եվ մարդկանց նման խնջույք են սարքում,

Զուռնա են ածում, թմբուկ են զարկում...
Այսպիսի դեպքեր շատ են պատահած,
150 Նույնիսկ Սաքոյին քանի՜սն են պատմած...
Եվ հիշողությունն օրերից անցած
Ետ կանչեց ձայներ վաղուց մոռացած,
Ձայներ ահալի, տխուր պատմության,
Չար ոգիների գործած չարության:
155 Տատի խոսքերը նրա ականջին
Ուրվաձայն, երկչոտ հնչեցին կրկին.
Հնչեցին երկար, մինչև նրա վառ
Երևակայությունը գրգռեցին իսպառ: –
Ահա պատկերներ, տգեղ, այլանդակ,
160 Անհեթեթ շարքով, խառըն և անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց
Երևացին և – անցնում են կամաց:
Աչքերը միայն կրակին հառած
Ծանրը է շնչում Սաքոն ահառած,
165 Եվ առողջ կուրծքը լեռնական մարդու
Ալեկոծում է կասկած ահարկու.
Այլև ինչ կասկած,– նա հավատում է...

VII

«Ո՞վ է հող թափում այս բուխուրակից...
Վա՜հ... այն ո՞վ է... այն ո՞վ է երդըկից
170 Դիվական ծիծաղն երեսին նայում...
Պլըզած աչքերն ի՜նչպես են փայլում...
Թե աստղեր էին, որ պսպըղացին...
Չէ՛, աչքեր էին... ա՛յ, ծիծաղեցին...
Ի՞նչ ոտնաձայն էր, որ կտրովըն եկավ...
175 Թեթև քայլերով դռանը մոտեցավ...
Ո՞վ պետք է լինի... Ինչո՞ւ չէ խոսում...
Այսպես տարաժամ ի՞նչ բան է ուզում...
Բայց ինչպես եղավ, ազազիլ Զորին

Զրպատառոտեց անժամ եկվորին...
180 Այս ինչպես եկավ... չէ՛, սա ով որ է,
Ծանոթ օքմին է, շունը սովոր է...
Իմ շան ահիցը էլ ո՞վ սիրտ կանի...
Իմացա՛, ընկերս – Գևոն կըլինի...
Սուտ վախացնում է... հա՛, նա է, նա...»:
185 (Կանչում է) «Գևո՛՛»... Ձայն-ծպտուն չըկա,
Միայն ահավոր լռության միջում
Ջորագետն է խուլ, մրափած վշշում:
Եվ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին,
Աշխարհը քնած է, նույնիսկ թույլ քամին.
190 Քնած չեն միայն անքուն շարերը,
Վխտում են ուրախ լիքը ձորերը:
Աչքերը հանգչող կրակին հառած
Ծանըր շնչում է Սաքոն ահառած,
Եվ առողջ կուրծքը լեռնական մարդու
195 Ալեկոծում է կասկած ահարկու:
Այլև ինչ կասկած, հավատում է նա,
Բայց տուր չի տալիս,– կռվում է ահա.
«Շվաք էր գուցե, աչքիս երևաց...
Չէ, ահա կտուրը դողաց, երերաց...
200 Գալիս են դարձյալ... ինչպես են վազում...
Դռան ետևից ձայներ են լսվում...»:
Վախեցած Սաքոն գլուխը մի քիչ
Հազիվ բարձրացրեց, աղաղակ, քրքիջ
Եվ դժոխալուր ձայներ բյուրավոր
205 Բռնել էին դուռն ու կտուրը բոլոր:
Սիրտը դողդողաց և փշաքաղած
Սաքոն ողջանդամ մի սարսուռ զգաց.
Դեպի կռնակը երկչոտ հայացքով
Աչքերը չռեց, մտքի մեջ զորով՝
210 «Նրանք են» ասաց, և դուռը բացվեց,
Թուրքի կանանցով փարախը լցվեց:
Ինչպես գիշերը երկնում սևակնած

Փայլատակում է կայծակը հանկարծ,
Այնպես մի կրակ աչքերըն առավ,
215 Եվ իգիթ Սաքոն փարախից թռավ:

VIII

Այն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերն ամեհի, նոթերը կիտած,
Դեմ ու դեմ կանգնած, համառ և անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:
220 Սև ծովի նման մլարը կանգնած
Գրկում է նրանց կուրծքը կախ ընկած,
Որ, կարծես, ահա, հենց այս վայրկենին
Վայր կընկնեն անահ անցվորի գլխին:
Ահռելի ձոր է. այնտեղ Դեբեդը
225 Փրփրած վազում է, սրընթաց գետը
Գոռում է, ինչպես վիրավոր գազան,
Եվ աղաղակին այն երկրասասան
Խոր, լայնաբերան քարանձավները
Կցում են իրանց քաջքի ձայները
230 Կազմում վայրենի ներդաշնակություն.
Սարսափ է ազդում անսովոր մարդուն:
Գիշերը լուսնի երկչոտ շողերը
Երբ որ ընկնում են այն ահեղ ձորը,
Եվ ալքերի հետ խաղում դողալով,
235 Իսկ ալիքները գետի շողալով
Հուզվում են, իրար ետևից փախչում,
Դեբեդը խավար անդունդի խորքում,
Մի արծաթափայլ նեղ շերտի նման
Պտույտներ առած ձգվում է երկայն:
240 Այս տախտի վրա, այն ժայռի գլխին
Կանգնած է մենակ, խավար ու լռին,
Մի քանդված հին բերդ, մի ավերակ վանք,
Մռայլ ու տխուր, ինչպես զարհուրանք,

Իսկ քարի գլխից լուռ մարդու նման
245 Նայում է ձորին մի հին խաչարձան...

IX

Խավարչտին գիշեր, և կես գիշերին
Վես Զորագետի ժեռուտ ափերին,
Անդնդանման խոր Լոռու ձորում
Մի բարձրահասակ մարդ է թափառում:
250 Ստվերի նման, ծառերի տակին
Հայտնվում է մին, չքանում կրկին.
Եվ լայն խանչալի դաստակը կողքին
Ջարկելով գոտու երկաթյա թողկին,
Ջրրխկչրխկում է, կարծես յուր զարկով
255 Համրում է նրա քայլերը կարգով:
Հնչում է զուռնան մութ քարանձավից.
Ջարերը վազում նրա ետևից,
Դեբեդն էլ անդուլ գոռում է. «հա՛,
Այստեղ է Սաքո՛ն, այստեղ է ահա՛»:
260 Եվ դուրս են թռչում յուր ալիքներից
Գիսախռիվ ալքերն իրար ետևից,
Վազում են բռնեն իգիթ Սաքոյին,
Որ տանեն գետի հատակը խորին:
Քար ու մացառուտ առած ոտնատակ
265 Թռչում է Սաքոն քամուց էլ արագ.
Սակայն, առաջին ցոլացին աչքեր,
Թփից դուրս թռան մի քանի քաջքեր:
Մի ակնթարթում Սաքոն յուր թափը
Կոտրեց և իսկույն թողեց գետափը...
270 Արձագանք տվեց ձորն այդ միջոցին
Նրա ազազիլ գամփռի հաչոցին.
Փարախն էլ գուցե մի գայլ է մտել,
Աղքատի հոտը կերել, խեղդոտել:
Խելագուրկ Սաքոն ոչինչ չէ հիշում,

275 Քշում են նրան, չարերը քշում,
Քաջքերն էլ այրից զուռնա-դհոլով
Կանչում են, կանչում ծանոթ ձայներով.
Իսկ Զորագետից ալքեր են թռչում,
Եվ ալիքները փրփրագեղ ուռչում,
280 Մռայլի միջին ծփում են կայտառ՝
– Բռնեցե՛ք, փախա՛վ Սաքոն խելագար:

X

Վազում է Սաքոն. այնինչ այդ ժամին
Սաքոյի նանը – պառավ Նազանին,
Փոքրիկ թոռներին տեսած ու լսած
285 Քաջքից է պատմում ոգևորված.
Իսկ առավոտյան նրան կենդանի,
Խելագար Սաքոն վկա կըկանգնի:

Հեղինակի ծանոթագրությունները (ԲՄ I)

5 Համկալ – գութանի կամ սարի ընկեր. համկալություն – ընկերություն:
14 Իգիթ – թուրքերեն բառ է – քաջ, անվեհեր:
86 Մզդուր – հովիվ, խոզարած, տավարած և այլն:
87 Շհու – սրինգ:
87 Պկու – սրնգի նման գործիք է, բայց սա զուռնի նման լեզվակ ունի:
88 Ասել – երգել:
104 Կանչել – երգել:
105 Բայաթի – թուրքերեն կարճ ժողովրդական երգ:
113 Կենդապար – մենակ պարել:
116 Վերհատել – ծեծել:
118 Զոփի – այս պարը մի քանի տեղ յալլի է կոչվում:
132 Ծիծաղ բան – զվարճալի պատմություն, անեկդոտ:
178 Զորին – Սաքոյի շան անունն է:

187 Ձորագետ – Դեբեդ կամ Բերդուջ պատմական գետն է. այս անունը կրում է Դսեղա ձորից սկսած, ուր նրա երկու մեծ վտակները – Փամբակա և Ղարախաչա ջրերը միանում են:

197 Տուր չըտալ – անձնատուր չլինել:

229 Քաջքի ձայն – արձագանք:

234 Ալքեր – ջրերում բնակվող ոգիներն են:

240 Տախտ – ձորի զառիվայրում գտնված տափարակ տեղը:

253 Թոխկալ – մետաղյա բան է, որ գործ է ածվում թե գոտու երկու ծայրերն ամրացնելու, կապելու և թե իբրև զարդ, որ անց են կացնում գոտին:

276 Դհոլ – թմբուկ:

Երկրորդ տարբերակ
(1896 թ. առանձին հրատ.)

ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

I

Խոր ձորի միջին ահա մի տընակ,
Այնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ։
Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.
Նա էլ այս գիշեր –
Հացը պակասեց, շընալիր չըկար,
Աղ էր հարկավոր ոչխարի համար,
Ուզեց զոքանչի ձըվածեղ ուտել,
Թե նշանածին շատ էր կարոտել,–
Գնացել է տուն.
Այնինչ համկալը հենց առավոտը
Դեպի սարերը քըշեց յուր հոտը։
Եվ Սաքոն անքուն,
Թաց տըրեխները հանել է, քերել,
Գուլպան բուխարու վրա կախ արել,
Ու թինկը տըվել,
Մեն-մենակ թըթվել։

II

Թեկուզ և մենակ լինի փարախում,
Աժդահա Սաքոն ընչից է վախում.
Հապա մի նայիր նորա հասակին,–
Ո՞նց է մեկնըվել, կարծես ահագին
Կաղնըքի լինի անտառում ընկած...
Բայց եթե տեղից վեր կացավ հանկարծ,
Գըլուխը մեխած մահակը վերցրեց,
Եթե շըներին ձայն տվեց, կանչեց
Ու բիրտ, վայրենի առաջըդ կանգնեց,
Դու կըհասկանաս, թե ինչու համար,
Գող, գայլ ու գազան, ողջ լեղապատառ,
Հենց դատարկ վախից
Հեռու են փախչում նորա փարախից:

III

Նորա փարախին հսկում է Զորին,
Ազազիլ Զորին հսկում է անքուն,
Ներքև է բերում նա ձիավորին,
Ղուշն էլ չի անցնում նրանից թաքուն:

Թեպետև Սաքոն եղբայրներ ունի
Ու նրանց համար արյունը կըտա,
Բայց Զորու նման էլ ո՞վ կըլինի,
Նրան հավասար եղբայր էլ չըկա:

Մըթնագիշերին հեղեղ է թափում,
Հողմը վշշում է, շանթը փայլկըտում,
Սաքոյի վրա գազանը գալիս,
Սաքոյի հոտին գող վրա տալիս,
Քնած է Սաքոն, բան չէ իմանում,
Զորին է նրանց դիմացը կանգնում:

Ընկել է Սաքոն թշնամու հետքին,
45 Կռվում է Սաքոն թշնամու դիմաց,–
Զորին գալիս է յուր հետ – կրընկին,
Յուր կողքին դարձյալ Զորին է կանգնած:

Նորա փարախին հսկում է Զորին,
Ազազիլ Զորին հսկում է անքուն,
50 Ներքև է բերում նա ձիավորին,
Ղուշն էլ չի անցնում նրանից թաքուն:

IV

Ո՞վ ես, դու, հե՛յ անցվորական,
Որ թեպետև պարզ օրով,
Այդպես անվախ, անհրացան
55 Անց ես կենում այս ձորով:

Ասենք իսկի չես վախենում
Ոչ գազանից, ոչ բանից,
Հապա ինչպես ահ չես անում
Այս ձորերի չոբանից: –

60 Գուցե նրան անդյուրեկան
Մի տղամարդ եղար դու,–
Ծռի՛ր ճամփեդ, օտարական,
Կանչիր անունն Աստծու:

Հեշտ կազատվես անդունդներից,
65 Հորձանքներից այս գետի,
Բայց Սաքոյի չար հանաքից
Թող քեզ Աստված ազատի:

Սակայն եթե մի վիշտ ունես,
Որ կարող է նա օգնել,

70 Թե սիրուհիդ մերժում են քեզ,–
Ապա բարով ես եկել։

Թե թուրքերը զավակներիդ
Փուփը կտրել են, տարել,
Այժմ ուզում ես դարձնել գերիդ,–
75 Կըրկին լավ ես միտք արել։

Այնժամ նրան գոնե մի օր
Եղիր ղոնախ թանկագին,
Ընկերություն արա անդորր
Յուր հովվական պարզ կյանքին։

V

80 Ադամա մութը դեռ նոր փարատված
Եվ հորիզոնից դեռ կամաց-կամաց
Նոր է լուսաստղը երեսը հանում,
Որ Սաքոն ոչխարն արոտ է տանում։
Շըքեղադալար լեռների օդը
85 Եվ շաղաթաթախ ծաղիկն ու խոտը
Դրախտի անուշ կնդրուկի նման,
Առատ բուրմունքով, շնչով կենսական
Լցնում են կուրծքը, վերացնում հոգին...
Ինչը կըհասնի Սաքոյի կյանքին։
90 Ամեն առավոտ տեսնում է աչքով
Թե արևելքում ինչպես է շըքով,
Ամպերի միջից արջնաթույր և թուխ
Բացվում արշալույսն ինչպես հրաբուխ,
Կամ թե բոցավառ հըրդեհի նման,
95 Որ թանձր ծխից հայտնում է իրան։
Եվ առաջին շողն արևագալին
Երբոր ընկնում է լեռների ծայրին,
Կարմըրին տալով, ասես թե քըրքում,
Ժայռ ժանիքները վարդերանգ ներկում՝

100 Մեր հուժկու Սաքոն այս ժամանակին
Հենված հովվական երկայն մահակին,
Ծակված փափախը ականջին թեքած,
Թերմաշ յափընջին ուսովը ձրգած,
Ինչպես լեռների տեր ու թագավոր,–
105 Նոր օրը գալիս,–
Իրան թևավոր
Երաժիշտներով ողջույն է տալիս:

Սև-սև ամպեր են գալիս հավաքվում,
Մթնում է երկինքն ու փայլատակում,
110 Սառած-սասանած երկիրը վախից
Ուզում է կարծես փախչել յուր տեղից
Եվ թանձր անտառը, սաստիկ հողմակոծ,
Երբ ֆշշացնում է, ինչպես մի սև օձ,
Թեքվում, տնքում է ծառը հաստարմատ,
115 Ամբողջ ծրմակը հեծծում հուսահատ.
Ամպերը գոռում մըթնած երկնքից,
Գետինը դողում, շարժվում է հիմքից,
Ապա երկինքը պատռված կարծես,
Հեղեղ է թափում կըժով ջրի պես,
120 Հեղեղ, որ պետք է քո աչքով տեսնես,
Շիթերից բըռնես երկինքը հասնես,–
Սաքոն ոչխարը ծմակն է քաշում,
Մի տերևալի ծառի տակ մտնում
Եվ հետևում է հանդարտ հայացքով
125 Թխպոտ ամպերին, որ համր ընթացքով
Գնում են դես-դեն, սարերով անցնում,
Մութ ծոցի միջին լախտեր խաղացնում,
Հըրեղեն լախտեր, որոնց մի տուտը
Հասնում է ներքև – մինչև անդունդը,
130 Սատանաներին այնպես գոռացնում,
Որ ձայնը մարդու ականջն է հասնում:

VI

Արևը սարի ետևն է մտնում,
Ցերեկը հատնում.
Մթնաժոռում են ձորն ու անտառը,
135 Բայց դեռ չի մթնում երկնամերձ սարը.
Ոտները ներքև խավարում թաղված,
Գագաթն այրվում է լուսով շաղախված,
Մինչև հովիտից չար գողի նման
Գիշերվա ստվերը թաքուն բարձրանում,
140 Լույսի-ցերեկվան
Այն մնացորդն էլ հանկարծ կըլանում,
Եվ ինքը խոժոռ, մռայլ ու ահեղ
Բազմում է այնտեղ,
Լուսնյակի լուսով սարերի գըլխին
145 Քնում՝ փաթաթված յուր սև յափնջում,
Մինչև մոտակա գյուղիցը կըրկին
Աքաղաղները ծուղրուղու՛ կանչում,
Կամ թե արևի շողերն են ծագում –
Աչքերը ծակում,
150 Հալածում դեպի անհայտ աշխարքի,
Աշխարքի տակի
Ծածուկ այրերը,
Ուր որ ապրում են մութն ու գիշերը։

Իրիկունն եկավ, մըզդուրներն արդեն,
155 Հանդից հավաքվել, վառել են օդեն,
Շհուն ու պըկուն խառնել են իրար,
Խաղում են, ասում,– խնդում միալար։
Եվ ախորժաձայն սրինգն հովվական
Խոսում է կարծես,– մին հովվի նման
160 Ոչխարի շանն է ձայն տալիս, կանչում,
Մին էլ շան նման հաչում, կլանչում...

Լսել ես, երբ լուռ գիշերվա ժամին
Տերևներն զգույշ շարժում է քամին,
Եվ կա թե նեղլիկ լեռնային կիրճում
Ոնց է հուսահատ հողմը մռընչում։
Ակա՞նջ ես դրել, թե ոնց է երգում
Առվակի կարկաչն անտառի խորքում,
Լսե՞լ ես հեզիկ խոխոջն աղբյուրի,
Փափուկ մեղեդին լեռնային ջրի...
Ամենքից ջոկած, առած մի հնչյուն,
Հնչում է իգիթ Սաքոյի շըհուն,
Իսկ ընկերներից մեկը սրտալի
Երգում է, կանչում, ինչքան ձայն ունի։
Եվ մելամաղձոտ նրանց բայաթին
Գովեստ է տալիս վեհանձն իգիթին,
Կամ հայրենիքի հողին ու քարին,
Սիրավառ կանչում սևաչյա յարին...
Եվ ամեն մի ձայն այն երգում այնքան
Պարզ է և ուժգին, այնքա՜ն բնական,
Որ մարդ նույն ժամին թովված, սրտաթունդ,
Ելնում է – իջնում երկինք ու անդունդ։
Ապա խաղում են հերթով կենդապար,
Ետ-առաջ ոստնում, ցատկում անդադար,
Եվ հանկարծ կանգնում իրանց կոտրատում,
Ոտներով արագ գետնին վեր հատում։
Կոնաբռնուկ են անում իրար հետ,
Շրջան են կազմում, զուրի են տալիս,
Երկու ոտն առաջ, իսկ մեկ ոտը ետ
Գնում ու դառնում – պտույտ են գալիս։
Դեռ ըսկսում են կամաց – ծանրապար,
Իսկ հետո միջակ. աստիճանաբար
Արագացնում են, և պտույտ առած
Ամբողջ շրջանը գնում է թըռած։
Երբեմն ուռուցիկ կուրծքերն ուռցնում,
Աղաղակում են, սուլում, շվացնում,

Մեկ էլ միասին հանկարծ կորանում
Ու կրկին դքվում, կրկին տաքանում
Եվ ոգևորված գետինը դոփում.
Օճորքը դողում և հող է թափում։
200 Նստում են հետո գիտեցածներից,
Իրանց պապերից, ծիծաղ բաներից
Պատմում են երկար, երկա՛ր, մինչև ուշ
Գիշերվան կեսը և քընում անուշ։

VII

Դե՛հ բարի գիշեր, իմ քաջ իգիթներ,
205 Դուք պինդ քնեցեք մինչև լուսադեմ,
Իսկ ես իմ շհուն փչելու եմ դեռ,
Պետք է ձեր պատվին դեռ մի բան երգեմ.–

«Լոռու ձորը կոխեց մութը,
Անլույս մութը գիշերի,
210 Այնտեղ – մթնում ծեր Դեբեդը
Երգում է անցքն յուր ջըրի։

Պատմում է այն հին օրերից,
Երբ որ ծնունդ է առել՝
Ով է անցել յուր ձորերից,
215 Ինչ գործեր է կատարել։

Եվ երբեմըն հառաչելով
Նրանց հոգվոցն է ասում,
Որոնք խեղդվել յուր ջըրերով,
Հանգչում են յուր ավազում։

220 Պատմում է նա գիշերն ի բուն
Գըլխի անցքերն յուր հին-հին,
Թեև խորթ է նորա լեզուն
Օտարածին հյուրերին։

Այս իրիկուն նորա ափին
225 Թուրքի քոչ է վայր եկել,
Վայր է եկել և ահագին
Խարույկները բորբոքել։

Սակայն ինչո՞ւ մռայլած են
Թուխ դեմքերը թուրքերի,
230 Կամ թե ինչո՞ւ դեռ լռած են
Ձայներն անհոգ երգերի։

Շա՞տ է հոգնել ճանապարհից
Այն խուժանը անհանգիստ,
Վախենո՞ւմ է խորին ձորից,
235 Թե՞ գիշերը մութն է խիստ։

– Թուրքի համար ահավոր չեն
Ոչ մութ գիշեր և ոչ ձոր,
Բայց այս ձորը Լոռու ձորն է,
Լոռեցին է ահավոր։

240 Մեկ էլ տեսար մի թունդ որոտ
Անտառիցը այն մըթին,
Կըհանգցընի կրակի մոտ
Տխուր նստած իգիթին։

Կամ հանդուգն ջահելները
245 Վրա կըտան զինավառ,
Եվ կըքշեն անտառները
Թուրքի ջոկերն ու տավար։

Կամ ուր որ է մահակներով
Մի խուռն ամբոխ կերևա,
250 Եթե թուրքը դողությունով
Մի մեղք ունի իր վըրա։

Կամ ով գիտի չոբանները՝
Ահը հանած սըրտերից,
Ճանապարհին սյուրունները
255 Անց են կացրել արտերից...

Նրա համար մռայլած են
Թուխ դեմքերը թուրքերի,
Նրա համար և լռած են
Ձայներն անհոգ երգերի...»:

VIII

260 Սակայն ահագին ձորում այս գիշեր
Մենակ է Սաքոն և չունի ընկեր:
Բուխարու կողքին տխուր թեք ընկած
Մտածում է նա յուր տատի պատմած
Ձարքերի մասին, որոնք միասին,
265 Ծուռը ոտներով, գիշերվան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած
Հայտնվում են միշտ միայնակ մարդկանց...
Կամ ինչպես քաջքերն այրերի մթնից,
Երբ մարդ նայում է քարափի գլխից
270 Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով.
Եվ մարդկանց նման խնջույք են սարքում,
Ջուռնա են ածում, թմբուկ են զարկում...
Այսպիսի դեպքեր շատ են պատահել,
275 Նույնիսկ Սաքոյին քանի՛ն են պատմել...
Եվ հիշողությունն անցած օրերից,
Նորա մանկության երեկոներից,
Երբ նա քաջքերից վախենում էր դեռ,
Ետ բերեց վաղուց մոռացած ձայներ.
280 Ձայնե՛ր ահալի, տխուր պատմության
Ձար ոգիների արած չարության:

Տատի խոսքերը նորա ականջին
Ուրվաձայն, երկչոտ հնչեցին կրկին.–

«Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, մենք ուրախ պար ենք գալի –
Սիրուն, ջահել հարսն-աղջիկ։

Ինձ մոտ արի, ձվածեղ անեմ,
Ինձ մոտ արի բլիթ տամ.
Ես քո հոքիրն... ես քո նանն եմ...
Ես էլ ազիզ բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Էս աղջիկը տե՛ս ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
Տարա՛ նի նա՛, տարա նանա՛...»։

Եվ խոլ պատկերներ, տգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց
Երևութք եղան – անցանում են կամաց...
Անցնում են դանդաղ ստվերների պես,
Չար ժպիտներով, ժանտ ու սևերես...
Աչքերը անթարթ կըրակին հառած
Ծանըր է շնչում Սաքոն ահառած,
Եվ առողջ կուրծքը լեռնական մարդու
Ալեկոծում է կասկած ահարկու։

IX

Սրընթաց պախրա, թե գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Թե այծյամն հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գլորեց ոտով.
Թե հողմահարված տերևն էր դողում,
Թե երկչոտ մուկը վազեց պուճախում,
Թե ոչխարների թույլ մնչոցն էր այն,–
Սաքոյին թվաց, թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի կողքին:

X

«Ո՞վ է հող թափում էս բուխուրակից...
Ո՞վ է երդկովը մրտիկ տալիս ինձ...
Ընչի՞ համար է այնպես ծիծաղում.
Ո՞նց են պըլըզած աչքերը փայլում...
Ի՞նչ ոտնաձայն էր, որ անցավ կտրից...
Ո՞վ է շունչ քաշում դըռան ետևից...
Ո՞վ պետք է լինի. ինչո՞ւ չի խոսում...
Էս կես գիշերին ի՞նչ բան է ուզում...
Էս ինչպե՞ս եղավ – ազազիլ Զորին
Չըպատըռտորեց անժամ եկվորին...
Էս ի՞նչպես եկավ... չէ՛, սա ով որ է,
Ծանոթ օքմին է, շունը սովոր է:
Իմ շան ահիցը էլ ո՞վ սիրտ կանի...
Իմացա՛, ընկերըս – Գեվոն կըլինի...
Սուտ վախեցնում է... հա՛, նա է, նա...
Գևո՛ ո՛...
Զայն, ծըպտուն չըկա.
Մենակ ահավոր, լռության միջում
Զորագետն է խուլ մրափած վշշում:
Եվ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին.
Աշխարհը քնած է – քնած է քամին,

Անքուն չարքերը չեն միմիայն քնած,
Ուրախ վխտում են ձորերը բռնած...
Եվ վազվզում են ստվերների պես,
Եվ վրսվսում են տերևների պես...
340 Մինչև որ մենակ մի մարդ կըգտնեն,
Որ նորա սիրտը... փարախը մտնեն...
Աչքերը հանգչող կըրակին հառած,
Ծանըր է շնչում հովիվն ահառած,
Եվ առողջ կուրծքը լեռնական մարդու
345 Ալեկոծում է կասկած ահարկու.–
«Չէ՛, քամին էր էն... էն գայլի շվաք...
Էն աստղեր էին աչքերի տեղակ,
Որ լուսածակից ներս էին ընկել...»:
Բայց վախենում է նայել, ստուգել.
350 Սակայն ականջը ձայներ է լսում.
Կըտրով գալիս են, դուրսը փսփսում...
Վախեցած Սաքոն գլուխը մի քիչ
Տեղիցը շարժեց,– աղաղակ, քըրքիջ,
Եվ դժոխալուր ձայներ բյուրավոր
355 Բռնել էին դուռն ու կտուրը բոլոր...
Սիրտը թունդ առավ, և փշաքաղած
Մի սարսուռ զգաց:
Դեպի դռնակը մթնած աչքերով
Հուսահատ նայեց, մտքումը զորով
360 «Նրանք են» ասաց, և դուռը բացվեց,
Թուրքի կանանցով փարախը լցվեց.
Փարախը լցվեց թուրքի կանանցով,
Ճիչ-հըրհռոցով, հարայ-հրոցով...

Ինչպես գիշերը երկնում սևակնած
365 Փայլատակում է կայծակը հանկարծ,
Այնպես մի կըրակ աչքերըն առավ
Եվ իգիթ Սաքոն փարախից թռավ:

Այն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերն ամեհի նոթերը կիտած,
Դեմուդեմ կանգնած, համառ և անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ։
Սև ծովի նման մըլարը կանգնած
Գրկում է նրանց կուրծքը կախընկած,
Որ կարծես ահա, հենց այս վայրկենին
Վայր կընկնեն անահ անցվորի գլխին։
Ահռելի ձոր է. այնտեղ Դեբեդը
Փըրփրած վազում է։ Սրընթաց գետը
Գոռում է, ինչպես վիրավոր գազան,
Եվ աղաղակին այն երկրասասան
Խոր, լայնաբերան քարանձավները
Կցում են իրանց քաջքի ձայները,
Կազմում վայրենի ներդաշնակություն.
Սարսափ է ազդում անսովոր մարդուն։
Գիշերը լուսնի երկչոտ շողերը
Երբոր մտնում են այն ահեղ ձորը
Եվ ալքերի հետ խաղում դողալով,
Իսկ ալիքները խիտ-խիտ շողալով
Հուզվում են, իրար ետևից փախչում,
Դեբեդը խավար անդունդի խորքում,
Մի արծաթափայլ նեղ շերտի նման
Պտույտներ առած ձգվում է երկայն։
Այս տախտի վրա, այն ժայռի գլխին
Կանգնած է մենակ, խավար ու լրռին
Մի քանդված հին բերդ, մի ավերակ վանք,
Մռայլ ու տխուր ինչպես զարհուրանք,
Իսկ քարի գլխից լուռ մարդու նման
Նայում է ձորին մի հին խաչարձան։

XII

Այն ձորում ահա, այն խավար ձորում
Այս կես գիշերին նա է թափառում,
Ահա նա ընկած քար ու թփերով,
Վազում է գետի ժեռուտ ափերով։
Երկայն խանչալի դաստակը կողքին
Ջարկում է գոտու երկաթյա թողկին,
Ջըրխկշրխկում է, կարծես յուր զարկով
Համրում է նրա քայլերը կարգով։
Հնչում է զուռնան մութ քարանձավից,
Ջարքերը վազում նրա ետևից,
Դեբեդն էլ անդուլ գոռում է, թե՝ «հա՛,
Այստեղ է Սաքոն, այստեղ է, ահա՛...»։
Եվ դուրս են թռչում հորդ ալիքներից
Հերարձակ ալքերն իրար ետևից,
Վազում են բռնեն իգիթ Սաքոյին,
Որ տանեն գետի հատակը խորին.
Բայց նա փախչում է,
Փախած կանչում է
Յուր հավատարիմ միակ ընկերին,–
«Եկա՛ն, եկա՛ն, Ջորի, հե՛յ,
Բռնի՛, Ջորի, արի, հե՛յ...»։
Ու բոբիկ թռչում քամուց էլ արագ,
Քար ու մացառուտ առած ոտնատակ։
Սակայն առաջին ցոլացին աչքեր,
Թփից դուրս թռան մի քանի քաջքեր.
Մի ակնթարթում նա իրան թափը
Կոտրեց և իսկույն թողեց գետափը...
Արձագանք տվեց ձորն այդ միջոցին
Նրա ազազիլ գամփռի հաչոցին.
Փարախն էլ գուցե մի գայլ է մտել,
Աղքատի հոտը կերել, խեղդոտել...
Խելագուրկ Սաքոն ոչինչ չի հիշում,

430 Քշում են նրան չարերը, քըշում,
Քաջքերն էլ այրից զուռնա-դհոլով
Խաբում-կանչում են ծանոթ ձայներով.–

«Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք.
435 Տե՛ս, մենք ուրախ պար ենք գալի,
Սիրուն, ջահել հարսն-աղջիկ:

Ինձ մոտ արի – ձվածեղ անեմ,
Ինձ մոտ արի – քեզ բան տամ.
Ես քո հոքիրն... ես քո նանն եմ...
440 Ես էլ սրտի բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի –
Էս աղջիկը տե՛ս ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
Տարա նի նա՛, տարա նանա՛...»:

445 Իսկ Զորագետից ալքեր են թռչում...
Եվ ալիքները փրփրադեզ ուռչում,
Մռայլի միջին ծփում են կայտառ,–
«Բռնեցե՛ք, փախավ Սաքոն խելագար...»:

XIII

Այնինչ այդ ժամին
450 Սաքոյի նանը – պառավ Նազանին
Հանգչող բուխարու դիմացը նստած,
Փոքրիկ թոռներին շուրջը հավաքած
Պատմում էր նրանց խավար աշխարհից,
Հարս-մարդագելից, դևերից, չարից,
455 Սև սատանայից, քաջքից ու ալքից,
Որ մարդու խաբում, հանում են խելքից,

Տանից թռցընում, գցում քարեքար,
Քշում են, քշում, տանջում անդադար,
Սիրտը այրում են անշեջ կրրակով,
Մեջքը վառում են օձի մտրակով,
Ձորերը գցում.
Մեծում, հալածում...

XIV

Եվ առավոտը – վաղ լուսադեմին,
Երբ լույսն ու մութը դեռ կռվում էին,
Չէին բաժանվել սակայն իրարից,
Խելագար Սաքոն դուրս եկավ ձորից,
Իրանց տան դուռը բաց արեց թափով,
Ներս ընկավ հանկարծ, գոռաց սարսափով –
«Վա՜յ, եկան, մեջքը՛ս, ձեզ մատաղ, եկա՛ն...»:
Եվ իսկույն օձի շանթածի նման
Դուրս փախավ կրկին:
Հայր, մայր, տատ, եղբայր, երեխա ու կին
Դուրս ընկան նորա ետևից լալով.
Բայց նա փախչում էր աղաղակելով.
«Ձորի, հե՛յ,
Արի՛, հե՛յ...»:

Հեղինակի ծանոթագրությունները
(1896 թ. առանձին հրատ.)

5 *Շնալիր – այն ալյուրն է, որ շների համար լափ են պատրաստում:*
10 *Համկալ – գութանի, սարի կամ կալի ընկեր:*
73 *Փուփ – երեխայի կերակուր, ավելի կաթ, մածոն և այլն. այստեղ կթի անասուն կնշանակի:*
154 *Մզդուր – հովիվ, տավարած, խոզարած և այլն:*
187 *Ջոփի – յալլի, շուրջպարի, գյովընդա:*
381 *Քաջքի ձայն – արձագանք:*
386 *Ալք – ջրում բնակվող ոգի, հավերժահարս:*
392 *Տախտ – ձորի զառիվայրում տափարակ տեղ, տերրաս:*
403 *Թողկա – մետաղյա բան է, գործ է ածվում թե գոտու ծայրերն ամրացնելու համար և թե իբրև զարդ, որ անց են կացնում գոտին:*

ՊՈԵՄԻ 1896 Թ. ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ (ԳԱԹ, Թֆ №3821(1350)

5-8 տողերը առնված են ուղիղ փակագծերի մեջ:

10-11 տողերը ջնջված են:

12	Ու Սաքոն անքուն,
20	Ոնց է մեկնըվել, ասես ահագին
22-24	Իսկ եթե տեղից վեր կացավ հանկարծ, Գըլուխը մեխած մահակը [առավ] ուսեց, Ձալում շըներին ձայն տվավ, կանչեց
26	Այնժամ կիմանաս, թե ինչու համար,

28 և 29 տողերը համարակալումով տեղափոխել է:

30-99 տողերը ջնջված են:

52	Ո՞վ ես, անվախ անցվորական,
54	Այդպես անդենք, անհրացան
83	Մեր Սաքոն ոչխարն արոտ է տանում

84-89 տողերը, կրկնակի ջնջումից բացի, ձախ կողմից առնված են ուղիղ փակագծերի մեջ:

90-95 և 96-98 տողերի դիմաց համապատասխանաբար գրված է 2 և 1, հավանաբար տեղափոխության նպատակով

90-91 կրկնակի ջնջված տողերի դիմաց գրված է՝

Նայում է,
Տեսնում է – սարի ուսից:

96 տողի դիմաց գրված է՝ *[դեռ նոր]։*

97 *[Երբոր արևը ընկնում է լեռների ծայրին]*

97-99 տողերի փոխարեն՝

ա *Դեռ նոր արևի շողերն առաջին*
Ընկնում են [հուժկու լեռների] լանջին

բ *[Հենցոր] Ու երբ արևի շողերն առաջին*
[Քրքում են թափում] լեռների լանջին,

գ *Դեռ նոր Աստծո լուսը փարատած*

100 *Մեր հուժկու Սաքոն [վաղուց]*

105-107 տողերը ջնջված են։

108-109 տողերը տեղափոխված են։

108 ա *[կամ] սև ամպեր են գալիս հավաքվում,*

բ *Իսկ սև ամպեր են գալիս հավաքվում,*

109-115 տողերը ջնջված են։

116 *Ամպերը [գոռում մրթնած երկնքից],*

117 տողը ջնջված է։

116-117 տողերի փոխարեն՝ *Մութ ծոցի միջին լախտեր խաղացնում*

118 տողի փոխարեն՝

Ու երբ երկինքը պատռված ասես,
Սառած սասանած երկիրը վախից
Ուզում է ասես փախչել իր տեղից

122 տողի դիմաց ավելացված է՝

[Ու անտառն... հողմակոծ
Ցշշում է... ինչպես մի սև օձ]

122-126 տողերի փոխարեն՝ *Սաքոն ոչխարը քաշում է ծրմակ,*
Հանգիստ նստում է մի [ծեր] ժայռի տակ
Ու փառավորվում է նրա հոգին,
Խուռն բնության [ըմբոստ] գիժ
արհավիրքին։

		Ու իրեն նման իրեն ընկերներ,
		Ապրում են սիրով մանկուց ի վեր:
123-126 տողերը ջնջված են:		
132-153 տողերը ջնջված են:		
154		Իրիկունն եկավ, գալիս են հանդեն
155	ա	[Ընկեր տղերքը] վառում են օդեն
	բ	Փետ են հավաքում, վառում են օդեն
156		Շհուն ու պըկուն խառնում են իրար,
157	ա	[Շհուն են ածում],– խնդում միալար:
	բ	Խաղում ու կանչում,– խնդում միալար:
158		Ու լեղու առած [շհուն] չոբանի նման
163		Տերևներն զգույշ սոսում է քամին,
169		Աշխույժ մեղեդին լեռնային ջրի...
172-175		Այնինչ մի ձենով իգիթ սրտալի
		[Երգում է] կանչում է [ինչքան ձայն ունի]:
		Եվ [մելամաղձոտ] տխուր բայաթին
		[Կանչում է] – գովում [վեհանձն] իգիթին,
176-177		Սիրավառ կանչում սևաչյա յարին,
		Մեռնում [սիրած] վաթանի հողին ու քարին...
178-181 տողերի փոխարեն՝		
	ա	[Մերթ բարձրը թնդում սեպ սարերն ի վեր,
		Մերթ իջնում-կորչում անդունդն <...>]
	բ	Մերթ սարերն ի վեր թռչում ու թընդում,
		Մերթ իջնում [կորչում], մարում [անտակ] սրտի [կորչում] անդընդում:
182		Խաղում են ապա հերթով կենդապար.
183-185 տողերը ջնջված են:		
187-189		Շրջան են կազմում զուգի են տալի
		Երկու ոտն առաջ, մի ոտը դեպ ետ

		Տանում-տատանում – պտույտ են գալի
190-191 տողերի փոխարեն՝		
		Կամա՛ց-ծանրապար, աստիճանաբար
192-193		Ու պտույտ առած արագացընում
		Փոթորկի նման գնում են թրռած:
195	ա	Կանչում են, ճըչում, սուլում, շվացնում,
	բ	Ճըչում են, կանչում, սուլում, շվացնում,
196		Մին էլ միասին հանկարծ կորանում
198-199		Թափով գետինը դոփում.
		Օճորքը դողում ու հող է թափում:
200-259 տողերը ջնջված են:		

260 տողից առաջ (գլուխ VIII) ավելացրել է՝ «Այն Լոռու ձորն է, ուր հան<դիպակաց>»: Ըստ երևույթին, մտադիր է եղել այս գլուխն սկսել այդ տողով (այդպես է սկսվում նաև առաջին տարբերակի VIII գլուխը):

260	ա	Լոռու էն ահեղ ձորում այս գիշեր
	բ	Էն Լոռու ահեղ ձորում այս գիշեր
261		Մենակ է Սաքոն ու չունի ընկեր:
267		Հայտնվում են միշտ մենակ տըղերանց...
269		Երբ նայում է մարդ քարափի գլխից
272		Ու մարդկանց նման խնջույք են սարքում,
275-277		Քանի՛սն են տեսել, քանիսն են պատմել,
		Ու վաղուց-վաղուց անցած օրերից,
		[Նորա] մանկության երեկոներից,
279		Ետ եկան վաղուց մոռացված ձայներ.
280-281 տողերը ջնջված են:		
282		[Ետ եկան նորից] ու ականջին
296		Ու խոլ պատկերներ, տգեղ, այլանդակ,
300		Դանդաղ, խոժոռ ըստվերների պես,
310		Թե թեթև հողմից տերևն էր դողում,
314 տողից հետո՝		Կանգնեց ու լռեց: Լսեցիր <1 անընթ.>
315		Ո՞վ հող թափեց բուխուրակից...
316		Ո՞վ է նայում լիսածակից...
317		Ինչ է այնպես չար ծիծաղում.

318 տողը ջնջված է։

319 Ո՞վ էր կտրից անցավ թեթև

320 Շունչ է քաշում դրռան ետև...

321-323 տողերի փոխարեն՝ Ո՞վ ես, էհե՛յ... ի՞նչ ես անում,
Ինչ ես լըռել, ձեն չես հանում,
Ո՞վ էր... Ինչպես Զորին

324-329 Զըպատըռուտեց [անժամ եկվորին]
Ի՞նչպես եկավ... չէ՛, ով որ է,
Ծանոթ մարդ է, շունը սովոր է։
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...
Հա, իմացա՛,- Գևոն կըլնի
Վախեցնում է... հա՛, հա՛, հա՛, հա՛.

331 Ձայն [ծպըտուն] չըկա.

335-339 Քնած է աշխարհք - քնած է քամին,
Վխտում են ուրախ ձորերը բռնած...
Վազում-վազվզում ստվերների պես,
? [Եվ] վըսվսում են [տերևների պես]...

341 Որ նորա [սիրտը]... յաթաղը մտնեն։

345 Մռայլ կասկածն ահարկու.-

347-348 [Որ լիսածակից ներս էին ընկել...»
Վախենում է վերև նայել, ստուգել].

349 ա [Սակայն ականջը] ձայներ է լսում.
բ [Ականջը որոշ] ձայներ է լսում.

351 Ու նա վախեցած գլուխը մի քիչ

352-354 տողերի փոխարեն՝

Էստեղ է նա,
Հա՛, հա՛, հա՛, հա՛...
Տե՛ս, տե՛ս, տե՛ս, տե՛ս
[Դռան ծակից]
Նայիր էսպես
Մըտիկ արա.-
Հա՛, հա՛, հա՛, հա՛

355 Սաքոն շարժվեց փըշաքաղած,

356	ա	Նայեց շեմքին... սարսռաց, դողաց.
	բ	Նայեց շեմքին... [տեսավ]... դողաց.
358-359 տողերը ջնջված են:		
360		Շըրըխկ. հանկարծ դուռը բացվեց,
381	ա	Թուրք կանանցով տունը լցվեց.
	բ	Ու կանանցով ներսը լցվեց.
362-363		Տունը լցվեց թուրք կանանցով,
		Ճիչ-գոռոցով, հըրհրոցով...
364-397 տողերը ջնջված են:		
370-371		Անվերջ դարերով համառ ու անթարթ
		Իրար երեսի նայում են հանդարտ:
372 տողից առաջ, վերին լուսանցքում՝		
		[Ու պատմում անցած դարերի]
		Ու խոր այրերի սև խոռոչները, [Մերուկ]
		ինչպես անատամ [ծերի]
		քավթառ բերաններ,
		Հավիտյան բացված պատմում են
		գաղտնի լեզվով,
		Թե ինչ են տեսել դարերից ի վեր,
374		Որ ասես ահա, հենց այս վայրկենին
377		Փրփրած [վազում է]: Սրընթաց գետը
398-432 տողերը ջնջված են:		
398 տողի վերևում գրված է.		
		Վազում է Սաքոն քամուց էլ արագ
406-407		[Հնչում է զուռնան մըթին անձավից],
		Ձարքերը վազում, վազում ետևից,
410		Ու դուրս են թռչում հորդ ալիքներից

1896 Թ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ԱՅԼ ՕՐԻՆԱԿԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ (ԳԱԹ, ԹՖ №3821(1350)

23-24	Գըլուխը մեխած մահակը առավ,
	[Եթե] շըներին ձայն տվավ, կանչեց

26 *Այնժամ կիմանաս, թե ինչու համար*
28 *[Լոկ] դատարկ վախից*
38-47 տողերը ջնջված են:
81 *Եվ սարի ուսից դեռ կամաց-կամաց*
84 *[Շըքեղադալար] լեռների օդը*
86 *Դրախտի անուշ կնդրուկի նման,*
91 *Թե արևելքում [ինչպես] է շքով,*
93 *Բացվում արշալույսն ասես հրաբուխ,*
97 *Ընկնում է երբոր լեռների ծայրին,*
172-176 *Իսկ ընկերներից [մեկը] սրտալի*
Երգում է, կանչում, [ինչքան ձայն ունի]:
Եվ [մելամաղձոտ] նրանց բայաթին
[Գովեստ է տալիս] վեհանձն իգիթին,
Կամ վաթանի հողին ու քարին,
178-181 տողերը ջնջված են:
180 *Որ մարդ լսելիս թովված, սրտաթունդ,*
182 *Խաղում են ապա հերթով կենդապար,*
183-185 ջնջված տողերի փոխարեն՝
Վեր կանգնած հովիվն գոռոզաբար,–
Արծիվն է ասես օդում կանգնած
Թևերը տարած<ած> խաղաղ ու հպարտ
Թևին են անում հանդարտ
189 *Տանում, տատանում – պտույտ են գալիս:*
190 *Դեռ ըսկսում են կամաց-ծանրապար,*
IX և X գլուխների համարակալումները ջնջված են և փոխարենը գրված է «Բ»:
311 *Թե երկչոտ մուկը վազեց անկյունում,*
314 *Եկավ ու կանգնեց փարախի վրա:*
314 տողից հետո ավելացված է՝
Կանգնեց ու լռեց...
Ականջ դըրավ նա...

Ա ինքնագիր (ԳԱԹ Թֆ №143(2)

1889

ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

1

Խոր ձորի միջին ահա մի տընակ:
Այնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ:
Զոբան է Սաքոն, ունի մի ընկեր,
Նա էլ այս գիշեր
5 Հացը պակասեց, [շընալիր չըկար],
Աղ էր հարկավոր ոչխարի համար,
Ուզեց զոքանչի ձվածեղ ուտել,
Թե նշանածին շատ էր կարոտել –
Գնացել է տուն:
10 Ու Սաքոն անքուն,
[Թաց] տըրեխները հանել է, քերել,
Բուխարու քարից գուլպան կախ արել,
Ու թինկը տըվել,
Մեն-մենակ թըթվել:

2

15 Թեկուզ և մենակ լինի յաթաղում,
Աժդահա Սաքոն ընչից է վախում:
Հապա մի նայիր ներա հասակին –
Ո՞նց է մեկնըվել. ասես ահագին
Կաղնըքի լինի անտառում ընկած:

---

12 Գուլպան բուխարու վրա կախ արել,

15 «յաթաղ» բառի դիմաց լուսանցքում գրված է. «փարախ»:

20 Իսկ եթե տեղից վեր կացավ հանկարծ,
Գլուխը մեխած մահակը ձեռին
Ձեն արավ, կանչեց զալում շըներին
Ու բիրտ վայրենի կանգնեց, ինչպես սար,
Այնժամ կիմանաս, թե ընչի համար
25 Թե գող, թե գազան, հենց դատարկ վախից
Հեռու են փախչում նըրա յաթաղից:

3

Դեռ նոր փարատված խավարն Ադամա,
Մի սարի լանջի, մի ժայռի վըրա,
Էն անտաշ ժայռի կըտորի նըման
30 Կանգնած է արդեն մեր ջահել հըսկան:
Հենված հովվական երկայն մահակին,
Շները պատրաստ իր ոտի տակին,
Ծակված փափախը ականջին թեքած,
Թերմաշ յափընջին ուսովը ձըգած,
35 Ինչպես լեռների տեր ու թագավոր,
Աչքերն ածում է, հսկում սար ու ձոր,
Մինչդեռ մընչալով կանանչ արոտում
Սիրած գառները իր շուրջն են պատում:
Ու իրեն նըման իրեն ընկերներ,
40 Ապրում են սիրով երեխուց ի վեր:

4

Աստծու գիշերը գալիս են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են օդեն,

---

21 Գլուխը մեխած մահակը ուսից
24 Այնժամ կիմանաս, թե ինչու համար
29 Էն կապույտ ժայռի կըտորի նըման
33 Թերմաշ յափընջին ուսովը նետած,
41 Մըթան հետ <.....> գալիս են հանդեն,

Շհուն ու պրկուն խառնում են իրար,
Ածում են, խաղում, խընդում միալար
45 Ու լեզու առած չոբանի շընհուն
Խոսում է խաղաղ գիշերվա պահուն:
Ազազիլ գամփռին ձայն տալի, կանչում
Մին էլ շան նըման հաչում, կըլանչում:
Լըսել ես, երբ լուռ գիշերվա ժամին
50 Տերևներն ըզգույշ սոսում է քամին
Կամ նեղ ու անձուկ լեռների կիրճում
Հողմը հուսահատ ոնց է մրընչում:
Ակա՞նջ ես դըրել, թե ոնց է երգում
Առվակի կարկաչն անտառի խորքում,
55 Լըսել ես [հեզիկ] մըրմունջն աղբյուրի,
Աշխույժ մեղեդին վըճիտ ջըրերի...
Ամենքից առած իր շունչն ու հնչյուն
Հնչում է [իգիթ] չոբանի շընհուն,
Այնինչ մի ձենով դարդաշատ ընկեր
60 Դարդի բայաթին թնդացնում է վեր:
Ու մելամաղձոտ [նըրա] բայաթին

---

44 Խաղում են խընդում, ածում միալար
45 ա Ու լեզու առած Սաքոյի շընհուն
բ Ու լեզու առած քթթկենի շընհուն
47-48 Ոչխարի շանն է ձայն տալի, կանչում,
Կամ թե շան նըման հաչում, կըլանչում:

49-58 տողերը աջ կողմից առնված են փակագծերի մեջ:

51-52 Կամ նեղ ու անձուկ լեռնային կիրճում
Ոնց է հուսահատ հողմը մրընչում:
54 Առվակի խոխոջն անտառի խորքում,
56-58 Աշխույժ մեղեդին հըստակ ջըրերի...
Նրանցից առած իր շունչն ու հնչյուն
Հնչում է չոբան Սաքոյի շընհուն,
60 Տխուր բայաթին թնդացնում է վեր:
62 Երգում է գովում անահ իգիթին.

[Երգում է] գովում անվախ իգիթին,
Սիրավառ կանչում սևաչյա յարին,
Մեռնում վաթանի հողին ու քարին,
65 Մերթ սարերն ի վեր թըռչում ու թնդում,
Մերթ իջնում, մարում սըրտի անդընդում.
Շրհուն փոխում է պարի եղանակ,
Ու խաղս են լինում որդիքը սարի:
Ծափն է օդում որոտում,
70 Կանգնում է մինը, խաղում կենտապար
Հաղթ բազուկները տարածած երկար,
Շուրջը վայրենի հայացքներ նետում,
Արծիվն է ասես, որ կանգնած օդում,
Ճեմում է անփույթ, հըզոր ու հըպարտ,
75 Թևերը շարժում, անվրդով, հանդարտ,
Ու մին էլ հանկարծ զարկում ու թռչում,
Խոյանում, սուզվում ամպերի միջում:
Կըռնաբըռնուկ են անում իրար հետ,
Շըրջան են կազմում, զուգի են տալի,
80 Երկու ոտն առաջ, ու մի ոտը ետ –
Տանում-տատանում, պըտույտ են գալի –
Կամաց – ծանրապար,
Աստիճանաբար
Արագացնում են, ու շըրջան առած
85 Փոթորկի նըման գընում են թըռած:
Երբեմն ուռուցիկ լանջերն ուռցընում,
Ճըչում են – կանչում, սուլում, շըվացնում,

---

67 ա Շրհուն փոխում է իրեն եղանակ
բ Փոխում է հանկարծ շհուն իր զայդեն
գ Լռում է դարդի տըխուր բայաթին
68 Ու խաղս են լինում տղերքը...
71 Հաստ բազուկները տարածում երկար,
80 Երկու ոտն առաջ, իսկ մի ոտը ետ –
86 Երբեմն ուռուցիկ կուրծքերն ուռցընում,

Մին էլ միասին հանկարծ կորանում,
Ու կըրկին դըքվում, կըրկին տաքանում,
90 Մոլեգնոտ թափով գետինը դոփում,
Օճորքը դողում ու հող է թափում:

5

Այն Լոռու ձորն է – ուր որ ամեհի
Ժայռերն անդունդից վերև բարձրացած
Ասես անճոռնի հըսկաներ հին-հին,
95 [Ծաթերա քարի էն հարսի նըման],
Քարեր են կըտրել զըրույցի ժամին
Դեմուդեմ կանգնած անվերջ դարերով
Նայում են իրար հին մարդկանց սիրով,
Խորունկ այրերի խորշերը խավար
100 Իրենց անատամ քյավթառ բերաններ,
Հավիտյան բացած պատմում են անլուռ,
Թե ինչ են տեսել դարերից ի վեր:
Թե ինչպես եկան սրով, կրակով հոռոմն ու պարսիկ,
Թաթարն ու տաճիկ անցան գնացին արյունոտ
փառքով:

93-94 Ժայռերն ելած անդունդից <.....>
96 Ինչպես անճոռնի հըսկաներ հին-հին,
97 ա Ժայռեր են կտրել զըրույցի ժամին.
բ Ու անշարժ կանգնած իրար հանդիման,
գ Ու անշարժ կանգնած անվերջ դարերով
98 ա Անփոփոխ, անվերջ քարացած սիրով
բ Նայում են իրար կույր հայացքներով,
Նայում են իրար անվերջ դարերով,
99-102 տողերը երկու կողմից առնված են փակագծերի մեջ:

99 ա Ու խոր այրերի սև խոռոչները
բ Խորունկ այրերի խոռոչները մութ
100 Նրանց անատամ քյավթառ բերաններ,
101 ա Հավիտյան բացած պատմում են գաղտնի
բ Հավիտյան բացած պատմելու համար
104 Թաթարն ու տաճիկ ու անցան իրենց արյունոտ փառքով:

105 Իր հին ափերը միտքը բերելով
Ափսոսում կարծես օրերն անցյալի
Ու գոռում գիժ-գիժ
– Վա՜շ-վի՜շշ... վա՜շ-վի՜շշ...
Ու նրանց ոտքում տուտն ոլորելով
110 Սուրում է փրփրուն Դև-Բեդը* մոլի,
<.....> հազար այրերից, ծերպերից
<.....> քաջքերը հրտպիտ ձայներով
Ծաղրում ծերուկի գոռոցն ահռելի
<.....> հառաչքին արձագանք տալի
115 Ու խընդում գիժ-գիժ,
Վա՜շ-վի՜շ, վա՜շ-վի՜շ...
[Ու նա, մոլեգնած դիվական հուրքից,
Փընչացնում է խոր անդունդի խորքից,
Փրփուր է ցայտում անզուսպ երախով,
120 Խելագար ոստնում քարերի գըլխով,
Ու ոռնում գիժ-գիժ
Վա՜շ-վի՜շ, վա՜շ-վի՜շ...
Ճընշում վայրենի զայրույթն ահագին
Անհաշտ քրթմնջում ծառերի տակին:
125 Իսկ լուսնի շողերն երբ ձորն են մըտնում,
Դողալով խաղում ջըրերի վըրա,
Դյութական փայլով գիշերվա մըթնում

---

*Դեբեդ գետն է, որ առասպելի մեջ Դև-Բեդ է հիշվում:

106-107 Ափսոսում էն լավ օրերն անցյալի
Ու թնդում գիժ-գիժ
109 ա Նրանց արանքում <.....>
բ Ու նրանց ոտքում պոչն ոլորելով
110 Սուրում է գոռում Դև-Բեդը մոլի
113 Ծաղրում են նըրա գոռոցն ահռելի,
118-119 Փընչացնում է մութ անդունդի խորքից,
Փրփուր է թըքում անզուսպ երախով,
123 Ջսպում վայրենի զայրույթն ահագին
124 Անհաշտ թոնթորում ծառերի տակին:

Փայլակին տալով ոլորվում է նա]:
Ահռելի ձոր է: Ամեն բան այնտեղ
130 Եվ կենդանի է, և մութն ու ահեղ:
Այս տախտի վրա լռած է մի վանք.
Այն ժայռի գլխին հսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կլռինչն է տարածվում մերթ-մերթ,
135 Իսկ քարի գլխից լուռ մարդու նման
Նայում է ձորին մի հին խաչարձան:

6

Լռում էն ահեղ ձորում այս գիշեր
Մենակ է Սաքոն ու չունի ընկեր:
Բուխարու կողքին տխուր թեք ընկած,
140 Մտածում է նա իր տատի պատմած
Ձարքերի վրա, որոնք միասին,
Ծուռը ոտներով, գիշերվա կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած
Երևում են միշտ միայնակ մարդկանց...
145 Կամ ինչպես քաջքերն այրերի մրթնից,
Երբ նայում է մարդ քարափի գլխից
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են – կանչում ծանոթ ձայներով,
Ու մարդկանց նման խընջույք են սարքում,
150 Ձուռնա են ածում, թըմբուկ են զարկում...
Այսպիսի դեպքեր շատ են պատահել.
Քանի՞սն են տեսել, քանի՞սն են պատմել...

---

128 Փայլակին տալով շողշողում է նա:
131-133 Այս տախտի վրա հսկում է մի վանք,
Այն ժայռի գլխին կանգնած է մի բերդ,
Լուռ աշտարակից, ինչպես զարհուրանք,

Եվ ահա վաղուց անցած օրերից.
<.....> մանկության երեկոներից,
155 Երբ նա քաջքերից վախենում էր դեռ,
Ետ եկան վաղուց մոռացված ձայներ,
Տատի խոսքերը անցյալի խորից
Ուրվաձայն, երկչոտ հընչեցին նորից.
– Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի,
160 Արի մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
Սիրուն, ջահել հարսն-աղջիկ:
– Ինձ մոտ արի – ձվածեղ անեմ,
Ինձ մոտ արի – բըլիթ տամ,
165 Ես քո հոքիրն... ես քո նանն եմ..
Ես էլ ազիզ բարեկամ...
– Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Էս աղջիկը տե՛ս – ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
170 Տարա նի նա՛... տարա նա նա՛...

Ու խոլ պատկերներ, տըգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խառներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց
Երևութք եղան, անցնում են կամաց,
175 Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Չար ժըպիտներով, ժանտ ու սևերես...
Աչքերը անթարթ կըրակին հառած,
Ծանըր է շընչում Սաքոն ահառած,
Եվ առողջ կուրծքը լեռնական մարդու
180 Ալեկոծում է կասկածն ահարկու:

---

157 ա Տատի խոսքերը անցյալի խավարից
բ Տատի խոսքերը հեռու խավարից
166 Ես էլ թաքուն բարեկամ...
175 Լուռ ու դանդաղ, ըստվերների պես,
180 Ալեկոծում է սարսափն ահարկու:

7

Սրընթաց պախրա թե գայլ գիշատիչ
Շեշտակի թըռավ փարախի մոտով,
Թե այծյամն հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գըլորեց ոտով,
185 Գիշերվան հովից տերևն էր դողում,
Երկչոտ մուկիկը վազեց պուճախում,
Թե ոչխարների թույլ մընչոցն էր այն,
Սաքոյին թըվաց, թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վըրա,
190 Կանգնեց ու լըռեց...
Ականջ դըրավ նա...

8

– Ո՞վ հող թափեց բուխուրակից...
Էն ո՞վ նայեց լիսածակից...
Էս ո՞վ կըտրից անցավ թեթև...
195 Շունչ է քաշում դըռան ետև...
– Ո՞վ ես, էհե՛յ... ինչ ես անում...
Ինչ ես լըռել, ձեն չես հանում...
[Կանչում է Սաքոն իր փոխված ձայնով],
Պատասխան չըկա. լըռության միջում
200 Զորագետն է խոլ մըրափած վըշշում,
Աչքերը անթարթ կրակին հառած
Ծանըր է շնչում Սաքոն ահառած

---

185 ա Թե թեթև հողմից տերևն էր դողում,
բ Թե դուրսը հողմից տերևն էր դողում,
186 Թե երկչոտ մուկը վազեց պուճախում,
189 Եկավ ու կանգնեց փարախի կողքին,
199 Մենակ ահավոր լռության միջում
200 տողից հետո՝
[Ու այն վշշոցն էլ]

Ու վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կրռիվն ահարկու։
205 Հա՜, իմացա, Գևոն կլլնի,
Իմ շան ահից ով սիրտ կանի...
Վախեցնում է, հա՜, հա՜, հա՜, հա՜...
– Գևո՜՛...
Ձեն-ձուն չկա։
210 Մենակ ահավոր լռության միջում
Ձորագետն է խուլ մրրափած վշշում,
Եվ ո՞վ կլլնի զարթուն այս ժամին.
Քնած է աշխարհ, քընած է քամին,
Անքուն չարքերը չեն միայն քընած,
215 Վրխտում են ուրախ ձորերը բռնած,
Խավարում կազմած դիվական հանդես
Վազում, վազվզում ըստվերների պես,
Մինչև որ մենակ մի մարդ կրգըտնեն,
Որ խըմբով նըրա... յաթաղը մըտնեն...
220 Աչքերը հանգչող կրրակին հառած
Ծանրը է շընչում Սաքոն ահառած,
Ու վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կրռիվն ահարկու։ –
– Չէ՛, քամին էր էն... էն գայլի շրվաք.–
225 Էն աստղեր էին աչքերի տեղակ,
Որ լիսածակից ներս էին ընկել...
Ուզում է վերև մըտիկ տա մեկ էլ,
Ու սիրտ չի անում...
Ականջ է դընում...

---

209 Ձեն ու ձուն չկա։
211 Ձորագետն է խուլ դավաճան վշշում,
219 ա Ճիչով, աղմուկով յաթաղը մըտնեն...
բ Ճիչով, քըրքիջով... յաթաղը մըտնեն
223 Ալեկոծում է մրրրիկն ահարկու։

230 Գալիս են դարձյալ թեթև, կամացուկ
Դրռան ետևից փրսփրսում ծածուկ

– Էստեղ է նա.
Հա՛, հա՛, հա՛, հա՛.
Տե՛ս, տե՛ս, տե՛ս, տե՛ս,
235 Նայիր էսպես,
Մրտիկ արա...
Հա՛, հա՛, հա՛, հա՛...

Սաքոն շարժվեց փրշաքաղած,
[Նայեց] շեմքին, նայեց, դողաց,
240 – Շրրի՛խկ... հանկարծ դուռը բացվեց,
Թուրք կանանցով տունը լցվեց,
Տունը լցվեց թուրք կանանցով,
Ճիչ-գոռոցով, հրրհրոցով...

9

Ահռելի ձոր է: Մի կրտոր լուսին
245 Նայում է գաղտուկ, թաքչում ամպերում,
Էն մութն ահավոր գիշերվա կիսին
Վազում է Սաքոն Լոռու ձորերում,
Թրռչում է վիշապ քամուց էլ արագ:
Ձարքերը ընկած նորա ետևից,
250 Ու մազերն արձակ,
Հասնում են մեջքին, բրռնում են թևից,
Քաջքերն էլ այրից զուռնա-դրհոլով

231 Դրռան ետևում փրսփրսում ծածուկ
239 Նայեց շեմքին, ցնցվեց, դողաց,
246 Ու էն ահավոր գիշերվա կիսին
250 Ու մազերը արձակ

Ճըչում են-կանչում ծանոթ ձայներով.–
– Սաքո՜, Սաքո՜, մեզ մոտ արի,
255 Արի մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի
Սիրուն, ջահել հարսն-աղջիկ:
– Ինձ մոտ արի – ձվածեղ անեմ,
Ինձ մոտ արի – բըլիթ տամ,
260 Ես քո հոքիրն... ես քո նանն եմ.–
Ես էլ սիրած բարեկամ...
– Սաքո՜, Սաքո՜, մեզ մոտ արի.–
Էս աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
265 Տարա նի նա՜... տարա նա նա՜՛...

Այնինչ Դեբեդից ալքեր են թըռչում,
Ու ալիքները փրփրագեղ ուռչում,
Խավարի միջին ծըփում են կայտառ
– Բըռնեցե՛ք, փախավ Սաքոն խելագար:

266 Այնինչ Դև-Բեթից ալքեր են թըռչում,

ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

V

Ու խոր այրերի խորշերը խավար –
Իրենց անատամ, քյավթառ բերաններ,
Հավիտյան բացած՝ պատմելու համար,
Թե ինչ են տեսել դարերից ի վեր:
5 [Թե ինչպես եկան սրրով-կրրակով
Ու անցան իրենց արյունոտ փառքով,
Հոռոմն ու ու պարսիկ, [լեզգին] ու թաթար,
Եվ ուրիշ ազգեր անվերջ, անդադար...]
Նրանց ոտքերում վերևից գալի,
10 Սուրում է սողում Դև-Բեթը մոլի.
Ով գիտի ինչեր միտքը բերելով

[Ափսոսում] իրեն գործքերն անցյալի
Ու գոռում գիժ-գիժ
– Վա՜շ-վի՜շ... վաշ-վի՜՛ շ...

1-3 Խորունկ այրերի խորշերը խավար –
Նրրանց անատամ քյավթառ բերաններ,
Հավիտյան բացված պատմելու համար,
9 ա Նրանց ոտքերում սև գալարվելով
բ Նրանց ոտքերում ցած գալարվելով
գ Նրանց ոտքերում խև գալարվելով
11 ա Հին-հին ափերը միտքը բերելով
բ Հին-հին օրերը միտքը բերելով
գ Անցնում փրփուր ցայտելով
12 ա Ափսոսում էն լավ օրերն անցյալի
բ Ափսոսում լավ-լավ գործքերն անցյալի

15 Մութ անձավներից հազար ձևերով
Նորա հառաչքին արձագանք տալի,
Քաջքերն անհանգիստ հրտպիտ ձայներով
Ծաղրում են ծերի գոռոցն ահռելի
Ու կըրկնում գիժ-գիժ
20 – Վա՜շ-վի՜22, վա՜շ-վի՜22...
[Ահռելի ձոր է: Ամեն բան այնտեղ
Եվ կենդանի է, և մութն և ահեղ]:
Այս տախտի վըրա աղոթում մի վանք,
Այն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
25 Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կըռինչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գըլխից, լուռ մարդու նըման,
Նայում է ձորին մի հին խաչարձան:

VI

Սակայն իրեն օգում այս գիշեր
30 Տխուր է Սաքոն ու չունի ընկեր:
Բուխարու կողքին լուռ թինկը տըված
Մըտածում է նա ու մին էլ հանկարծ
Որտեղից որտեղ <2 անընթ.>
Միտն եկան տատի զրույցները հին,

---

15 Հազար անձավից հազար ձևերով
16-17 Քաջքերը հրտպիտ ձայներով
Նորա հառաչքին արձագանք տալի.
18 Ծաղրում են նրա գոռոցն ահռելի
22-23 Եվ կենդանի է, և մութն ու ահեղ:
Այս տախտի վըրա լուռ կանգնած մի վանք,
29 Լոռու էն ահեղ ձորում այս գիշեր
30 Մենակ է Սաքոն ու չունի ընկեր
32 Մըտածում է նա իր տատի պատմած
34 Հիշեց իր տատի զրույցները հին,

35 Միտն եկան, ու Սաքոն ակամա
Սկսավ մրտածել չարքերի վրրա,
Թե ինչպես նրրանք խմբով միասին,
Ծուռը ոտներով, գիշերվան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած
40 Երևում են միշտ միայնակ մարդկանց...
Եվ ինչպես քաջքերն այրերի մրթնից,
Երբ նայում է մարդ քարափի գլլխից,
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով,
45 Ու մարդկանց նրման խրնջույք են սարքում,
Ջուռնա են ածում, թրմբուկ են զարկում...
[Այսպիսի դեպքեր շատ են պատահել.
Քանիսն են տեսել, քանիսն են պատմել...
Եվ ահա վաղուց անցած օրերից,
50 Նրրա մանկության երեկոներից,
Երբ նա քաջքերից վախենում էր դեռ
Ետ եկան վաղուց մոռացված ձայներ]
Ու տատի խոսքերն անցյալի տակից
Ուրվաձայն, երկչոտ հընչեցին նորից.
55 – Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ – հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
Սիրուն-ջահիլ հարսն-աղջիկ:
– Ինձ մոտ արի – ձրվածեղ անեմ...

37-38 Չարքերի վրրա, որոնք միասին,
Ծուռը ոտներով, գիշերվան մթնում,
41 Կամ ինչպես քաջքերն այրերի մրթնից,
52 ա Հնչեցին վաղուց մոռացված ձայներ,
բ Խոսեցին վաղուց մոռացված ձայներ,
53 Ու տատի խոսքերն անցյալի խորից
54 Ուրվաձայն, երկչոտ ետ եկան նորից

60 – Ինձ մոտ արի – բըլիթ տամ...
– Ես քո հոքիրն... ես քու նանն եմ...
– Ես էլ ազիզ բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի.
Էս աղջիկը, տե՛ս ինչ լավն ա...
65 Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
Տարա նի նա՛... տարա նա նա՛...
Ու խոլ պատկերներ, տըգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խառներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց,
70 Երևութք եղան, անցնում են կամաց,
Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Չար ժըպիտներով, ժանտ ու սևերես...

VII

Սրընթաց պախրա թե գայլ գիշատիչ
Շեշտակի թըռավ փարախի մոտով,
75 Այծյամը հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գըլորեց ոտով,
Գիշերվան հովից տերևն էր դողում,
Երկչոտ մուկիկը վազեց պուճախում,
Թե ոչխարների թույլ մընչոցն էր այն,–
80 Սաքոյին թըվաց՝ թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վըրա,
Կանգնեց ու լըռեց...
Ականջ դըրավ նա...

---

75 Թե այծյամն հանկարծ մոտակա ժայռից

VIII

– Էն ո՞վ նայեց լիսածակից...
85 Ո՞վ հող թափեց բուխուրակից...
Էս ո՞վ կըտրից անցավ թեթև,
Շունչ է քաշում դըռան ետև...
– Ո՞վ ես, էհեյ... ինչ ես անում...
Ինչ ես լըռել, ձեն չես հանում...
90 Պատասխան չըկա. լըռության միջում
Ջորագետն է միայն մըրափած վըշշում:
– Հա՛, իմացա, Գևոն կըլնի.
Իմ շան ահից ով սիրտ կանի...
Վախեցնում է, հա՛, հա՛, հա՛, հա՛...
95 – Գևո՛ն...
Ձեն-ձուն չըկա:
Միայն ահավոր լըռության միջում
Ջորագետն է խուլ, մըրափած վըշշում:
Եվ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին,
100 Քընած է աշխարհ, քընած է քամին,
Անքուն շարքերը չեն միայն քընած,
Վըխտում են ուրախ, ձորերը բըռնած,
Խավարում կազմած դիվական հանդես,
Վազում, վազվըզում, ըստվերների պես,
105 Մինչև որ մենակ մի մարդ կըգըտնեն,
Ճիչով, քըրքիջով... փարախը մըտնեն...
Աչքերը հանգչող կըրակին հառած՝
Ծանըր է շընչում Սաքոն ահառած,
Ու վայրի հոգին լեռնական մարդու
110 Ալեկոծում է կասկածն ահարկու:
– Չէ՛, քամին էր էն... էն գիլի շըվաք...

84-85 Ո՞վ հող թափեց բուխուրակից...
– Էն ո՞վ նայեց լիսածակից...

Էն աստղեր էին աչքերի տեղակ,
Որ լիսածակից ներս էին ընկել...
Ուզում է վերև մըտիկ տա մեկ էլ
115 Ու սիրտ չի անում...
Ականջ է դընում...
Գալիս են դարձյալ թեթև, կամացուկ,
Դրռան ետևից փըսփըսում ծածուկ.

Էստեղ է նա,
120 Հա՛, հա՛ հա՛, հա՛,
Տե՛ս-տե՛ս, տե՛ս-տե՛ս,
Նայիր էսպես,
Մըտիկ արա...
Հա՛, հա՛, հա՛, հա՛...

125 Սաքոն շարժվեց փըշաքաղած,
Դեպի շեմքը նայեց, դողաց,
– Շըրըխկ... հանկարծ դուռը բացվեց,
Թուրք կանանցով տունը լըցվեց,
Տունը լըցվեց թուրք կանանցով,
130 Ճիչ-գոռոցով, հըրհըռոցով...

IX*

Ահռելի ձոր է: Մի կըտոր լուսին
Նայում է գաղտուկ, թաքչում ամպերում:
Էն մութն, ահավոր գիշերվա կիսին
Վազում է Սաքոն Լոռու ձորերում,
135 Թըռչում է վիշապ քամուց էլ արագ:
Ձարքերը ընկած նորա ետևից
Խոլական խըմբով ու մազերն արձակ,

*IX գլխի սկզբում, աջ կողմի լուսանցքում [Լոռու] ձորը –

Հասնում են մեջքին, բրոնում են թևից...
Քաջքերն էլ այրից զուռնա-դհոլով
140 Ճըշում են, կանչում ծանոթ ձայներով.

– Սաքո՜, Սաքո՜, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի –
Սիրուն-ջահել, հարսն-աղջիկ:

145 – Ինձ մոտ արի՝ ձվածեղ անեմ...
– Ինձ մոտ արի՝ բըլիթ տամ...
– Ես քու հոքիրն... ես քու նանն եմ...
– Ես էլ սիրած բարեկամ...
Սաքո՜, Սաքո՜, մեզ մոտ արի.
150 Էս աղջիկը տե՛ս ինչ լավն ա,
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,–
Տարա նի նա՜, տարա նա նա՜...

Այնինչ Դեբեդից ալքեր են թըռչում,
Ալիքներն ելնում, փըրփրադեզ ուռչում,
155 Խավարի միջին ծըփում են կայտառ
– Բրոնեցե՛ք, փախա՜վ Սաքոն խելագար...

1889

154-155 Ու ալիքները փըրփրադեզ ուռչում,
Մըռայլի միջին ծըփում են կայտառ

2 Ժայռերը՝ խոժոռ նոթերը կիտած՝
9 [Զարկում ու] զարկում ժեռուտ ափերին,
10 Փընտրում է ծաղկած ափերն [իր] հին,
14 Քաջքերն անհանգիստ՝ ծաղրող ձայներով

19 տողից վերև գիծ է քաշված՝ 19 և 20 տողերի ներքևի լուսանցքում գրված հետևյալ քառյակով փոխարինելու համար.

21-22 [Ալիքների հետ] խաղում ահից դողալով,
[Անհայտ] ու մրռայլ մի կյանքի գալով՝
27 ա Մութ աշտարակից, համակ զարհուրանք,
բ Մութ աշտարակից, ահ ու զարհուրանք,
31 Էն ձորի խորքում ահա մի տընակ:

34-35 տողերի փոխարեն՝
ա Նա էլ էս գիշեր գընացել է տուն:
բ Նա էլ էս գիշեր տուն է գընացել:
գ Նա էլ շունն առել գնացել է տուն:

35-41 տողերը ջնջված են:

44 տողի դիմաց՝
Ու Սաքոն մենակ,
46 Գուլպան բուխարու քարին կախ արել
51 Հապա մի նայիր երկար հասակին,
58 Էնտեղ կիմանաս, թե ընչի համար

60 տողից հետո, լուսանցքում, կա հետևյալ նշումը.

IV

«Նըրա փարախին հսկում է Ջորին – երկու տուն,
ապա – Վաղ արշալույսին. a, V, VI»:

Սրանից երևում է, որ III գլխից հետո պետք է տեղադրվեին սևագիր ինքնագրի հետևյալ հատվածները.

(ԳԱԹ ԹՖ №145(2)

IV

Նրա փարախին հսկում է Զորին,
Ազազիլ Զորին հսկում է անքուն,
Ներքև է բերում նա ձիավորին,
Հավքն էլ չի անցնում նրանից թաքուն:
5 Թեպետև Սաքոն եղբայրներ ունի
Ու նրանց համար արյունը կըտա,
Բայց Զորու նըման էլ ո՞վ կըլինի,
Նրան հավասար եղբայր էլ չըկա:

a V

Վաղ արշալույսին,
10 Հենց որ արևի ցոլքերն առաջին
Դիպչում են սարի [էն] ժեռուտ լանջին
Էն կոպիտ ժայռի կըտորի նըման
Կանգնած է արդեն մեր ջահել հըսկան,
Հենված հովվական երկայն մահակին,
15 Իր առյուծ Զորին ոտների տակին,
Թերմաշ յափրնջին ուսն ի վեր ձըգած,
Ինչպես լեռների տեր ու թագավոր
Աչքերն ածում է, հըսկում սար ու ձոր
Մինչդեռ մընչալով կանաչ արոտում
20 Սիրած գառները իր շուրջն են պատում:

---

4 Ղուշն էլ չի անցնում նրանից թաքուն:
10-11 Երբոր արևի շող<երն> առաջին
Դիպչում են բարձրը էն սարի լանջին
15-16 Իր Զորին պատրաստ ոտների տակին,
Թերմաշ յափրնջին ուսովը նետած,

VI

Ու իրեն նըման իրեն ընկերներ
Սարում ու ձորում երեխուց ի վեր...

65 Ծիծաղ ու աղմուկ խառնում են իրար,

66 տողից հետո, վարի լուսանցքում՝

Խոսում խա<ղում է> գիշերվա պահուն,
Լեզու է առնում չոբանի շըհուն.
[Ու մուշիկ-մուշիկ] դարդի բայաթին
[Գովում է] անահ ու մարդ իգիթին,
5 Մեռնում վաթանի հողին ու քարին,
Սիրավառ կանչում սևաչյա յարին,
Մերթ սարերն ի վեր թռչում ու թնդում,
Մերթ իջնում, մարում սրտի անդընդում:
Խնդում է հանկարծ, փոխվում է պարի,
10 Ու խաղս են լինում որդիքը սարի.
Ծա՛փ, տղերք, ծա՛փ, ծա՛փ – որոտում է ծափ –
Կանգնում է վերև հովիվն հոյակապ,
Հաղթ-հաղթ բազուկն իր տարածում երկար,
Վայրենի նազով գընում կենդանապար:

1-2 ա *Ու քըթթկենի չոբանի շըհուն*
Լեզու է առնում գիշերվա պահուն.
բ *Լեզու է առնում չոբանի շըհուն*
<.....> գիշերվա պահուն.
3-4 *[Ու մուշիկ-մուշիկ] դարդոտ բայաթին*
[Թնդացնում է] անահ ու մարդ իգիթին,
9 *Խնդում է շըհուն, փոխվում է պարի,*
11-13 *Կանչում են ծափ-ծափ, որոտում է ծափ –*
Ելնում է տեղից հովիվն հոյակապ
Հաղթ-հաղթ կռները տարածում երկար

15 Արծիվն է ասես, որ կանգնած օդում
Շուրջը վայրենի հայացքներ նետում,
Ճեմում է անփույթ, հզոր ու հրպարտ
Ու մին էլ, հանկարծ, զարկում է, թրռչում,
Խոյանում, սուզվում ամպերի միջում:
20 Ծա՛փ-ծա՛փ... տաքանում, շրջան են անում,
Շրջան են անում ու զոփի թռչում.
Դանդաղ ծանրապար,
[Աստիճանաբար],
Փոթորկի նման գնում են թռած,
25 Երբեմն ուռուցիկ լանջերն ուռցընում,
Ճրչում են, կանչում, սուլում-շրվացնում,
Մին էլ միասին հանկարծ կորանում,
Ու կրկին դրքվում, կըրկին տաքանում,
Մոլեգնոտ թափով գետինը դոփում,
30 Օճորքը դողում, ու հող է թափում:

Այս նույն էջի լուսանցքներում կան նաև այլ անավարտ տողեր.

Հենց երեկ գիշեր,
Օդեն լի գըժեր,
[Ինչ] աղմուկ ու ծիծաղ...
[Հ<ենց> երեկ գիշեր
Օդեն լի գըժեր].
Երեկ գիշեր – (և Սաքոն հիշում է իրենց ու երգերը):
Հենց երեկ գիշեր
Օդեն լի [լիք] գըժեր
Քաջքեր չէին հո՛...

17 Ճեմում է անփույթ, անվրդով, հանդարտ
21 Շրջան են անում ու զոփի գընում.
22 Կամաց ծանրապար

[Ով պետք է լինի էս կես գիշերին]
Անքուն փսփսում են, ծիծաղում
էս կես գիշերին անքուն ձորում
Ո՞վ է փսփսում... ո՞վ է ծիծաղում...
[Ո՞վ կըփսփսա, կըխոսա թաքուն].

Ու Սաքոն [օդում] էն կես գիշերին
Հիշեց իր տատի զրույցները հին.
Հիշեց ու ... ակամա
Սկսավ <...>

[Ու երեկ էր հենց]
Ու Սաքոն լսեց մի ծիծաղ – ի՜նչ ծիծաղ.

ԲԹ տեքստի շարունակության վրա կատարված ուղղումները

67-72 տողերը չնչված են։

73	*Ի՜նչ ծիծաղ էր որ, Սաքոն ակամա*
75	*Թե ինչպես նրանք անքուն, միասին*
78	*Կերևան մենակ մնացած մարդկանց...*
99	*Եվ ահա նրանք տգեղ, այլանդակ,*

124-130 և 133-138 տողերը չնչված են։

143-144 տողերի փոխարեն՝

	– Հը՞... թե քամին էր, թե՞ գիլի շվաք...
	Թե՞ աստղեր էին <...>
149	*Գալիս են զգույշ, թեթև, կամացուկ*
159	*Մութը շեմքին նայեց, դողաց...*
162 տողից հետո՝	*Նրանց միջից զորով Սաքոն թռավ –*
	Նրանց արանքից [հագիվ] Սաքոն ըշտապով
ա	*Դուրս թռավ-փախավ կայծակի թափով։*
բ	*Դուրս թռավ հանկարծ ահագին թափով։*

163 տողից առաջ՝	Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
	Ժայռերն ամեհի նոթերը կիտած
	Դեմ ու դեմ կանգնած համառ ու անթարթ
	Հայացքով իրար նայում են հանդարտ:
185 ա	Ու <.....> գետից ալքեր են թըռչում,
բ	Ու վարար գետից ալքեր են թըռչում,
188 տողից հետո՝	
	Վազում է Սաքոն. գյուղում էդ ժամին
ա	Սաքոյի նանը, պառավ Նազանին
բ	Սաքոյի տատը փոքրիկ թոռներին
	Անքուն պատմում է [իրենց] մթին աշխարհից,
	Պատմում է <.....> քաջքից ու չարքից,
	Թե ինչպես նրանք խմբով միասին
	Ծուռը ոտներով գիշերվա կեսին
	Եվ այլն...
	Իսկ առավոտյան նրան կենդանի
	Խելագար Սաքոն վկա կըկանգնի:

Գ ինքնագիր

(ԳԱԹ ԹՖ №145(2)

ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

IV

Նրա փարախին հսկում է Զորին,
Ազազիլ Զորին հսկում է արթուն,
Ներքև է բերում նա ձիավորին,
Հավքն էլ չի անցնիլ նրանից թաքուն,
5 Թեպետև Սաքոն եղբայրներ ունի
Ու նրանց համար արյունը կըտա,
Բայց Զորու նման էլ ո՞վ կըլինի.
Նրան հավասար եղբայր էլ չըկա:
Նրա փարախին հսկում է Զորին
10 Ազազիլ Զորին հսկում է արթուն
Ներքև է բերում նա ձիավորին,
Հավքն էլ չի անցնում նրանից թաքուն:

V

Հենց որ արևի ցոլքերն առաջին
Ընկնում են սարի էն ժեռուտ լանջին,
15 Էն կոպիտ ժայռի կտորի նըման
Կանգնած է արդեն մեր ջահել հըսկան:
Հենված հովվական երկայն մահակին,
Իր առյուծ Զորին ոտների տակին,
Ծակած փափախը ականջին թեքած,

14 Դիպչում են սարի էն ժեռուտ լանջին,

20 Թերմաշ յափընջին ուսն ի վեր ձրգած,
Ինչպես լեռների տեր ու թագավոր,
Աչքերն ածում է, հսկում սար ու ձոր,
Մինչդեռ մընչալով կանաչ արոտում
Գառն ու ոչխարը իր շուրջն են պատում:

VI

25 Ու իրեն նըման իրեն ընկերներ –
Սարում թե ձորում երեխուց ի վեր,
Աստծու գիշերը գալիս են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են օդեն,
Ծիծաղ ու աղմուկ խառնում են իրար,
30 Ածում են, խաղում, խնդում միալար:
Եվ լուռ ու խաղաղ գիշերվա պահուն
Լեզու է առնում չոբանի շհուն.
Վառում է դարդի տխուր բայաթին,
Գովում է անահ ու մարդ իգիթին,
35 Մեռնում վաթանի հողին ու քարին,
Սիրավառ կանչում սևաչյա յարին,
Մերթ սարերն ի վեր թռչում ու թնդում,
Մերթ իջնում մարում սըրտի անդընդում:
Խնդում է հանկարծ, փոխում է պարի
40 Ու խաղս են լինում որդիքը սարի.
Ծափ-ծափ, տըղերք, ծափ. որոտում է ծափ,
Կանգնում է տեղից հովիվն հոյակապ
Հաղթ բազուկները տարածում երկար
Վայրենի [նազով] գընում կենդապար:

---

24 Սիրած գառները իր շուրջն են պատում:
31 Ու լուռ գիշերվա խաղաղիկ պահուն
33 Վեր քաշում դարդի դարդոտ բայաթին,
41 Ծափ, տըղերք, ծափ, ծափ. որոտում է ծափ,

45 Արծիվն է, ասես, [որ] կանգնած օդում
Շուրջը [վայրենի] հայացքներ նետում,
Ճեմում է անփույթ, հզոր ու հրպարտ,
Թևերը շարժում անվրդով, հանդարտ,
Ու մին էլ, հանկարծ, զարկում է թռչում,
50 Խոյանում, սուզվում ամպերի միջում:
Ծա՛փ, ծա՛փ... տաքանում, շրջան են առնում,
Շրջան են առնում, զոփի են բռնում.
[Դանդաղ, ծանրապար
Աստիճանաբար].
55 Երբեմն ուռուցիկ լանջերն ուռցընում,
Ճրչում են, կանչում, սուլում, շրվացնում
Մին էլ միասին հանկարծ կորանում
Ու կըրկին դքվում, կրկին տաքանում,
Մոլեգնոտ թափով գետինը դոփում,
60 Օճորքը դողում ու հող է թափում...

VII

Հենց երեկ գիշեր
Օդեն լի գըժեր
Պար, երգ, խինդ ու խաղ,
Ծիծա՛ղ, ի՜նչ ծիծաղ...
65 [Ու մին էլ թվաց, թե ականջին մի ծիծաղ [եկավ]
հնչեց լուռ օդում]:
Ու լուռ [օդի] մեջ մի ծիծաղ զրնգաց –
Անցած ծիծաղն էր եկավ ու [անցավ],
[Թե] ուրիշ ծիծաղ,
Նա լավ չիմացավ,

65-68 Թե դուրսն էր... հանկարծ մի ծիծաղ զընգաց
Երեկ իրիկվան ծիծաղն էր, անցավ –
Թե նոր ծիծաղեց մինը
Նա լավ չի հիշում...

70 Ուզում է հիշի –
Ու լավ չի հիշում...
Բայց ձորն ավելի դատարկ է թշշում
Եվ իր ականջին ձայներ են գալի,
Ձայներ տարօրեն [նուրբ], անլսելի...

ՈՒՐԻՇ ՍԵՎԱԳԻՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ (ԳԱԹ ԹՖ №146(5Ե)

<1>

Նրանց ոտքերում պոչն ոլորելով՝
Սուրում է, սողում Դև Բեթը մոլի,
Հին-հին ափերը միտքը բերելով,
Ամիսոսում [էն լավ] օրերն անցյալի
5 Ու գոռում գիժ-գիժ.
– Վա՛շ-վի՛շշ... վա՛շ-վի՛շշ...
Հազար ծերպերից ու <1 անընթ.>
[Քաջքերը] հոտիտ ձայներով
Նորա հառաչքին արձագանք տալի
10 Ծաղրում են ծերի գոռոցն ահռելի
Ու կրկնում գիժ-գիժ.
– Վա՛շ-վի՛շշ... վա՛շ-վի՛շշ...

<2>

ա Թե ինչպես եկան սրրով-կրրակով
Ու անցան իրենց արյունոտ փառքով
Հոռոմն ու պարսիկ, [լեզգի ու] թաթար
Եվ ուրիշ ազգեր անվերջ, անդադար...

---

1 Նրանց արանքում պոչը գալարելով՝
7 Քաջքերն էլ ծերպերից ու <1 անընթ.>
9 Ծերի հառաչքին արձագանք տալի
11 Ու խրնդում գիժ-գիժ.

բ Թե ինչպես եկան սըրով, կըրակով
[Եկան ու <....> եկան անդադար]
[Հոռոմն ու պարսիկ <....>]
Ու անցան իրենց արյունոտ փառքով
Հոռոմն ու պարսիկն <....> ու թաթար...
[Ու շատ բարբարոս] <....>

ԲԲ տեքստում մտցված ուղղումներ
(ԳԱԹ ԹՖ №3839(1355ա)

1 և 31 տողերում «այն»-ը դարձրել է «էն»՝ ըստ երևույթին ցանկանալով ամենուրեք «այ» երկհնչյունը փոխարինել «է»-ով: Սակայն աշխատանքի այս փուլում այդ գործը մինչև վերջ չի հասցվել: Այդ փոխարինումը կատարվեց պոեմի վերջին՝ ԲՊ հրատարակության մեջ:

24 Շնչում է ապրում և մութն, և ահեղ:

ԱՎԵՔ
(էջ 26)

Հեղինակի ծանոթագրությունները (ԲՄ I)

57 Սնաչա – վրանի մեջտեղի միակ սյունը, որի վրա ամրացնում են ճիպոտները վրանի:

92 Ուրթ – այն որոշյալ տեղն է, ուր արձակում են վրանները սարվորի:

92 Արխաջ – ոչխարի գիշերվան մնալու, հանգստանալու տեղն է:

94 Ղովտ – սրնգի երկայնությամբ սնամեջ փայտ է, նրա մեջ են պահում սրինգը – շվին (շհու):

100 Բինա – սարվորի վրանների խումբը:

104 Հարայ կամ հավար – կոչական ձայնարկություն է, օգնություն կանչելու ժամանակ են գործածվում:

132 Էրմանի – հայ:

137 Դալի – խենթ:

140 Դուշման – թշնամի:

143 Նրանց գլխին կընկա լաչակ – արհամարհական, նախատական դարձվածք է:

144 Ղաչաղ – ավազակ, փախստական:

145 Փափախ – գլխարկ մորթե:

148 Այնալի – փամփուշտավոր հրացան, պիպոդ:

162 Ղսաս – վրեժ:

167 Ժանգառք – երեկոյան մութը:

171 Խաշամ – թափված, չորացած տերև:

206 Ձայն հանել – հռչակ ստանալ:

63 Գեթ խնայիր քո ծեր նանին.

64 և 65 տողերի միջև կա հետևյալ հատվածը, որ ջնջված է հեղինակի կողմից.

63 [Յուր մոր խոսքին ականջ չարավ,
Կոպիտ հովիվն և վայրենի
Կատաղությամբ թռավ գնաց].
65-68 Աստծու սիրուն, հարևաններ,
Ինձ օգնության եկեք, հասեք,
Որդուս կալեք
Փախավ գնաց, Ալեք, Ալեք...
122 [Իսկ] թե հովիվ անուշ քնած,
136 ա Դիմացիցը նկատեցի.–
բ Դիմաց լանջից նկատեցի.–
156-157 Գովաբանում, [իսկ] Ալեքին
Անիծում էր թուրքի կինը
159 Վկա են կանչում ուխտին
158-159 Վկա կանչում, երդվում են,
Երդում վերան իրանց դընի
160 Թեկուզ Ալեքը [չըլինի],
Աստված օրհնի քեզ, որդի.
203 «Ճիշտ է, տեր հայր, [բայց] գուն

Հեղինակի ծանոթագրությունները (ԲՄ I)

47 Ազիզ օր – տոն օր, հանդիսավոր օր:
48 Տուր փարեն՝ պրծիր չարեն – առած է:
96 Խան – ցորենի չափ է:
130 Ղայլուխ – փողի քսակ:
131 Շարան – հուլունքներից և զանազան փայլուն իրերից կազմած շարած բան է, որ կանայք իբրև զարդ կրում են վզին:
159 Թե աչքդ մնա – աչքի մնալը ճամփորդի, գնացածի գալու նշան է:
165 Եվ հանկարծ մինը ծոր տա ու թռչի – աստղի թռչելը մահու նշան է:
198 Սև շորեր հագած, սև ճամփով գնաց – երազում սևը տրտմություն է, մահ է, մանավանդ վերև հիշած երեքը:
205 Հարամի – ավազակ, մարդասպան:
212 Բոթաձայն կռավեց – ագռավի կանչը չարագուշակ է:
265 Քուշուշկ – հարսնական քող, շղարշ:

Ինքնագրի տարբերությունները (ԹԹԳԳ1079/5-2)

13 – Ես գիտեմ, Մհե, շատ եմ ափսոսում.
42 Դուն չես իմանում, ա՛խ Մհե, Մհե.
53 Ածխակոթերը [դեռ] մըլում են տխուր,
59 [Սեգ աչքերի մեջ] փայլում էր թախիծ. Բերանն անատամ,
61 [իրան] դողդոջուն ձայնով,
87 – Մեր ցավն է, որդի, մենք պետք է տանենք,
106 Այդ հարստությունն ու քեզ մխիթարեց.
122 Ավելանում էին նրա վշտերին,
128 Որ ճամփու դնի Մեհրին Մհեին,
132 [Իբրև] հիշատակ տվեց [Մհեին]:

148 տողից հետո ինքնագրում եղել են հետևյալ ջնջված տողերը.

[Հավաքված մարդիկ մոտեցան նրանց
Մոտեցան նրանց, մխիթարական]

Մշակումից հետո այս տողերը դարձել են տեքստի 149-151 տողերը։

153-154 տողերի փոխարեն՝

Եվ տուն, հայրենիք...
175 Ու չես գտանիլ ծերության նեցուկ.
202 [Գրավ խոստացի՛ր], մի ջուխտ մում վառի.
222 Ամայի վայրում ո՞վ պետք է լինի

228 տողին հաջորդում են հետևյալ ջնջված տողերը.

238 [Թե հեռու տեղից եկած ճամփորդի
242 ա Գերեզման է, որ հալվի անոթի]
բ Փոշոտած դեմքից սրբեցին փոշին,
գ Եղբարք, ողորմի տվեք Մհեին.
Ողորմի տվեք այստեղ թաղվածին.
Եղբարք, ողորմի տվեք խեղճ հային.

246 տողից հետ՝

[Մի աղվես այնտեղ գլուխն է կրծում.
Ցինը մոտենում՝ աչքերը կոցում.]
259 Ամենքը մի բերան ասացին սրտով
303 [Եվ] ուրախությունից արցունքը հետին
305 ա [Մոտեցավ մարդը], եկավ մոտեցավ,
բ [Ահա] եկվորն եկավ մոտեցավ,

359-360 տողերի փոխարեն՝

ա [Արյունը կրծքում եռաց կատաղի,
Աչքերում փայլեց կրակը ոխի].
բ Վրեժը փայլեց սև-սև աչքերում,
[Ինչպես գիշերը անխռով ծովում]
գ Մի միտք հանկարծ դեմքըն այլայլեց,
[Սև-սև] աչքերում վրեժը փայլեց.
364 ա Երկար ու ծանր բարձրանում էր կուրծքը,
բ Ծանր ու երկար բարձրանում էր կուրծքը,

364 տողից հետո՝

[Մհեի վերա վայր ընկավ Մեհրին
Արյունաթաթախ խանչալը ձեռին].
382 [Եվ] բռնեց [նրա] թիկունքի ծամը.

392-393	[Յուր մարդու] շիրմի վրա վայր ընկավ.
	Վայր ընկավ մեռավ նաև [Մեհրին]
396	Չար ըսպանողն ու սպանվողն անմեղ
398	Հավ[ա]սար պճնում է նրանց դալարով։

ՀԱՌԱՋԱՆՔ
(էջ 66)

Բնագրային տարբերություններ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Դպ 3	Եվ ջերմ ըղձերքս բախտից հալածված,
12	Սըրտիս ականջին պատմելով թաքուն...
20	Այդ անդնդախոր ձորերըդ լցնեմ:
22	Սըրտիս այս տանջող վերքերի նըման.
27-28	Տեսնեմ դուք էլ եք այնքան մեծ ու խոր,
	Հոգուս անհատակ թախիծն է ինչ որ:
ԲԹ 22	Սըրտիս այս խորունկ վերքերի նըման
27-28	Դուք էլ եք, տեսնեմ, այնքան մեծ ու խոր,
	Հոգուս անհատակ թախիծն է ինչ որ...
ԲԲ 27-28	Դուք էլ եք, տեսնեմ, այնքան մեծ ու խոր,
	Ինչպես իմ հոգու թախիծն ահավոր...

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Մ3 բնագրային տարբերությունները

35	Գիշերը հասավ, և ես դադարած
39	«Բարի օր, պապի», և խոժոռադեմ
45	Ծերունուն անխոս ես հետևեցի,
47-48	«Մեր բանը պրծավ, երբ այս ձորերի
	Մըտերը սըրանք էլ սովորեցին:
52	Թե չէ ինչ ունի այս խուլ ձորերում
62	Գլխին այսպիսի գդակ է դնում...
64	Եվ հառաջ գնաց թին դիմհար տալով:
76	Ինքը շարունակ խոսաց կցկտուր.
77	Ով էլ որ լինես՝ բարով ես եկել,
80	Թե ինչ ցավ ունի ձեր ռանչպարը:
84	Այդ հաստատ գիտե Ինքը – միայն Տերը:
87	Տկլոր ու սոված այսպես տարին բուն

89-92 Թե որ ձեռքներս էլ մի բան է ընկնում,
Չենք կարողանում բերաններս հասցնենք...
Այսքան տանջվելով քրտինք ենք անում,
Էլ նույն սևերեսն, էլ նույն սոված ենք...
99 Ես ընչի տեր եմ, խոսամ նրա դեմ,
101 Ինչ անես, ախպե՛ր, ումնից խռովես,
106-107 – «Հա, տիրացու ես, բաս ինչու չասիր...»
Նա բացականչեց և իսկույն դափի

ՀԱՏՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Ինքնագրի պահպանված մասերի տեքստային տարբերությունները (ԳԱԹ ԹՖ №148(3ա)

176 Ու չես իմանում որ կողմը [հասնես]
179 Գողերի հետքը իր տունն եմ տանում
301 ա Ջատին էլ եկավ [մեջտեղը տնկվեց]
բ Ջատին էլ եկավ <...> ու մեծ
327 Քանի՛-քանի մարդ <1 ջնջվ. անընթ.> [ընկավ]

Նշ-ում տպագրվածի մեջ սպրդել են մի քանի ակնհայտ վրիպակներ, որոնք ուղղված են հետագա հրատարակությունների մեջ: Իբրև նմուշ բերում ենք այդ սխալներից մի քանիսը.

134 Խելքս չի կտրում էսպես լինի
179 Գողերի հետքը իր տունն են տանում
188 Վայը եկել տարել տրկարին
200 Նոր էլ չըգիտենք թե ինչ է եկել

«Վերջերգի» ձեռագրի (ԳԱԹ ԹՖ №149(3գ) տակ նշված է գրության թվականը՝ «90 թ.»: Ձեռագրում կա մեկ տեքստային տարբերություն և հետևյալ գրառումները.

359 Գուցե մի բոպե քո դատարկ հոգում

«1884 թ. Ղոխնանց պապի դափում Գրիշկի հետ. Զուփուրի տղերանց հետ գնալուց մի քանի օր հետո»:

«Թռչուն կա միս են ուտացնում – թռչուն էլ կա, որ միսն են ուտում»:

ՍԵՎԱԳԻՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ
(ԳԱԹ ԹՖ №150(3բ)

<2>

Ահա ծառերը կանաչ խմբերով
Հավաքված գետի երկու եզերքին,
Թավ կատարները մեղմիկ ճոճելով
Իրար փաթաթված, շարված են կարգին:

5 Նրանք խոնարհված ականջ են դնում,
Թե ինչպես իրանց ստվերների տակ
Զգույշ ծփալով գաղտնիք են պատմում
Ջրի հատակից կոհակներն հստակ:

Դիտում են՝ ինչպես արևի վերջին
10 Անզոր շողերը ջրերի միջում
Շտապ դողալով իրիկվան պահին
Թռչում են վերև և [հանկարծ] հանգչում:

Իսկ այդ ժամանակ հսկա ժայռերը,
Որ երկու կողմից կանգնած են պատրաստ,
15 Զգում են իրանց երկայն ստվերը
Ու մութով լցնում ձորն ահեղասաստ:

---

1 ա Ահա ծառերը անվերջ խմբերով
բ Ահա ծառերը դալար խմբերով
5 ա Նրանք հավաքված գրույց են անում,
բ Նրանք գաղտնի բան են խոսում,
գ Նրանք խորհրդավոր բան են խոսում,
դ Նրանք խոնարհված մեղմիկ սոսում,
7 Մեղ<միկ> ծփալով գաղտնիք են պատմում
11 Շտապ դողալով իրիկնապահին
16 Եվ մթնեցնում են ձորն ահեղասաստ:

[Հրաշալի է գիշերն այն ձորում,
Երբոր խավարի մութ ալիքներում
Ըմբոստ <1 անընթ.> ուղղաձիգ ժայռեր
20 Մինչև աստղերը բարձրանում են վեր:

Երբոր շողշողուն գոհար աստղերը
Պճնում են մռայլ ճակատն երկնքի,
Երբոր պտտում են թեթև ամպերը –
Հալածականներն ընկած փոթորկի:
25 Երբոր լրացած լուսին փառահեղ
Հեզանազ ճեմով բարձրանում է, [և՝]
Բարձրը երկնքում, ինչպես վառ կանթեղ,
Կախվում է խավար ձորերի վրա:

Երբ վեր է կենում գիշերվան հովը,
30 Եվ խոտ ու տերև հեշտօրոր սոսում,
Թեթև թռիչքով անցնում <է> ձորով,
Ծերպ ու այրերում շվվացնում, խոսում:

Եվ Դեբեդը բոլորը գրկած,
Անհասկանալի և հազար ու մին

---

18 Երբոր գիշերվան մութ ալիքներում
19 <1 անընթ.> ըմբոստ ուղղաձիգ ժայռեր
20 Այս ու այն կողմից բարձրանում են վեր:
23 Երբոր կանգնում են թեթև ամպերը
28 Կախվում է խավար ձորերից վերև:
30 ա Եվ տերևները ներդաշնակ սոսում
բ Եվ տերևները հեշտօրոր սոսում
31-33 Թեթևաթռիչք անցնում ձորովը,
Քարանձավներում շվվացնում, խոսում:
Իսկ Զորագետը բոլորը գրկած,

35 Զեն ու գոռոցով աղաղակ ձգած –
Լցնում է ահով լսողի հոգին]:

4

Մթնեց. ծերունին լուռ շարշարանքով
Մի քանի կոճղեր դրեց կըրակին,
Նորից բարևեց յուր երկրի կարգով
40 Եվ հրավիրեց իրան «ղոնախին»:

Եվ թիկն տվինք իրար դեմուդեմ
<...> այն թեժ կրակի շուրջը,
[Նոր] <.....>

<5>

(Ես էլ քեզ կըտամ ու շատ կաղաչեմ)
45 Ով մի հավ ունի – պատվելու համար,
Երկու ձու կդնի նորա առաջին.

Ախպեր, ինչ անենք,
Առաջ սրահում, կտերն էին<ք> քնում,
Հիմի բերդի պես օթախներ ունենք,
50 Այն էլ չի օգնում:
Իմ խելքն աշխարքից մի բան չի կտրում,
Տանջվիր, չարչարվիր – շան տեղ էլ հաչե,
կաց, թե որ մեռնես – դրախտը կերթաս –
Էն էլ, ով գիտի – կըլինի թե չէ:

35-36 Զայն ու գոռոցով աղաղակ ձգած
Ահով լցնում է լսողի հոգին:
41-42 Եվ նստոտեցինք իրար դեմ ու դեմ
Սաստկությամբ վառվող կրակի շուրջը

44 տողի վերևը՝ «(ատամի ժանգով)»

49 Հիմի երկաթով օթախներ ունենք,

55 Վատությունով [ով ինչ է տարել –]
Այս փուչ աշխարքից ով ինչ է տարել –
Ինչ կասես, ախպեր, ծերիս խրատին.
<1 անընթ.> պապի – շատ լավ ես արել:

[Նեղություն քաշիր, այդ աղամանը
60 Դեսը մոտիկ բեր – դու էլ աշխատիր.
Աղությունը քաղքումն արա – ձեր տանը –
Այստեղ մեր ձորում դեռ ինձ ականջ դիր]

Այնքան մեղքեր են պտտում աշխարհում,
Լավ է մի կտոր չոր հաց ենք ճարում:
65 Ինչպես ծերության հարգն է վերանում,
Այնպես էլ մարդիկ էլ չեն ծերանում.

Ազատ են հիմի մեր ջահելները,
Ինչպես ազատ է հիմարի լեզուն,
<1 անընթ.> անում <....>
70 Ոչ մեզ են հարցնում, ոչ էլ Աստծուն.

Էդ էլ հերվա բանը չըլինի
Աստվածն ուրացավ <....>
Անզգամության կողմը պահպանեց,
Խեղճ երեխանցը չոլերը հանեց:

---

65 տողից առաջ՝ հետևյալ ծրագրային նշումը.
(Ով են պապի և այլն – Բայց նա ինձ չլսեց. վշտացած շարունակում էր):
70 Ոչ մարդու են նայում, ոչ էլ Աստծուն
73-74 Պահպանեց անպիտան <....>
Խեղճ տղերանցը չոլեր<ը> հանեց

75 Սեր ու սրբություն կար մեր ժամանակ,
Թեև սամովար ու չայ չունեինք:

Մեր ազգի տունը էն օրը քանդվեց,
Որ շնությունը աշխարքս պատեց.
. . . . . .
80 . . . . . .

Խոստովանք լինի – քեզ մի բան ասեմ,
Ես էլ եմ արել շատ ջահելություն,
Ես էլ քո կարծած ճգնավորը չեմ –
Բայց չեմ շնացել – հայտնի է Աստծուն:

85 Հըհեյ գիտի հա՛, ինչ տեղը մթնեց.
Էնդուր է բանի բարաքեն փախել.
Էլ ոչ ամոթ կա, ոչ փոքրը, ոչ մեծ,
Շանորդությունն է աշխարքս կոխել...

Ո՞վ է մեղավոր – մեր քթի տակին
90 Մի գյուղ են շինել այլազգիները,
Այդ գյուղի տեղը յուր ժամանակին
Արածացրել եմ ես մեր կովերը –

Առաջ այսպես էր – աշխարքը լեն-բոլ,
Մինչև ուր կուզես ապրանքդ քշիր.
95 Հիմի գալիս են օջախիդ կողքին
Ասում են <...> ոտքդ քեզ քաշիր.

79-80 Կետերով տողերի միջև փակագծում գրված է՝ (Պոռնկություն)

93 Առաջ այսպես էր – աշխարքն ընդ<արձակ>

96 Այս տողից հետո կա հետևյալ նշումը՝
(ազնվ<ականների> տեղերի վնեը):

<6>

(ԳԱԹ ԹՖ №152(100է)

Քանի քանի մարդ ընկավ իր տանից,
Քանի քանի մարդ դառավ մարդասպան:

Ո՞վ է մեղավոր. միտք եմ անում, միտք,
Ու չեմ իմանում ով է մեղավոր:

<7>

Հանգչում էր կրակը.
Գիշերվա մի ժամին սկսեց երգել ծերունին –
Ախպեր ջա՛ն,
Ինձ տես եկար, ախպեր ջա՛ն,
Ճամփեդ կրակ, ես կրակ,
Ինչպես եկար, ախպեր ջա՛ն...

Անց կացա՛ն,
Օրերս թըռան, անցկացան,
Ախ ու վախով, դարդերով,
Սիրտս կերան, անցկացա՛ն:

Վերջացա՛վ,
Կյանքս մաշվեց, վերջացա՛վ.
Ինչ հույս արի – փուչ էլավ,
Ինչ խնդություն – վերջը ցա՛վ:

Հանգչում էր կրակը: Ծուխն ու հառաչանք իրար խառնված վերանում էին Լոռու ձորի անդունդից դեպի վերև: Վերևը մութն էր դեռ:

---

98 [սպանվեց]
105 [Շուրջս կրակ] ճամփեդ կրակ, ես կրակ:

ԱՆՈՒՇ
(էջ 80)

Առաջին տարբերակ (ԲՄ II)

ԱՆՈՒՇ
Մասն առաջին

I

Ամպշող գիշեր է. ահա քեզ լռու
Զքնաղ լեռները ձգվում են հեռու.
Այս լեռների մեջ յուր ավանդներով
Մի պարզ ժողովուրդ ապրում էր սիրով,
Եվ նորա հոգին հստակ էր և վեհ
Իրան լեռների, աղբյուրների պես:
Այն օրից օրեր դեռ շատ չեն անցել
Եվ հասած վերքը դեռ չէ հնացել.-
Լսվում են մեկ-մեկ հնուց երգերը
Եվ հին սերունդի բոլոր կըրքերը -
Նրանց արատը, արարքն անվեհեր
Հնչող ձայներում պահում են անմեռ:

II

Տեսնում ես, գյուղը մռայլի միջին
Սևին է տալիս սարի ստորոտում,
Նրանից ներքև խոր ու խավարչտին
Ձորում խլաձայն գետն է որոտում.
Շեն ու շրջակայք գրկել է Մորփեն,
Եվ ոչ մի տեղից չէ լսվում շրշյուն,-
Կեսգիշերվանից լռել են արդեն
Սայլորդի երգը և հովվի շհուն:

III

Այս ժողովրդին միշտ պատրաստ ու կազմ
Իրանց քաջասիրտ իշխան-մեծերը

Առաջնորդում էին դեպի պատերազմ
Եվ վճռում էին ծագած վեճերը.
25 Իսկ հիմա նրանք հանգիստ ու խաղաղ
Իրանց խուղերում և հին վրանում
Ապրում են աղքատ և արդեն անցյալ
Արկածներիցն են պատմություն անում.-
Այս ձորերումն էր, որ Բագրատունին
30 Բախտի հետ խաղաց յուր խաղը վերջին,
Սեգ Տուտեորդին, Օհան Օձնեցին
Հայրենյաց պաշտպան սուսերն օրհնեցին.
Այստեղ տակավին պապական խոսքով
Զրույց է անում ծեր շինականը,
35 Թե այս ձորերում պարսկատանջ բազկով
Կռիվ է արել Մամիկոնյանը.
Կռիվ է արել հավատի համար
Ընդդեմ անօրեն թըշնամիների,
Կառուցել ճերմակ, բարձրաքաշ տաճար
40 Իբրև պահապան իրան աշխարհի։
Եվ այսօր ապրում է այն քաջարի
Նախնյաց սերունդը հայրերի շինած
Հըրաշակամար, քանդված տաճարի
Մեծ զորությանը միայն ապավինած...
45 Բայց առուփախի պատմություններով
Սնվել են նրանց միտքն ու սրտերը,
Եվ ահա այսօր տեսնում ենք զորով
Նախնյաց բարքերի նսեմ ստվերը։

IV

Ո՜րքան սիրել եմ, չքնաղ հայրենիք,
50 Քո սար ու ձորում մեծացած մարդկանց
Սովորությունքը պարզ ու վայրենի -
Ատելը անկեղծ, սիրելը սրտանց.
Երբոր միասին զվարճանում են

Իրանց օջախում, թեկուզ չոր հացով,
55 Միասին վարում, միասին ցանում են,
Մխիթարվում են մի բախտի հուսով:
Նրանց հարկի տակ շատ ու շատ անգամ
Ես էլ եմ նրանց եղել խնդակից,
Երբոր, ցավները մոռացած, առ ժամ
60 Ուրախացել են արցունքի տակից:
Սիրել եմ, տանջվել նրանց ցավերով
Անարդար հասած ոխերիմ ձեռքից,
Եվ պատանեկան վստահ ցնորքով
Նրանց բողոքին լինել ձայնակից...
65 Եվ կաղաղակեմ, քանի տեսնում եմ
Քո շեմքի վերա օտարի հետքեր,
Եվ կըհառաչեմ, քանի ծխում են
Քո կրծքի վերա նորանոր վերքեր:
Ահա վերստին հարություն առար
70 Քո վարած կյանքով իմ հուզված մտքում –
Առավել տխուր, առավել խավար,
Քան ցույց տվածը պատմողի գրքում.–
Դեմքեր չարչարված նահատակների,
Հուսահատ տրտունջ մեռնող ձայների...
75 Ահա, և մթնում, կուչ եկած մնջիկ,
Լալիս է մենակ մի սիրուն աղջիկ:
Այսպես՝ այն սերը, որ փոթորկալի
Դու վառել ես քո որդոց սրտերում,
Անլուր տխրությամբ և անլռելի
80 Հեծում է նրանց բոլոր երգերում:

V

Զարաբա՛խտ աշխարհ, սիրով շունչ առած
Քո երգիչները քանի երգ հնչեն,
Մի՞թե խավարի բռնության տարած
Զոհերի ցավով պիտի հառաչեն:
85 Եվ ինչո՞ւ համար քո զավակները

Գեթ ընտանեկան չունեցան խնդում,
Քիչ էին դրսից հասած ցավերը,
Քիչ էր օտարը նրանց գիշատում...
Թշվառ, չիմացար ստեղծել դու կին,
90 Գիշերվա մթնում փնտրեցիր նրան,
Լռության կնիք դրիր շրթունքին,
Եվ պատրաստեցիր... տանջանք անբաժան:
Եվ տանջանքներով կապրես անկասկած,
Ինչպես որ մինչև այսօր ես ապրել,
95 Դրսից խոցոտված, ներսից խոցոտված,
Մի օր անարգված, մյուս օրն առավել...

VI

Ինչ ես կամենում դու, գոռոզ հոգի,
Մարդոց արցունքը քեզ դուր չէ գալիս.
Նեղ է քեզ համար սահմանը կյանքի...
100 Լուռ կաց, հանդարտվիր, և ցավ զգալիս,
Եթե կամենաս քո ալեկոծված
Զորությամբ դիպչել մարդկանց ականջին
Եվ նրանց սրտին ազդել անկասկած,
Կսկիծըդ հանձնիր սրտագետ երգչին,–
105 Մարդիկ ընկած են, նրանց չեն ազդում
Իմաստուն խոսքեր կյանքի հոգատար,
Եվ հարկավոր է հոգեկան շարժում –
Հեշտալուր ձայներ – պոետի քնար:

VII

Դե, թռիր ինձ հետ տենչով հրաթև,
110 Որպես թռչում է կարոտած սերը,
Մինչև կըտեսնես քեզանից ներքև
Խորին ձորերի սև անդունդները.
Եվ քո թույլ ոտքը թող գեթ մի անգամ

Շոշափե բարձունքն ազատ սարերի...
115 Աչքդ բաց արա, նայի՛ր, բարեկամ,
Ահա հին Լոռին հայոց աշխարհի:

VIII

Ողջո՛ւյն, վեհափառ լեռներ երկնահուպ,
Ո՞վ հրաշալիք հզոր Արարչի,
Եվ, ահա, հոգիս, ինչպես մի ասուպ,
120 Թռած գալիս է ձեր գլխին հանգչի.-
Այդ գագաթներին, որ ձյունապսակ
Փայլատակում են ընդդեմ աստղերին,
Այդ ամպերի մեջ, որ կուտակ-կուտակ
Ծանրանում են ձեր շքեղ ուսերին.
125 Այդ սառն ու հստակ աղբյուրների մոտ,
Որ ապառաժից հորդառատ բխում,
Ավազի վերա, կայտառ, ծիծաղկոտ
Երեխի նման կրկչում են, խաղում.
Պարզ առուների դալար ափերին,
130 Որ սահանքավոր իջնում են փրփրած,
Ուր որ կենսաշունչ հովը լեռնային
Մերթ վազվզում է, մերթ գգվում կամաց.
Ուր որ համասփյուռ բուրմունքը ծաղկի
Եվ ծրծմբային հոտը կայծակի
135 Խառնվում իրար և տարածվում են,
Խոռոչ ու ծործոր բռնում, լցնում են:

IX

Օրհնությա՛ն վայրեր, ուր առույգ կյանքի
Եվ զվարթության շունչն է միշտ խաղում,
Հոյակա՛պ երկիր, որ միայն երկնքի
140 Բարձրության մեջ ես խորհուրդդ խորհում:
Ուզում եմ պատմել, թե ինչ եմ սիրել,-
Բարձրացնել փառքը քո վսեմ անվան,

Ուզում եմ երգել և քեզ մեծարել,
Արժանի՛դ երգի և երանության.
145 Բայց թոթովանքը ապիկար լեզվի
Աստվածայինը չէ կարող հայտնել,
Եվ նա մնում է, որ պիտի ասվի,
Որ միմիայն քեզ է երկինքը տվել:
Ա՜խ, թե քո տված հոգուն ու սրտին
150 Տայիր և թարգման – հրաթափ լեզու,
Քեզ մտքից հանող քո թշվառ որդին
Քո վեհությանը կըլիներ հասու:

X

Դու մեզ ա՛յն ասա, շատախոս պոետ,
Քո սիրած երկրում ի՞նչպես են ապրում,
155 Թե հաճո՞ւշտ են արդյոք իրանց բախտի հետ
Մարդասիրության լուսավոր դարում:
– Դարձյալ սառնասիրտ հիշեցնում եք այն,
Որ համբերությունս մաշել է իսպառ.–
Ուզում եք լսել, թե գեղջուկ հեգ հայն
160 Ինչպես է հեծում աղքատ ու թշվառ:
Բայց ես չեմ պատմիլ նրա խրճիթում
Նույնիսկ սեփական աչքով տեսածը,
Թե ոնց է նրա կյանքը գիշատում
Խիստ ու չար բախտի հրրավիրածը.
165 Որի կրքերը վայրենի, անսանձ
Մարել են հուրը ոգելից սրտի,
Որ մեծարում է պոռնիկ գեղապանծ
Քան փրկությունը ողջ ժողովրդի...
Որի ամբարիշտ վարմունքի համար
170 Երբեք, ոչ ուրեք ես լռելու չեմ,
Թեկուզ և նրա ձեռքից չարաչար
Պատիժ ստանամ և մահով կորչեմ:
Կրպատմեմ սակայն պատահած մի դեպք,

Հին սովորությամբ, բայց նոր կատարված,
175 Եվ դուք կիմանաք, երբոր չըգիտեք,
Ինչպես են ապրում երկրում իմ սիրած։

XI

Այն ճոխ գավառում, ուր Զաթինդաղի
Ուսերից պայծառ արևը ծագում,
Իրիկնապահին Ղարախաչ սարի
180 Ետևն է շիկնած երեսը ծածկում,
Ուր որ Քոշաքար, Լալվար ու Դվալ,
Հսկա՛ պահնորդներ, իրանց շարքերով
Բարձրացած խրոխտ և լայնածավալ
Հսկում են երկրին անքուն աչքերով.
185 Ուր հին Դեբեդը յուր վտակներով,
Ամեն մի քարի մոտից անցնելիս,
Վառված վաղեմի հիշատակներով,
Մերթ զայրանում է, մերթ փղձկում-լալիս,
Անուշն ու Սարոն քույր-եղբոր նման,
190 Սարում ու դաշտում, մանուկ օրերից
Իրար հետ սիրով, խաղով մեծացան,
Եվ շատ են քաշել իրար մազերից։
Նրանց մայրերը հավասար օրհնում,
Հավասար սիրով խնամում էին,–
195 Մի օճորքի տակ և մի վրանում
Երեխաները մեծանում էին։
Մեծանում էին պարզ ու վայրենի,
Քոշաքար սարի քոչերի նման...

XII

Այստեղ հիշեցի ես այն օրերը,
200 Որ աննկատելի անց կացան արագ,
Եվ աղբերաշատ, կանաչ սարերը
Ինձ երևացին միաժամանակ։

Ծանր վեհությամբ ամպերի միջից
Նրանք նայում են ծանոթ հայացքով,
Այնտեղ քար, ծառ, աղբյուր... ճանաչում են ինձ
Մի սիրուն օրով, սիրելի անցքով:
Եվ, անձավներից քարաժայռերի,
Թավուտ անտառի լռին խորքերից,
Մանուկ հասակիս աղաղակների
Պարզ արձագանքը լսում եմ նորից:
Պարզիկա գիշեր. թաղիքի վրանից,
Ջմայլված սրնգի ձայնով թովչական,
Նայում եմ,- ահա երկինքն աստղալից
Կպչում է հեռու լերանց բարձրությանն:
Ուրիշ մի գիշեր, տխուր ու խավար,
Գողի ու գայլի գիշեր ահաբեր,
Եվ անքուն հովվի սաստող, ազդարար
Աղաղակները ականջումս են դեռ:
Իսկ առավոտյան աղմուկը բինի,-
Հաչոց, բառաչոց, խրխինջ ու գոչյուն...
Այն աղմուկի մեջ կիսավայրենի
Ինձ սիրելի է ամեն մի հնչյուն
Ես այն սարերումն էի երեխուց,
Այնտեղ տարփում էր մի զույգ սիրահար.
(Նրանցից մեկը մեռած է վաղուց,
Մյուսն աղոթում է մեռնելու համար):

XIII

Անցան տարիներ, նրանք մեծացան,
Մի օր էլ երբոր իրար նայեցին,
(Եվ այն հայացքը չէր սովորական)
Իրար հասկացան, բայց լուռ պահեցին:
Այն մի հայացքով պատանի Սարոն
Գրկեց Անուշի պատկերը հոգով,
Այնինչ գեղեցիկ Անուշը նրան

Սիրեց կուսական առաջին կրքով։
235 Բայց, հազա՛ր ափսոս, առաջին անգամ,
Երբ մարդու սրտում զարթնում է սերը,
Նրա հետ, իսկույն, սատանայական,
Հայտնըվում են և կյանքի հոգսերը։ –
Հասած Անուշին յուր ծնողները
240 Մոր ծնկան կողքին կապեցին կամաց,
Սարոն էլ վերցրեց իրանց շները,
Դագանակն ուսեց, ոչխարը գնաց։
Եվ այնուհետև սիրող սրտերի
Տանջվող կարոտին էլ սահման չըկար,
245 Օրերը նույնպես խիստ անտանելի
Տխուր ձանձրույթով թվացին երկար։

XIV

Չէ՛, ես չեմ ուզում բառերով չնչին
Խոսել սիրավառ սրտի բոցերից,
Եվ անպատում է սերը առաջին,
250 Նա վեր է մարդու բոլոր խոսքերից։
Եթե, բարեկամ, քեզ դեռ չեն այրած
Երկնքից ղարկած նետերը սիրու,
Կամ թե Աստծուց շնորհք չես առած
Մարդկանց սրտերը ներս թափանցելու,
255 Եվ դու չըգիտես թե ինչ է սերը,
Ինչպիսի քաղցըր տանջանք է անհուն.
Արի՛, բարձրացի՛ր դեպ այն սարերը,
Ուր որ ապրում է Անուշը սիրուն։
Արի՛, որ նրա խանդով բռնկած
260 Սև աչքերը սև հոնքերի տակից
Մի անգամ աչքիդ ընկնեին հանկարծ,
Որ սիրտդ դողար կրքոտ հայացքից.
Որ այն հայացքը փարատեր իսկույն
Այդ քո սրտամաշ տարակուսանքը,

265 Որ ճանաչեիր երջանկությունը,
Ապա տանջվելով սիրեիր կյանքը.
Եվ որ ասեիր,– իրավ, այս ծով-ծով
Աքչերը խլել են շողերն երկնքի,
Որ լուսավորեն իրանց հայացքով
270 Մռայլությունը մարդկային կյանքի:

XV

Հողեղեն հրեշտակ, դու, որ անպատճառ
Ոգևորության համար ես ծնվել,
Թե կարենայիր մեր անմխիթար
Կյանքին մի ազատ հայացքով նայել,
275 Դուցե չըհանգչեր մարդոց սրտերում
Անվերջ ապրելու սերն աստվածային,
Թերևս այսքան ցավեր անպատում
Այս ժողովրդի գլխին չըգային.–
Քեզ հետ, քո սիրով մարդը թև առած
280 Կարող է թեկուզ երկինքը թռչել,
Ինչպես առանց քեզ, չքնաղ արարած,
Վիճակված է միշտ հուսահատ կորչել:
Բայց ես ընդհատված իմ խոսքն ասեմ թող,
Եվ դու կիմանաս, որ այն աչքերի
285 Հրապուրանքը հոգի կախարդող
Հանգչում է ծովում արտասուքների:

XVI

Ժամանակի հետ միանգամ վառված
Սերը զորացավ նորանոր զարկով,
Եվ ժամանակ էր, որ սիրահարված
290 Աղջիկն ու տղան միանան կարգով:
Բայց ի՞նչ եմ ասում,– Քոշաքար սարի
Հովիվը կո՞ւ է, գնա հորն ասի,
Որ իրան համար հարսնացու ճարի

Կամ ծնողներից Անուշին ուզի.
295 Կամ թե այն ազատ լերանց հովվուհին –
Սիրուն Անուշը յուր մաքուր սիրով
Չի՞ հրապուրում խանդավառ հովվին.
Եվ արժանի՞ չէ, որ փախցնեն զորով:

XVII

Այսպես է, այո՛, իգիթների մեջ,
300 Որ խնամախոսի քար չունեն շեմքում,
Եվ նրանց սերը թեև միշտ անշեջ,
Սակայն լուռ է և բանտարկված սրտում.
Թե քաջ տղա է՝ շնորհքը ցույց տա –
Սրտի սիրածին թող փախցնի տանի,
305 Որ և լսողը ասի, թե՝ ահա
Մի մարդ պսակի, սիրո արժանի:

XVIII

Նրանց պապերը մեծ Կուրի ափին
Խիստ հրճվում էին, երբ իրանց արքան,
Սիրուն, սևաթույր նժույգը տակին,
310 Անցավ Կուր գետը արծվի նման.
Լեռնականների բանակի դիմաց
Զգեց ոսկեօղ շիկափոկ պարանն,
Բռնեց աչագեղ դստերն ալանաց
Եվ արագ հասցրեց յուր կարմիր վրանն.
315 Իսկ բանաստեղծը Գողթան աշխարքի
Երգ հյուսեց աշխույժ, երգեց ու լռեց,
Բայց ժողովրդին տիրոջ արարքի
Հռչակը երկար դեռ ոգևորեց:

XIX

Շատ օր չէ անցել, կար մի հարսանիք,
320 Զվարճանում էր ամբոխը գյուղի,

Սարերից իջել հովիվ պատանիք
Աղջկա են նայում, բայց գաղտագողի:
Եվ պարից հետո լայն հրապարակ
Բաց արին մեջըն այն հարսանքատան,
225 Զոփուր զուռնաչին միաժամանակ
Սկսեց կոխի ածել յուր զուռնան:
Եվ ձայն են տալիս «քաշի՛ հա, քաշի՛...»
Եվ դուրս քաշեցին հազիվ երկուսին.
Սարոն էր մեկըն, իսկ մյուսն Անուշի
330 Հարազատ եղբայր – գառնարած Մոսին:
Հարսանքավորը պարսպի նման
Կանգնած բաժանվեց երկու բանակի,
Եվ յուրաքանչյուրն ընտրեց փահլևան
Ու ոգևորեց տղերանց մեկին:
335 Գոռում են, գոռում երկու բանակից,–
«Սրտապինդ կացե՛ք, մի՛ վախեք տղերք»,
Իսկ նորահարսի փարդի քամակից
Նայում են անթիվ հարսն ու աղջկերք:
Եվ պտտվում են լայն հրապարակում
340 Արջերի նման երկու հովիվներ,
Իսկ ժողովուրդը դեռ աղաղակում,
Քաջալերում է «ջա՛ն փահլևաններ»:
Եվ տաքանում են տղերքը սաստիկ,
Զուխի քղանցքը պինդ հավաքելով
345 Ջարկում են գետնին ձեռքերը հաստլիկ,
Որ ցամաքեցնեն քրտինքը հողով:
Երակների մեջ կրակ է վազում,
Իսկ ականջները կարմրել են արդեն,
Կատաղի թափով իրար են հասնում,
350 Հենց որտեղ որ է միմյանց կըջարդեն...
Ընկերների մեջ օրենք է շատ հին,
Որ այսպիսի մեծ բազմության միջում
Ջըպետք է գետնին զարկել ընկերին,
Այլ պետք է անել հարկավոր զիջում:

355 Մոռացավ Սարոն օրենքն ու աշխարք,
Երբ կանանց միջին Անուշին տեսավ.
Սիրտը սկսեց բաբախել արագ,
Աչքերն արյունով իսկույն լցվեցավ.
Եվ այսպես, մինչդեռ անհոգ էր Մոսին,
360 Սարոն յուր բոլոր ուժը հավաքեց,
Ուջեն քաշելով, հանկարծ ընկերին
Գետին տապալեց ու կրծքին շոքեց:
Ամբոխը թափվեց հարայ-հրոցով,
Վեր թոցրեց երկու փահլևաններին,
365 Եվ ուրախության աղմուկ-գոռոցով
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:
Ցնծության ձայներ, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու օճորք,
Իսկ Նորահարսի փարդի քամակից
370 Նայում են, գովում հարսն ու աղջկերք:
Զայրացած Մոսին դեռ չէր հանդարտվում,
– Թող գա, ասում էր, որ բռնենք նորից,
Թե չէ նամարդը, արևս եմ երդվում,
Չի ազատվելու երբեք իմ սրից:
375 Եվ թագավորի թախտիցը Սարոն
Պարգև ստացավ մի կարմիր խնձոր,
Իսկ Մոսին ուրախ հարսանքատնից
Դուրս գնաց իսկույն սաստիկ վիրավոր:

XX

Եվ Մոսին ուրախ հարսանքատնից
380 Դուրս գնաց իսկույն սաստիկ վիրավոր.
Արյուն էր կաթում սևակնած սրտից,
Գնում էր շտապ և քայլամոլոր:
«Ամոթ քեզ Մոսի... թուք ու նախատինք...
Ամոթ քեզ նման գոված իդիթին...
385 Մի անունդ հիշիր, մի բոյիդ մտիկ...

Դեռ քո թիկունքը չէր տեսել գետին...
Ինչպես վայր ընկար դու սարի նման,
Երբ որ նայում էր ողջ գյուղը կանգնած...
Դո՜ւ... կո՜ւչ գաս տակին Սարոյի ծնկան,
390 Նրանից հետո երևաս կանա՞նց...
Այս բանն եկե՞լ էր իսկի քո գլխին,–
Ծաղրատեղ դարձար աշխարքի միջին...
Դե մեռի՛ր էլի... գետինը մտի՛ր...
Տղա չես լինիլ, եթե կուլ տվիր...»
395 Մտմտում էր նա և ատամները
Կրճըտացնելով մահ էր որոճում,
Հանկարծ բաց արավ արնոտ աչքերը
Գյուղից հեռացած, անտառի միջում:

XXI

Այն օրից սկսած թշնամի դարձան
400 Երկու ընկերներն այս դեպքի համար,
Բարեկամներըն շատ չարչարվեցան,
Բայց հաշտեցնելու չըգտան հնար:
Կամակոր Մոսին այլևս ինչ խելք էր,
Որ դեռ աչքը բաց, վրեժը սրտում,
405 Իրան հարազատ քրոջը տեսներ
Անհաշտ թշնամու – Սարոյի գրկում:
Գուցե գիշերս էլ խանչալը հանած
Քրոջն սպառնում է նա, թե կըսպանի,
Եթե Սարոյի սիրով պահպանած
410 Անունը իրան սրտից չըհանի:
Ո՞վ գիտե, գուցե հենց այս գիշեր էլ
Թշնամիները անհաշտ ու համառ
Մեկմեկու հոտից ոչխար են քշել,
Միմյանցից վրեժ առնելու համար:
415 Կարող է նաև պատահել հաճախ,
Որ մեկի դեզը – արդյունքը հնձի,

Գիշերվա ժամին հանկարծ կրակված,
Երկնահաս բոցով աստղերը խանձի։

XXII

Արդեն վառված է սերը կուսական
420 Եվ տոչորում է մատաղ սրտերը,
Էլ չի կարելի սառն ատելության
Շնչով հանգցնել նորա բոցերը։
Իսկ եթե մահը հասնի վաղաժամ,
Նա դարձյալ կապրի պոետի մտքում,
425 Եվ երկար օրեր վառ ու անթարշամ
Կըմնա նորա սիրտ այրող երգում։
Եվ կըգան օրեր, երբ երջանկությունը
Կըթագավորի աշխարքի վերա,
Ցավ ու տանջանքի երգչի անունը
430 Թող այնուհետև երկրից վերանա.–
Տխուր ձայները նորա պատմության
Զմռայլեցնեն զվարթ դեմքերը,
Եվ թող բախտավոր մարդիկ չիմանան,
Թե մի օր այսպես անբախտ էր սերը։

Մասն երկրորդ

XXIII

435 Դեռևս գիշեր կա. անուշիկ քնով
Քնած է գյուղը անոսր խավարում,
Եվ կախարդական տխուր ձայներով
Օրորք է ասում Դեբեդը ձորում։
Նիրհում են աստղերն, և աստեղազարդ
440 Երկինքը ջինջ է, թափանցիկ, անհուն,
Կապույտ եթերքում սահում է հանդարտ
Թմրած ու դանդաղ լուսինը անքուն.
Եվ, Ղարախաչի կատարին հասած,

Հանկարծ նայելով մութն արևելքին,
445 Լուսաստղը տեսավ,– ահից դալկացած
Շտապեց թաքչել սարի քամակին:

XXIV

Այս խորհրդավոր ժամին գիշերվան,
Երբ բաժանվում է լույսը խավարից
Եվ քնած երկրին հավը մի բերան
450 Լուսո ավետիք տվեց յուր թառից,
Գյուղի մի ծայրում մի բան անցկացավ,–
Շները խմբով սաստիկ հաչեցին,
Միասին մի խուլ «հեյ հեյ» լսվեցավ.
Եվ չէր լուսացել, հավար կանչեցին:

XXV

455 Դեռ գորշ ամպերը վաղ առավոտյան
Նոր են ջուր խմած ձորից բարձրանում,
Քարոտ թիկունքից Զաթինդաղ լերան
Նոր է արևը պռունկը հանում,
Գյուղիցը մոտիկ քարափի գլխին
460 Մի խումբ իգիթներ, ահա զայրացած,
Հրացանները բռնած ձեռքներին,
Խոսում են տաք-տաք և նայում են ցած:
Գյուղումն աղմուկ է և իրարանցում,
Կրտերներին են կանայք հավաքված,
465 Տղերքը դեպի քարափն են վազում
Հրացանների կիսերից բռնած:

XXVI

Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց խռոված տղերանց միջին,
Մատը դեպի ձորը մեկնելով հանդարտ

470 Այսպես խոսեցավ զոռ տալով չիբխին.-
«Երբոր հաչեցին շներն այս գիշեր,-
Վաղուց էր անցել գիշերվան կեսը,-
Երկու մարդկային սև կերպարանքներ
Հողերովն եկան, ցած իջան դեսը»:
475 Այս որ լսեցին, դես ու դեն ցրված
Տղերքը ճեպով ձորը ներս մտան,
Եվ մըտի տակին, ճամփիցը ծուված
Երկու մարդու թարմ ոտնատեղ գտան:
- «Այն անզգամինն է այս ոտնատեղը,
480 Տեսնո՞ւմ եք, ինչպես հողում նամակուշտ
Խորն է գնացել նրա պճեղը,
Իսկ տրխավորը Սարոյինն անշուշտ»:

XXVII

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տվեց
485 Հովվիվ Սարոյին գտնելու համար,
Որ սարիցն եկավ Անուշին փախցրեց:
Մի ամսից հետո վերադարձավ տուն՝
Գովելով նրա արարքը ճարպիկ,-
«Հալալ է տղին,- ա՛յ իգիթություն,
490 Ահա, թե ինչպես կըփախցնեն աղջիկ»:
Մենակ Անուշի եղբայրը - Մոսին
Չըվերադարձավ, և երդվել էր նա,
Որ, ուր որ լինին, նրանց միասին
Գտնի կոտորի, սիրտը հովանա:

XXVIII

495 Եվ գյուղացին երգ հորինեց,
Գովեց հովվին ու յարին,
Եվ երգելով տարաձայնեց
Այս արկածը սիրային:

Երգեց սիրո հալածանքը
500 Եվ արարքը սիրողի,
Եվ կամապաշտ եղբոր ջանքը,
Բարկությունը անտեղի։
Երգեց հայրը, երգեց որդին,
Իրան տանը և հանդում...։
505 Եվ ամեն անցք յուր հետնորդին
Նա երգով է ավանդում։

XXIX

Անցավ մի ամիսն. և ահա մի օր
Քաղվորների հետ, իրիկնապահին
Անուշը եկավ տխուր, գլխակոր.
510 Հարևանությունն հավաքվեց գլխին։
Աստված խնայեց.– նրա եղբայրը
Դեռևս հանդից չէր վերադարձել,
Իսկ խոժոռադեմ ալևոր հայրը
Սկսեց փրփրած թքել-անիծել.–
515 «Դուրս գնա՛, կորի՛ր, ա՛յ լիրբ, անզգամ,
Սև ու սուգ լինի թագ ու պսակըդ,
Կորի՛ր, չերևաս աչքիս մյուս անգամ,
Գետինը մտնի երկար հասակըդ...
Տեսար, որ նրան ատում է Մոսին,
520 Տեսար չեն ուզում նրան հերնումերդ,
Դու քանի՞ գլուխ ունես քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նրա հետ...»
Խռնված գյուղացիք կտուրից իջան
Հանգստացնելու բարկությունը հոր,
525 Հայտնվեց նույնպես գյուղի քահանան,
Մի պատկառելի հսկա ալևոր։
Անուշը կանանց խմբի մեջ ընկած
Դեռ հեկեկում էր, լալիս դառնագին,
Եվ ժողովուրդը տանից դուրս գնաց –
530 Խոստովանեցնի տերտերն Անուշին։

XXX

Մի կարճ քարոզից հետո քահանան
Սիրուն Անուշին հորդորեց այսպես.–
«Արդյոք ճշմարիտ սիրո՞ւմ ես նրան,
Թե խաբեց զոռով փախցրեց նա քեզ.
Մի՛ վախիր, ասա՛, եթե սիրում ես,
Ձեզ կըպսակեմ, միամիտ մնա,
Եթե չես սիրում ինձ հայտնիր նույնպես,
Որ հանցավորը պատիժն ստանա»:
Երեսը ծածկած սաստիկ ամոթից,
Լցված աչքերը գետին խոնարհած,
Անուշը կամաց, ձեռքերի տակից,
Խոսաց դողալով, իրան կորցրած.
«Իմ կամքով փախա... սիրում եմ, տերտեր...
Չէ՞ որ ասացիր մեզ կըպսակես...»

– Այն ո՞վ էր արդյոք, տեսեք ինչ մարդ էր,
Որ դուրսը հանկարծ աղմկեց այսպես.
Դուռը շառաչեց, մարդիկ խուժեցին,
Եվ հառաջ անցավ մի թուխ պատանի,
Գունատված հարցրեց գյուղացիներին.–
«Այստեղ չըհասավ ձայնն հրացանի»:
Զարհուրեց ամբոխն և աղաղակեց
Խառըն ձայներով, ինչ եղավ ձորում...
Ինչ հրացան էր... ինչո՞ւ տըրաքեց...
Շո՛ւտ արա, ասա՛, էլ ինչ ես լռում...»
Պատանին խոսաց – «Հենց այսօր ծեքին
Մոսին Սարոյին ձորում պատահեց...
Գնդակը դիպավ Սարոյի կրծքին,
Թիկունքիցն անցավ». ասաց ու լռեց:
Կարծես մի կրծքից ողջ միաբերան
Բացականչեցին ձայնով տրտմության.
«Ա՛յ, ափսոս իգիթ, որ կորավ իզուր...
Անո՛ւշ, Անո՛ւշ, ջուր հասցրե՛ք, ջո՛ւր...»

XXXI

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ
Երկնքի մթնած ամպերից իջներ,
565 Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ։
Ցավից տաքացած ոչինչ չեն հարցնում,
Թռչում են, որպես ահից հալածված
Եվ նրանց առջև ահռելի բացվում,
570 Թշշում է ձորը արյունով լցված։
Նրանց ետևից տրըմբտրըմբալով,
Ալևոր միրքով գնում է ծերը,
Ոտքերը սուր-սուր քարերին տալով,
Շուտ-շուտ սրբելով ջրոտ աչքերը։
575 Ծերունու հոգին ալեկոծում է
Արդեն կատարված դեպքը ցավալի
Եվ դառն աղետը, որ սպասում է,–
Վրեժխնդրությունն անխուսափելի...։
Գյուղը դատարկվեց մի ակնթարթում,
580 Քարափի գլխին կանգնեց անհամբեր.
Լուռ, սրտատրոփ ականջ են դնում,
Նայում են ներքև. ձայն չէ գալիս դեռ...
Միայն Զորագետն է անդնդում հուզված
Խլաձայն ողբով վազում դեպի ցած։

XXXII

585 Եվ մարդասպանը դուրս եկավ ձորից.
Մոլոր է հաղթական նրա քայլվածքը,
Սարսափ է ընկնում արնոտ աչքերից
Եվ խառնված է հպարտ հայացքը։
Առանց նայելու մարդկանց երեսին,
590 Առանց խոսալու, սևակնած, դաժան,
Մոտեցավ սրահին, կախ տվեց սնին
Սև հրացանը սև օձի նման։

Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,
Ոչ ոք ծպըտալ չի համարձակվում,
595 Միմիայն մեկը անգուսպ կատաղած
Աղաղակում է, երեսը պոկում։
Մեռած իգիթի ծեր մայրիկն է նա,
Հավար է կանչում, բարձրաձայն լալիս.
Տարաբախտ ծնող, վազում է ահա,
600 Զորիցն է նրա գոռոցը գալիս։

XXXIII

Սգավոր կանայք նորա ետևից
«Հարայ» կանչելով ձորը վազեցին,
Իրանց կորցրածն էլ հիշելով նորից,
Դիակի շուրջը կարգով շարվեցին։
605 Իգիթին վայել սրտառուչ ողբով
Լացուկոծ արին ձեն-ձենի տված,
Տղերքն էլ տրտում, կորացրած գլխով
Մնացին մոտիկ քարերին նստած։
Ողբացին անշունչ դիակի վերա
610 Անտեր մնացած ոչխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին նորա
Անճար մնացած խեղճ յարի մասին.
Եվ նրա մասին, որ ընկերները
Հանդը գնալիս Սարո կըկանչեն,
615 Որ սարից փախած սուված շները
Պիտի կտերը ոռնան, կըլանչեն։
Ծանըր չոմբախը, գլուխը մեխած,
Օճորքում դրած պիտի մրոտի,
Երկայն խանչալը պատիցը կախած,
620 Պատենում մնա և ժանգը պատի.
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գնալ առանց Սարոյի,
Սև շորեր հագած կընստի տանը,

Տեսած օրերը միտը կբերի...
625 Եվ յուրաքանչյուր հիշողությունը
Կտրատում էին սիրտը խեղճ նանի,
Եվ աղաչում էր վշտալի կինը –
Մի անգամ խոսա, աչքը բաց անի.
Բայց չէին բացվում որդու աչքերը,
630 Իսկ շրթունքները չորացել էին,
Նրանց արանքից բաց ատամները
Սպիտակ շարքերով երևում էին:
Եվ ողջ մայրական անխելք ու տկար
Աղաչանքներըն ու հեկեկանքը
635 Անկարող եղան վերստին բառնալ
Հավիտյան դրված մահու փականքը:
Ապա կատաղած հանդուգն անեծքով
Նա հարձակվեցավ երկնքի դիմաց,–
Եվ հայհոյում էր և կուրծքը կոծում.
640 Եվ ողբում էին ձեն-ձենի տված:
Գիշերը հասավ, սաստկացավ մութը,
Եվ նվաղեցան նրանց ձայները,
Բոլորը լռեց, մենակ Դեբեդը
Անդուլ սգում էր նաև գիշերը:
645 Սգվոր գետը –
Ծեր Դեբեդը,
Սիրտը քրքրած,
Ջուրը փրփրած,
Քարոտ ափին –
650 Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է:

XXXIV

Արդեն մի քանի օրեր են անցել,
Ջորումն ընկած է դիակը հովվի,

655 Ընկած է գետնին, անթաղ է մնացել,
Եվ չի ցամաքում աչքը սգվորի։
Իգիթը անթաղ ընկած է ձորում։
Էլ չի տեսնելու նա հանգստարան,-
Հայրական գյուղին սարսափ է տիրում,
660 Բոլոր գյուղացիք մերժում են նրան։ -
Մի դեղնաթիկունք ճերմակ ձիավոր
Գիշերն երազում հայտնել է մեկին,
Որ զգուշանան Աստծո ցասումից -
Գյուղը չբերեն այն ավազակին։

XXXV

665 Եվ մի քանի ընկեր տղերք
Դեբեդի ճոխ ափերին
Փոս փորեցին ու սրտաբեկ
Ամփոփեցին հովվի դին։
Ծաղիկները այս հանդիսին
670 Բուրմունք տվին դյուրեկան,
Զորագետն էլ ահեղաձայն
Երգեց վսեմ շարական.
Եվ տղերքը տխուր ու լուռ
Վերադարձան դարձյալ տուն,
675 Զորում թողած մի սև բլուր -
Մի գերեզման անանուն։

XXXVI

Տխուր զրույցը տխրաբեր անցքի
Այստեղ մարդկանց համար վերջանում,
Սակայն զգայուն սիրտը պոետի
680 Տակավին ուրիշ վիշտ է վրդովում։
Եվ ինչ.- մի սուգ է մեռելին բաժին
Եվ մի ողորմի, նրանից ավել,
Թե չի մոռացվում, և սրտիդ միջին

Կարող ես նրան հավիտյան պահել.
685 Բայց և նրա հետ, մտքից չըհանես,
Նայիր այնտեղին, ուր ապրել է նա,
Տես ում է թողել, ումնից բաժանվեց,
Եվ ով է այնտեղ չարչարվում հիմա։ –

XXXVII

Ինչո՞ւ ես, ո՛վ կույս, դու այդքան տրտում.
690 Այդ ինչ թախիծ է քո դեմքը պատում,
Կամ ինչ նախատինք ճակատդ ամոթխած
կորացնում է ցած։
Ինչո՞ւ ես, ո՛վ կույս, այդպես անտարբեր,
Երբ որ քո սիրով բյուրավոր սրտեր
695 Վառված ճգնում են ոտքերիդ փարել,
չըգիտե՞ս սիրել...
Ահա գարունը, ծաղկունքը բացված,
Ինչո՞ւ քո սիրտը մնում է փակված
Եվ քո ժպիտը չէ բացվում, ո՛վ կույս,
700 որպես արշալույս։
Ինչո՞ւ ցամաքած շրթունքդ ոչ սեր,
Այլ մրմնջում են մահու աղոթքներ,
Թոշնում է դեմքիդ արտոսրից այրված
վարդը նորաբաց։
705 Տխուր աչքերդ, որ մեզ չեն նայում,
Արդյոք ո՞ր երկրում ինչ են փայփայում –
Վաղեմի ցնո՞րք... կարոտած պատկե՞ր...
թե ուրիշ – նոր սեր...
Ի՞նչ ես մտածում այդպես ուշաբարձ
710 Եվ զարհուրելի ծիծաղում հանկարծ...
Ինչո՞ւ ես լալիս... Այդ ո՞ւր ես գնում...
Ի՞նչ ես որոնում...

XXXVIII

Անլռելի վըշվշում է
Պղտոր ջուրը Դեբեդի,
715 Նրա ափին կանաչում է
Անշուք շիրիմն իգիթի:
Եվ այն բոլոր ծաղկունքն աճած
Նորա ըղձերն են թաղած,
Յուր նորահաս յարի աչաց
720 Արտասուքով ողողած:
Եվ հոսում են գիշեր-ցերեկ
Արցունքները հեգ յարի,
Բայց անտարբեր տղան երբեք
Չի երևում... մխիթարի:
725 Վշվշում է գետը – վուշ, վուշ
Եվ հորձանք է տալիս հորդ,
Եվ կանչում է «արի Անուշ,
Արի տանեմ յարիդ մոտ»:

Հեղինակի ծանոթագրությունները (ԲՄԼ)

1 Ամպշող – արևի կամ լուսնի աղոտ լուսավորությունը ամպի տակից:
242 Դագանակ – մահակ, հովվական ցուպ:
292 Կռո – լեռնականները կռո կոչում են դաշտաբնակներին, լոռեցիք մասնավորապես շիրակացիներին. այս բառով «անարի, վախկոտ» են հասկանում:
326 Կոխ – գոտեմարտ:
333 Փահլևան – ըմբիշ:
337 Փարդա – վարագույր. Լոռու գյուղերում, երբ որ հարսանիքը լինում է մի գլխատան (մեծ սենյակի) մեջ, կանայքը տղամարդկանցից բաժանվում են մի վարագույրով, որի ետևը նստում է և նորահարսը:
361 Ուջա քաշելը – ախոյանին հաղթելու հնարքներից մեկն է,

որ կատարվում է ոտի ճարպիկ շարժումով (ուջա – ազդր):

366 Թախտ – այստեղ գործ է ածվում գահի մտքով, որովհետև նրա վերա նստում է թագավորը (Նորափեսան):

373 Նամարդ – տմարդի, նախատական բառերից ամենախիստն է լեռնականների մեջ:

458 Պռունկ – շուրթ, ծայր:

470 Ջիբուխ – ծխաքարշ:

474 Հողեր – գյուղերում առհասարակ կոչվում են վարելահողերը, արտատեղերը:

Ա ինքնագիր
(ԳԱԹ ԹՖ №153(5գ)

ԱՆՈՒՇ

Նախերգանք

[Ո՛վ, որ ներշընչված լեռների երգչին
Հայտնըվում ես միշտ հոգով կարեկից,
Խոսում ես-խոսում սրրտի ականջին,
Ցավեր ես հարցնում նըրա աշխարհից.

5 Որ բերում ես ողջ աչքի հանդիման,
Սիրտը մորմոքում, վիշտը բորբոքում,
Քե՛զ, [կարեկցության] ոգիդ աննըման,
Քեզ համար եմ ես իմ երգը երգում –

Որ արար աշխարհ գիտես հայրենիք
10 Ու չես ճանաչում ոչ օտար, ոչ խորթ,
Ուղարկիր հոգուս քո լույսն երջանիկ,
Տըխուր երգերիս եղիր առաջնորդ]:

I

[Դեհ արի թռչենք տենչով հըրաթև,
Ինչպես թըռչում է կարոտած սերը,
15 Մինչև կըտեսնես քեզանից ներքև
Խոր-խոր ձորերի [անդունդքը մըթին]:
Եվ քո ոտքերը թող գեթ միանգամ
Շոշափեն բարձունքն այն վեհ սարերի.

---

5 Որ բերում ես ողջ աչքերի հառաջ,
7 Ո՛վ կարեկցության ոգիդ աննըման,
9-11 Ով որ ողջ աշխարհ գիտես հայրենիք
Եվ չես ճանաչում ոչ օտար, ոչ խորթ,
Ուղարկիր հոգուս քո լույսդ անաղոտ,
13 Դեհ թըռիր ինձ հետ տենչով հըրաթև,
16 Լոռու խոր-խոր ձորերը <.....>

Աչքերդ բաց արա – քնքուշ բարեկամ –
20 Ահա հայրենիքն իմ [լուռ] ցավերի։

II

[Ողջո՛ւյն, վեհափառ լեռներ երկնահուպ,
Ո՛վ հրաշալիք հզոր Արարչի,
Եվ ահա հոգիս, ինչպես մի ասուպ,
Թռռած գալիս է ձեր գլխին հանգչի։
25 Այդ գագաթներին, որ հպարտ ու վեհ
Ցոլում են, փայլում ընդդեմ աստղերին,
Այդ մութ ամպերում, որ [կուտակ-կուտակ]
[Գալիս] են բազմում ձեր ճոխ ուսերին,
Այդ սառն ու հրստակ աղբյուրների մոտ,
30 Որ ժայռի [տակից] հորդառատ բրխում,
Դալարի միջին կայտառ, ծիծաղկոտ,
Երեխի նման խնդում են, խաղում,
[Պարզ] ջրերի դալար ափերին
Որ [երկնի սահանքով] իջնում են փրփրած,
35 Ուր որ կենսաշունչ հովը լեռնային
Մերթ խաղս է առնում, մերթ գգվում կամաց.
Ուր որ համասփյուռ բուրմունքը ծաղկի
Եվ ծրծրմբային հոտը կայծակի
Խառնվում իրար [և] տարածվում են,
40 Խոռոչ ու ծործոր բռնում, լցնում են]։

25-26	Այդ գագաթներին, որ ձյունասլքսակ Փայլատակում են ընդդեմ աստղերին,
28	Ծանրանում են ձեր շքեղ ուսերին,
30-32	Որ սահանքո<տ> ժայռից հորդառատ բրխում, Ավազի վրա կայտառ, ծիծաղկոտ, Երեխի նման կրկչում են, խաղում,
24-40 տողերի դիմաց	«не надо»
33	Պարզ առուների դալար ափերին
36	Մերթ վազվզում է, մերթ գգվում կամաց

Իրար խառնվում
[Աշխարհք են բրռնում]:

III

Էյ կանաչ սարեր, էյ հին ծանոթներ,
Ահա ձեզ տեսա ու միտրս ընկան
[Թովիչ գիշերներ, [երջանիկ] օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չկան...]
Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
Որ անցած գարնան կային ձեր լանջում,
Անցել ձեր գլխի հերվան ձյունի պես,
Բայց ես կարոտած – նրանց եմ կանչում:
Ողջո՜ւյն ձեզ, կյանքիս առաջին հուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թռչուն կարոտով փընտրում ձոր ու լեռ,
Տխուր ձայներով [կանչում] աղեկեզ:
Դուրս եկեք [կըրկին] շիրմից, խավարից,
Վեր կացեք տեսնեմ, շոշափեմ, լըսեմ,
Կյանքով շընչեցե՜ք, ապրեցե՜ք նորից,
Լըցրեք պոետի հաճույքը վրսեմ:

---

42 տողից հետո, աջ լուսանցքում՝
[(Ծանրը վեհությամբ ամպերի միջից նրանք <.....>)]
50 ա Սակայն ես եկել – նրանց եմ կանչում.
բ Բայց ես տակավին նրանց եմ կանչում.
գ Բայց հոգիս դեռ <նրանց է կանչում>.
դ Բայց ես վերսին ուզում եմ ապրել.
ե Ուզում եմ ապրել այն երազում.
51 ա Ողջո՜ւյն ձեզ, անգին լուռ հիշատակներ,
բ Ողջո՜ւյն, իմ կյանքի թանկագին օրեր,
գ Ողջո՜ւյն, իմ կյանքի առաջին հուշեր,
56 ա Դուրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լըսեմ
բ Եկեք ձեզ տեսնեմ, շոշափեմ, լըսեմ

IV

[Եվ մութ այրերից [մամռոտ] ժայռերի,
60 Թավուտ ծըմակի [լըռին] խորքերից
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում եմ նորից...
Եվ նորից ահա ժպտում են սրտիս,
Լցնում են հոգիս դեմքերը ծանոթ...
65 Պարզիկա գիշեր. թաղիքի վրանից,
[Զմայլած] սրընգի սույլով թռվչական,
[Նայում եմ, ահա] երկինքն աստղալից
[Կրպչում է հեռու լերանց բարձրության]:
Ուրիշ մի գիշեր – տխո՛ւր ու խավար,
70 Գողի ու գայլի գիշեր ահաբեր...
Եվ անքուն հովվի սաստող, ազդարար
Հուժկու ձայները [ականջումս են դեռ]:
[Իսկ առավոտյան աղմուկը բինի
Հաչոց, բառաչոց, խըրխինջ ու գոչյուն...

---

59 Եվ անձավներից մամռոտ ժայռերի
60 ա Թավուտ անտառի լըռին խորքերից
բ Թավուտ ծըմակի կեսմութ խորքերից
61 ա Մանուկ հասակիս աղաղակների
բ Մանուկ հասակիս աշխույժ ձայների
գ Մանուկ հասակիս զվարթ ձայների
62 Արձագանքը պարզ լըսում եմ նորից...
63-64 ա Հնչուն ծիծաղի շեշտերն հարազատ,
Սիրելի աչքեր և դեմքեր ծանոթ
Եվ այնքան սիրով, սրտիս մեջ ու մոտ:
բ Եվ սըրտիս ահա ժպտում են նորից
Դեմքերը ծանոթ...
գ Եվ ահա սըրտիս ժպտում են նորից
Դեմքերն հարազատ...
66 Զմայլած սրընգի ձայնով թռվչական,
68 Ինձ թոցնում է <...>
72 ա Աղաղակները ականջումս են դեռ:
բ Հեյհեյն ականջումս են դեռ:

75 Այն աղմուկի մեջ զվարթ, վայրենի
Ծանոթ է հոգուս ամեն մի հընչյուն:
Սո՛ւս. ականջ արա – հովիվն է երգում:
Ա՜խ, ձենիդ մատաղ, այ իգիթ չոբան.
Ապրում է, ապրո՛ւմ այդ ձայնն իմ հոգում,
80 Այդ ձայնը հուժկու, սարի պահապան:
Եվ լըսել եմ ես, երբ մութ գիշերով
Տարափ վըշշալիս, կայծակ ճայթելիս
Որոտում էր նա ահեղ շեշտերով
<...> տագնապին մեզ սիրտ էր տալիս:
85 [Լըսել եմ] երբ սարերում
Հոսում էր անհոգ վըտակի նըման.
Լսել [եմ] զվարթ – անհոգ օրերում
Երբոր նա «բերին»,
Ջի՛լ, երկար ու ձիգ, [կանչում էր] ծորում,
90 Բերա էր կանչում իրան գառներին:
Բայց այսօր տխուր է հնչում].

Ես այն սարերումն էի երեխուց
[Ես այն օրհնված սարերն եմ <1 անընթ.>
Քեղն ու ղանձիլը, ուր <1 անընթ.> բուսնում,

75-77 Այն թարմ ժխորում զվարթ, վայրենի
Ախորժ է հոգուս ամեն մի հընչյուն:
Եվ, ահա, լըսիր... հովիվն է երգում:
83 Որոտում էր նա ահեղ ձայներով
85 Լըսել եմ երբոր սարերի վրա
91 տողից հետո՝
Լսում եմ ահա, դարձյալ նրա
Սարերի լանջում,
Ահա զվարթ, անուշ
Երգում է կանաչ լեռների լանջում,
Բայց ինչո՞ւ այսօր տխուր է հընչում.

95 Փթթում են փարթամ և մարդահասակ
Կանգնում են դալար. ուր տեսակ-տեսակ
Ալվան ծաղիկներ անուշ հոտերով,
Զուգված-զարդարված կանաչ խոտերով,
Սոսում-նազում են խնկահոտ բուրում:
100 Ես այն երկնագահ սարերն եմ սիրում,
Ես այն սարերի ալվան ու քրքում
Անմա<հա>կան ծաղկունքն <եմ> երգում,
Այն ծաղիկներից [ամենից լավը],
Նրանց ամենից անուշն ու քնքույշը –
105 Սարերի դուստր – [սիրուն] Անուշը,
Եվ նրա Սարոն – խաղի ընկերը,
Նրանց վաղամեռ – ապաբախտ սերը:

Ինչպես սարերի գլխից
Անցնում են ամպերն իրար ետևից
110 Երազի նման տարիներն անցան,
Նրանք բոյ առան – նրանք մեծացան,
Մեկի երեսին աղվամազ բուսավ,

---

96 Կանգնում են շքեղ – ուր տեսակ-տեսակ
98-100 Փռվում են զուգված կանաչ խոտերով,
Նազով սոսում են, խնկահոտ բուրում
Ես այն օրհնված սարերն եմ սիրում,
102 Վառ ծաղիկներ եմ երգում,
104 Ամենից շքեղն <ու> քնքույշը –
108 տողի դիմաց, աջ լուսանցքում
110 ա Պտտվում են – աննկատելի անցնում
Բամբակ ամպերը ոսկի:
բ Աննկատելի տարիներն անցան,
Իրար ետևից տարիներն անցան,
111 <1 անընթ.> աննկատ նրանք մեծացան,
112 ա Աղվամազ եկավ մեկի երեսին
բ Տղի երեսին աղվամազ բուսավ,

Մյուսի լանջը լցվեց ու հասավ,
[Աչքերը Թովիչ հրապույր առան
115 Եվ նրանք] <...>
Մի օր էլ երբոր իրար նայեցին,
Հանկարծ հիացան, լուռ զմայլեցին,
[Եվ ահ զգացին և [դող], և ամոթ
Եվ մի գաղտնի բերկրանք անծանոթ,
120 Դուրեկան մի դող]:

Եվ հենց մի բինում, հենց իրար մոտ էլ
Սկսեցին իրար սաստիկ կարոտել...
Հենց որ սկսեցին կարոտել իրար
Նրանց հեռացրին...
125 [Ո՜հ, կարճ են ժամերն մեր երջանկության,
Եվս առավել կարճ է մեր սերը]:
Հասած Անուշին յուր ծնողները
Մոր ծնկան կողքին կապեցին կամաց,
Սարոն էլ առավ իրանց շները,
130 Դագանակն ուսեց – ոչխարը գնաց:
[Եվ նա է գուցե այնպես կարոտով,
Այնպես այրվելով երգում –
Անտառը մտնում]:

---

113 ա Մյուսի աչքերը <1 անընթ.> լցվեցին
բ Մյուսի լանջն արդեն ուռավ
գ Մյուսի լանջը բարձրացավ Թովիչ
114 Հրապույր առան աչքերը ուժեղ
118-119 Եվ ահա զգացին և տենչ, և ամոթ
Եվ մի հոգեկան բերկրանք անծանոթ

125-126 տողերի փոխարեն՝
Այստեղ կյանքի մեջ, ավաղ,
Հաղիվ սկսված – [հատնում] է սերը,
Նրանից հետո գալիս են –
Տանջանքները – կյանքի հոգսերը:

Աղջի, սևասիրտ, նստիր վրանում,
135 Ինչ ես դուրս գալիս, խելքամաղ անում:
Այդ հուրքի առջև էլ խելք կըմնա,
Այդ հուր աչքերին ինչ սիրտ դիմանա:
Ահա քո սիրով այրված-վառված,
Աշուղ են դարձել հովիվ-տավարած:
140 [Ջահել տղերք են հալվում են-մաշվում]
Նայում են վրադ հոգոց են քաշում,
Ինչ ես խեղճերին հալում ու մաշում:

134-135 ա	Աղջի սևասիրտ – սարերը վառվել են քո սերից
բ	Աղջի սևասիրտ – նստիր վրանում
	Ինչու՞ ես դուրս գալիս, հոգիներ հանում,
	Ջահել-ջիվան չոբաններ են –
	Այդտեղ խաղ են ասում:
135	Ինչ ես դուրս գալիս խելքահան անում
141	Նայում են վրադ ու ախ են քաշում
134-142 տողերի փոխարեն՝	
	Աղջի սևասիրտ – նստիր վրանում,
	Ինչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
142 տողից հետո՝	
	[Այդ հուր փելքիդ առաջ ինչ խելք կըմնա,
	Այդ սև աչքերին ինչ սիրտ դիմանա...
	Մեղք են տղերքը – հալվում են, մաշվում,
	Նայում են վրադ – հոգոց են քաշում,
ա	Քունը փախել է նրանց աչքերից,
բ	Քունը աչքներից փախել է նրանց
	Բան ու գործ ընկել <...> ձեռքներից],
ա	Քո էշխով ընկած, քո սիրով այրված
բ	Ահա քո էշխով, քո սիրով այրված
	Աշուղ են դարձել հովիվ-տավարած
ա	Սարի լանջերում, անտառի խորքում
բ	Սարերի լանջում, անտառի խորքում
ա	Անուշ են ասում, քո սերն են երգում
բ	Անուշ են ասում, Անուշ են երգում
	(Աղջի էրեցիր ևն)
Այս հատվածի առաջին երկու տողերի դիմաց՝	
	Էդ կաքավի քելքին,
	Էդ <1 անընթ.> փելքին

(Հովիվների երգը)

Աղջի, էրեցիր սիրաս քո սիրով,
Ոտքս կապեցիր թել-թել մազերով,
145 Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զորով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ <...>
[Ոչխարը արթուն շընորհին հանձնած
Գալիս է իգիթ հովիվը [հանկարծ]...
150 Եվ... զգում է նա, որ իրան գըրկում
Լալիս է աղջիկն ու <...> հեկեկում].
– Ա՛խ, ինչ ուշացար [անգութ], անիրավ...
Այնքա՛ն մնացի, աչքըս ջուր դառավ...
[Ա՛խ, չես սիրում
155 Դու ինձ նըման,
Իզուր եմ ես
Լալիս այնքան:
Աչքըս լացով,
Սիրտըս խոցով,
160 Գիշերը ծով –
Տանջվում եմ ես.
Ուշքըս քեզ մոտ,
Փափագ – կարոտ,
Մինչ առավոտ
165 Կանչում եմ քեզ...
Իսկ դու, անգութ,
Փըչում շըհուդ,
Սարի լանջում
Խաղ ես կանչում...

---

143 (Հովիվն երգում է)
166 Բայց դու անգութ

170 Ինձ չես լսում,
Չես ափսոսում,
Էլ չես ասում –
Ինչ կըլեմ ես։
Ես կըվառվեմ
175 Հուր կըդառնամ,
Ես կըհալվեմ –
Ջուր կըդառնամ,
Ես չըգիտեմ
Ինչ կըդառնամ,
180 Թե որ էսպես
Մին էլ մընամ...]
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես.
Մընում էր յարին
185 Ու չեկավ նա տես։
Խեղճը դողալով
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ
Ուռենի դարձավ...
190 Ջըրերի վըրա
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
[Ու լալիս] կամաց,
Ու ամբողջ տարին
195 Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ո՞նց է մոռանում...

---

181 Երկար մընամ...
192-193 Դեռ լալիս է նա,
Արտասվում կամաց,

Բ ինքնագիր

(ԳԱԹ ԹՖ №155(5գ)

<ԱՆՈՒՇ>

Վերստին կանչեց [հարազատ ձայնով]
Հայրենի երկրի կարոտը անքուն,
Ու փրռեց հոգիս թևերն [հուժկու],
Թռչում է ուրախ, թռչում դեպի տուն,
5 Ուր որ [հայրենի] օջախի առաջ
Վաղուց .... ըսպասում են ինձ,
Ու ձմրան երկար գիշերը նըստած,
Խոսում են Լոռու հին-հին քաջերից:
Ուր որ Դև Բեդը <...> անդընդում
10 Գոռում է ահեղ ու մութ այրերից.
Նրա հետ կանչում, ճչում են, խնդում
Քաջքերը իրանց <...> խավարից:
Ուր որ Դև-Ալը Դվալա սարում

---

1 ա	Ահա ինձ կանչեց հարազատ ձայնով
1 տողից հետո	
	Ով սիրտըս ցընցեց նորից <...>
3	Ու հոգիս փռած թևերը հուժկու,
7	Ու գիշերն երկար խոսում են <...>
1-8 տողերի դիմաց, աջ լուսանցքում	
ա	[Ուր նրանց հրսկա հետքերը դեռ կան,
բ	Ուր այն լավերի շիրիմները կան,
ա	[Ու նրանց] <...> տաճար ու բերդ
բ	Մամռոտած շիրիմ <...>, տաճար ու բերդ
ա	Որ մանուկ օրից [հեքիաթի նըման]
բ	Որ մանուկ օրից խոսել են այնքան,
ա	[Զրույց են արել] մատաղ հոգուս հետ]:
բ	Խոսել են այնքան մատաղ հոգուս հետ
9-13	Ուր որ Դև-Բեթը Դեբեդի ձորում
	Թշշում է ահեղ ու խոլ խավարից.
	Նրան ձայնակից կանչում են, գոռում
	Քաջքերը հազար այրից ու քարից:
	Ուր որ Դև-Ալը Դվալա վերա

Թռած փոթորկի թևով ու բուքով
15 Անզուսպ, մոլեգին շաչում է, սուրում,
Սարերը բռնում բուքով ու սևով,
Ուր որ [շարքերն] ամպոտ սարերի,
Հարբած ու շրփերթ բռնած շուրջպարի,
Հրսկա շուրջպարի բռնած երկրնքում,
20 Հրճվում են ասես ուրախ հարսանքում,
Այն մեծ հարսանքում Ծաղկունքի դրստեր,
Որ փախցրին Լոռու ահեղ հրսկաներ:

Էյ, ես էլ այդտեղ շատ եմ խաղացել
[Իմ] ընկերների հետ միասին –
25 Բայց էն ընկերներս ո՞ւր են գնացել –
Ո՞ւր են Անուշը, Սարոն ու Մոսին...
[Եվ ահա նորից ժրպտում են սրրտիս
Ինձ սիրող աչքերն, աչքերն հարազատ,
Եվ ահա նորից թռչում եմ իմ սիրած...
30 Եվ սիրտս առողջ և միտքս ազատ]:
Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի,

---

14 ա Գալիս է թափով, մութով ու բուքով
բ Թռած փոթորկի թևով գալիս է
15 ա Անզուսպ մոլեգին թռչում է, սուրում,
բ Անզուսպ մոլեգին խաղում է, սուրում,
9-15 տողերի դիմաց, աջ լուսանցքում
14 ա Ուր որ իմ սիրած ժայռերը ծերուկ,
բ Իրար դեմուդեմ կանգնած վիթխարի,
15 ա Հեքիաթ են ասում անվերջ ու խորունկ
բ Սև-սև օրերից խավար դարերի:
17 Ուր որ շարքերն Լոռու սարերի,
18 ա Հարբած շարքերով բռնած շուրջպարի,
բ Հարբած ու անփույթ բռնած շուրջպարի,
21 Այն ճոխ հարսանքում ծաղկունքի դրստեր,
23 Էյ ես էլ եմ շատ խաղացել – այն<տեղ>
25 Բայց ո՞ւր են, էլ ո՞ւր են օրերն – էն ընկերները,
27 Եվ ահա նորից ես մանուկ <...>

Թավուտ ծրմակի լռին խորքերից,
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից:
35 [Լեռան ուսերից ահա ճառագում,
Քրքում է թափում պայծառ առավոտ,
Ամպ ու <1 անընթ.> ելնում մութ-մութ ձորերից,
Բուրմունք են շընչում [մարգեր] ու արոտ:
Թնդում է ահա աղմուկը բինի
40 Ամպերի տակին – սարերի լանջին,
Եվ բոլորն ահա նորից կենդանի,
Կանգուն ապրում են աչքիս առաջին:
Ջա՜ն, ականջ արա, հովիվն է երգում.
Ա՜հ, ձենիդ մատաղ, ա՜յ իգիթ չոբան,
45 Ապրում է, ապրում այդ ձայնն իմ հոգում,
Այդ ձայնը հուժկու՝ հոտի պահապան:

Եվ լսել եմ ես երբ մութ գիշերով
Տարափ վշշալիս, կայծակ ճայթելիս,
Որոտում էր նա ահեղ շեշտերով,
50 Ահ ու տագնապին մեզ սիրտ էր տալիս:
[Լսել եմ զվարթ, հարազատ վայրերում
Գարնան օրերում, երբոր նա բերին,

---

36 ա Բացվում է ահա պայծառ առավոտ,
բ Բացվում է ահա լեռան ուսերից
37-38 Եվ շնչում ես թարմությունը վաղորդյան,
Եվ բույր են շընչում մարգեր ու արոտ:
39-40 ա Եվ ահա անզուսպ աղմուկը բինի
բ Եվ ահա զվարթ <...> կյանքը բինի
43-44 ա Թնդում է – շարժվում մի սարի լանջին,
Եվ ահա լսիր – հովիվն է երգում.
բ Էյ, ականջ արա, հովիվն է երգում.
Ա՜խ, ձենիդ մատաղ, այ իգիթ չոբան.
47 Հիշում եմ ես, երբ մութ գիշերով
51 Լսել եմ զվարթ, անհոգ օրերում,

Զիլ երկար ու ձիգ թնդում էր ծորում
Բերա էր կանչում իրան գառներին]։
55 [Երբ անփույթ խաղով սարերի վրա
Հոսում էր աշխույժ վըտակի նման,
Երբ ախ ու վախով փոթորկի առաջ
Մղկըտում էր <....>]
Երբ անփույթ խաղով առվակի նման,
60 Հոսում էր աշխույժ սարերի լանջում,
[Երբ ախ ու վախով] լուսնյակ գիշերին,
[Գիշերվա խարույկի առաջ մղկտում էր նա]։

Խառնվում իրար և տարածվում են,
Խոռոչ ու ծործոր բռնում, լցվում են։
65 Ես այն օրհնված սարերն եմ ասում,
[Ուր բացվում է վարդ, ծաղիկ քրքում].
Ես այն սարերի ծաղկունքն եմ երգում,
Այն ծաղիկների ծաղիկ – [թագուհին],
Այն ծաղիկների <1 անընթ.> ու քնքույշը
70 Սարերի դուստրը – սիրուն Անուշը...

Այն ճոխ գավառում, ուր Զաթինդաղի
Ուսերից պայծառ արևը ծագում <...>

---

53 Զիլ երկար ու ձիգ կանչում էր ծորում,
55 Լսել եմ երբոր <1 անընթ.> անհոգ խաղով
57 Երբ թաքուն ցավով – փոթորկի առաջ
59-60 Երբ անփույթ խաղով վտակի նման,
Հոսում էր աշխույժ սարերի վրա
61 ա Երբ ախ ու վախով մղկտում էր <...>
բ Երբ ախ ու վախով մթում գիշերվա
67 Որ մտել են երկնքի <1 անընթ.> <...>
69 ա Այն ծաղիկների չքնաղ թագուհին
բ Այն ծաղիկների լավն ու թագուհին ու քնքույշ

Գ ինքնագիր (ԳԱԹ ԹՖ №156(5բ)

ԱՆՈՒՇ

1

Կանչում է դարձյալ, կանչում անդադար
Այն շքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն, ահա, փրռած տիրաբար
Թրռչում է հոգիս, թրռչում դեպի տուն:
5 Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղուց կարոտով ըսպասում են ինձ
Ու ձըմրան երկար գիշերը նըստած
Խոսում են Լոռու հին-հին քաջերից:
Դեպ այն սարերը, որ վեհ, վիթխարի
10 Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկա շուրջպարի բըռնած երկընքում,
Հըրճվում են, ասես, ուրախ հարսանքում,
Պերճ Արագածի նազանի դըստեր,
Որ Դև-Բեդ, Դև-Ալ և այլ հըսկաներ*
15 Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի
Փախցըրին բերին [անառիկ] Լոռի:

---

1 ա Քարշում է ահա թովչական ուժով
բ Կանչում է, կանչում թովչանքով լըցված
գ Կանչում է դարձյալ, կանչում է <1 անընթ.>
3 ա Ու փրռեց հոգիս թևերն աշխուժով
բ Ու թևերն, ահա, ուրախ տարածած
գ Ու թևերն, ահա, տարածած օդում
4 Թրռչում է ուրախ, թրռչում դեպի տուն:
9 Դեպ այն լեռները, որ վեհ, վիթխարի,
13 ա Պերճ Արագածի ծաղկաշատ դըստեր
բ Պերճ Արագածի ծաղկելի դըստեր
15 Խոլ-խոլ հըսկաներ մըթին աշխարհի
13-16 ա Այն մեծ հարսանքում ծաղկունքի դըստեր,
բ Այն մեծ հարսանքում նազանի դըստեր
Որ փախցրին Լոռու ահեղ հսկաներ*:

*Առասպել կա, թե Լոռու Դև-հսկաները – Դև Բեթը (Դեբեդ գետը), Դև-Ալը (Դվալ սարը) և ուրիշները հափշտակել են Ծաղկունքի (Արագածի) աղջիկը, բերել Լոռի:

[Ողջո՛ւյն, վեհափառ լեռներ երկնահուպ,
Ո՛վ հրաշալիք հզոր արարչի,
Եվ ահա հոգիս, [ինչպես] վառ ասուպ,
20 Թռած գալիս է ձեր գլխին հանգչի։
Այդ գագաթներին, այդ բարձունքներին
Խոր [ձորերից] բարձրանում են վեր,
Այդ մութ ամպերում, որ ձեր գլխներով
Անցնում են անհետ, ինչպես երազներ։
25 Վրճիտ փրփրուն ջրերի վրա,
Որ ժայռի տակից [հորդառատ] բխում,
Իմ անհոգ ուրախ մանկության նման
Դալարի միջին խայտում են, խաղում]։

---

19 ա Եվ ահա հոգիս, ինչպես մի ասուպ,
բ Եվ ահա հոգիս, հրաշունչ ասուպ,
21 ա Այդ մութ ժայռերին, որ գոռոզ սիրով
բ Այդ սեպ ժայռերին, որ գոռոզ սիրով
22 ա Խոր <1 անընթ.> բարձրանում են վեր,
բ Երազում են վեր ու ապրում են վեր,
23 ա Թեթև ամպերում, որ ձեր գլխներով
բ Մրթին ամպերում, որ ձեր գլխներով
24 ա Գալիս են անցնում ինչպես երազներ։
բ Անցնում են հանդարտ, ինչպես երազներ։
25-28 Այդ պաղ, փրփրուն աղբյուրների մոտ,
Որ մամռոտ ժայռից հորդառատ բխում,
ա Դալարի միջին կայտառ, ծիծաղկոտ
Երեխի նման խընդում են, խաղում։
բ Ինչպես ես էի երբեմն խաղում
Իմ անհոգ <...> մանկության նման.

3

Էյ կանաչ սարեր, էյ հին ծանոթներ,
30 Ահա ձեզ տեսա ու միտքս ընկան,
Առաջքս եկան սիրելի դեմքեր,
Որ հիմի չկան.
Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
Որ անցած գարնան կայծն ձեր լանջում,
35 Անցել ձեր գլխի հերվան ձյունի պես,
Բայց ապրում են դեռ իմ սրտի միջում.
Բայց եկել եմ ես նրանց եմ կանչում,
Ողջույն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր.
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
40 Թռչուն կարոտով փընտրում ձոր ու լեռ,
Դյութական ձայնով կանչում է հանդես:
Դուրս եկեք կըրկին շիրմից, խավարից,
Դուրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լսեմ.
Կյանքով շընչեցեք, ապրեցեք նորից,
45 Լցրեք պոետի հաճույքը վրսեմ:

4

Եվ [մութ] այրերից մամռոտ ժայռերի,
Թավուտ ծըմակի լըռին խորքերից,

---

29 Էյ հին ծանոթներ, էյ կանաչ լեռներ,
31 ա Երջանիկ օրեր, սիրած ընկերներ.
բ Ու միտքս ընկան սիրած ընկերներ.
գ Շատ պայծառ օրեր, սիրած ընկերներ.
36 Բայց մընում են դեռ իմ սրտի միջում.
37 ա Բայց ես կարոտած նրանց եմ կանչում,
բ Սակայն ես դարձյալ նրանց եմ կանչում,
գ Չեն անցել, սակայն, իմ սրտի միջում,
38 Ողջույն ձեզ, կյանքիս առաջին հուշեր.
41 Տխուր ձայնով կանչում է հանդես:
47 Թավուտ ծըմակի կեսմութ խորքերից.

Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում եմ նորից։
50 Թնդում է զվարթ աղմուկը բինի,
Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից,
Ու բոլորն, ահա, նորից կենդանի
Ելնում են աշխույժ վաղորդյան մութից,
Ու թարմ, ցողապատ լեռների լանջում...
55 Սուս, ականջ արա – հովիվն է կանչում։

5

(Հովիվն երգում է)

Աղջի, անաստված, նըստիր վըրանում,
Ինչ ես դուրս գալի խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,
Խաղեր կապելով,
60 [Զոլեր չափելով],
Ոչխարըս անտեր,
Ընկել եմ հանդեր։
Ամա՛ն, էրեցիր սիրտըս քո սիրով,
Ոտըս կապեցիր թելթել մազերով,
65 Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զորով,
Ա՛յ սարի աղջիկ,

---

50 ա Թընդաց վերըստին աղմուկը բինի,
բ Թընդաց վայրենի աղմուկը բինի,
գ Հնչում է զվարթ աղմուկը բինի,
52 Եվ բոլորն, ահա, նորից կենդանի
53 ա Վերկացան աշխույժ վաղորդյան մութից,
բ կանգնեցին աշխույժ վաղորդյան մութից,
56 ա Աղջի, սևասիրտ, նըստիր վըրանում.
բ Աղջի, անիրավ, նըստիր վըրանում.
59-60 Զոլեր չափելով,
Խաղեր կապելով,

Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ,
Թուխամազ Անուշ։

Քու հերն ու մերը թե որ ինձ չըտան,
Արին կըթափեմ ես գետի նըման,
Սարերը կընկնեմ – կորչեմ անգյուման,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար,
Աղջիկ, քեզ համար։

6

Երգում է Սարոն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստել վըրանում.
– Էն ո՞վ էր, նանի, որ կանչում էր մեզ.
Դու չես իմանո՞ւմ, ականջ դի՛ր, տե՛ս...
– Հերիք էր, Անուշ, ներս արի դագեն,
Քանի դուրս թըռչես, նայես դես ու դեն,
Տեսնողն էլ կասի՝ ինչ աղջիկ է սա,
Հազար մարդի մոտ կերթա-կըխոսա։
– Մըտիկ տուր, նանի, էն սարի լանջին,
Ինչքան ավլուկ է տալի կանանչին.
Նանի, թող գընամ քաղեմ ու հյուսեմ,
Էն սարի լանջին «ջան գյուլում» ասեմ...
– Հանգիստ կաց, Անուշ, դու հասած աղջիկ,
Ինչ ունիս ջահել չոբանների մոտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,

78 Անուշը հանգիստ նըստել վըրանում.
86 Ինչքան ավլուկ է տալիս կանանչին.

Պարկեշտ կաց, ա՛ղջի, ամոթ է, ամոթ...
– Ա՛խ, սիրտըս, նանի, չըգիտեմ ընչի,
Մեկ լաց է լինում սևակնա՛ծ, տըխո՛ւր,
95 Մեկ թև է առնում, ուզում է թըռչի,
Չըգիտեմ թե ուր, չըգիտեմ թե ուր...
– Նանի ջան, նանի, կուժը թող առնեմ,
Աղջիկների հետ աղբյուրը գընամ.
Ինչու <1 անընթ.> [սիրտըս մթնում է]
100 Քանի դագի մեջ ես նըստած մընամ,
Տես ինչ արևոտ <...>

7

...Կըժերն ուսած, թըրվըռալով,
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
105 Երգը զընգում լեռն ի վեր:

Ամպի տակից ջուր է գալի,
Թոշին տալի, փըրփըրում,
Էն ո՞ւմ յարն է նըստած լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում:

110 Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
Որ գալիս եք սարերից,
Գալիս անցնում հանդ ու չոլեր,
Յա՞ռս էլ խըմեց էդ ջըրից:

---

97 Նանի ջան, նանի, թող կուժը առնեմ,
98 ա Աղբյուրը գընամ ընկերներիս հետ
բ Ընկերներիս հետ աղբյուրը գընամ
100 ա Մինչև երբ դագի մեջ ես նըստած մընամ,
բ Մինչև երբ դագումը ես նըստած մընամ,
105 ա Երգ են երգում սարն ի վեր:
բ Երգը ձրգվում լեռն ի վեր:
գ Երգը թընդում ձորն ի վեր:

Յարաբ խըմեց, յարաբ հովցավ
115 Վառված սիրտը էն յարի,
Յարաբ հովցավ, յարաբ անցավ
Դյուգուն ցավը ջիգյարի։

– Աղջի, քու յարն եկավ անցավ
Վառված-տարված քո սիրով.
120 Էրված ջիգյարն եկավ, անցավ,
Ջըհովացավ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Թոշին տալի, փըրփըրում,
Ա՜խ, իմ ազիզ յարն է լալի
125 Հոնգուր, հոնգուր էն սարում։

[Կըժերն ուսած դուրս են գալի
Աղջիկները մութ ամպից,
Աղջի, ութով դուք գընացիք,
Ո՞ւր է մինը ձեր խըմբից]։

8

130 Ա՜խ, ի՜նչ լավ են սարի վըրա
Անցնում օրերն, անո՛ւշ, անո՛ւշ,
Անըրջայի՜ն, թեթևասա՜հ,
Ամպն ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ։

---

115 ա Ջահել սիրտը իմ յարի
բ Խելառ սիրտը իմ յարի
117 Դյուգուն դարդը ջիգյարից։
120 Դարդոտ ջիգյարն եկավ անցավ,
125-127 Սիրտը էրված էն սարում։
Կըժերն ուսած թըրվըռալով
Ջուր են բերում աղջիկներ,
129 Ո՞ւր է մինը ձեր փընջից։

Ահա վառվեց վարդ առավոտ,
135 Ցնցուղ զարկեց աշխարհին,
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,
Բույր են խնկում անմահական։
Ամպն ու ծուխը խառնած իրար,
Վեր են ելնում հանդարտ, խաղաղ.
140 Հազար ձայներ <1 անընթ.> հեշտարար,
Հազար <2 անընթ.>

Ախ, ինչ հեշտ են սարի վրրա
Սահում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,
Շրվին փըչեց հովիվն ահա –
145 Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ։

9

Ու պառավ նանի սըրտի մեջ հանկարծ
Ձեն տըվավ թաքուն մի խավար կասկած.
– Էն երբ էր Անուշն իր կուժը առավ,

134-135 տողերի փոխարեն՝

ա	Ահա վառվեց վարդ առավոտ,
բ	Ահա ծաղկեց վարդ առավոտ,
ա	Ցընցուղ զարկեց սարին, ձորին,
բ	Ժըպտաց քարին, սարին, ձորին,
գ	Պայծառ ժըպտաց սարին, ձորին,
դ	Ժըպտաց պայծառ սարին, ձորին,
ե	Վառ վարդ թափեց սարին, ձորին,
զ	Վարդ է թափում սարին, ձորին,
	Շաղ են շողում ծաղիկ ու խոտ
137 ա	Բուրում վերև ու աշխարհին։
բ	Խընկում բույրով գարնանային։
138-140	Ամպն ու ծուխը իրար խառնած,
	Վեր է ելնում սարից, ձորից,
	Ահա զարթնեցին ձայները սարի
143	Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ.
146	Ու հանգիստ նանի սըրտի մեջ հանկարծ
147 ա	Ձեն տըվավ թաքուն մի մութը կասկած.
բ	Ձեն տըվավ թաքուն չարախոս կասկած.

Աղբյուրը գընաց ու ետ չըդառավ...
150 Ամպերն եկել են սարերը պատել,
Ձորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի...
Ու ելավ տեղից պառավը հանկարծ.
155 – Ո՞ւր կորար, Անուշ, այ մազըդ կըտրած.
Ու ձորի գըլխից, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զավակին:
– Աղչի՛, սևասի՛րտ, քո ահը կըտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կըմըտնի.
160 Ամպը կոխել է, աշխարհը մըթնել,
Ինչ ես կորցըրել, չես կարում գըտնել:
Ա՛ղչի, հե՛յ Անուշ, ա՛յ աղչի՛, Անո՛ւշ...
Ծընկանը զարկում, հառաչում է՝ վո՛ւշ,
Ու ձորի գըլխին, մոլորված կանգնած,
165 Նայում է ներքև սիրտը սևակնած:
Ամպերն եկել են, սարերը պատել,
Ձորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի:

10

170 – Թո՛ղ, կանչում են ինձ... մայրըս կիմանա:
– Չէ՛, Անուշ, քիչ էլ, մի քիչ էլ մընա...
– Չէ՛, թող, ես գընամ... ա՛խ, ինչ խեղճ եմ ես.
Դու ինձ չես սիրում... չես սիրում ինձ պես...
Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում,

---

154 ա Ու տեղից ելավ, վեր թռավ հանկարծ.
բ Ու մայրը տեղից վեր թռավ հանկարծ.
գ Ու նանը տեղից վեր թռավ հանկարծ.
դ Վեր կացավ տեղից սիրտը խըռոված.
156 Ու թմբին կանգնած, ձեռքը ճակատին,

175 Դու սարի լանջին խաղեր ես կանչում.
Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես ե՛րբ եմ եկել, այստեղ քարացել,
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրավ,
Էնքան մընացի, աչքըս ջուր դառավ...
180 [Դու նոր ես գալիս... չես սիրում ինձ պես.
Չես էլ մըտածում, թե ինչ կըլնեմ ես –]
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր, ինձ պես,
Մընում էր յարին,
185 Ու չեկավ նա տես...
Խեղճը դողալով,
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ,
Ուռենի դարձավ:
190 Ջըրերի վրա
Գըլուխը կախած,
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
195 Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ո՞նց է մոռանում:
– Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ինչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում.
200 Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում,
Էն, որ գիշերով շըհու եմ փըչում,
Էն ո՞ւմ եմ կանչում,

---

179 Այնքան մընացի, աչքըս ջուր դառավ...
200-203 Էն, որ լանջերին շըհու եմ փըչում,
Էն քեզ եմ կանչում,
Էն, քունս կտրած որ խաղ եմ ասում,
Էն քեզ եմ կանչում.

էն, որ մոլորված նըստած եմ մընում,
205 Ո՞ւմ մոտ եմ լինում.
[էն, որ <...> ու վեր եմ թըռչում,
էն դու ես կանչում,
էն, որ գընում եմ ու տեղ չեմ հասնում,
էն քեզ եմ տեսնում.]
210 էն, որ հառաչում ու ա՜խ եմ քաշում,
էն ում եմ հիշում...
Ա՜խ, Անո՜ւշ, Անո՜ւշ... Անուշ...»
Արբեցած, անուժ
Հառաչեց հովիվն ու կըրծքին ընկավ,
215 Հալվեցավ, հանգավ։

11

– Անո՜ւշ, այ աղջի Անո՜ւշ, տուն արի,–
Կանչում է մայրը, հառաչում, կանչում.
– Գալիս եմ, գալի՜ս, գալիս եմ, նա՜նի՛,–
Ջորից աղջըկա ձայնն է ղողանջում։
220 Ու մազերն անկարգ տված թիկունքով
Ու ցրված շիկնած այտերի վրան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից
[Այրվում են աչքերն անուշ կրակով],
Անուշը փախած եղնիկի նըման։

---

205 Քեզ հետ եմ լինում.
211 ա էն քեզ եմ հիշում...
բ Անուշ եմ հիշում...
220 ա Ու մազերն արձակ, ոտները շաղոտ
բ Ու ճոխ մազերը տված թիկունքով
222 Ամպերի տակից դուրս է գալիս նա,
223 [Այրվում են աչքերն այնպես կըրակով],
224 ա Խրտնած, շըշկըլած եղնիկի նըման։
բ Որսկանից փախած եղնիկի նըման։
գ Աղջիկը փախած եղնիկի նըման։

225 [Նա կուժը դատարկ ետ բերավ կըրկին,
Իսկ ուսին [տարած] ուսաշոր չըկա,
Թողել է ձորում, ջըրի եզերքին,
Ա՜խ, անհոգություն ջահել աղջըկա]:
Հևում է արագ ու սիրտը բռնում,
230 Այրվում են աչքերն կըրակի նման,
Աչքերն բըռընկած:
Նայում է շուրջը ու նայում է ցած.
– Նանի, վախեցի,– գանգատվում է նա
Եվ ուզում է լալ, չի կարողանում:
235 – Նանի, ներքևում ես մարդիկ տեսա,
Կարծես թե թուրքեր էին լողանում...
Անիծում է ծեր մայրը բարկացած
Իր մըտքամոլոր, վախկոտ Անուշին,
Ու անեծք տալով, իջնում է նա ցած
240 Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

II ԵՐԳ

12

(Համբարձման գիշեր)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին թըռչելով,
Փերիները սարի գըլխին
Հավաքվեցին գիշերով:

---

236 ա Թվաց, թե թուրքեր էին լողանում...
բ Կարծեցի, թե թուրքեր էին լողանում...
238-239 Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անիծելով իջնում է նա ցած

245 – Եկեք, քույրեր, սեգ սարերի
Զըքնաղագեղ ոգիներ,
Եկեք մատաղ սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ։

Օխտն աղբյուրից ջուր է առել
250 Կույս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել բախտի ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել
Խընդիրք արել աստղերին,
255 Փափագ սըրտով խընդիրք արել –
Բարի ժըպտան իր սերին։

Աստղերն ահա ցոլուն-փայլուն,
Բախտ են ժըպտում դեպի ցած,
[Մենակ] նըրանց աստղը անհուն
260 Երկնում կորավ դալկացած...

[Եկեք քույրեր, սեգ սարերի,
Զըքնաղագեղ ոգիներ,
Եկեք ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ]։

---

246 Մշտա<...> ոգիներ
248 Բախտը ողբանք վաղամեռ։
259 ա Կորավ նրանց աստղը անհուն
բ Մենակ նըրանց աստղն է <...>
260 ա Նըրանց աստղը դալկացած...
բ Երկնի ծոցում դալկացած...
263 Եկեք անբախտ սիրահարի

265 Ափսո՛ս Անուշ, սարի ծաղիկ,
Ափսո՛ս [անուշ] քու սերին,
Ափսոս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսոս էդ ծով աչքերին:

Վա՛յ քեզ, ջահել չոբան իգիթ,
270 Վայ անմուրազ քու սերին,
Վայ էն կանաչ-կարմիր թագիդ,
Ինչ վաղ ընկավ փըշերին:

Ու նըրանց հետ, ցող-արցունքով
Լըցրած սըրտերն ու աչեր,
275 Սարի ծաղկունք մեղմիկ սյուգով
Հառաչեցին էն գիշեր:

Վո՛ւշ-վո՛ւշ Անուշ, վո՛ւշ-վո՛ւշ քուրիկ,
Վուշ քու սերին, քու յարին,
Վուշ-վուշ Սարո, վուշ-վուշ իգիթ,
280 Վուշ քու սիրած սարերին:

Եկեք քույրեր,
Սեգ սարերի աղջիկներ...
Ու փերիներն այսպես տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

---

272 էդ <...> ընկավ փըշերին:
274 Լըցված սըրտերն ու աչեր,
275 ա Խոտ ու ծաղիկ մեղմիկ սյուգով
բ Սարի ծաղկունք տխուր սյուգով
278 Վուշ քո սերին, քո յարին,
280 Վուշ քո սիրած սարերին:
283 Եվ փերիներն այսպես տըխուր

285 Երգում էին ու ձեն տալի
Հընչյուններով դյութական
Ու հենց ցոլաց շողքն արևի՝
Անտես, անհետ չքացան։

Խոր սուզվեցին ակն աղբյուրի,
290 Մրտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վրտակների
Ալիքները պաղպաջուն։

13

(Առավոտը)

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով,
295 Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով։

Համբարձում յայլա,
Յայլա ջան, յայլա,
Սև սարեր յայլա,
300 Յայլա ջան, յայլա։

Երգ ու բույր խառնած,
Թև թևի բըռնած
Զուգում են լեռներ.
Ծաղիկ են քաղում,
305 Ծաղկի հետ խաղում,
Ինչպես թիթեռներ։

285 Կանչում էին ու ձեն տալի
299 Հով սարեր յայլա

Համբարձում յայլա,
Յայլա ջան, յայլա,
Լավ օրեր յայլա,
310 Յայլա ջան, յայլա:

Եկավ համբարձում
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում –
Ո՞վ է մեզ գբրված:
315 Ա՛յ շան տղա, չոբան տղա, ո՞ւմն ես դու,
Աստվա՛ծ գիտի, աշխարհ գիտի – իմն ես դու:

Դե հանի՛ր, աղջիկ,
Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
320 էն իգիթ յարին:
Բեղը ծիլծիլ, բոյը թիլթիլ էն յարի
Ինչ դարդ ունիմ քանի նա կա աշխարհի:

Համբարձում յայլա,
Յայլա ջան, յայլա:
325 Հուր-սրտեր յայլա,
Յայլա ջան, յայլա,

Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում,
Մեկին ելնում է իր երազն ու սեր,
330 Մյուսի մուրազը սրտումն է մընում:

---

327 ա Թընդում են երգեր, թընդում են սըրտեր,
բ Թընդում են երգեր, այրվում են սըրտեր,
329 Մեկին ելնում է իր մուրազն ու սեր,

Պտույտ է տալիս վիճակը նորից
Քուշուշկը գլխին ծաղիկ ծաղկամեր,
Թնդում է ջան գյուլում <...> սըրտերից
Ու հետը թնդում էն սարեր:
335 [Ու ձըգեցին քուքուշկը կըրկին,
Ձգեցին մատաղ ծաղկամոր գըլխին,
Թընդաց «ջան գյուլումն» – հետը թնդացին
<.....> սար ու ձոր]:

Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,
340 Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգյարին գյուլլա դիպչի
Քեզ սիրի ով որ, աղջիկ:

[Ինչու երգեցին այս չարագուշակ
Տխուր ջան գյուլումը, իրենք էլ չիմացան
345 Ու ծաղկամերը]:
Ո՜հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,
Տարաբախտ աղջիկ, նազելի Անուշ,
Քո ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորված, ապուշ:
350 – Սուտ բան է, քույրիկ, դու մի՛ հավատար.
Լոկ պատահական մի չար խոսք է սա,
Սիրտըդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,

331-332 Ու ձըգեցին քոզը կըրկին
335-336 Ձըգեցին գըլխին մատաղ ծաղկամոր,
Պըտտվում է լուռ վիճակը նորից
Քուշուշկը գըլխին մատաղ ծաղկամեր,
338 ա Ու հետը թնդում ձոր ու լեռ:
բ Ու հետը թնդում ձոր ու սարեր:
339 տողից հետո՝
Ջան գյուլում, ջան, ջան:
347 Սևաբախտ աղջիկ, նազելի Անուշ,

Քո խաղը խաղա, ջան գյուլում ասա:
– Ա՛խ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
355 Ես երբե՛ք, երբե՛ք բախտ չեմ ունեցել,
Ես միշտ էլ էսպես անբախտ կըլինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել:
Ասում են՝ մի օր, ես օրորոցում,
Մի պառավ դավրիշ մեր տունն է գալի,
360 Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նրան բաժին չի տալի:
– Կորի՛,– ասում է,– կորի՛ մեր դըռնից,
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա՛.
Ու դավրիշն այնտեղ անիծում է ինձ,
365 Թե դըրա օրը լացով անց կենա:
Ա՛խ, այն դավրիշի անեծքին անգութ
Ու այս վիճակին տեղյակ է Աստված,
Սիրտըս էլ միշտ փա՛կ, սիրտըս էլ միշտ մո՛ւթ,
Ի՞նչ կա, չըգիտեմ, իմ առջև պահված:
370 – Մի՛ տրտմիր, Անուշ, մի լինիր համառ,
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դավրիշ, մի անեծք հիմար,
Ու լալիս ես դու այդպես սըրտաճաք:
Հանգիստ կաց, քույրիկ, մի՛ վախիր այդքան,
375 Կյանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Այդ քո նորահաս մատաղ կուսության
Առաջև դեռ կան երջանիկ օրեր...
[(Սուտ բան է, քույրիկ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա,

---

354 – Ո՛հ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
358-359 Ասում են՝ մի օր մի պառավ դավրիշ
Մի պառավ դավրիշ մեր տունն է գալիս,
361 Իմ նանը նրան բաժին չի տալիս:

380 Սիրտըդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
Քո խաղըդ խաղա, ջան գյուլում ասա)]:

(Խումբը երգում է)

[Համբարձում յայլա և այլն]
Աղջի, բախտավոր, երնեկ քո սերին,
Երնեկ քո սերին, քո սև աչքերին:
385 Համբարձում յայլա,
Սեր-օրեր յայլա:
[Իգիթ յար ունես,
Մեջքիդ սար ունես],
Մեռնեմ գարունքիդ,
390 Ծաղկած գարուն ես,
Սարի պես մեջքիդ
Կանգնած յար ունես:
Համբարձում յայլա –
Սար-յարեր յայլա:
395 [Աղջի բախտավոր,
Երնեկ քո յարին,
Քո <...>.
Ման եկած սարին]:
Սև սարեր յայլա <...>

384 Քո սարի սովոր սև-սև աչքերին
386 ա Հուր աչքեր յայլա
բ Լավ օրեր յայլա
389 Մեռնեմ բուրմունքիդ,

III և IV

III

400 Զմեռվան գիշեր. կա մի հարսանիք,
Հրրճվում է ուրախ ամբոխը գյուղի.
Իջել են հանդից հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լայն հրրապարակ
405 Բաց արին մեջ տեղն արձակ գըլխատան,
Զուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահեղ ու ջահել իրարով անցան:
Հարայ են տալի.– քաշի հա՛, քաշի...
Եվ դուրս քաշեցին զոռով երկուսին.
410 Մեկը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
Անդրանիկ եղբայր – գառնարած Մոսին:
[Մանուկ օրերից սերտ ախպերացան,
Իրենց հավանած ջահել իգիթներ],
<. . . . . .
415 . . . . . .>
Ողջ գյուղը կանգնեց պարսպի նըման.
Ջոկվեց, բաժանվեց երկու բանակի.
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տըղերանց մեկի:

400-402 Զըմեռը մի օր կար մի հարսանիք,
Հրրճվում էր ուրախ ամբոխը գյուղի.
Հանդից իջել են հովիվ պատանիք
407-408 Ու վայրի աղմուկով իրարով անցան:
Ու ձայն են տալի.– քաշի հա՛, քաշի...
412 Մանուկ օրերից ջերմ ախպերացան,
416 ա Ամբոխը կանգնեց պարսպի նըման.
բ Ամբոխը կիտվեց պարսպի նըման.
423 Նայում են անթիվ հարսն ու աղջըկերք:

420 Գոռում են, գոչում երկու բանակից.
Սըրտապինդ կացեք, մի վախեք, տըղերք.
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
425 Փեշերը քիփ-պինդ խըրում են գոտին,
Գետնին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում, փախս տալի կըրկին:
[Բռնում են իրար կոպիտ ու համառ,
Բուռն են հավաքում մեկ մեկու օձիք]:

430 Ադաթ կա, սակայն, այն մութ սարերում.
[Ու միշտ] հընազանդ հընոց ադաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր-իգիթին:
Ու իրար բռնած Սարոն ու Մոսին
435 <...> ընկնում խոզապարկուկի,
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դժվար է իբրև հաղթել մեկմեկի.
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սրտատրրոփ նայում աղջիկներ,
440 Եվ զուր է Անուշն իր շունչը հատած,
Սառել-դժգունել ու դարձել պատկեր:
Անուշը կանգնած... Ահա նըկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ,

430-432 Ադաթ կա հընուց այն մութ սարերում.
Ու միշտ հընազանդ այն հին ադաթին,
Ամբոխի առաջ իգիթն իր օրում
435 Քաշքըշում են գետ,
440 Եվ զուր է Անուշը իր շունչը կտրած,
441 ա Դալկահար կանգնած, ինչպես մի պատկեր:
բ Դալկահար կանգնել, ինչպես մի պատկեր:
442 ա Անուշը կանգնած... նըկատեց Սարոն,
բ Անուշը կանգնած... Սարոն նըկատեց,
443 Սիրտը թունդ առավ ու զարկեց արագ,

Աչքերի առաջ մըլարը պատեց,
445 Մոռացավ ընկեր, ադաթ ու աշխարք...
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի
Կատակի տալով թողած էր իրեն,
Արբեցած Սարոն ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրեն:
450 Ամբոխը թափվեց հարա-հըրոցով.
Վեր թըռցրեց իգիթ փահլևաններին,
Եվ, ուրախության աղմուկ-գոռոցով,
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:
Ցնծության ձայնից, ծափերի զարկից
455 Շարժվում են դողում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:
[Ու թագավորի թախտիցը Սարոն
Պարգև ստացավ մի կարմիր խընձոր,
460 Ու փարդի տակից նայում են նըրան]
<. . . . . .>
Վեր կացավ Մոսին. իրեն կըտրատում.
– Թող գա,– գոռում է,– որ բըռնենք նորից,
Թե չէ, նամարդը, արևս եմ երդվում,
465 Էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից:
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

---

448 ա Արբեցած Սարոն զարկեց կատաղի,
բ Սիրահար տղան ծընկեց կատաղի,
457-458 Նայում են անթիվ հարսն ու աղջըկերք:
Եվ թագավորի թախտիցը Սարոն
462 ա Բայց ընկած Մոսին դեռ չէր հանդարտվում.
բ Վեր կացավ Մոսին, գոռում էր, թընդում.
463 – Թող գա,– ասում էր,– որ բըռնենք նորից,
466 Եվ ամբոխն <...> ուրախ հըրհըռում,
467 ա Ծաղրով թունալի կանչում են, գոռում.
բ Ջար ու թունալի կանչում են, գոռում.

– Չէ՛լավ, էդ չէ՛լավ,
Վեր չի գըցել դեռ,
470 Մոսին թոլ էլավ,
Խոզապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տըղերք,
Շատ էլ լավ կանի...
Մեջքը թափ տըվեք,
475 Թող մին էլ բըռնի...
Հա՛, հա՛, հա՛, տըղերք,
Մեջքը թափ տըվեք...
Ու իսկույն հարբած հարսանքի տանից
Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր,
480 Արյուն էր կաթում սևակնած սըրտից,
Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
– Ամոթ քեզ, Մոսի, թուք ու նախատինք,
Ամոթ քեզ նըման գոված իգիթին.
Մի անունդ հիշիր, մի բոյիդ մըտիկ,
485 Դեռ քո թիկունքը չէր տեսել գետին:
Ինչպես վեր ընկար դո՛ւ սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գյուղը կանգնած...
Դո՛ւ... կուչ գաս տակին Սարոյի ծընկան,
Նըրանից հետո երևաս կանանց...
490 Եկա՞ծ էր էս բանն իսկի քո գըլխին,
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դե մեռիր, էլի, գետինը մըտիր,
Տանը վեր ընկիր, իլիկ պըտըտիր...

478-481 Եվ Մոսին ուրախ հարսանքի տանից
Դուրս եկավ իսկույն սաստիկ վիրավոր,
Արյուն էր կաթում սևակնած սըրտից,
Գընում էր ըշտապ, քայլերը մոլոր:
490 ԵկնՀ էր էս բանն իսկի քո գըլխին,
491 ա Որ ծիծաղեցնես քեզ վըրա խալխին...
բ Ծաղրատեղ դառնաս բովանդակ գեղին...

– Վա՜յ, վա՜յ, Մոսի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
495 Սըրանից հետո չեմ սիրիլ նըրան.
<. . . . . .
. . . . . .>
Խընդրում էր լալով եղբոր առաջին
Անզոր ու դալուկ իր քույրը չոքած,
500 Մոսին փալկտուն խանչալը ձեռին,
Ուզում էր նըրան մորթել աչքը բաց:
– Դե իմ անունով երդվիր, անզգամ,
Որ էլ Սարոյին դու չես սիրելու.
Թե չէ տեսնո՞ւմ ես խանչալը հանած,
505 Մինչև դաստակը սիրտդ եմ խըրելու:
– Քո ոտի հողն եմ, Մոսի ջան, Մոսի,
Դու քո եսիրին երդո՞ւմ ես տալիս...
Ես էլ Սարոյին չեմ սիրում, ասի,
Տեսնո՞ւմ ես, չոքած, ինչպես եմ լալիս...
510 – Դեռ խաբո՞ւմ ես ինձ, [այ լիրբ], խաբեբա,
Չես սիրում ասիր. էն ի՞նչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մըտնում,
Հեկեկում ես դու գիշերվա մըթնում...
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
515 – Սարո ջան, Սարո... Սարո ես ասում...
– Մոսի ջան, Մոսի, գըլխովդ ման գամ,
Ինձ մի ըսպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրիլ ես – երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես – Նըրան երազում...

---

500 Մոսին կատաղի, խանչալը ձեռքին,
508 Ես էլ Սարոյին չեմ սիրիլ, ասի,
511 Չես սիրում ասիր. այն ի՞նչ է հապա,
517-519 Ինձ մի ըսպանիր, ինձ թող այս անգամ.
Ես էլ չեմ սիրիլ – երբ դու չես ուզում,
Ես էլ չեմ կանչիլ Նըրան երազում...

520 Ինձ մի՛ ըսպանիր, դամեդ տար հեռու...
Քո քո՞ւյրը չեմ ես... իմ Մոսին չես դո՞ւ...

Այս թըշվառ օրից թըշնամի դարձան
Ախպեր տըղերքը այս դեպքի համար.
Ընկեր-բարեկամ գընացին-եկան,
525 Կըրկին հաշտության չեղավ մի հընար:
Անկոտրում Մոսին էն ո՞ր Մոսին էր,
Որ աչքը դեռ բաց այս լույս աշխարքում
Իրեն հարազատ քըրոջը տեսներ
Նամարդ ընկերի – Սարոյի գըրկում:

530 Գուցե գիշերս էլ գազազած, անքուն,
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
Սարոյի անունն ու սերը թաքուն
Խանչալի ծայրով սըրտից հանի:
Ով գիտի – գուցե հենց այս գիշեր էլ,
535 Իգիթ ոսոխներն անհաշտ ու համառ,
Մեկ մեկու հոտից ոչխար են քըշել,
Մեկ մեկից վըրեժ առնելու համար:
Կարող է նաև պատահել հանկարծ,
Որ մեկի դեզը – արդյունքը հընձի,
540 Գիշերվա ժամին, հըրով բըռընկած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի:

---

530 ա Գուցե գիշերս էլ խանչալը հանած,
բ Գուցե գիշերս էլ կատաղած, անքուն,
գ Գուցե գիշերս էլ իր հերսից անքուն,
դ Ով գիտի, գուցե և այս իրիկուն
ե Ով գիտի, գուցե գազազած <...>
532-533 Եթե Սարոյի սիրով պահպանած
Անունը իրեն սըրտից չըհանի:

[ԵՐՐՈՐԴ ԵՐԳ]

XXI, XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նման
Նոր են ջուր խմած ձորից բարձրանում,
Քարոտ թիկունքից Զաթինդաղ լերան
545 Նոր է ժըպտալով պռունկը հանում։
Գյուղումն աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծայրերին կանայք հավաքված,
Տըղերքը դեպի քարափն են վազում,
Հրացանների կիսերից բըռնած։

XXII, XVIII

550 Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովված տըղերանց միջին,
Մատը դեպի ձոր մեկնեց նա հանդարտ
Ու այսպես պատմեց, զոռ տալով չիբխին։
– Էս գիշեր, կեսը կըլներ գիշերվա,
555 Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մեջ,
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա՛, հալալ կեսը կըլներ գիշերվա,
Շունը վեր կացավ էս կըռան վըրա։
560 – Հե՛յ-հե՛յ,– կանչեցի. ձեն տըվող չէլավ,
Շունը կատաղեց, շունը վեր կալավ...

545 Նոր է իր զըվարթ պռունկը հանում։
553 Ու այսպես խոսեց, զոռ տալով չիբխին։

XXIV

[Հրաշալի է [իրիկնապահը] վերջալույսն այն ժայռի վրա]:
(Սարոն մենակ մի ժայռի)
Երազից հետո դնել

Գընաս բարով, Անուշ յար,
Ահ ու զարով, անուշ յար,
Ջահել օրով <...>
565 Անբախտ սիրով, անուշ յար:

Դըժոխք դառան էս հանդեր,
էս դըրախտի պես հանդեր,
էլ ո՞ւր գընամ, ինչ անեմ
էս չոլերում ես անտեր:

570 [Կերթամ լալով ման կըգամ,
էլ տանջվելով ման կըգամ,
Ու ման եկանք, նըստեցինք,
Քեզ կանչելով ման կըգամ]:
Բարձր սարեր, այ սարեր,
575 Ձեն եմ տալի «վայ» սարեր,
Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք,
Իմ դարդերի թայ սարեր:

Որս եմ բութես ձեզ արած,
Ձեր ձորերին – ձեզ արած,
580 Կուզեմ կորչեմ անգուման,
էս աշխարքից բեզարած:

---

569 Զոր չոլերում ես անտեր:
579 Ձեր սարերը – ձեզ արած:

Կորչեմ բեզար դատարկուն,
Քար-սարեսար դատարկուն,
Մեռնեմ, պըրծնեմ էսօրից,
585 Բալքի առնեմ դադար-քուն։

Ա՛խ, կըմեռնեմ, ամա նա
Վայ թե հանկարծ իմանա,
Ես ազատվեմ էս ցավից,
Աչքը լալով նա մընա։

Ու լեզու առավ գյուղը, սկսավ խոսել։ Ու երազ տեսան շատերը գյուղում։

XXV[I]

590 Աղջի, Վարդիշաղ, թե հոգիդ սիրես,
Մի գարիդ գըցիր, տես ինչ է ասում.
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում,
Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ
Անբախտ Սարոյի ոչխարը կանգնած,
595 Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձեն-ձենի տըված։
Մի գարիդ գըցիր, թե որդով խընդաս,
Էս երազն իսկի ես լավ չեմ փորձել,
Ողորմած Աստված, քո դուռը բանաս,

---

584 Մեռնեմ, պըրծնեմ աշխարհից,

591-592 տողերի փոխարեն՝

Մի գարիդ գըցիր, ինչ է ասում, տես.
Տեսիլք եմ տեսել [իբրև] գիշերս երազում,
[Մի մըտիկ արա, տես ինչ է ասում]։

599 Ողորմած Աստված, մի դուռը բանաս,

Վերջին երկու տողերը համարակալումով տեղափոխել է։

600 <...> դու ես ըստեղծել...
Անբան գառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձենով լալի,
Սարոյի նանն էլ նրրանց առաջին
Աղլուխ էր առել ու պար էր գալի:
605 – Աղջի, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ ահա էնպես դուրս եկավ,
Էս՝ չարն, էս՝ բարին, Սարոն է էս էլ.
Տես, ահա, Սարոն սև ճամփեն ընկավ...
Աստված խնայի ջահել ջիվանին,
610 Աստված խնայի իր նաշար նանին...

XXVI

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խոսք չեն գտնում – ասես անարգված,
Տարած-ետ բերած անբախտ աղջկան:
615 Աստված խնայեց՝ կոպիտ եղբայրը
<...> հանդերից դեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռադեմ, ալևոր հայրը
Սկսավ փրփրրած թքել, անիծել.
– Դուրս գնա, կորի, այ լիրբ, անըզգամ,
620 Սև ու սուգ լինի թագ ու պսակըդ,
Կորի, չերևաս աչքիս մյուս անգամ,
Գետինը մըտնի երկար հասակըդ:
Տեսար, որ նրան ատում է Մոսին,
Չեն ուզում, տեսար, նրան հերն ու մերդ,

602 Խաղ էին կանչում ու ձենով լալիս,
604 Աղլուխ էր առել ու պար էր գալիս:
606 Ահա գարիս էլ էնպես դուրս եկավ,
614 Խայտառակ եղած անբախտ աղջկան:
618 Սկըսեց փրփրրած թքել, անիծել.

625 Դու քանի՞ գլուխ ունիս քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նրա հետ։

Խրոնված գյուղացիք կրտուրից իջան՝
Մեղմելու կոպիտ բարկությունը հոր,
Հայտնըվեց նույնպես գյուղի քահանան,
630 Մի պատկառելի հրսկա ալևոր։
– Դուրս գնացեք, դո՛ւրս,– գոչեց տերտերը,–
Անուշը թողեք ուղիղն ինձ ասի,
Թողեք նա հայտնի իր միտքն ու սերը,
Նըրանից հետո բանը կըպարզի։
635 – Մի՛ լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,
Սիրում ե՞ս նրան, քո կամքով փախա՞ր.
Եթե սիրում ես, էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պսակեմ ես ձեզ իրար հետ։
– Ինչ են հառաչում... Այն ով էր, մի տես,
640 Որ դուրսը հանկարծ աղմըկեց էսպես...
Ո՞վ է ըսպանել... Մոսի՞ն... ո՞ւմ... ո՞ւր...
– Անո՛ւշ, հե՛յ, Անո՛ւշ... ջուր հասցըրեք, ջո՛ւր...

XXVII

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջներ,
645 Ինչպես փոթորիկ [սաստիկ] սրընթաց,
Գյուղից սըլացան մի խումբ կտրիճներ։
Ցավից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թրռչում են, ասես ահից հալածված,
Ու նրանց առջև ահռելի բացվում,

627-628 Խառնըված գյուղացիք կրտուրից իջան
Մեղմելու անգուսպ բարկությունը հոր,
638 Պիտի պսակեմ ես ձեզ անպատճառ։
640 Որ դուրսը հանկարծ աղմըկեց այդպես...
648 Թրռչում են, ինչպես ահից հալածված,

650 Թը22ում է ձորը արյունով լցված։
Գյուղը դատարկվեց մի ակընթարթում,
Քարափի գլխին կանգնած անհամբեր,
Լուռ, սրտատրոփ ականջ են դընում,
Նայում են ներքև... ձայն չի գալիս դեռ.
655 Դեբեդն է միայն անդընդում հուզված՝
Խլաձայն ողբով վազում դեպի ցած։

XXVIII

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից.
Դեմքը այլայլած, քայլվածքը մոլոր,
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
660 <. . . . . .>
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խոսելու, սևակնած, դաժան,
Մոտեցավ սրահին, կախ տվավ սընին
Սև հրրացանը – սև օձի նըման։
665 Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,
Ոչ ոք ծպըտալ չի համարձակվում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած
Հարայ է կանչում, երեսը պոկում։
Անբախտ Սարոյի [պառավ] մայրն է նա,
670 Յավից խելագար բառաչում, լալիս
Տարաբախտ ծընող – վազում է ահա,
Ձորիցն է տըխուր գոռոցը գալիս։

---

652 Քարափի գլխին կանգնեց անհամբեր,
655 ա Դեբեդն է միմիայն անդընդում հուզված
բ Դեբեդն է պղտոր անդընդում հուզված
670 <...> ու գլխին տալիս

XXIX

Սրգավոր կանայք նորա ետևից
Հարայ կանչելով, ձորը վազեցին,
675 Իրենց կորցրածն էլ հիշելով նորից
Դիակի շուրջը կարգով շարվեցին։
Իգիթին վայել սրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին ձեն-ձենի տրված,
Տըղերքն էլ տրտում կորացած գլխով
680 Մընացին մոտիկ քարերին նըստած։
Ողբացին անշունչ դիակի վըրա
Անտեր մընացած ոչխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին նորա
Անճար մընացած խեղճ յարի մասին.
685 Ու նրա մասին, որ ընկերները
Հանդը գնալիս, Սարո կըկանչեն,
Որ սարից փախած սոված շընները
Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն։
Որ հով սարերի սովորած նանը
690 Էլ սար չի գընալ առանց Սարոյի,
Սև շորեր հագած կընըստի տանը,
Տեսած օրերը միտը կըբերի։
Եվ ամեն դատարկ մի հիշողություն
Կտրատում էին սիրտը խեղճ նանի,
695 Եվ աղաչում էր նա մեռած որդուն –
Մի անգամ խոսա, աչքը բաց անի։
Բայց չէին բացվում աչքերը փակված,
Շուրթերը կապտել, չորացել էին,
Նրանց արանքից ատամները բաց

---

679 Տըղերքն էլ տրտում, <...> գլխակոր
684 Անտեր մնացած իր <1 անընթ.> յարի մասին.

700 Սիպտակ շարքերով երևում էին:
– Ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ չես նայում,–
Նախատում էր նա անխելք ու <...> –
Դու իմ գերեզմանն ինչո՞ւ ես խբլում,
Դավաճան որդի, թշնամի որդի...
705 Ապա կատաղած, հանդուգն անեծքով
Ծառս եղավ դուշման երկընքի դիմաց,
Եվ հայհոյում էր, և կուրծքը կոծում,
Ու լալիս էին ձեն-ձենի տրված:
Գիշերը հասավ, սաստկացավ մութը,
710 Ու նըվաղեցին ձայները տըրտում,
Բոլորը լըռեց, մենակ Դեբեդը
Սըգում էր անդուլ գիշերվա մըթնում:
Սըգվոր գետը –
Ծեր Դեբեդը,
715 Սիրտը քրքրած,
Ջուրը փրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
720 Հեծեծում է:

էջի ձախ կողմում՝
Մրրկած արտեր
Ծաղիկ է ցանում առանձին Անուշը, շողոմքոր խոսքեր է ասում.
Ելման – վարար
Մլարն աչերս առել <...>

XXX

Լըսիր, ժողովուրդ, <...> տատին
Մի զարմանք տեսիլք տեսա էս գիշեր,
Աստված ողորմի մեր գեղին, հանդին,
Սիրտըս դողալուց վեր չի նըստել դեռ:
725 Մի ջուխտ մոմ ձեռիս, գիշերն երազում
Կանգնած եմ իբրև մեր ժամի դըռան,
Մին էլ զարհուրիկ մի ձեն եմ լըսում,
Թնդում են ահեղ կայծակի նըման,
Երկինք ու երկիր իրար խառնըվեց,
730 Մըթնեց, սասանեց, դողաց սար ու ձոր,
Ու մին էլ տեսնեմ առաջըս կանգնեց
Դեղին թիկունքով մի բոզ ձիավոր:
Առաջըս կանգնեց զարզանդ որոտաց.
– Ճանաչում ես ինձ, մեղավոր դու կին,

XXXIII

735 Գարունը եկավ, հավքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան,
Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,
Գետի եզերքին շըրջում է մոլոր,
Շըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
740 Երգեր է ասում ու ման է գալիս...
Սիրուն աղջիկ, ինչ ես լալիս,
Էդպես մենակ ու մոլոր,

---

721 Լըսիր, ջամահաթ, լըսեցեք.
728 ա Ահագին մի ձեն կայծակի նըման,
բ Թնդաց ահագին կայծակի նըման,
742 ա Ասավ օտարն աղջըկան.
բ Ասավ անցվորն աղջըկան
Այս տողից հետո ձեռագրում մի քանի էջ պակասում է:

Ինչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերում ամեն օր։
745 [Թե լալիս ես – վարդ ես ուզում,
Մայիս կըգա – մի քիչ կաց.
Թե լալիս ես – յարդ ես ուզում],
Ախ, նա գընաց, նա գընաց...
[Արտասվելով], լալով այդպես
750 Ետ չես դարձնիլ էլ գերիդ,
Ինչու իզուր հանգըցընում ես
Ջահել կըրակն աչքերիդ։
Նրա անբախտ հողի վըրա
Պաղ ջուր ածա աղբյուրի,
755 Դու էլ գընա նոր սեր արա,
Էսպես է կարգն աշխարհի։
– Շնորհակալ եմ, անցվոր ախպեր,
Աստված պահի քու յարին...
Ճամփիդ վերջում կանգնած է դեռ
760 Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սերը
Վայելեցեք անթառամ.
Ինձ արցունք է տըվել Տերը,
Ես պիտի լամ, պիտի լամ...

---

744 ա Էս ձորերում դու այնքան։
բ Էս ձորերում մենավոր։
գ Էդպես տըրտում մենավոր
749 Արտասվելով ու ման գալով
757 – Շնորհակալ եմ, ազիզ ախպեր,

765 [Այսպես է ասում] ու ման է գալիս,
[Երգեր է ասում], երգում ու լալիս.
Երգերը անկապ, երգերը տրխուր,
Արցունքի նման հոսում են իզուր,
Բայց լալիս է նա ու երգեր ասում.
770 Ու միշտ այն [անմիտ] տրրտունջն է խոսում,
Թե ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Ձորերը մնացին դատարկ <...>
Սարերը մնացին որբ ու անչոբան...
775 Թե ինչպես հանկարծ նա գընաց հեռու...
Էլ չի դառնալու, էլ չի դառնալու...

XXX

Ետ դա՛ռ, ետ, իգի՛թ,
Ետ դա՛ռ, անիրա՛վ,
Կարոտած յարիդ
780 Աչքը ջուր դառավ։
Ոչխարդ էն սարով
Շուռ տուր, տուն արի,
Փախիր գիշերով
Ու թաքուն արի...
785 Ա՜խ, էն կանանչ սարի լանջին
Ո՞վ է քընած էն տըղեն,
Վըրեն քաշած սև յափընջին,
Կուռը հանած էն տըղեն...
Ջա՛ն, իմ յարն է, ջանին մեռնիմ,

765-766 Ու լաց է լինում, ու ման է գալիս,
Երգեր է ասում ու լալիս, լալիս.
780 Աչքը ծով դառավ։

790 Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մուշ, անուշ մրրափել...
Վեր կաց, վեր, իգիթ,
Վեր կաց, անիրավ,
795 Ոչխարըդ բեր կիթ,
Օրը ճաշ դառավ։
Արի՛, ջա՛ն, արի՛,
Քո գալուն մեռնեմ,
Թուխ չոբան, արի,
800 Կարոտըս առնեմ։
Տեսե՛ք, տեսեք, դափ ու զուռնով
Ինչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ թոն ու ձունով
Ձի են խաղում, չափ տալի...
805 Ախչի, ախչի, մըտիկ արեք,
Էս ինչ տեսիլք ես տեսա.
Ո՞վ էր տեսել էսպես հարսնիք –
Ոչ հարս ունին, ոչ փեսա...
Բերում են, հըրե՛ն,
810 Ամա՛ն, մեր տան դեմ...
Վեր դըրեք, վըրեն
Հյուսերըս քանդեմ...
Ես էլ եմ գալի,
Էդ ո՞ւր եք տանում,

813-816 տողերի դիմաց, աջ լուսանցքում՝

Ես էլ եմ գալիս,
Էդ ուր եք տանում,
Ինձ էլ թաղեցեք
[Էդ ինչ եք անում]
Իր [մի] գերեզմանում

815 Ինձ էլ թաղեցեք
Իր գերեզմանում:
Ախ, չէ, ամա՛ն, ասում են, դա
Մի դիակ է <...> հոտած,
Արյունը չոր դեմքի վրա,
820 Աչքերն անթարթ, սիպտակած:
Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցողոտ-շաղոտ,
Հանաքներով ու խաղով...
825 [Ախ, էնպես ուրախ
Ետ արի մեկ էլ,
[Էն] ով կարա
Քո ճամփեն փակել...
Ոչխարդ էն սարով
830 Շուռ տուր, տուն արի,
Փախիր գիշերով,
Ու թաքուն արի...]

Ես էլ չեմ խոսի,
Չեմ խոսի քեզ հետ...
835 Ես կըխռովեմ –
Արի՛, մի լացացնիլ,
Ես շատ եմ լացել...

---

817 ա Ախ, չէ, ամա՛ն, ինչ լեշ է սա,
բ Ախ, չէ, ամա՛ն, էն ով է սա,
818 Զարհուրելի ու հոտած,
820 Աչքերը բաց, սիպտակած
825 Ախ, էն ծիծաղով
827 [Էն] ով է կարող
833-836 տողերի դիմաց, աջ լուսանցքում «не надо»:

Դե, գընա բարով, դե գնա բարով,
Ես էլ չեմ անցնիլ, քո անցած սարով։

---

840 Անլըռելի վըշվըշում է
Պղտոր ջուրը Դեբեդի,
Ընրա ափին կանաչում է
Մերժված շիրիմն իգիթի։
Ընրա շուրջը հեգ սիրուհին
845 Թընդացնում է ողբ ու լաց,
Ձայն է տալիս իր Սարոյին
Ու պըտըտվում մոլորված։
Եվ հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջըկա,
850 Բայց իր սիրած տղան երբեք
Չըկա, չըկա ու չըկա...
Վըշվըշում է գետը – վո՛ւշ, վո՛ւշ,
Եվ հորձանք է տալիս հորդ,
Ու կանչում է – արի՛, Անո՛ւշ,
855 Արի՛, տանեմ յարիդ մոտ...

* * *

Պահպանվել են նաև սույն ինքնագրի 825-838 տողերի հետևյալ տարբերակները.

I երես.

[Ա՛խ, էնպես ուրախ
Ետ արի մեկ էլ...
[Էն] ով է [յարաբ]

---

848 Ու հոսում են գիշեր-ցերեկ
850-854 տողերի դիմաց՝ «не надо»։

Քո ճամփեն փակել...
5 Ոչխարդ էն սարով
Շուռ տուր, տուն արի,
Փախիր գիշերով
Ու թաքուն արի:
Էլ մի ուշացնի,
10 Ես շատ եմ կացել,
Էլ մի լացացնի,
Ես շատ եմ լացել...
Դե, գընաս բարով,
Դե, գընաս բարով,
15 Ես էլ չեմ անցնիլ
Քո անցած սարով...
Ես էլ չեմ խոսիլ,
Չեմ սիրիլ քեզ էլ,
Տե՜ս, կըխըռովեմ...
20 Լաց կըլեմ ես էլ]...
Տե՜ս, կըխըռովեմ,
Լաց կըլեմ ես էլ,
Չեմ խոսիլ քեզ հետ,
Չեմ սիրիլ քեզ էլ...

25 Աղջի, աղջի, մըտիկ արեք
Սևալաչակ էն հարսին,
Ախպեր չունի, փեսա չունի –
Վայ իր ջահել մուրազին:

---

9 ա Արի, էլ մի ուշանա,
բ Եկ, մի ուշանա,
17 Չեմ խոսիլ քեզ հետ,
17 տողի դիմաց, աջ լուսանցքում՝
Ես էլ կըխռովեմ,
21 Ա՜յ կըխըռովեմ,
26-27 Մըտիկ արեք էն հարսին,
Ախպեր չկա, փեսա չկա –

Դ ինքնագիր (ԳԱԹ ԹՖ №157(5ա)

ԱՆՈՒՇ

I

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Այն չըքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն ահա փըռած տիրաբար
Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն:
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղուց կարոտով ըսպասում են ինձ,
Ու ձըմրան երկար գիշերը նըստած
Խոսում են Լոռու հին-հին քաջերից:
Դեպ այն սարերը, որ վեհ, վիթխարի,
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկա շուրջպարի բըռնած երկընքում
Հըրճվում են, ասես, ուրախ հարսանքում
Պերճ Արագածի նազելի դըստեր,
Որ Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ*
Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լոռի:

II

[Ողջույն վեհափառ լեռներ երկնահուպ,
Ո՞վ հըրաշալիք հըզոր Արարչի.
Եվ ահա հոգիս, ինչպես վառ ասուպ,
Թըռած գալիս է ձեր գըլխին հանդչի:
Այդ մութ ամպերում, որ ձեր գըլխներով
Անցնում են անհետ, ինչպես երազներ:

---

1 Կանչում է դարձյալ, կանչում անդադար

*Առասպել կա, թե Լոռու հսկաները՝ Դև-Բեթ (Դեբեդ գետը), Դև-Ալ (Դըվալ սարը) և ուրիշներ, հափշտակել են Արագածի աղջիկը բերել Լոռի:

Այդ գագաթներին, որ գոռոզ սիրով
Խոր անդունդներից բարձրանում են վեր,
Վրճիտ, փրրփրրուն ջրերի վրրա,
Որ ժայռի տակից հորդալով բրխում,
Իմ անհոգ, ուրախ մանկության նման
Դալարի միջին խայտում են, խաղում]։

III

Էյ հին ծանոթներ, էյ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա ու միտրս ընկան,
Առաջրս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չրկան...
Անցե՛լ են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
Որ անցած գարնան կային ձեր լանջում,
Անցե՛լ ձեր գրլխի հերվան ձյունի պես,
Բայց եկել եմ ես՝ նրրանց եմ կանչում։
Ողջո՛ւյն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թրռչուն կարոտով փրնտրում ձոր ու լեռ,
Դյութական ձայնով կանչում է հանդես։
Դուրս եկեք կրրկին շիրմից, խավարից,
Դուրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լրսեմ,
Կյանքով շընչեցե՛ք, ապրեցե՛ք նորից,
Լրցրեք պոետի հաճույքը վրսեմ...

IV

Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թավուտ ծրմակի լրռին խորքերից
Մանուկ հասակիս հրնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լրսում եմ նորից...
Թրնդում է զրվարթ աղմուկը բինի,
Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից...
Ու բոլորն, ահա, նորից կենդանի

Ելնում են աշխույժ վաղորդյան մութից,
Ու թարմ, ցողապատ լեռների լանջում...
Սուս, ականջ արա,– հովիվն է կանչում...

V

(Հովիվն երգում է)

55 Աղջի, անասուած, նըստիր վըրանում,
Ինչ ես դուրս գալի խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,
Խաղեր կապելով,
Զոլեր չափելով,
60 Ոչխարըս անտեր
Ընկել եմ հանդեր:

Ամա՛ն, էրեցիր սիրտըս քո սիրով,
Ոտըս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զորով,
65 Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ
Թուխամազ Անուշ:

Քու հերն ու մերը թե որ ինձ չըտան,
70 Արին կըթափեմ ես գետի նըման,
Սարերը կընկնեմ – կորչեմ անգուման,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
75 Աղջիկ, քեզ համար:

VI

Երգում է Սարոն ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստել վըրանում.

– Էն ով էր նանի, որ կանչում էր մեզ.
Դու չես իմանում, ականջ դիր, տես...
80 – Հերիք էր, Անուշ, ներս արի դագեն,
Քանի դուրս թրռչես, նայես դես ու դեն,
Տեսնողն էլ կասի՝ ինչ աղջիկ է սա,
Հազար մարդի մոտ կերթա կըխոսա:
– Մըտիկ տուր, նանի, էն սարի լանջին
85 Ինչքան ավլուկ է տալի կանանչին.
Նանի, թող գընամ քաղեմ ու հյուսեմ,
Էն սարի լանջին «ջան գյուլում» ասեմ:
– Հանգիստ կաց, Անուշ, դու հասած աղջիկ
Ինչ ունիս ջահել չոբանների մոտ,
90 Նըստիր վըրանում քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի, ամոթ է, ամոթ:
– Ախ, սիրտըս, նանի, չըգիտեմ ընչի,
Մին լաց է լինում սևակնած, տըխուր,
Մին թև է առնում – ուզում է թրռչի,
95 Չըգիտեմ թե ուր, չըգիտեմ թե ուր...

VII

Կըժերն ուսած, թըրվըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը զընգում սարն ի վեր:

100 «Ամպի տակից ջուր է գալի,
Թոշին տալի, փըրփըրում,
Էն ում յարն է նըստած լալի
Հոնգուր, հոնգուր էն սարում:

93 Մեկ լաց է լինում սևակնած, տըխուր,

Այ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
105 Որ գալիս եք սարերից,
Գալիս-անցնում հանդ ու չոլեր,
Յարս էլ խըմեց էդ ջըրից։

Յարաբ խըմեց, յարաբ հովցավ
Ջահել սիրտը էն յարի,
110 Յարաբ հովցավ, յարաբ անցավ
Անքուն ցավը ջիգյարի։

– Աղջի, քու յարն եկավ անցավ,
Վառված, տարված քու սիրով,
Էրված ջիգյարն՝ եկավ, անցավ,
115 Ջըհովացավ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Թոշին տալի, փըրփըրում,
Ախ, իմ ազիզ յարն է լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում»։

VIII

120 Ախ, ինչ լավ են սարի վըրա
Անցնում օրերն անուշ, անուշ,
Անըրջային, թեթևասահ
Ամպ ու հովերն անուշ, անուշ։

Ահա բացվեց թարմ առավոտ,
125 Վարդ է թափում սարին-քարին,
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,
Շընչում բուրմունք եդեմային։

---

124 Ահա ծաղկից վարդ առավոտ,

<. . . . . .
. . . . . .
130 . . . . . .
. . . . . .>

Ա՛խ, ի՞նչ հեշտ են սարի վրա
Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,
Շրվին փըչեց հովիվն ահա –
135 Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ:

IX

Ու պառավ նանի սըրտի մեջ հանկարծ,
Ձայն տըվավ թաքուն մի խավար կասկած:
– Էն ե՞րբ էր Անուշն իր կուժը առավ
Աղբյուրը գընաց ու ետ չըդառավ...
140 Ամպերն եկել են սարերը պատել,
Ձորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի...
Ու ելավ տեղից պառավը հանկարծ.
145 – Ո՞ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մազըդ կըտրած...
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զավակին.
– Աղջի՛, սևասիրտ, քու ահը կըտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կըմըտնի.
150 Ամպը կոխել է, աշխարհքը մըթնել,
Ի՞նչ ես կորցըրել՝ չես կարում գըտնել...
Աղջի՛, հե՛յ, Անուշ, ա՛յ աղջի, Անո՛ւշ...
Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ»:
Ու ձորի գըլխին մոլորված-կանգնած
155 Նայում է ներքև սիրտը սևակնած:
Ամպերն եկել են աշխարքը պատել,
Ձորերը լըցվել, իրար փաթաթվել,

Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վրխտում են հիմի։

X

160 – Թո՛ղ, կանչում են ինձ... մայրըս կիմանա...
– Չէ՛, Անուշ, քիչ էլ, մի քիչ էլ մընա...
– Չէ՛, թո՛ղ, ես գընամ... Ա՜խ, ինչ խենթ եմ ես.
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես.
Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում,
165 Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես երբ եմ եկել այստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրավ,
Էնքան մընացի աչքըս ջուր դառավ։
170 Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես.
Մընում էր յարին՝
Ու չեկավ նա տես։
Խեղճը դողալով
175 Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ
Ուռենի դարձավ։
Ջըրերի վըրա
Գըլուխը կախած
180 Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին,
185 Ո՞նց է մոռանում...
– Ա՜խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ինչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում.
Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,

Ո՞ւմ հետ եմ խոսում.
190 Էն, որ գիշերով շրհու եմ փընչում,
Էն ո՞ւմ եմ կանչում.
Էն, որ մոլորված նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում.
Էն, որ հառաչում ու ա՛խ եմ քաշում,
195 Էն ո՞ւմ եմ հիշում...
Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անաստված Անուշ...
Արբեցած, անուժ
Հառաչեց հովիվն ու սըրտին ընկավ,
Հալվեցավ, հանգավ:

XI

200 – Անո՛ւշ, ա՛յ աղջի, Անուշ, տուն արի,–
Կանչում է մայրը, հառաչում, կանչում:
– Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛,
Ձորից աղջըկա ձայնն է ղողանջում:
Ու մազերն անկարգ տըված թիկունքով,
205 Ու ցըրված շիկնած այտերի վըրան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նըման:
Նա կուժը դատարկ ետ բերավ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաշոր չըկա,
210 Թողել է ձորում ջըրի եզերքին,
Ա՛խ, անհոգություն ջահել աղջըկա:
– Նանի, վախեցի,– գանգատվում է նա,
Եվ ուզում է լալ, չի կարողանում.
– Նանի, ներքևում ես մարդիկ տեսա,
215 Թըվաց՝ թե թուրքեր էին լողանում...
Անիծում է ծեր մայրը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,

198 Հառաչեց հովիվն ու կըրծքին ընկավ,

Ու անեծք տալով, իջնում է նա ցած
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

XII

(Համբարձման գիշեր)

220 Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թրռչելով
Փերիները սարի գլխին
Հավաքվեցին գիշերով։
– Եկեք, քույրեր, սեգ սարերի
225 Զրքնաղաղեղ ոգիներ,
Եկեք, մատաղ սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ։

Օխտն աղբյուրից ջուր է առել,
Կույս սափորով, լուռ ու մունջ,
230 Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սրրտով խընդիրք արել –
235 Բարի ժրպտան իր սերին...

Աստղերն ահա ցոլուն-փայլուն՝
Բախտ են ժրպտում դեպի ցած.
Մենակ նրրանց աստղը անհուն
Ծովում կորավ դալկացած...

---

239 Սևում կորավ դալկացած...

240 Ափսո՜ս Անուշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս <...> քու սերին,
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերիդ...

[Վա՜յ քեզ, ջահել չոբան-իգիթ,-
245 Վա՜յ անմուրազ քու սերին,
Վա՜յ էն կանաչ-կարմիր թագիդ,
Ինչ վաղ ընկավ փըշերին...]

Ու նըրանց հետ՝ ցող-արցունքով
Լըցված սըրտերն ու աչեր՝
250 Սարի ծաղկունք տըխուր սյուգով
Հառաչեցին էն գիշեր։

– Վո՜ւշ-վո՜ւշ Անուշ, վո՜ւշ-վո՜ւշ քուրիկ,
Վո՜ւշ քու սերին, քու յարին,
Վո՜ւշ-վո՜ւշ Սարո, վո՜ւշ-վո՜ւշ իգիթ,
255 Վո՜ւշ քու սիրած սարերին...

– Եկեք քույրեր, չըքնաղագեղ,
Սեգ սարերի աղջիկներ...
Ու փերիներն այսպես տըխուր
Կանչում էին ողջ գիշեր։

260 Կանչում էին հըրաշալի
Հընչյուններով դյութական,
Ու հենց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ չըքացան։

Խոր սուզվեցին ակն աղբյուրի,
265 Մըտան կաղնին հաստաբուն,

---

259 Երգում էին ողջ գիշեր։

Ու լեռնային վրտակների
Ալիքները պաղպաջուն։

[XIII]*

(Առավոտը)

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով,
270 Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով։
«Համբարձում յայլա,
Յայլա ջան, յայլա,
Սև սարեր յայլա,
275 Յայլա ջան, յայլա։
Երգ ու բույր խառնած,
Թև-թևի բռնած,
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
280 Ծաղկի հետ խաղում՝
Ինչպես թիթեռներ։
Համբարձում յայլա,
Յայլա ջան, յայլա,
Լավ օրեր յայլա,
285 Յայլա ջան, յայլա։
Եկավ համբարձում
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում –
Ո՞վ է մեզ գբրված։
290 Ա՛յ ջան տըղա, չոբան տըղա, ո՞ւմն ես դու,
Աստված գիտի, աշխարհ գիտի – իմն ես դու։
Դե հանիր, աղջիկ,

*Այս և հետագա գլուխների համարները հետագայում ջնջվել են, փոխվել հեղինակի կողմից՝ պոեմի նոր խմբագրությանը համապատասխան։ – Խմբ.։

Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
295 էն իգիթ յարին։
Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի,
Ինչ դարդ ունիմ, քանի նա կա աշխարհի։
Համբարձում յայլա,
Յայլա ջան, յայլա,
300 Հուր-սըրտեր յայլա,
Յայլա ջան, յայլա։
Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում,
Ելնում է մեկին իր երազն ու սեր,
305 Մյուսի մուրազը սըրտումն է մընում։
Համբարձում յայլա,
Յայլա ջան, յայլա,
Սեր-օրեր յայլա,
Յայլա ջան, յայլա։
310 Մեռնիմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Սարի պես մեջքիդ
Կանգնած յար ունես։
Համբարձում յայլա,
315 Յայլա ջան, յայլա,
Սար-յարեր յայլա,
Յայլա ջան, յայլա։

[XV]

(Անուշը երգում է)

Ա՜խ, իմ բախտը իմ սրտի մեջ
Լաց է լինում <...>

318 Ո՜հ, իմ բախտը սրտիս մեջ

320 Ցնդում է <...>
Իմ սիրտը սև ու տըխուր:

[Մի՞թե արդեն ծաղիկ հասակ
<. . . . . .>
Էս աշխարքից դուք լիացաք,
325 Գընում եք սև ու տըխուր]:

Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք,
Անշուշտ մի ցավ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն են արցունք,
Սիրտներըդ սև ու տըխուր:

330 Ո՜հ, ծաղիկներն այս աշխարհում
Ջարշարվում են միշտ իզուր,
Տըրորվում են ու թարշամում,
Սիրտները սև ու տըխուր:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

II
[XVI]

Ձըմրան մի գիշեր. կար մի հարսանիք,
335 Հըրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի,
Գյուղն էին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լայն հըրապարակ
Բաց արին մեջ տեղն արձակ գլխատան,
340 Ջուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:

---

331 Ջարշարվում են միայն իզուր,
334-336 Ձըմեռվան գիշեր. կա մի հարսանիք,
Հըրճվում է զվարթ ամբոխը գյուղի,
Իջել են հանդից հովիվ պատանիք

Հարայ են տալի – քաշի՛ հա, քաշի՛...
Ու դուրս քաշեցին զոռով երկուսին,
Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
345 Անդրանիկ եղբայր – գառնարած Մոսին:
Ողջ գյուղը կանգնեց պարբսպի նման,
Ջոկվեց բաժանվեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տղերանց մեկի:
350 Գոռում են, գոչում երկու բանակից.
– Սրտապինդ կացեք, մի՛ վախեք, տղերք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:
Ու տաքանում են տղերքը սաստիկ,
355 Փեշերը հավաք խրրում են գոտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում, [փախս տալի կըրկին]:
Ադաթ կա, սակայն, այն մութ սարերում,
Ու միշտ հնազանդ հընոց ադաթին,
360 Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին:
Ու իրար բըռնած Սարոն ու Մոսին
<...> ընկնում խոզապարկուկի,
Ընկնում են գետին, ելնում միասին,
365 Դըժվար է իբրև հաղթել մեկմեկի:
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Ջուր սըրտատրրոփ նայում աղջիկներ,
Եվ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել երկյուղից, ինչպես մի պատկեր:
370 Անուշը կանգնած... Սարոն նըկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ,
Աչքերի առջև մըլարը պատեց.
Մոռացավ ընկեր, ադաթ ու աշխարք,

355 Փեշերը քիփ-պինդ խրրում են գոտին,

Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
375 Կատակի տալով, թողած էր իրեն,
Ուժ արավ Սարոն, ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրեն:
Ամբոխը թափվեց հարա-հըրոցով,
Վեր թըռցրեց երկու փահլևաններին,
380 Եվ ուրախության աղմուկ-գոռոցով
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:
Ցընծության ձայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու օճրք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
385 Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:

III
XVII

Վեր կացավ Մոսին, իրեն կըտրատում,
– Թող գա,– գոռում է,– որ բըռնենք նորից,
Թե չէ նամարդը, արևս եմ երդվում,
Էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից:
390 Վեր չի գըցել ինձ... ինձ խաբել է նա...
Մեյդան բաց արեք, թող մին էլ մեջ գա...
Ու ամեն կողմից զըվարթ հըրհըռում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.
– Չէլա՛վ, էս չէլավ,
395 Վեր չի գըցել դեռ,
Մոսին թոլ էլավ,
Խոզապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛ տըղերք,
Շատ էլ լավ կանի,
400 Մեջքը թափ տըվեք,
Թող մին էլ բըռնի:
Հա՛, հա՛, հա՛ տըղերք,
Մեջքը թափ տըվեք...

IV
XVIII

Ու իրար անցած հարսանքի տանից
405 Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր,
Արյուն է կաթում սևակնած սրտից,
Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
– Ամոթ քեզ, Մոսի, թուք ու նախատինք,
Ամոթ քեզ նըման գոված իգիթին,
410 Մի անունդ հիշիր, մի բոյիդ մըտիկ,
Դեռ քո թիկունքը չէր տեսել գետին:
Ինչպես վեր ընկար դու – սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գյուղը կանգնած...
Դու... կուճ գաս տակին Սարոյի ծընկան,
415 Նըրանից հետո երևաս կանանց...
Եկած էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դե մեռիր, էլի, գետինը մըտիր,
Տանը վեր ընկիր, իլիկ պըտըտիր...

V
XIX

420 – Վայ, վայ, Մոսի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
Սըրանից հետո չեմ սիրիլ նըրան.
Վախենում եմ ես, ղամեդ տեղը դիր...
Սիրտըս դողում է տերևի նըման...
Խընդրում էր լալով եղբոր առաջին
425 Անզոր ու դալուկ իր քույրը չոքած,
Մոսին, փայլկտուն խանչալը ձեռին,
Ուզում էր նըրան մորթել աչքը բաց:
– Դե իմ անունով երդվիր, անըզգամ,

412 Ինչպես վայր ընկար դու – սարի նըման,
425 Անզոր ու դալուկ Անուշը չոքած,

Որ էլ Սարոյին դու չես սիրելու,
430 Թե չէ՝ տեսնում ես, խանչալը հանած,
Մինչև դաստակը սիրտդ եմ խըրելու։
– Քու ոտի հողն եմ, Մոսի ջան, Մոսի...
Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս...
Ես էլ Սարոյին չեմ սիրում, ասի,
435 Տեսնո՞ւմ ես – չոքած ինչպես եմ լալիս...
– Դու խաբո՞ւմ ես ինձ, <...> խաբեբա.
Չե՞ս սիրում ասիր. էն ինչ է հապա,
էն ինչ է հապա, որ տեղն ենք մըտնում,
Հեկեկում ես դու գիշերվա մըթնում...
440 էն ինչ է հապա, որ դու երազում
Սարո ջան, Սարո՜... Սարո ես ասում...
– Մոսի ջան, Մոսի, գըլխովըդ ման գամ,
Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թող էս անգամ.
էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
445 էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
Ինձ մի՛ ըսպանիր, զամեդ տար հեռու...
Քու քո՞ւյրը չեմ ես... իմ Մոսին չես դո՞ւ...

XX

Այս թըշվառ օրից թըշնամի դարձան
Ախպեր տըղերքը այս դեպքի համար,
450 Ընկեր-բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտության չեղավ մի հընար։
էն ո՞ր Մոսին էր, անկոտրում Մոսին,
Որ աչքը դեռ բաց այս լույս աշխարքում
Իրեն հարազատ քըրոջը տեսներ
455 Նամարդ ընկերի – Սարոյի գըրկում։
Գուցե գիշերս էլ, իր հերսից անքուն,
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
Սարոյի անունն ու սերը թաքուն
Խանչալի ծայրով սըրտիցը հանի։

460 Ով գիտի՝ գուցե հենց այս գիշեր էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու համառ,
Մեկմեկու հոտից ոչխար են քըշել,
Մեկմեկից վըրեժ առնելու համար:
Կարող է նույնպես պատահել հանկարծ,
465 Որ մեկի դեզը – արդյունքը հընձի,
Գիշերվա ժամին, հըրով բըռընկած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի:

<...> Բոլորը լըռեց, մենակ Դեբեդը*
Սգում էր անդուլ գիշերվա մըթնում:
470 [Սըգվոր գետը՝
Ծեր Դեբեդը՝
Սիրտը քըրքրած,
Ջուրը փըրփրած,
Քարոտ ափին,
475 Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է]:

XXVI

– Լըսի՛ր, ժողովո՛ւրդ, Ջառնիշան տատին.
Մի զարմանք երազ տեսա էս գիշեր –
480 Աստված ողորմի մեր գեղին, հանդին.
Սիրտըս դողալուց վեր չի նըստել դեռ:
Մի ջուխտ մոմ ձեռիս՝ գիշերն երազում
Կանգնած եմ իբրև մի ժամի դըռան.
Մին էլ զարհուրիկ մի ձեն եմ լըսում,
485 Թընդում է ահեղ կայծակի նըման.

*467 տողից հետո շարունակությունը տրվում է ըստ մեկ այլ ձեռագրի՝ գրված երկու առանձին էջի վրա:

478-479 – Լըսի՛ր, ժողովուրդ, Ջառնուշան տատին.
Մի զարմանք տեսիլք տեսա էս գիշեր.

Երկինք ու երկիր իրար խառնըվեց,
Մըթնեց, սասանեց, դողաց սար ու ձոր,
Ու մին էլ տեսնեմ՝ առաջըս կանգնեց
Դեղին թիկունքով մի բոզ ձիավոր...
490 Առաջըս կանգնեց՝ զարգանդ որոտաց.
– Ճանաչո՞ւմ ես ինձ, մեղավոր դու կին.
Տեր-ինքն է ղըրկել ձեր գեղն ինձ,– ասավ.–
– Երեսըս,– ասի,– քու ոտի տակին...
– Տեսնո՞ւմ ես,– ասավ,– էս գավազանը,
495 Աչքըդ կըկոխեմ, եթե չըհայտնես,
Գեղը չըբերեք էն սատկած շանը,
Սուրբ Գեորգն, ասա, պատվիրեց էսպես.
Թե չէ՝ ձեզ վըրա, ձեր հանդի վըրա
Ցասում կըղըրկեմ, կըրակ կըթափեմ,
500 Որ արտի-ցանքսի տեղը սևանա,
Երկընքի նամն ու ցողը կըկապեմ...
Մինչև սասանած լըսում էի ես,
Տեղըս քարացած տեսած հըրաշքից,
Հովին խառնըվեց, ամպին խառնըվեց
505 Ու կըրկին անտես եղավ իմ աչքից:
Ու մին էլ տեսնեմ, պատանն ուսերին,
Շուրջըս մեռելներ վեր կացան մին-մին.
– Մեղք ենք, թողարեք, որ հանգիստ քնենք.
Մեզ մոտ չըբերեք էն չարի զարմին...

[XXVII]

510 «Մեզ մոտ չըբերե՛ք, մեր գյուղ չըբերե՛ք...
Հեռո՛ւ մեզանից Աստծու կըրակը...
Հեռո՛ւ կորցըրեք, դըժոխքը տարեք
Աստծու ատածի հարամ դիակը...
Խավար սարսափով թընդում է, գոռում

489 Դեղին թիկունքով մի սև ձիավոր...

515 Ողջ գյուղը կիտված սև ամպի նման.
Ու իգիթն անթաղ ընկած է ձորում.
[Ու մայրը հոգնած նրվում է վրրան]։

516 Ու դաչաղն անթաղ ընկած է ձորում.

ՍԵՎԱԳԻՐ ԱՅԼ ՀԱՏՎԱԾՆԵՐ
(ԳԱԹ ԹՖ №158(5 ե, դ)

* * *

Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թավուտ ծըմակի լըռին խորքերից,
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում եմ նորից:

5 [Եվ ահա նորից ժըպտում են սըրտիս
Ինձ սիրող աչքերն, աչքերն հարազատ,
Եվ ահա նորից ես թռչում եմ <...>
Եվ սիրտս առողջ և միտքըս ազատ:

Բացվում է ահա լեռան ուսերից,
10 Քրքում է թափում պայծառ առավոտ,
Ամպ ու <1 անընթ.> ելնում մութ-մութ ձորերից,
Բուրմունք են շընչում [մարգեր] ու արոտ]:

Թնդում է ահա աղմուկը բինի
Ամպերի տակին, սարերի լանջին,
15 Եվ բոլորն ահա նորից կենդանի,
Կանգուն ապրում են աչքիս առաջին –

Առաջին երկու քառյակների տեղերը համարակալումով փոխված են:

5 Եվ ահա նորից մանուկ իմ սիրտը
9 ա Բացվում է ահա պայծառ առավոտ
բ Լեռան ուսերից ահա ճառագում
10 Եվ շնչում եմ ես թարմությունը վաղորդյան,
12 Եվ բույր են շընչում մարգեր ու արոտ:
13 ա Եվ ահա զարթնում է կյանքը բինի
բ Եվ ահա անզուսպ աղմուկը բինի
14 Թնդում է – շարժվում սարի լանջին,

Ջա՛ն, ականջ արա, հովիվն է երգում,
Ա՜հ, ձենիդ մատաղ, ա՛յ իգիթ չոբան,
Ապրում է, ապրում այդ ձայնն իմ հոգում,
Այդ ձայնը, հուժկու սարի պահապան։

Եվ լըսել եմ ես, երբ մութ գիշերով
Տարափ վշշալիս, կայծակ ճայթելիս,
Որոտում է նա ահեղ շեշտերով,
Ահ ու տագնապին մեզ սիրտ էր տալիս –

Լսել եմ զվարթ, անհոգ օրերում,
Գարնան օրերում, երբ որ նա բերին,
Ջիլ, երկար ու ձիգ թնդում էր ձորում,
Բերա էր կանչում իրան գառներին։

Երբ անփույթ խաղով առվակի նման
Հոսում էր աշխույժ սարերի լանջում,
[Երբ ախ ու վախով լուսնյակ գիշերին]
[Գիշերվա խարույկի առաջ մղկտում էր նա],
Բայց ինչո՞ւ այսօր տխուր է հնչում <...>

---

17 ա	Եվ ահա լըսիր, հովիվն է երգում,
բ	Է՛յ, ականջ արա, հովիվն է երգում,
18	Ա՜խ, ձենիդ մատաղ, ա՛յ իգիթ չոբան,
21	Հիշում եմ ես, երբ մութ գիշերով
25	Լսել եմ զվարթ հարազատ վայրերում,
27	Ջիլ, երկար ու ձիգ կանչ<ում> էր ձորում,
28 տողից հետո՝	
ա	[Լսել եմ, երբոր անհոգ խաղալով
բ	Երբ անփույթ խաղով սարերի վրա
	Հոսում էր աշխույժ վըտակի նման,
ա	Երբ թաքուն ցա<վով> փոթորկի առաջ
բ	Երբ ախ ու վախով փոթորկի առաջ
	Մղկտում էր] <...>
29	Երբ անփույթ խաղով վտակի նման
31	Երբ ախ ու վախով մթնում գիշերվա

Ինքնագրի վերջին էջի լուսանցքներում մատիտով արված հավելումներ.

Հեռու հանդերում թափառում էր նա,
Թաքուն, հալածված գազանի նման,
Վերջապես եկավ համբավը ահա –
Սպանվեց դաշաղն <...>

* * *

ա *Քշված-հալածված թափառում էր նա*
բ *Թափառում էր նա քշված-հալածված*
գ *[Փախստական] թափառում էր նա*
Ինչպես <...> գազան անտառի
ա *Վերջապես եկավ սև բոթը*
բ *Վերջապես եկավ սև գույժը*
Ահա սպանված է նա...

* * *

Արյունոտ
Սպանված
Իգիթը անթաղ ընկած է ձորում,
ա *Իր մայրն է սգում վրան կարոտած,*
բ *Ու մայրը հոգնած նվում էր վրան,*
Հայրական գյուղին սարսափ է տիրում,
Քինոտ գյուղացիք մերժում են նրան,
Հրացան առած, թողած տուն ու տեղ
<...> նա փախստական

* * *

Երազ է եկել [գյուղին] վերևից

* * *

Արյունոտ, անթաղ ընկած է ձորում,
Ու չունի վրան, չունի սգավոր,
Մայրն է սգում վրան կարոտած –
Հարազատ գյուղին սարսափ է տիրում,
Երազ է եկել վերևից ահավոր <...>

351 տողի մեկ այլ տարբերակ.

[Քնքույշ] մի ցավ ունիք լուռ,

ՊՈԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԹ, 1903, էջ 93-127

ա) Բացակայում են վերջնական խմբագրության 186-197, 272-277, 346-361, 540-543, 668-671, 692-695, 700-707 տողերը (ընդամենը 54 տող):
Պոեմի այս հրատարակությունը բաղկացած է 802 տողից:

բ) Մի շարք գոյական և դերանվանական բառերում հաճախ կիրառվում է այ երկհնչյունը. այս, այն, այսպես, մայր, ձայն, լայն, ծայր: Դրանք հետագա հրատարակությունների մեջ փոխարինվել են էս, էն, էսպես, մեր, ձեն, լեն, ծեր բառաձևերով: Նմանապես 1903 թ. քույրիկ, եղբայր բառերը հետագայում դարձել են քուրիկ, ախպեր: Առանձին տողերում կատարվել են նաև հակառակ կարգի փոփոխություններ. գալի, տալի, լալի, ջահիլ բարբառային ձևերը հետագայում փոխարինվել են գրականով. գալիս, տալիս, լալիս, ջահել և այլն:

գ) Առաջին երգի «Փախցրին բերին անառիկ Լոռի» տողն ունի տողատակի ծանոթագրություն. «Առասպելն ասում է թե՝ Դև-Ալը (Դվալ սարը) և Դև-Բեթը (Դեբեդ գետը) և ուրիշ դևեր՝ հափշտակել են Արագածի աղջիկը, բերել են Լոռի»:
Նույնը՝ ԲԲ, ՀԳ

դ) Տեքստային տարբերություններ

107	Դու չես իմանո՞ւմ. ականջ դի՛ր, տե՛ս...
240	– Նանի, վախեցա, գանգատվում է նա,
293	Քեզ սիրի ով որ, աղջիկ:
300	Սիրտդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
302	– Ա՛խ, չէ՛, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
565	Աստված խընայի իր նաշար նանին...
634	Դեբեդն է միայն անդընդում՝ հուզված՝
635	Խրլաձայն ողբով սուրում դեպի ցած:
652	Սրգավոր կանայք նորա ետևից
665	Հանդեր գընալիս Սարո կրկանչեն,
688	Եվ նա կատաղած՝ հանդուգն անեծքով
696	Գիշերը իջավ, սաստկացավ մութը
738	Նրրա անբախտ հողի վրրա
829	Եվ հոսում է գիշեր-ցերեկ
840	Դուշման Դեբեդն է պղտոր մրոընչում:
849	Եվ Աստվածային անհաս խորհրդով

Անուշ, Թիֆլիս, 1904, «Հայ բանաստեղծներ» մատենաշար, հրատ. Ստ. Լիսիցյանի և ընկ. №2, 40 էջ

ա) ԲԹ-ի տեքստին ավելացված են մի քանի նոր հատվածներ (ընդամենը 26 տող), որոնք վերջնական տարբերակի հետևյալ տողերով սկսվող հատվածներն են.

272-277	Դե հանիր, աղջի, վիճակն ի բարին...
540-543	Մնաց հանդերում: Եվ ահա մի օր...
668-671	Ծանրը չոմբախը, գըլուխը մեխած...
670 տարբերակ	Երկայն խանչալը պատիցը կախած
692-695	Կարմիր արևից ընկած, Սարո ջան...
692-693 տարբերակ	Կարմիր արևից ընկար, Սարո ջան...
	Կանաչ տերևից ընկար, Սարո ջան...
697 տարբերակ	Եվ նըվազեցին ձայները տըրտում,
700-707	Սըգվոր գետը՝ Ծեր Դեբեդը...

բ) էջերի տողատակում հեղինակը տվել է հետևյալ բարբառային բառերի բացատրությունը.

դագեն – վրան
բալեդ – զավակդ
դոշ – կուրծք
հոնգուր-հոնգուր – հեկեկալով
զուլալ – վճիտ
հարամի – ավազակ
շըհու – սրինգ
քուշուշքը – քող, շղարշ
խոզապարկուկի – միասին, կողք-կողքի ընկնել
թոլ էլավ – շուռ եկավ, գլորվեց
զամեդ – դաշույն
եսիր – գերի
նամարդ – տմարդի
արջախում – հանգրվան, անասունի հանգիստը
մըտի – ձորի մուտքը
ջահել-ջիվան – երիտասարդ

նաչար – խեղճ
թայ – հավասար, չափ
բութես – ապավեն, հույս
բեզարած – հոգնած
ծառս – բարձրանալ

ԲԲ, 1908, էջ 117-149

ա) Կրճատված տողեր՝ 262-265, 540-543, 668-671, 692-695, 700-707:
բ) Փոփոխության ենթարկված տողեր.

50	*Գոռոզ շարքերով բըռնած շուրջպարի,*
61	*Անցել են ինչպես ծաղկունքը պես-պես,*
107	*Դու չե՞ս իմանում. ականջ արա՛, տե՛ս...*
143	*Այրող ցավը ջիգյարի...*
293	*Ով որ քեզ սիրի, աղջիկ՝:*
302	*Ա՛խ, չէ, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ,*
521	*Կըլիներ ուղիղ գիշերվան կեսը,*
619	*Որ դուռը հանկարծ աղմըկեց էսպես...*
647	*Հարայ է կանչում, մաղերը պոկում:*
649	*Ցավից խելագար հեկեկում, լալիս.*
712	*Ծառ ու ծաղիկ սոսափելով*
802	*Մի դիակ է լո՛ւռ, սառած,*

Հայ գրողներ, հատոր Ա,
Թիֆլիս, 1909, 2-րդ տպ., 1914, էջ 112-124

ա) Այ երկհնչյունը փոխարինվել է է բարբառային ձևերով՝ էս, էն, ծեր, մեր, հեր և այլն:
բ) Փոփոխության ենթարկված տողեր.

18	*Ափսոս իգիթ քո յարին*
22	*Լըցված սըրտերն ու աչքեր*
50	*Գոռոզ շարքերով բըռնած շուրջպարի*
143	*Էրող ցավը ջիգյարի...*

՝Վրիպակների բաժնում այս տողն ուղղված է՝ «Քեզ սիրի ով որ, աղջիկ»:

186-197 տողերը չունի:

293 Քեզ ով որ սիրի, աղջիկ:

329 Քո խաղըդ խաղա, ջան դյուլում ասա:

346-361 տողերը չունի:

449 Սրանից հետո չեմ սիրի նըրան...

455 Ուզում էր մորթի նըրան աչքը բաց:

472-473 էլ չեմ սիրի ես, երբ դու չես ուզում,
էլ չեմ կանչի ես նըրան երազում...

475 Քո քույրը չեմ ես... իմ Մոսին չեմ դու...

503 Հըրացանների մեջտեղից բըռնած:

536 Մենակ Անուշի եղբայրը – Մոսին

538-539 Ուր որ էլ լինեն, նըրանց միասին
Գըտնի, կոտորի, սիրտը հովանալ:

540-544 տողերը չունի:

565 Աստված խնայիր իր նաշար նանին...

594 Աստված խնայեց կոպիտ եղբայրը

619 Որ դուռը հանկարծ աղմըկեց էսպես...

667-671 տողերը չունի:

700-707 տողերը չունի:

712 Ծառ ու ծաղիկ սոսափելով

738 Նըրա անբախտ հողի վըրա

Անուշ, Թիֆլիս, 1916, հրատ. «Լույս» ընկ., 48 էջ

ա) Վերականգնված են ԲԲ-ում կատարված կրճատումները և ավելացվել է երկու նոր հատված (ընդամենը 28 տող), որոնք վերջնական տարբերակի հետևյալ տողերով սկսվող հատվածներն են.

186-197 Ինձ չես լըսում, / Չես ափսոսում...

346-361 Ամ, իմ բախտը կանչում է ինձ,
/Չեմ հասկանում դեպի ուր.

բ) Վերջնական խմբագրությունից տարբերվող տողեր.

107	Դու չես իմանում... ականջ դիր, տես...
293	Քեզ սիրի ով որ, աղջիկ:
302	– Ախ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
508	– Էս գիշեր, կեսը կըլիներ գիշերվա,
696	Գիշերը ընկավ, թանձրացավ մութը,
855	Գալիս՝ կարոտով մի հեզ համբուրվում

Նույն տեքստը (չհաշված վրիպակի բնույթ ունեցող մի քանի բառեր՝ ԲՊ, 1922, էջ 179-214: Միակ տարբերությունը պոեմի գլուխների համարակալումն է (ոչ թե հռոմեական թվերով, այլ հայկական այբուբենի տառերով):

Անուշ, Կ. Պոլիս, 1921, «Ժամանակակից» մատենաշար, թիւ 36, 32 էջ

ա) Այ երկհնչյունը փոխարինվել է է բարբառային ձևերով՝ էս, էն, ծեր, մեր, հեր և այլն:

18	Ափսոս իգիթ դու յարին,
107	Դու չես իմանում. ականջ դիր, տես...
113	Ինչքան ավլուկ է տալի կանանչին
126	Նանի ջան, նանի, կուժը թող թռնեմ,
186-197 տողերը չունի:	
204	Թարթիչ չորացավ,
225	Արբեցած, Անուշ,
272-277 տողերը չունի:	
293	Քեզ սիրի ով որ աղջիկ
302	Ախ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
186-197 տողերը չունի:	
536	Մենակ Անուշի եղբայրը – Մոսին
540-544 տողերը չունի:	
552	Մի գարիդ գըցիր, թե սրտով խընդաս,
557	Խաղ են կանչում ու ձենով լալի,

565 Աստված խընայի իր նաշար նանին...
594 Աստված խընայեց կոպիտ եղբայրը
612 Անուշը թողեք ուղիղ ինք ասի,
633 Նայում են ներքև... ձայն չի գալի դեռ
665 Հանդեր գնալիս Սարո կըկանչին
668-671 տողերը չունի:
696 Գիշերը իջավ, սաստկացավ մութը,
700-707 տողերը չունի:
786 Ինչ հարսանիք է դուրս գալի
805 Նա սիրում էր անուշահոտ,

Գրական գոհարներ, հատոր առաջին, Թիֆլիս, 1922, էջ 216-239

Վերջնական խմբագրությունից տարբերվող տողեր.

43 Ու թևերն ահեղ փռած տիրաբար
802 Մի դիակ է լուռ, սառած,

ԲԹ մի օրինակի վրա «Անուշ» օպերայի լիբրետոյի համար կատարված աշխատանքը (ԳԱԹ, ԹՖ, №3828(1354)

ա) Պոեմը բաժանված է չորս գործողության: 1-ին գործողությունն ընդգրկում է պոեմի նախերգանքն ու առաջին երգը, 2-րդ գործողությունը՝ երկրորդ, երրորդ և չորրորդ երգերը, 3-րդ գործողությունը՝ հինգերորդ երգը և 4-րդը՝ վեցերորդ երգը: Տեքստի համապատասխան տեղերում Թումանյանը նշել է՝ «Վերջ Ա. գործ.», «Վերջ Բ. գործ.» և այլն:

բ) Շատ էջերի ձախ կողմը նշված են գործող անձանց անունները: Այսպես, «Նախերգանքի» տարբեր մասերում նշված են. Ալքեր, Քաջքեր, իսկ հաջորդ էջերում՝ Սարո, Անուշ, Մայրը, Մոսի, Մերունի, Ա խումբ, Բ խումբ, Աղջիկներ, Ընկերուհին և այլն: Պոեմի պատմողական որոշ հատվածներ կրճատված են:

գ) Բազմաթիվ էջերում կան նշումներ պոեմը լիբրետոյի վերածելու, տեքստն ընդարձակելու կամ սեղմելու վերաբերյալ, ինչպես նաև նոր գրված մի շարք հատվածներ: Այդ նշումները և լրացումները կատարված են տեքստի հետևյալ տեղերում (ըստ պոեմի վերջնական բնագրի տողերի համարակալման).

4-5 տողերի միջև.

[Քաջքերի համար մի տուն (չափն ինչ ուզում է լինի)]

132 տողից հետո.

Ա խումբ աղջիկները
Հա, հա, հա, հա.

143 տողից հետո.

Գ խումբ աղջիկները
Մի տուն ևս մի ուրիշ խմբի բերանում. մի ուրիշ խումբ է գալիս: Բոլորը միասին դարձին:

151 տողից հետո.

Երկու սիրահարներ իրար պատահում են և խոսում:

169 տողից («Մընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ».) հետո նշված է.
«3 անգամ»:

176 տողից առաջ գրել, բայց հետո ջնջել է.

[Երկու սիրահարներ, պատանիներ... խոսքեր]

244-247 տողերի դիմաց.

Գրել մոր անեծքը. կարճ:

248-251 տողերի դիմաց.

Երգելով ջուր են առնում աղբյուրներից և ծաղիկ քաղում. երգերով ծաղիկների ու աղբյուրների հետ խոսում են կարճ տողերով:

271 տողից հետո.

Դե հանիր, ա՛ղջի,
Վիճակն 'ի բարին,
Երգերով գովենք
Էն իգիթ յարին:
Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի,
Ինչ դարդ ունիմ քանի նա կա աշխարհի:

306-317 տողերի դիմաց.

[Սեղմել կարճ տողերով]

318-329 տողերի դիմաց.

Չորս տող. երկու տողը ընկերուհին, երկուսը խումբը:

329 տողից հետո.

Անուշի երգը դնել:

500-503 տողերի դիմաց գրված է.

Կենդանացնել

524-527 տողերի դիմաց.

Ման եկող խումբը մի (տուն) երգում է ձորը մտնելով:

543 տողից հետո.

Մնաց հանդերում. և ահա մի օր
Քաղվոր կանանց մեջ, մթան հետ թաքուն
Շորերը պատռած, տրխուր, գլխակոր[1]
Անուշն անտառից եկավ հորանց տուն[2]:

590 տողի դիմաց.

[Լալիս է մի երկու տող]:

618-621 տողերի դիմաց.

Կենդանացնել. հառաչանքներ, բացականչություններ:

657 տողի դիմաց.

Լալկանների երգը մի տուն:

---

[1]ա Եկավ Անուշը տրխուր, գլխակոր:
բ Տրխուր, գլխակոր Անուշը եկավ:
[2]ա Անուշը ձորից եկավ հորանց տուն:
բ <1 անընթ.> առավ Անուշն հորանց տուն:

667 տողից հետո ավելացված է.

Ծանըր չոմբախը գըլուխը մեխած
Օճորքում դըրած պիտի մըրոտի,
Երկայն խանչալը պատիցը կախած,
Պատենում մընա ու ժանգը պատի:

691 տողից հետո ավելացված է.

– Կարմիր արևից ընկած, Սարո ջան,
Կանանչ տերևից ընկած, Սարո ջան,
Օրս մթնեց, Սարո ջան,
Արևս հանգավ <...>

699 տողից հետո ավելացված է.

Սըգվոր գետը,
Մեր Դեբեդը,
Սիրտը քրքրած,
Ջուրը փրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է:

726 տողի դիմաց կա նշում՝

«Վերջալույս»

752-760 տողերի դիմաց գրված է. «Երգ»:

գ) Բնագրում ընդգծված և տողատակում բացատրված է 26 բարբառային բառ: Նրանցից 21-ը մտել են պոեմի 1904 թ. առանձին հրատարակության մեջ (տես այդ հրատարակության նկարագրությունը): Մյուս բառերի բացատրությունը.

փահլևան – ըմբիշ
մըլար – մշուշ

աղլուխ – թաշկինակ
տարած ետ բերած – փախցրած, կրկին ետ ղրկած
թոն – անձրև

«Անուշ» օպերայի լիբրետոյի գործող անձինք (ԹԹԳ1079/23-8)

Անուշ
Սարո
Մոսի
Վարդիշաղ
Մանիշակ կողմնակի կանայք
Անուշի մայրը –
<Անուշի> հայրը –
Քահանան
Ծերունին
Սարոյի մայրը
երիտասարդներ
աղջիկներ
հովիվներ
անցորդ
տիրացուներ
լալկան կանայք

Մի հատված լիբրետոյից (ԹԹԳ1079/23-8)

Անուշի մայրը, որ քարի գլխից կանչում է – հետը եկած երեխաներն էլ ետևից միասին ձեն են տալի – Անո՛ւշ, Անո՛ւշ։
Հարսանիքը բեմի վրա դուրս է գալի – սկզբում երեխաները խաղալով –
Հետևից երգեր – Թագվորի մեր, դուրս արի –
Ինչ ու ինչեր ենք բերել ևն
Ապա՝ կոխը –

ԲԲ առանձնատիպերի վրա կատարված ուղղումներ և նշումներ (ԳԱԹ ԹՖ №3840(1355բ)

«Անուշ» վերնագիրը կրող էջի վրա (115) գրված է՝ «Նոր տպածը դնել»:

Ձեռագրով փոփոխված բառեր (նախ բերվում է բառի տպագրված ձևը, ապա՝ փոփոխվածը, իսկ փակագծում՝ տողն ամբողջությամբ, նոր տեսքով):

143 այրող – անքուն (Անքուն ցավը ջիգյարի...)
224 անաստված – ախ, Անուշ (Ախ, Անո՛ւշ, Անո՛ւշ, ախ, Անո՛ւշ, Անուշ...)
240 վախեցա – վախեցի (– Նանի, վախեցի, գանգատվում է նա,)
293 Ով որ քեզ սիրի – քեզ սիրի ով որ (Քեզ սիրի ով որ, աղջիկ)
300 բանի – խոսքի (Սիրտըդ մի՛ կոտրի սուտ խոսքի համար)
302 չունեմ – չի ունեմ (– Ա՛խ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ)
373 եղբայր – ախպեր (Անդրանիկ ախպեր գառնարած Մոսին)

411 տողի դիմաց, ձախ լուսանցքում գրված է. «գոչեց»:

571 խավարն – աշխարհքն (Սարերից իջնում, աշխարհքն է պատում)
634 միայն – մենակ (Դեբեդն է մենակ անդընդում հուզված)
698 ծերուկ – մենակ (Հոգնեցի՛ն, հանգա՛ն... Մենակ Դեբեդը)
699 մենակ – խեղդուկ (Սրգում էր խեղդուկ խավար անդընդում:)

636, 676, 688, 697 և 708 տողերի սկզբում «և» շաղկապը փոխարինված է «ու»-ով:

«Այ» երկհնչյունը գրեթե ամենուրեք փոխարինված է «է» ձայնավորով (էս, էն, հեր, մեր, ձեն և այլն):

Նստիր, կոտրիր, հեռացիր, գցիր և նման հրամայական ձևերում հանված է վերջին «ր» տառը:

ԲԲ հրատարակության մի ուրիշ օրինակի «Անուշ» տիտղոսաթերթի վրա գրված է. «Բաքվի առաջին ձևը – աղճատված»:

120 էջի ձախ լուսանցքում գրված է «6 տող», որով Թումանյանը վերականգնել է տպարանի կողմից բաց թողնված II գլխի վերջին 6 տողը:

82 տողում սխալ շարված «երգում» բառը լուսանցքում ձեռագրով փոխարինված է «կանչում»-ով (Սո՛ւս... ականջ արա, հովիվն է կանչում...):

107 տողի դիմաց (Դու չե՞ս իմանում. ականջ դիր, տե՛ս...) գրված է. «պակաս վանկ»:

ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ

(ԳԱԹ ԹՖ 159(6գ)

(էջ 115)

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂՎԱԾԸ

(Լեթարգիա)

<1>

<. . . . . .

. . . . . .>

Անունը այնքան, այնքան կանչեցինք,
Այնքան քրքրեցինք կամ աղաչեցինք
5 [Ինչ արինք, չարինք], <...>
Չըկարողացանք աչքը բաց անել,
Մի քիչ շարժվել, մի ձայն հանել –
Եվ երբ զարհուրած սոսկալի մտքով
Կանգնեցինք, ապշեցինք իրար երեսի,
10 Ականջիս երկչոտ մի շշունջ հասավ, թե «մեռավ».
Այս որ լսեցի, իսկույն իմ սրտում (հոգում)
Մրրկի նման վեր կացավ մի բան,

3-6 տողերի փոխարեն՝ Այնքան գոռացինք, այնքան կանչեցինք,
Ականջը, լեզուն այնքան քաշեցինք...
Ոչ մի քիչ շարժվեց, ոչ աչք բաց արավ...
[Ոչ մի ձայն հանեց] <...>

8-9 տողերի փոխարեն՝ Եվ երբ սոսկալի մտքով զարհուրած [կասկած]
Կանգնեցինք իրար երեսի՝ ապշած –

10 ա Ականջիս երկչոտ մի շշուկ հասավ

բ Ականջիս <...> հասավ
Երկչոտ մի շշուկ. «մեռավ».

Բողոք էր, թե ցավ, թե այլ զգացում,
Ես չեմ հասկացել դեռևս նրան...
15 Միմիայն առաջին անգամ հասկացա
Այն բանի միտքը, որ ասում են «մահ»:
Առաջինն էր այն, որ այս աշխարքից
Մի կտոր էի կորցընում իմ սրտից,
Հանկարծ իմ տունը դարձավ սգատուն –
20 Սուգը [բարձրացավ] և իմ հոգում
Եվ մտքիս միջով անց էին կենում
<...> մահ, մարդ և Աստված:
Այնքան դյուր էր գալիս այն հեծեծանքը,
Որ ես կուզեի ամբողջ մեր կյանքը
25 Լիներ հարատև, սրտառուչ մի սուգ,
<...> հեղեղ-արտասուք –
Լուռ տարակուսած իմ բարեկամներս
Իրար ետևից մտնում էին ներս,
Մոտենում էին խղճալով նրանք,
30 Շշնջում էին ինձ մխիթարանք.

14-17 տողերի դիմաց, ձախ լուսանցքում՝ «վայնասուն»:
18-19 տողերի միջև՝

[Առաջին անգամն էր – որ կասկածով ու ցասումով մտածեցի Աստծու] մասին և մարդու
[Եվ այնքան այս կորուստը այնքան]

19 տողից հետո՝

Այնքան մեծ էր իմ սարսափն
Եվ իմ <...>

20 տողից հետո՝

[Որ իմ [<1 անընթ.>] հասկացնում էի
Հեծեծաց] <...> մահ, մարդ և Աստված.
[Կորուստիս գինը և միտքը մահի],

23-30 Այնպես դյուր էր գալիս նա այնժամ –
Որ ես կուզեի ամբողջ աշխարքը
Լիներ հարատև, դառնար մի մեծ սուգ,
Իսկ տարակուսած իմ բարեկամներս
Իրար ետևից գալիս էին ներս,
Մոտենում էին ցավելով նրանք,
Եվ խոսում էին ինձ մխիթարանք.

Ինչ մխիթարանք – ասում էին, թե
Իմ լացն իզուր է, կանչելս անմիտ է,
Իմ աղաղակը էլ չի լսիլ նա,
Ոչ <...> ոչ էլ ետ կըգա,
35 Այսպես կամեցավ Աստված, երևի,
Որ նրա օրը շուտով խավարի,
Մենք հողեղեններս անճար ու չնչին
Ինչ ենք Աստուծո կամքի առաջին –
Այդ ճամփեն բաց է բոլորիս համար
40 Ծեր, երիտասարդ, մեղավոր, արդար,
Բոլորս կերթանք այսօր թե էգուց,
Մինս այս ցավով, մի ուրիշն <...>
Գնացողի հոգուն Աստված ողորմի,
Իսկ մընացողը դեռ պետք է ապրի,
45 <. . . . . .>
<. . . . . .>

<II>

«Ապրել» մի բառ է, մի անուն է լոկ,
Եվ մինչև այսօր դեռ ոչ մի խելոք
Չըկարողացավ հասկանալ ու մեզ
50 Այս հանելուկը պարզել հայտնապես –
Եվ նրա անհայտ, մութ գաղափարը
Ամեն մարդ մի կերպ է հասկանում,
Յուր քարոզն ասում – յուր մտքինն անում
Բայց ես <...>
55 Ես էլ մի մարդ եմ <...>

---

43 Աստված ողորմի գնացողի հոգուն,
47 ա «Ապրել աշխարքում» – միմիայն երկու խոսք,
բ «Ապրել աշխարքում» – մի խոսք է լոկ
48 Եվ մինչև այսօր և ոչ մի խելոք
51 Եվ նրա մութը հասկացողությունը

Ես չեմ հավատում, թե Աստված ուզեր,
Որ մարդն ապրելով յուր կյանքն անիծեր,
Կամ թե սոսկալի ժամը վախճանի
Մեր <1 անընթ.> հասակը լինի,
Երբ մենք ծաղկում ենք, և չենք մտածում,
Ինչպես է հողում մեռելը փտում
<. . . . . .
. . . . . .>
Թե չէ՞ մեր կյանքը, որ այդպես լիներ,
Նրանից հետո էլ ինչ միտք ուներ
[Գոյությունը այս փարթամ աշխարքի],
Գեղեցկությունը, բարիքը բնության,
Եվ բույրը ծաղկի, սիրուն երկինքը,
[Ինչու] և բոլոր վայելչությունքը
Խելքն ու հանճարը –
Որ տվել է մարդուն –
[Մի քանի օրվան տանջանքի
Եվ մահի համար] –
Ահա թե ինչու չեմ մխիթարվում,
Ոչ այս կյանքի հետ հաշտվում, հարմարվում։

III

[Բայց նրա լռությունը – վիճում էր ինձ հետ,
Հերքում էր իմս] – <...>
Եվ անմահության կամ գոնե կյանքին
Ես հավատալով հույս էի որոնում,

---

56 *Ես չեմ հավատում, որ Աստված ուզեր,*
61 *Ինչպես է մեռելը գետնի տակ փտում*
70 *Այն խելքն ու ստեղծա<գործությունը>*
76 *Եվ թեպետ նրա լռությունը – վիճում էր ինձ հետ,*
77-78 տողերի միջև՝
[Բայց նա շնչասպառ] –

80 Մեր անցյալ կյանքը երազ էր թվում,
Իսկ ներկան – ինչ որ այժմ էր կատարվում՝
Շարունակություն – սոսկալի տխուր:
Եվ ես երկյուղով, մտքիս միջին լուռ
Աղոթում էի, որ շուտով անցնի,
85 Կամ ասում էի – քընած կըլինի...
<. . . . . .>
Մի տեղ մի անգամ այդպես է եղել.
Մեկին տարել են, ուզել են թաղել,
Կենդանացել է փոսումը հանկարծ,
90 Պատմել է, թե պառկած դագաղում
Բոլորն զգում էր – բոլորն իմանում,
Միայն խոսալ, շարժվել չէր կարողանում:
Այս բանն ինձ համար մի հույս էր դարձել,
Եվ սկսում էի ես ևս կարծել –
95 Նա էլ էր նույնպես ննջում կենդանի...
Եվ մի՞թե այսպես մեռել կըլինի,
Գույնը դեռ տեղը, մարմինը դեռ տաք,
Ինչպես մի խաղաղ քնած հրեշտակ:

IV-<V>

Բայց հանկարծ տունս դագաղ ներս բերին,
100 Այս չնչին հույսս էլ ընդմիշտ հանգըցրին.
Հանգավ առկայծող ճրագի նման

---

82 Նորա տխրալի շարունակություն

82 տողից հետո՝

ա [Իմ անցյալը թվում էր մի տխուր երազ] –
բ [Իմ անցյալ կյանքը թվում էր մի երազ] –
[Իսկ ներկան՝ նորա տխուր շարունակությունը].

89-90 Փոսումը հանկարծ կենդանացել է,
Եվ <...> [ինքը] դագաղում

95-96 [Որ] նա էլ էր քնած – ննջում կենդանի...
Եվ մի՞թե այնպես մեռել կըլինի,

Եվ մթնեց գլխիս աշխարքը համայն...
Որպես ահավոր գիշերվա միջում
Միակ փայլփլող աստղիկն էլ թռչում,
105 Չքանում է սև ամպերի ետև,
Մթնում մոլորված էլ այնուհետև
<...> մի դժվար տեղում
Որ կողմը նայես՝ մի լույս չես գտնում,
Որ աչքդ պահեր, գրավեր հոգիդ.
110 Եվ մտածում ես – թե ինչ կա կողքիդ,
Արդյոք առաջդ վիհն է դժոխքի,
Անտակ մի ծով է, թե ծայրն աշխարքի.
[Որի վերա] դու մազից ես կախված –
Անդունդի վրա սարսափով մեխված.
115 Ապրելդ՝ ահավոր – մահդ՝ ցավալի...
Այս դրության մեջ մընացել էի,
Եվ մտքումս մեկը չի գտնվում,
Որ կարենայի կանչել օգնություն.
Միտս եկավ Աստված մին աղաղակել –
120 Բայց չէ՞ որ նա էր այն մահն ուղարկել.

---

102 տողից հետո՝

[Մի դժվար տեղում, անդունդի ծայրին] –
103-104 Որպես ահավոր գիշերվա մթնում
Միակ փայլփլող աստղիկն էլ հանգչում,
107 ա Ամայի մի տեղ, ամենակեր մթնում
բ Ամայի մի տեղ, մի անապատում,
110-111 [Էլ չես իմանում] – թե ինչ կա կողքիդ,
Զրգիտես՝ առաջդ վիհն է դժոխքի,
113 Անապատումն ես կանգնել <...>
114 ա Եվ մտածում ես սարսափով մեխված
բ 118 Եվ մնում ես սարսափով մեխված
Որ կարենայի օգնություն կանչել.

104-120 տողերի երկայնքով, ձախ լուսանցքում՝

Անցյալս թվում էր երազ –
Ներկաս՝ նորա տխուր շարունակությունը.

<. . . . . .
. . . . . .>
Եվ ես դառնացած, դաժան ու ճնշված
Որպես աշխարքում <...>
125 Նստած անկյունում ցած էի նայում
Իսկ միտքս ավելի ներքև էր գնում –
Մինչ ունայնության անդունդը դատարկ...
Թվում էին ինձ մարդիկ խեղկատակ,
Լիրբ խեղկատակներ, կեղծ ու կարճամիտ,
130 Սրտներում դավեր, դեմքներին ժպիտ,
Որ շարշարվում են, կռվում անդադար,
Էգուց կամ էլօր մեռնելու համար.
Զոր տերևների – փետրեր<ի> նման
Որ տիեզերքի մութն, անսահման
135 Տարածության <մեջ> հողմերի ձեռքին
Խուռն աղմկելով թռչում են դես-դեն
Եվ անհետ կորչում, ցրվում են – լռում
Հավիտենական անհուն խավարում...
Եվ այնուհետև նորա ձայնը դու
140 Ոչ մի աշխարքում էլ չես լսելու
Հպարտ ու ագահ <...>
<. . . . . .>
Իսկ զորությունը նախախնամության
Ամենակարող պատժի խարազան,
145 Որի հարվածը արդեն իմ սրտում
Իմ ուրախության հիմքն էր խորտակում –

---

123 Եվ ես դառնացած, մենակ ու մերժված,
125-126 Գլխովս նստած ցած էի նայում
[Դաժան]
134 Որ [<1 անընթ.>] մութն, անսահման
136 տողից հետո՝
Այդ իբրև կյանքն է
137 ա Եվ անհայտ կորչում, ցրվում են – լռում
բ Եվ կորչում, լռում անհայտ անհունության մեջ հավիտենական

Եվ բնակվում է [անգրկելի] խավարում,
Որ մահ ու ահով է մեզ կառավարում
Անտեսանելի, անհայտ, անողոք
150 <. . . . . .>
Ներս մտան կանայք սև-սև շորերով,
Հուզեցին ցավս ողբի ձայներով,
Նորա վաղաժամ մահն ափսոսացին,
Անցած օրերից դեպքեր հիշեցին,
155 Նրա հեզ վարքից, աշխույժ արարքից,
Նրա հույսերից, նրա խոսքերից։
Ես էլ հիշեցի զանազան դեպքեր։

VI

Մեր ամուսնության մի տարին չլկար
Նա հղացել էր,
160 Թեև ծածկում էր, բայց հրճվում էր նա,
Որ շուտով պիտի զավակ ունենա.
Արդեն գրքերից թաքուն ընտրել էր
Հին հերոսների մեծ-մեծ անուններ,
Եվ հենց խոսում էր գիշերներն անքուն
165 Թե ո՞ր դպրոցը կըտա յուր որդուն,
Ինչպիսի շորեր <...>
<. . . . . .>
Եվ ինչե՞ր, ինչե՞ր նա չէր մտածում,
Միմիայն մահվան մասին չէր խոսում...
170 Դեռ երիտասարդ, հուսալի, կայտառ –
Դեռ ապրում էինք որպես սիրահար –
Եվ սիրով էինք միմյանց ընտրել.
Ա՜խ, գիտես թե ես ինչ էի սիրել –

---

153 տողի դիմաց, աջ լուսանցքում
Մի անկարգ աղմուկ.

Թեպետև Աստված նրանց ստեղծեց,
175 Սակայն իմ բախտին ինքն էլ նախանձեց
Ու խլեց տարավ.– մի հրեշտակ էր նա,
Եկել էր <1 անընթ.> աշխարքի վերա
Մեկին երջանկացնի – բայց մահկանացուն
Շատ է անարժան այնպիսի <...>
180 Թեև կարճատև ինձ բաժին ընկան
Երկնարժան բախտի մի քանի վայրկյան,
Խնդության օրեր, <...>
<...> և ցնորալի
Սիրո գիշերներ, երբ երկու հոգի
185 Ուզում են հալվել, ձուլվել մեկմեկի.
Եվ ես հիշեցի այս տխուր ժամին
Իմ բախտավորության օրվան վախճանին
<. . . . . .>

VII

Ա՛խ, գիշերները, այն գիշերները
190 Արդեն երազ են դարձել ինձ համար,
Եվ սիրահարի տարփանքն ու սերը –
Այն երջանկության ժամերն ոսկեվառ
Չեմ հիշում ինչպես սահեցին-անցան,
Բայց հիմա նորից մեռելի նման,
195 Որ գերեզմանում զարթնում է հանկարծ,
Կենդանացել են և վերադարձած
Ուզում են պատռել սիրտս վշտալից,
Գիշեր ու ցերեկ հալածում են ինձ.
Հալածում են ինձ, բայց ես ո՞ւր գնամ,

---

190 ա Վաղուց են երազ դարձել ինձ համար,
բ Անուշ երազ են դարձել ինձ համար,
193 Անդարձ ու անհետ սահեցին-անցան,
199 Հալածում են ինձ, բայց ես ինչ անեմ,

200 Որ տեսածներս ընդմիշտ մոռանամ,
Կրկին նույն <1 անընթ.> աչքիս առաջին –
Նույն [հիշատակներն հետս] միշտ մտքիս միջին:

VIII

Հնչում էր ժամի զանգակը տխուր,
Որպես մի սրտի ահագին մրմուռ,
205 Մի լայնածավալ հնչյուն<ի> կսկիծ
<. . . . . .>
Նորան լսելով մտածում էի,
Թե այն հոգեմաշ <...> ցավերի
Աշխարքը ունայն, ժամանակավոր
210 Նորա պես ես էլ կըթողեմ մի օր,
Եվ մի օր այն սուրբ աշխարքում մենք էլ,
Ուր այնքան ծանոթ մարդիկ են գնացել,
Կըտեսնենք իրար, կապրենք իրար հետ
Մի ուրիշ անվերջ կյանքով երկնավետ:

205-206 Նորա հնչյունը սփոփում էր ինձ
Եվ քաղցրություն էի զգում իմ վշտից:
212 Ուր այնքան ծանոթ հոգի են գնացել,
214 Մի անվերջ, անցավ կյանքով երկնավետ:

<ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ>

(ԳԱԹ թ.թ 160(6բ)

Հագած շողազարդ յուր զգեստը հին
Եկավ գիշերը – պառավ դիցուհին,
Սրտիս նման սև, հոգուս նման մութ
Անծայր, անհատակ տխրության անդունդ:

5 Կարծես թե ես էլ մի գիշեր էի
Կորցրած ցերեկն ու լույսն արևի,
Կամ թե նա լիներ ինձ պես սգավոր
Կորցրած սիրուհին ու... կյանքը բոլոր.
Եվ ողջ ինձ նման, մռայլ, տխրալի,
10 Միմիայն յուր աստղերն էին ավելի...

Սրտիս մեջ բացվեց մի դատարկություն,
Մահից էլ սառը, գիշերից անհուն
Մի խավար պատեց... և նորա միջում
Սև մտքերս էին մոլորված թռչում,
15 Որպես թռչուններ, որ թրթռում են
Մի հանկարծահաս մթնում դես ու դեն...
Կրկին խորտակված, դուռը փակեցի
Եվ, որպես դատարկ, ոչինչ, պառկեցի,
Հոգնած ու տանջված, ուժաթափ մի բան,

---

2 ա Եկավ գիշերը – վշտի դիցուհին,
բ Եկավ գիշերը – վշտի թագուհին,
2-րդ տողից հետո՝
[Եկավ գիշերը – վշտի դիցուհին,
ա Հագած շողազարդ յուր զգեստը հին:
բ Հագած աստղազարդ սև զգեստը հին]:
4 Եվ ողջ ինձ նման տխրության անդունդ:
7 Կամ թե նա լիներ անբախտ սգավոր
9-10 Եվ ողջ ինձ նման, մռայլ, սոսկալի,
Թեպետ յուր աստղերն էին ավելի...
13 Մի խավար պատեց... այն աղջամղջում

20 Որ զգում է միայն կարոտ հանգստյան,
Նրանից առաջ որ չի հիշում, թե
Ինչ է կատարվել – ապրել է, թե չէ...
Եվ թե հիշում է, չի մտաբերում,
Թե ինչ բան էր այն <2 անընթ.> և չի
25 Մի խառն երազ էր, մի աշխարք ուրիշ –
Գինու մի քեֆ էր, ծաղրը, թե՞ պատիժ...

Եկավ տխրալի մի խաղաղություն,
Բազմեց անորոշ տանջանքների տեղ,
[Իրիկունն ինչպես մեգը <...>
30 Տիրում է դաշտում դատարկ, բայց ահեղ]:
Մի մոռացություն պատեց իմ հոգուն,
Փափուկ, սփոփիչ – սակայն և ահեղ.
Նա շատ էր նման մահվան հանգստի,
Եվ կյանքը կարծես խոսում էր իմ մեջ:
35 Ես ապրում էի – կարծես հրաշքով,
Ես նայում էի կիսաբաց աչքով,
Եվ մթնի միջին հազիվ եմ նկատում
Մի բան <...> սպիտակ մի շոր...

---

22 Ինչեր է արել – ապրել է, թե չէ

9-22 տողերի երկայնքով, ձախ լուսանցքում

[Բայց] գիշերն ու մութը <...>
[Ես կյանքումս երբեք] ոչ մի գիշեր էլ
[Այդպես հասկացել? և չէի սիրել].
Կյանքումս այդպես ես չէի սիրել.

30 Նստում է դաշտի վերա դատարկ, բայց ահեղ:

32 Բուժիչ էր այն – սակայն և ահեղ

37 Եվ մթնի միջին նկատում եմ, որ...

35-37 տողերի դիմաց

Հանկարծ [երևաց] ընկավ աչքիս առաջին
Սպիտակ մի շոր <...> մատաղ մի կին,
Հազիվ եմ տեսնում առաջին.

(Մի այլ մշակում)

Եկավ տխրալի մի խաղաղություն,
40 Բազմեց անորոշ տանջանք[ների տեղ],
Քունը մոտեցավ աչքերիս, հոգուս
[Եվ այսպես ընկած] կեսքուն, կեսարթուն –
[Հանկարծ մի շրշյուն]...
Կիսաբաց աչքով
45 Տեսնում եմ ահա –
Ներս է վազում... նա...
Որպես ուրուրից փախած մի ճնճղուկ
Հևում է արագ, ոչ գույն կա, ոչ ուշք.
Աչքերը պղտոր, լիքը երկյուղով,
50 Սաստիկ վախեցած, անկապ խոսքերով
Հասկացնում է ինձ, աղաչում է ինձ,
Թե՝ ե՛կ ինձ հանիր իմ գերեզմանից...
[«Տանջվում եմ, արի,
Շուտ արա – փորի] –
55 Շունչս կտրում է,
Սիրտս պատռում է,

---

39 ա Եվ մի տխուր խաղաղություն
բ Ծանրը և ախորժ մի քուն –
39 տողի դիմաց, ձախ լուսանցքում՝
Երեկոյան, ինչպես ծանր մշուշն ու մեգը նստում է հովտում:
40 Բազմեց անորոշ տանջանքի վերա.
41 տողից հետո՝
Քունը եկավ... բայց դեռ կիսարթուն
40-43 տողերի փոխարեն՝
[Քնեցի թե չէ,
Այդ Աստված գիտե,
Կամ տեսիլք էր այն,
Թե երազ միմիայն] –
53 Մեռնում եմ, արի,
55 Շունչըս չըկտրի
54-56 տողերի փոխարեն՝
Որ շուտով հասնես,
Թե չէ՝ կըսպանես,
Եթե ուշանաս

Եթե ես մնամ
Մի ժամ – միայն մի ժամ...
Եվ այնպես դողում, այնպե՛ս խնդրում էր...
60 Երբ ուշքի եկա, սիրտս դողում էր...
Լուռ էր իմ շուրջը –
Չկար այլևս այն կերպարանքը,
Բայց ինձ թվում էր, թե հեկեկանքը
Նոր էր հեռանում
65 Եվ հեռաստանում
Լսվում էր դեռ –
Կամաց մարում էր։

Ո՞վ էր այն սիրուն
Սոսկալի ուրուն,
70 Որ ինձ երևաց, աղաչեց այնքան
Նրա ձայնովը և նրա նման.
Մի՞թե երազ էր, ինչո՞ւ հենց նա չէր,
Երբ կարելի էր տեսնել – ճանաչել,
Երբ նա խոսում էր... դողում էր այնպես...
75 Երբ ճշմարտությունն էր ասում վերջապես...
Մի՞թե երազ էր. բայց երազն ի՞նչ է,
Բայց երազ ու կյանք մի՞թե միևնույն չէ,
Երազն էլ երբոր կարող է կանչել.
[Երբ] որ կարող է խնդացնել, տանջել,

---

58 Մի ժամ – օ՛, մի ժամ...
60 Վեր թռա քնից – սիրտս դողում էր...
74 Երբ նա խոսում էր հարազատ ձայնով,
75 ա Երբ ճշմարտությունն ասաց վերջապես...
բ Երբ ճշմարտությունն էր հայտնում վերջապես...
76 Մի՞թե երազ էր. իսկ երազն ի՞նչ է
76 տողից հետո՝
[Որ մարդ<ու> հուզե, խնդացնե, տանջե,
Մի՞թե նա ևս կուռք չէ <...>]

80 [Հուզել մեր հոգին – և անհետանալ]...
Դե մեր ողջ կյանքն էլ այդպիսի բան է.
Կյանքը երազ է, երազը՝ մի կյանք,
[Երկուսն էլ հաստատ, երկուսն էլ պատրանք].
Երազն ամեն բան կարող է մեզ տալ,
85 Տանջել, խնդացնել, հուզել, չքանալ:

Կարծես թե ես էլ մի վերջացած ցերեկ էի –
Մի սկսված գիշեր –
Կամ թե նա լիներ մի մեծ սգավոր,
Որ կորցրել է լուսավոր ցերեկը – պայծառ արևը,

---

80 Հուզել մեր հոգին – երազել, կորչել...
83 Ոչ մեկն է հաստատ, ոչ մյուսը՝ պատրանք.
84 տողից վերև՝
ա Ամեն բան երազում մենք կարող ենք զգալ,
բ Շատ բան երազում մենք կարող ենք զգալ,
68-85 տողերի փոխարեն՝
[Ո՞վ էր այն սիրուն
ա Վախեցած ուրուն,
բ Սոսկալի ուրուն,
Որ ինձ երևաց, աղաչեց այնքան
Նրա ձայնովը և նրա նման.
Միթե երազ էր – ինչու հենց նա չէր.
ա Քանի որ կարելի էր տեսնել-ճանաչել
բ Երբ կարելի էր տեսնել-ճանաչել
Քանի որ կարելի էր տեսնել-ճանաչել
Երբ կարելի էր տեսնել-ճանաչել
[Բայց երազն ինչ է] – մի կյանք է այն էլ.
[Դե, մեր ողջ կյանքն էլ երազ է արդեն],
Որը չենք կարող լույս աշխարհ հանել,
Կյանքը երազ է, երազը՝ մի կյանք,
ա Ոչ մեկն է հաստատ, ոչ մյուսը՝ պատրանք:
բ Երկուսն էլ հաստատ, երկուսն էլ՝ պատրանք:
Ահա <...> հավատում եմ ես,
Որ մեռածների հոգիներն անտես].
Այս տողից հետո աստղանիշով ավելացված է՝
[Եթե քնած ենք – ջոկ բան չէ հոգին –
Ինչու չի նա էլ մեզ հետ միասին
Քնում-դադարում]...

(Այլ մշակում)

90 Կարծես թե ես էլ մի գիշեր էի
Ցերեկը <...>
Կամ թե նա լիներ սգավոր ինձ նման,
Ցերեկը կորցրած, արևը կորցրած,
[Քնեցի թե չէ,
95 Կամ տեսիլք էր այն,
Թե երազ միմիայն –
Այդ Աստված գիտե.
Լռության միջում
Գիշերվա մթնում
100 Տեսնում եմ ահա –
Ներս է վազում... նա...
Որպես ուրուրից փախած մի ճնճղուկ,
Հևում է արագ... ոչ գույն կա, ոչ ուշք –
Աչքերը պղտոր – լիքը երկյուղով,
105 Սաստիկ վախեցած – անկապ խոսքերով
Հասկացնում է ինձ – աղաչում է ինձ –
Թե՝ եկ ինձ հանիր իմ գերեզմանից...
Եվ այնպես դողում – այնպես խնդրում էր...
Վեր թռա քնից – շուրջս նիրհում էր...

90-93 տողերի փոխարեն՝

Կարծես թե ես էլ մի վերջացած ցերեկ էի –
Մի սկսված գիշեր –
Կամ թե նա լիներ մի մեծ սգավոր,
Որ կորցրել է լուսավոր ցերեկը – պայծառ արևը –

94-97 տողերի փոխարեն՝

Կամ երազ էր այն,
Թե [ճշգրիտ] տեսիլ միայն
[Որ ինձ երևաց...
Գիշերը հանկարծ].

101 Ներս է մտնում... նա...

109 ա Վեր թռա քնից – սիրտս դողում էր...

բ Վեր թռա քնից – շուրջս դատարկ էր...

գ Վեր թռա քնից – շուրջս մութն էր...

110 Զրկար այլևս այն կերպարանքը,
Բայց ինձ թվում էր, թե հեկեկանքը
Նոր էր հեռանում
Եվ հեռաստանում
Աղաչում էր դեռ –
115 Կամաց մարում էր]։

(Այլ մշակում)

[Ո՞վ էր այն սիրուն
Վախեցած ուրուն,
Որ ինձ երևաց, աղաչեց այնքան
Նրա ձայնովը և նրա նման.
120 Ինչ... երազ էր – ինչո՞ւ հենց նա չէր –
Դե, մեր ողջ կյանքն էլ երազ է [արդեն].
Կյանքը երազ է, երազը մի կյանք,
Ոչ մեկն է հաստատ, ոչ մյուսը՝ պատրանք]։
Ինչ կուզեք ասեք – հավատում եմ ես,
125 Որ միշտ մարդկային հոգիներն անտես
Երկրի երեսին շրջում են անմահ –
Մարմինը ուր որ ուզում է գնա.
Մեր ու նրանց մեջ գաղտնի մի կապ կա.
Նրանք ներկա են մեր արարքներին,
130 Տեսնում են իրանց սիրելիներին,
Ազդում են հոգուն գալը փորձանքի,

---

114 ա Լսվում էր դեռ –
բ Հնչում էր դեռ –
116 Ով էր նա, որ եկավ
118 Որ ինձ երևաց – որ ինձ աղաչ
118-119 տողերի միջև՝
Մի փոքրիկ <1 անընթ.>
120 Լոկ երազ էր – տեսիլք
121 ա Դե, մեր ողջ կյանքն էլ մի երազ է մեծ
բ Նրա ողջ կյանքն էլ մի երազ է երկար
122-123 Կյանքը երազ է, երազը պատրանք է։
Երկուսն էլ պատրանք։
125 Որ մեռածների հոգիներն անտես

Անհայտ գաղտնիքը կամ վերջը կյանքի.
Հոգու ազդով է մեր սիրտն իմանում,
Թե հեռու տեղում մեկն ինչ է անում,
135 Կամ նախազգում ենք երբեմն հանկարծ,
Թե ինչ կա վաղը մեր առջև պահված,
Այսպես շատ անգամ պատահում է, որ
Միտքդ խաղաղ է, հոգիդ անդորր,
Հանկարծ թնդում է քո սիրտը ուժգին,
140 Եվ դու տխրում ես կամ ուրախանում,
Քեզ թվում է, թե քո մայրը հանգավ,
Կամ հեռու տեղից սիրելիդ եկավ.
Եվ տեսնում ես, որ հասնում են քեզ մոտ
Կամ քո ցանկալին, կամ տխուր մի բոթ:
145 Ես էլ պաշարված այսպիսի հավատով,

133-134 Նրանց ազդով է մեր սիրտն իմանում,
Թե հեռվում մեկը ինչեր է անում,
138 Սիրտդ խաղաղ է, հոգիդ անդորր,
132-138 տողերի երկայնքով, ձախ լուսանցքում
Հոգին է զգում ինքը
144 տողից հետո, որոշ ընդմիջումով
Հաղորդակցություն
Նախատեսություն
Տողատակում
Այնքան հաճախ կրկնվել է այս երևույթը, որ ստեղծվել է այսպիսի դարձված – Անունը տուր, շորը գցիր:
– Լեզուս կսկծում է:
124-144 տողերի փոխարեն
[Ինչ կուզեք ասեք, հավատում եմ ես,
Որ մեռածների հոգիներն անտես
Երկրի երեսին շրջում են անմահ,
Մեր ու նրանց մեջ դաղտնի [մի կապ] կա,
ա Նրանք ներկա են մեր շատ գործերին,
բ Նրանք ներկա են մեր արարքներին,
Տեսնում են յուրյանց սիրելիներին,
Ազդում են հոգուն գալը փորձանքի,
Անհայտ գաղտնիքը կամ վերջը կյանքի...
Նրանց ազդով է մեր սիրտն իմանում,
ա Թե հեռու տեղում մեկն ինչ է անում,

Ըկարողացա գիշերը քնել,
Նրա հոգին էր, կարծեցի, եկել,
Այնպես շտապով իմաց էր անում,
Թե արթնացել է նա գերեզմանում,
150 Յուր գերեզմանում, նեղլիկ դագաղում,
Ձեռքերն ածում է, ահից կատաղում –
Ձգում է արդեն որտեղ է ընկած,
Այս գիտակցության ահից զարհուրած:
Մի անգամ հեռու, օտարության մեջ,
155 Գիշերվա խաղաղ, հանգստյան ժամին,
Տեսնեմ դառնալի մեկը տնքում է,
Բայց ինձ ծանոթ է տնքոցի ձայնը.
Տեսնեմ – իմ մայրը – անկողնիս կողքին,
Աչքը ինձ վերա՝ տնքում տխրագին,
160 Ես սարսափից փշաքաղած ձեռքս տարածեցի –
Բայց չըկարացի բռնել –

բ Թե հեռու տեղում մեկն ինչ է կենում,
Կամ նախազգում ենք երբեմն հանկարծ,
Թե ինչ կա կյանքում մեր առջև պահված.
ա Քիչ չի պատահել խաղաղ ժամանակ,
բ Այսպես շատ անգամ պատահում է, որ
[Երբ] միտքդ խաղաղ է, հոգիդ անդորր,
Հանկարծ թնդում է քո սիրտը ուժգին,
Եվ դու տխրում ես կամ ուրախանում,
ա Քեզ թվում է, թե քո մայրը հոգու է
բ Քեզ թվում է, թե մայրըդ հոգու է մեռնում
Կամ հեռու տեղից սիրելիդ [դառնում] <է> եկավ
ա Եվ իրավ, շատ անգամ հասնում են քեզ մոտ
բ Եվ տեսնում ես, որ հասնում են քեզ մոտ
Կամ քո ցանկալին կամ [թե] տխուր մի [սև] բոթ...

Վերը բերված հատվածի դիմաց, աջ լուսանցքում՝
Մեր վախճանը մի նոր կյանքի սկիզբն է, և ամեն բան հավիտենական [բայց թեև ոչ անփոփոխ], թեև այլակերպ –
Ձախ լուսանցքում՝
«Թե ինքը՝ հոգին է զգում»:

149 Թե տանջվում է նա յուր գերեզ<մանում>
157-158 Բայց ինձ ծանոթ է նորա ձայնը.
Նայում եմ – տեսնում իմ մայրն – անկողնիս կողքին,

Մնացի ապշած, վախից քարացած –
Նա դարձյալ տնքաց – և հանկարծ լռեց –
Նորա հետ սրտումս մի բան կտրվեց...
165 Սիրտս սկսեց երկար մղմղալ, մթնել, վշտագնել,
[Ես] Հետո իմացա և ստուգեցի –
Որ նույն գիշերը մեռել է մայրս իմ հայրենիքում:

(Այլ մշակում)

Մի անգամ հեռու – օտար տեղ էի,
Օրերով հեռու իմ հայրենիքից,
170 Գիշերը – արդեն – դեռ չէի քնել,
Բայց քունը իջել էր արտևանունքիս,
Աչքս կիսախուփ, միտքս <...>
Գիշերվա խաղաղ հանգստյան ժամին,
Տեսնեմ դառնալի մեկը տնքում է,
175 [Եվ] Տնքոցն ականջիս ծանոթ է գալիս...
Տեսնեմ իմ մայրը – անկողնիս կողքին,
Աչքը ինձ վերա տնքում է այնպես –
Ես փշաքաղած ձեռքս մեկնեցի –
Նրա անունը կանչեցի ահով,
180 Բայց նա չքացավ, մնացի մենակ:

Ճչում է – կանչում – ձայնն է խլանում,
Ուզում է նստել – չի կարողանում,
[Խելագարվում է, կատաղում վախից,
Մահվան երկյուղից, փակված դագաղից] –
185 Կրծում է իրան – տախտակը ճանկռում,
Ոտքով-ձեռքերով դես ու դեն հրում,–
Ճգնում է ուժով ծածկը բարձրացնել –
Մահվան անդունդից միանգամ պրծնել.
Սակայն բոլորը – բոլորը իզուր,

---

171 Բայց քունը ծանրացել էր արտևանունքիս,
184 ա Մահվան մտքից, փակված դագաղից –
բ Մահվան սարսափից, փակված դագաղից –

190 Տեղը շատ է նեղ, և մութ, և ամուր...
Բռնված այսպիսի մռայլ մտքերով,
Զուր տեղն էի ես խաչակնքելով
Աշխատում քնել –
Կամ թե հեռացնել
195 Այս միտքն ինձանից,
Որ տանջում էր ինձ:

Սիրտս էր մտել որդը կասկածի.
Հետն էլ հին լսած մի բան հիշեցի –
Թե ինչպես մեկը քնած է եղել,
200 Վերցրել են տարել, ուզել են թաղել,
Կենդանացել է փոսումը հանկարծ...
Կարող էր և մեզ լինել պատահած...
Բայց դեռ սրանից հարյուր անգամ վատ.
Հինգ տարի առաջ մի գյուղում մի մարդ
205 Գերեզմանատան մոտից անցնելիս,
Լսում է, որ մի ձայն է դուրս գալիս
Գետնի տակիցը –
Մոտիկ իրանից,
Դեռ [սևաբլուր] նոր գերեզմանից.
210 Խեղճը սարսափած վազում է,
Պատմում է, թե ինչ հրաշք պատ<ահեց>
Մեկը հիմար է անվանում նրան,
Մյուսը խելագար, երրորդը մի բան,
[Մեկը ասում է՝ երազ եմ տեսել,
215 Մյուսը չի ուզում երազին լսել] –
Սկսում են վիճել երկար ու բարակ,
Կարծիք են հայտնում իրար հակառակ,
Իսկ երբ գալիս են, մեռելը հանում,

191 Ահա այսպիսի մռայլ մտքերով
194 Նրանց հեռացնել
198 Նաև հին լսած մի բան հիշեցի –
203 Բայց դեռ սրանից ավելի էլ վատ.

Տեսնում են, իրավ, որ գերեզմանում
220 Կենդանացել է ու կրկին մեռել,
Նոր է շարշարված մարմինը սառել։

Օրը որ բացվեց,
Կարծես հալածվեց
Իմ այս հավատը, կասկածը տանջող,
225 Եվ հանգստացավ սիրտս մրմնջող,
Իմ վրդովմունքս դատապարտեցի
Ցնորքս անմիտ, մինչև գիշերը դարձյալ նորոգեց.
Երրորդ գիշերը դարձյալ նույն ուրուն
Գալիս է կանգնում նրա պես սիրուն,
230 Բայց լո՛ւռ, խորտակված, տխուր ու վշտոտ,
Շորերը անկարգ, երեսն արյունոտ...
Եվ այս բոլորը, բոլորն անմռունչ,
Առաջևն ընկած մանուկը անշունչ –
Նա ցույց էր տալիս
235 Եվ լալի՛ս, լալիս...

Ես էլ առավոտն երբոր արթնացա,
Վերմակս ու բարձս ողողված տեսա,
Եվ իմ աչքերից դեռ էլ շարունակ
Արցունք էր հոսում երկար ժամանակ։
240 Բայց ինձ պահեցի... <...>
Աչքերս ներքև – ցածն էին քննում –
[Բոլոր աշխարքը – Աստված ու մարդիկ
Թվում էին ինձ անխիղճ թշնամիք].
Մինչդեռ արևին ես չէի նայում,
245 Որ լիրբ խնդությամբ ժպտում էր, փայլում,
[Այն սև ժամերին, երբ խավարում էր

---

226 Եվ վրդովմունքս դատապարտեցի
232 Եվ այս բոլորը, բոլորն անշշունջ,
245-246 Որ լիրբ կնոջ պես ժպտում էր, փայլում,
Այն տխուր ժամին, երբ խավարում էր

Իմ կյանքի արևը – <...>
Թռչնոց դայլայլը, ուրախ ծլվլոցը
Սաստկացնում էին սրտիս կսկիծը,
250 Եվ թվում էր, թե բոլորն աշխարհում
Ինձ ծաղրում էին, կամ արհամարհում].
Այս ժամանակը ես մինչև անգամ
Լսեցի մարդկային մի քրքիջ [անզգամ],
Որ անցնում էր մեր մոտիկ փողոցով,
255 Վիշտս ծաղրելով լիրբ հռհռոցով...
Եվ ես դառնացած,
Մենակ մնացած,
Մարդկանց մեջ նստած, ցած էի նայում,
Իսկ միտքս ավելի ներքև էր գնում,
260 Մինչ ունայնության անդունդը դատարկ.
Թվում էին ինձ մարդիկ խեղկատակ,
Փոխվեց մտքերիս ընթացքը իսկույն,
Եվ հոգիս լցվեց դառնության մի թույն:

Լիրբ խեղկատակներ, կեղծ ու կարճամիտ,
265 Սրտներում դավեր, դեմքներին ժպիտ...
Որ շարշարվում են, խոսում անդադար

240-261 տողերի դիմաց, ձախ և աջ լուսանցքներում՝

Եվ սկսեցի տրտնջալ նախախնամության դեմ.
Եվ ինձ թվում էր, թե մի սև գետում ես խեղդվելով
գնում եմ – և բոլոր ափերը ողորկ ու բարձր են – մի թուփ չըկա բռնելու:
Եվ ինձ թվում էր, թե մի սև ջրում
Առաջ եմ գնում, խեղդվում, շարշարվում.
263 Եվ հոգիս լցվեց բարկության մի թույն:

264 տողի վերին լուսանցքում՝

Որ <1 անընթ.> հնար լիներ թափելու,
ա Ինքն՝ Աստվածն էլ չէր ազատվելու...
բ Ինքն՝ Աստվածն էլ չէր փրկվելու...
265 Սրտներում ժպիտ, դեմքներին թախիծ,

էգուց կամ էլօր մեռնելու համար...
Մանր տերևներ, որոնք ցիրուցան
Լայն [տիեզերքի] սառն և անսահման
270 Տարածության մեջ, հողմերի ձեռքին
Խուռն աղմկելով <...>
Եվ անհետ կորչում, ցրվում են,լռում
Հավիտենական անհուն խավարում,
Որ կոչվում է մահ,
275 Եվ այնուհետև նրա ձայնը դու
Ոչ մի աշխարհում էլ չես լսելու...
Հպարտ և ագահ...
Նորերն են գալիս և գնում դարձյալ
Իբրև թե դեպի մի կյանք հանդերձյալ...
280 Ամեն բան այսպես շնչին, ծաղրալի,
Ծնվում են, մեռնում, գնում են-գալի,
Ուրախ, ինքնապանծ, հպարտ, մեծահույս...
Մարդը խոտի պես, խոտը՝ կենդանու,
Եվ [ողջ] երկիրն էլ ինչո՞ւ չի մի բույս,
285 Որ նույնպես մի օր ունի մեռնելու,
Այս մտածմունքը հենց մահը ինքն էր,
Կամ նրա տված հարվածի հետքն էր,
Այն խավար հետքը, որով [իմ] շաղված

---

267 Կեղծ [շոյելու] համար <...> կամ վախից <...>,
268-269 Կամ չոր տերևներ, որոնք ցիրուցան
Լայն տարած<ության> սառն ու անսահման
284 Եվ ողջ աշխարքն էլ ինչո՞ւ չի մի բույս –
285 տողից հետո, մատիտով՝
Եվ այս միտքը միսիթարում էր ինձ –
Թե չէ՝ ինչու մեզանից հետո նա ծաղկում էր:
286 տողի վերի լուսանցքում՝
Բանականության [հոգին] զարկված,
Անդնդում նստած,

Մտքերս էին գնում [դեպի] ցած...
290 Բանականությունն էլ ույժ չուներ,
Որ այդ հոսանքին – ուժին դեմ դներ...
Այն մի անդունդ էր – մի լաբյուրնթոս,
Գերեզմանից էլ ահռելի մի փոս,
Որի մեջ մարդը կորցնում է հոգին,
295 Ուր որ հող չըկա ոտքերիդ տակին,
Ու դու գնում ես, ներքև ես գնում –
Աննկատելի շարունակ ընկնում,
Ընկնում դեպի ցած,
Կյանքից կտրված...
300 Եվ էլ ոչ մի թել քեզ չի կապում
Աշխարքի հետ –
Մոռացած Աստված, աշխարք [ու արև],
Խորթացած արդեն կյանքին ու լույսին:
Հանկարծ <...> այն փոսից անհուն
305 Ինձ հանեց թեթև մի հեշտ սոսափյուն...
Մի երկչոտ շրշյուն [ականջս ընկավ],
Իմ տարօրինակ երազը խառնեց –
Այդ կանայք էին սև-սև շորերով,
Ներս մտան երկար շարքով տխրալի
310 Եվ <...> ողբի ձայներով
Հուզեցին ցավս, որ մոռացել էի,

289-290 Մտքերս էին գնում շաղախված...
Բանականությունն այլևս ույժ չուներ,
291 ա Որ այդ հարվածին գոնե դեմ դներ...
բ Որ այդ հոսանքին – թափին դեմ դներ...
291-292 տողերի դիմաց դրված նշանով տողատակին՝
[Իմ ցավից <1 անընթ.> միայն
Մտածմունք չէր այն] –
Եվ սուզվում էի ես մի մութ երկիր
[Ոչ այդ հասարակ] Ոչ մտածմունք այդ մի հավատով
295 Ուր ոչինչ չըկա ոտքերիդ տակին
303 Խորթացած արդեն կյանքին, արևին:
305 Ինձ հանեց հանկարծ մի հեշտ սոսափյուն...
311 ա Ցավս հուզեցին, որ լռել էր,
բ Նորեցին ցավս, որ մոռացել էի

Նրա վաղաժամ մահն ափսոսացին,
Անցած օրերից դեպքեր հիշեցին,
Նրա հեզ վարքից, աշխույժ արարքից,
315 Նրա հույսերից, նրա խոսքերից,
Ես էլ հիշեցի զանազան դեպքեր –
[Նրանք իմ մտքում <...> չէին դեռ],
Երեկ, մյուս օրը... խոսեցինք, [<1 անընթ.>],
Ա՜խ, որքան թարմ էին – նոր էին նրանք:
320 Երկար ժամանակ չըկարողացա մտածել,
Քունը հաղթեց հոգնած մարմնիս,
Մտածմունքներն հեռացան կամաց,
Մարդը դարձավ մի ամպի կտոր,
Եվ մտքերս որպես խաղողի ողկույզներ,
325 Նրանք էլ որպես մանր շողեր փլվեցին, հանգան.
Սակայն ես դարձյալ քնեցի.
Բայց երկրորդ անգամ նա եկավ
[Բայց] լուռ, գլխակոր, տխուր ու վշտոտ,
Շորերը անկարգ, երեսն արյունոտ...
330 Եվ այս բոլորը, բոլորն անմռունչ,
Առաջևն ընկած մանուկը անշունչ
Նա ցույց էր տալիս
Եվ լալիս, լալիս...
Ես էլ վախեցած երբ որ արթնացա,
335 Վերմակս ու բարձս ողողված տեսա.
Եվ իմ աչքերից դեռ էլ շարունակ
Արցունք էր հոսում երկար ժամանակ:

Եվ ուզում էի մեկ էլ տեսնել –
Բայց անսանձ վախը այն ուրվականի,

---

324 Եվ մտքերս որպես խաղողի որթեր
327 Դարձյալ նույն երազ<ն> և նույն <...>
337-338 տողերի միջև՝
[Բայց երկյուղը <...>
Ինձ թվում էր, թե նա մի վիշտ ուներ] –

340 Որին ես այնքան ցանկանում էի,
Հոգիս թփրտում <...>
Որքան և կարոտ լինեի, իմ մահկանացու <1 անընթ.>
Ահավոր էր գերեզմանից եկած այցելուն,
Եվ այսպես մինչև լուսաբացին մոտ
345 Մաքառում էին երկյուղ ու կարոտ,
Մինչ այդ հոգեկան կռվում հոգնեցի,
Թուլացան ջղերս, և ես քնեցի...
Քնել էի թե չէ, չըգիտեմ,
Դարձյալ նա եկավ աղոտ, դալկադեմ
350 [Գիշերվա մթնի ոգի և ընկեր,
Կատարյալ սարսափ գերեզմանային,
Որ գերեզմանից նոր էր դուրս եկել] –
Բայց հենց որ տեսավ դեմքս, գունատվեց,
Սրտառուչ ձայնով անունս տվեց,
355 (Կարծես թե խղճաց
Եվ այսպես խոսաց,
Քնքույշ, [խղճա<լի>],
Սրտաբեկ, տխուր,
Եվ շատ խղճալի վրաս նայելով
360 Թեթև հեռացավ, արտասանելով.

«Օ՜, գերեզմանում
Դու չես իմանում՝
Որքան է դժվար
Քնածի համար...»

---

344 Եվ այսպես մինչև կեսգիշերին մոտ,
348 Ոչ, դեռ արթուն – կեսքուն, չըգիտեմ,
349 ա Դարձյալ նա եկավ – ինչպես լուռ սարսափ,
բ Դարձյալ նա եկավ լուռ ու դալկադեմ,
գ Դարձյալ նա եկավ մռայլ, դալկադեմ,
361 Օ՜, չես իմանում՝
363-364 տողերի փոխարեն՝
Դժվար է, դժվար
Քնածի համար:

365 [Նա արտասանեց մի ուրիշ ձայնով
Եվ ողորմելի վրաս նայելով]
Կամաց հեռացավ, կորավ մթնի մեջ,
Ինչպես յուր ձայնը – թեթև, կամացուկ,
[Որպես մի ստվեր, մի] լուռ աղջամուղջ,
370 Մի թեթև ստվեր, մի նսեմ անուրջ...
Ինձ թողնելով սարսափի և ապշության
Շղթաների մեջ...

---

369 Որպես մի թեթև ստվեր – մի նսեմ երազ –

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՊՈԵՄԻՑ

ԳԱԹ ԹՖ 161(3 լր.)

<I>

ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ

Հեքիաթ է թե անցք իրական,
Աշխարհքի մեջ կատարված,
Լսել եմ ես [վաղուց մի] բան
Այսպես տխուր մի արկած։

5 Սիրահարվեց մի հողածին,
Ամուսնացավ... ոգու հետ,
Քանի ուզեց տիրել հարսին
<. . . . . .>

Ճգնում էր, տանջվում,
10 Թախանձում էր կաթոգին,
Չէր կարենում բռնել երբեք
Եթերական էակին.

Վերջն, ասում է, հենց որ գրկեց,
Մոտ էր տենչը լրրության,

---

1 Հեքիաթ է սա, անցք իրական
4 Ցավալի մի արկած։
7 Ու երբ ուզեց տիրել հարսին
9-11 Շատ թախանձեց, ճգնեց, տանջվեց,
Շատ թախանձեց կաթոգին,
Բայց չկարաց բռնել, [գրկել]

15 Նա դժբախտին ընդմիշտ զբրկեց
Անհետ չքքվեց հավիտյան.

ա Հեքիաթ է, թե անցք իրական,
Շատ վաղուց եմ ես լքսել.
Զրկվեց հարսից թշվառ տղան –
20 Բայց հույսը մնաց:
բ Վաղուց եմ լսել.
Զբրկվեց տղան իր հարսից,
Բայց չբզրկվեց իր հույսից.
Ման է գալիս խեղճն այն օրից
25 Շուրջը, աշխարհքն և անհուն,
Եվ հույս ունի գբտնել նորից
Իրան կորած սիրուհուն:

[Եվ հույս ունեմ ես... կբգտնեմ նբրան.
Անմահ է ոգին և կա հավիտյան.
30 Նա էլ ոգի էր. մարմին էր առել,
աղջիկ էր դառել,
Ինչպես այն ոգին, որ աղջիկ դառավ,
Խաբեց ու գնաց – սակայն չբմեռավ,
Եվ երբևիցե, մի անգամ կրկին
35 Պիտի երևա կարոտի աչքին,
Եվ տիեզերքի անհունության մեջ

16 Ու չքքացավ հավիտյան.
18-19 Վաղուց եմ լսել <...>
Զրկվեց այսպես թշվառ տղան
24 Որոնում է խեղճն այն օրից
27 Իրան կորցրած ամուսնուն:
28-30 տողերի դիմացի լուսանցքում
Եթե ոգին կին էր,
Կինն էլ ոգի կարե լինել,
Երկուսն էլ կորան <...>
32-33 Ինչպես այն ոգին, որ դարձավ աղջիկ,
Եկավ ու գնաց – սակայն չբմեռավ,

Պիտի հանդիպեն կրկին իրարու]։
Նոր էի տիրել, երազ էր թվում,
Կարծես երկնքումն էի ես ապրում.
40 Երբ բացվում պայծառ,
Աշխույժ ու կայտառ,
Խայտում էր, խնդում,
Ծիծաղում, թնդում,
Կամ երբոր հանկարծ
45 Մոլոր, խորտակված
Նստում էր, թախծում <...>

38-39 Նոր էի տիրել, ինչպես երազում,
Չէի հավատում իմ բախտին.
40 Երբոր բացվում էր պայծառ
44 Եվ մեկ էլ հանկարծ

ԳԱԹ թՖ 161(3 լր.)

<II>

<...> Մենակ ես, ինչ որ երկրում ունեի
Գերեզմանատան միջումը թողի,
Մի սև բլրակի, հողակույտի տակ,
Մնացի մենակ, մենակ և մենակ...

* * *

5 Ինչ է բույրը ծաղիկի,-
Մրրիկն եկավ – նա ցրվեց.
Ինչ է երգը սոխակի –
Բազեն հասավ – նա լռեց:
Ինչ է սերը աղջկա,
10 Ահա մեռավ – էլ չկա...
Ինչ է կյանքը [թանկագին]
Մի այսպիսի դատարկ բան.-
[Նույնպես] ծաղիկ մի սիրուն,
Որ կորչում է սև հողում,
15 [Նույնպես] մի երգ թրթռուն,
Որ լռում է դագաղում:
Եվ մեր բոլոր վայելքները
Ոսկի փայլ են դագաղի,
Եվ սիրողը և յուր սերը
20 Բաժին մահի և հողի:

Վերջ առաջին մասի:

1 Միմիայն ես, ինչ որ երկրում ունեի
11 տողի դիմաց, լուսանցքում
Եվ կյանքն հավետ
13 Գարնան ծաղիկ մի սիրուն

<III>

Նա թռավ-գնաց,
Ես այն ժամանակ [մահը] հասկացա։
Մի լռություն է այն,
Մի խոր լռություն.
5 <...> [Ահից գոռացի – բոլորն արթնացան,
<...> շփոթված իրարով անցան.
Սկսեցինք կանչել,
Քաշքշել, տանջել,
Մենք կարծում էինք իրանից գնաց,
10 Բայց ինչպես թողինք,
Այնպես էլ մնաց.
Այնժամ վախելով, կարծես թե ծածուկ,
«Մեռավ», շշնջաց մինը կամացուկ,
որ ես չըլսեցի.
15 Դարձյալ զուր խնդրել, կանչել սկսեցի...
[Մեկ էլ կանչեցի] – իմ ձայնը տրտում

---

3 Այն մի սոսկալի լռություն է
4 ա Անհուն, ահավոր,
բ Որ ձայն է տալիս
11 տողից հետո՝
[Սակայն նա դարձյալ լուռ ու կարկամած
Ինչպես վայր դրինք, այնպես էլ մնաց.
Մի զարհուրելի քնով բռնըված.
Մի սև ամպ արդեն առաջ էր շարժվում իմ հոգում].
13-14 «Մեռավ» շշնջաց մեկը կամացուկ.
Ես իբրև թե չըլսեցի.
14 տողի լուսանցքում՝
Ես թեև լսեցի, բայց <2 անընթ.>
Բայց դարձյալ կանչել, խնդրել սկսեցի,
Թեև արդեն մի սև բան (կասկած) սրտիս մի խորշում
Լուռ ու ահավոր առաջ էր շարժվում.
15-16 Դարձյալ պաղատել, կանչել սկսեցի...
Դարձյալ կանչեցի – իմ ձայնը տրտում

Առանց պատասխան հանգավ լուռ օդում.
Դարձյալ սկսեցի կանչել, պաղատել,
Բայց կրկին իզուր – արդեն մի սև բան
20 Առաջ էր շարժվում սրտումս
Ահ էր, թե կասկած,
Նորա [շուքից սարսափած]
Անհուն, ահավոր մի պաղ լռություն,
Որ գիտի հայտնել մեր հոգուն,
25 Թե նա, որ տեսար, էլ չի լինելու,
Ոչ մի աշխարհքում էլ չես գտնելու
Էլ չես տեսնելու երբեք քո կյանքում,
Թեկուզ հավիտյան ապրես աշխարհքում,
Եվ ինչ որ եղել – ընդմիշտ է եղել,
30 Անկարող ես դու երբևէ փոխել...
Մի գիշեր է այն, մի օր, իրիկուն,
Կամ մի արշալույս, որից դենը դու
Ոչ մի հնարքով էլ չես անցնելու.
[Ծիծաղի նման կըհանգչես հանկարծ,
35 Ինչպես թե բնավ աշխարհ չես եկած]:

Սոսկալի բան է, բայց ես ավելի,
Երբ գողի նման գիշերն է գալի,
Անլույս, անարև, մութը ժամանակ,
Երբ մարդիկ իրանց զգում են մենակ] <...>

---

24 ա Որ իմ հոգու հետ խոսում էր թաքուն
բ Որ պատասխան տվեց իմ հոգուն
գ Ձայն էր տալիս արդեն իմ հոգուն
25 Թե նա էլ չըկա, էլ չի լինելու,
30 տողից հետո՝
[Եվ ես հասկացա՝
Ինչ ասել է մահ]...
31 ա Մի գիշեր է նա, մի օր, իրիկուն,
բ Այն մի գիշեր է, մի օր, իրիկուն,
35-36 Եվ երբեք, երբեք էլ չես գալու
Ծանր է այն ժամը, բայց ևս ավելի,

<IV>

Իսկ մնացողը դեռ պիտի ապրի –
Եվ այն էլ երջանիկ.
Ապրե՛լ... այ քեզ առեղծված.
Եվ մեկնում ենք մենք, գտնում ենք, գտնո՛ւմ,
5 Բայց այն... ոսկի է լինում,
Փառքի փայլ, աղմուկ դատարկ, անցողիկ,
Կամ սիրուն մի կին, բնության ծաղիկ,
Վաղանցուկ մի սեր –

Եվ ներքին մի ձայն կըրկին թախծալի
10 Դժգոհ ու դատարկ հոգուդ խավարից
Գիշեր ու ցերեկ քեզ ձայն է տալի,
Թե անբախտ ես դու նորից ու նորից,
Թե ինչ փնտրում ես, դեռ շատ է հեռու,
Դեռ չես հասկացել, դեռ չես գտնելու...

---

15 [Ա՞յս է բոլորը –
Ապրում ենք սակայն... և դարձյալ նա կա
Եվ ո՞վ իմանա – գուցե կա – և նրա մասին են վկայում
Խելքն ու հանճարը, տենչերը մարդու],
Եվ սակայն նա կա –

2-3 Եվ այն էլ երջանիկ ապրել.
Ապրե՛լ... դե լուծիր.
3 տողի դիմաց, աջ լուսանցքում՝ «երջանկությունը»։
3 տողից հետո՝
Այ մի առեղծված
4 Եվ փնտրում ենք մենք, գտնում ենք, գտնո՛ւմ,
8 Որ այսպես ահա <...>
15 տողի դիմաց՝
Ո՞վ գիտե, գուցե մահը այն ճամփան է, որ գնում ենք գտնելու
– և գուցե նա կա –
17 Եվ ո՞վ իմանա – գուցե կա – և ահա վրկա

20 Ձգտումը հրաթև, ցնորքը հոգու,
Որ ուրիշ սահման սիրում է թռչել,
Սահման՝ որ երբեք դու չես ճանաչել,
[Որի [անթափանց, անհուն] աշխարհում
Հողեղեն աչքերն էլ չեն նշմարում],
25 Որ, սակայն, թռվիչ [ու գաղտնի] այսպես
Հայտնվում է մեզ, գրավում է մեզ:

Ապրե՛լ... և երկար և միշտ բախտավոր,
<...> երջանիկ կյանք
Ահա քեզ մի մեծ խրթին առեղծված,
30 Որ մարդու առջև դրրել է Աստված...
Եվ մեկնում ենք մենք – գտնո՛ւմ ենք, գտնո՛ւմ.
Բայց այն <...> ոսկի է լինում,
Փառքի փայլ, աղմուկ <...> անցողիկ,
[Կամ] սիրուն մի կին – բնության ծաղիկ –
35 Կարճատև մի կիրք – որ առավոտյան արշալույսի պես
Եվ դարձյալ դատարկ հոգուդ խավարից
Ոռնում է դևը սառն ու թախծալի
[Դիշեր ու ցերեկ քեզ ձայն է տալիս],

20-21 տողերի դիմաց, աջ լուսանցքում՝

Թե նա չըլիներ,
Էլ ինչու են ձգտում <...>

25 Որ, սակայն աղոտ ու գաղտնի այսպես

26 տողից հետո՝

Անըմբռնելի ու գաղտնի –
Մեր ձգտումներին [ձգտումը] միմիայն հայտնի.
Եվ մահը այն ճամփան է, որ մեզ տանում է այնտեղ.
(Եվ մահը վատ է լոկ նրա համար, որ այն <...>)
[Դեռ պիտի ապրի... և միշտ երջանիկ, ուրախ]

28 ա Միշտ խորտակվել, ըղձալ նորից նոր
բ Քանի խորտակվել, ըղձալ նորից նոր
29 Ահա քեզ մի մութ, խրթին առեղծված,
35-37 Կարճատև մի սեր, <1 անընթ.> որ առավոտյան արշալույսի պես
Եվ դարձյալ դժգույն հոգուդ խավարից
ա <1 անընթ.> մի ձայն սառն ու թախծալի
բ Կանչում է մի ձայն սառն ու թախծալի

Թե անբախտ ես դու նորից ու նորից,
40 Թե միայն կորցրիր և չես գտնելու,
[Թե ինչ փնտրում ես, դեռ շատ է հեռու,
Դեռ չես հասկացել, դեռ չես գտնելու]...
Եվ սակայն նա կա – հավիտյան նա կա
[Եվ սրտիդ խորքից որպես վկա]
45 Ցնորքը հոգու, ձգտումն հրաթև,
Որ ուրիշ սահման սիրում են թռչել,
Սահման՝ն, որ երբեք դու չես ճանաչել
Եվ սակայն թռվիչ հրաշքով այսպես
Հայտնվում է քեզ, գրավում է քեզ –
50 Այդ այն չնաշխա<ր>հիկ վայրն է գերազանց կյանքի...

---

43 ա Եվ սակայն նա կա – կախված հարաձև
բ Եվ սակայն նա կա – անվախճան նա կա
գ Եվ սակայն նա կա – տենչը հարաձև
դ Եվ սակայն նա կա – անվերջ, անհաս
46 Որ ուրիշ աշխարհ սիրում են թռչել
48 Որ սակայն թռվիչ <1 անընթ.> այսպես
42-50 տողերի մի այլ տարբերակ.
ա [Եվ սակայն ապրիր – տակավին նա կա հավիտյան]
բ [Եվ սակայն ապրիր – որքան էլ հեռու]
Հավերժ, հարատև.
ա Եվ սակայն ապրիր – [հառաջ ու հառաջ]
բ Եվ սակայն ապրիր – տանջվիր ու հուսա
գ Եվ սակայն ապրիր – [ահա քեզ վրկա]
ա Բայց ապրիր, ապրիր... հավերժ, հարատև
բ Եվ դարձյալ [հուսա], քո առաջն է նա
ա [Նա կա] <...>
բ [Քո առաջն է նա, որքան էլ հեռու]
[Ցնորքը <...>] ձգտումն հարատև
ա [Այնտեղ են թողնում ակամա]
բ [Նայիր ահա] ակամա
ա Ցնորքը հոգու, ձգտումն հրաթև
բ Այնտեղ են թռչում ձգտումն հրաթև
Ցնորքը հոգու –
Նրանց ետևից կըթռչես և դու.
Այնտեղ երջանի՛կ, անվերջ ապրելու
Այն գաղտնի ճամփով միանգամ և դու
ա [Նրանց ետևից] կըթռչես դեպի գերազանց կյանքի այն սուրբ օթևանը.
բ Կըթռչես դեպի գերազանց կյանքի վայրերը չքնաղ.
գ Կըթռչես դեպի գերազանց կյանքի վայրերը անմահ.

[Սակայն կորցրածը ինձ չի ցավեցնում,
Այլ մնացածն է ինձ միշտ հիշեցնում,
Նա է ինձ տանջում,
Նա է պահանջում.
5 Այն, որի համար լալիս եմ] –
Ա՜հ, սարսափելի բան է,
Երբ շատ ունեցածից դեռ մի բան է մնացել,
Երբ կուրացել ես – բայց տեսնում ես քիչ,
Երբոր մեռած ես – բայց դեռ շունչ ունես,
10 Երբ խելագար ես – բայց խելք ունես [դեռ],
Եվ կարող ես դեռ հասկանալ, զգալ,
Կանգնած ես այն մութ վըհի եզերքին,
Որտեղից էլ [քեզ] դարձ չըկա կրկին,
Ժամանակ ունես երկար դիտելու,
15 Սրտով զգալու, լեզվով պատմելու,
Թե ինչպես կյանքից դու արդեն պոկված,
Ըղձերից հեռու, ընկերից ջոկված
Անդարձ գնում ես, ընկնո՜ւմ ես, ընկնո՜ւմ,
Եվ դեռ, ով գիտի, որքան է մնում
20 [Մինչև որ հասնեմ վերջին – հատակին,
Այս տխուր կյանքի մութ նպատակին.
Մինչև որ հասնեմ
Ու նրան տեսնեմ]:
Բայց ես կարծեցի, թե մեռած է նա –
25 Թե նրա լեզուն լռել է հավիտյան

---

25 Թե նրա լեզուն լռեց հավիտյան
25 տողից հետո՝
ա [Հա, նա գալիս է երբեմն ինձ կանչում –
բ Ես միշտ այնպես էի կարծում
Թե միշտ այնպես էի կարծում]:

Եվ կանչում երկնային ձայնով <...>
Թե նրա պայծառ աչքերի տեղում
Խավարն է ապրում, ճիճուն է սողում,
Բայց ոչ – նա կենդանի է –
Եվ միշտ գալիս է խորին գիշերով
30 *Շուշանի բույրով,*
[Քնքուշ] համբույրով
Պայծառացնում հոգիս

26-27 *Թե նրա աչքերում*
Ճիճուն է սողում,

<VI>

<...> և այսպես մտորելով, իմ հոգնած վիշտը սուզվեց գիշերվա խավարի մեջ – հանգավ <...>

Ահ այս էր բոլորը – սրա՞ համար էին այն բոլոր տենչանք ու տանջանք, հույզեր ու հույսեր, որ հանկարծ մարեին – ընդմիշտ, հավիտյան –

և սրա՞ համար էր նա այնքան սիրուն, փարթամ մեծացել – հասունացել, որ հանկարծ չքանա, որպես թե իսկի չի եղել երբեք –

և այսուհետև ինչ է լինելու նա – փտելու, քայքայվելու, հող է դառնալու – անպիտան, գարշելի – և այն սիրուն այտերի տեղ չոր ոսկորներ – այն հրապուրիչ, ժպտուն աչքերի տեղ[ակ] դատարկ ու մութ փոսերում ճճիների կույտն է ոլորվելու, գալարվելու, օձը լափելու և խեչափառը դատարկ կողերում. <1 անընթ.> օ՜, չէ, այսպես չէ – թող այնտեղ...

Առաջին գիշերը – թե այսուհետև ինչ է լինելու նա – փտելու, հող դառնալու, ևն –

[և] միթե բոլորն այս է.

ԳԱԹ ԹՖ 161(3 լր.)
<VII>

ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ*

Լըսիր, Հորացիո, շատ բան կա երկնքում
և երկրի վըրա, որ իմաստությունդ չի էլ երազել:

Շեքսպիր, «Համլետ»

I

Գուցե թե իրավ, մի ոգի էր նա,
Իջել էր ներքև – աշխարհքի վըրա
Մեկին խնդացնի, և Աստված չարավ,
Բախտիս նախանձեց ու կանչեց – տարավ:

II

5 *Այնպես այս երկրում անհանգիստ էր նա,*
Օտար էր այստեղ – ուզում էր գնա[ր].
Մերթ-մերթ բացվում էր գարնան օրի պես,
բացվում էր պայծառ,

Խորագիրն այստեղ ունի հետևյալ տարբերակները՝ «Խավարի մեջ», «Դեպի մութը». հարց».

1 ա Ես մերթ կարծում եմ՝ մի ոգի էր նա,
բ Գուցե թե չքնաղ մի ոգի էր նա
գ Դերերկրային մի ոգի էր նա
2-3 Եկել էր տխուր աշխարհքի վըրա
Ինձ ուրախացնի, բայց Աստված չարավ,

3 տողի դիմաց, լուսանցքում՝ «մեկին խնդացն<ի>»

5 ա Եվ այնպես անհանգիստ էր նա
բ Այնպես անհանգիստ էր նա այս աշխարհքում
գ Այնպես աշխարհքում անհանգիստ էր նա
7 Գարնան օրի պես՝ հեղհեղուկ, մատաղ
8 ա Մեկ բացվում պայծառ
բ Մեկ բացվում էր պարզ

Խնդում էր, խայտում անփույթ ու կայտառ,
10 Ու մեկ էլ հանկարծ մթնում էր, թախծում
Ասես՝ մի խորունկ
Քնքուշ մտորմունք
Մարմին էր առել
Ու աղջիկ դառել:

III

15 [Նոր էի տիրել ես [նրան] այն
Չէի հավատում դեռևս իմ բախտին]
Եվ ամեն անգամ, երբ տրտմում էր նա,
(Ինձ թվում էր, թե կըթռչի հիմա)
Աչքերը բանում, անհանգիստ շարժում,
20 Տընքում էր, լալիս, հոգոց էր քաշում...
[Ես դողում էի, սիրտս մարում էր.
Մի բան պատահի նրան քընի մեջ]...
Զարթեցնում էի, քնքշալով խոսում.
– Ինչո՞ւ ես լալիս, հոգիս, երազում:
25 [Վախից սփրթնած արթնում էր քընից,]
Շփոթված դողում, [փաթաթվում էր ինձ.]

9-10 Խնդում էր, խայտում աշխույժ ու կայտառ,
Ու հանկարծ մթնում ասես
16 տողի լուսանցքում՝
[Երազ] Անուրջ էր թվում կամ շռայլ մի բախտ, որին արժանի չէի.
18 ա Ես դողում էի, թե կորավ գնաց ահա...
բ Ես ասում էի – կըթռչի հիմա
գ Ես կարծում էի – կըթռչի հիմա
19 ա Աչքերը կեսխուփ անհանգիստ շարժում,
բ Կեսխուփ աչքերը անհանգիստ շարժում,
գ Գիշերն աչքերը անհանգիստ շարժում,
20 Տընքում էր, լալիս կամ հոգոց քաշում...
24 Քեզ ինչ պատահեց, հոգիս, երազում:
25 ա Նա վախից սփրթնած արթնում էր քընից
բ Վախից նա <1 անընթ.> արթնում էր քնից
գ Թալկացած, տամուկ ճակատը քրտինքով
26 Դժգույն շուրթերը տենդային <...>

– Ա՜խ, ի՜նչ լավ արիր,
Որ [ինձ] արթնացրիր.
Երազում անթիվ տըգեղ զեռուններ
Բարձրանում էին մերկ մարմինս ի վեր...
Սառն օձը անցնում ոտներիս վըրա...
Մեկ էլ... չըգիտեմ էլ ինչեր տեսա...
Մեկ էլ մի չար մարդ շարշարում էր ինձ...
Ճիգ էի անում փախչել նըրանից...
– Ա՜խ, ի՜նչ լավ արիր, զարթեցրիր, հոգիս...
[Շշնջում էր նա], կըպչում էր կրծքիս:
Ես զգում էի՝ ոնց էր նա վախում,
Ոնց էր վախեցած սիրտը բաբախում
Մատաղ լանջի տակ
Անհանգիստ, արագ:

30-31 Վեր էին սողում մերկ մարմինս ի վեր...
Սողում ոտներիս վըրա...
34-35 Ես ուզում էի փախչել նըրանից...
Ա՜խ, ի՜նչ լավ արիր, արթնացրիր, հոգիս...:
39 Փափուկ լանջի տակ

<VIII>*

<...> [Քանի ու քանի գիշեր չըքնեցի,
Որքան դողացի, որքան ճգնեցի,
Որ նա <...>
Գիշերն [անկողնում], լինում էր հաճախ,
5 Չէր կարողանում նա քնել խաղաղ.
Կեսխուփ աչքերը անհանգիստ շարժում,
Տնքում էր, լալիս կամ հոգոց քաշում...
Ես դողում էի, թե չըլնի [հանկարծ]
Մի բան պատահի նրան քնի մեջ.-
10 Զարթեցնում էի, քնքշալով խոսում.
- Քեզ ի՞նչ պատահեց, հոգիս, երազում:
Նա վախից քրտնած արթնում էր քնից,
Շփոթված դողում, փաթաթվում էր ինձ.
- Ա՜խ, ի՜նչ լավ արիր,
15 Որ ինձ արթնացրիր...
Երազում անթիվ [տգեղ] զեռուններ
Բարձրանում էին մերկ մարմինս ի վեր...
Սառն օձը սողում ոտներիս վրա...
Մեկ էլ... չըգիտեմ էլ ինչեր տեսա...
20 Մեկ էլ մի չար մարդ չարչարում էր ինձ...
Ես ուզում էի փախչել նըրանից...
Ա՜խ, ի՜նչ լավ արիր, արթնացրիր, հոգիս...
[Շշնջում] էր նա, կպչում էր կրծքիս:
Ես զգում էի՝ ոնց էր նա վախում,
25 Ոնց էր [վախեցած] սիրտը բաբախում
Մատաղ լանջի տակ
Անհանգիստ, արագ:
[Բռնի ծիծաղով նրան համբուրում,

---

*Էջի վերևը նշված է նախ թանաքով՝ «Սկզբում» և ապա՝ մատիտով, փակագծերում՝ «Դնել սկզբում»:

28 Եվ ես ծիծաղով նրան համբուրում,

Սիրտ էի տալիս, երկյուղը ցրում,
30 Մերթ հանդիմանում, մերթ քնքույշ գգվում,
Ավելի ամուր ու ամուր գըրկում,
Եվ ճգնում էի անպատում ահով,
Որ երազումն էլ լիներ ապահով.
Բայց այսպես [հաճախ] իղձը մարդկային
35 Յուր ճախրի մեջն է հանդիպում մահին:]
Հընչում էր ժամի զանգակը տխուր,
Ինչպես մի անհուն, ահագին մրմուռ,
Մի ձայն հեռավոր, անհայտ աշխարհքից.
Այն խուլ ղողանջյունն սփոփում էր ինձ.
40 [Նրան] լսելով մըտածում էի,
Թե այս [հոգեմաշ] վիշտ ու ցավերի
Աշխարհքը ունայն, անցավոր
Ես էլ նրա պես կըթողնեմ մի օր,
Եվ մի օր այն սուրբ աշխարհքում՝ մենք էլ,
45 Ուր այնքան ծանոթ մարդիկ են գնացել,
Կըտեսնենք իրար, կապրենք իրար հետ
Ուրիշ մի անվերջ կյանքով երկնավետ:

---

34 ա Բայց հաճախ այսպես իղձը մարդկային
բ Բայց այսպես թռչուն իղձը մարդկային
35-36 տողերի միջև եղած լուսանցքում
[«Տերտերը կարդում էր – «Հնչի հողմն և այլն, և ոչ երևի տեղի նորա – եօթնաստեղեան լոյս խորանում»]:
38 Հեռավոր մի ձայն հանդերձյալ կյանքից
42 Աշխարհքը ունայն ժամանակավոր
47 ա Մի ուրիշ անվերջ կյանքով երկնավետ:
բ Մի ուրիշ կյանքով <...> ու հավետ:

<IX>

<...> Բայց նիրհը խավար, ծանրը ու տանջող
Զոքեց ինձ վրա սև թևերը կախ.
Միտքս իր թելը կտրեց ու թռռավ
Անել խավարչտին քառսում կորավ...
5 Մահ, մեռել, շիրիմ թեթև հեռացան,
Հեռու ցրվելով փոխվեցին, դարձան
Ամպեր, ստվերներ, կետեր երերուն,
Դողացին, հանգան ու մթնեց հեռուն...
Բայց հեռո՛ւ մթնում, թե գուցե ինձ մոտ,
10 Տեսնեմ... նա կանգնած տխո՛ւր, [արյունոտ],
Կուրծքը [պատառված] ինձ ցույց է տալի
ու լալի՛[ս], լալի՛[ս]...
Ես էլ սարսափած երբոր արթնացա,
[Վերմակս ու բարձս ողողված տեսա],
15 Բայց ուզում էի, որ դարձյալ, մեկ էլ,
Թեկուզ երազում, ինձ մոտ էր եկել.
Հետն էլ <1 անընթ.> <...>
Այսպես, մրցելով, մինչև առավոտ
Մաքառում էին երկյուղ ու կարոտ,
20 Մինչև տանջվելով [իսպառ] հոգնեցի,
Թուլացած, թմրած <1 անընթ.> քնեցի...
Քնեցի թե չէ, այդ էլ չըգիտեմ,

---

4 Մի անհուն, խավարչտին քառսում կորավ...
5 ա Մահ, մեռել, շիրիմ կամաց հեռացան,
բ Մահ, մեռել, շիրիմ – մտքերս նոսրացան
6 Եվ հեռանալով, փոխվեցին, դարձան
9 Եվ հեռո՛ւ մթնում, թե գուցե ինձ մոտ,
11 Կուրծքը պատառուն ինձ ցույց է տալիս
14 ա Դեռ լալիս էի
բ Լաց էի լինում
15 Եվ ուզում էի, որ դարձյալ, մեկ էլ,

Դարձյալ նա եկավ տխո՛ւր, դալկադեմ
Ինչպես մի կտոր աշնան իրիկուն
Թեթև՛, անմարմին, [պաղ] ու սիրուն.
Ու վշտո՛տ, վշտո՛տ վրաս նայելով,
Հեռացավ, անցավ <1 անընթ.> սահելով.
[– Օ՜, գերեզմանում,
Դու չես իմանում,
Որքա՛ն էր դժվար
Ու նեղ ինձ համար...
Դժվա՛ր է, դժվա՛ր
Ապրողի համար...]:

[Վեր թռա դողով, մարեցի կրկին,
Հիմքից սասանեց իմ դժբախտ հոգին,
Աչքերս անթարթ մնացին բացված
Ու կայի անշարժ, անշունչ տարածված:
Այս ահեղ ժամին ցերեկը բացվեց]
Գուցե նա չէր այն...
Վաղորդյան դալուկ շողերի տակին
[Մի ճերմակ, սիրուն] աղավնի է նա,

---

27 ա Հեռացավ, անցավ անհետ սահելով.
բ Հեռացավ, անցավ մեղմիկ սահելով.
գ Հեռացավ, անցավ օդում սահելով.
33 Արթնածի համար...
33 տողից հետո՝
ա [Այս մի գերբնական երգ էր անվրդով]
բ [Այս մի տեսակ վիշտ էր անվրդով]
[Լի շիրմի մռայլ սարսափով, մութով].
34 ա Վեր թռա հանկարծ, մարեցի կրկին,
բ Վեր թռա ուժգին, մարեցի կրկին.
38-40 Բայց արդեն ցերեկը բացվեց
Այն գուցե նա չէր...
Երբ որ <...>
41 ա Երևում էր ձողը
բ Երևաց ձողը
գ Ձողը երևաց

Թռած գալիս է... [գալիս է] ինձ մոտ,
Խաղաղ նստում է, ինձ նայում – տխրում,
Մնչում է այնպես աղո՛ւ, կաթոգին,
45 Թռչում է, ջինջ օդում ճախրում,
Գնում է, գնում... ետ գալիս կրկին...
Այնպե՛ս փոխված է... ինձ կանչում է նա...
Բայց... զգո՛ւյշ, զգո՛ւյշ... ոչ ոք չիմանա...
Գիշերն էլ [գաղտնի],
50 Երազի նման,
Թեթև, անմարմին.
[Խորին գիշերով
Ջյունի շորերով]
Դարձյալ երազում
55 Երազի նման,
Խորին գիշերվա
<...> մթնում
Գալիս է, գտնում,
Կարոտ ու կարոտ
60 Գալիս է ինձ մոտ.
Նա կենդանի է.
Գիշերն երազում իջնում է
Ջքնաղ – անմարմին
<1 անընթ.> խոսում է.

42-43 Թռած գալիս է միշտ ինձ մոտ
Լուռ-լուռ նստում է, ինձ նայում – տխրում,
45-46 Իջնում <է>, ջինջ օդում ճախրում,
Գնում է այնտեղ... ետ գալիս կրկին...
48 ա Բայց սրսս... ծածուկ... ոչ ոք չիմանա...
բ Բայց գաղտնիք է... ոչ ոք չիմանա...
43-48 տողերը վերցված են փակագծերի մեջ։
62 Գիշերն երազում գալիս է
64 ա <1 անընթ.> և ինձ ասում է
բ <1 անընթ.> և ինձ կանչում է

65 Թռիր ինձ հետ, իմ թշվառ,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չըկա մահ – անջատում,
Եվ սերն անվերջ, անհատնում
[Հոսում է] – հոսում է,
70 Բայց ես ասում եմ, թե մեռավ.
Օ՜, չի, չի մեռել,
Ապրում է դեռ էլ...
[Եվ] իմ կանչին
Յուր <1 անընթ.>
75 <...> լսում է –
Ինչպես ջինջ երազ
Երազահաս
Թախծալի կարոտ
Գալիս է ինձ մոտ:

65 Արի՛ ինձ հետ, իմ թշվառ,

Մութն ու լռությունն այնտեղ միասին
Բազմել էին պաղ մահվան աշխարքում.
Դալուկ շողալով՝ մի կրտոր լուսին
Դես-դեն էր ընկնում մթնած երկրնքում...
5 Ճընշված ձայներով հեծծում էր քամին,
Երկիրը տրնքում բազմատանջ կրծքից,
Թե մեռելները գիշերվա ժամին
Ճրրրում էին քարերի տակից...
Ամեն բան պաղ էր, մրռայլ ու ահեղ.
10 Ու մրտքովս հանկարծ անցավ մի վայրկյան,
Ոնց էր նա մենակ համբերում այնտեղ,
Նա՛, որ մեռելից վախում էր այնքան...

Զորացե՛ք, ծընկներ, ի՞նչ եք քարշ գալի.
Ահա, այն կողմը թաղեցինք նըրան.
15 Ահա լուռ թումբը սևին է տալի.
Բայց նրա վրա... ըսպիտակ մի բան...
Առաջ եմ գընում, նայում... ո՛վ Աստված,
Ճերմակ շորերով իր շիրմի վրա
Լուսնի լուսի տակ գըլխակոր նստած
20 Թախծալի ու լուռ արտասվում է նա...
– Ո՛վ ահեղ տեսիլ, սիրելի պատկեր,
Ինչո՞ւ ես լալիս այդպես դու վըշտոտ.
Խոսի՛ր, ինձ ասա, կենդանի՞ ես դեռ,
Թե մի սոսկալի պատրանք ես ծանոթ...

---

2 Բազմել էին սև մահվան աշխարքում.
4 ա Դես-դեն էր ընկնում խավար երկրնքում...
բ Դես-դեն էր ընկնում դժգույն երկրնքում...
8 Խոսակցում էին քարերի տակից...
11 Թե ինչպես էր նա համբերում այնտեղ,
20 Արյունոտ ու լուռ արտասվում է նա...
22 Ինչո՞ւ ես լալիս կուրծքդ արյունոտ.

25 Այժ տուր մոտենամ, և թե ոգի ես,
Լույս տուր իմ ապշած, մահացու խելքին,
Որ այս հասկանամ, գիտակ լինիմ ես
Կյանքի ու մահվան խավար գաղտնիքին:
Ով, նըշան տուր միայն, հայտնիր, ինձ ասա,
30 Միթե չես ապրում, չես լըսում ինձ պես,
Եվ միթե արդյոք ճշմարիտ չէ սա,
Որ ես տեսնում եմ, որ կանչում եմ քեզ...
Նա նայում էր ինձ այնպես թախծալի,
Ուզում էր կարծես խոսել <...>
35 [Վաղորդյան] դալուկ շողերն արևի
Ցոլացին, ու նա ցընդվեց, չըքացավ...
Ու թմբի վրա, ցերեկվան լուսով
Երևաց ձողը...
Եվ թշվառ մի բիր, մի սըրահար
40 Գըլխիս մեջ մըտած, սըրտիս մեջ մըտած,
Զարշարում է ինձ, տանջում անդադար,
Կյանքըս խորտակելով, հանգիստըս կըտրած...
Մի հույս է պահում այժըմ ինձ մենակ,
Թե վախճան չունի մարդկային հոգին,
45 Որ ես էլ պիտի մեռնեմ, ու կըրկին
Թե երբևէ [մի տեղ] պիտի միանանք –

---

35 ա Ցոլացին վաղորդյան շողերն արևի
բ Բայց այստեղ դալուկ շողերն արևի
36-37 Ցոլացին ու նա դալկացավ, չըքացավ...
Ու թմբի վրա, վաղորդյան շողերի տակին
39 ա Եվ այնուհետև մի բիր, մի սըրահար
բ Եվ այն օրից մի բիր, մի սըրահար
40-41 Մըտքիս մեջ մըտած, սըրտիս մեջ մըտած,
Զարշարում են ինձ, տանջում չարաչար
44-46 տողերի փոխարեն
Թե երբևէ պիտի մի տեղ միանանք,
Եվ թե մահ չունի մարդկային հոգին...
Մենք <1 անընթ.> երբևիցե մի տեղ միանանք –
46 տողից հետո, իբրև 44 տողի նախնական տարբերակ
65 Եվ թե մահ չունի մարդկային հոգին...

Իսկ եթե մեզ հետ պիտի և մեռնի
Քանդվի, չըքանա, կորչի հավիտյան
Բոլորը, ինչ որ մեր հոգին ունի –
50 Միտք, հիշողություն, սեր և ամեն բան...

Գիտե՞ս ով է այն... ճերմակ աղավնին,
Որ այնպես ուրախ թռչում է, գալիս
Շողալով ցերեկվան արևի շողերի միջին...
Լուռ-լուռ նըստում է, ինձ նայում-տխրում,
55 Մընչում է այնպես աղու, կաթոգին,
Թռչում է-գընում, ջինջ օդում ճախրում,
Գընում է այնտեղ... Ետ գալի կըրկին...
Իսկ գիշերն երբոր մենակ ու անքուն
[Ես] միտք [եմ] անում,
60 Գալիս է թաքուն նա իր աշխարհից
Ու պատմում է ինձ, պատմում միալար,
Ինչպես տակավին դեռ սիրում է ինձ,
Ինչպես վըշտանում, լալիս ինձ համար...
Գալիս է, ահա, նա ինձ հայտնելու,
65 Թե ապրում է անվախճան,
Գերերջանիկ, մեզնից հեռու
Անմեռ հոգի գերբնական:

---

50 և 51 տողերի միջև՝

Բայց գիտես գաղտնիքը... [որ նա չի մեռել]...
ա Բայց գիտես գաղտնիքն... [որ նա չի մեռել]...
բ [Նա ողջ-կենդանի ապրորում է դեռ էլ]...
Գիտե՞ս ով է նա... ճերմակ աղավնին,

51-52 Որ այնպես ուրախ ցոլում է, գալիս

53 տողից հետո՝

[Գիտե՞ս ով է նա]...

54-57 տողերում օժանդակ բայերը անցյալից դարձրել է ներկա:

59-64 տողերում՝ նույնը:

62-63 Թե ոնց տակավին դեռ սիրում է ինձ,
Ու միշտ վըշտանում, լալիս ինձ համար...

– Արի՛ ինձ հետ, իմ թշվառ,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
70 Ուր չըկա ցավ, անջատում,
Ու սերն անվերջ, անհատնում...
Արի թըռիր <1 անընթ.>

72 տողից հետո քաշված գծիկի տակ՝
«Ջարմանք. քանի տարի է անցել այն օրից»։

<XI>

Է՛, վաղուց լռած ծիծաղի նման
Անց է կացել նա –
Էլ ոչ ոք չի հարցնում նրա մասին,
Ես էլ իմ մտքում պատկերն եմ խառնել։
5 Եվ այժմ, երբոր նրանից խոսում,
Թվում է, թե մի հեքիաթ եմ ասում,
Վաղուցվա հեքիաթ <...> ու հին,
Եվ խառնվում է զարմանքն իմ վշտին,
[Թե ինչպես կյանքը սուտ է ու չնչին]։
10 Իսկ մի օր այստեղ նա ման էր գալիս,
Փայփայում էր ինձ, անունըս տալիս,
[Եվ մեր բախտի արբեցության մեջ
Մենք չէինք տեսնում ոչ վախճան, ոչ վերջ] –
Եվ այնպես անհոգ խնդում կաթոգին,
15 Որ ինձ թվում էր – թե նրա կյանքին
Ու մեր վայելքին էլ վախճան չըկար։
Սո՛ւտ մարդ. կյանքը կարճ ու միտքը երկար,
Հենց մեր տարփանքի ժամին [զվարճալի]
Նա հանկարծ մեռավ, ընկավ ծաղկի պես,

---

4 ա Ես էլ մոռաց<ել> եմ պատկերն իմ մտքում,
բ Ես էլ շփոթել եմ պատկերն իմ մտքում,
գ Ես էլ շաղել եմ պատկերն իմ մտքում,
6-7 Թվում է թե հին հեքիաթ եմ ասում,
Մի տխուր հեքիաթ <...>
9 Թե կյանքը որքան սուտ է ու չնչին։
10 ա Չէ՛, մի օր այստեղ նա ման էր գալիս,
բ Բայց մի օր այստեղ նա ման էր գալիս,
14-15 Եվ այնպես կայտառ խնդում, թրթռում,
Որ ինձ թվում էր – թե պետք է երկրում
15 տողից հետո
«[Հավետ ապրեինք]»
16 Մեր երջանկությանն էլ վախճան չըկար։
19 Նա հանկարծ մեռավ, թոշնեց ծաղկի պես,

20 Եվ նրա կողքին տգեղ ու տկար
Մնացի ապշած, կանգնած շանթահար,
Ինչպես կարող էր նա <...>
[Մի սիրուն աղջիկ] – <...>
Այնքան վաղաժամ, այնքան հեշտ, հանկարծ
25 Աշխարքից կորչել – [չըքանալ] անդարձ,
Ու ոչինչ դառնալ – [չըքանալ անհետ]...
Կարո՞ղ է հաշտվել սիրտը սրա հետ:
Եվ ոչ ոք մեզնից դեռ չէր հավատում,
Զարշարում էինք, կանչում, պաղատում,
30 Մինչև հոգնեցինք, և նա կարկամած
Ինչպես ձըգեցինք, այնպես էլ մնաց
Եվ աղերսալի մեր ձայնը տրտում
Առանց պատասխան հանգավ լուռ օդում
<. . . . . .>

---

20 Եվ նրա կողքին շանթահար – ես մնացի ապշած,
22 Ինչպես կարող էր, որ իմ սիրելին
21-22 տողերի դիմաց, լուսանցքում
ա [Չէի հասկանում, չէի հավատում
բ Չէի հասկանում, թե ինչ եղավ նա
գ Չէի հասկանում, թե ինչ պատահեց
Թե ինչ պատահեց – կամ ինչ բան էր «մահ»],
Թե ինչու այսպես պատահեց –
25-26 Աշխարքից կորչել – հեռանալ անդարձ,
Ու դառնալ ոչինչ – անտես ու անհետ...
28-29 Եվ ոչ ոք մեզնից չէր էլ հավատում,
Զայն էինք տալիս, կանչում, պաղատում,
32 ա Եվ կտրված մեր ձայնը տրտում
բ Եվ <1 անընթ.> մեր ձայնը տրտում

Զըկարողացա երկար մտածել -
Քունը եկել էր աչքիս ծանրացել,
Մտածմունքներս կամաց հեռացան
Եվ հեռանալով, ուրիշ բան դարձան -
5 Ու մարդը [դարձավ] մի ամպի կտոր,
[Եվ] մտքերս ինչպես [խաղողի] ողկույզներ,
Նրանք էլ ինչպես մանր շողեր
Փլվեցին, հանգան.
Բայց հանկարծ թնդաց իմ մեջը մի բան,
10 Տեսնեմ՝ նա կանգնած աչքիս հանդիման:

[Ինձ թվում էր, թե նա մի վիշտ ուներ.-
Չէր ուզում շուտով կյանքից բաժանվել,
Թե մի գաղտնիք էր սրտում մնացել
Աշխատում էր ինձ երազով ասել].

15 Որքան և [կարոտ] լինեի
Իմ մահկանացու և տգետ հոգուն,
Ահավոր էր շիրմից եկած այցելուն...
Եվ, բաժանվելով անցավոր երկրից,
Չի զգում տանջանք, անջատման կսկիծ,
20 Ցավի դառնություն... և մեծակարող
Մահը յուր դաժան ճանկով ավերող
Չի այլանդակում պատկերն արդարի,
Չի խառնում գծերն Աստծո նկարի,
Չի խլում գույնը յուր գեղեցկության...
25 Եվ մեռելը մեզ թվում է կենդան:
Բայց սա կասկած էր

---

4 Փոխակերպվելով <?> ուրիշ բան դարձան -
10 Եվ տեսնեմ կանգնեց աչքիս հանդիման:
26 Այս մի կասկած էր

Շատ զարհուրելի – թեպետև սիրուն...
Ես ուզում էի, որ նա չմեռներ –
Ապրեր, թեկուզ մեղավոր լիներ...
30 [Եվ ունեի սրտումս այդպիսի մի հույս,
[Մի] <...> փայլփլող մի լույս,
Որ դողդողում էր, ուզում էր հանգչել
Մահվան սառն շնչումի առաջ]...
Հանկարծ մի ճերմակ դագաղ ներս բերին
35 Եվ իմ [աչքի] առաջով անցկացրին,
Սրանից իսկույն ցնորքներս բոլոր
Տասլ արին – կորան հոգուս մթին խորքերում,
Ինչպես ճնճղուկներ թփերի միջում,
Երբոր վերևից ուրուր է թռչում.
40 Հանգավ այն փոքրիկ նշույլը հույսի,
Որ ես վերևը <...> ասացի:

---

28 ա Ես ուզում էի՝ միմիայն չըմեռներ –
բ Իմ ուզածն այն էր, որ նա չըմեռներ –
30 Այս էր աղոթքս <...> և մի հույս,
30-33 տողերի փոխարեն՝
ա Եվ ես սրտումս դեռ պահել էի
բ Եվ ես սրտումս դեռ կարողանում էի պահել
Այսպիսի աղոտ մի լույս
Մահվան սառը շնչի առաջին.
Նույն էջի տողատակում՝
Բայց սատանա էր
Թե [հաղթանակը] բանականության.
Այս էլ էր գալիս մտքովս անցնում:
39 Երբոր երկն<քից> ուրուր է թռչում.

Մշ տարբերությունները և բնագրի մշակման պատկերը

ԳԱԹ թՖ 163 (6ա)

4	Խաղում էինք մենք այն երազ հովտում
11	Ու թընդում էր միշտ ծիծաղն ինձ ծաղրող
15	Ձեռքումըս դարձավ ճերմակ աղավնի,
49	Որպես երազում:
83-87	Սրգվորի միջին, խունկի ծըխի տակ
ա	Աչքովըս ընկավ դագաղը ճերմակ,
	Ու... տեսա նըրան դագաղում պառկած,
	Երեսը դալուկ, աչքերը փակված...
	Առաջըս մըթնեց, տեղըս կորցըրի.
բ	«Հասմիկ ջան, եկավ... կանչեցիր... վեր կաց»:
	Դուրս հոսեց դեմըս տըրտում, բարակած
	Նըրա մոր ձայնը... խունկի ծըխի տակ
	Աչքովըս ընկավ դագաղը ճերմակ,
	Ու շուրջըս մըթնեց, տեղըս կորցրի
	Երբ ուշքի եկա, աչքըս բաց արի
93	Ցկար կենդանի ձայն, ըստվեր, նըշան,
95-98 ա	Տեսա նըստոտած մարդիկ շըշընջում,
բ	Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, զըվարթ քըրքիջով
	Մի ծիծաղ անցավ փողոցի միջով
	Ես ուշքի եկա, աչքըս բաց արի
	Տեսա աշխարքը ու լույսն արևի,
104 ա	Խոսում էր ինձ հետ, խըրատում հանդարտ.
բ	Խըրատում էր ինձ հանդարտ.
107	Քու ձայնը երբեք էլ չի լըսիլ նա,
122	Թե մահը լավն է, միայն մենք տգետ,
133	Մեկ մեծ ժամանակ: Այսպես և հոգին
173	Կըգնան, կըգան տարիքն անտարբեր,
206	Ուզեցի գըտնել մըտքի մի թափով,

95-96 Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, զըվարթ թընդոցով
Մի ծիծաղ անցավ մոտիկ փողոցով

230	Խայտում էր միշտ անվերջ, անհո՛ւն
247	Որպես գերեզման և ունայնություն՝
249	Որպես հայացքը մեռելի աչքի՝
312	Թե ո՞վ է թաղված քու ոտի տակին,
315	Անհոգ մի ջահրիլ, անկըշտում ագա՞հ,
317	Բայց ... իջնում էր նա ընդմիշտ իմ աչքից,
328	Էլ չի տեսնելու արևը նըրան:
331	Մենք էլ ենք մի օր այսպես գընալու
369 ա	Նա է կըրում հույսը վերջին
բ	Նա է տալիս հույսը վերջին
372 ա	Նա գընում է բարձր ու անվերջ
բ	Նա տանում է բարձր ու անվերջ
377	Ու զողանջում է անտառի միջից
380	Կանչում գերբնական մի ուրիշ կյանքի.
384 ա	Ու սերն անվե՛րջ, անհատնո՛ւմ...
բ	Ու կյանքն անվե՛րջ, անհատնո՛ւմ...

ԲԹ և ԲՊ՝ 11, 49, 85, 107, 133, 206, 247, 249, 312, 315 և 328 տողերը՝ ինչպես ՄՃ-ում:

ԲՊ 372 Նա տանում է բարձր ու անվերջ

Պոեմի հետ կապված գրառումներ

ԳԱԹ թ.Գ 162 (6դ)

90 թ. օձնեցի Քուստուլ (Պողոսյան) գերեզմանից հանում են, տանում գետը գցում (քարից ընկած էր), խորթլամիշը պատահմունքով մեռածներին ասում են՝ Աստված պատժեց – իսկ մենք բերինք թաղեցինք:

Արտերի միջով չեն թողնում անցկացնել:

Մեղավոր ա եղել, գետինը տեղ չի տալիս:

Օձնեցի Մալխասանց Մալխասի աղջիկ Մարիամին տարել են թաղել գերեզմանատանը, կենդանացել է (վաղուց): Այս երկու տա-

րին է մեռել:

Օձնեցի Վանդսանց Զաքարին (նշանած տղա է եղել - հին բան, 50 տ.) գետակհար եղած է եղել, գերեզմանը բարձրացել է, հանել են - ջուրը գցել - մեռել շատ էր լինում ետևից -

---

Աբազանց (Աբովենց) Գիքորը (65 թվին) քարից ընկել էր - տեսան՝ կենդանության նշաններ են երևում - կրծքին իլիկ են զարկում, այնպես թաղում: Դրանից հետո գերեզմանը բարձրացավ - հանեցին (թաքուն) գլուխը կտրեցին - նորից թաղեցին (գլուխը դնում են տակին):

Նույն օձնեցի Օղուզանց Ապրեսը (70 թվին) ջրակուր էր եղել - տեսան՝ ետևից շատ մեռել եղավ, հանեցին, տարան ջուրը գցեցին:

Հետն էլ թողնում էր <1 անընթ.>

Մեկը, Հարություն - 25 տարեկան

26 տարի առաջ (99) Ղազախու Ղալաջա գյուղում կոտորածին [նրան] (8-9 տղա) նրան երազում տեսնում են - մեռնում:

Մեր Ալեքն ու Մելքոնանց Օհանեսը պատահում են: Զորան Ղաչնանց Աբրահամն ասում է՝ մեռած չի - գնում են (հողը չի նստել), հանում - Ալեքը մորթում է: Ասում է՝ գլուխը որ կտրեցի, արյունը գնաց (գլուխը կտրում - դնում են ուսի տակին):

---

81 թվին Ալեքը Բարսեղանց պառվի ձող զարկեց: Խորթլամիշ էր եղել, մարդիկ էր տանում:

Զորագեղցի Բոզոյանց Ներսեսի պաշտոնն էր, որ բհիր խփի խորթլամիշներին: Որովհետև ձեն են տալիս - ամեն մարդ չի դիմանում:

(1898 թվին, Զոբնանց Վարդանը - Շուլավեր) 15 տ. առաջ կրակեցին դամիրեցի Թումանին, 50 տ. առաջ շուլավերցի Քոսականց Բաբին:

Խորթլախ միայն թուրքերն են լինում, իսկ քրիստոնյաներից նրանք, որոնց <1 անընթ.> փառք ի բարձունս չի ասված. Մաշտոցի մեջն էլ (թաղման) հիշվում է, թե սա չլինի այն հեթանոսների նման, որոնց ոսկրների և մարմնի մեջ մտնում է սատանան ու դուրս գալիս գերեզմանից – այլ անշարժ լինի մինչև հավիտյան:

Երդվելու ժամանակ սպիտակ են հագնում, որպես թե պատանն է հագերնին – զանգերը տալիս են ու մոմերը հանգցնում:

Մարցեցի Երեցանց Հարությունը մեռել էր: Տեր Մարտիրոսը ծանուցացրել է, թե մեռել է, գնացել են, գլուխը կտրել (1895 թ.):

Ահնիձորցի Դավոանց Թաթոն մեռել էր – քահանան, տեսնելով, որ կենդանության բոլոր նշանները կան, թաղելուց առաջ բհիր էին զարկել սրտում – կրծքին:

Քարնջեցի Տեր-Պողոսը:

Դամիրեցի Թումանին կրակեցին 83 թվին: Շուլավերցի Քոսականց Բաբին 1850 թվին:

1900 թվի գարնանը Զուլլվանց Մաթոսի տղեն ( ) ու... Սանահնա ձորում տախտակ անցկացնելիս խեղդվեցին: Մաթոսի տղին բերին գյուղը, թաղեցին պատարագով: Տեր-Ղազարն երազ է տեսնում, թե էդ հարամին իմ մեջը բերեք (եկեղ<եցի> է ասում), տեսեք՝ ձեր գլուխն ինչ եմ բերում: Հանում են, տանում ջուրը գցում:

Այգեհատցի Եղիլերի մայրը մեռել էր – ետևից շատ մեռել էր լինում: Դուրմշանց Ռևազն է մորթում (գնում են մի քանիսը):

ԳԱԹ թֆ 162 (3 լր.)

Երկար գիշեր – երբ մեռելը տանն է –

Եթե գերեզմանը [փուլ] փլել է – աչքը աշխարհքին է մնացել:

Գոռնափշտիկ:

ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ
(էջ 131)

Առաջին տարբերակ («Վտակ» ժողովածու, 1901)

ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՋԱՆ
(Հատված)

Նստած եմ մի օր ու միտք եմ անում,
Դես եմ շրջում դեն, չեմ կարողանում
Մի հընար գըտնեմ – ցավերըս հոգամ.
Վեր կենամ, ասի, մեկի մոտ գընամ,
5 Կըրկին պարտք անեմ, գլուխը քարը,
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը:
Այսպես մոլորված հենց վեր եմ կենում,
Ականջըս հանկարծ մի ձայն է ընկնում.
«Ողջո՛ւյն Պառնասի գըլխից սըրբազան».
10 Ետ նայեմ, տեսնեմ իմ ծանոթ Մուզան:
– Վե՛ր կաց, բանաստեղծ, կանչում է այսպես.
Վե՛ր կաց, ներշընչվի՛ր, դուրս արի հանդես.
Տանջվում են ահա եղբարքըդ թշվառ,
Հեծում-հալածվում աշխարհից աշխարհ.
15 Երկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա, քեզ համար բերել եմ ավյուն.
Հասիր վհատին, ըսփոփիր որբին,
Ույժ տուր պանդուխտին իր երկար ճամփին...
Նայի՛ր, եկել է գարունը, ահա,
20 Բազմել է կանաչ սարերի վըրա,
Ջորերը լըցվել, փըռվել հովիտում,
Հավքերն երգում են, ծաղկունքը փթթում,
Դու էլ ըսթափվիր, երգիր քեզ նման,
Ողջունիր շըքեղ գալուստը գարնան:
25 – Հերիք է, Մուզա, երկինքը վկա,
Է՛լ համբերելու սիրտ ու տեղ չըկա.
Այնպես կանեմ քեզ, որ դու մոռանաս

Արյուն ու գարուն, պոետ ու Պառնաս։
Անիծված լինին այն օրն ու տարին,
30 Երբ գերի դարձա ես քո քընարին.
Քեզ հետ մըտերիմ դառնալու օրից
Զըրկված մընացի կյանքում բոլորից,
Հարգից ու վարկից,
Վայելքից, խելքից...
35 Աչքովդ էլ այսօր տեսնում ես, ահա,
Գնում եմ մեկից պարտք անեմ հիմա,
Ով գիտի այն էլ
Կարող եմ գըտնել...
Այնօր դիմեցի «հոգով բանաստեղծ»
40 Մեկին, որ հեգիս հարգում է անկեղծ,
Որ ասում է միշտ, «դու լավ ես գրում,
Բայց ափսոս, ափսոս, որ հայոց երկրում
Իսկի չգիտեն պոետի տեղը
Եվ նա շարունակ ընկնում է նեղը...»։
45 Հենց որ իմ փոքրիկ խնդիրքը լըսեց,
Նոթերը կիտեց, այսպես ըսկըսեց.
– Ինչ է, ասավ, մի գործի չես.
Բա ե՞րբ պիտի դու ամաչես.
Չես ծառայում մի պաշտոնի,
50 Այդ տեսակ էլ մարդ կըլինի՞.–
Անգո՛րծ, անբա՛ն,
Թափառական,
Տեսե՛ք, տեսե՛ք – դատարկ պոետ...
Է՛յ, ամաչիր գոնե բոյեդ,
55 Գընա՛, գընա, մի գործ գըտիր,
Հեչ չըլինի – մըշակ մըտիր...։
Եվ ահա այսպես
Տառապում եմ ես
Խըրատվելով,
60 Նախատվելով,
Հոգսերըս անթիվ, գրպանըս դատարկ,

Ինչ կասես սրրան – բանաստեղծի փառք...
– Օ՜հ, դու երջանիկ երկրնքի որդի,
Ժամ չէ հիշելու արարքն այն վատի,
65 Վերցրու քնարրդ, մի՛ տրտմիր այդպես,
Առաջրդ կանգնած թշնամիդ չեմ ես:
– Այո՛, թշնամի, և ոչ միայն հիմի,
Վաղուց ես դու ինձ եղել թշնամի,
Դեռ մորս արգանդում կնքել ես պոետ.
70 Ծնընդյան օրից նորա կաթնի հետ
Տրվիր ինձ թովիչ այն ցողը թաքուն,
Գաղտնի տիրեցիր իմ մատաղ հոգուն:
Խեղճ մայրրս իսկի պոետ չէր ուզել,
Ոչ էլ իր կյանքում անունն էր լրսել.
75 Եվ այժմ տրխրում, միշտ լաց է լինում,
Որ իմ գործերը այսպես են գընում:
– Ավա՜ղ, դու գիտես, քո մայրը, պոե՛տ,
Գեղջուկ ռամիկ մի կին է տրգետ.
Նա չի՛ հասկանալ երբեք պոետին,
80 Թեկուզ և լինի հարազատ որդին:
– Լո՛ւռ կաց, թշվա՜ռ, ինչ ես խոսում.
Իմ խեղճ մո՞րն ես տրգետ ասում.
Իսկ այն խելոք մարդիկն ապա,
Որ հասել են մինչ Եվրոպա
85 Կամ թե իրանց խելքի զորով,
Ակնարկներով, օրեցօրով,
Ֆելիետոնով,
Հազար բանով
Ծաղրում են ինձ, հանդիմանում,
90 Մի՞թե նույնպես չեն հասկանում:
– Օ՜հ, Միդիասի ականջը վկա,
Ջարմանալու ոչինչ չրկա,
Չեն հասկանում բնա՜վ, բնա՜վ:
– Լրո՛ւր, լրո՛ւր, ա՛յ անիրավ.
95 Հազիվ այդքան մեծ-մեծ բրրդի

Նույնիսկ ծառան առաջնորդի...
Ո՛վ Արամազդ, շանթ ու կայծակ,
Որտե՞ղ հասանք, ի՞նչ իմացանք,–
Չե՞ն հասկանում... Անմի՛տ ջահել,
100 Դու երևի չես պատահել
Հրռչակավոր այն «մըտրակին»,
Որով նրանք հայոց ազգին
Դաս են տալիս համեստության...
– Ո՛չ, ո՛չ, Մուզա, իմ սիրական,
105 Խոսքը մնա թող մեր միջում,
Դու դեռ նրանց չես ճանաչում,
Եվ ճանաչել չես կարող հեշտ.
Օ՛, այնքա՜ն են նրանք պարկեշտ...
Ա՛յ օրինակ. շատ բանի հետ
110 Նրրանք, ինչպես նաև պոետ,
Հորինում են երգեր ու վեպ,
Եվ այնպես է լինում ստեպ,
Որ տակավին իրանց մըտքում,
Թարգմանում են ողջ աշխարհքում...
115 Բայց և այսքան փառքն ահագին
Ծածկում են կեղծ անվան տակին,
Ու միշտ այսպես
Համեստ ու հեզ,
Համառ փակված մի տաք քունջում,
120 Այնպես... որ դու չես ճանաչում:
– Ես ճանաչեմ այդ չըքերին,
Օ՛հ, խընայիր իմ աչքերին.
Ո՞վ են նրանք – «որոնողներ»,
Որ փընտրածը չեն գըտել դեռ
125 Եվ ոտքելով ամեն անկյուն
Հոտ են քաշում զգո՛ւյշ, թաքո՛ւն.
Աղմըկում են ամեն ձայնով,
Երևում են ամեն ձևով,
Օր-ցերեկով կեղծում, խաբում

130 Ու միշտ իրանց բեռը կապում...
Եվ ինչպես որ ամեն գործում,
Այստեղ էլ են կեղծել փորձում.
Բայց հսկան չի դառնալ թըզուկ
Եվ ոչ քընար – պարկապըզուկ:
135 Ձիրք չեմ տըվել նրանց երբեք,
Որ հորինեն վեպեր կամ երգ,
Եվ ո՞վ է նա, անունն ասա,
Մի տող գըրի առանց Մուզա:
– Կա՛ց, կաց, հոգիս, մի՛ բարկանար,
140 Դու էլ ես ճիշտ, բայց խոսքըս առ.
Ուրիշ երկրում այդպես կանեն,
Որտեղ իրանք շնորհք չունեն,
Դիմում են քեզ,
Որ դու օգնես...
145 Իսկ մենք ունենք ճոխ Հանգարան,
Պատրաստ հանգեր շարան-շարան,
Խմբագիրներ ունենք կարող,
Որ կարող են շինել գըրող,
Պոետ ուզես, թե վիպասան.
150 Եվ, տեր չանի, թե բարկացան,
Կարող են ողջ կրկին խըլել,
Մեկ էլ տեսար – տաղանդ չի էլ...
Ունենք երգի հըմուտ վարպետ,
Խաղ է անում հանգերի հետ,
155 Ուսուցանում ոգևորվել,
Պոետ դառնալ – երգեր գըրել,
Գրում այնպես բարձր ու վըսեմ.
Թե հասկանաս՝ ղոչաղ կասեմ,–
«Ցողակն 'ի ճախր յայեր ամբուռ,
160 Խոշիւն դուդել 'ի յամբ անկուռ,
Սաղպի արեկ՝ թընդմամբ տըրոփ.
Ձէտ տիր ըռումբ՝ ազդու 'ի յոփ»:
– Օ՛, թըշվառներ, ինչ լըսեցի.

Բայց դու ասա, ի սեր Զևսի,
165 Եվ այդպիսով ո՞վ է կարող
Շնորհք առնել, դառնալ գրող։
– Է՜հ, ինչ անենք, թող չըդառնա.
Վարժապետից կըհեռանա,
Կերթա կապրի առանց հանգի
170 Ու լող կըտա ծովում կյանքի,
Ազա՛տ, ինչպես քեֆը կուզի,
Ոչ սիրտ մաշի, ոչ ծաղր լըսի...
Ես իմ հոգին՝ լավ է այնպես,
Թե չէ՝ նայի՛ր, այս ինչ եմ ես...
175 – Պոետ ես դու։
– Ահա ես էլ այդ եմ լալիս.
Ինչո՞ւ այս ձիրքն էիր տալիս։
Թող լինեի մի կեղեքող,
Հավաքեի միշտ փող ու փող.
180 Առաջ թեև «գազան» ու «ցեց»,
Կըդառնայի շուտով ես «մեծ»,
Վեհ բարերար
Ազգի համար,
Մեռած օրս էլ պսակ տային.
185 «Իր որբ ազգից՝ միակ հային»։
Կամ թե տերտեր լինեի թող,
Խաչը վըզիս մեռել թաղող,
Սուփրի վերև միշտ նստեի,
Իմ ապրուստը դըրըստեի,
190 Ազգն էլ աչքը տընկեր վըրաս –
Իմ փըրկողը դու ես՝ որ կաս։
Թող լինեի հոգով տըգետ
Զըրիակեր մի վարդապետ,
Որ կազմեին տըգետ-գիտուն
195 Իմ անունով կուսակցություն,
Աջահամբույր միշտ բերեին,
Ձեռս ու փեշերս համբուրեին։

Ահա այսպես բան լիներ մարդ,
Գնար ապրեր լի ու հանդարտ։
200 Կամ սնգուրված մի ճոխ հիմար,
Որ ապրում է լոկ իր համար,
Ուտում-քընում, ելնում-ուտում,
Լի՜, գո՜հ, ինչպես աղբակույտում
Հանգիստ ապրող որդը պարարտ։
205 Կըլինեի հարգի մի մարդ,
Նույնիսկ եթե գլխուս այնժամ
Դատարկ լիներ հազար անգամ,
Քան թե հիմա իմ գըրպանը։
Ահա կյանքում այս է բանը.
210 Թե չէ՝ լինել ի ծնե գերի
Մերկ Մուզայի ու երգերի,
Որդիք ու կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,
215 Ուժից ընկնել անժամանակ,
Թե պոետ եմ... օ՜, ո՜չ, Մուզա՜,
Մի անարդար պատիժ է սա,
Մի բախտ է սև,
Ախտ ակներև...
220 Եվ ինձ մոտիկ
Փորձված մարդիկ
Դեռ շատ վաղուց նկատեցին.
Կըռիվ արին, խըրատեցին,
Թե աշխարհքին մըտիկ արա,
225 Շատն էլ խնդաց խելքիս վրա...
Իսկ ես, ա՜խ, ես,
Միշտ խենթ այսպես,
Գիշեր-ցերեկ թերթում գրքեր,
Շինում էի դատարկ երգեր,
230 Միշտ քո քամով էի թըռչում,
Կյանքից, բախտից հեռու փախչում։

– Ա՛յ, ապերախտ, ի՞նչ ես ասում.
Այն ո՞ր բախտն ես դու ափսոսում,
Որ չեմ տրվել քեզ իմ ձեռքով.–
235 Աստվածային հրզոր ձիրքով
Այս ցած կյանքից հեշտ ու անթև
Թռչել երկինք – վե՛ր և, վե՛ր և,
Ցավեր, հոգսեր ողջ մոռանալ,
Դժոխք իջնել, դրախտ գընալ,
240 Անհուն ըզգալ, թովիչ երգել...
Ո՞ր բախտից եմ ես քեզ գըրկել։
– Օ՜, ո՞ր բախտից. ա՛յ սևերես.
Ահա շարեմ, հիշիր ու տես։ –
Ինձ մի անգամ առան տարան
245 Հաշվապահի ուսումնարան
Շատ խոսեցին,
Համոզեցին,
Թե կավարտես այս դպրոցում.
Ատեստատը հետո ծոցում
250 Ուր որ գընաս,
Տեղ կունենաս,
Լա՛վ փողով տեղ բուղգալտերի.
Խազեինդ էլ տարեցտարի
Միշտ կավելցնի քո ռոճիկը,
255 Գուցե վրան և... աղջիկը։
Բայց դու եկար միտքս մըտար,
Ինձ չըթողիր տեղըս դադար,
Դավթարն աչքիս դարձավ դաժան,
Թիվ, կոտորակ, թըվանըշան
260 Ուղեղիս մեջ դարձան որդեր,
Քիչ էր մընում սիրտըս պայթեր։
Հաշվեգիրքը վայր ձըգեցի,
Քեզ հետ փախա ու զըրկվեցի
Այն լավ տեղից, այնքան փողից...
265 Ապա ընկա հարուստ խանութ.

Խազեինըս գործին հըմուտ,
Մի անունով վաճառական,
Ինձ խըրատեց, խոսեց այնքան.
– Ա՛յ, օրինակ,
Աղքատ, մենակ,
Քեզ պես էի մի վախտ ես էլ,
Հիմի նայիր – ի՞նչ եմ դիզել...
Մի հինգ տարի թե որ մընաս,
Դու էլ ինձ պես մարդ կըդառնաս...
Ահա կասսան, հաշվի գիրքը,
Ողջ տալիս եմ ես քո ձեռքը:
Բայց ես խաբված, խենթ երեխա,
Այն բոլորը թողի, փախա,
Թե չեմ կարող, ես չեմ կարող,
Ես գրող եմ, գըրո՛ղ, գըրո՛ղ:
Սակայն էլի բախտըս ժպտաց.
Ձեռս բռնեց, տարավ հանկարծ
Ու պիսերի տըվավ պաշտոն:
Գըրում էի և լի, և տոն:
Մեծավորըս այնքան սիրեց,
Հին գրչակոթն ինձ նըվիրեց
Ընկերներս էլ ինձ դաս տըվին՝
Ոնց պըլոկել խընդրատըվին:
Բայց դու է՛լի եկար-գըտար,
Խաղաղ գործիս մեջը մըտար.
Ես էլ, հիմարս, իսկույն ևեթ,
Վեճ բաց արի ամենքի հետ,
Թե երբ մեզ մոտ կին է գալի,
Ամեն բան էլ չի կարելի...
Չի կարելի խեղճ գյուղացուն
Գերի շինել ողջ տարին բուն,
Տանել-բերել ու թալանել,
Այրու պղինձն աճուրդ հանել...
Այս բոլորը քիչ էր կարծես,

300 Այնքան արիր, սատանի պես,
Որ գըրեցի մեծիս պարսավ,
Նա էլ՝ կո՛րի, կո՛րի, ասավ,
Մենք ենք տալիս քեզ փող ու վարձ,
Դու, Մուզայի խելքով ընկած,
305 Վեր ես կենում մեր դեմ խոսում.
Այդպես պիսեր մենք չենք ուզում:
Սակայն Աստված մեծ է գութով.
Հայտնի կանտոր ընկա շուտով,
Լավ էր, ասի, այսուհետև
310 Կապրեմ ազատ, գործըս թեթև:
Հետըս եկար մըտար կանտոր,
Գործերս արիր խառնուփընթոր,
Քո երեսից հենց մյուս տարին
Իմ պաշտոնից ինձ դուրս արին:
315 Կըրկին եղա ես խայտառակ,
Համ էլ ընկա պարտքերի տակ:
Հա պոետի պարտքն էլ գիտես.
Այդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ առակ,
320 Վեճ ու վրճիռ ծանր ու բարակ:
Ո՞ր մեկն ասեմ, ո՞րը թողնեմ.
Երբոր տեսան շընորհք չունեմ,
Այնուհետև քանի անգամ
Ծանոթ, ընկեր, լավ բարեկամ –
325 Տերտերության տըվին խորհուրդ.
– Ա՛յ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք,
Հարստություն, հանգիստ – հեշտ կյանք...
Իսկ ես անփորձ, անխելք, հիմար,
330 Ողջ մերժեցի լոկ քեզ համար,
Պատրաստ կյանքից, բախտից փախած,
Գանձանակի թեփշին թողած,
Քնարն առա,

Պոետ դառա,
335 Երգ ու տաղով մտա հանդես.
«Հե՛յ, Մուզայի ընկերն եմ ես»,
Զայն տրվեցի ոգևորված:
– Հա՛, հա՛, հա՛, հա՛, բիրտ հոհրոաց
Ժողովուրդը միաբերան.
340 Թոցրել է խելքն այս խեղճ տղան:
Հեռո՛ւ կորի, խենթ պատանի,
Որ անպիտան գործի, բանի,
Ուշք ու միտքդ տրվել երգին,
Մի չես նայում այս աշխարհքին:
345 Մենք մարդիկ ենք – գործ ենք անում,
Խենթ-մենթ բաներ չենք հասկանում:
Ես գոչեցի – խավա՛ր ամբոխ,
Դու պաշտում ես հենց փայլ ու փող,
Չես հասկանում դու պոետին,
350 Ե՛ս, երկընքի քընքուշ որդին,
Երգում եմ սե՛ր, ճշմարտությո՛ւն...
Եվ գընացի խմբագրատուն...
– Տեր խմբագիր, պոետ եմ նոր,
Բերել եմ ձեզ ոտանավոր,
355 Ահա կարդամ ականջ դըրեք,
Ձեր հանդիսում տեղավորեք.
«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք օր ու գիշեր,
Նայում եք անթարթ իմ հոգու խորքում...
360 Ինչո՞ւ չեք քընում, ինչո՞ւ չեք փակվում:
Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել,
Ուզում է քընել, հավիտյա՛ն քընել...
Դուք էլ քընեցեք, սևորա՛կ աչքեր,
Ցերեկս անցել է, գիշեր է, գիշեր...»:
365 – Ոչի՛նչ, կոկիկ է: Խոսելով անկեղծ,
Դուք վատ չեք գրում, պարոն բանաստեղծ.
Ամեն մի տողում տասն են վանկերը,

Բայց ինձ աղքատ են թվում հանգերը։
Հապա՛, մի տվեք ուղղեմ ես հիմա,
370 Տեսեք թե որքան սահուն դուրս կըգա։
Ուղղում եմ ես միշտ մեր պոետներին,
Այսպես եմ պոետ շինել բոլորին.
«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք ինչպես քաջքեր...»։
375 Ես իսկույն, ինչպես հալածված քաջքից,
Փախա խմբագրից ու իրան աչքից,
Երգերըս ուղիղ տարա տըպարան
Ու տըվի ազգիս մի նոր երգարան։
Այնժամ մտրակող մի թունդ պուբլիցիստ,
380 Հայտնի քննադատ, բազմագետ ու խիստ,
Սաստիկ վրդովված իմ երգով, գըրքով,
Ծաղրի առավ ինձ իրան «ակնարկով»։
Ես դեմ եմ, ասավ, բանաստեղծության,
Զըզվեցնում է ինձ այդ երգի Մուզան։
385 Ոչ մըտքեր են պետք, ոչ ձիրք և ոչ խելք.
Բառեր ու հանգեր – և ահա քեզ երգ։
Հենց նոր դուրս եկած այս խակ տղան էլ
Գըլխից այս տեսակ բաներ է հանել։
Այն օրից քանդվեց մեր ազգի տունը,
390 Փչացավ, ընկավ մեր դըպրությունը,
Հին պոետները երբ որ ողջ մեռան,
Նոր մարդիկ եկան ու պոետ դառան...
Սաստում ենք, ծաղրում, գոնե չեն լըռում.
Ահա թե մենք ինչ դըժվար օրերում
395 Պետք է մաքառենք,
Կռվենք ու մաքրենք,
Հայոց անարգված Պառնասը անբիծ
Հանդուգն, ինքնակոչ այս նորեկ խըմբից...»։
Արածըդ հիմա հասկանո՞ւմ ես դու.
400 Բանաստեղծ շինել մի անմեղ մարդու,
Բերանը դընել հիմար երգերը

Ու բերել ձրգել հայոց երկիրը,
Այն էլ, օ՜, ոճիր, հընների տեղը.
Այսքա՜ն վըրդովել ազգի ուղեղը...
405 Այս բա՞ն է, Մուզա՜,
Դե ինքըդ ասա։
– Օ՜, հանգի՛ստ, պոե՛տ. երդվում եմ ահա,
Վառ Ավրորայի շողերի վըրա,
Պատմում ես դու այն խեղճերի մասին,
410 Որ միշտ անտեղյակ առաջին լույսին,
Ջեն հրճվում նորա ծագման հանդիսով,
Եվ միայն կեսօրին, ապուշ երեսով,
Ելնում են մըռայլ, տեսնում քնեած –
Գըլխների վերև արևը կանգնած...
415 Բայց մի՛թե, իրավ, հայերը այդպես
Անարգում են ինձ ու չեն սիրում քեզ։
– Միամի՛տ Մուզա. ի՞նչ ես պահանջում.
Ոչ թե չեն սիրում – չեն էլ ճանաչում։
Մեր խեղճ տանըցիք ո՞րքան նախատում,
420 Բայց ես, միշտ համառ – չէի հավատում,
Մինչև լըսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի.
Մի օր ինձանից արավ հարց ու փորձ.
– Ունե՞ս, հարցըրեց, մի պաշտոն կամ գործ։
425 – Բանաստեղծ եմ ես, ասացի հըպարտ։
– Դըժվար է, ասավ, երբ անգործ է մարդ։
– Բանաստեղծ եմ ես, կըրկնեցի մեկ էլ.
– Հասկացանք, ասավ, պարապ ես եղել։
Բայց վերջն ավելի պարզեց խընդիրը,
430 Երբ հոդված գըրեց մեր լըրագիրը։
Բանաստեղծն, ասավ, թող պանիր շինի,
Որ հացի, վարձի դառնա արժանի,
Թե չէ՝ համառի ու մընա պոետ,
Ի՞նչ հաշիվ ունի ազգը նըրա հետ.
435 Ազգը հո նըրան չի խընդրում գըրի,

Թերթն էլ փող չունի, թե որ վճարի,
Թող գընա, ապրի իրան գըրիչով...
Այսպես ենք դատում մեր մաքուր խըղճով.
Ներշընչման համար
440 Այսպես է հարմար...
Կարող ենք մենք էլ
Ուժգին մըտրակել
Ու ծաղրել մի-մի,
Որ հառաջ դիմի:
445 Չէ՛, գնա՛, Մուզա,
Ուրիշին ասա,
Թե կարելի է բանաստեղծ լինել
Ու հայոց երկրում երգեր հորինել:
Եվ, այս բոլորը որ տեսնի, լըսի,
450 Էլ այս աշխարհքում ո՞ր խենթը կուզի
Ունենալ երգի թեկուզ հենց հանճար
Ու միշտ խանգարված տառապել անճար:
– Ո՛հ, կոպի՛տ երկիր, անհոգի մարդիկ:
Դե՛, եկ, սիրելիս, տանեմ քեզ երկինք,
455 Այնտեղ երջանիկ ոգիների հետ
Զվարթ կըխնդաս ու կապրես հավետ,
Կամ կուզես թուցնեմ, հանեմ Ոլիմպոս,
Որ նեկտար ըմպես, ճաշակես ամբրոս:
– Ա՛յ, անգին Մուզա,
460 Դրանից խոսա.
Իրավ, այս կյանքում ես շա՛տ եմ զըզվել:
Ինչ երանություն, երկընքում սուզվել,
Այն չքնաղներին, որոնք, անկասկած,
Նըման չեն իսկի մեր հայոց կանանց,
465 Լինել միշտ ընկեր
Ու սիրո երգեր
Հորինել,
Ջոնել,
Երկրային բոլոր հոգսերը թողած...

470 Կամ, ոտներն հանգիստ ժայռերից կախած,
Նըստել Պառնասի երջանիկ գըլխին
Ու բարձրից նայել այս հիմար խալխին...
Բայց ես ունեմ կին, շատ երեխաներ,
Նրանց բանն այնտեղ ինչպես կըլիներ.
475 Կարո՞ղ ենք այնտեղ նրանց համար էլ,
Թեկուզ ապառիկ, միշտ ապրուստ ճարել:
– Ո՛չ, երբ Պառնասի գագաթ վերանաս,
Ջավակներ ու կին պիտի մոռանաս...
– Ա՛յ անգութ Մուզա, անխի՛ղճ, անարդար,
480 Մեր գյուղի տըգետ քյոխվից էլ վատթար.
Ասա մի տեսնեմ, ինչ եմ արել ես,
Որ տանից տեղից մենակ աքսորես:
Չէ՛, լավ է կըրկին, որ այստեղ մընամ,
Ծաղրի, նեղության մի կերպ դիմանամ,
485 Քան մենակ երկինք վերանամ քեզ հետ:
– Քո կամքը լինի, ո՛վ ազատ պոետ:
Ընտրիր ուր կուզես, երկինք թե երկիր,
Բայց միշտ, ամեն տեղ քո երգը երգիր
Ու բարձրից նայիր կյանքի տագնապին:
490 Հիշիր սոսկալի այն չար վիշապին,
Որ մանուկ օրից, անդադար, անքուն
Հետևում էր միշտ երգի աստծուն,
Մինչև որ նորա նետից շանսատակ
Ընկավ Պառնասի անդունդը անտակ:
495 Այդպես աննըկուն մնա՛ միշտ, պոետ.
Մի՛ ընկնիր մարդկանց չնչին կըրքի հետ.
Կանգնիր միշտ վերև
Ու, ինչպես արև,
Նայիր լուսավոր,
500 Պայծառ ու հըզոր.
Քո կոչումն է դա.
Եվ, ինձ հավատա,
Բոլոր գանձերը, գոհարներն անգին

Զարժեն խանգարված քո ներշընչանքին:
505 – Ա՛յ դու սատանա, էլ կուզես խաբել,
Սիրուն խոսքերով աչքերըս կապել.
Ա՛յ դու կեղծավոր, չըքնաղ անպիտան,
Ես լավ եմ տեսնում այժըմ ամեն բան.
Դու ինձ ես մենակ միամիտ գըտել,
510 Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ,
Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ կընկանը,
Ասա թե մենակ փողը չի բանը...
Բայց ի՞նչ եմ ասում, հայոց գրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը:
515 Եվ երկա՛ր, երկար մեր ողջ հանճարով
Մըտածել ենք մենք դըժվար օրերով –
Գըրողի պըսա՛կ,
Թե՞ փողի քսակ...
Եվ լավ ենք վճռել. դե գնա՛, Մուսա,
520 Գըրադարանըս շինում եմ կասսա,
Թըքում եմ և քեզ և քո պըսակին,
Երկըրպագում եմ փողի քըսակին:
«Փողի քըսա՛կը, փողի քսա՛կը,
Բարձրացընում է մարդու հասակը,
525 Գեղեցկացնում է հըրեշ-տըգեղին,
Սըրբագործում է գարշն ու աղտեղին:
Նրա ուժն է, որ դարձընում է լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույսին-զառամին մոտեցնում իրար,
530 Զարին, վաշխառվին շինում բարեբար,
Պըճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի:
Նա է միշտ շարժում դատողի լեզուն,
Նա է հասցընում աղոթքն Աստծուն,
535 Նրա վրա է աշխարհքը կանգնած,
Նա մեր հոգին է, մեր երկրորդ աստված:
Պոետն էլ բնավ թե խոսել է վատ,

Տուժել է սաստիկ, զզջացել է շատ,
Եվ այժմ, ահա՛, խելքի է եկել,
540 Սկսել է նրան օրհնություն երգել»։
Երգըս որ լսեց իմ դժբախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա-փուսան.
– Դե՛, մնաս բարյավ,
Ասավ, անիրա՛վ.
545 Ես այսքան տարի
Ինչ որ քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար։

ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ
(Նվեր հայոց գրողներին)

Նստած եմ մի օր ու միտք եմ անում,
Դես եմ շրջում դեն, չեմ կարողանում
Մի հնար գտնեմ – հոգսերքս հոգամ...
Ասի՝ վեր կենամ մեկի մոտ գընամ,
5 Կրկին պարտք անեմ, գլուխը քարը,
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը...
Տեղիցս կանգնած,
Լսում եմ հանկարծ՝
– Ողջույն Պառնասի գլխից սրբազան...
10 Ետ նայեմ-տեսնեմ իմ մատաղ Մուսան.
– Էլ ինչ ես ուզում, չքնաղ սատանա:
– Ո՛հ, ազնիվ պոետ,– շշընջում է նա,
Առջևըդ ահա եղբարքըդ թշվառ,
Թափառում են մերկ աշխարհից աշխարհ,
15 Մի տեղ կոտորվում, մի տեղ հալածվում,
Նոթի, անկայան տանջվում են – հեծում.
Երկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա քեզ համար բերել եմ ավյուն,
Երգիր, որուտա, հույս տուր վհատին,
20 Մատնիր ոսոխին դարերի դատին...

---

*«Վտակ» ժողովածուի փորձատիպի բնագրից (ընդամենը 609 տող) այստեղ տպագրվում են միայն այն մասերը, որոնք հետո կրճատվել ու չեն մտել այդ գրքի մեջ, կամ ունեն զգալի տարբերություններ վերջինից: Կրկնվող հատվածները հանվել են (ցույց են տրվում <...> նշանով), բայց դրանք ևս հաշվի են առնվել տողերի համարակալման ժամանակ: Փորձատիպի վրա բանաստեղծի կատարած բոլոր ուղղումներն ու հավելումները նկարագրված են առանձին բաժնում ըստ տողերի այդ ընդհանուր համարակալման: Այս տարբերակից հանված տողերի վրա կատարված ուղղումները ցույց են տրվում հատուկ եղանակով. նախ բերվում է տվյալ տողի նախնական ձևը և ապա՝ թեք գծից (/) հետո, նրա փոփոխված տարբերակը:

<...> Նայիր, աղջիկը ինչպես ծաղկել է.
Աչքերի մրթնից ծագել է
Կյանքի արևը, սիրո վառ կիրքը
Սիրտը այրում է, և մատաղ գիրկը
Ջերմ փափագում է, տենչում է նրան...
Քնքուշ իղձերին չունի նա թարգման...

<...> Գնում եմ, սակայն, այն էլ ով գիտի,
Ո՞վ պիտի փող տա դատարկ պոետի:
Եվ, ահա, այսպես
Տառապում եմ ես –
Հոգսերըս անթիվ, գրպանըս դատարկ,
Ինչ կասես սրան – բանաստեղծի փառք...
– Ո՛հ, ազնիվ պոետ, մի խոսիր այդպես,
Միթե քո Մուսան թշնամի է քեզ:
– Այո՛, թշնամի, և ոչ միայն հիմի,
Վաղուց ես դու ինձ եղել թշնամի,
Երբ դեռ եղել եմ արգանդում իմ մոր՝
Անմեղ, միամիտ, գունդ մրսի կըտոր:
Այնտեղ ես դու ինձ բանաստեղծ շինել.
Մայրըս չի ուզել ինձ աշուղ ծընել,
Եվ այժմ տրտում, միշտ լաց է լինում,
Որ իմ գործերը շատ վատ են գընում:

<...> – Զուր ես այդպես դու զարմանում,
Բնա՛վ, բնավ – չեն հասկանում:
– Ա՛յ հանդուգն, նայիր դու մեկ.
Դու մի ջահիլ աղքատ ու մերկ,
Ոչ մի պաշտոն ունես հաստատ,
Ոչ ցենզ ունես, ոչ ատտեստատ,
Ոչ խըմբագիր, ոչ օգնական,
Եվ անհամեստ, հանդուգն այդքա՛ն...
– Ա՛խ, երանի թե մի գայիր
Մեր աշխարքում դու խոսեիր,

Որ աղմուկով,
Ծաղրով, թուքով,
Մեր լրագիրն արմատական
Դասեր տար քեզ համեստության...
90 Չեն հասկանում... Խոսքին մըտիկ
Ողջ էլ նրանք խելոք մարդիկ,
Քննում են միշտ մեծ-մեծ գործեր,
Միջազգային վեճ ու հարցեր,
Հոգս են անում ամեն տեղ էլ
95 Կյանքի փթած կարգը փոխել...
Մինչև անգամ կեղծ ավյունով,
Ո՛չ, ինչ ասի – կեղծ անունով
Երգ են գրում, ձայն են դնում
Ու քեզ իսկի չեն էլ հարցնում:
100 – Ինչ ես ասում, հեգ սիրելիս.
Երգի շնորհքն ես եմ տալիս,
Ոչ մի պոետ ոչ մի երկրում
Առանց ինձ երգ չի գրում:
– Ուրիշ երկրում այդպես կանեն,
105 Որտեղ իրանք շնորհք չունեն,
Դիմում են քեզ
Որ դու օգնես.

<...> – Ինչ ես ասում, չեմ հասկանում:
– Էհ, հասկանալն ինչ ենք անում.
Երգ է էլի, կարդա – փակիր,
Շատ լավ ասաց մի խըմբագիր –
130 Երգը – երգե, դատարկ մի բան
Լավը լինի թե անպիտան...
Բայց դու լսիր աշակերտին,
Թե ինչ գրեց իրան հերթին.
– Մենք գնացինք անտառը,
135 Մեր դիմացն էր Մասիս սարը,
Կնցցե և մեր Վեհափառը»:

– Հա՛, հա՛, հա՛, հա՛. ա՛յ, հիմար բան։
– Ինչ ես խնդում, ա՛յ անպիտան.
Չես հասկանում դու դեռ իսկի
Բարձր հանճարն հայոց ազգի –
Ընդամենը մի երեք տող,
Իմաստը նոր, հանգերը փոխ
Եվ լիքն այնքան մեծ-մեծ բաներ,
Ո՞ր բանաստեղծն այսպես կաներ...
– Թշվառ երկիր... բայց չի կարող
Նա սովորել – դառնալ գրող։
– Է՛հ, ինչ անենք թող չըդառնա,
Այնժամ անհետ կըհեռանա.

<...> Կըլինեի հարգի մի մարդ –
Բարձրը դասի
Լուրջ, խելացի,
Նույնիսկ եթե գլուխս այնժամ
Դատարկ լիներ հազար անգամ,
Քան թե հիմա իմ գըրպանը։

<...> – Օ՛, ո՞ր բախտից, հարցնում ես դեռ,
Տեսե՛ք, տեսե՛ք, այն ինքը չէր,
Սակայն գուցե մոռացել ես,
Մի քանիսը համրեմ՝ դե տես –

<...> Իսկ աղջիկը... ա՛խ, թող մնա.
Գալուդ խերն էլ այս էր ահա,
Հին ցավերըս նորոգեցիր,
Հանգած սերս բորբոքեցիր։

<...> Սակայն էլի բախտս ժպտաց,
Ձեռքս բռնեց, տարավ հանկարծ
Ու պիսերի պաշտոն տվեց,
Գըրում էի և լի և տոն։

<...> Եվ բանը վերջն այնտեղ հասավ,
Որ գըրեցի մեծիս պարսավ։
290 Այստեղից էլ ես դուրս եկա,
Շուտով հայտնի կանտոր ընկա։

<...> Ինչ անմիտ բան է, նայեցեք, խնդրեմ,
Այս տեսակ բաներ ես էլ կըգրեմ.
370 Կըդնեմ մի շուն, կըհանգեմ մի տուն,
Ահա քեզ եղավ՝ բանաստեղծություն։
Հենց նոր դուրս եկած այս խակ տղան էլ
Գըլխից այստեսակ բաներ է հանել...
Սա՞ է լինելու պոետը ազգի,
375 Որ իմ ճաշակին չի գալիս իսկի...»
Ու վեր կացան
Ողջ միաբան –
Ի ծնե անմիտ,
Խավարամիտ,
380 Հառաջադեմ,
Ես ինչ գիտեմ,
Տըգետ
Ու գետ...
Ծաղրատեղ դարձա
385 Ու էլ չըպըրծա,
Թեև ընկերներս իրանց երգերում
Բարկանում էին, սպառնում գրում.
«Լո՛ւռ կացեք խոզեր, ագռավներ, շներ...»
Եվ ուրիշ տեսակ շատ թունդ-թունդ բաներ...
390 Եվ բանը մինչև այնտեղը հասավ,
Որ մի խմբագիր վերջապես ասավ՝
Թողեք, պարոններ, ի սեր Աստծու,
Բանաստեղծ չի դա, այլ լոկ տիրացու,
Եվ ոչ միայն ինքը, իրան մեծերն էլ,
395 Իրանք էլ են խենթ, իրանց գործերն էլ.
Որ չեն ճանաչում մեծերին ազգի,

Որոնք չունեն խիղճ, բայց ունեն ոսկի...
Արածդ հիմա հասկանո՞ւմ ես դու,
Բանաստեղծ շինել մի անմեղ մարդու,
400 Բերանը դընել հիմար երգերը
Ու բերել-ձրգել հայոց երկիրը...
Այս բա՞ն է, Մուսա,
Դե ինքըդ ասա:
– Միթե, հիրավի, հայոց աշխարհքում
405 Մարդիկ պոետին իսկի չեն հարգում:
– Միամիտ Մուսա, ի՞նչ ես պահանջում.
Ոչ թե չեն հարգում, չեն էլ ճանաչում:
Մեր խեղճ տանըցիք նախատում,
Բայց ես, միշտ համառ, չէի հավատում,
410 Մինչև լըսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի,
Որ գիտե ամեն դիրք, պաշտոն ու գործ.–
Մի օր իմ գործից արավ հարցուփորձ.
– Բանաստեղծ եմ ես, ասացի հրպարտ.
415 – Դժվար է, ասաց, երբ անգործ է մարդ.
– Բանաստեղծ եմ ես, կրկնեցի մեկ էլ.
– Հասկացանք, ասաց, պարապ ես եղել...»
Բայց վերջն ավելի պարզեց խնդիրը,
Երբ հոդված գըրեց մեր լրագիրը,
420 Թե բանաստեղծը թող այլ բան շինի,
Որ հաց ուտելու արժանի լինի,
Թե չէ համառի ու մնա պոետ,
Ինչ հաշիվ ունի ազգը նրա հետ.
Ազգը հո նրան չի խնդրում գրի,
425 Թերթն էլ փող չունի թե որ վճարի...
Թող գնա-ապրի իրան գըրիչով,
Թե ոչինչ է այն հենց այն ոչընչով.
Ներշնչման համար
Այսպես է հարմար...
430 Կարող ենք մենք էլ

Ուժգին մըտրակել
Ու ծաղրել մի-մի
Որ հառաջ դիմի։
– Ավա՜ղ անմիտներ, բայց երկինք վկա,
Դու սուտ ես ասում՝ թե ոչ ոք չըկա.
Իսկ այն պարո՞նը – «հոգով բանաստեղծ»։
Կարծում եմ նա քեզ հարգում է անկեղծ։
Եվ երբ գըրում ես մի երգ գեղեցիկ,
Հայտնում է իսկույն հիացած կարծիք.
Նա, որ ասում է, դու լավ ես գրում,
Բայց ափսոս, ափսոս, որ հայոց երկրում
Իսկի չըգիտեն պոետի տեղը
Եվ նա շարունակ ընկնում է նեղը։
– Հա՜, մի օր երբ որ նեղն ընկած ժամին
Նորա տուն ձըգեց ինձ հոգսի քամին,
Փոքրիկ խնդիրքըս մերժեց նա հանդարտ
Ու անկեղծ լեզվով տվավ մեծ խըրատ,
Թե՝ այդ ինչ է, մի գործի չես,
Բա երբ պետք է դու ամաչես,
Չես ծառայում մի պաշտոնի.
Այդ տեսակ էլ մա՞րդ կըլինի.
Անգո՜րծ, անբա՜ն,
Թափառական,
Տեսե՛ք, տեսե՛ք – դատարկ պոետ...
Է՛յ ամաչիր գոնե՛ բոյեդ,
Գնա, գնա մի գործ գըտիր,
Հեչ չըլինի – մշակ մըտիր,
Դեն շըպըրտի՛ր գըրիչ-մըրիչ,
Գործ կատարիր, մարդ դառ քիչ-քիչ...»
Այս խըրատով –
Կոտրած սըրտով
Ես տուն եկա, հանկարծ, մեկել
Տեսնեմ դու էլ մոտս ես եկել.–
Ողջ մոռացա

465 Ու վերացա...
Նստեցի թե որ գրեմ պոեման,
Հերոսներն եկան լեռների նման,
Դու էլ լուսաթև
Իմ գլխի վերև
470 Լուռ ու սիրալիր
Սավառնում էիր...
Հանկարծ որ ճչաց դժգոհ երեխան,
Մի ակընթարթում բոլորը փախան,
Ծուխ դարձար դու էլ, չըքացար անտես.
475 Համ իմ պոեման խանգարվեց այսպես,
Համ էլ երեխան զուր և անիրավ
Իմ ձեռքից այնքան ծեծ ու տուր կերավ...
Թե այն ժամանակ առջևըս մնայիր,
Ինչ պետք է դու ինձ պատասխան տայիր:

<...> – Ավա՜ղ, հեգ պոետ, ի՜նչեր ես հոգում.
Այդպես բան չըկա վերև – երկընքում,
Իսկ երբ Պառնասի գագաթ վերանաս,
Ձավակներ ու կին պիտի մոռանաս
Եվ երգես վըսեմ,
Ինչ որ ես կասեմ:
– Ա՜յ անգութ Մուսա, ավելի դու վատ,
Քան մեր աշխարհքի մարդիկ քննադատ.
520 Շնորհում են նրանք հայոց պոետին
Գոնե աղքատի վիճակը հետին,
Այն էլ ազգօգուտ ի՜նչ բարի մըտքով.–
Որ գըրողները խոր զգան հոգով.
Իսկ դու զրկում ես ամեն մի բանից,
525 Եվ մինչև անգամ որդուց, կընգանից:
Որ այդպես եղավ այստեղ կըմնամ.
Լավ է, որ դարձյալ մի կերպ դիմանամ,
Քան կին, ձավակներ, բոլորը ձգեմ,
Գամ քո հետևից ու մենակ երգեմ...

530 – Լա՛վ, լինի այդպես,
Ինչպես դու կուզես.
Դե այստեղ մնա, երգիր այս երկրում,
Երկինքը լինի թող քո երգերում:
Եղիր աննրկուն, մնա միշտ պոետ,
535 Մի ընկնիր մարդկանց չնչին կրքի հետ,
Եվ մի տար դու գին
Նրրանց վայելքին.
Խեղճություն է այս,
Եվ ըշպար համայն,
540 Մի անբախտ վիճակ
Ծածկած փայլի տակ,
Որ հոգի չունի, որ խընդում չունի.–
Քո կարեկցության հավետ արժանի:
Այն ցոփ աշխարհից,
545 Իր բարուց, չարից
Կանգնիր միշտ վերև,
Ու, ինչպես արև,
Նայիր լուսավոր,
Պայծառ ու հրզոր.–
550 Քո կոչումն է դա...
Եվ ինձ հավատա,
Բոլոր գանձերը, գոհարներն անգին
Չարժեն կարճատև քո ներշընչանքին:

<...> Նրա անունն է մաքրում հանցանքը,
Մարդու ոտի տակ գնում է կյանքը,
580 Կույսին-զառամին մոտեցնում իրար,
Չարագործներին շինում բարերար...

600 <...> – Դե՛ գնա, հիմար, ետ չըգաս կըրկին,
Չես պրծնիլ թե չէ էլ այսպես կարգին.
Այս էլ քո տված զգացում, սիրտ ու սեր,
Ներշընչանք, ցնորք – և այլ խենթ բաներ.

Թեև ամենից մի քիչ է մընացել.
605 Բայց ես, երդվում եմ, շահ չեմ ունեցել։
Տար-տուր ում կուզես, ու թող ինձ ազատ.
Ուզում եմ լինել ես հայ հարազատ...
Հարգի, կարևոր իմ ազգի համար,
Դե, շուտ հեռացիր, նենգավոր հիմար։

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ «ՎՏԱԿԻ» ՓՈՐՁԱՏԻՊԻ ՎՐԱ
ԳԱԹ թ֊ 166 (7ա)

ԱՆՎԵՐՋ ՊՈԵՄԱ
(Հատված)

3 Մի հնար գտնեմ – ցավերքս հոգամ...
4 Վեր կենամ, ասի, մեկի մոտ գընամ,

6-7 տողերի փոխարեն՝

ա Տեղիցքս շվար հենց վեր եմ կենում,
բ Այսպես մոլորված հենց վեր եմ կենում,
ա Ականջքս քնքույշ մի ձայն է ընկնում։
բ Ականջքս հանկարծ մի ձայն է ընկնում։
8 Ետ նայեմ – տեսնեմ իմ չքնաղ Մուսան.

11-12 տողերը ջնջված են։

13 Տանջվում են ահա եղբարքդ թշվառ,
14 Հեծում-հալածվում աշխարհից աշխարհ,

15-16 տողերը ջնջված են։

18 Վեր կաց, քեզ համար բերել եմ ավյուն,

19-20 տողերը ջնջված են։

21 ա Կամ տես, եկել է գարունը ահա,
բ Եկել է [կանաչ] գարունը ահա,
22 Բազմել մրբրած լեռների վրա,

27-32 տողերը կրճատված են։

27 [Տեսնում ես] աղջիկն էլ ինչպես է ծաղկել,
28 Աչքերի մրթնից [արդեն] ծագել է

32 տողը ջնջված է։

9-32 տողերի դիմաց, ձախ և աջ լուսանցքներում կատարած հավելումներ.

ա [Սիրտ տուր վհատին], սփոփիր որբին,
բ Ողբա կորածին, սփոփիր որբին,
Հույս տուր պանդխտին իր երկար ճամփին։
Վեր կաց, [պոետ], բանաստեղծ, թող հոգսերդ,
Վեր կաց, բանաստեղծ, կանչում է այսպես,
[Ինչ ես հուսահատ] Ձարկիր քնարիդ, հընչիր աղեկեղ,

ա [Զայն տուր, ետ կանչիր ահաբեկ] խըմբին
բ Սիրտ տուր [ուժասպառ, միայնակ] խըմբին
Հույս տուր պանդըխտին իր երկար ճամփին
ա [Վեր կաց] թովչական ուժով քո երգի
բ Կանչիր թովչական ուժով քո երգի
ա Ցնցիր քարացած սրտերն աշխարհքի,
բ Ցնցիր քարեղեն սրտերն աշխարհքի,
[Հույս տուր վհատին <1 անընթ.> տուր չարին]
Զայն տուր երկընքին – թող նա կարեկից
Սփոփանք ղրկի [յուր] լուսեղեն հարկից...
Աղջիկն էլ ահա հասել է, ծաղկել,
ա Աչքերի [մրթնից վառել են] – ծագել
բ [Մավի] աչքերի [<1 անընթ.> վառել են] – ծագել
ա Սիրո [արևը] – երջանիկ կիրքը
բ Սիրո շողերը – երջանիկ կիրքը
Սիրտը այրում է – և մատաղ գիրկը
ա [Քնքույշ] փափագով տենչում է «նրան»...
բ [Այրող] փափագով տենչում է «նրան»...
գ Տենչում է «նրան» քնքույշ փափագով...
Վեր կաց, զմայլիր քո անուշ երգով.

32 տողից հետո՝

Հնչիր քնարըդ <...>
33 – Հերիք է Մուսա, [Ապոլլոն] վրկա,

45-46 տողերը ջնջված են:

46 ա Ո՞վ պիտի փող տա ինձ պես պոետի:
բ Ո՞վ պիտի փող տա մի խեղճ պոետի:

48 տողից հետո՝

ա Հոգով <1 անընթ.>
Ու նախատված.
բ Խըրատվելով,
Նախատվելով.
49 Հոգսերըս [անթիվ, գրպանըս] դատարկ,

51-52 տողերը ջնջված են:

55-56 տողերի փոխարեն՝

ա Դեռ մորս արգանդում – [շինել ես] պոետ –

բ Դեռ մորս արգանդում – կնքել ես պոետ –

Խեղճ մայրս իսկի այդպես չի ուզել.

58-60 Մայրըս չի ուզել ինձ պոետ ծընել,

Եվ այժմ տխրում, միշտ լաց է լինում,

Որ իմ գործերը այսպես են գընում:

62 Գեղջուկ, ռամիկ մի կին է անգետ, / Գեղջուկ, ռամիկ մի կին է տգետ,

45-71 տողերի դիմաց, ձախ լուսանցքում՝

Ով գիտի այն էլ

Կարող եմ գըտնել...

Այն օր[ը] դիմեցի «հոգով բանաստեղծ»

Մեկին, որ հեգիս հարգում է անկեղծ –

ա Որ [միշտ] ասում է՝ դու լավ ես գրում,

բ Որ ասում է միշտ՝ դու լավ ես գրում,

Բայց ափսոս, ափսոս, որ հայոց երկրում

Իսկի չըգիտեն պոետի տեղը,

Եվ նա շարունակ ընկնում է նեղը –

Հենց որ իմ խոնարհ խնդիրքը լըսեց,

[Իսկույն մերժեց խնդիրքը փողի]:

ա [Ապա խրատեց ինչպես երեխի]

բ Ապա <...> այսպես սկսեց.

գ <...> այսպես սկսեց.

[Խմբագիրը լսեց թե չէ] –

ա [Թե այդ] ինչ է, մի գործի չես,

բ Ինչ է, ասավ, մի գործի չես,

Բա երբ պիտի դու ամաչես –

Չես ծառայում մի պաշտոնի –

Այդ տեսակ էլ մարդ կըլինի.

Անգործ, անբան,

Թափառական...

Հերիք, հերիք, դատարկ պոետ –

Էյ, ամաչիր գոնե բոյեդ –

Գնա, գնա, մի գործ գըտիր,
Հեչ չըլինի – մշակ մըտիր...
Եվ ահա այսպես ևն.
– Ո՛վ Դու երջանիկ երկընքի որդի,
ա Ժամ չէ հիշելու արարքն այդ վատի –
բ Ժամ չէ հիշելու արարքն այն վատի –
ա Վերցրու քնարըդ... մի [ցավիր] այդպես
բ Վերցրու քնարըդ... մի [տրտմիր] այդպես.
ա Առաջըդ կանգնած թշնամիդ չէ – տե՛ս:
բ Առաջըդ կանգնած թշնամիդ չեմ ես:

76-77 ջնջված տողերի դիմաց՝

Ո՛հ, Միդասի ականջը վկա,
Զարմանալու ոչինչ չըկա.

77 տողից հետո՝

– Ձեն հասկանում – երբեք, երբեք –

79-99 տողերը ջնջված են: Ջնջված հատվածում՝

93 [Միջազգային վեճ ու] հարցեր,
96 [Մինչև անգամ] կեղծ ավյունով,
97 [Ո՛չ, ինչ] ասի – կեղծ անունով

Ջնջված հատվածի դիմաց, աջ լուսանցքում՝

Սրան տեսեք,
Այդքան հանդուգն – ընչի վրա,
Ոչ ծառա ես սրբազանի.
Այդ ով ես դու, ինչ մի մեծ մարդ,
ա [Որ խոսում ես այդպես] հպարտ.
բ Որ բրդում <ես> ինքնահավան.
ա [Ոչ ծառա] ես առաջնորդի,
բ Դու] փոքրավոր առաջնորդի,
Թե խմբագիր հայոց թերթի –
ա [Ինչ մեծ մարդ ես, որ կարենաս]
բ [Ով ես, ասա, որ կարենաս]
ա [Ու անարգես, ում կամենաս]...
բ Արհամարհես, [ում կամենաս]...

Ասա, տեսնենք, այդ ո՞վ ես դու,
Չես հավանում ոչ մի մարդու.
Չե՞ն հասկանում. խոսքին մըտիկ.
Ողջ էլ նրանք մեծ-մեծ մարդիկ
Ինչ որ ուզեն –
Կանեն – կասեն,
Եվ վայ է քեզ –
Թե դեմ խոսես –
Քո ջգրու էլ կեղծ ավյունով
[Ոչ], Օ՛, ինչ ասի – կեղծ անունով:
Կասեն – կանեն
Ինչ որ ուզեն
Էն աղմուկով, ծաղրով, թուքով
Դասեր կըտան
Համեստության.
[Եվ երբ ուզում են ներողություն <...>]
103 Առանց Մուսա երգ չի գրում:
108 Բայց մենք ունենք Ճոխ Հանգարան / Իսկ մենք ունենք Ճոխ Հանգարան
116 Ունենք դպրոց – հըմուտ վարպետ / Ունենք երգի հըմուտ վարպետ,

126-146 տողերը կրճատված են:

129 Շատ լավ, ասավ մի խըմբագիր –

146 տողից հետո, վարի լուսանցքում

ա – Օ՛, թշվառներ, ի՞նչ լըսեցի,
բ – Օ՛, <1 անընթ.>, ի՞նչ լըսեցի
ա [Բայց դու] ասա, ի սեր Ջևսի,
բ Այժըմ ասա, ի սեր Ջևսի,
Կըհասկանա.
Բայց ո՞վ այդպիսով գրող կըդառնա
148 ա [Այնժամ հանգիստ] կըհեռանա.
բ Դեպի շուկան կըհեռանա.
գ Ողջ ու առողջ կըհեռանա.

151 Ազա՛ռ, ինչպես ինքը կուզի, / Ազա՛ռ, ինչպես քեֆը կուզի,

164 Մեռած օրս էլ պսակ կտային – / Մեռած օրս էլ պսակ տային –

186-187 տողերը ջնջված են։

224-227 տողերը ջնջված են։

224 – Օ՜, որ բախտից, [այ սևերես],

227 տողի վերևը՝

224 – Օ՜, որ բախտից, ա՛յ սևերես,

ա Ահա շարեմ, հիշիր ու տես.

բ [Կուզես] շարեմ, հիշիր ու տես.

246 Հաշվեգիրքը վայր ձրգեցի, / Հաշվեգիրքը դեն ձրգեցի,

250 Իսկ աղջիկը... ա՜հ, թող մնա.

250-253 տողերը կրճատված են։

272 Ու պիսերի տվեց պաշտոն.

274-275 տողերը ջնջված են։

285 Գերի շինել ու տարին բուն, / Գերի շինել ողջ տարին բուն,

287-289 տողերի փոխարեն, աջ լուսանցքում՝

Եղածն արդեն քիչ էր կարծես,
Դու էլ եկար <1 անընթ.> այսպես,
Որ գրեցի մեծիս պարսավ,
Կորիր, նզովյալ, նա էլ ասավ –

Ձախ լուսանցքում՝

Արածդ իբրև քիչ էր

290-291 տողերը երկու կողմից վերցված են փակագծերի մեջ։

293 Գործերն արի խառնուփնթոր, / Գործերն արիր խառնուփնթոր,

321 Ցնդել է խելքն այս խեղճ տղան։ / Թռցրել է խելքն այս խեղճ տղան։

329 Դու պաշտում ես միայն փայլ ու փող. / Դու պաշտում ես հենց փայլ ու փող.

358 Երգերըս տարա-տրվի տպարան / Երգերըս ուղիղ տարա տպարան

363 Ծաղրի առավ ինձ մի լոկ ակնարկով.– / Ծաղրի առավ ինձ
իրան ակնարկով.

370 Կըգրեմ մի շուն, կըհանգեմ մի տուն,

374-389 տողերը կրճատված են:

376-397 տողերի դիմաց, ձախ լուսանցքում՝

Եվ այսպես <...> տեղից էր բռնել
Ընկերքս բոլոր ինձ քարկոծ առնել
Վեր կացան իբրև կատաղած գազան:

Աջ լուսանցքում՝

Վեր կացան իբրև կատաղած <...>
(Լերմոնտովից. «Մարգարեից» մի տուն)

390 տողի վերին լուսանցքում՝

Այն օրից քանդվեց մեր հայոց տունը,
ա Ընկավ մեր գիրն ու գրականությունը,
բ Ընկավ մեր <1 անընթ.> գրականությունը
ա Երբոր առաջվան մարդիկ մեռան,
բ Հին բանաստեղծներն երբ որ ողջ մեռան,
գ Նոր մարդիկ եկան – բանաստեղծ դառան:
ա <1 անընթ.> ազգի պոետներ դառան
բ Նոր մարդիկ եկան – պոետներ դառան:

393-394 տողերի դիմաց, աջ լուսանցքում՝

Որ չի ճան<աչում> ազգի մեծերին,
Ոչ ուղերձ ձոնում նրանց գործերին

404-405 – Միթե, ճշմարիտ, հայոց աշխարհքում
Մարդիկ քեզ իսկի չեն հարգում:

404-405 տողերի դիմաց, ձախ լուսանցքում՝

– Ով հեր <...> ինչեր ես պատմում,
Ապոլլոն վկա, ես չեմ հասկանում:

412 տողը ջնջված է:

413 տողից հետո՝

ա – Ունես – հարցըրեց – մի պաշտոն, մի գործ

բ Ունես – հարցըրեց – մի պաշտոն կամ գործ,

415 – Դժվար է, ասավ, երբ անգործ է մարդ,

417 – Հասկացանք, ասավ, պարապ ես եղել...»:

420 – Բանաստեղծն, ասավ, թող պանիր շինի,

421 տողի փոխարեն՝

Որ հացի, վարձի դառնա արժանի,

427 տողի փոխարեն՝

ա Այսպես ենք դատում մենք [հանգիստ] խղճով –

բ Այսպես ենք դատում մեր մաքուր խըղճով –

428-429 տողերի փոխարեն՝

ա [Սրանից վաղ էլ
Այսպես է եղել]...

բ [Սրանից վաղ էլ
Այսպես է եղել –
Ներշնչման համար
Այսպես է հարմար]...

430 տողից վերև՝

[Եթե կուշտանա –
Կամ բարըշտանա]

433 տողից հետո՝

Սրանից վաղ էլ
Այսպես է եղել...
Ով սովից մարել,
Նա է լավ գըրել.

434 – Ավա՜ղ անմիտներ, օ՜, մեծդ Արամազդ,
Ներքև ուղարկիր շանթերդ <1 անընթ.>

434-479 տողերի միջև ընկած հատված կրճատված է:

488 – Ո՜հ կոպիտ երկիր, անարժան մարդիկ: / – Ո՜հ կոպիտ
երկիր, անհոգի մարդիկ:

495 Այ, այդպես ասա. / Դրանից խոսա.

511 Թեկուզ ապառիկ, մի ապրուստ ճարել: / Թեկուզ ապառիկ
միշտ ապրուստ ճարել:

522-523 տողերը ջնջված են։

529 Բարձրանամ սարին ու մենակ երգեմ...

530-533 տողերը ջնջված են։

531 Ինչպես որ կուզես

540 Մի աղքատ վիճակ

554 – Մ՛յ դու չարամիտ, է՛լ կուզես խաբել / – Մ՛յ դու սատանա, է՛լ կուզես խաբել

569 տողից հետո, ձախ լուսանցքում

Նավթի ֆոնտ<ան>

600-609 տողերը ջնջված են։

«Այ» երկհնչյունը շատ դեպքերում փոխարինվել է «է»-ով:

32 տողից հետո, աջ լուսանցքում

ա Եվ այժրմ նայիր, ի սեր Աստծու,

բ Եվ այժրմ ասա, ի սեր Աստծու,

Այս ինչ եմ ես –

– Պոետ ես դու.

44 Ու նա շարունակ ընկնում է նեղը...

46 Նոթերը կիտեց, խրատն ըսկսեց.

57 տողի վերի լուսանցքում

– Դե ի՞նչ եմ ես –

– Պոետ ես դու –

– Ահա ես էլ այդ եմ լալիս.

63 – Ո՛վ դու երջանիկ երկընքի որդի,

68 տողից հետո, աջ լուսանցքում

Լըսել եմ իմ խեղճ, իմ թշվառ մորից

[Ասում է] Լալիս է, որ ես դեռ մանուկ օրից...

311-313 Դարձյալ եկար, մրտար կանտոր.

Քո երեսից հենց նույն տարին

Գործերս արիր խառնուփընթոր

378 Լույս տեսավ դարձյալ մի նոր երգարան:

393 Սաստում ենք, ծաղրում, դարձյալ չեն լըռում

393 տողից հետո, վարի լուսանցքում

Դասեր ենք տալիս գո<..>

431 Բանաստեղծն, ասավ, թող մի գործ շինի,

440 տողից հետո

Դրանից էլ վաղ

Այսպես է եղել,

477 Օ՛, երբ Պառնասի գագաթ վերանաս,

504 Ջարժեն կարճատև քո ներշընչանքին.

Վերջին էջի վարի լուսանցքում

Ու մին էլ տեսնեմ՝ կանգնած եմ մենակ,

Բարկացած <...> [ու ոչ ոք չըկա]:

Ա ինքնագիր
ԳԱԹ Թ-ֆ 167 (12), 167 (12 լր.)

*<ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ>**

Այս ցած կյանքից հեշտ ու անթև
Թռչել երկինք, վերև՛, վերև՛,
Ցավեր, հոգսեր – ողջ մոռանալ,
Դժոխք իջնել, դըրախտ գընալ,
Անհուն զգալ, թովիչ երգել...
– Օ՛, ո՛ր բախտից... հարցնում է դեռ,–
Տեսեք-տեսեք, այն ինքը չէր,
Սակայն գուցե մոռացել ես,
Մի քանիսը համրեմ դե տես.–

<...> Չի կարելի խեղճ գյուղացուն
Գերի շինել ու տարին բուն
Տանել-բերել ու թալանել,
Այրու պղինձն աճուրդ անել...
Եվ բանը վերջն այնտեղ հասավ,
Որ գրեցի մեծիս պարսավ,
Այնտեղից էլ ես դուրս եկա,
Շուտով հայտնի կանտոր ընկա։

**Ընդամենը 305 տող պարունակող այս ինքնագրից այստեղ տպագրվում են միայն այն մասերը, որոնք չեն կրկնվում «Վտակ» ժողովածուի բնագրերում կամ որոշակի տարբերություններ ունեն նրանցից։ Տրվում են նաև այն հատվածները, որոնց վրա պահպանվել են մշակման աշխատանքի հետքերը։ Տողերի համարակալման ժամանակ, սակայն, հաշվի են առնվել նաև կրճատված մասերը, որոնց տեղերը ցույց են տրվում <...> նշանով։ Այդ մասերի այն տողերը, որոնք տարբերվում են «Վտակի» փորձատիպից, բերվում են այս հրապարակումից անմիջապես հետո։*

7-8 Օ՛, ո՛ր բախտից... անմեղ գառը.
Ո՞վ է տեղյակ... ո՞վ է խառը...
10 Մի քանիսը համրեմ, գուցե հիշես։
70 Այրու թավեն ծախու հանել...

125 <...> Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել,
Ուզում է քընել, հավիտյա՛ն քընել...
Նորա թախծալի հոգու մըռայլում
Դուք եք միմիայն կենդանի փայլում.
<...> Եվ մեր աշխարհքում ողջ էլ նրա հետ
160 Սկսեցին ծաղրել – վա՛յ, պոե՛տ, պոե՛տ.
[Պոետը այսպես ծաղրատեղ դարձավ
Ու էլ չազատվեց, թեև սրտացավ]
Թեև ընկերներս իրանց երգերում
Բարկանում էին, սպառնում, գրում –
165 «Լո՛ւռ կացեք, խոզեր, ագռավներ, շներ»,–
Եվ ուրիշ տեսակ շատ թունդ-թունդ բաներ,
Եվ բանը մինչև այն տեղը հասավ,
Որ մի խըմբագիր վերջապես ասավ –
– Թողե՛ք, պարոններ, ի սեր Աստըծու,
170 Բանաստեղծ չէ սա, այլ լոկ տիրացու...
Արածդ հիմա հասկանո՞ւմ ես դու,
Բանաստեղծ շինել մի անմեղ մարդու
Բերանը դընել հիմար երգերը
Ու բերել ձըգել հայոց երկիրը.
175 Այս բա՞ն է, Մուսա,
Դե՛, ինքըդ ասա:
– Միթե հիրավի հայոց աշխարհքում
Մարդիկ պոետին իսկի չեն հարգում:

---

159 Եվ մեր աշխարհքը ողջ էլ նրա հետ
160 ա Սկսեց ինձ ծաղրել – վա՛յ, պոե՛տ, պոե՛տ...
բ Ասավ ու ընկավ – վա՛յ, պոե՛տ, պոե՛տ...
163 Մեր ողջ պոետները իրանց երգերում
169-170 – Թողե՛ք, պարոններ, ինչ եք սկըսել,
Մինչև անգամ չարժե դրանից խոսել.
177-178 – Ո՛հ, ինչ ես ասում. հայոց աշխարհքում
Միթե պոետին իսկի չեն հարգում:

177-178 տողերի միջև՝
Բայց ինձ այն ասա –

Միամիտ Մուզա, ինչ ես պահանջում.
180 Ոչ թե չեն հարգում, չեն էլ ճանաչում։

<...> Օրինակ՝ թող գնա դառնա բուղգալտեր,
Ու <...> կամ թե չէ՝ տերտեր,
Իսկ թե համառի ու մնա պոետ,
Ինչ հաշիվ ունի ազգը նրրա հետ,
Ազգը հո նրրան չի խնդրում գրի...
200 Թերթն էլ փող չունի, թե որ վճարի...
Թող ինչպես կուզի, տառապի մենակ,
Պիտի մըտրակենք մենք էլ շարունակ։
[Վերջապես, ես մի պատմություն գիտեմ,
(Մի ուրիշ անգամ երկար կըպատմեմ).
205 Նեղն ընկան մի օր պոետն ու շունը.
Ոչ ոք չըմըտավ պոետի տունը,
Բոլորը նրանից կանգնեցին հեռու,
Սակայն նա գնաց շանը փրկելու]

---

179 – Է՛, հիմար Մուսա, ինչ ես պահանջում.

Լուսանցքում կատարված հավելումներ.

Եվ ոչ միայն ինքը – իրան մեծերն էլ
Որ [այդպես անմիտ մարդիկ են ծնել
Որոնք կուրորեն չեն տեսնում իսկի
Մեր վեհ կողմերը ու <1 անընթ.>]
<2 անընթ. տող>
Եվ լուռ <...> մեր <1 անընթ.>
Փայտի ծայրն առավ իրան գլխարկը.
– Իրանք էլ են խենթ, իրանց գործերն էլ
ա Որ չեն հասկանում մեծությունը հայ ազգի
բ Որ չեն հասկացել ու չեն <1 անընթ.> մեզ
Եվ այն մեծերին, որ ունեն ոսկի,
Որ բանաստեղծ են եղել վերջապես.

203-208 տողերը վերցված են մեծ փակագծի մեջ։ 203 տողի սկզբում դրված է աստղանիշ և տողատակում կա հետևյալ բացատրությունը.

«Այլ բան, եթե տերտեր լիներ, պետք է ապահովվեր, որ իր պաշտոնին լիներ անթերի»։

Լուսանցքում արված է հետևյալ հավելումը.

Մուսան հարցնում է սրանց.

– Ա՜հ, ինչ ես ասում. նրանք լավ մարդիկ են.

...Եվ շատ զարմացավ, որ հին պոետն էլ
210 Չէր կարող շան պես կարեկից գտնել...
Դե այս բոլորը որ տեսնի-լըսի,
Էլ այս աշխարհքում ո՞ր խենթը կուզի
Ունենալ երգի – թեկուզ հենց հանճար –
Ու միշտ խանգարված տառապել անճար:
215 – Ո՛հ, թշվառ երկիր: Բայց, երկինք վկա,
Դու սուտ ես ասում, թե ոչ ոք չըկա.
Ճանաչում եմ ես զգայուն մեկին,
Որ քո երգերին տալիս է լավ գին:
– Հա՛, ճշմարիտ է, սակայն նա ինձ հետ
220 Մեր Զուռնին էլ է համարում պոետ,
Պառնասի գլխին, որ չունի ծանոթ,
Շինում է բռնի բառեր, վանկ ու ոտ,
Գրում այնպիսի անճոռնի բաներ,
Որ խըմբագիրը միմիայն հավան էր...
[– Հա՛, մի օր, երբոր կարիք ունեցա,
Նրա ճաշակն ու միտքն էլ իմացա]:
Հա՛, նա էլ – երբոր բանն իրան հասավ,
Իրան խորհուրդն ու [խրատը] չըզլացավ
[Խնդիրքս մերժեց, ապա խըրատեց,
(Այսինքն – անկեղծ կարծիքը հայտնեց)],
Թե՝ այդ ի՞նչ է, մի բանի չես,
240 Բաս ե՞րբ պետք է դու ամաչես.
262 <...> Հանկարծ որ ճչաց դժգոհ երեխան,

---

219 – Հա՛, ճշմարիտ է, տողին մի կոպեկ

209-210 և 215-225 տողերը ձախ կողմից առնված են փակագծերի մեջ:

235-236 տողերի դիմաց՝

Թե բանաստեղծին չի կարելի գործ հավատալ

262 ա Բայց իր խորհուրդը չըզլացավ

բ Բայց պահանջն արավ դժգոհ երեխան

Հանկարծ աղմկեց դժգոհ երեխան

262 և 273 տողերի դիմաց արված է նույն խաչաձև նշանը՝ հավանաբար այդ տողերի միջև եղած հատվածը կրճատելու նպատակով, որը և հետագայում արել է: 273 տողից հետո, լուսանցքում գրված է. «դե եկ, սիրելիս», որից երևում է, որ այդտեղ պետք է տեղադրվի այդ բառերով սկսվող հատվածը (տես հիմնական բնագրի 299-335 տողերը):

Մի ակընթարթում բոլորը փախան,
Դու էլ ծուխ դարձար, չքացար անտես.
265 Համ իմ գրվածքը խանգարվեց այսպես,
Համ էլ երեխան զուր և անիրավ,
Իմ ձեռքից այնքան ծեծ ու տուր կերավ:
Թե այն ժամանակ առջևըս մնայիր,
Ինչ պետք է դու ինձ պատասխան տայիր:
270 Չէ, գնա, Մուսա,
Ուրիշին ասա.
Թե կարելի է բանաստեղծ լինել
Ու հայոց երկրում երգեր հորինել:
[– Ոհ, դու, տարաբախտ] երկնքի որդի,
275 [Բոլոր փառքերը], վայելքն աշխարհի,
Բոլոր գանձերը, գոհարներն անգին,
Չարժեն կարճատև քո ներշնչանքին:
– Էյ դու չարամիտ, էլ կուզես խաբել,
Սիրուն խոսքերով աչքերըս կապել.
280 Էյ դու կեղծավոր չքնաղ անպիտան,
Ես լավ եմ տեսնում այժմ ամեն բան,
Դու ինձ ես մենակ միամիտ գըտել.
Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ,
Այ թեկուզ մեզ մոտ – հենց իմ կնկանը,
285 Ասա՝ թե մենակ փողը չի բանը...
Բայց ինչ եմ ասում – հայոց գրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը...
Եվ այժմ, ահա, խելքի է եկել
Սկսել է նրան օրհնություն երգել...»:

277-278 Չարժեն խանգարված քո ներշնչանքին:
Հէյ դու չարամիտ, էլ կուզես խաբել,
280-281 Հէյ դու կեղծավոր չքնաղ անպիտան,
Ես լավ եմ հիմա տեսնում ամեն բան,
286 Բայց ինչ ես ասում – մեր հին գրողը

<...> [Եվ լալով մեկնեց յուր աչը դեպ ինձ,
Բայց հանկարծ նորա աչի հրպումից
300 Ես ինձ մոռացա, ուշքս վերացավ,
Երգի կըրակը նորեն վառեցավ,
Սըրտումս նորեն ուժգին բռընկեց,
Եվ ես մնացի դարձյալ բանաստեղծ,
Դարձյալ մըտերիմ – գերի Մուսային,
305 Որ դարձյալ երգեր նըվիրեմ հային]։

Ա ԻՆՔՆԱԳՐԻ ԿՐՃԱՏՎԱԾ ՏՈՂԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՎՏԱԿԻ» ՓՈՐՁԱՏԻՊԻ ԲՆԱԳՐԻՑ

37 Հանկարծ ընկա հարուստ խանութ.
60 [Թե] ոնց պլոկել խնդրատվին...
94 Ողջ մերժեցի միայն քեզ համար,
112 Դու պաշտում ես միայն փող ու փող,
114 Ես, երկընքի մերժված որդին,
131 – Այո՛, սիրուն է. խոսելով անկեղծ,
153 [Հենց] Ինչ հիմար բան է, նայեցեք խնդրեմ.
257 ա Հերոսներ եկան աչքիս հանդիման,
բ Հերոսներ եկան լեռների նման,

298 Եվ մեկնեց լալով յուր աչը դեպ ինձ,
303 Մնացի դարձյալ հայոց բանաստեղծ,

ՍԵՎԱԳԻՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ
ԳԱԹ թՖ 168 (12 լր.)

<1>

<...> չեն հասկանում

– Ա՛յ հանդուգն, նայիր դու մեկ...
Զոր <...> աղքատ ու մերկ –
Պետք է դու մեր երկրում լինես,
Որ անունդ հայհոյանքով
Մեր լրագիրն արմատական
Դասեր տար քեզ համբերության:
Չեն հասկանո՛ւմ... խոսքին մտիկ,
Ողջ էլ նրանք խելոք մարդիկ
Անում են միշտ ամեն գործեր,
Միջազգային [մեծ-մեծ] հարցեր,
Լուսավորված մեծ ազգերին
Խորհուրդներ են տալիս խորին,
Այնքան խորին – ահեղ խոսում
(Որ իրանք են միշտ ասում)
Ոչ ոք նրանց չի հասկանում,
Եվ կյանքը [միշտ] նույնն է մնում...
[Եվ նույնիսկ նրանք պարապ ժամին
Առանց ի քեզ...] <...>

2-3 – Ա՛յ հանդուգն, հիմար մուսա – դու մի տկլոր –
Հապա <...> մեկ էլ ասա
11 Միջազգային մութ հարցերից,
11-14 տողերի դիմաց՝
Պախարակում [դասեր տալիս] պարսից շահին,
Ծաղրում չինաց մեծ արքային,
Միջազգային հարցեր վճռում, խոսում,
Սպառնում են արքաներին
13 Խորհուրդներ են տալիս վերին,
17 Եվ միշտ խավար, մութ են մնում.

* * *

20 Նույնիսկ... կեղծ ավյունով,
Ո՛չ – ինչ ասի – կեղծ անունով
Երգ են գրում, ձայն են դնում –
Ու քեզ իսկի չեն էլ հարցնում...
Ոչ մի պաշտոն ունես հաստատ,
25 Ոչ ցենզ ունես, ոչ ատեստատ –
Ոչ խմբագիր – ոչ օգնական
Ու «անհամեստ», հանդուգն այդքա՜ն...
Ինչ իրավունք ունես, որ դու այդքան հիմար լինես,
Պետք է մեր կյանքում խոսքեր,
30 Որ <...> մի աղմուկով,
Հիշոցներով, ծաղրով, թուքով <...>

---

24 Ոչ մի դիրք ունես հաստատ
30 Որ <...> ինչ աղմուկով

Ինչ ես ասում – դու սիրելիս,
Երգի շնորհքն ես եմ տալիս,
Ոչ մի պոետ, ոչ մի երկրում
Առանց ինձ երգ չի գրում...
5 – Ուրիշ երկրում այդպես կանեն.
Որտեղ իրանք շնորհք չունեն –
Մնում են քեզ –
Որ դու օգնես –
Բայց մենք ունենք ճոխ հանգարան,
10 Պատրաստ հանգեր շարան-շարան –
Խմբագիրներ ունենք կարող,
Որ [կարող] են շինել գրրող –
Պոետ ուզես, թե վիպասան,
Եվ բան է – թե բարկացան,
15 Կարող են ողջ կրկին խլել –
Մեկ էլ տեսար տաղանդ չի էլ.–
Ունենք դպրոց – ծերուկ վարպետ,
Խաղ է անում հանգերի հետ,
Գրում այնպես խրթին, վսեմ,
20 Թե հասկանաս – ղոչաղ կասեմ –
[Ահա այսպես –
Կարդամ դու տես]
– Մենք գնացինք անտառը,

---

7 Դիմում են քեզ –
17 ա Ունենք դպրոց – հանգի վարպետ
բ Ունենք դպրոց – հանգի ուստա
18-19 Որ խաղում է հանգերի հետ,
Գրում այնպես խրթին ու վեհ,

22-23 տողերի միջև կա հետևյալ հատվածը.

[Գրաբար –
– Չեմ հասկանում,
– Հասկանալը՞դ որն է –
Կուզես աշխարհաբար]

Մեր դիմացն էր Մասիս սարը,
25 Կեցցե՛ և մեր վեհափառը –
– Բայց ինչ է դա, չեմ հասկանում,
– Է՛, հասկանալն ինչ ենք անում,
Երգդ <1 անընթ.> կարդա-փակիր.
Մի խմբագիր շատ լավ ասաց.
30 Երգդ երգե – դատարկ մի բան –
Լավը լինի, թե <...>
Ինչ ես հարցնում մեր աշխարհքում,
Ո՞վ է երգում, ինչ է երգում,
Բայց դու լսիր աշակերտին,
35 Թե ինչ գրեց իրան հերթին –
– Հա՛, հա՛, հա՛, հա՛ – այ հիմար բան –
– Ինչ ես խնդրում, ա՛յ անպիտան <...>

<3>

Ընդամենը մի երեք տող,
Իմաստը նոր, հանգերը ճոխ,
Եվ լիքն այնքան մեծ-մեծ բաներ –
Խեղճ բանաստեղծն էլ ինչ աներ:

5 – Բայց դա դեռ պոետ չի –
Իզուր կըտան <...>
– Էհ, ինչ անենք – թող չըդառնա,
Թե որ բանը ձախորդ գնա,
Այն ժամանակ կըհեռանա,
10 Կերթա կապի առանց հանգի
Ու լող կըտա ծովում կյանքի –
Ազա՛տ – ինչպես ինքը կուզի –
Ոչ սիրտ մաշի, ոչ վեճ լսի...
Ես իմ հոգին, լավ է այնպես,
15 Թե չէ՝ նայիր այս ինչ եմ ես...

– Պոետ ես դու.
Այդտեղ եմ գալիս
Այդ եմ ահա ես էլ լալիս –
Թող լինեի մի կեղեքիչ,
20 Փող դիզեի <1 անընթ.> քիչ-քիչ,
Ճիշտ է, առաջ կասեին «ցեց»,
Բայց շուտով կըդառնայի ազգի մեջ «մեծ»:

---

5 Բայց դա չի կարող պոետ դառ<նալ>
7 Էհ, ինչ անենք – [այն ժամանակ էլ նա]
9 ա խաղաղ սրտով կըհեռանա
բ Երբոր ուզի, կըհեռանա
13 Ոչ սիրտ մաշի, ոչ դատ լսի...
20 Որ հառաջ <2 անընթ.> քիչ-քիչ,
22 Բայց շուտով կըդառնայի բոլորից «մեծ»

Թող լինեի մի տերտեր,
Խաչը վզիս <...>
25 Թող լինեի – թեկուզ տգետ,
Մի <...> մի վարդապետ –
Թող լինեի մի կեղեքիչ,
Փող դիզեի ես քիչ-քիչ,
Դեռ կասեին գազան կամ ցեց,
30 Իսկ ապա ազգի հայր մեծ:
Մեռած վախտս էլ պսակ տային՝
Իր որբ ազգից միակ հային:

Կամ թե տերտեր լինեի թող
Խաչը վզիս մեռել թաղող
35 Սուփրի վերև միշտ բազմեի
Ու իմ բանը դըրստեի,
Ազգն էլ աչքը վրաս տնկեր,
Որ իրան փրկեմ
<2 անընթ.> թերթեր
40 [Փորիցս զատ ողջ իմ օրում
Ցավ չունենայի մայր աթոռում]:
Որ ինձ համար կուսակցություն գլուխ կոտրեր –
Իմ անունով գետ ու գիտուն
Կըկազմեին կուսակցություն –
45 Աջահամբույր միշտ բերեին,
Ձեռքս ու փեշերս համբուրեին –

31-32 Ո՜հ, բոլորն էլ ինձ գլուխ տային
Հարգանք փառք ու պատիվ
35-36 Սուփրի վերև միշտ նստեի
Ու իմ ապրուստը դըրստեի
41 [Հոգս չունենայի մայր աթոռում]
46 Ձեռներըս ու փեշերս համբուրեին –

Թե չէ լինել ի ծնե գերի
Մերկ մուսայի ու երգերի,
Մերձավորի ծաղր ու ծանակ
Ուժից ընկնել անժամանակ...
5 Օ՜, ինչ մուսա,
Անբուժելի մի ախտ է սա.-
[Ամեն մարդ կասի]
[Դեռ նոր մտած կյանքի շեմքից,
Հենց որ տեսան իմ <1 անընթ.>]
10 Եվ ինձ մոտիկ
Հմուտ մարդիկ
Դեռ շատ վաղուց նկատեցին <...>

---

2 Հոգսեր<ի> ու երգերի
6 ա Շատ անարդար վճիռ է սա.-
բ Մանր, մահացու վճիռ է սա.-
12 ա Մարդիկ վաղուց նկատեցին
բ Վաղուց մարդիկ նկատեցին

Թող լինեի մի կեղեքիչ,
Փող դիզեի ու քիչ-քիչ,
Առաջ թեև գազան ու ցեց -
Դառնայի շուտով ես մեծ,
5 [Աստծո] Եվ բարերար, և խելացի,
Մեռած օրս էլ պսակ տային
Իր որբ ազգից՝ միակ հային:
Կամ թե տերտեր լինեի թող -
Խաչը վզիս մեռել թաղող -
10 Սուփրի վերև միշտ նըստեի,
Իմ բանը դըրըստեի,
Ազգն էլ աչքը տնկեր վրաս,
Մեր փրկիչը դու ես որ կաս,
Եվ ծակ բերան ու թերթեր
15 <1 անընթ.> էին՝ տերտեր, տերտեր...
Թող լինեի - հարկավ տգետ,
Ջրիակեր մի վարդապետ,
Որ կազմեին խոլ ու գիտուն
Իմ անունով կուսակցություն,
20 Աջահամբույր միշտ բերեին,
Ձեռս ու փեշերս համբուրեին -
Ահա այսպես բան լիներ մարդ,
Գնար ապրեր լի ու հանդարտ -
Թե չէ լինել ի ծնե գերի

---

4 ա Կըդառնայի բոլորից մեծ,
բ Կըդառնայի հետո ես մեծ,
11 Իմ ապրուստը դըրըստեի,
13 Թե մեր փրկողը դու ես որ կաս,
22-23 Ահա այսպես բան լինի մարդ
Գնա ապրի լի ու հանդարտ

25 Մերկ մուսայի ու երգերի,
Որդիք ու կին թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,
Ուժից ընկնել անժամանակ,
Թե պոետ եմ.– Օ՜, ո՛չ, Մուսա,
30 Շատ անմիտ մի ախտ է սա,
Դժբախտություն, [մի սև] արատ,
Որ դու <...>
Եվ ինձ մոտիկ
Հմուտ մարդիկ
Դեռ շատ վաղուց նկատեցին <...>

[Կրկին ելա ես]
Ողջ ազգը թնդաց այս խոսքի վրա
ու կանչեց. հարա՛յ –
Ինչ, ուզում ես ամբողջ ազգը խայտառակել,
5 Սա՞ է լինելու պոետն հայ ազգի,
Որ իմ ճաշակին չի գալիս իսկի»:
Թնդացին մարդիկ այս խոսքի վրա.
[Ողջ էլ միասին կանչեցին հարայ] –
Ասես հայտնվեց ժանտախտ, խոլերա,
10 Սկսեցին [խորշել]
[Հալածել], քըշել,
Ծաղրել միաբան
Տգետ – գիտնական,
<...> թերթեր,
Սոսկական, տերտեր,
[Տգետ – գիտնական]
Ողջ էլ միաբան] –
Սկսեցին խորշել ու հալածել,
Թե հայոց համար ունի բացիլ –
20 Ոչ – Մուզա –
Ծաղրատեղ դարձա
Ու էլ չըպրծա,
Ու վեր կացան
Ողջ միաբան,
25 Ի ծնե անմիտ,
Խավարամիտ,

---

4 Այս հիմարն ու<զում է>
19 ա Թե սա <...> ունի բացիլ –
բ Թե ազգի համար ունի բացիլ –
25 Բնավ անմիտ,

Հառաջագեմ,
Եվ, ինչ գիտեմ,
Տերտեր,
30 Թերթեր,
Տըգետ
Ու գետ,
Սկսեցին <...> ծաղրել, հալածել,
Թե տեսեք-տեսեք սա ունի բացիլ –
35 Բացիլ կամ մուզա – ուզում է զորով
Ազգին վարակել հիմար երգերով...

23-32 տողերի փոխարեն նաև՝

Ու վեր կացան
Ողջ միաբան.
[Աշխարհական]
Տերտեր,
Թերթեր,
Տգետ
Ու գետ –
Բնավ [մտքով] անմիտ,
Խավարամիտ,
Հառաջագեմ,
Եվ, ինչ գիտեմ,
34 Թե հայոց <համար> սա ունի բացիլ –
36 Ազգին վարակել իրան երգերով...

<7>

Բայց մենք խորհուրդ ենք տալիս մեր խղճով՝
Թող գնա ապրի իրան գրիչով.
Կարող ենք մեկ էլ
Սաստիկ մտրակել
5 Ու ծաղրել մի-մի,
Որ հառաջ դիմի.
Հա՛, մի օր, երբոր նեղն ընկած ժամին,
Նրա տուն ձգեց ինձ հոգսի քամին,
Փոքրիկ խնդիրքս մերժեց նա հանդարտ
10 Ու մեծ խրատ <...>

1-2 Բայց կարող ենք մենք խրատ տալ,
Որ գնա ապրի իրան գրիչով
8-9 Նրա մոտ տարավ ինձ հոգսի քամին,
Մերժեց իմ փոքրիկ խնդիրքս

Այդպես ոգեվեր դեռ իրան օրում
Չի եղել նույնիսկ մեր Մայր աթոռում,
Ով թշվառ երկիր, անհոգի մարդիկ,
Դե, անբախտ ընկեր, եկ տանեմ երկինք.
5 Առանց հոգնելու, առանց <...>
Այնտեղ դու կապրես այս կյանքից հեռու.
– Իրավ, այս կյանքից ես շատ եմ զզվել,
Այդ լավ է, Մուսա, երկինքը սուզվել –
Բայց ես ունեմ կին, շատ երեխաներ,
10 Երկնքում նրանց տեղ կըլինեՔ.
– Ո՜հ, դու կորցրիր ձիրքերդ ինձ հասկանալու,
Կամ կուզես թողնեմ, բարձրացնեմ ինձ հետ
Ու Պառնասի ծայր երանավետ –
Աստծու ձայները կըլսես այնտեղ,
15 Կըտեսնես դու կայծակներն ահեղ –

– Նստել Պառնասի վսեմ գագաթին
Ու բարձրից նայել այս տխմար խալխին <...>

---

4 Դե, լսի, ընկեր – եկ թըռչենք երկինք
8 Այդ լավ է, Մուսա, թռչեմ, ես էլ եմ ձանձրացել
11 Օ՜, դու կորցրիր ձիրքերդ ինձ հասկանալու
16 Նստել Պառնասի երջանիկ գլխին
17 ա Ու բարձրից նայել կայծակին, շանթին
բ Ու բարձրից նայել այդ տգեղ խալխին

<9>

Պոեմի սկզբի և վերջի մի այլ ինքնագիր

Նըստած եմ հիմի ու միտք եմ անում,
Միտք եմ անում, մի՛տք, ու չեմ կարենում
Մի հընար գըտնեմ, ցավերըս հոգամ։
Վեր կենամ, ասի, մեկի մոտ գընամ,
5 Կըրկին պարտք անեմ, գլուխը քարը
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը։

* * *

Ասավ, չքացավ ու տեսնեմ էլ ետ
Կանգնած եմ կրկին [մենակ] իմ տան մեջ
Ու հետըս իմ հոգսերը հին <...>

10 Ասավ, չըքացավ ու տեսնեմ էլ ետ
Կանգնած <եմ մենակ> ու հոգսերըս ինձ հետ։

---

1 Նըստած եմ մի օր ու միտք եմ անում
8 ա Մենակ կանգնած եմ կրկին իմ տան մեջ
բ Հանկարծ կանգնած եմ կրկին իմ տան մեջ
9 Ու հետըս իմ ցա<վերը> հին.

ԲԹ տարբերությունները

Էս, էն դերանունների և նրանցից ստեղծված բառաձևերի փոխարեն այս հրատարակության մեջ ամենուր՝

այս, այն, այսպես, այնժամ և այլն։

Քո-ի փոխարեն ամենուր՝ քո

32 Երբ գերի դառա ես քու քընարին.
118 Եվ ես խրտնած, խենթ երեխա՝
234 Որքան ծաղրում ենք, նըրանք չեն լըռում,
270 – Բանաստեղծ եմ ես, ասացի հըպարտ։
318 Բայց ես ունիմ կին, շատ երեխաներ,

Պոեմի հետ կապված գրառում

ԳԱԹ ԹՖ 169 (19 լր.)

ՄԱՆԹԱՇՈՎԻ ԾԻԾԱՂԸ

Ֆիլիպը գնում է – խոսում, թե ինչ է պոետը – նա մի մարդ է, որ ուրիշ բանի-գործի չի կարող ծառայել – նա եթե չըլիներ [չըլինի] մենք այս լեզվով, այս զգացմունք<ով> – նա մեզ ոգևորում է, մաքրում, բարձրացնում –

– Գիտեմ-գիտեմ.

Նա և այլն.

– Գիտեմ, գիտեմ, հասկացա.

Երբ դուրս է գալիս

Ծիծաղ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհ. Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորն ընգրկում է նրա էպիկական ստեղծագործության՝ պոեմների մեծ մասը՝ իրենց տարբերակներով: Մնացած չորս պոեմները («Հին կռիվը», «Սասունցի Դավիթը», «Թմկաբերդի առումը», «Հազարան բըլբուլը»), ինչպես նաև թարգմանական պոեմները (ամբողջական և հատվածային) կկազմեն սույն հրատարակության չորրորդ հատորը:

Պոեմների հիմնական բնագրերի համար հիմք են ծառայել բանաստեղծի կենդանության ժամանակ եղած այն տպագրությունները, որոնք առավել չափով են արտահայտում հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի վերջնական արդյունքները: Նկատի ունենալով Թումանյանի պոեմների բացառիկ կարևորությունը նրա գրական զարգացման և հայ ժողովրդի հոգևոր գիտակցության մեջ՝ ըստ հնարավորին լայնորեն են ներկայացվում նրանց տպագիր և ձեռագիր տարբերակները: Ինչպես և բանաստեղծի երկերի նախորդ գիտական հրատարակության երկրորդ հատորի մեջ, տրվում են որոշ պոեմների («Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Անուշ», «Պոետն ու Մուսան») նախնական տպագիր տարբերակներն ամբողջությամբ: Լրիվ կամ մասնակի կրճատումներով բերվում են նաև պահպանված ինքնագրերի տեքստերը, եթե դրանք որոշակի տարբերություններ ունեն վերջնական բնագրերից: Հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի պատկերը չմասնատելու համար սույն հրատարակության մեջ հաճախ ներկայացվում են նաև ինքնագրերի այն մասերը, որոնք համընկնում են հիմնական բնագրին: Տպագիր աղբյուրների մեջ եղած տարբերակները տրվում են ըստ առանձին տողերի:

Սույն հրատարակության բնույթից և խնդիրներից է բխում այս հատորի մի կարևոր առանձնահատկություն, որը վերաբերում է նաև հաջորդ՝ 4-րդ հատորին: Պոեմների վերջնական բնագրերը շատ դեպքերում զգալիորեն ավելի փոքր տեղ են գրավում, քան նախնական խմբագրությունները, տպագիր և ձեռագիր աղբյուրների տարբերություններն ու այլընթերցումները, որոնք համախմբված են «Տարբերակներ» ընդհանուր վերնագրի տակ: Կազմողները ձգտել են բաց չթողնել թումանյանական ոչ մի տող կամ բառ, ներկայացնել պահպանված բոլոր նյութերը, որոնք առատ ու բազմազան են հատկապես պոեմների ստեղծագործական պատմության մեջ: Սա վերաբերում է, նախ և առաջ, «Անուշ», «Լոռեցի Սաքոն», «Դեպի Անհունը», «Պոետն ու Մուսան», «Սասունցի Դավիթը», «Հազարան բըլբուլը» պոեմներին, որոնց հետ կապված նյութերը շատ տասնյակ էջեր են գրավում: Դրանք հնարավորություն են տալիս ըստ ամենայնի խոր և առարկայորեն պատկերացնելու պոեմների վրա

կատարված աշխատանքի ամբողջ ընթացքը, որը ոչ միայն գիտական խոշոր արժեք ունի, այլև հետաքրքրում է «Ամենայն հայոց բանաստեղծի» անհամար երկրպագուներին:

Թումանյանի պոեմների պահպանված ինքնագրերը, սևագիր հատվածներն ու գրառումները հիմնականում պահվում են Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Թումանյանի ֆոնդում, մասամբ նաև Թումանյանի ընտանիքի արխիվում (ԹԸԱ), որը ներկայումս պահվում է Թումանյանի թանգարանի ֆոնդերում: Թանգարանային միավորների համարները նշվում են համապատասխան ծանոթագրություններում, իսկ առանձին դեպքերում, պահպանման տեղն ավելի որոշակի մատնանշելու համար, տվյալ նյութի վերնագրի կողքին:

Հաշվի առնելով Թումանյանի պոեմների սևագրությունների և տարբերակների հարուցած բնագրագիտական բարդ խնդիրները՝ հատորում կիրառվել են մատուցման տարբեր եղանակներ, որոնք բացատրվում են համապատասխան տեղերում:

Հեղինակի ծանոթագրությունները բերվում են տվյալ տարբերակից հետո՝ ըստ տողահամարների, իսկ խմբագրության բացատրությունները՝ ծանոթագրությունների բաժնում, նույնպես ըստ համապատասխան բնագրի տողահամարների:

Հեղինակի ջնջած բառերը, տողերն ու հատվածները դրվում են ուղղանկյուն [] փակագծերի մեջ (բացառությամբ այն դեպքերի, երբ միևնույն տողի երկու կամ ավելի տարբերակների համադրությունից ինքնին հասկանալի է դառնում, թե տվյալ տարբերակի ո՛ր բառերից է հրաժարվել բանաստեղծը՝ անցնելով տողի մշակման հաջորդ աստիճանին):

Խմբագրության վերականգնած և ավելացրած բառերն ու տառերը դրվում են սուրանկյուն <> փակագծերի մեջ:

Հատորում օգտագործված են հետևյալ համառոտագրությունները.

ԲՄI – Բանաստեղծություններ, հ. I, Մոսկվա, 1890
ԲՄII – Բանաստեղծություններ, հ. II, Մոսկվա, 1892
Դ – Դաշնակներ, Թիֆլիս, 1893
Դփ – Դաշնակներ, փոփոխված, Թիֆլիս, 1896
ԲԹ – Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1903
ԲԲ – Բանաստեղծություններ, Բաքու, 1908
ԲՊ – Բանաստեղծություններ, Կ. Պոլիս, 1922
ԳԵ – Գեղարվեստական երկեր, խմբ. Ե. Չարենցի, Երևան, 1934
ԵԺ I, II, III, IV, V, VI – Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու վեց հատորով (գիտական հրատարակություն), Երևան, 1940-1959
ՈԻՀ 1, 2, 3, 4 – Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 1-4, Երևան, 1964-1985

ԹԺՀ – Թումանյանը ժամանակակիցների հուշերում (տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Լ. Մ. Կարապետյան), Երևան, 1969

ՀԳ – Հայ գրողներ. Ա, Ռուսահայ գրողներ, կազմեցին Ղ. Աղայան, Ավ. Ահարոնյան, Հովհ. Թումանյան, Վրթ. Փափազյան, Թիֆլիս, 1909 (1-ին տպ.), 1914 (2-րդ տպ.)

ՀՌ – Հորիզոն, գրականական հանդես, գիրք առաջին, Թիֆլիս, 1894

ԳԳ – Սուրխաթյան, Գրական գոհարներ (քրեստոմատիա), Թիֆլիս, 1922

ՄՃ – Մուրճ, ամսագիր, Թիֆլիս

ՆՀ – Նոր հոսանք, ամսագիր, Թիֆլիս

ՍԳ – Սովետական գրականություն, ամսագիր, Երևան

ԳԱԹ – Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան

ԹՖ – Թումանյանի ֆոնդ

ԹԸԱ – Թումանյանի ընտանիքի արխիվ

ԹԹԳԳ - Թումանյանի թանգարանի գլխավոր գույքամատյան

Խմբ. – Խմբագրական կոլեգիա

Ն. Թումանյան – Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969

Ա. Ինճիկյան – Արամ Ինճիկյան, Հովհաննես Թումանյան. Կյանքի և ստեղծագործության պատմությունը (1869-1899), Երևան, 1969

Հատորի բնագրերի պատրաստման աշխատանքներին մասնակցել է Լ. Ա. Թերլեմեզյանը։

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԷՊՈՍԸ

1

Թումանյանի պոեմները, որոնք միասին կազմում են մի յուրօրինակ բանաստեղծական էպոս, կարևորագույն տեղ են գրավում նրա գրական ժառանգության մեջ: Բանաստեղծի տաղանդի էպիկական հատկանիշները, որոնք սկզբից ևեթ գերակշռող էին նրա ստեղծագործական նկարագրի մեջ, բնականաբար մղեցին նրան դեպի չափածոյի ամենախոշոր ժանրային ձևը՝ պոեմը: Այդ ժանրը բանաստեղծի առջև առավել մեծ հնարավորություններ էր բացում ինչպես կենսական հարցերի լայն ընդգրկման, այնպես էլ գեղարվեստական և փիլիսոփայական ընդհանրացումների համար, որոնց հակումը երևան եկավ նրա ստեղծագործական առաջին իսկ քայլերից: Եվ զարմանալի չէ, որ չափածո էպիկական հիմնական ժանրերը՝ պոեմն ու բալլադը, դարձան Թումանյանի պոեզիայի առաջատար տեսակներ, նրա աշխարհայացքի և գեղարվեստական մտածողության ամենից լայն ու խոր արտահայտությունը:

Գրական քննադատության մեջ բավական վաղ է խոսվել Թումանյանի տաղանդի էպիկական (վիպական) բնույթի և այդ առումով հայ բանարվեստում նրա բերած սկզբունքային նորության մասին: Արդեն Թումանյանի «Բանաստեղծությունների» առաջին հատորի (1890) գրախոսները հատուկ ընդգծեցին այդ հանգամանքը: Այսպես, Մանուկ Աբեղյանը (Վարսամ) նշում էր, որ «Թումանյանի բանաստեղծության բնորոշ հատկությունն է վիպականությունը» և, նկատի ունենալով գրախոսվող գրքում զետեղված «Լոռեցի Սաքոն», «Մեհրի» և «Ալեք» պոեմները, ավելացնում էր. «Մեր վիպերգական բանաստեղծության մեջ այդ երեք քերթվածները չունին իրենց նմանը թե՛ կենդանությամբ, թե՛ զգացմունքների բնականությամբ և թե՛ գրավիչ, սահուն և, որ գլխավորն է, կանոնավոր գեղեցիկ լեզվով» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է, 1975, էջ 362): Նույն միտքն ընդգծեց նաև Լևոն Մանվելյանը՝

Թումանյանի մասին գրելով. «Նա յուր պոեմաների մեջ նման չէ ոչ մեր հին, ոչ նոր բանաստեղծներին. նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրույն է, նա մի տեսակ նորություն է մեզ համար... Նոքա (Թումանյանի պոեմները – խմբ.) ունին ներքին ընդհանուր գծեր, որոնք են ժողովրդական տարրը... և վիպական արտաքին ձևը» («Մուրճ», 1891, №1, էջ 95-96): Մի քանի տարի անց այդ կարծիքն ընդհանրացրեց և զարգացրեց Մինաս Բերբերյանը: Նշելով, որ Թումանյանի «իսկական կոչումը էպոսն է», և որ «իբրև էպիկական տաղանդի տեր բանաստեղծ, նա գրեթե եզակի երևույթ է հայ գրականության մեջ», քննադատն ավելացնում էր, որ եթե նրան հաջողվի վերացնել իր գործերի գեղարվեստական թերությունները, ապա «Թումանյանն իր պոեմներով իրավամբ կարող է աչքի ընկնող տեղ գրավել հայ բանաստեղծների շարքում» (Братская помощь армянам, 2-е изд., М., 1898, с. 587-589):

Հետագա տարիներին այս գնահատականները կրկնվել են բազմիցս և բազմազան տարբերակներով: Բայց բավարարվենք միայն մի երկու օրինակով: Դարասկզբին Ավ. Ահարոնյանը «Մուրճ» ամսագրի էջերից ազդարարեց. «Եթե պ. Թումանյան ուրիշ ոչինչ գրած չլիներ, բացի իր պոեմաները, նա դարձյալ իրավունք կունենար հայ աչքի ընկնող բանաստեղծների կողքին պատվավոր տեղ բռնել» («Մուրճ», 1904, №1, էջ 174-175): Իսկ Հ. Օշականը, մի քննադատ, որը և՛ Թումանյանի, և՛ ընդհանրապես արևելահայ բանաստեղծության նկատմամբ առանձին բարեհաճությամբ աչքի չի ընկել, 1921 թ. Հովհ. Թումանյանի մասին գրած հոդվածաշարում հատուկ նշում էր, որ պոեմի ժանրը «նոր ժամանակներու ամենեն դժվարին և նույն ատեն ամենեն հրապուրիչ ձևն է բանաստեղծության» և ավելացնում էր. «Թումանյանի ամենեն անկեղծ արտահայտությունները իր պոեմաներն են...» («Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1 դեկտեմբերի 1921 թ.):

Կարելի է վստահորեն ասել, որ արդեն Թումանյանի կենդանության ժամանակ լիովին արդարացավ նրա մտերիմ ընկերոջ՝ Ավ. Իսահակյանի կանխատեսումը, որը դեռ 1902 թ. մի նամակում ասում էր. «Բայց ինչ էլ որ լինին քո պոեմներդ՝ մեր

գրականության մեջ դարաշրջան են կազմելու» (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, 1979, էջ 41): Այդ եզմարտությունը առավել ևս խոր գիտակցվեց ժամանակի ընթացքում, հայ բանաստեղծության, մասնավորապես պոեմի ժանրի պատմական ուղու ըմբռնման ընթացքում: Հայտնի է, որ հայ պոեմը ավելի քան հազարամյա պատմություն ունի և առաջադրել է այնպիսի խոշորագույն անուններ, ինչպես միջնադարում Գրիգոր Նարեկացին և Ներսես Շնորհալին, իսկ XIX-XX դարերում՝ Ա. Բագրատունին, Ղ. Ալիշանը, Ռ. Պատկանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Վարուժանը, Ե. Չարենցը: Բայց առանց տատանվելու կարելի է ասել, որ Թումանյանն է հայ պոեմի խոշորագույն վարպետը, նրա անվան հետ է կապված այդ ժանրի պատմության ամենավառ, հարուստ և բազմազան գլուխը: Դրա վկայությունն են «Անուշն» ու «Թմկաբերդի առումը», «Սասունցի Դավիթն» ու «Լոռեցի Սաքոն», «Պոետն ու Մուսան» և «Դեպի Անհունը», նույնիսկ անավարտ վիճակում մեզ հասած «Հառաչանքը», «Հին կռիվը», «Հազարան բըլբուլը»:

Պոեմի ժանրը Թումանյանին զբաղեցրել է ստեղծագործական կյանքի բոլոր փուլերում, բայց տարբեր չափով և տարբեր ձևերով: Այլ կերպ ասած՝ այս ժանրի հետ կապված հոգսերն ու մտորումները մշտապես ուղեկցել են բանաստեղծին՝ երբեմն լարված գրական աշխատանքի ձևով, իսկ երբեմն իբրև ստեղծագործական ծրագիր և մտահղացում, որոնց իրականացմանը պատրաստվում էր նա:

Թումանյանի ավելի քան երեսնամյա գրական ուղու մեջ որոշակիորեն առանձնանում են երկու շրջան, երբ նա հատկապես կենտրոնացված և արդյունավետ է աշխատել իր պոեմների վրա:

Առաջին շրջանը 1880-ական թթ. վերջն ու 1890-ական թթ. սկիզբն է (1887-1892), երբ գրվել ու հրատարակվել են նրա առաջին վեց պոեմները. «Լոռեցի Սաքոն», «Մեհրին» և «Ալեքը»՝ «Բանաստեղծությունների» առաջին հատորում (Մոսկվա, 1890), «Անուշը», «Մերժված օրենքը» և «Մարոն»՝ երկրորդում (Մոսկվա, 1892): Սակայն գրական-հասարակական լայն արձագանք գտած այս վեց գործերով երիտասարդ Թումանյանի պոեմների ցանկը

չի սպառվում: 90-ական թթ. սկզբին են գրվել նաև «Հառաչանք» («Ծեր այգեպանի պատմությունը»), «Հին կռիվը» («Լևոնի կռիվը») պոեմների նախնական տարբերակները: Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակի առիթով գրած հոդվածում (1919) Սերգեյ Գորոդեցկին վկայել է (անշուշտ, հենվելով բանաստեղծի հաղորդած տվյալների վրա), որ «Թումանյանը երիտասարդ հասակում գրել է մոտ 13 պոեմ, իսկ դրանցից միայն 3 կամ 4-ն է մնացել...» (ԹԺՀ, 894): Հատկապես արդյունավետ եղավ 1890 թվականը, երբ նա գրեց հինգ պոեմ, որոնցից երեքն ավարտված՝ «Մեհրի», «Մերժած օրենք», «Անուշ», իսկ երկուսն անավարտ՝ «Հառաչանք», «Լևոնի կռիվը» (տե՛ս նաև Ա. Ինճիկյան, էջ 292): Հավանաբար, Ս. Գորոդեցկու նշած թվի մեջ մտնում են նաև «Պոետն ու Մուսան» և «Դեպի Անհունը», որոնց մտահղացումն ու վաղ տարբերակները նույնպես վերաբերում են 90-ական թվականներին:

Պոեմների վրա առավել լարված և արդյունավետ աշխատանքի երկրորդ շրջանը 20-րդ դարի առաջին տարիներն էին: 1901-1903 թթ. Թումանյանը հիմնավորապես վերամշակում է նախկինում տպագրած իր պոեմներից մի քանիսը («Անուշ», «Լոռեցի Սաքոն», «Մարոն»), ավարտի է հասցնում ավելի վաղ մտահղացված մի քանի գործեր («Պոետն ու Մուսան», «Դեպի Անհունը», «Հին կռիվը») կամ գրում է բոլորովին նորերը («Սասունցի Դավիթը», «Թմկաբերդի առումը»): Հիշատակված պոեմներից վեցը տեղ գտան 1903 թ. Թիֆլիսում տպագրված «Բանաստեղծություններ» գրքում, որը հաստատեց Թումանյանի գեղարվեստական տաղանդի զարգացման նոր, բարձրագույն աստիճանի սկիզբը: «Թմկաբերդի առումը» տպագրվեց մի փոքր անց՝ 1905 թ., իսկ «Հին կռվի» ավարտված տարբերակը կորավ ոստիկանության խուզարկումների ժամանակ (նրա հինգ մասերից փրկվեցին միայն երկուսը):

Սակայն այս երկու շրջանների առանձնացումը չպետք է բացարձակացնել: Նախ, նրանց միջև ընկած տարիներին ևս՝ 1893-1900 թթ. Թումանյանի ստեղծագործական միտքը տարբեր ձևերով, բայց մշտապես զբաղված է եղել պոեմների

գրության և կատարելագործման հարցերով: 1892 թ. ժողովածուն հրատարակելուց անմիջապես հետո, ավելի հստակորեն գիտակցելով իր առջև կանգնած նոր ստեղծագործական խնդիրները, Թումանյանն ըստ ամենայնի նվիրվեց իր հին ու նոր պոեմային մտահղացումների իրագործմանը: Արդյունքը եղավ ոչ միայն «Լոռեցի Սաքոյի» երկրորդ՝ «միջանկյալ» տարբերակի ստեղծումը, որը 1896 թ. լույս տեսավ առանձին գրքով, այլև մյուս «գյուղական» պոեմների և առաջին հերթին՝ «Անուշի» արմատական վերստեղծման ուղիների որոնումը, վերը հիշատակված պոեմներից մի քանիսի նախնական տարբերակները, որոնք հետագայում ենթարկվեցին նոր էական փոփոխությունների: Դա ներքին ստեղծագործական վերակառուցում և նախապատրաստություն էր, առանց որի դարասկզբին հնարավոր չէր լինի համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կերտել պոեմների մի ամբողջ շարք, որոնք նշանավորեցին հայ վիպական բանաստեղծության որակական նոր աստիճան:

Մյուս կողմից, 1905 թ. հետո էլ, մինչև մահը, Թումանյանը թեև նոր ամբողջական պոեմներով հանդես չեկավ, բայց, կարելի է ասել, հեռանկարի մեջ միշտ ուներ իր անավարտ էպիկական մտահղացումների իրագործման խնդիրը, թեև, տարբեր պատճառների բերումով, ստիպված էր նրանց վրա աշխատել անկանոն, հաճախ մեծ ընդմիջումներով: Այդ տարիներին հրապարակվեցին «Հին կռիվը», «Հառաչանք», «Հազարան բըլբուլը» պոեմների մի շարք ծավալուն մասեր, որոնք և այդ անավարտ երկերի հասարակական ընկալման հիմքը դարձան: Նույն շրջանում Թումանյանը մեկընդմեջ նախապատրաստական աշխատանք է կատարել «Սասունցի Դավիթը» պոեմի երկրորդ մասը գրելու, գուցե և ամբողջ պոեմն էապես վերամշակելու, այն նոր, ավելի լայն ծրագրով վերստեղծելու համար: Այդ նպատակը մնաց չիրականացված: Սակայն նշված տարիներին Թումանյանի միտքն ամենից ավելի զբաղված էր մի շատ լայն էպիկական մտահղացմամբ՝ «Հազարան բըլբուլ» հեքիաթ-պոեմով, մի ծրագիր, որը նրան ուղեկցել է շուրջ երեք տասնամյակ՝ 1890-

ական թթ. կեսերից մինչև կյանքի վերջին օրերը: Նույնիսկ մահվան անկողնում նա ամենից ավելի մտահոգված է եղել այդ պոեմն ավարտելու գաղափարով: «Ա՜խ, երանի «Հազարան բըլբուլս» գրած լինեի... ի՜նչ լավ կլիներ»,– ասել է նա 1923 թ. հունվարի 13-ին (Ն. Թումանյան, էջ 298):

Այսպիսով, կարելի է ասել, որ էպիկական պոեզիան՝ պոեմի ժանրը բալլադի հետ միասին, Թումանյանի համար եղել է «կյանքի գործ», գաղափարական և գեղարվեստական ըմբռնումների ստեղծագործական մարմնավորման հիմնական ասպարեզ:

Հովհ. Թումանյանից պահպանվել է և ներկա հրատարակության 3-րդ և 4-րդ հատորներում զետեղվում է ընդամենը 13 պոեմ (չհաշված բացարձակորեն սևագիր և անավարտ հատվածները): Խիստ տարբեր է այդ պոեմների ստեղծագործական պատմությունն ու ճակատագիրը, նրանք մեզ հասել են կատարման և մշակման տարբեր աստիճաններում: Այդ առումով Թումանյանի պոեմները կարելի է բաժանել չորս խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են «Ալեք», «Մեհրի» և «Մերժած օրենք» պոեմները, որոնք 1890-1892 թթ. Թումանյանի առաջին ժողովածուների մեջ տպագրվելուց հետո այլևս հեղինակի կենդանության ժամանակ երբեք չեն վերանայվել և, ինչպես կասեր բանաստեղծը, «մնացել են առաջին հրատարակության մեջ»: Այդ պոեմների նյութն ու ոճը, տարբեր պատճառներով, այլևս չէին կարող Թումանյանին մղել ստեղծագործական նոր աշխատանքի:

Երկրորդ խումբը կազմում են այն պոեմները, որոնք անցել են կատարելագործման և վերամշակման մեծ ճանապարհ և ի վերջո մեզ հասել են գեղարվեստական այնպիսի մակարդակով, որը համապատասխանում է թումանյանական արվեստի ամենաբարձր չափանիշներին: Դրանք, նախ, այսպես կոչված «գյուղական» պոեմներն են՝ «Անուշը», «Լոռեցի Սաքոն» և «Մարոն»: Այս նույն խմբին են պատկանում նաև «Պոետն ու Մուսան» և «Դեպի Անհունը», թեև նրանց կրած փոփոխությունները հիմնականում կատարվել են ոչ թե «ընթերցողի աչքի առջև»՝ հրատարակությունից հրատարակություն, այլ մտահղացման մեջ և ձեռագրերի վրա: Իսկ

«Թմկաբերդի առումը» առաջին իսկ տպագրության ժամանակ (1905) փաստորեն արդեն ստացել էր իր վերջնական տեսքը և հետագայում միայն մի երկու մասնավոր փոփոխության ենթարկվեց: Այս պոեմի կատարելագործման ընթացքը, ըստ երևույթին, ամբողջովին կապվում է հեղինակի «ներքին ստեղծագործական լաբորատորիայի» հետ:

Երրորդ խմբի մեջ կարելի է մտցնել մեզ միայն հատվածաբար հասած «Հառաչանք» և «Հին կռիվը» պոեմները, որոնք, ըստ մի շարք տվյալների, ժամանակին լիովին ավարտված են եղել, բայց զանազան պատճառներով ամբողջությամբ չեն տպագրվել, իսկ հետագայում զգալի մասով կորել են: Ներկայումս մեր տրամադրության տակ այդ պոեմներից կան միայն առանձին գլուխներ, որոնք և զետեղվում են սույն հրատարակության մեջ: Մասնավորապես՝ «Հառաչանքից» պահպանվել են երկու համեմատաբար ծավալուն հատվածներ (տպագրված 1893 և 1914 թթ.), ինչպես նաև հայտնի «Նախերգանքը», սևագիր «Վերջերգն» ու մի քանի ուրիշ հատվածներ: «Հին կռիվը» պոեմից տպագրվել և մեզ հասել են միայն առաջին («Տանը») և երրորդ («Երկրում») մասերը իրենց նախերգանքներով (տպագրված համապատասխանաբար 1915 և 1907 թթ.), ինչպես նաև երկրորդ մասի նախերգանքը, որը «Հայոց լեռներում» նշանավոր բանաստեղծությունն է:

Վերջապես պետք է առանձնացվեն Թումանյանի անավարտ մնացած պոեմները՝ «Սասունցի Դավիթը» և «Հազարան բըլբուլը»: Սակայն նրանց անավարտության բնույթն էլ բավական տարբեր է: «Հազարան բըլբուլն», ինչպես ասվեց, առհասարակ անկատար է մնացել, շատ լայն ընդգրկում ունեցող այդ մտահղացումից մեզ հասել են միայն երկու ավարտված և մշակված գլուխ («Երգչի վիշտը», «Արեգը սև աշխարհքում») և մի քանի անմշակ հատված: Այդ հատվածները, միասին վերցրած և համադրված պոեմի նախապատրաստական նյութերի հետ, հնարավորություն են տալիս հիմնական գծերով պատկերացնելու ստեղծագործության սյուժետային և գաղափարական բովանդակությունն իր ամբողջության մեջ: Այլ է «Սասունցի Դավիթը»: Նրա առաջին

մասը՝ ինքնին լիովին ավարտուն ստեղծագործություն է, թեև առանձին հատվածներ փոխելու կամ լրացնելու մտադրություն բանաստեղծն ունեցել է (օրինակ, Դավթի հրաժեշտի երգը)։ Այնինչ պոեմի երկրորդ մասը բոլորովին թերի է մնացել, այն ընդհատվում է Դավթի և Խանդութի սիրո պատմության բուն սկզբում։

Թումանյանի պոեմները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե ստեղծագործական աշխատանքի և մշակման ի՛նչ աստիճանի է հասցված տվյալ երկը։

2

Բազմաթիվ դժվարին հարցեր են ծագում Թումանյանի պոեմների ժամանակագրությունը որոշելիս։ Նրանց վրա կատարած երկարատև, հաճախ ընդհատումներով լեցուն աշխատանքը, մի քանի տարբերակների առկայությունը, ստեղծման և տպագրության ժամանակի անհամապատասխանությունները հաճախ շատ են բարդացնում այս կամ այն պոեմի գրության թվականի հստակ մատնանշումը։ Այդ հարցին պետք է մոտենալ՝ հաշվի առնելով ամեն մի առանձին պոեմի ստեղծագործական պատմության և հրապարակման հետ կապված բոլոր առկա տվյալներն ու յուրահատկությունները։

Ստորև՝ առանձին պոեմների ծանոթագրությունների մեջ ավելի մանրամասնորեն կհիմնավորվի յուրաքանչյուր ստեղծագործության ճշգրիտ կամ մոտավոր թվագրությունը։ Սակայն այստեղ ևս՝ ընդհանուր ներածական հոդվածում, անհրաժեշտ է մատնանշել և գեթ հիմնական գծերով փաստարկել պոեմների ստեղծման ժամանակը։ Դա հնարավորություն կտա ավելի հստակորեն պատկերացնելու այս ժանրի վրա Թումանյանի կատարած աշխատանքի համայնապատկերը, նրա «շարժումը» ժամանակի մեջ։

Ամենից պարզը և անվիճելին այն պոեմների ժամանակագրությունն է, որոնք հեղինակի կողմից տպագրվել են միայն մեկ անգամ՝ «Բանաստեղծությունների» մոսկովյան

երկու ժողովածուներում և ունեն գրության թվականի հստակ մատնանշում: Այդ պոեմներն են, ինչպես ասվեց, «Ալեքը» (1889), «Մեհրին» (1890) և «Մերժած օրենքը» (1890): Այս շարքին պետք է ավելացնել նաև նույն գրքերում տեղ գտած «Մարոյի», «Լոռեցի Սաքոյի» և «Անուշի» նախնական տարբերակները, որոնք համապատասխանաբար թվագրված են 1887, 1889 և 1890:

Թումանյանի կենդանության ժամանակ տպագրված ժողովածուներից «Բանաստեղծությունների» Բաքվի հրատարակության (1908) և «Հայ գրողների» առաջին հատորի (1909, 1914) մեջ պոեմներից ո՛չ մեկի գրության թվականը չի նշված: Գրության ժամանակի նշումներ կան միայն «Բանաստեղծությունների» Թիֆլիսի (1903) և Կ. Պոլսի (1922) հրատարակությունների մեջ, բայց ոչ բոլոր պոեմների համար: Այդ ժողովածուներում թվագրված են միայն «Մարոն» (1887), «Դեպի Անհունը» (1894) և «Սասունցի Դավիթը» (1902), իսկ մնացած պոեմների («Լոռեցի Սաքոն», «Անուշ», «Հին կռիվը», «Պոետն ու Մուսան», «Թմկաբերդի առումը») գրության թվականը չի նշված: Անշուշտ, սա «մոռացության» կամ «անհետևողականության» արդյունք չէր, այլ ուներ իր որոշակի դրդապատճառները: Ըստ երևույթին, Թումանյանն ինքն էլ տատանվել է, չի կարողացել կողմնորոշվել, թե ո՛րը պիտի համարել այդ պոեմների գրության ճշգրիտ թվականը՝ արդյոք նախնական տարբերակի ստեղծման ժամանա՞կը, թե վերջնական մշակման կամ նրա տպագրության:

Հետմահու հրատարակություններում փորձ է արվել, ելնելով պոեմների ստեղծագործական պատմության տվյալներից և զանազան վկայություններից, ավելի ճշգրտորեն նշել նրանց գրության թվականները: Վերցնենք միայն երկու՝ ամենից հեղինակավոր հրատարակությունները: Ե. Չարենցի խմբագրությամբ լույս տեսած «Գեղարվեստական երկեր» գրքում (1934), որի տեքստի պատրաստմանը գործուն մասնակցություն է ունեցել բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը, նշված են պոեմների գրության հետևյալ թվականները. «Մարոն» – 1887, «Լոռեցի Սաքոն» – 1889, Հատվածներ «Հառաչանք» պոեմից –

1890, «Դեպի Անհունը» – 1894, «Պոետն ու Մուսան» – 1901, «Անուշ» – 1901-1902, «Սասունցի Դավիթը» – 1902, «Թմկաբերդի առումը» – 1902, Հատվածներ «Հազարան բըլբուլից» – 1914:

Նույն ժամանակագրությունն է ընդունված նաև Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության 2-րդ հատորում (1940), որի բնագիրը և ծանոթագրությունները կազմել են Ն. Թումանյանը և Ա. Ռնեիկյանը: Մտցված են միայն հետևյալ մասնավոր փոփոխությունները: Իբրև «Անուշի» վերջնական գրության թվական նշվում է միայն 1901-ը (էջ 43), թեև հատորի ծանոթագրությունների մեջ ասվում է, որ պոեմի վերամշակումը շարունակվել է նաև 1902 թ. Աբասթումանում (էջ 369): «Հազարան բըլբուլի» հատվածների համար տրվում է կրկնակի թվագրություն՝ 1898-1914: Նույն հրատարակության 6-րդ հատորում «Հին կոիվը» պոեմի պահպանված մասերը թվագրված են 1890՝ հիմք ստեղծելով շատ թյուրիմացությունների համար:

Թումանյանի պոեմների այս՝ զգալի չափով կանոնիկ դարձած թվագրությունը, սակայն, մի շարք դեպքերում պահանջում է քննական մոտեցում և ճշտումներ: Դա վերաբերում է նույնիսկ այն պոեմներին, որոնց գրության թվականները նշված են իր՝ բանաստեղծի կողմից: Սկսենք այս վերջիններից:

«Մարոն» պոեմի վերամշակումից հետո էլ նրա տակ դնելով գրության նախկին թվականը՝ 1887, Թումանյանը ղեկավարվում էր հետևյալ նկատառումով: Թեև 1903 և 1922 թթ. հրատարակությունների մեջ պոեմը ենթարկվել է ոճական և կառուցվածքային զգալի փոփոխությունների և փոքրացել է ծավալով (առաջին տարբերակի 204 տողի փոխարեն՝ 158 տող), սակայն նրա սյուժեն և հուզական-գաղափարական բովանդակությունը հիմնականում նույնն են մնացել: Անշուշտ, իր վերամշակված տեսքով էլ «Մարոն» ընկալվում է իբրև մանկական տպավորությունների և մտորումների արգասիք: Այդ պատճառով պոեմի 1887 թվագրությունը պետք է պահպանվի, միաժամանակ չմոռանալով, որ վերջնական տարբերակի մեջ արտահայտվել են նաև հասուն շրջանի թումանյանական վարպետության

հատկանիշները:

Շատ ավելի բարդ է «Դեպի Անհունը» պոեմի թվագրության խնդիրը: Պոեմի տակ նշելով 1894 թվականը, Թումանյանը նկատի ուներ առաջին, ծավալով զգալիորեն ավելի մեծ տարբերակը, որն իրոք նախապես գրվել է այդ թվականին: Թումանյանն, ըստ երևույթին, ուզում էր հատուկ հիշեցնել և ընդգծել այդ թվականը, որովհետև հասուն տարիքում նա մի առանձին հպարտությամբ էր մտածում այն մասին, որ այդ ժամանակ լինելով շատ երիտասարդ կարողացել է ստեղծել այդպիսի փիլիսոփայական խորքի մի գործ: Ըստ Ն. Թումանյանի վկայության, բանաստեղծը «սիրում էր «Դեպի Անհունը» ու զարմանում, որ 24 տարեկան հասակում էդ տեսակ բան է գրել՝ իր տարիքից վեր ու վաղ»: Նա սիրով էր հիշում նաև այն, որ պոեմի առաջին ընթերցողներից շատերը (Հ. Մանանդյան, Ս. Տիգրանյան, Գ. Տեր-Մկրտչյան և ուրիշներ) «Դեպի Անհունը» համարել են իր «գրվածքների գլուխգործոցը», «գլխավոր երկը», իսկ Ղ. Աղայանը, պոեմի ուժեղ տպավորության տակ ամենադրական իմաստով ասել է. «Գրել ես, բայց ինքդ էլ չգիտես, թե ինչ ես գրել» (տե՛ս Ն. Թումանյան, Զրույցը Թումանյանի կյանքում:– «Սովետական գրականություն և արվեստ», 1943, №3, էջ 87: Նույնի՝ Հուշեր և զրույցներ, էջ 174-175: ԹԺՀ, էջ 893): Ըստ երևույթին, ահա այդ նկատառումով «Դեպի Անհունի» 1903 և 1922 թթ. հրատարակությունների մեջ Թումանյանն անհրաժեշտ է համարել որոշակիորեն նշել և առանձնացնել 1894 թվականը, իբրև պոեմի մտահղացման և նախնական տարբերակի ստեղծման ժամանակ:

Սակայն հայտնի է նաև, որ անգամ «Դեպի Անհունի» առաջին տարբերակը 1894 թվականին դեռ լիովին ավարտված չի եղել: Աշխատանքը նրա վրա շարունակվել է առնվազն մինչև 1898 թ., երբ Թումանյանը պոեմի ձեռագիրը տվել է շատերին ընթերցելու: Հենց այդ ժամանակ էլ մի քանի բարեկամների, առաջին հերթին Լ. Շանթի խորհրդով Թումանյանն ամբողջովին հրաժարվել է պոեմի երկրորդ մասից, ուր ներկայացվում էր լեթարգիկ քնի մեջ ընկած հերոսուհուն՝ Հասմիկին կենդանի թաղելու ողբերգական պատմությունը: Նա

ընտրել է երկի ուրիշ վերջավորություն՝ ընդգծելով մահվան ողբերգության համամարդկային փիլիսոփայական կողմը: Սակայն անցավ ևս հինգ տարի, մինչև որ պոեմն ստացավ իր վերջնական տեսքը և 1903 թ. գրեթե միաժամանակ տպագրվեց «Մուրճ» ամսագրում և «Բանաստեղծությունների» թիֆլիսյան գրքում: Թեև հետագայում, մանավանդ կյանքի վերջին տարիներին, Թումանյանը բազմիցս ափսոսանք է հայտնել պոեմի երկրորդ մասը ոչնչացնելու համար, բայց նա այլևս չանդրադարձավ այդ երկին, և 1903 թվականով «Դեպի Անհունի» ստեղծագործական պատմությունը փաստորեն ավարտվում է:

Այսպիսով, «Դեպի Անհունի» վրա Թումանյանն ընդհատումներով աշխատել է շուրջ մեկ տասնամյակ՝ 1894-1903 թթ.: Հետևաբար, հեղինակային նշումը՝ 1894, զգալի չափով պայմանական բնույթ ունի և պետք է համարվի պոեմի ստեղծման առաջին աստիճանը:

Ավելի հավաստի է «Սասունցի Դավիթը» պոեմի 1902 թվագրությունը, որը կա պոեմի 1903, 1904 և 1922 թթ. հրատարակություններում: Իրոք, պոեմի առաջին մասը, որն ավարտվում է Մսրա Մելիքի անկումով և ինքնին ամբողջական մի երկ է, գրվել է 1902-ին: Սակայն չպետք է մոռանալ, որ դրանից հետո էլ, հրատարակությունից հրատարակություն, Թումանյանը բազմաթիվ ուղղումներ, կրճատումներ և լրացումներ է մտցրել պոեմում և վերջնական տարբերակին հասել է միայն կյանքի վերջում՝ 1922 թ. պոլսյան հրատարակության մեջ: Այնպես որ 1902 թվականը «Սասունցի Դավթի» ստեղծման հիմնական տարին է, բայց ոչ մշակման աշխատանքների ավարտման: Ինչ վերաբերում է պոեմի երկրորդ մասի սկզբին (շուրջ 80 տող), ապա այն գրվել է, հավանաբար, 1904-ին, իսկ շարունակությունը նա այդպես էլ չհաջողեց գրել, թեև հետագա տարիներին բազմիցս ցանկացել է ձեռնամուխ լինել այդ գործին:

Անցնենք այն պոեմներին, որոնք զետեղելով իր ժողովածուներում, Թումանյանը չի նշել գրության թվականը կամ, ավելի ճիշտ, դժվարացել է նշել: Դրանք հինգն են՝ «Լոռեցի Սաքոն», «Անուշ»,

«Պոետն ու Մուսան», «Հին կռիվը» և «Թմկաբերդի առումը»:

Ասվեց, որ «Լոռեցի Սաքոյի» առաջին տարբերակն ունի 1889 թվագրական նշումը: 1895 թ. Թումանյանը հիմնովին վերամշակեց և լրացրեց պոեմը, որը հաջորդ տարի լույս տեսավ առանձին գրքույկով: Պոեմի երրորդ՝ կանոնիկ դարձած և հասարակական ճանաչում գտած տարբերակը երևան եկավ 1903 թ. ժողովածուի մեջ, առանց թվականի նշման: Թումանյանը ոչ ցանկացել է մատնանշել առաջին տարբերակի թվականը (որովհետև վերջնական խմբագրությունը շատ էր հեռացել այդ տարբերակից) և ոչ էլ առանձնացնել աշխատանքի եզրափակիչ փուլը (քանի որ պոեմի նյութն ու սյուժեն, այնուամենայնիվ, շատ կողմերով գալիս էին առաջին մտահղացումից): Հետևաբար, չի կարելի ճիշտ և սպառիչ համարել հետմահու որոշ հրատարակություններում այս խնդրի միանշանակ լուծումը հօգուտ 1889-ի: Այս դեպքում թերևս ավելի ճիշտ կլինի նշել կրկնակի թվականներ՝ 1889-1902, մանավանդ որ այդ շուրջ մեկուկես տասնամյակի ընթացքում բանաստեղծի միտքն այսպես կամ այնպես բազմիցս անդրադարձել է այս պոեմին: Նշված թվականները ցույց են տալիս պոեմի վրա կատարած աշխատանքի ժամանակային հիմնական սահմանները, թեև 1902-ից հետո էլ Թումանյանը ցանկացել է ինչ-ինչ փոփոխություններ մտցնել պոեմի մեջ:

«Լոռեցի Սաքոյի» մասին ասվածը կարելի է զգալի չափով կրկնել նաև «Անուշի» վերաբերյալ: 1890 թ. գրված և երկու տարի անց տպագրված առաջին տարբերակից մոտ մեկ տասնամյակ հետո պոեմն արմատական վերամշակման ենթարկվեց և վերստեղծված տեսքով տեղ գտավ 1903 թ. ժողովածուի մեջ: «Անուշի» որակական վերափոխումը նախապատրաստված էր 90-ական թվականների ստեղծագործական որոնումներով և զարգացմամբ, բայց հնարավոր դարձավ միայն դարասկզբին՝ 1901-1902 թթ.: Այդ տարիներին են վերաբերում պոեմի նոր տարբերակի ինքնագրերը, որոնք լրիվ տեսքով տպագրվում են սույն հատորում: Այդ հիման վրա էլ «Անուշի» վերջնական տարբերակի ստեղծման ժամանակը պետք է համարել այդ թվականները: Իհարկե, նոր «Անուշը» սյուժետային,

նույնիսկ տեքստային որոշ ընդհանրություններ ունի 1890 թ. գրածի հետ: Բայց դա արդեն որակական թռիչք էր, և կենսական նյութի գեղարվեստական մշակման, հոգեբանական և փիլիսոփայական իմաստավորման աստիճանը այնքան տարբեր էր, որ այս դեպքում արդեն ոչ մի անհրաժեշտություն չկա նշելու նաև 1890 թ. իբրև պոեմի վրա կատարած աշխատանքի սկիզբ: Հայտնի է նաև, որ 1903 թ. հետո էլ «Անուշի» մեջ մտցվել են առանձին ոչ մեծ ճշտումներ և լրացումներ (հատկապես 1916 թ. առանձին հրատարակության մեջ): Եվ, այնուամենայնիվ, պետք է առանձնացվեն 1901-1902 թվականները իբրև պոեմի դասական կատարելության նվաճման տարեթվեր:

Ճշգրիտ թվագրել իր երգիծական պոեմը՝ «Պոետն ու Մուսան», Թումանյանը դժվարացել է մի քանի պատճառով: Նախ, ինչպես ցույց են տալիս կենսագրական և ստեղծագործական փաստերը, այս պոեմի մտահղացումն ու նույնիսկ առաջին սևագիր փորձերը դարձյալ առնչվում են 90-ական թվականների սկզբի, Թիֆլիսի հայոց հոգևոր կոնսիստորիայում աշխատելու շրջանի հետ: Սակայն պոեմը գրվեց, ամենայն հավանականությամբ, 90-ականների վերջին, ստեղծագործական հասունության նվաճման շրջանում: Ստույգ հայտնի է, որ 1900 թ. պոեմի ձեռագիրը բանաստեղծն ուղարկել է Վ. Փափազյանին՝ նրա խմբագրած «Վտակ» ժողովածուի մեջ տպագրելու համար: Ժողովածուն լույս տեսավ 1901 թ., բայց նրա տպագրության ընթացքում, հենց տպարանային էջերի վրա Թումանյանը բավական մեծ փոփոխություններ մտցրեց, ստեղծեց պոեմի փաստորեն նոր տարբերակ: Ավելացնենք, որ դրանից անմիջապես հետո՝ 1903 թ. ժողովածուն պատրաստելիս Թումանյանը նորից վերամշակեց իր երգիծական պոեմը, և դա էլ դարձավ վերջնական տարբերակ: Սակայն վերջինս իր նախորդից («Վտակի» մեջ տպագրվածից) տարբերվում է հիմնականում միայն կատարված բավական մեծ կրճատումներով (548 տողի փոխարեն՝ 382 տող) և որոշ ոճական շտկումներով, իսկ կառուցվածքի և գաղափարական բովանդակության որևէ էական փոփոխություն չկա: Ասվածի հիման վրա «Պոետն ու Մուսան»

ներկա հրատարակության մեջ դիտվում է իբրև 1900-1901 թթ. ստեղծագործություն:

«Հին կռիվը» պոեմի երկու պահպանված մասերը Թումանյանը զետեղել է իր երկու գրքերում («Հայրենիքիս հետ», 1916 և «Բանաստեղծություններ», 1922) և երկու դեպքում էլ առանց որևէ թվագրության: Դրանից առաջ այդ մասերից մեկը («Երկրում») առանց նախերգանքի տպագրվել էր «Բանաստեղծությունների» 1908 թ. ժողովածուի մեջ՝ դարձյալ չնշելով թվականը: Ե՛վ այս, և՛ մյուս փաստերը որևէ հիմք չեն տալիս «Հին կռիվը» համարելու 1890 թ. ստեղծագործություն, ինչպես արվել է որոշ դեպքերում: Ճիշտ է, պոեմի նախնական տարբերակը Թումանյանն սկսել է գրել այդ թվականին, սակայն, ինչպես երևում է այդ տարբերակի պահպանված մի քանի հատվածներից («Տարոնի գարունը», «Տարոնի առավոտը», «Գիշեր»), այն ժամանակ երկը ոճական և կառուցվածքային բոլորովին ուրիշ բնույթ է ունեցել: «Հին կռիվը» («Լևոնի կռիվը») պոեմի գրությունը, եապես նոր և շատ ավելի լայն ծրագրով, Թումանյանը ձեռնարկեց 1902 թ.: Դա այն «ազգային մեծ պոեման» էր, որի մասին նա խոսում է 1902 թ. ամռանը Փ. Վարդազարյանին գրած նամակներում (ԵԺV, 202-205): Բայց այդ ժամանակ պոեմը, որը բաղկացած էր լինելու հինգ մեծ մասերից, ըստ երևույթին, չի ավարտվել (օգոստոսի 6-ին բանաստեղծն իր այդ երկի մասին հայտնում էր. «ծալում հետաձգում եմ»), և աշխատանքը շարունակվել է նաև հաջորդ տարիներին, հավանաբար մինչև 1906 թվականը: Այս եզրակացության համար հիմք է տալիս այն փաստը, որ միայն այդ ժամանակ մամուլում հրապարակվեցին պոեմի առանձին հատվածներ. 1906 թ. վերջին՝ երկրորդ մասի նախերգանքը («Հայոց լեռներում» բանաստեղծությունը), իսկ 1907 թ. սկզբին՝ երրորդ մասը («Երկրում»): Մի փոքր անց պոեմի ամբողջական ձեռագիրը կորավ ժանդարմական վարչության տարած շատ ուրիշ թղթերի հետ:

Ելնելով այս փաստերից, նպատակահարմար է «Հին կռիվը» պոեմի գրության ժամանակը նշել 1902-1906 թվականներով:

Ինչ վերաբերում է «Թմկաբերդի առումը» պոեմին, ապա հայտնի

է, որ 1901 թ. ծագած նրա մտահղացումը իրականացավ մեկ տարի անց՝ 1902 թ. «Աբասթումանի աշնանը»: Բայց Մարիամ Թումանյանի վկայությունից հայտնի է նաև, որ այդ ժամանակ հեղինակը կտրուկ կերպով մերժել է պոեմը «Բանաստեղծությունների» 1903 թ. հրատարակության մեջ մտցնելու առաջարկը: Պատճառը, անշուշտ, եղել է այն, որ Թումանյանը պոեմի վրա իր աշխատանքը դեռ ավարտված չի համարել: Թեև համապատասխան ձեռագիր տվյալներ մեզ չեն հասել, բայց, ամենայն հավանականությամբ, հաջորդ տարիներին՝ մինչև «Մուրճ» ամսագրում հրապարակելը (1905 թ. հունվար), Թումանյանը ինչ-որ չափով շարունակել է աշխատել պոեմի վրա: Հետևաբար, ճիշտ կլինի իբրև «Թմկաբերդի առումի» գրության ժամանակ նշել 1902-1904 թվականները:

Մնում է մի քանի խոսք ասել այն երկու պոեմների մասին («Հառաչանք», «Հազարան բըլբուլ»), որոնք հատվածաբար տպագրվել են մամուլում և Թումանյանի կենդանության ժամանակ նրա որևէ ժողովածուի մեջ տեղ չեն գտել: Երկուսն էլ իբրև մտահղացում և ծրագիր բանաստեղծին ուղեկցել են տասնամյակների ընթացքում՝ այդպես էլ մնալով անավարտ, իսկ նրանց ճշգրիտ թվագրությունը երկու դեպքում էլ կապված է լուրջ դժվարությունների հետ, և հարցի ամեն մի լուծում ինչ-որ չափով պայմանական կլինի:

«Հառաչանք» պոեմից Թումանյանը հրապարակել է երկու համեմատաբար մեծ հատված (1893 և 1914 թթ.), «Նախերգանքը» (1896) և երկու քառատող (1920): Բացի այդ, պահպանվել են մի քանի սևագիր հատվածներ: Սակայն պոեմի մտահղացումը ծագել է զգալիորեն ավելի վաղ՝ 80-ական թթ. երկրորդ կեսին, իսկ գրությունն սկսվել է 1890 թ. («Ծեր այգեպանի պատմությունը» վերնագրով) ու շարունակվել հաջորդ տարիներին: Եթե վերցնենք, օրինակ, մեզ հասած հատվածներից կարևորագույնը և ամենածավալունը («Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով...» տողով սկսվող), ապա ոչ մի կասկած չի կարող լինել, որ 1914 թ. տպագրելուց առաջ Թումանյանն այն էապես վերամշակել է, մտցրել ոճական և կառուցվածքային լուրջ փոփոխություններ: Այդ

հատվածի մեջ, ի տարբերություն 1893 թ. տպագրված հատվածի, որոշակիորեն երևում է 1910-ական թվականների թումանյանական ոճի և վարպետության կնիքը, և դա չի կարելի նկատի չառնել ինչպես պոեմը վերլուծելիս, այնպես էլ այդ շրջանում բանաստեղծի «օրերն ու վաստակները» գնահատելիս:

Եվ սակայն, եթե ցանկանանք ավելի կոնկրետ նշել «Հառաչանքի» գրության ժամանակը, այն պետք է համարենք 1890 և նրան անմիջաբար հաջորդած տարիները: Դա հիմք է տվել ներկա հրատարակության մեջ այդ ժամանակը համարելու 1890-ական թվականները: Նման «անորոշությունը» պայմանավորված է նրանով, որ պոեմի վրա կատարած աշխատանքի ընթացքի մասին մենք ավելի կայուն տվյալներ չունենք:

Թումանյանի երկերի նախորդ գիտական հրատարակության մեջ «Հազարան բըլբուլի» սյուժետային ընթացքը և գեղարվեստական ամբողջականությունը գեթ մասամբ վերականգնելու նպատակով պոեմի ավարտված և հեղինակի կողմից տպագրված երկու գլուխները («Երգչի վիշտը» և «Արեգը սև աշխարհքում») միահյուսվեցին պահպանված սևագիր հատվածների հետ: Այդպես որոշ չափով վերստեղծվեց անավարտ հեքիաթ-պոեմի զարգացման ընթացքի պատկերացումը, և դա շատ կարևոր հիմք եղավ ստեղծագործության ըմբռնման և գնահատման ճանապարհին: Այդ նույն սկզբունքն է ընդունված նաև ներկա հրատարակության մեջ: Նպատակահարմար է պահպանել նաև նախորդ հրատարակության մեջ առաջարկված կրկնակի թվագրությունը՝ 1898-1914, քանի որ այդ տարեթվերի միջև է ընթացել «Հազարան բըլբուլի»՝ մեզ հասած ավարտուն և սևագիր հատվածների վրա կատարված հիմնական աշխատանքը:

Ի մի բերելով վերը շարադրված նկատառումները, Թումանյանի պոեմների ժամանակագրության պատկերը կարելի է ներկայացնել այսպես (խմբագրության կողմից գրվող թվականները վերցված են սուրանկյուն փակագծերի մեջ).

Մարոն – 1887

Լոռեցի Սաքոն – <1889-1902>

Ալեք – 1889
Մեհրի – 1890
Մերժած օրենք – 1890
Հառաչանք (հատվածներ) – <1890-ական թվականներ>
Անուշ – <1901-1902>
Դեպի Անհունը – 1894-<1903>
Պոետն ու Մուսան – <1900-1901>
Հին կռիվը – <1902-1906>
Սասունցի Դավիթը – 1902
Սասունցի Դավիթը, 2-րդ մասի սկիզբը – <1904>
Թմկաբերդի առումը – <1902-1904>
Հազարան բըլբուլը (հատվածներ) – <1898-1914>

Այս ժամանակագրական դասավորությամբ էլ Թումանյանի ինքնուրույն պոեմները տեղ են գտել սույն հրատարակության 3-րդ և 4-րդ հատորներում:

3

Բացի թվարկված պոեմների հիմնական բնագրերից, ներկա հրատարակության մեջ ավելի լրիվ և ամբողջական ձևով, քան նախկինում, հրապարակվում են այդ երկերի բոլոր պահպանված տարբերակները, վաղ շրջանի խմբագրությունները, սևագիր և անավարտ հատվածները: Մեզ հասել են այդ նյութերի մի մասը միայն, շատերը ոչնչացվել են հեղինակի կողմից կամ կորել են անբարենպաստ հանգամանքներում: Այնուամենայնիվ, ծավալի առումով պահպանված տարբերակները (ամբողջական կամ հատվածային) չեն զիջում, հաճախ նույնիսկ գերազանցում են հիմնական բնագրերի բաժնին, իսկ նրանց պատրաստումը եղել է պոեմների հրատարակության ամենաաշխատատար մասը: Դրանք էական հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն գիտական առումով, այլև ընթերցող լայն շրջանների համար: Ոչ մի ուրիշ տեղ այնպես շոշափելի և ակնառու չի երևում Թումանյանի կատարած ստեղծագործական աշխատանքի ծավալն ու բնույթը, նրա գրական

զարգացման ուղին, ինչպես պոեմների մտահղացման, գրության և մշակման հետ կապված նյութերի մեջ: Հատկապես կարևոր են որոշ պոեմների («Անուշի», «Լոռեցի Սաքոյի», «Պոետն ու Մուսայի» և այլն) նախնական ամբողջական տարբերակները, որոնք շատ կողմերով ինքնուրույն ստեղծագործության արժեք և կշիռ ունեն: Նկատի ունենալով այդ տարբերակները, կարելի է ասել, որ մեզ հասել է Թումանյանի ոչ թե 13, այլ մոտ երկու տասնյակ պոեմ, որոնցից ամեն մեկն իր անփոխարինելի տեղն ունի նրա ստեղծագործության տարեգրության մեջ:

Բոլոր առումներով ամենից ծանրակշիռն ու պերճախոսը «Անուշ» պոեմի ստեղծագործական պատմության բազմազան նյութերն են: Նրա առաջին և վերջին ամբողջական տարբերակների համադրությունը (որոնց միջև բազմաթիվ միջանկյալ աստիճաններ կան) առավել ցայտունությամբ ներկայացնում է Թումանյանի ստեղծագործական մեթոդի և վարպետության հսկայական զարգացումը մեկ տասնամյակի ընթացքում: Այդ պոեմին Վ. Բրյուսովի տված բնութագրումներից մեկը – «համապարփակ «Անուշ» – կարելի է կիրառել նաև նրա մշակման ընթացքի հետ կապված բազմազան նյութերի նկատմամբ, որոնք անսպառ աղբյուր են Թումանյանի ստեղծագործական ուղին և գեղարվեստական մտածողության յուրահատկությունը պատկերացնելու համար:

Հարցի ուսումնասիրությունն առավել ևս իմաստալի է դառնում այն պատճառով, որ «Անուշի» վերջնական խմբագրության մեջ կենսական նյութի և սյուժեի առումով կարծես թե ոչինչ չի փոխվել. «ադաթի» հողի վրա ծագող նույն կոնֆլիկտը և հերոսների ողբերգական վախճանը, որ կար նաև առաջին տարբերակում: Սակայն, այդ ընդհանրությամբ հանդերձ, մենք փաստորեն գործ ունենք ոչ միայն ստեղծագործության երկու տարբեր որակի, այլև պոեմի երկու տարբեր տիպերի, ռեալիզմի էապես տարբեր ըմբռնումների հետ: Արդեն «Անուշի» առաջին տարբերակը ժամանակակից կյանքի ռեալիստական ընկալման և արտացոլման արտահայտություն էր: Բայց Թումանյանն այստեղ շատ կողմերով հետևում էր դասական ռոմանտիկական պոեմի սկզբունքներին:

Դրա արտահայտությունն էին խոշոր չափերի հասնող քնարական դատողությունները հայրենիքի անցյալի և ներկայի, նահապետական աշխարհում մարդու ճակատագրի մասին, որոնք ոչ մի անմիջական կապ չունեին բուն սյուժեի և կերպարների հետ: Այդ հանգամանքը և ընդհանրապես հեղինակի ակտիվ միջամտությունը շարադրանքի մեջ խիստ սուբյեկտիվ երանգ էր տալիս պոեմին, կարծեք տեղ չէր թողնում հերոսների ներաշխարհի բացահայտման, նրանց անկաշկանդ «ինքնազարգացման» համար, որը ռեալիստական մեթոդի կարևորագույն գծերից մեկն է:

Մեկ տասնամյակ անց հիմնովին վերամշակելով պոեմը, ավելի ճիշտ՝ նորից գրելով այն, բանաստեղծն իր անհատականությունը մի տեսակ «ետ քաշեց»՝ առաջին պլան մղելով դեպքերով ընթացքի, հերոսների հույզերի և մտորումների, նրանց արարքների կենսական և հոգեբանական ազդակների ցուցադրումը: «Անուշի» վերջնական տարբերակի մեջ էլ Թումանյանը մնում է ամուր կապված իրական կյանքի հետ, ամենայն հավատարմությամբ է պատկերում նույնիսկ գյուղական կենցաղի մանրամասները: Բայց նրա ռեալիզմն արդեն վճռականորեն վեր է բարձրանում ինքնաբավ կենցաղագրությունից: Գյուղական կյանքի մի «շարքային» ողբերգական պատմության հիման վրա այժմ արծարծվում են անհատի և ժողովրդի ճակատագրի, մարդու և բնության, կյանքի և մահվան, ընթացիկի և հավերժականի փոխհարաբերության փիլիսոփայական մեծ խնդիրներ: Շատ ավելի բազմազան դարձան ռեալիզմի դրսևորման ձևերը՝ կյանքի իրական տեսարանների կողքին ցուցադրելով նաև պայմանական և ֆանտաստիկ պատկերներ, դիմելով բնության մարդկայնացման և աստվածացման այլևայլ եղանակների: Վերստեղծված «Անուշի» մեջ արդեն լիարժեք կերպով արտահայտվեց այն համադրական ռեալիզմը, որը Թումանյանի հասուն շրջանի ամենամեծ նվաճումն էր, նրա ծանրակշիռ ավանդը հայ ռեալիզմի և ողջ գրականության պատմության մեջ:

Թումանյանի պոեմները կարելի է տիպաբանական խմբավորման ենթարկել ըստ տարբեր հատկանիշների: Նախ, թեմատիկ սկզբունքով: Այստեղ որոշակիորեն առանձնանում են

վերջին երեք պոեմները՝ «Սասունցի Դավիթը», «Թմկաբերդի առումը» և «Հազարան բըլբուլը», որոնք հիմնված են պատմաբանահյուսական ատաղձի վրա՝ այստեղից բխող բովանդակության և գեղարվեստական համակարգի համապատասխան առանձնահատկություններով: Սակայն մնացած տասը պոեմներն էլ, որոնք, ընդհանուր ձևով ասած, նվիրված են ժամանակակից կյանքի հարցերին, ունեն թեմատիկ բազմազան երանգներ: Ամենից մեծ խումբը կազմում են հայ նահապետական գյուղի կյանքը պատկերող պոեմները՝ «Մարոն», «Ալեք», «Լոռեցի Սաքոն», «Հառաչանք», «Անուշ»: Ինչքան էլ տարբեր են այս երկերը իրենց ստեղծագործական որակով ու ձևերով, նրանք միասին գծագրում են հայ գյուղաշխարհի կյանքն այնպիսի լրիվությամբ և գեղարվեստական բազմագունությամբ, որը եզակի երևույթ է հայ պոեզիայի պատմության մեջ: Ժամանակակից կյանքի այլևայլ կողմերն էին արտացոլում նաև վաղ տարիներին գրած «Մերժած օրենքը», ավելի հասուն շրջանում ստեղծված «Դեպի Անհունը», «Պոետն ու Մուսան»: Դրանք արծարծում են ավելի ընդհանուր, համամարդկային բնույթի հարցեր՝ կապված անհատի ազատության, կյանքի և մահվան փոխհարաբերության, արվեստի կոչման և ճակատագրի հետ, ցույց են տալիս բանաստեղծի հակումը դեպի կյանքի սուր արտահայտված ողբերգական և կոմիկական կողմերը: Ինչպես և «գյուղական» պոեմները, դրանք ևս կարևորագույն աղբյուր են Թումանյանի աշխարհայացքի և գեղագիտական համակարգի ըմբռնման համար: Վերջապես, թումանյանական երկու պոեմ՝ «Մեհրին» և «Հին կռիվը», նվիրված են արևմտահայության վիճակի, ազգային-ազատագրական պայքարի հարցերին: Այդ պոեմները, մանավանդ երկրորդը, հայրենասիրական քնարերգության հետ միասին, համազգային հարցերի լավագույն արձագանքն են Թումանյանի ստեղծագործության մեջ:

Ինքնատիպ և ամեն անգամ անկրկնելի է Թումանյանի պոեմների ժանրային բնույթը: Նրա տաղանդի վառ էպիկական նկարագիրը, որով նա եզակի տեղ է գրավում ողջ հայ բանաստեղծության

տարեգրության մեջ, ամենևին չի բացառում քնարական ձևերին և միջոցներին դիմելու հնարավորությունը, որը մենք տեսնում ենք Թումանյանի բոլոր պոեմներում՝ արտահայտված շատ բազմազան երանգներով: Էպիկական և լիրիկական սկզբունքները միշտ սերտորեն առնչվում են, լրացնում և հարստացնում են իրար: Այսպես, նույնիսկ էպիկական շատ ցայտուն նկարագիր ունեցող այնպիսի պոեմներում, ինչպես «Թմկաբերդի առումը», «Սասունցի Դավիթը», «Հազարան բըլբուլը», լիրիկան հանդես է գալիս շատ որոշակիորեն՝ հերոսների կամ պատմողի խոսքի հուզական ուժեղ երանգների, հաճախ և ամբողջական հատվածների մեջ: Իսկ ամենաքնարական պոեմներում, որպիսիք են «Դեպի Անհունը», «Պոեմն ու Մուսան», երևում է Թումանյան պատմողը, կյանքի երևույթներն օբյեկտիվորեն տեսնելու և ներկայացնելու նրա անզուգական տաղանդը:

Սակայն Թումանյանի պոեմների մեծ մասն ավելի ճիշտ կլինի կոչել պարզապես քնարավիպական (լիրո-էպիկական): Այդպիսի բնույթ ունեն և՛ «գյուղական» հայտնի պոեմները՝ «Անուշը», «Լոռեցի Սաքոն», «Մարոն» և «Հառաչանքը», և՛ «Հին կռվի» պահպանված մասերը, և՛ վաղ շրջանում գրված ու անփոփոխ մնացած «Մեհրին», «Ալեքը», «Մերժած օրենքը»: Այս երկերին, հատկապես մշակման բովով անցած պոեմներին բնորոշ է այն, որ նրանց մեջ քնարական սկիզբը, կարելի է ասել, դրված է օբյեկտիվ հիմքի վրա, բխում է ոչ այնքան բանաստեղծի վերաբերմունքից և գնահատականից, որքան հերոսների ներաշխարհի, նրանց ապրումների ուղղակի բացահայտումից: Բավական է ասել, օրինակ, որ «Անուշի» տեքստի կեսից ավելին (856 տողից 486-ը) հերոսների ուղղակի խոսքն է՝ նրանց հուզական ինքնաբացահայտումները, որոնք մեծ մասամբ քնարական երգերի բնույթ ունեն: Ուրիշ դեպքերում քնարական տարրը արտահայտվում է կա՛մ հերոսի ներքին խոսքի և ինքնազննումների ձևով («Լոռեցի Սաքոն»), կա՛մ պատմողի խոսքի կենդանի երանգներում («Հառաչանք», «Մարոն»), կա՛մ կերպարների երկխոսությունների ու հեղինակային շեղումների մեջ («Հին կռիվը») և այլն:

Պոեմներում ավելի, քան որևէ այլ ժանրի մեջ, երևան եկավ Թումանյանի նորարարությունը, բայց և նրա բազմակողմանի առնչությունները ազգային և միջազգային գրական ավանդույթների հետ: Այս խնդրի պարզաբանման համար շատ կարևոր է բանաստեղծի վկայությունը 1902 թ. հոկտեմբերին (իր մի շարք պոեմների վրա մեծ լարվածությամբ աշխատելու շրջանում) Յուրի Վեսելովսկուն գրած նամակից: Խոսելով դեռ դպրոցական տարիներից Պուշկինի և Լերմոնտովի նկատմամբ տածած բուռն սիրո, հատկապես նրանց կովկասյան պոեմների ու բանաստեղծությունների թողած ուժեղ տպավորության մասին, Թումանյանն ավելացնում էր. «Ես էլ, իբրև կովկասցի ու լեռնցի, սիրել եմ այդ երգերն ու պոեմները: Եվ, թեպետ լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտը ես ունեցել եմ իմ հոգում, բայց անշուշտ նրանք դրդել են ինձ ու տվել պոեմայի այն ձևը, որով գրել եմ ես, որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմ չի եղել, որ երգեր մեր բնությունը, ժողովրդի սովորություններն ու ավանդությունները» (ԵԺV, 235-236):

Ինչպես տեսնում ենք, և՛ իր պոեմների ազգային թեմատիկան՝ հայրենի եզերքի կյանքն ու բնությունը պատկերելու հանգամանքը, և՛ նրանց գեղարվեստական-ժանրային յուրահատկությունը Թումանյանը կապում է ռուս մեծ բանաստեղծների երկերից ստացած տպավորության հետ: Եվ դա ոչ թե սուբյեկտիվ կամ պատահական դիտողություն էր, այլ գրական-պատմական որոշակի իրողության միանգամայն ճշգրիտ արձանագրում: Թումանյանից առաջ հայ նոր գրականության մեջ կային, իհարկե, ժողովրդի կյանքի և բարքերի էպիկական պատկերման մի շարք օրինակներ՝ Աբովյանի «Վերքից» մինչև Պռոշյանի և Աղայանի ռեալիստական վիպական երկերը: Դրանք, անշուշտ, ինչ-որ չափով հող ստեղծեցին Թումանյանի պոեմների երևան գալու համար: Չի կարելի մոռանալ նաև Ալիշանի, Պատկանյանի, Շահազիզի հայտնի փորձերը արդիական և պատմական թեմաներով պոեմներ ստեղծելու ուղղությամբ: Սակայն այդ բոլոր բանաստեղծներն էլ պատկանում էին հայ նոր գրականության այն թևին, որ Թումանյանն

անվանում էր «տարաշխարհիկ», «գաղութային»: «Ճակատագրի քմահաճույքով,– գրում էր նրանց մասին Թումանյանը,– մեր բանաստեղծները ապրել ու երգել են խորթ ու հեռու մեր աշխարհից... և նրանց երգերի մեջ չկան ո՛չ մեր բնությունը, ո՛չ էլ մեր ժողովուրդը» (ԵԺV, 233): Այդ պատճառով էլ նրանց երկերը չէին կարող օրինակ և տիպար լինել Թումանյանի համար իր առջև կանգնած դժվարին խնդրի՝ ռեալիստական պոեմի ստեղծման ճանապարհին:

Այդպիսի տիպար Թումանյանը գտավ ռուս բանաստեղծների կովկասյան հայտնի երկերում, որոնք նրա համար ոգևորիչ օրինակ եղան հարազատ ժողովրդի կյանքն ու բնությունը բանաստեղծական մեծ կտավի նյութ դարձնելու գործում: Ճիշտ է, Պուշկինի և Լերմոնտովի կովկասյան պոեմները, ինչպես նաև Բայրոնի «Չայլդ Հարոլդն» ու «Ծիլիոնի կալանավորը», որոնցով նույնպես շատ ոգևորված է եղել Թումանյանը գրական ուսումնառության տարիներին, պատկանում են այն ժանրային տիպաբանական ձևին, որը գրականության պատմության մեջ հայտնի է «ռոմանտիկական պոեմ» անունով: Բայց նրանք օգնեցին հայ բանաստեղծին գրելու ռեալիստական պոեմներ հայ գյուղի և ընդհանրապես ազգային կյանքի հանգուցային խնդիրների մասին: Թումանյանն ստեղծագործաբար ընկալեց և օգտագործեց ռոմանտիկական պոեմի ժանրային-կառուցվածքային հատկանիշները,– համեմատաբար ոչ մեծ ծավալի երկի մեջ զարգացող սյուժետային պատմություն՝ հարստացված քնարական բազմազան միջոցներով: Թումանյանն իր օրինակով հաստատեց, որ պոեմի այդ հատկանիշները միանգամայն կենսունակ են նաև ռեալիստական մեթոդի սահմաններում: Դա հակասության կամ անհետևողականության արդյունք չէր, այլ հայ բանաստեղծի ժառանգած ավանդույթների հարստության, նրա ստեղծագործական աշխարհի ներքին բազմազանության ցուցանիշ:

Այդ առումով հետաքրքիր է նաև այն, թե էպիկական բանաստեղծության բնագավառում ի՛նչ երկերի է անդրադարձել Թումանյան թարգմանիչը: Ակնհայտորեն առանձնանում են երկու

կարգի բանաստեղծական գործեր, որոնք նրա թարգմանական անմրցելի շնորհքի ուժով դարձել են հայ գրականության հավերժական սեփականությունը: Նախ, դա ռոմանտիկական պոեզիայի դասական օրինակներն են՝ Լերմոնտովի «Մծիրին», Բայրոնի «Շիլիոնի կալանավորը», Ժուկովսկու «Աքիլլեսը», որոնց թարգմանության մեջ ամեն քայլափոխի տեսնում ես ոչ միայն սեր ու վարպետություն, այլև նրանց գեղարվեստական հյուսվածքի բոլոր կողմերի խոր իմացություն, դրանք հայեցի վերարտադրելու զարմանալի կարողություն: Այդ թարգմանությունները կատարվել են 90-ական թվականներին, թեև հետագայում էլ Թումանյանը մի քանի անգամ անդրադարձել է դրանց, մտցրել է բազմաթիվ ուղղումներ,– մի հանգամանք, որը Թումանյանի հոգում ռոմանտիկական պոեզիայի նկատմամբ մինչև վերջ էլ պահպանված սիրո և հետաքրքրության հաստատումն է:

Երկրորդ խումբը կազմում են ժողովրդական էպիկական երկերի թարգմանությունները, որոնք կատարվեցին XX դարի սկզբին: Այստեղ մտնում են ռուսական բիլինային էպոսից երեք (մեկը անավարտ) և սերբական վիպերգից չորս մասերի թարգմանությունները, ինչպես նաև երկու գլուխ Հ. Լոնգֆելլոյի «Հայավաթի երգից», որն ամբողջովին ներծծված է ամերիկյան ընիկների բանահյուսության մոտիվներով ու ձևերով: Այդ էպիկական երգերի ոգին շատ մոտ ու հարազատ էր Թումանյանի սեփական ստեղծագործությանը, և նրանց միջև հաճախ կարելի է լսել գաղափարական և գեղարվեստական «փոխարձագանքներ»:

Նշված և՛ մեկ, և՛ մյուս խմբի երկերի թարգմանության փաստն ինքնին Թումանյանի սեփական նախասիրությունների և ըմբռնումների արտահայտման միջոց էր: Իրենց հերթին՝ այդ թարգմանությունները մեծ չափով նպաստեցին հայ բանաստեղծի գեղարվեստական սկզբունքների, հատկապես նրա էպիկական ոճի ձևավորմանն ու զարգացմանը:

Թումանյանի ստեղծագործության ժանրային համակարգում պոեմի գրված առաջատար և հանգուցային դիրքը տարբեր ուղիներով ազդել և արտահայտվել է նաև նրա մշակած մյուս ժանրերի

բնույթի և զարգացման ընթացքի վրա: Լինելով նրա աշխարհայացքի, գեղարվեստական մեթոդի և գրական վարպետության առավել լրիվ և ամբողջական դրսևորման ոլորտը, պոեմներն անհամար գծերով կապվում են նրա ստեղծագործության մյուս մասերի հետ: Ինչպես Թումանյանի չափածո (բալլադ, բանաստեղծություն, քառյակ), այնպես էլ արձակ (պատմվածք, հեքիաթ) ժանրերում որոշակիորեն զգացվում է էպիկական պոեզիայի մեծ վարպետի փորձը, նրա լայն աշխարհընմբռնման, ոճի և մտածողության կնիքը: Նրա ստեղծագործական աշխարհը զարմանալիորեն միասնական է և միաձույլ, այնտեղ որևէ ներքին երկատում, առավել ևս հակադրություն չկա: Եվ այդ միասնության ամենացայտուն արտահայտություններից մեկն այն է, որ Թումանյանի կիրառած ժանրային բոլոր ձևերը սերտորեն կապված են, փոխադարձաբար լրացնում են իրար: Եվ, այնուամենայնիվ, առանց տատանվելու կարելի է ասել, որ պոեմներն են այն կենտրոնները, ուր գալիս-հավաքվում են Թումանյանի գաղափարական-գեղարվեստական բոլոր հիմնական սկզբունքները: Հասուն շրջանում գրված կամ վերստեղծված պոեմների մեջ յուրովի արտահայտվել են նախընթաց շրջանի գրական որոնումների արդյունքները, միաժամանակ դրվել են հետագա ստեղծագործական զարգացման հիմքերը: Այս միտքը հաստատելու համար բավական է նույնիսկ պարզ թվարկումը:

Դարասկզբին արմատապես վերամշակված «Անուշը» դարձավ ժամանակակից աշխարհում մարդու ճակատագրի, նրա ներաշխարհի բոլոր զննումների հանրագումարը: Բայց իր հերթին էլ այն հիմքեր ստեղծեց գրական-հոգեբանական վարպետության այն բարձրագույն մակարդակի համար, որ մենք տեսնում ենք դրանից հետո գրված տարբեր ժանրի երկերում՝ պոեմից և բալլադից մինչև հեքիաթ և պատմվածք:

Կամ հիշենք «Դեպի Անհունը»: Դա կյանքի և մահվան, մարդու և բնության փոխհարաբերության վերաբերյալ պատանեկան տարիներից սկսած խոր և ինքնատիպ մտորումների ամփոփումն էր: Մյուս կողմից, առանց այդ պոեմի անհնար է պատկերացնել նաև նույն հարցերի փիլիսոփայական արծարծումները ավելի ուշ

գրված շատ երկերի, մասնավորապես քառյակների մեջ:

Ճիշտ այդպես էլ «Պոետն ու Մուսան» այն կենտրոնն է, ուր ի մի են բերված Թումանյանի խոհերը իսկական բանաստեղծի կոչման և ճակատագրի մասին: Իսկ «Հազարան բըլբուլը» ծրագրվել է իբրև մարդկության վերածնման մեջ արվեստի վիթխարի դերի հաստատում, մի միտք, որը նույնպես շատ է զբաղեցրել Թումանյանին: Բոլորովին տարբեր ոճով գրված այս երկու պոեմները՝ մեկը երգիծական, իսկ մյուսը՝ կախարդական հեքիաթի հիման վրա մտահղացված, ներքուստ սերտորեն կապված են ոչ միայն իրար, այլև Թումանյանի գեղարվեստական և քննադատական ժառանգության շատ ուրիշ էջերի հետ:

«Սասունցի Դավիթը» ազգային ժողովրդական բանահյուսության ըմբռնման և գեղարվեստական մշակման ուղղությամբ Թումանյանի կատարած վիթխարի աշխատանքի ամենաբարձր և համապարփակ արդյունքներից մեկն է, իսկ «Թմկաբերդի առումը» առավել ցայտուն մարմնավորումն է մարդու իդեալի որոնման մոտիվների, որոնք անցնում են նրա չափածո և արձակ շատ երկերի միջով, և այլն:

Իբրև ամփոփում, կարելի է ասել հետևյալը: Վերլուծել և ճիշտ գնահատել Թումանյանի պոեմները կարելի է միայն նրա գրական ժառանգության բոլոր կողմերը նկատի ունենալու դեպքում: Իսկ ընդգրկել և հասկանալ Թումանյանի ստեղծագործությունն իր ամբողջության մեջ՝ նշանակում է հասկանալ և գնահատել հայ գրականության և գեղարվեստական մտածողության մի ամբողջ մեծ դարաշրջան՝ բոլոր հին ու նոր արմատներով և զարգացման հեռանկարներով: Թումանյանի բանաստեղծական էպոսը, որն անցյալում հիմք է տվել անվանելու նրան «հայկական Հոմերոս», թվում է նախաստեղծ բնության նման հինավուրց, բայց ամեն մի սերնդի առջև բացվում է իր նորոգվող գեղեցկությամբ ու հմայքով, իր բովանդակության նորանոր կողմերով:

Թումանյանի պոեմները պատկանում են հայ բազմադարյան գրականության բարձրագույն նվաճումների թվին: Եվ այսօր էլ ամենևին չեն հնացել այն խորիմաստ գնահատականները, որ նրա

բանաստեղծական էպոսին տվել են անցյալի նշանավոր գրական գործիչները: Հիշենք դրանցից ևս երկուսը: 1916 թ. Վ. Բրյուսովը հայ պոեզիայի մասին գրած իր հայտնի հոդվածում ասում էր. «Ուրիշ ժողովուրդների ընթերցողներին Թումանյանի պոեմները (օրինակ, «Անուշը») ավելի շատ բան են տալիս ժամանակակից Հայաստանը և նրա կյանքը ճանաչելու համար, քան կարող են տալ հատուկ հետազոտությունների ստվար հատորները»: Իսկ Ավ. Իսահակյանը 1923 թ. Թումանյանի մահվան առիթով գրած հոդվածում նրա «սքանչելի անմահ լեգենդներն ու պոեմները» համարում էր «մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը»:

Ժամանակը հաստատեց այդ գնահատականների պատմական և գեղագիտական ճշմարտացիությունը:

ՊՈԵՄՆԵՐ

ՄԱՐՈՆ
(էջ 11, 167) (ԵԼԺ 3, էջ 7)

Առաջին անգամ՝ ԲՄ II, էջ 136-146, այնուհետև՝ ԲԹ, էջ 83-90, ԲՊ, էջ 145-151: Հետագայում տեղ է գտել ԵԺ II, 3-7 և հետմահու հրատարակված բազմաթիվ ժողովածուներում:

«Մարոն», ինչպես նշված է բանաստեղծի կենդանության ժամանակ եղած բոլոր երեք հրատարակություններում, գրվել է 1887 թ. և պետք է համարվի Թումանյանի ամենավաղ ստեղծված պոեմը: Սակայն բանաստեղծի առաջին գրքում (ԲՄ I, 1890) այն տեղ չգտավ՝ ըստ երևույթին տպագրության համար դեռ լրիվ պատրաստ չլինելու պատճառով: Ինքնագրերը չեն պահպանվել:

Պոեմի առաջին՝ 1892 թ. հրատարակությունը (ԲՄ II) ունի «Մարո (Գյուղացի մանկան պատմությունը)» վերնագիրը: Երկրորդ տպագրության (ԲԹ) ժամանակ պոեմը ենթարկվել է կառուցվածքային և լեզվական էական վերամշակման (ավելորդ կենցաղային մանրամասների կրճատման հաշվին 204 տողի փոխարեն մնացել է 158, զգալիորեն պակասել են լեզվի բարբառային տարրերը, վերացվել տաղաչափական անհարթությունները): Սակայն պոեմի այս նոր տարբերակն էլ հետագայում չբավարարեց հեղինակին, և այդ է պատճառը, թերևս, որ այն չմտավ 1908 թ. ԲԲ ժողովածուի մեջ:

«Մարոյի» վերջնական տարբերակի մեջ (ԲՊ, դարձյալ 158 տող) 2-րդ գլխում կրճատվել է մի քանի տող, իսկ վերջում ավելացվել Մարոյի մոր ողբը («Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան...» տողով սկսվող հատվածը՝ ընդամենը 8 տող): Ձգտելով ուժեղացնել գյուղաշխարհի մարդու բնական պատումի տպավորությունը, Թումանյանը պոեմի լեզվի մեջ մտցրել է նոր փոփոխություններ (հատկապես էս, էն ձևերն ու նրանցով կազմված բառերը):

Ներկա հրատարակության մեջ իբրև հիմնական տեքստ տպագրվում է պոեմի վերջնական խմբագրությունը ԲՊ-ից: Առաջին տպագրության

տեքստը, նկատի ունենալով նրա զգալի տարբերությունները, տրվում է նույնպես ամբողջությամբ՝ տարբերակների բաժնում, իսկ ԲԹ-ի բնագրի շեղումները վերջնական խմբագրությունից տրվում են իբրև տեքստային տարբերություններ: Ցույց է տրվում նաև Թումանյանի աշխատանքը պոեմի առանձին հատվածների վերամշակման ուղղությամբ (առաջին մասը «Լուսաբեր» դասագրքի և վերջին հատվածը՝ ԲՊ-ի համար):

«Մարոն» պոեմի կենսական հիմքը նահապետական գյուղաշխարհում աղջիկների վաղահաս բռնի ամուսնության և ընդհանրապես կնոջ ստրկական վիճակի փաստերն են, որոնց մասին մի քանի տարի անց Թումանյանը հատուկ գրել է նաև «Բորչալվում» ակնարկի եզրափակիչ մասում: «Ժողովրդի բարոյական ու տնտեսական կյանքը ճանաչելու համար մի գեղեցիկ միջոց, մի հեշտ չափ կա – այդ կինն է,– կարդում ենք ակնարկում:– Կնոջ վիճակը հայտնում, ցույց է տալիս ինչպես անհատի, այնպես և հասարակության աշխարհայեցության սահմանը, զարգացման աստիճանը: Բորչալվում կինը դեռ դատապարտված է ավանդական արհամարհանքին, իբրև «առաջին մեղքի պատճառ», «գժոխքի դուռը», նզովված բոլոր սրբերից ու սրբություններից» (ԵԺ VI, 70):

«Մարոն» ներկայացնում է կնոջ այդ անարգված վիճակի մի ողբերգական դրվագ՝ դիտելով այն որպես նահապետական կյանքի և ըմբռնումների բնական հետևանք: Պոեմի գրության կոնկրետ շարժառիթի մասին պահպանվել է հեղինակի վկայությունը՝ «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» գրառման մեջ: Այստեղ նշված է. «1. Զուռնաչի Սաքոյի աղջկա պատմությունը և «Մարոն» (ՈՒՀ 2, 420): Ինչպես տասնամյակներ առաջ վկայել են Ն. Թումանյանն ու Ա. Ինճիկյանը, Անտոնյան Սաքոյի դստեր հետ կապված «նույն դեպքը մինչև այժմ էլ Դսեղում պատմում են» (ԵԺ II, 357):

«Մարոյի» առաջին խմբագրության հեղինակային ծանոթագրությունները, որոնք ԲՄ II-ում զետեղված են տողատակում, սույն հրատարակության մեջ տրվում են այդ տարբերակից հետո՝ նշելով բացատրվող բառերի և արտահայտությունների տողահամարները:

44-րդ տող. Մարոյին ինը տարեկան ներկայացնելը պատահական չէ: Ազգագրական աղբյուրներում նշվում է, որ Հայաստանի տարբեր շրջաններում աղջիկներին նշանում էին ինը տարեկանում: Ինչպես գրում է Ե. Լալայանը, Զանգեզուրում «Ութ կամ ինը տարեկան աղջկան արդէն նշանագրում են և հազիւ տասնումեկ կամ տասներկու տարեկան դարձած ամուսնացնում» (Զանգեզուր, «Ազգագրական հանդէս», Դ գիրք, 1892, հմր, 2-րդ, էջ 66):

54-րդ տող. Այս տողի համար Թումանյանը գրում է, որ նշանակում է,

«թե ձեր աղջկան ուզում ենք» (տե՛ս ս.հ., էջ 174)։

Հարսանեկան ծեսի ազգագրական նկարագրություններում ևս նշվում է, որ խնամախոսները տանտիրոջը ողջունելուց հետո ասում էին, թե՝ եկել ենք Ձեր օջախից մի բուռ հող վերցնելու. «Դէհ մըտալ էնք էս օճախէն մին հափուռ վէղ եօր օնինք» (Լալայան Ե., «Ազգագրական հանդէս», գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 121)։

Բորչալուի գավառում խնամախոսն աղջկա հորն ասում էր. «Եկել եմ քո Օջախից մի բուռ հող տանելու» («Ազգ, հանդէս», IX գիրք, 1902, Թիֆլիս, էջ 210)։

75 տող. Հինա դնում էին հարսանիքին նախորդող ուրբաթ օրվա երեկոյան հարսի տանը, ընթրիքից հետո։ Դա ուներ չարխափան նշանակություն և երջանիկ բախտի խորհրդանիշն էր։

Հարսնացուի ձեռքերը հինա դնելով՝ ավարտվում էր նրա ազատ աղջկական կյանքը և հաջորդ օրվանից սկսվում էր նոր կյանք մտնելու ընթացքը։

Ակնի հարսանեկան երգերում ասվում է.

Ոսկի ամանի մեջ հինա դրեցին,
Արծաթե սանրով խոպոպս քակեցին։

(Շամամյան Ն., Հինայադրման խորհուրդը հայոց հարսանեկան ծիսակարգում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, հմր. 3, էջ 169-178)։

Հարսանեկան ծիսաշարի այս և այլ դրվագներ մյուս պոեմներում Թումանյանը, թվում է, պատահաբար չի հիշում. ենթիմաստն այն է, թե եթե դրանք տեղին և պատեհությամբ չեն կատարվում, երջանկության փոխարեն դժբախտություն են բերում։

78-80 տողեր. Պատկերված է Պսակի եկեղեցական արարողության այն պահը, երբ քահանան միմյանց հավատարիմ մնալու հարցն է ուղղում փեսային և հարսին.

«Նախ հարցանէ փեսային երիցս անգամ
Որդեակ իմ, մինչև ի մահ տէր ես։
Փեսայն ասէ
Այո՝ Հայր Սուրբ, տէր եմ՝ հրամանաւն Աստուծոյ»։
Ապա հարցանէ հարսին՝ երիցս անգամ
Որդեակ իմ, և դու մինչև ի մահ հնազանդ ես։
Հարսն ասէ
Այո՝ Հայր Սուրբ. հնազանդ եմ հրամանաւն Աստուծոյ։

(Մաշտոց, յորում աւանդին Սրբազան արարողութիւնք ազգիս, Ս. Էջմիածին, 1894, էջ 138)։

Եվ պոեմում հետևում է հարսի լռությունը՝ «Լուռ կանգնած էր միշտ Մարոն...»

Այս կախման կետերը երկու բան կարող են նշանակել՝ կա՛մ մանկահասակ աղջնակը ոչինչ չի հասկանում կատարվածից, կա՛մ, որ ավելի հավանական է, գալիք ողբերգության գուշակն են: Իզուր չէ, որ պոեմի առաջին տարբերակում դրան հաջորդող տողերը վերջնական տարբերակում Թումանյանը բաց է թողել: Իսկապես, քահանայի հորդորները՝ ուղղված Մարոյին, պարզունակ կդարձնեին պահի տխուր խորհուրդը:

90-րդ տող. «Բըժժանքը» ծիսա-մոգական արարողություն էր՝ մեկին չարից զերծ պահելու կամ չարով պատժելու համար: Սա. Մալխասյանցը բառը բացատրում է այսպես. «Բժժանք. Հների հասկացողությամբ՝ որևէ գեղ կամ իր, որ եթէ մարդ իւր վրայ կրէր՝ ազատ կմնար հիւանդութիւններից, պատահարներից կամ աչքով տալուց: Հին բուժական միջոց, յուռութք. կախարդութիւն, վհկութիւն» (Հայերեն բացատրական բառարան, հտ. 1-ին, Երևան, 1944, էջ 368):

139-140 տողեր. Եկեղեցական ընդունված կառուցվածքով և ժողովրդական հավատալիքով ինքնասպաններին, ջրահեղձներին և անբնական տարբեր ձևերով մահացածներին չէին հուղարկավորում եկեղեցական ծեսով, այլ թաղում էին բնակավայրից դուրս՝ ամայի որևէ վայրում:

Ժողովրդական այս հավատալիքն առավել ընդհանրացած է արտահայտվել «Մարոյի» առաջին տարբերակի 185-194 տողերում, ուր ասվում է, որ Մարոյին առանձին մի տեղում թաղեցին, որովհետև մահանալուց առաջ վերջին հաղորդություն չէր ստացել, և նրա մեջ չարքերն էին բուն դրել (տե՛ս այս հատորի 169 էջը):

ԼՈՌԵՅԻ ՍԱՔՈՆ
(էջ 18, 178) (ԵԼԺ 3, էջ 15)

Առաջին անգամ ԲՄ I, էջ 5-20: Պոեմի երկրորդ տարբերակը՝ առանձին գրքով և «փոփոխված» նշումով՝ Թիֆլիս, 1896, 24 էջ: Երրորդ տարբերակը՝ ԲԹ, էջ 131-139, այնուհետև՝ ԲԲ, էջ 150-157, ԲՊ, էջ 153-161: Պոեմի երեք ամբողջական տպագիր տարբերակները, որոշ ձեռագիր հատվածների հետ միասին, տեղ են գտել ԵԺ II, էջ 11-18, 297-318, 360-366: Հեղինակի կենդանության ժամանակ տպագրված երեք տարբերակների վերջնական ինքնագրերը չեն պահպանվել:

Ներկա հրատարակության հիմնական բաժնի համար հիմք է ընդունվել ԲՊ բնագիրը: Պոեմի 1890 և 1896 թթ. տպագրված խմբագրությունները,

ինչպես նաև պահպանված երեք ինքնագրերը (պահվում են ԳԱԹ, Թֆ №143, №144, №145 (2 ա, բ, գ), №146 (5ե) և սևագիր հատվածները, տեղադրվում են տարբերակների բաժնում՝ ժամանակագրական կարգով:

«Լոռեցի Սաքոն» Թումանյանի առաջին պոեմներից է, որի վրա նա ընդմիջումներով աշխատել է երկար տարիներ: Առաջին տարբերակը գրվել է 1889 թվականին, որի մասին կա համապատասխան նշում ԲՄ I հրապարակման վերջում: Պոեմի մտահղացման համար հիմք ծառայած կենսական փաստի և նախատիպի մասին կա Թումանյանի վկայությունը «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» գրության մեջ. «Ռամազի Մաթոսը և Լոռեցի Սաքոն» (ՈՒՀ 2, 420): Նույնը Թումանյանը հավաստել է նաև 1910-ական թթ. վերջին շարադրած ինքնակենսագրական նոթերում. «Մաթոսի խելագարությունը – Լոռեցի Սաքոն: Ջալալօղլի էի էս ժամանակ, թե՞ Թիֆլիս» (Ն. տ., 408): Այս գրառումից երևում է, որ պոեմի համար ազդակ ծառայած դեպքը տեղի է ունեցել 80-ական թթ. առաջին կեսին, երբ ապագա բանաստեղծը սովորում էր Ջալալօղլում (1879-1883) և ապա՝ Թիֆլիսում (1883-1886): Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության 2-րդ հատորի ծանոթագրողները (Ն. Թումանյան, Ա. Ինճիկյան), որոնք հենվել են այն ժամանակ՝ 1930-ական թթ. դեռ կենդանի մնացած ականատեսների վկայության վրա, ավելացնում են. «Այդ դեպքը (Ռամազի Մաթոսի – խմբ.), ինչպես նաև նախապաշարումների և սնոտիապաշտությունների հիման վրա վախից խելագարվելու ուրիշ դեպքեր, մինչև այժմ էլ Դսեղում և շրջակա գյուղերում ծերերը պատմում են: Պոեմի համար Թումանյանն օգտագործել է նաև իր հորաքրոջ՝ Թալալ նանի պատմածները Ջալալօղլում՝ աշակերտական տարիներին – սատանաների և քաջքերի մասին, հիշում են բանաստեղծի դասընկերները» (ԵԺ II, 359): Դրանցից մեկն է Մելքոն Ասլիբեկյանի վկայությունը, ըստ որի բանաստեղծը հետագայում ասել է. «...Տատիս պատմածների արդյունքն է «Լոռեցի Սաքոն» (տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 83, 100):

Թումանյանի ժամանակակիցներից Տիգրան Փիրումյանը 1891 թ., բանաստեղծի պատմածների հիման վրա, ի թիվս այլ երկերի, որոշ տվյալներ է հաղորդում նաև այս պոեմի մտահղացման և տպագրության հանգամանքների մասին. «Լոռեցի Սաքոն Հովհաննես Թումանյանի ծառան է եղել, իսկ Ալեքը – Դսեղ գյուղի մի հայտնի ավազակ: Հեղինակին առաջին անգամ գլխի է գցել իր գրվածքները տպագրել Լևոն Մելիք-Ադամյանը, որը պատահմամբ նրա պատուհանի վրա «ընկած» գտնելով «Սաքոն» – կարդում է, սքանչանում, թերթում նաև նրա մյուս գրվածքները ու հորդորում է անպատճառ տպագրել» (ԹԺՀ, 346):

Այս տարբեր ու երբեմն իրար հակասող վկայությունների հիման վրա

կարելի է ասել, որ «Լոռեցի Սաքոն» սկզբից ևեթ ծրագրված է եղել ոչ թե իբրև որևէ եզակի դեպքի, այլ որպես նահապետական աշխարհի բնորոշ երևույթներից մեկի՝ անհավասարության ողբերգական հետևանքների գրական արտացոլում: Պոեմի իրական նախատիպերից ոչ մեկը, իհարկե, նույնությամբ չի մտել ստեղծագործության մեջ, այլ ձևափոխվել է գեղարվեստական երևակայության և ընդհանրացման սկզբունքներով: Մի շարք վերամշակումներից հետո հասցվելով բարձր կատարելության, «Լոռեցի Սաքոն» ներկայանում է մեզ իբրև մարդու վրա բնության խորհրդավոր ու չճանաչված ուժերի ներգործության մասին պատմող համապարփակ մի երգ:

Դեռ նախքան ԲՄ I ժողովածուի տպագրության ավարտվելը և տարածվելը (1890 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) Թումանյանն իր պոեմի ձեռագիրը կարդացել է բարեկամների շրջանում՝ հանդիպելով տարբեր գնահատականների: Այդ մասին նա հանգամանորեն գրել է 1890 թ. հուլիսի 29-ին Ան. Աբովյանին հղած նամակում: Այդ նամակից իմանում ենք, որ Ղ. Աղայանը պնդել է, «թե բոլորովին հոգեբանությանը հակառակ է Սաքոյին խելագարեցնելը», այնինչ «մի քանի ուսանողներ և գրողներ մի շատ հաջողված հոգեբանական ճշմարտություն են համարել և հավանել», իսկ Պ. Պռոշյանը հիացած բացականչել է. «Հրաշալի է» (ԵԺ V, 19-20):

«Լոռեցի Սաքոն», հատկապես հերոսի ճակատագրի հավանականության խնդիրը վեճերի նյութ է դարձել նաև ընթերցողների շրջանում: Բանաստեղծի ազգական և դասընկեր Բագրատ Թումանյանը 1890 թ. վերջին Մոսկվայից գրած նամակներում հայտնում էր, որ տեղի հայ ուսանողները պոեմի հերոսի մասին «ասում են, թե դա մի փոքր անբնական է, թե նա այդպես շուտով չէր կարող խելագարվել և այլն» (տես ՈՒՀ 2, 282, ԳԱԹ, ԹՖ, №46): Անդրադառնալով այդ կարծիքներին՝ բանաստեղծը նույն թվականի նոյեմբերի 29-ին Ան. Աբովյանին գրում էր. «Բայց մի շատ համառ կարծիք կա (սրանց թիվը մեծ է, և առհասարակ լուսավորվածներն են) «Լոռեցի Սաքոյի» մասին, թե նա լինելով առողջ և անելիքսուզ «իգիթ», չէր կարող վախենալ քաջքերից և խելագարվել: Ես թեև շատ պակասություն եմ խոստովանում իմ գրքում, բայց այս կարծիքին ես հավան չեմ: Դու խո լավ գիտես, որ կան մարդիկ – իգիթ մարդիկ, որ աշխարհը վրա գա – աչք չեն ճպիլ, ամա ինչ անես մեռելից, անշունչ մեռելից վախում են, ապանես՝ մի ավերակի մոտից մենակ անց չեն կենալ և այլն, և այլն» (ԵԺ V, 36):

Այնուամենայնիվ, բարեկամների և ընթերցողների քննադատական դիտողությունները ստիպեցին Թումանյանին մտածել պոեմի էական վերամշակման, հերոսի հոգեբանական զարգացման ավելի խոր հիմնավորման մասին (թեև դրանից հետո էլ, նույնիսկ պոեմի վերջնական

տարբերակի առիթով ևս քննադատները, օրինակ՝ Լեոն, Պ. Մակինցյանը, Գ. Բալասանյանը, Սաքոյի խելագարվելը համարել են «հոգեբանական անհնարություն» (մանրամասները տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, 2-րդ հրատ., 1986, էջ 113-116)։ 1893 թ. նոյեմբերին Ղ. Աղայանին գրած նամակում Թումանյանը հայտնում էր. «Ի դեպ, ասեմ, որ ետ եմ նայում հիմա և հին գրածներս ուղղում. առաջին հատորից արդեն ուղղել եմ «Լոռեցի Սաքոն» և «Արև ու Լուսինը»։ Եթե հիշում եք, «Լոռեցի Սաքոյի» մեջ դուք մի սխալ էիք ցույց տալիս, այդ սխալը ես այժմ եմ գլխի ընկել և ուղղել. այդ պոեման կլավանա» (ԵԺՎ, 79)։ Այստեղ խոսքն արդյո՞ք վերաբերում է 1890 թ. Աղայանի առարկությանը Սաքոյի խելագարվելու հիմնավորված չլինելու մասին, թե՞ մի կոնկրետ դիտողության,- դժվար է ասել։ Սակայն աշխատանքը պոեմի վերամշակման ուղղությամբ շարունակվեց, ըստ երևույթին, նաև հետագա ամիսներին, մինչև որ ստեղծվեց պոեմի՝ առանձին գրքույկով լույս տեսած տարբերակը (գրքույկի գրաքննական թույլատվությունը՝ 1896 թ. մարտի 6-ին)։ Նոր հրատարակության մեջ պոեմն զգալի չափով կերպարանափոխվեց, մտան նկարագրական և հոգեբանական բազմաթիվ նոր հատվածներ, որոնք պետք է հիմնավորեին հերոսի ներքին զարգացման ընթացքը։ Պոեմը առաջին տարբերակի 287 տողի փոխարեն այժմ ուներ 476 տող։

Սակայն առանձին հրատարակությունից ոչ շատ անց բանաստեղծն սկսում է մտածել պոեմի նոր վերամշակման մասին։ Դրա վկայությունն են, նախ, գրքույկի երկու տարբեր օրինակների վրա նրա կատարած բազմաթիվ ուղղումները, կրճատումներն ու հավելումները, որոնք առաջին անգամ ամբողջ ծավալով վերարտադրվում են այս հրատարակության մեջ։ Հավանաբար, 1890-ական թթ. վերջին են վերաբերում նաև պոեմի պահպանված Ա և Բ ինքնագրերը, որոնց մեջ բանաստեղծը մի շարք դեպքերում մոտենում է վերջնական տարբերակին, բայց շատ հատվածներում էլ դեռ հեռու է նրանից։ Ա ինքնագրի վերևը և Բ ինքնագրի վերջում կա 1889 նշումը, բայց դա, անշուշտ, ոչ թե այդ ինքնագրերի տարեթիվն է, այլ վերաբերում է պոեմի առաջին մտահղացմանն ու գրությանը։ Սակայն պոեմի 1903 թ. և հետագա հրատարակությունների մեջ բանաստեղծը հանեց գրության տարեթիվը (ըստ երևույթին, դրա պատճառն այն էր, որ պոեմի վերջնական տարբերակն արդեն շատ էր հեռացել նախնական խմբագրությունից և, հետևաբար, չէր կարող նշվել 1889 թվականով)։ Թեև Ա և Բ ինքնագրերի մեջ շատ հատվածներ կրկնվում են, բայց նրանք այս հատորում վերարտադրվում են ամբողջությամբ՝ բանաստեղծի կատարած աշխատանքի բնույթն ու ընթացքը լրիվ ներկայացնելու նպատակով։

Դարասկզբին, ամենայն հավանականությամբ 1902 թ., երբ Թումանյանը պատրաստում էր իր բանաստեղծական գործերի նոր ժողովածուն, մի անգամ ևս վերամշակում է «Լոռեցի Սաքոն»: Այդ ժամանակ է ստեղծվել պոեմի երրորդ տարբերակը, որը մտավ ԲԹ-ի մեջ և հայտնի է իբրև հիմնական բնագիր: Պոեմի ծավալը մեծապես կրճատվեց, մնաց ընդամենը 188 տող: Հրաժարվելով նախորդ տարբերակներում մեծ տեղ գրավող և հովվական կյանքի ու կենցաղի մասին պատմող հատվածներից՝ բանաստեղծն այժմ իր ուշադրությունը կենտրոնացնում է հերոսի հոգեբանական զարգացման, նրա խելագարվելը գեղարվեստորեն հիմնավորելու վրա: Զգալի չափով սեղմվեցին նաև բնանկարները, իսկ այն, ինչ մնաց, ակտիվորեն ծառայում է հոգեբանական թեմայի զարգացմանը: Այդ նպատակով էլ Լոռու ձորի նկարագրությունը տարվեց առաջ և դարձավ պոեմի նախերգանքը՝ սկզբից ևեթ ստեղծելով հերոսի հետագա զարգացմանը նպաստող բնական միջավայրի վառ պատկերացում:

Սակայն, ինչպես ցույց են տալիս պահպանված նյութերը, 1903 թ. հետո էլ Թումանյանը մտածել է պոեմը վերամշակելու և լրացնելու մասին: Դա երևում է ԲԹ-ի մի օրինակի վրա հեղինակի մտցրած բազմաթիվ սևագիր լրացումներից ու ճշտումներից, որոնք նույնպես առաջին անգամ լրիվ ներկայացվում են սույն հրատարակության մեջ: Այդ նյութերը ցույց են տալիս, որ շատ դեպքերում Թումանյանը ցանկացել է վերադառնալ պոեմի նախորդ տպագիր և անտիպ տարբերակներին՝ այնտեղից վերցնելով ամբողջ հատվածներ, կարծեք «ափսոսալով», որ ԲԹ-ում հրաժարվել է դրանցից: Ավելացվում են մի շարք նոր հատվածներ՝ մեծ մասամբ հովվական կյանքի և կենցաղի պատկերներով: Այդ հավելումների մեծ մասը ամփոփված է Գ ինքնագրում, ուր բանաստեղծը գրքի լուսանցքներից ճշտումներով արտագրել է պոեմի մեջ մտցվելիք նոր հատվածները: Այդ հիման վրա սույն հրատարակության մեջ Գ ինքնագիրը զետեղված է ԲԹ-ի վրա կատարած ուղղումներից հետո:

Բանաստեղծի այս տատանումներն ու որոնումները որևէ վերջնական արդյունքի չհանգեցրին, և «Լոռեցի Սաքոյի» նոր ամբողջական տարբերակ չստեղծվեց: ԲԲ-ում և ԲՊ-ում արտատպվեց ԲԹ-ի տեքստը՝ լեզվական ոչ մեծ փոփոխություններով (այս-ի և այն-ի փոխարեն՝ էս և էն):

«Լոռեցի Սաքոյի» ստեղծագործական պատմության, նրա վրա կատարած աշխատանքի պատկերը մի շարք կողմերով դեռ լրիվ պարզաբանված չէ: Այդ պատճառով էլ առաջադրվել են հաճախ տարբեր, իրար հակասող տեսակետներ (տես, մասնավորապես, Զ. Ավետիսյան, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, 1973, էջ 146-196: Ս. Մելքոնյան, «Լոռեցի Սաքոն» պոեմի ստեղծագործական պատմության մի

քանի հարցեր», ՍԳ, 1975, №3, էջ 163-167):

Պոեմի առաջին և երկրորդ հրատարակությունների մեջ հեղինակը տողատակերում մի շարք ծանոթագրություններ է տվել՝ բացատրելով գյուղական կենցաղի և բարբառի հետ կապված բազմաթիվ հասկացություններ և բառեր: Սույն հրատարակության մեջ այդ բացատրությունները տրվում են համապատասխան տարբերակներից հետո՝ ըստ ծանոթագրվող բառերի և արտահայտությունների տողահամարների:

Ա ինքնագրի 95 տողը՝ «Ծաթերա քարի էն հարսի նման», ակնարկում է Լոռու Ծաթերա սարում գտնվող քարը, որը նման է կովկիթը գլխին բռնած կնոջ:

13-14-րդ տողեր. Համաձայն ժողովրդական հավատալիքների՝ անձավները, խոր փոսերը և ձորերը դժոխքի նախադուռն էին համարվում, ուր ապրում էին չար ոգիները:

39-րդ տող. Հարսանեկան ծիսաշարի կարևոր դրվագներից էր: Խոսքակապից հետո աղջկա մայրը փեսացուին առանձին սենյակ էր տանում և հյուրասիրում «մեղրով ձվածեղով» (Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 186): Զոքանչը այնուհետև փեսային պարբերաբար պատվում էր հատուկ նրա համար պատրաստած ձվածեղով, որտեղից էլ՝ «Զոքանչի ձվածեղ» արտահայտությունը:

76-րդ տող. Ըստ ժողովրդական հավատալիքի՝ սատանաների ոտնաթաթերը հետ են շրջված: Այստեղից էլ՝ «ծուռ ոտներով» արտահայտությունը (Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 299):

77-84-րդ տողեր. Այս և հաջորդող համաբնույթ տողերում Թումանյանը հարազատորեն վերարտադրել է ժողովրդական մի հավատալիք, ըստ որի՝ շարքերը և քաջքերը հաճախ մարդկանց խաբեությամբ հրապուրում և տանում են հարսանիք, հետո պարզվում է, որ դա սատանայական խաղ է: Ե. Լալայանը պատմում է Վարանդայում տարածված մի ավանդություն, թե ինչպես՝ «մի զուռնաչու ձայն են տալիս, թէ արի գնանք, հարսանիք կայ՝ սա վեր է կենում և առաջնորդի հետ գնում Քաջքաձորը: Մէկ էլ տեսնում է, որ մի հարսանիք եկաւ, ինքն էլ սկսում է իւր զուռնան ածել: Քաջքերը երկար պարում են»: Նվագողը տեսնում է, որ այդ կանանց շորերը իրենց հարևան կանանց զգեստներին շատ նման են: Ծածուկ կտրում է մի-մի կտոր. «Երբ առաւօտեան աքաղաղը կանչում է, բոլոր քաջքերը անյայտանում են և ինքը մնում է այդ ձորում մէն մենակ»: Վերադառնալով տուն՝ պարզում է, որ կտրված կտորները հարևանների կանանց զգեստներից են, այսինքն՝ քաջքերը դրանք հագնում են գիշերները և լուսադեմին տանում դնում տեղը (Վարանդա, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 223):

Համանման հավատալիքներ են հիշվում նաև Զանգեզուրից և Զա-

վախքից:

«Սատանաները սաստիկ սիրում են պարել և շատ անգամ «դաուլ զուռնա» ածողներին խափում տանում են մի ընդարձակ այր կամ ջրաղաց և կամ մի այլ տեղ. ածել են տալիս և մինչև աքաղաղի առաւօտեան կանչը պարում» (Ե. Լալայան, Ջավախք, «Ազգագրական հանդես», գիրք առաջին, Շուշի, 1895, էջ 325):

Զանգեզուրում «Շատ հաճախ գյուղերում պատմում էին, որ այսինչ մարդը գիշերը տուն վերադառնալիս հանդիպել էր հարսանիքի: Մեծ ամբոխով, զուռնա-դավալով, պար ու երգով հարսանիքը եկել էր գիմացը: Դա քաջկերի հարսանիքն էր լինում, որով նրանք աշխատում էին իրենց մեջ գրավել մարդուն» (Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 301):

91-92-րդ տողեր. Ժողովրդի մեջ հավատալիք կար, որ սատանաները մարդկանց հրապուրում են նաև հորաքրոջ ձվածեղով և նանի պատրաստած բլիթով:

141-142-րդ տողեր. Մարդկանց հոգեբանության վրա անհավատության թողած ազդեցության մասին կարդում ենք նաև Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպում. «Բայց էդ սրտոտ տղերքը գիշերները գերեզմանատան կամ մի քանդված եկեղեցու մոտով անց կենալիս՝ որ մի ցից քար են տեսնում կամ մի շվաք, էդ հասարակ բաները նրանց աչքերումն էնպես բաներ են դառնում, որ չափազանց երկյուղից սիրտները ճաքում է, լեզիները պատռվում, մի քանի օր չի քաշում, մեռնում են: Իսկ Արությունը նրան լրացնում է. «Նա (գյուղացին) էդպես գեպքերում տեսնում է էն, ինչ որ չկա. նա ձայն էլ է լսում, թեպետ ոչ մի ձայն հանող չկա: Նրա երևակայությունը խանգարվում է, և ինչ որ պիտի զգայարանքներից ստանար, երևակայությունն է թելադրում զգայարանքներին: Նա տեսնում է գիշերվա մթնումը մի հասարակ շվաք: Նրա երևակայությունն էդ շվաքից մի հրեշ է ստեղծում, աչքն էլ էդպես է տեսնում... Ընկնում է հրեշի ճանկը և ուշաթափ վայր ընկնում...» (Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1961, էջ 72, 74-75):

Էդ. Ջրբաշյանը իրավացիորեն նկատում է, որ այս հատվածի և «Լոռեցի Սաքոյի» միջև նմանությունը «շատ մեծ է, և դա պատահականություն չէր, երկու գրողներն էլ ելնում էին նահապետական իրականության մերձավոր և զգաստ իմացությունից» (Է. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1986, էջ 115-116):

Տարօրինակ է, որ Աղայանը, այդքան լավ իմանալով հայ նահապետական գյուղացու հոգեբանությունը, այնպես էլ մինչև վերջ մնաց այն համոզմունքին, թե Թումանյանի պոեմում Սաքոյի խելագարվելը հոգեբանորեն հիմնավորված չէ:

165-170-րդ տողեր. Արտահայտվել է այն հավատալիքը, թե չարքերը մարդուն բռնում և հեծելով քշում էին՝ հարվածելով օձի մտրակով, իսկ քաջքերը պարեցնում էին իրենց հարսանքատեղում: Սա առավել արտահայտիչ է ներկայացված 1-ին տարբերակի 275-278 տողերում:

Ի տարբերություն չարքերի և քաջքերի, որոնք մթին և խորը տեղերում էին լինում, ալքերը, ըստ ժողովրդական հավատալիքի, մնում էին ջրի հատակում և մակերես էին ելնում հուզված ալիքների հետ:

Եթե պոեմի վերջնական տարբերակում ալքերը հիշվում են միայն մեկ անգամ՝ 190-րդ տողում, ապա նախորդ երկու տարբերակներում, որոնցում ավելի մեծ է կենցաղագրական շերտը, ալքերը մի քանի անգամ են հիշվում. առաջին տարբերակում՝ երեք, իսկ երկրորդում՝ երկու: Այս համամասնությունը ևս ցույց է տալիս, թե ինչպես է Թումանյանը ժողովրդական կյանքի և հավատալիքների կենցաղային մանրամասներից հասնում բանաստեղծական տպավորիչ սեղմության:

Ղ. Ալիշանը, վկայակոչելով Գրիգոր Տաթևացուն, գրում է, թե ալքերը հավերժահարսերին հիշեցնող ոգիներ են և բնակվում են «ի ջուրս» (Հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, էջ 222):

Թումանյանը պոեմի առաջին տարբերակի ծանոթագրության մեջ ալք բառը բացատրում է այսպես. «Ջրերում բնակվող ոգիներ են», իսկ երկրորդ տարբերակի ծանոթագրություններում ջրային ոգիներին անվանում է հավերժահարս:

Պոեմի առաջին տարբերակի 260-264 տողերում ասում է, որ գիսախռիվ ալքերը դուրս են թռչում, որ Սաքոյին տանեն ջրի հատակը: Երկրորդ տարբերակում գիսախռիվը դարձվել է հերարձակ: Երկու տարբերակների նկարագրություններն էլ բնորոշ են ջրահարսերին, որոնք դյութում և ջրի հատակն էին տանում իրենց զոհերին:

Նման նկարագրությունը բնորոշ է նաև ժողովրդական պատկերացումներին. «Կանայք սիրում էին շրջել հերարձակ կամ մազերը հյուսած» (Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 299):

Պոեմի 2-րդ տարբերակ, 454-455 տողեր. Թումանյանի թվարկած չար ոգիները՝ դևեր, չարքեր, սև սատանա, քաջք ու ալք, գրեթե նույն հերթականությամբ հիշում է նաև 15-րդ դարի հեղինակ Առաքել Սյունեցին.

Դևք, Սատանայ, Քաջք և Ալին,
Որոց յահէն հոգիք հալին

(Ղ. Ալիշան, Հին հաւատք, էջ 425):

Պոեմի առաջին երկու տարբերակներում խելագար Սաքոն առավոտյան հայտնվում է տնեցիներին և ապա իսկույն փախչում տնից: Պոեմի

վերջնական խմբագրության մեջ այս հատվածը չկա. բանաստեղծը բնության զավակ իր հերոսին թողել է բնության հետ մեն-մենակ...

ԱԼԵՔ
(էջ 26, 244) (ԵԼԺ 3, էջ 25)

Առաջին անգամ՝ ԲՄ I, էջ 42-54: Դրանից հետո հայերեն այլևս ոչ մի անգամ չի արտատպվել՝ ոչ հեղինակի կենդանության ժամանակ, ոչ էլ հետմահու: Միայն պոեմի փոքրիկ մի հատված (43-52 տողեր՝ «Ալին ծեծեց... Ալին տարավ...») բանաստեղծը մտցրել է 1893 թ. տպագրված «Դաշնակներ» գրքույկի մեջ: Այսպիսով, ներկա հրատարակությունը «Ալեքի» հայերեն երկրորդ (այժմ՝ երրորդ) տպագրությունն է, որը կատարվում է առաջինից հարյուր տարի հետո: Պոեմը թարգմանվել է ռուսերեն (թարգմանիչ՝ Լ. Ումանեց) և մտել է դարասկզբին հրատարակված ժողովածուի մեջ (Современные армянские поэты. Под редакцией Л. Уманца и Ар. Дервиша. М., 1903, с. 25-30): «Ալեքը», ինչպես նշվում է ԲՄ I-ում, գրվել է 1889 թ.:

Պահպանվել է պոեմի ինքնագրի մի մասը (ԹԹԳԳ1079/5-2-ում). դա այն տետրն է, որից, ամենայն հավանականությամբ, կատարվել է ԲՄ I գրքի շարվածքը: Տետրի էջերը կիսված են երկու մասի, և մեզ հասել են միայն վարի մասերը: Այդ պատճառով մեր ձեռքի տակ է այս պոեմի, ինչպես նաև նույն հատորի մեջ մտած մի քանի ուրիշ գործերի, ինքնագրի մի մասը միայն: Պահպանված մասերը համապատասխանում են տպագրված տեքստի 15-26, 39-48, 62-80, 92-102, 113-122, 131-140, 152-162, 174-186, 199-210, 222-232 տողերին: Համեմատությունը ցույց է տալիս, որ գրքի տպագրության ընթացքում հեղինակը պոեմի մեջ մտցրել է առանձին փոփոխություններ (տե՛ս բնագրային տարբերությունների բաժինը):

«Ալեքը» հայրենի լեռնաշխարհում վաղ տարիների բանաստեղծի դիտած իրողությունների և տպավորությունների արդյունքն է: Լեռնային գյուղերի բնակիչների վրա կատարվող ավազակային հարձակումների, թալանի և առևանգումների, ազգային թշնամանքի ու վրիժառության դեպքերը եզակի չէին հայրենի գավառի կյանքում: Բացի այս պոեմից, Թումանյանը այլ առիթներով ևս անդրադարձել է այդ փաստերին: Այսպես, «Բորչալվում» ակնարկի մեջ նա հատուկ խոսում է թուրքական ավազակախմբերի մասին, «որոնք ահով ու սարսափով են անցկացել Բորչալվի վրայից», հիշատակում է նաև, որ «այս ձորերումն էլ անպակաս են եղել հայ իգիթներն ու ավազակները, որոնց ահը դեռ չի անցել» (տե՛ս ՀՀ, 151-152): Մի քանի տարի անց՝ 1898 թ. ամռան և աշնան ամիսներին

Թումանյանը Թիֆլիսի «Новое обозрение» թերթում հրապարակեց իր անստորագիր թղթակցությունները՝ նվիրված Անդրկովկասի տարբեր վայրերում կատարված ավազակային հարձակումներին (տե՛ս ՈՒՀ 3, 319-333):

Հատկանշական է, որ ժամանակակիցները «Ալեքի» կերպարների մեջ տեսել են իրական նախատիպեր: Այսպես, Տ. Վերանյանը բանաստեղծին հասցեագրած նամակում (27 դեկտեմբերի 1890 թ.) այս պոեմի մեջ նկարագրված քահանայի կերպարը ուղղակի կապել է բանաստեղծի հոր՝ Տեր-Թադևոսի բնավորության հետ (ՈՒՀ 4, 295): Տ. Փիրումյանը վկայել է, որ Ալեքի նախատիպը եղել է Դսեղ գյուղից նույնանուն մի երիտասարդ, «մի հայտնի ավազակ» (ԹԺՀ, 346), իսկ Իս. Հարությունյանը գրել է. «Դսեղը մինչև այժմ էլ հայտնի է իր քաջասիրտ «իգիթներով»... Դսեղի որդիքն են նույնպես Լոռում հայտնի հռչակ ունեցող քաջ Ալեքը, Սոսը և ուրիշները, որոնք շարունակ կռվել են թուրք ավազակային խմբերի հետ և «իգիթի» անուն ժառանգել» (Իսահակ Հարությունյանց, Ներսիսյան հոգևոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդությունը, Տփխիս, 1894, էջ 55): Ըստ որոշ տվյալների՝ հեղինակն իր այս երկը նախապես մտադիր է եղել վերնագրել «Անմեղ ավազակ» (տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 291):

«Ալեք» պոեմը լավ ընդունելություն գտավ ընթերցողի և քննադատության կողմից: Բագրատ Թումանյանը բանաստեղծին հաղորդում էր (1890 թ. նոյեմբերի 10-ի նամակում), որ Մոսկվայի հայ ուսանողները «Ալեքի» և «Մեհրու» վրա հափշտակված են» (ՈՒՀ 4, 282), իսկ Մ. Աբեղյանը իր գրախոսության մեջ այդ պոեմները դասում էր Թումանյանի գրքի «ամենագեղեցիկ հատվածների» թվին («Նոր-դար», 1890, №196, հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Է, Եր., 1975, էջ 362): Սակայն իրեն՝ Թումանյանին, պոեմը շուտով չբավարարեց և այդ պատճառով էլ հետագայում փաստորեն դուրս մնաց նրա ստեղծագործական հետաքրքրությունների ոլորտից: Լինելով գրական ուսումնառության և որոնումների շրջանի արտահայտություն՝ պոեմն ուներ ոճի, լեզվի և բանաստեղծական տեխնիկայի շատ թերություններ: Մյուս կողմից, այստեղ Թումանյանը դեռ չի հասել կենսական բարդ երևույթների, մասնավորապես՝ ազգամիջյան հարաբերությունների այն բարձր հումանիստական ըմբռնմանը, որը հետագայում արտահայտվեց նրա քաղաքացիական քնարերգության, «Հին կռիվը» պոեմի, «Ահմադը», «Գրազը», «Ալլահից ղրկված» պատմվածքների մեջ: Այս բոլորով պետք է բացատրել այն փաստը, որ հետագայում Թումանյանն այլևս չի անդրադարձել «Ալեք» պոեմին, և այն մնացել է իր նախնական վիճակում:

«Ալեք» պոեմի հեղինակային ծանոթագրությունները, որոնք ԲՄ I-ում

տրված են տողատակում, մենք զետեղել ենք տարբերակների բաժնում նշելով բացատրվող բառերի և արտահայտությունների տողահամարները:

ՄԵՀՐԻ
(էջ 36, 246) (ԵԼԺ 3, էջ 35)

Առաջին անգամ ԲՄ I, էջ 21-41: Հեղինակի կենդանության ժամանակ ուրիշ հրատարակություն չի ունեցել: Արտատպվել է ԵԺ VI, 24-35:

Պոեմը, ըստ հեղինակի նշումի, գրվել է 1890 թ. և նույն թվականին տպագրվել: Արտատպվում է ԲՄ I-ից:

Պահպանվել է պոեմի ինքնագրի մոտ կեսը (ԹԹԳ 1079/5-2-ում) պատռված ձեռագիր տետրի վարի մասերը, որոնք համապատասխանում են տպագրված տեքստի 11-20, 32-42, 52-62, 78-88, 101-112, 121-132, 146-160, 174-184, 197-208, 219-228, 237-246, 259-268, 279-290, 302-314, 327-340, 356-368, 382-398 տողերին: Համեմատությունը ցույց է տալիս, որ տպագրության ընթացքում հեղինակը շարունակել է փոփոխություններ մտցնել պոեմի մեջ (տես բնագրային տարբերությունները):

«Մեհրին» արևմտահայության կյանքի և ճակատագրի նկատմամբ Թումանյանի քաղաքացիական և ստեղծագործական ակտիվ հետաքրքրության բազմաթիվ արտահայտություններից մեկն է: Սկսելով դեռ վաղ պատանեկան տարիներին գրած մի քանի բանաստեղծություններով այդ հետաքրքրությունը հարատևում է մինչև Թումանյանի գրական-հասարակական գործունեության վերջը: 80-ական թթ. վերջին և 90-ական թթ. Բաֆֆու և Պատկանյանի մարտական ոգով տոգորված երգերից հետո արևելահայ գրականության մեջ սկսվում է հայ ժողովրդի արևմտյան հատվածի կյանքի ու պայքարի հետ կապված թեմաների մշակման մի նոր փուլ: «Մեհրիից» մեկ տարի անց (1891) լույս տեսավ Վրթ. Փափազյանի «Պատկերներ Թուրքահայոց կյանքից» շարքի առաջին հատորը: Արևմտահայության ազատագրության հարցերն զգալի տեղ էին գրավում Շիրվանզադեի «Ջուր հույսեր» (1890), Պ. Պռոշյանի «Սկիզբն երկանց» (1892), Նար-Դոսի «Մեծ գործի սկզբում» («Մահը» վեպի նախնական անավարտ տարբերակը, 1894-1895) վեպերում, Գ. Սունդուկյանի «Ամուսիններ» դրամայում (1889), Մուրացանի «Ինչպես էին մեռնում» պոեմում (1895): 90-ական թթ. կեսերին է վերաբերում նաև Ավ. Իսահակյանի «Մասսա մանուկ» անավարտ և անտիպ մնացած վիպասքը, որը սուլթանական Թուրքիայում արևմտահայության զանգվածային կոտորածների և

ընդհարումների ուղղակի արձագանքն էր: Թումանյանի «Մեհրին» այս շարքի աչքի ընկնող երկերից մեկն էր: Նրա թեմատիկ հրատապությամբ պետք է բացատրել, որ ընդհանուր առմամբ այն լավ ընդունելություն գտավ և՛ ընթերցողի, և՛ քննադատության կողմից (տե՛ս «Ալեք» պոեմի ծանոթագրությունները): Բանաստեղծի երիտասարդ տարիների մտերիմ ընկեր Ան. Աբովյանը 1890 թ. դեկտեմբերի 6-ին Կամենեց-Պոդոլսկից Թումանյանին գրում էր. «Մեհրի» պոեմայի մեջ իմ անձնավորությունս եմ տեսնում: Կհավատաս, սիրելի ընկեր, որ այդ պոեման կարդալով, ես այն աստիճան զգացվեցի, որ լաց եղա... Այստեղ մի փեսա ունենք (Ստեփանի քրոջ մարդը), որը լսելով, ասաց. «Տո էդ հլե մեզ վրա ա գրել, վեր կենանք, ետ կորչենք մեր աշխարհքը, քանդվի սա...» (ՈՒՀ 4, 286): Նույն Ան. Աբովյանը հիշատակում է այս պոեմի նախնական վերնագիրը՝ երկու գլխավոր հերոսների անունով՝ «Մեհրի և Մհե» (տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 291):

Պոեմի ստեղծագործական պատմությունից որոշ տվյալներ է հաղորդում Տիգրան Փիրումյանը, որը դրանք դեռ 1891 թ. գրի է առել բանաստեղծի խոսքերից: Ըստ այդ վկայության՝ պոեմի մի կտորը (IV գլխի՝ «Սիրելի Մեհրի, մնացիր բարով...» տողով սկսվող հատվածը) ինքն ստեղծել է երազում և գրի է առել պոեմից մեկ տարի առաջ, հետո «անգիտակցաբար ու տառ առ տառ վերարտադրել» «Մեհրիի» մեջ: «Այդ գաղտնիքը բացվել է մի երկու ամսից հետո»: Տ. Փիրումյանին բանաստեղծը հայտնել է նաև, որ պոեմը «լավ չէ վերջանում և մտքումը դրել է անպատճառ փոխել, բայց թե ինչ է ուզում տեղը դնել՝ բնավ չգիտե...» (ԹԺՀ, 345):

Սակայն Թումանյանը ոչ այդ տարիներին և ոչ էլ հետո չվերամշակեց իր այս պոեմի վերջը կամ որևէ այլ մաս: Բանաստեղծի հաջորդ ժողովածուների մեջ էլ «Մեհրին» տեղ չգտավ: Պատճառն այն էր, որ, իր քաղաքական հրատապությամբ հանդերձ, պոեմը հենվում էր գերազանցապես գրքային տպավորությունների վրա, իսկ գեղարվեստական մշակման սկզբունքների առումով այն տիպիկ ռոմանտիկական գործ էր, որ իր որակով շուտով չէր բավարարելու ռեալիզմի դիրքերում հաստատված բանաստեղծին: Կարևոր է նաև հետևյալ ստեղծագործական հանգամանքը: «Մեհրիի» հետ միաժամանակ՝ նույն 1890 թ. Թումանյանն սկսեց աշխատել նաև հայ ժողովրդի արևմտյան հատվածի տառապանքի և ընդվզման մասին պատմող մի ուրիշ պոեմի վրա, որն ստացավ «Հին կռիվը» խորագիրը: Ի տարբերություն «Մեհրիի», այս պոեմը հետագայում, մինչև կյանքի վերջն էլ մնաց Թումանյանի ստեղծագործական հետաքրքրության

ոլորտում, մի քանի անգամ վերամշակվեց: Իր պատկերացումներն ու մտորումները արևմտահայության ճակատագրի վերաբերյալ նա արտահայտեց այդ ստեղծագործության միջոցով, և «Մեհրին» մի տեսակ «ավելորդ դարձավ»:

ԲՄ I-ում «Մեհրի» պոեմի տողատակի հեղինակային ծանոթագրությունները սույն հրատարակության մեջ տրվում են տարբերակների բաժնում՝ բացատրվող բառերի և արտահայտությունների տողահամարների նշումով:

114-116-րդ տողեր. Նկատի ունի Հին Կտակարանի «Տոբիթի» գրքի ԺԱ-ԺԲ գլուխները, ուր ասվում է, որ Տոբիթի որդի Տուբին կարողություն ձեռք բերելու համար օտարության է մեկնում: Այնուհետև Ռափայել հրեշտակի առաջնորդությամբ վերստին անփորձանք տուն է հասնում հոր՝ Տոբիթի մոտ:

203-206-րդ տողեր. Ներկայացնում են գարի գցելով (գարեհմայությամբ) գուշակության ծեսի արարողությունը: Երբ գարին մոտ է լինում բարին ներկայացնող հատիկին, ելքը բարի է, իսկ երբ մոտ է լինում կորուստը ներկայացնող հատիկին, գժբախտություն է գուշակում (տե՛ս. Ե. Լալայան, Ջավախք, «Ազգագրական հանդես», գիրք առաջին, Շուշի, 1895, Բենսէ, Բուլանըխ կամ հարք գաւառ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1900, էջ 16):

139-րդ տող. Ջրատար՝ «Ջուրէն տարուած, քշուած, խեղճ, թշուառ» (Հր. Աճառյան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 943):

ՄԵՐԺԱԾ ՕՐԵՆՔ
(էջ 52) (ԵԺ 3, էջ 51)

Գրել է 1890 թ.:

Առաջին անգամ ԲՄ II, էջ 45-61, այնուհետև ԵԺ II, 21-30: Ինքնագիրը չի պահպանվել: Արտատպվում է ԲՄ II-ից: Առաջին տպագրությունից հետո Թումանյանն այլևս չի անդրադարձել այս երկին և չի մտցրել իր նոր ժողովածուների մեջ:

«Մերժած օրենք» պոեմը երիտասարդ բանաստեղծի ստացած գրական և կենսական տպավորությունների յուրօրինակ խաչաձևման արդյունք էր: Այստեղ շատ որոշակի է դասական գրականության՝ Բայրոնի և մանավանդ Լերմոնտովի ռոմանտիկական պոեզիայի, անհատի ազատության, նրա իրավունքների հաստատման մոտիվների ազդեցությունը: Արդեն

բանաստեղծի ժամանակակից քննադատությունը (օրինակ՝ Լեոն «Ռուսահայոց գրականություն» գրքում, Վենետիկ, 1904, էջ 85) նկատեց Մ. Յու. Լերմոնտովի «Մծիրի» պոեմի գաղափարական պաթոսի, կենսական-հոգեբանական իրադրության և կերպավորման միջոցների ուղղակի արձագանքը «Մերժած օրենքի» մեջ (այդ ազդեցությունը հետագայում խոստովանել է նաև Թումանյանն իր զրույցների մեջ. տե՛ս Ն. Թումանյան, էջ 205)։ Լերմոնտովի և մասնավորապես «Մծիրիի» նկատմամբ պաշտամունքի հասնող սերը, որ սկսվել էր վաղ պատանեկան տարիներից, շուտով Թումանյանին մղեց թարգմանելու այդ պոեմը, որն առանձին գրքով լույս տեսավ 1896 թ.։

Սակայն «Մերժած օրենքը» ուներ նաև որոշակի կենսական ազդակներ. այն արձագանքում էր հայ երիտասարդության անելիքների վերաբերյալ դարավերջին ծագած վեճերին։ Պատահական չէ, անշուշտ, որ այդ շրջանի հայ գրականության մեջ հանդիպում են աշխարհիկ և վանական կյանքի հակադրությունն արծարծող մի շարք երկեր։ Այսպես, Թումանյանի պոեմի տպագրությունից երկու տարի առաջ Մշ ամսագրում (1890, №4) երևան եկավ ժամանակին ոչ անհայտ բանաստեղծ Արշալույս Մխիթարյանի «Աբեղա» փոքրիկ պոեմը, ուր պատկերված է համանման մի իրադրություն (երկընտրանք աշխարհիկ և վանական գործունեության միջև), որը, սակայն, լուծվում է ճիշտ հակառակ ոգով՝ մենաստանում երիտասարդ հերոսի փակվելով։ Տարիներ անց Արշ. Մխիթարյանը հրապարակեց նույն գաղափարական դիրքերից գրված մի ուրիշ պոեմ «Քույր Հեղինե» վերնագրով (Մշ, 1904, №4)։ 1898 թ. այդ ամսագրում տպագրվեց Լ. Շանթի «Դարձ» հոգեբանական վիպակը, ուր միևնույն կենսական հակադրությունը լուծվում էր «Մերժած օրենքին» հար և նման ոգով (սիրո ազդեցության տակ երիտասարդ հերոսի շրջադարձը վանական կյանքից դեպի աշխարհիկ գործունեության ասպարեզ)։ Այդ վիպակը ինչ-որ չափով նախապատրաստեց Լ. Շանթի լավագույն դրաման՝ անհատի հոգևոր և մարմնական ազատության թեման պատմական նյութի հիման վրա արծարծող «Հին աստվածները» (1909)։ Վերջապես, 1914 թ. լույս տեսավ Տիգրան Չյոկյուրյանի «Վանքը» վիպակը՝ իր ժամանակի արևմտահայ կյանքից քաղված մի երկ, որի հերոսը նույնպես վերջում խզում է իր կապերը ու հեռանում է վանական միջավայրից։

Այսպիսով, Թումանյանի «Մերժած օրենքը», սերտորեն կապված լինելով դասական գրական ավանդույթի հետ, իր հերթին սկիզբ դրեց մի թեմայի, որը որոշակի տեղ է գրավում XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ գրականության մեջ։

33-34-րդ տողեր. Աբեղան մինչ այդ կուսակրոնության ուխտ էր

հաստատել՝ աշխարհիկ կյանքից հրաժարվելով, այժմ հակառակն է կատարվում՝ դեպ աշխարհիկ կյանք դարձով։

38-90-րդ տողեր. Նկատի ունի Ս. Պատարագի սեղանը։

115-118-րդ տողեր. Փոխաբերական պատկեր է. գերին արևի, այսինքն՝ արևածաղիկը, որ օրվա ընթացքում արեգակի շարժման հետ գլուխը պտտում է արևելքից արևմուտք, մայրամուտից հետո ծաղիկները խոնարհում է, այսինքն՝ սալարում է, թոշշոմում, ճլորում է (Սահակ վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վարդարշապատ, 1912, էջ 581)։

ՀԱՌԱՋԱՆՔ
(էջ 66, 249) (Եվ 3, էջ 65)

Թումանյանի այս անավարտ պոեմի հրապարակումը սույն հատորում բաղկացած է չորս մասից.

1) «Նախերգանք» (1-28 տողեր)։ Գրված լինելով իբրև մեծ պոեմի սկիզբ՝ այս հատվածը հետագայում հեղինակի կողմից դիտվել է իբրև առանձին, ինքնուրույն բանաստեղծություն։ Այս ձևով առաջին անգամ տպագրվել է Դիլ (1896), ապա զետեղվել է բանաստեղծի երեք հիմնական ժողովածուների՝ ԲԹ, ԲԲ և ԲՊ սկզբում որպես գրողի ստեղծագործության յուրօրինակ մուտք։ Սակայն որ «Նախերգանքն» սկզբնապես եղել է «Հառաչանք» պոեմի մի մասը, երևում է և՛ բանաստեղծության բովանդակությունից, և՛ հեղինակի վկայության հիման վրա ժամանակակից մամուլում տպագրված մի տվյալից (տե՛ս ստորև ՆՀ ամսագրում հրապարակված ծանոթագրությունը)։ Այս պատճառով Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ «Նախերգանքը» մտել է և՛ իբրև ինքնուրույն բանաստեղծություն (Ա, 28-29), և՛ որպես «Հառաչանք» պոեմի սկիզբ (Ա, 33)։ Այս սկզբունքը պահպանված է նաև ներկա հրատարակության մեջ։ Իբրև հիմք ընդունվել է ԲՊ տեքստը՝ տալով նաև նախորդ հրատարակությունների մեջ եղած բնագրային տարբերությունները։ Ինքնագիրը չի պահպանվել։

2) Հատված առաջին (29-108 տողեր)։ Այս մասն առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1893, №3, էջ 433-435, «Հառաչանք» պոեմայից» վերնագրով։ Արտատպվում է ամսագրի տեքստը՝ հաշվի առնելով սեփական օրինակի վրա հեղինակի մտցրած ուղղումները։ Տեքստային տարբերությունների

բաժնում ցույց է տրվում ուղղված տողերի նախնական ձևը ամսագրային տեքստում: Ինքնագիրը չի պահպանվել:

3) Հատված երկրորդ (109-308 տողեր): Այս մասն առաջին անգամ տպագրվել է ՆՀ, 1914, №1, էջ 31-37: Այդ հրապարակմանը կցված է մի խմբագրական ծանոթագրություն, որի աղբյուրը, անշուշտ, բանաստեղծի հաղորդած տվյալներն են: Բերում ենք այդ ծանոթագրությունն ամբողջությամբ նկատի ունենալով, որ այստեղ կարևոր վկայություններ կան պոեմի ստեղծագործական պատմության և ճակատագրի վերաբերյալ.

«Տպում ենք մեր հայտնի բանաստեղծ Հովհ. Թումանյանի «Հառաչանք» պոեմից մնացած այս սիրուն կտորը, որը մի նոր հասարակական շեշտ է պարունակում իր մեջ: Այս պոեմը ժամանակին արգելքների հանդիպեց, լույս չտեսավ և չկա. միայն նախերգանքը մնաց, որ գրված է իր բանաստեղծությունների գրքի սկզբին («Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով...»): Պոեմի առաջին ձևից մի կտոր էլ տպված է «Մուրճ» ամսագրի 1894 թ.» (պետք է լինի 1893 – խմբ.):

Այս ծանոթագրությունից երևում է, որ պոեմի տպագրությունը ժամանակին խանգարվել է գրաքննական արգելքների պատճառով, իսկ ամբողջական ձեռագիրն ըստ երևույթին կորել է բանաստեղծի ձերբակալության ժամանակ ոստիկանության կողմից բռնագրավված այլ նյութերի հետ միասին:

Ներկա տպագրության համար հիմք է ընդունվել ՆՀ տեքստը՝ ուղղելով բացահայտ վրիպակները: Պահպանվել է (ԳԱԹ ԹՖ №148(3ա) այս հատվածի ինքնագրի մի մասը (4-9-րդ էջեր, որոնք համապատասխանում են սույն հրատարակության 165-290 տողերին): Այդ ինքնագրում, որը 1910-ական թթ. սկզբի արտագրություն է, կան մի քանի ոչ մեծ տարբերություններ տպագիր տեքստից: Ձեռագրի վրա բանաստեղծի կատարած աշխատանքը երևում է բնագրային տարբերակների բաժնում բերվող տողերից:

4) «Վերջերգ» (309-324 տողեր): Այս հատվածը հեղինակի կենդանության ժամանակ չի տպագրվել, իսկ հետմահու հրատարակություններում ներմուծվել է սևագրությունների բաժինը: Ներկա հրատարակության մեջ «Վերջերգը» առաջին անգամ ներկայացվում է իբրև հիմնական տեքստի մի մաս, քանի որ այն օգնում է որոշ չափով ամբողջացնելու այս անավարտ պոեմի կառուցվածքն ու հուզա-գաղափարական բովանդակությունը: Ինքնագիրը ԳԱԹ ԹՖ №149 (3գ):

Նշված չորս մասերը մեզ հասել են գրական մշակման և բանաստեղծական վարպետության տարբեր մակարդակներով: «Նախերգանքն» ու երկրորդ հատվածը («Մթնեց: Ծերունին լուռ շարշարանքով...») հասցված են բովանդակության և ոճի իսկական Թումանյանական վարպետության,

գեղարվեստական մեծ խտացման: Այնինչ առաջին հատվածը («Մի քանի տարի սրանից առաջ...») կրում է Թումանյանի՝ 90-ական թթ. ստեղծագործությանը բնորոշ մի քանի թուլություններ կնիքը (որոշ ձգձգվածություն, խոսքի անբավարար տիպականացում և այլն), իսկ «Վերջերգն» զգալի չափով դեռ նախնական սևագիր բնույթ ունի: Թեև պոեմի առաջին տարբերակը գրվել է 1890 թ., բայց կասկած չի կարող լինել, որ 1914 թ. տպագրության հանձնելով պահպանված մի մեծ հատված, Թումանյանը այն ենթարկել է գեղարվեստական լուրջ մշակման: Պոեմի այս մասում («Հատված երկրորդ») օրգանապես զուգակցվել են 1880-90-ական թթ. կենսական տպավորությունները և գեղարվեստական վարպետության այն աստիճանը, որին բանաստեղծը հասել էր նոր դարի սկզբին:

«Հառաչանք» պոեմից պահպանվել են նաև սևագիր և անավարտ ուրիշ հատվածներ (տե՛ս ԳԱԹ, Թֆ, №150(3բ), №151(3դ), №152(100է), որոնք անցյալում տպագրվել են տարբեր հրատարակությունների մեջ (ԴԵ, էջ 113-114, ԵԺ II, 261-262, ՈՒՀ 2, 205-207): Ներկա հատորի տարբերակների և տեքստային տարբերությունների բաժնում այդ մասերն ի մի են հավաքվել «Սևագիր հատվածներ» ընդհանուր վերնագրի տակ: Յուրց է տրվում այդ մասերի վրա բանաստեղծի կատարած մշակման աշխատանքը: Սևագիր մասերի համարակալումը կատարել է խմբագրությունը՝ ելնելով նրանց բովանդակությունից: Ինչպես երևում է պահպանված սևագրությունից՝ «Մթնեց: Ծերունին լուռ շարշարանքով...» տողով սկսված մասը նախապես գրվել է իբրև պոեմի 4-րդ հատված:

«Հառաչանքի» սևագիր մասերից երկու քառատող («Անց կացան...», «Վերջացավ...») Թումանյանը հետագայում առանձնացրել և առանց որևէ փոփոխության հրատարակել է իբրև ինքնուրույն քառյակներ: 1920 թ. առանձին գրքույկով տպագրված նրա քառյակների շարքն սկսվում է այդ գործերով, ընդ որում նշված են նրանց գրության թվականը (1890) և աղբյուրը («Հառաչանք»-ից): Այսպիսով, սկզբնապես աշխարհի նկատմամբ պոեմի պատմող-ծերունու հուզական վերաբերմունքն արտահայտող այս հատվածները երեք տասնամյակ անց դարձան իր՝ բանաստեղծի կենսափիլիսոփայական խոհերի յուրօրինակ սկիզբ և ելակետ: Այդ երկու քառյակներից հետո Թումանյանը ժանրային այս ձևին նորից անդրադառնում է միայն քառորդ դար անց (հաջորդ քառյակները գրված են 1916 և հետագա թվականներին):

«Հառաչանք» պոեմի վրա Թումանյանն սկսել է աշխատել 1890 թ. վերջից, երբ Մոսկվայում հենց նոր տպագրվել էր «Բանաստեղծությունների» առաջին հատորը, և երիտասարդ հեղինակը գտնվում էր ստեղծագործական բուռն վերելքի հոգեվիճակում: (Ժամանակակիցներից մեկի՝ գյուղագիր

Հար. Ծուղուրյանի հաղորդածն այն մասին, որ դեռևս 1885-86 թթ. Թումանյանը ընկերական շրջանում կարդացել է «Հառաչանքի» սևագրությունը, պետք է համարել շփոթության արդյունք: Այդ մասին տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 169: 1880-ական թթ. կեսերին կամ, ավելի ճիշտ, վերջերին Թումանյանը կարող էր պատմել իր ապագա պոեմի մտահղացման մասին): 1890 թ. նոյեմբերի 1-ին Անուշավան Աբովյանին հասցեագրած նամակում Թումանյանն այդ մասին հաղորդում է. «Այսօր սկսեցի մի նոր պոեմա Լոռու կյանքից – «Մեր այգեպանի պատմությունը» է առայժմ անունը: Այս երրորդ պոեման է Լոռու կյանքից, առաջինը «Սաքոն» է, իսկ երկրորդը «Անուշը», որ մի անուշ ընկերոջ անվան է նվիրված» (ԵԺ V, 32): Վերջին խոսքերն ակնարկում են, որ «Անուշ» պոեմի առաջին տարբերակը ձեռագրում նվիրված է եղել Ան. Աբովյանին՝ հատուկ չափածո ընծայականով: «Մեր այգեպանի պատմությունը» (կամ «զրույցը») նախնական վերնագիրը շուտով փոխարինվեց նորով. արդեն 1893-ին «Մուրճում» տպագրված հատվածն, ինչպես ասվեց, ունի «Հառաչանք» պոեմայից» վերտառությունը: Թեև ստույգ փաստեր մեզ չեն հասել, բայց առանց կասկածելու կարելի է ասել, որ 1890 թ. առաջին տարբերակը գրելուց հետո Թումանյանը մի քանի տարի շարունակել է աշխատանքը պոեմի վրա, ձգտել նրա հետագա կատարելագործման:

Դժբախտաբար, պահպանված հատվածները չեն կարող լրիվ պատկերացում տալ պոեմի ամբողջական կառուցվածքի և բովանդակության մասին: Դատելով 1914 թ. տպագրված հիշյալ ծանոթագրությունից և ժամանակակիցների հուշերից՝ պոեմի լրիվ տպագրությունը ժամանակին չի հաջողվել գրաքննական արգելքների պատճառով, իսկ ձեռագրերը, ինչպես նշվեց վերը, զոհ են դարձել 1908 (կամ 1911) թ. ձերբակալության ժամանակ: Դրանք կամ բռնագրավվել են խուզարկության պահին և կամ նախապես այրվել հեղինակի կողմից՝ ոստիկանությանը մեղադրական նյութ չտալու մտավախությունից դրդված: Վերջին վարկածը հաղորդում է բանաստեղծի երիտասարդ տարիների մտերիմ ընկերներից մեկը՝ Արսեն Ղլտճյանը: Նա իր հուշերում վկայում է նաև, որ 1894, ապա և 1897 թվականներին Թումանյանը իր համար կարդացել է այդ «համարյա վերջացած» պոեմի մասերը: «Մնում էր միայն մի քանի շտրիխներ անել՝ ամբողջ շաղախը միացնելու և ամբողջացնելու համար»,– ավելացնում է հուշագիրը: Նա հայտնում է նաև, որ բռնագրավման (կամ կրակի) զոհ են դարձել պոեմի «ավելի ցայտուն (այն ռեժիմի հասկացողությամբ՝ խիստ կասկածելի և հեղափոխական) կտորները...» (տե՛ս ԳԱԹ, Հուշերի ֆոնդ, Արսեն Ղլտճյանի հուշերը):

Պոեմի ստեղծման կենսական շարժառիթը եղել են սոցիալական

անարդարության դեմ հայրենի լեռնաշխարհում ծավալված գյուղացիական տարերային ըմբոստացումները, մասնավորապես 1880-ական թթ. դեղցի նշանավոր «Զոփուռի տղաների» զինված պայքարն ընդդեմ հարստահարիչների և ցարական իշխանության: Լոռիում մեծ աղմուկ հանած այդ պատմության կապը իր «Հառաչանք» պոեմի հետ մի քանի անգամ նշել է նաև բանաստեղծը: Այսպես, պոեմի «Վերջերգի» ձեռագրի ներքևը նա նշել է. «1884 թ. Ղոխնանց պապի դափում Գրիշկի հետ. Զոփուռի տղերանց հետ գնալուց մի քանի օր հետո» (Գրիշկա բիձան բանաստեղծի հորեղբայրն էր, որի հետ նա այցելել է Ղոխնանց պապին՝ Իգահատ գյուղացի ծեր այգեպանին): Ավելի ուշ՝ «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» գրառման մեջ Թումանյանը նշել է. «Ղոխնանց պապին, մեր գյուղի Զոփուռի տղերքը և «Հառաչանք» պոեմը» (ՈՒՀ 2, 420):

Ժամանակին դեղցի Զոփուռի տղաների համբավը դուրս է եկել Լոռու սահմաններից և տարածվել ամբողջ Անդրկովկասում, թափանցել մամուլի և գրքերի էջերը:

Ե. Լալայանը «Բորչալուի գավառը» ազգագրական ուսումնասիրության մեջ վկայակոչում է հետևյալ երգը.

Զոփուրի տղի կնոջ ողբը*

Ես աննամուս քար դառայ,
Ցից, չորացած ծառ դառայ,
Ոնչ ծեր եմ քուն ունենամ,
Ոնչ կնիկ եմ տուն ունենամ:

Ես ինձ համար տուն չունեմ,
Գիշեր-ցերեկ քուն չունեմ,
Գիշեր-ցերեկ լալում եմ,
Միս ու ոսկոռս հալում եմ:

Քու դուշմանը սաստիկ ա,
Ըրխալուղդ լաստիկ ա,
Էն ով գիտէ թէ սաղ ես,
Կուռդ կապած տուտսաղ** ես:

(Ձրացումը կատարել է Վարդան Դևրիկյանը - վերահրատ. խմբ.):

* Նշանավոր աշուղակապետ Դսեղցի:
** Բանտարկեալ

Առաջին գրավոր աղբյուրներից մեկը կարելի է համարել Իսահակ Հարությունյանի վկայությունը, որը, 1891 թ. Ներսիսյան դպրոցի սաների հետ այցելելով Դսեղ գյուղը, այդ մասին գրել է. «Դսեղը մինչև այժմ էլ հայտնի է իր քաջասիրտ «իգիթներով». այս գյուղից էին վերջին տարիներս լոռում հայտնի եղած քաջ ավազակապետները, «Զոփուռի տղերքը». սրանցից հինգ եղբայր միասին ավազակությամբ էին պարապում, վեցերորդը բանտարկված էր. միայն յոթերորդը բաժանված լինելով դրանցից՝ չմասնակցեց նրանց վաստակած փառքին – դաշաղության» (Իսահակ Հարությունյանց, Ներսիսյան հոգևոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդությունը, Տփխիս, 1894, էջ 55):

Ճիշտ է, Թումանյանի պոեմի՝ մեզ հասած հատվածներում Զոփուռի տղաների մասին ուղղակի չի խոսվում: Նրանց դրամատիկ և հերոսական պատմությունը, ամենայն հավանականությամբ, արտացոլված է եղել պոեմի կորած մասերում: Այդ են վկայում նաև ուրիշ ժամանակակիցներ: Ավ. Իսահակյանն իր հուշերում, նկարագրելով 1906 թ. Դսեղ կատարած իր այցելությունը, Թումանյանի խոսքերի հիման վրա պատմում է նաև ըմբոստացած եղբայրների մասին.

«80-ական թվականներին հարստահարող կալվածատերերի դեմ ըմբոստանում է Զոփուռենց տղոց մեծ եղբայրը՝ Սողոմոնը, սպանում է թավադին և երեք եղբայրների հետ զաշաղ է ընկնում սարերը: Նրանց միանում են ուրիշ դժգոհներ, կտրիճներ: Տարիներով ցարի կառավարությունն իր ստրաժնիկներով՝ կազակներով չի կարողանում նրանց բռնել:

Օհաննեսը պատանի հասակից տենչացել է գրել մի պոեմ՝ նրանց հերոսական կռիվների մասին. «Հառաչանք» պոեմի զարմանալի գեղեցիկ հատվածն այդ չիրականացված պոեմի թանկագին մնացորդն է» (ԹԺՀ, 17):

Նույն պատմությանը շատ ավելի մանրամասն անդրադառնում է Ներսիսյան դպրոցում Թումանյանի դասընկեր, հետագայում հայտնի մանկավարժ Սիմեոն Հովվյանը (տե՛ս նրա «Հուշեր Հովհաննես Թումանյանի կյանքից», «Մարտակոչ», Թիֆլիս, 1923, 18 ապրիլի, №43: «Մեր Ուհաննեզը», ԹԺՀ, 249-256): Մասնավորապես, նրա հուշերից պարզվում է, որ Զոփուռի տղաների պատմությունը Թումանյանին հուզել և զբաղեցրել է ոչ միայն իբրև սոցիալական անարդարության դեմ մղված պայքարի օրինակ, այլև անձնական-կենսագրական առումով: Թիֆլիս հասած տագնապալի լուրերի ազդեցության տակ, որոնց համաձայն Զոփուռի տղաներից վտանգ էր սպասվում նաև ապագա բանաստեղծի հոր՝ հանիրավի ամբաստանված Տեր-Թադևոսի կյանքին, պատանի Թումանյանը 1885 թ. աշնանը թողնում է ուսումը Ներսիսյան դպրոցում և շտապում է հայրենի գյուղ: Այստեղ նա

հանդիպում և մտերմանում է Զոփուռի տղաներից կրտսերի՝ Ռամազի հետ, հասկանում է նրանց պայքարի բուն պատճառն ու նպատակները: Այդ ժամանակ էլ նրա մեջ ծագում է նրանց մասին պոեմ գրելու միտքը: «Նա շատ հաճախ թե ինձ և թե ուրիշներին հայտարարել է, որ պատրաստվում է մի պոեմ գրելու, մի տեսակ դյուցազներգություն Զոփուռի տղերանց կյանքից,- հիշում է Ս. Հովվյանը:- Հովհաննեսն այդ շրջանում կարծես մի յուրատեսակ Կարլ Մոորի էր նմանում. նա խորհուրդ էր տալիս մեզ a la Կարլ Մոոր - գնալ Բոհեմյան (այսինքն՝ Լոռվա) անտառները, կազմել ավազակային խմբեր և վրեժ առնել ցարական պրիստավներից ու ստրաժնիկներից՝ չքավոր գյուղացիությանն այնքան անլուր զրկանքներ տալու, հարստահարելու համար...» (ԹԺՀ, 255-256):

Շիլլերի ռոմանտիկական դրամայի հերոսների և Զոփուռի տղաների համադրությանը հանդիպում ենք նաև ուրիշ ժամանակակիցների մոտ: Թումանյանի մի ուրիշ դասընկեր՝ Տ. Վերանյանը, 1890 թ. դեկտեմբերի 27-ի նամակում, ողջունելով բանաստեղծի առաջին գրքի երևան գալը, ավելացնում էր. «Հիշո՞ւմ ես «Ավազակները», հիշո՞ւմ ես Զոփուռի տղերքը: Քո տեղը որ լինեի, նրանց էլ կանմահացնեի...» (ՈՒՀ 4, 295): Այսպիսով, 1890-ական թթ. Զոփուռի տղաների հերոսական և ողբերգական պատմության գեղարվեստական մարմնավորման խնդիրը գիտակցվում էր իբրև հասունացած և անհրաժեշտ պահանջ: Հատկանշական է, որ սկսած 1894 թվականից այդ մասին շատ է խորհել նաև երիտասարդ Ավետիք Իսահակյանը՝ «Զոփուռի տղաների» թեման մացնելով իր գրելիք կարևորագույն երկերի շարքը: 1894 թ. դեկտեմբերի 31-ին նա իր օրագրում նշել է. «Զոփուռի տղերքը» ես կգրեմ արձակ, հեքիաթի պես կարճ, ոտանավորի պես նմանահնչյուն բառերով լի, կտրուկ ու թեթև՝ միշտ պատկերավոր ու փոփոխական պատկերներով» (Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 150, տե՛ս նաև 70, 102, 151, 235 էջերը): Անտարակույս, «ավազակ եղբայրների» մասին ունեցած տեղեկությունների հիմնական աղբյուրներից մեկը Ավ. Իսահակյանի համար եղել է Թումանյանը, որի հետ նա ծանոթացել էր 1892 թ.: Լոռու անտառներում և ձորերում սոցիալական արդարության համար մարտնչած եղբայրների պատմությունը ոգեշնչել է նաև Վրթանես Փափազյանին: Այդ պատմությանը նա անդրադարձել է 1904 թ. տպագրած «Զոչո քար» պատմվածքում, որը հեղինակի «Պատկերներ գյուղից» շարքի կենտրոնական, իր սոցիալական բովանդակությամբ առավել ցայտուն երկն է:

Հայ գրականության մեջ գյուղացիության տարերային ընդվզումները պատկերող երկերի շարքն սկսվում է Ղ. Աղայանի «Երկու քույր» վիպակով (1872), շարունակվում է Պ. Պռոշյանի «Հունոն» վեպով (1900), Վ.

Փափազյանի հիշյալ պատմվածքով և այլ երկերով: «Հառաչանք» պոեմը, չնայած անավարտ լինելուն, այդ շարքի բարձրագույն գեղարվեստական արտահայտությունն է, ուր անմոռաց գծերով ցուցադրվում է ժողովրդական զանգվածների սոցիալական գիտակցության հասունացման ընթացքը բուրժուադեմոկրատական հեղափոխության նախապատրաստման դարաշրջանում:

45-64 տողեր. Թումանյանի առաջին տպագիր ելույթում «Մի ավանդության վերնագրով («Նոր-Դար», 1887, 15 օգոստոսի, №136) կա մի հատված, որ ակնհայտ նմանություն ունի «Հառաչանքի» այս տողերի հետ: Լոռին, կարդում ենք այդ հոդվածում, մինչև այսօր պահել է ժողովրդի դյուցազնական ոգին և ստեպ-ստեպ ավազակներ, «իգիթներ», «աժդահաներ» է հարուցել և հարուցանում, իսկ վերջիններս «շլապկավորի» հետ չունին և նրանց դյուր գալու համար պետք է իրենց տարազով երևալ նրանց ձորերում: Շատ անգամ հարցասերին չեն պատասխանում և թե պատասխանում են ծուռ ու սխալ, որովհետև վախենում են մի «խաթաբալա» չի դուրս գա մեջիցը» (Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1986, էջ 99):

119-րդ տող. «Որբը» նկատի ունի Սրհակ Թոչունի մասին ավանդությունը (տե՛ս Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 189), որի սյուժեով Թումանյանը գրել է «Որբը» բալլադը (տե՛ս այս հրատարակության 2-րդ հատ., էջ 583): Որբի մասին ավանդությունը Թումանյանը հիշում է նաև «Հին կռիվը» պոեմում (տես ԵԼԺ VI, էջ 49):

133-րդ տող. Ինչպես գրում է Ա. Ինճիկյանը, ծերունու խոսքերը վերաբերում են Ռուսաստանի Ալեքսանդր III, Գերմանիայի Վիլհելմ և Ավստրո-Հունգարիայի Ֆրանց Իոսիֆ I կայսրերի 1884 թ. սեպտեմբերի 3-4-ին կայացած հանդիպմանը լեհական Սկերնևիցե քաղաքում, որն այդ ժամանակ գտնվում էր Ռուսական կայսրության կազմի մեջ: Այս հանդիպման մասին հաղորդագրություն է տպագրվել «Նոր Դար» 1884, №141-ում (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 166):

173-180-րդ տողեր. Հիշեցնում են «Բորչալվում» ակնարկի հետևյալ հատվածը. «Հիմա եկեք տեսեք այս ժողովրդի տանուտերը, քյոխվեն, գյուղական դատավորը..., որոնք հրապարակում իրանց անհայտ զակոնի անունով են գոռգոռում, իսկ իրանց տներում գողերի հետ են խորհրդակցում, որոնք ոչ մի օրենք ու արդարություն չեն ճանաչում ու հասկանում, բացի կաշառքն ու մտրակը» (ԵԺ VI, էջ 32):

ԱՆՈՒՇ
(էջ 80, 257) (ԵԼԺ 3, էջ 79)

Պոեմի առաջին տարբերակը Թումանյանի կենդանության ժամանակ տպագրվել է միայն մեկ անգամ՝ ԲՄ II, էջ 3-39: Այնուհետև՝ ԵԺ II, 319-339: Այդ տարբերակի ինքնագրերը չեն պահպանվել:

«Անուշի» երկրորդ էապես վերամշակված տարբերակը առաջին անգամ տպագրվել է 1903 թ. ԲԹ, էջ 93-127: Այնուհետև Թումանյանի կենդանության ժամանակ ևս ութ անգամ առանձին ոչ մեծ լրացումներով և ճշտումներով, որոնք ցույց են տրվում բնագրային տարբերությունների բաժնում: Այդ հրատարակություններն են. ա) առանձին գրքով, Թիֆլիս, 1904, «Հայ բանաստեղծներ» մատենաշարով, հրատ. Ստ. Լիսիցյանի և ընկ., №2, 40 էջ, բ) ԲԲ, 1908, էջ 117-149, գ-դ) ՀԳ, հ. Ա, Թիֆլիս, 1909 (1-ին տպ.), 1914 (2-րդ տպ.), էջ 112-124, ե) առանձին գրքով, Թիֆլիս, 1916, հրատ. «Լույս» ընկ., 48 էջ, զ)Այս տարբերակը տպագրված է «Թմկաբերդի առումը» պոեմի հետ, «Ժամանակակից» մատենաշար, թիվ 36, Կ. Պոլիս, 1921, էջ 3-33, է) ԲՊ, 1922, էջ 179-214, ը) ԳԳ, Թիֆլիս, 1922, էջ 216-239: Պոեմը մտել է ԵԺII, 45-71:

«Անուշի» վերջնական խմբագրության նախապատրաստման ընթացքում ստեղծված ինքնագրերը և սևագիր հատվածները պահվում են ԳԱԹ, ԹՖ №153-158(5ա-ե), №164(10ա): Մի քանի այլ նյութերի պահպանման տեղերը նշվում են համապատասխան հրապարակման մեջ:

«Անուշի» ստեղծագործական պատմությունը, հաճախ մեծ ընդհատումներով, ընդգրկում է ավելի քան երեք տասնամյակ (1890-1922): Այդ ընթացքում ստեղծվել են պոեմի ավարտուն և անավարտ, տպագիր և ձեռագիր մի քանի տարբերակ, բազմաթիվ սևագիր հատվածներ, որոնց միայն մի մասն է պահպանվել: Այդ բոլոր նյութերը, ըստ հնարավորին լրիվ, հավաքված են սույն հատորի տարբերակների բաժնում:

Առաջին հիշատակությունը «Անուշի» մասին երևան է գալիս 1890 թ. հուլիսի 6-ին Անուշավան Աբովյանին հղած նամակում, ուր բանաստեղծը գրել է. «Իմ տետրակն արդեն ուղարկված է Մոսկվա տպագրելու... Հետո քեզ կուղարկեմ իմ նոր գրածներից (տետրակից հետո), ի թիվս այլոց և մի պոեմա «Անուշ» վերնագրով, Լոռու կյանքից» (ԵԺ V, 17): Սա հիմք է տալիս ասելու, որ «Անուշը» գրվել է այդ ժամանակ տպագրության պատրաստվող ԲՄ I ժողովածուի գործերն ամփոփող «տետրակից հետո», ուրեմն՝ 1890 թ. առաջին կեսին, և այդ պատճառով էլ չի մտել այդ գրքի մեջ:

«Անուշի», իբրև արդեն ավարտված ստեղծագործության, մասին հիշատակություն կա նույն Ան. Աբովյանին հասցեագրած 1890 թ. նոյեմբերի

1-ի նամակում, ուր հայտնվում է նաև, թե այդ պոեմը «մի անուշ ընկերոջ անվան է նվիրված» (այսինքն՝ Անուշավան Աբովյանին.– ԵԺ V, 32): Մի քանի ամիս անց՝ 1891 թ. փետրվարի 8-ին Թումանյանն ընկերոջը հայտնում է. «Անուշը», որ իմ մյուս պոեմաներից մեծ է և հաջողված, գուցե հանձնեմ «Մուրճ»-ին. ինչ կասես: «Անուշի» նախերգանքը, որ ձոն է մի ընկերոջ, որին նվիրված է «Անուշը», ուզում էի այստեղ գրել, բայց տեղ չկա. հետո» (ԵԺ V, 42): Վերջապես, 1891 թ. մարտի 2-ի նամակում, անդրադառնալով պոեմի ձեռագիրն ընկերոջը ուղարկելու իր խոստմանը, բանաստեղծն ավելացնում է. «...Ահա կատարում եմ. բայց այստեղ ես միմիայն պոեմի հառաջաբանը կամ այն ձոնը կգրեմ, որով դիմում եմ այն ընկերիս, որին նվիրված է «Անուշը»: Գուցե «Անուշը» ապրիլին տամ Մուրճիոսին, եթե չպահեմ II հատորի համար: Առայժմ խմբագրատանը կարդացի և ուզեցին ինձանից «Մերժած օրենք» փոքրիկ պոեման... «Անուշը» 5 թերթ է ամբողջ. այնպես որ իմ բոլոր պոեմաներից մեծ է» (ԵԺ V, 46-47): Նույն նամակում մեջ են բերվում պոեմի ձոնը (տե՛ս սույն հրատ. 1-ին հատորում) և առաջին երկու փոքրիկ գլուխները:

«Անուշ» պոեմը «Մուրճ» ամսագրում չտպագրվեց: Թերևս ինքը՝ Թումանյանն է հետ կանգնել այդ մտադրությունից՝ հետևելով Ան. Աբովյանի խորհրդին, որը 1891 թ. մարտի 12-ին բանաստեղծին գրել էր. «Անուշ» պոեմայիդ սկզբի գլուխներից փոքր ի շատե մի հավանական գաղափար կազմելով, եթե ինձ կլսես, խորհուրդ չեմ տալ «Մուրճի» կամ մի այլ ամսագրի մեջ տպել տալու: Իմ կարծիքով՝ այդպիսի մի գեղեցիկ պոեման, որը ճոխ զարդ է կազմելու քո «Բանաստեղծությունների» II հատորի համար, ամսագրում տպվելով անշուշտ կորցնելու է յուր հարստությունը... Ուրիշ մանր-մունր բանաստեղծություններ կամ փոքրիկ պոեմաներ, որոնց նմանը էլի ունես, կարող ես երբեմն «Մուրճի» մեջ տպել տալ, դրա դեմ ոչինչ չունեմ» (ՈՒՀ 4, 301):

Իրոք, պոեմն առաջին անգամ տպագրվեց 1892 թ. ԲՄ II ժողովածուի սկզբում: Վերջում նշված է պոեմի գրության թվականը՝ 1890:

«Անուշի» այդ առաջին խմբագրությունը (728 տող), որն արտատպված է սույն հատորի տարբերակների բաժնում, մեկն է այն երկերից, որ երիտասարդ Թումանյանը գրել է հայրենի գյուղաշխարհի մասին իր պատկերացումների և տպավորությունների հիման վրա: «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» գրառման մեջ նա գրել է. «Գևոյի, Ալեքի, Օսմանի և այլն աղջիկ փախցնելը և Անուշը» (ՈՒՀ 2, 420): Սակայն նման դեպքերը, հասկանալի է, բանաստեղծի համար եղել են միայն արտաքին ազդակ՝ գրելու իր ամենից ծավալուն և համապարփակ պոեմը, որի մեջ պիտի արտահայտվեին նրա ըմբռնումները հայրենի եղերքի անցյալի ու

ներկայի, անհատի և նահապետական միջավայրի, մարդու և բնության փոխհարաբերության մասին:

«Անուշի» առաջին տարբերակը հասարակության կողմից ընդունվեց իբրև երիտասարդ բանաստեղծի տաղանդի հաստատման վկայություն: ԲՄ II ժողովածուի առթիվ գրած գրախոսության մեջ Ղ. Աղայանը փաստորեն անդրադարձավ միայն այդ պոեմին («Հովհ. Թումանյանի «Անուշ»-ից մի ճաշակ», ՄՃ, 1893, №3) և բանաստեղծի հայտնությունը բնութագրեց այսպես. «Վերջին ժամանակներս մեր գրականության նորատունկ բուրաստանի մեջ մինը մյուսի ետևից դուրս եկան նոր-նոր ծաղիկներ, նորերումս փթթեց մի նոր ծաղիկ ևս. անուշահոտ և համեստ, ինչպես վճիտ աղբյուրների ափերում բուսած մանուշակը Գուգարաց աշխարհում» (Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 221-222):

Ընկերներից և բարեկամներից ստացված նամակներում «Անուշի» մասին արտահայտվեցին տարբեր կարծիքներ: Այսպես, Գրիգոր Վանցյանը 1893 թ. ապրիլի 8-ի նամակում, նշելով նոր գրքում բանաստեղծի կատարած լուրջ առաջընթացը («զուտ բանաստեղծական-գրական-գեղարվեստական բաժնում անցյալի հետ համեմատած անտարակույս մեծ առաջադիմություն ես արել»), միաժամանակ այսպիսի դիտողություն էր անում. «Անուշիդ» առաջին մասը շատ է ձգձգված և, ըստ իս, շատ էլ աջողակ չէ» (ՈՒՀ 4, 313-314): Իսկ Ջալալ Տեր-Գրիգորյանը, ընդհակառակը, միայն գրվատական խոսք էր ասում պոեմի մասին (1893 թ. մայիսի 24-ի նամակում). «Անուշիդ» մի քանի տեղերը աննման են: Նորանց գլխավոր արժանավորությունը կայանում է նրանում, որ դու բնության հետ չես նկարագրում կամ արտահայտում նրա ազդեցություններից առաջացած զգացմունքներդ, հոգեկան տրամադրությունդ, ուրեմն նկարագրություններդ սուբյեկտիվ չեն, այլ օբյեկտիվ, որ գեղարվեստական մեծ նշանակություն ունի» (ՈՒՀ 4, 317):

Թումանյանի ստեղծագործական և գաղափարական արագ զարգացումը 90-ական թթ. նրան շուտով բերեց այն համոզմանը, որ անհրաժեշտ է արմատապես վերամշակել նահապետական գյուղաշխարհի մասին գրած իր պոեմները, խորացնել դեպքերի և կերպարների հոգեբանական հիմնավորումը, հրաժարվել ավելորդաբանություններից, ձգտել երկերի կառուցվածքի, լեզվի և ոճի ամբողջականության և միասնության: Ըստ երևույթին, «Անուշը» հիմնովին վերափոխելու ծրագիրը ծագել է 1890-ական թթ. կեսերին, ավելի կոնկրետ՝ վերամշակված «Լոռեցի Սաքոն» առանձին գրքույկով լույս ընծայելուց (1896) հետո: Այդ են վկայում նույն Ջալալ Տեր-Գրիգորյանի 1897 թ. մարտի 21-ի նամակի հետևյալ տողերը. «Անհամբեր սպասում եմ թե՛ «Անուշիդ» նոր, փոփոխված հրատարակության և թե՛

մյուս, դեռ չտպագրված պոեմաներիդ հրատարակության («Հառաչանքի» և «Խորտակվածի», որքան հիշում եմ, այսպես ասացիր նոր պոեմայիդ անունը)» (ՈՒՀ 4, 326)։ Ուրեմն՝ այդ ժամանակ արդեն Թումանյանն ընկերների հետ կիսել է իր մտքերն ու ծրագրերը «Անուշի» առաջիկա վերամշակման մասին։

Պոեմի այդ արմատական վերանայման աշխատանքները, սակայն, ծավալվեցին մի փոքր ավելի ուշ՝ 1901-1902 թթ.։ Այդ մասին կարևոր վկայություններ կան Ավ. Իսահակյանի 1902 թ. նամակներում։ Հուլիսի 21-ին նա գրել է Թումանյանին. «Անհամբեր սպասում եմ գրքիդ լույս տեսնելուն՝ կարդալու «Անուշը»։ Իսկ որոշ ժամանակ անց՝ հոկտեմբերի 4-ին գրում էր ավելի որոշակի. «Սիրելիս, դուն ինչ ես անում. «Անուշդ» ո՞ւր մնաց. շարունակ նրա մասին եմ երազում. ձմեռը, որ կարդացիր՝ համը բերանս մնաց. շո՛ւտ արա, տպի՛ր, տեսնենք, լիուլի վայելենք» (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1979, էջ 41-42)։ Ուրեմն՝ 1901-1902 թթ. ձմռանը Թումանյանն արդեն Իսահակյանին կարդացել է հատվածներ վերամշակված «Անուշից»՝ խոր տպավորություն թողնելով նրա վրա։

Սակայն պոեմի վերափոխման հիմնական աշխատանքը կատարվեց մի քանի ամիս անց՝ 1902 թ. ամռան և աշնան ամիսներին, երբ բանաստեղծը գտնվում էր Բելի Կլյուչ և ապա Աբաստումանի ամառանոցներում, ուր բուժվելուն զուգընթաց պատրաստում էր իր չափածո երկերի նոր ժողովածուն։ Հուլիսի 29-ին Բելի Կլյուչից Փ. Վարդազարյանին գրած նամակում նա կատակով հայտնում էր, որ ինքը «պաշինկա» է անում իր «Անուշը» (ԵԺ V, 203)։ Իսկ տարիներ անց՝ 1909 թ. հուլիսի 18-ին Մարիամ Թումանյանին հասցեագրած նամակում, երանությամբ հիշելով 1902-ի «Աբաստումանի աշնանը» իր ապրած ստեղծագործական մեծ վերելքը, նա գրել է. «Ո՜րքան հիշողություններ ու անմոռանալի վայրկյաններ են կապված Աբաստումանի այս կամ այն փոքրիկ, խաղաղ, չքնաղ անկյունում։ Այդտեղ ես շատ եմ երազել ու գրել եմ իմ մի քանի լավ բաները։ Այդտեղ եմ մշակել «Անուշը», այդտեղ եմ գրել «Փարվանան» և այլ բաներ – հա՛, «Թմկաբերդի առումը» (ԵԺ V, 320)։

«Անուշի» նոր, արմատապես մշակված տարբերակը տեղ գտավ ԲԹ ժողովածուի մեջ, որ լույս տեսավ 1903 թ. վերջին։

Թե ինչպիսի մեծ և լարված աշխատանք է նախորդել «Անուշի» այդ նոր տարբերակի ստեղծմանը, ցույց են տալիս պոեմի պահպանված ինքնագրերը։ Ճիշտ է, դրանցից ո՛չ մեկը լրիվ չէ, բացակայում են բազմաթիվ մասեր, իսկ վերջնական ձեռագիրը, որից կատարվել է 1903 թ. գրքի շարվածքը, առհասարակ մեզ չի հասել։ Սակայն անավարտ վիճակում էլ պահպանված ձեռագրերը հարուստ և բազմակողմանի պատկերացում

են տալիս կատարված ստեղծագործական մեծ աշխատանքի մասին: Այդ աշխատանքն ըստ հնարավորին լրիվ ներկայացնելու համար սույն հատորի մեջ հրապարակվում են այդ ձեռագրերն ամբողջությամբ՝ իրենց բոլոր տարբերակներով, գրական աշխատանքի բոլոր մանրամասներով: Ի տարբերություն նախորդ ակադեմիական հրատարակության, որի 2-րդ հատորում (էջ 370-382) ներկայացված են միայն պոեմի ինքնագրերի (այն էլ ոչ բոլոր) և տպագրությունների միջև եղած տարբերությունները, սույն հատորի մեջ տրվում է ձեռագրերի լրիվ պատկերը, այդ թվում և՛ նրանց մեջ կրկնվող մասերը, և՛ վերջնական խմբագրության հետ համընկնող հատվածները: Ինքնագրերը դասավորված են ըստ հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի փուլերի:

Պահպանված ինքնագրերը ցույց են տալիս, որ մինչև տպագրության հանձնված տարբերակի ստեղծումը Թումանյանն իր որոնումների ընթացքում բազմիցս փոխել է պոեմի ընդհանուր պլանը, կառուցվածքը՝ չխոսելով արդեն առանձին տողերի, բառերի և ամբողջ պատկերների փոփոխության մասին: Օրինակ, ինքնագրերն սկսվում են վերջնական խմբագրության մեջ չմտած նախերգանքով («Ո՛վ որ ներշնչված լեռների երգչին...») կամ էլ հայրենի եզերքին ձոնված հայտնի դիմումով («Կանչում է կրկին, կանչում անդադար...»): Այնինչ պոեմի նշանավոր նախերգանքը՝ «Համբարձման գիշերը» («Բազմած լուսնի նուրբ շողերին...»), թեև 3-րդ և 4-րդ ինքնագրերում արդեն երևան է գալիս, բայց ոչ թե իբրև ամբողջ երկը բացող հատված, այլ որպես 2-րդ երգի սկիզբ՝ անմիջաբար նախորդելով «Համբարձման առավոտը» տեսարանին: Տպագիր տարբերակում «Համբարձման գիշերը» տեղափոխվում է պոեմի սկիզբը՝ դառնալով նրա ընդհանուր նախերգանքը: Աշխատանքի վերջին փուլում է ստեղծվում նաև պոեմի եզրափակիչ՝ 29-րդ գլուխը («Համբարձման գիշեր, էն գյութիչ գիշեր...»), որը «ձայնակցում է» Նախերգանքին՝ նրա հետ ստեղծելով կոմպոզիցիոն շրջանակ պոեմում ծավալվող գործողությունների համար: Այդ վերջին տեսարանը՝ երկնքում աստղեր դարձած «անմուրազ մեռած սիրահարների» մասին, Թումանյանն ստեղծել է իր մորից լսած ավանդության հիման վրա: Այդ մասին Նվարդ Թումանյանը հիշում է. «Հարցրի հայրիկին, պարզվեց, որ Նանն է (իր մայրը) պատմել և շատ ուշ, պոեմը գրելուց հետո, երբ տպվելիս է եղել, գրել է ու կցել պոեմին» (Ն. Թումանյան, էջ 222):

Այս և բազմաթիվ ուրիշ փոփոխություններից հետո պոեմն ստացավ իր կառուցվածքի վերջնական տեսքը. այն կազմված է նախերգանքից, վեց երգից և 29 գլխից՝ համարակալված հռոմեական թվերով: Հետագայում (ընդհուպ մինչև 1922 թվականը) պոեմի մեջ կատարվեցին լեզվական

մասնավոր ուղղումներ և ճշտումներ, ավելացան մի քանի նոր հատվածներ (ընդամենը 54 տող, որով տողերի ընդհանուր քանակը հասավ 856-ի), սակայն հիշյալ կառուցվածքը մնաց անփոփոխ:

«Անուշի» առաջին (1892) և երկրորդ (1903) տպագրությունների միջև ընկած տասնամյակը Թումանյանի ստեղծագործական բուռն հասունացման, ժողովրդայնության և ռեալիզմի սկզբունքների համակողմանի խորացման ու հարստացման շրջան էր, և դա ըստ ամենայնի արտահայտվեց պոեմի նոր տարբերակի մեջ: Պահպանելով դեպքերի նույն սյուժետային ընթացքը՝ գյուղական երիտասարդների դժբախտ սիրո և կործանման մասին, Թումանյանը կերտեց կենսական-հոգեբանական և գաղափարական շատ ավելի խոր բովանդակություն ունեցող մի երկ, որն իր մեջ խտացնում է բանաստեղծի աշխարհայացքի, գեղարվեստական մեթոդի և վարպետության լավագույն կողմերը: Կատարված փոփոխությունները հանգում են հետևյալին.

1) Լիովին հանվել են առաջին տարբերակի ծավալի մոտ կեսը կազմող սկզբի 318 տողերը, որոնք ամբողջովին կազմված էին հայրենիքի անցյալի և ներկայի, նրա մարդկանց և բնության, հայրենակիցների կյանքի ու սովորույթների մասին բավական երկար խորհրդածություններից: Դրա փոխարեն բոլորովին նոր են գրվել պոեմի նախերգանքը, 1-ին և 2-րդ երգերը, որոնք նախորդում են հարսանիքի տեսարանին:

2) Պոեմի 3, 4, 5-րդ երգերը, որոնք պատմում են գյուղական հարսանիքի և նրա ժամանակ հերոսների միջև ծագած հակամարտության, սիրահարների փախուստի և արյունալի վրեժի մասին, սյուժետային առումով համընկնում են նախնական տարբերակի 319-677 տողերին: Սակայն այս մասերում ևս կատարվել են բազմաթիվ հավելումներ, կրճատումներ, կան մեծ թվով փոփոխված բառեր ու արտահայտություններ, և, ընդհանուր առմամբ, շատ քիչ հատվածներ են նույնը մնացել:

3) Ամբողջովին նոր է գրված նաև եզրափակիչ 6-րդ երգը՝ խելագարված Անուշի ողբի և մահվան պատմությունը (պոեմի առաջին տարբերակի հետ ուղղակի կապված է միայն 28-րդ գլխի «Անլքռելի վըշվըշում է / Պղտոր ջուրը Դեբեդի...» սկսվածքն ունեցող հատվածը, բայց այստեղ էլ 16 տողից 7-ը բոլորովին նոր է գրվել):

4) Պոեմի վերամշակված տարբերակում էապես մեծացել է հերոսների խոսքի (երկխոսություններ, երգեր) տեսակարար կշիռը, և, ընդհակառակը, շատ է կրճատվել հեղինակային պատմության և քնարական՝ շեղումների թիվը: Այսպես, եթե առաջին տարբերակում գործող անձանց խոսքը կազմում էր ընդամենը 54 տող, ապա վերջնական տեքստում այն հասնում է 486-ի (այսինքն՝ պոեմի ծավալի կեսից ավելին): Եթե 1892 թ. տպագրվածի

մեջ հեղինակային շեղումներն ու խորհրդածությունները կազմում են ծավալի մոտ կեսը, ապա 1903 թ. տարբերակում գրանք հանդես են գալիս միայն պոեմի սկզբում՝ ընդամենը 42 տող (41-82):

5) Ելնելով գրական լեզվի ժողովրդայնացման իր սկզբունքներից, Թումանյանը 1903 թ. և մանավանդ հետագա խմբագրությունների մեջ հետևողականորեն ուժեղացրել է լեզվի ժողովրդական տարրերը: Այդ փոփոխությունը երևում է ինչպես պոեմի բառապաշարի, այնպես էլ շարահյուսական ձևերի և ընդհանրապես ստեղծագործության ոճի մեջ:

Պոեմի 1903 թ. տպագրությունից հետո, մոտ քսան տարվա ընթացքում, ինչպես արդեն ասվեց, «Անուշն» ունեցել է ևս յոթ հրատարակություն, որոնք իրականացվել են հեղինակի որոշակի մասնակցությամբ և կրում են նրա աշխատանքի հետքերը: Ստորև տրվում է այդ հրատարակությունների մեջ մտցված փոփոխությունների սեղմ բնութագիրը.

1) 1904 թ. առանձին հրատարակության մեջ Թումանյանն ավելացրել է հինգ նոր հատված (ընդամենը 26 տող), որոնք համընկնում են վերջնական խմբագրության 272-277 («Դե հանիր, աղջի...»), 540-543 («Մնայ հանդերում: Եվ ահա մի օր...»), 668-671 («Ծանրը չոմբախը, գըլուխը մեխած...»), 692-695 («Կարմիր արևից ընկած, Սարո ջան...») և 700-707 («Սըգվոր գետը Ծեր Դեբեդը...») տողերին: Այդ հավելումներից երկուսը (668-671 և 700-707 տողեր) եղել են գեռևս պոեմի առաջին 1892 թ. տպագրության մեջ, բայց դուրս են մնացել 1903 թ. տարբերակից:

1904 թ. հրատարակության մեջ Թումանյանը տողատակերում ավել է բարբառային մի շարք բառերի բացատրությունը՝ պոեմի ընկալումն ընթերցող լայն շրջանների կողմից հեշտացնելու նպատակով:

2) «Անուշի» 1908 թ. հրատարակության մեջ (ԲԲ) Թումանյանն ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է հիշյալ հավելումներից (բացի 272-277 տողերից) և կրճատել է չորս տող (262-265, «Համբարձում, յայլա...»): Մի շարք տողերում կատարվել են առանձին բառերի ուղղումներ (տես բնագրային տարբերությունները):

3) 1909 և 1914 թթ. պոեմը զետեղվել է «Հայ գրողներ, Ա. Ռուսահայ գրողներ» դասագրքում, որը Ղ. Աղայանի, Ա. Ահարոնյանի և Վրթ. Փափազյանի հետ միասին կազմել է Հովհ. Թումանյանը: Դասագրքի երկու հրատարակություններում «Անուշի» տեքստը բացարձակորեն նույնն է: Այն հիմնականում կրկնում է նախորդ՝ ԲԲ բնագիրը (բացառությամբ մի երկու բառի փոփոխության): Սակայն այստեղ հեղինակը ձգտել է ազատվել պոեմի նախորդ տպագրություններում առկա լեզվական որոշ երկվությունից (այս – էս, այն – էն և այլն) և ամենուրեք այ երկհնչյունը փոխարինել է է(ե) ձայնավորով (էս, էն, հեր, մեր, ձեն և այլն):

4) Պոեմի հաջորդ տպագրության մեջ (1916 թ. առանձին գրքով) Թումանյանը վերականգնել է 1904 թ. առանձին հրատարակության հիշյալ բոլոր հավելումները, 1908 թ. կրճատված 262-265 տողերը, ինչպես նաև նոր լրացումներ է կատարել (ընդամենը 28 տող): Նոր գրված հատվածները համընկնում են վերջնական խմբագրության 186-197 («ինձ չես լսում...») և 346-361 («Ախ, իմ բախտը կանչում է ինձ...») տողերին: Պոեմն ստացավ իր վերջնական չափը՝ 856 տող:

1916 թ. առանձին տպագրության բնագիրը նույնությամբ կրկնվեց 1922 թ. ԲՊ-ում, որը Թումանյանի կազմած վերջին բանաստեղծական ժողովածուն է (պոեմի գլուխների համարակալումն այս գրքում կատարված է հայկական այբուբենի տառերով)[1]:

5) Վերջին անգամ «Անուշի» բնագրին Թումանյանը անդրադարձել է 1922 թ. սկզբին՝ Հ. Սուրխաթյանի կազմած ԳԳ քրեստոմատիայի համար իր երկերը պատրաստելիս: Այդ մասին վկայություն կա Հ. Սուրխաթյանի հուշերում. «Գրական գոհարների» բանաստեղծին վերաբերյալ նյութը, իմ խնդրանոք, ինքն էր ընտրել: Իմ ցանկությունն էր, որ Թումանյանի պոեմներն ու բանաստեղծությունները տպագրվեն իր ձեռքով կատարված վերջին փոփոխություններով» (ԹԺՀ, 718): Մեզ է հասել 1922 թ. ապրիլի 26-ին Հ. Սուրխաթյանին բանաստեղծի գրած նամակը, որի մեջ ասված է. «Ուղարկում եմ վերջին տպած «Անուշը» (ԵԺ VI, 436): Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, Թումանյանն իրոք վերանայել է պոեմը, առանձին բառերի ուղղումներ է մտցրել շուրջ տասը տողի մեջ, և դա հիմք է տալիս այդ տպագրությունը համարելու բանաստեղծի «վերջին կամքի» արտահայտություն:

Ներկա հրատարակության մեջ, իբրև պոեմի հիմնական խմբագրություն ընդունված է ԳԳ տեքստը, որն առանձին, ոչ մեծ շեղումներ ունի 1916 թ. տպագրությունից (տես բնագրային տարբերությունների բաժինը): Միայն երկու դեպքում՝ 43 և 802 տողերում մենք հետևել ենք 1916 թ. հրատարակությանը:

1921 թ. Կ. Պոլսում «Անուշն» ու «Թմկաբերդի առումը» լույս են տեսել մեկ առանձին գրքով («Ժամանակակից» մատենաշար, թիվ 36, տպագրիչ-հրատարակիչ Վաղինակ Ս. Բյուրատ, 46 էջ), բայց դա արվել է առանց հեղինակի գիտության և հսկողության: Ավելին, «Անուշ» պոեմն այդ գրքում ներկայացված է ըստ 1903 թ. ԲԹ ժողովածուի բնագրի, մի բան, որ, իհարկե, ոչ մի արդարացում չունի:

ԳԳ-ում 43 տողը տպված է՝ «Ու թևերն ահեղ փռած տիրաբար»: Այստեղ «ահեղ» բառը, որ փոխարինել է մյուս բոլոր հրատարակությունների «ահա» բառին, հավանաբար, վրիպակ է (թեև չի նշված վրիպակների

ցանկում): Համենայն դեպս, նպատակահարմար չէ քաղաքացիություն տալ «ահեղ» բառին, որը, թվում է, չի ներդաշնակում պոեմի առաջին գլուխների հուզական բովանդակությանը:

802 տողը ԳԳ-ում տպված է «Մի դիակ է լուռ, սառած»: Մենք այն փոխարինել ենք այլ տարբերակով. «Մի դիակ է, լուռ, հոտած»: Պետք է նկատի ունենալ, որ այս երկու տարբերակների միջև Թումանյանը տատանվել է պոեմի վերամշակման ողջ ընթացքում: 1903 և 1904 թթ. տպագրությունների մեջ նա ընտրել է «հոտած» բառը, բայց 1908, 1909 և 1914 թթ. հրատարակություններում այն փոխարինել է «սառած» բառով, ըստ երևույթին, չուզելով Սարոյի հետ կապել տհաճ տպավորություն առաջացնող որևէ պատկերացում: Սակայն 1916 թ. առանձին հրատարակության և 1922 թ. ԲՊ ժողովածուի մեջ նորից վերականգնված է «հոտած» բառը և, վերջապես, ԳԳ-ում դարձյալ «սառած»: Այսպիսով, շորսական անգամ են գործածվել և մեկ, և մյուս բառը: Ներկա հրատարակության մեջ նախապատվություն տալով «հոտած» ձևին, մենք ղեկավարվել ենք պոեմի կառուցվածքի մի կարևոր առանձնահատկությամբ, որ հակադրությունների հետևողական կիրառությունն է: Ինչպես ստեղծագործության շատ ուրիշ հատվածներ, այնպես էլ վերջին մասը՝ խելակորույս Անուշի «երգերը անկապ, երգերը տըխուր», հիմնվում են կոմպոզիցիոն-հոգեբանական հակադրության վրա: Հերոսուհու մտորումների մեջ անվերջ բախվում են, մի կողմից, վաղեմի սիրո ու երջանկության և, մյուս կողմից, կատարված անդառնալի դժբախտության պատկերները: Հակադրության վրա է կառուցված նաև 801-808 տողերի հատվածը: Դիակի սարսռազդու պատկերին («Ախ, չէ՛, ասան, ասում են՝ դա / Մի դիակ է լուռ, հոտած, / Արյունը չոր դեմքի վըրա, / Աչքերն անթարթ, սիպտակած») հակադրվում է կենդանի Սարոյի թովիչ կերպարը («Նա սիրուն էր, անուշահոտ, / Աչքերը լի ծիծաղով, / Նա գալիս էր ցողոտ-շաղոտ, / Հանաքներով ու խաղով...»): Պարզ է, որ այս հատվածում «հոտած» և «անուշահոտ» բառերի հակադրությունը հուզական և կառուցվածքային շատ կարևոր դեր է կատարում, որից հրաժարվել չի կարելի: Բացի այդ, հիշենք, որ Անուշի պատկերացման մեջ «հոտածը» Սարոյին չի վերաբերում, այլ «մի դիակի», որը հենց հակադրվում է սիրած տղայի պատկերին: Ելնելով այդ նկատառումից՝ հիմնական բնագրի մեջ ընտրել ենք «հոտած» ձևը:

1903 թ. տարբերակի տպագրությունից հետո «Անուշ» պոեմն անմիջապես գրավեց հայ արվեստագետների ուշադրությունը, սկսվեցին այն երաժշտության վերածելու փորձերը: Առաջինը Կոմիտասն էր, որ իսկույն արձագանքեց Իշխանուհի Մարիամ Թումանյանի առաջարկին՝ «Անուշ» օպերա գրելու մասին: 1904 թ. փետրվարի 22-ի նամակով

Կոմիտասն իշխանուհու միջոցով բանաստեղծին խնդրում էր կատարել մի շարք լրացումներ և փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են պոեմը լիբրետոյի վերածելու համար: «Ուրախությամբ կարդացի պ. Հովհ. Թումանյանի «Անուշը» և շատ անուշ գտա. պատրաստ եմ ձեր փափագն իրագործելու»,- գրել է Կոմիտասը: Նրա առաջարկները վերաբերում են մի քանի հատվածներ կրճատելու, լրացնելու, որոշ բառեր փոխելու, մանավանդ թուրքերեն բառերից խուսափելու և, ընդհանրապես, դրամատիկական երկի անհրաժեշտ տարրեր ներմուծելու հարցերին (ԹԺՀ, 479-780):

Պոեմն օպերայի հարմարեցնելու Կոմիտասի առաջարկները Թումանյանին հաղորդեց նաև Փ. Վարդազարյանը՝ մոտավորապես նույն ժամանակ գրած մի նամակում (տե՛ս ԳԱԹ, Թֆ №2083(1043)): «Եթե ժամանակ կունենաս՝ կոմպոզիտորիդ (այսինքն՝ Կոմիտասի.- Խմբ.) կարծիքն իմացիր»,- գրում էր Վարդազարյանը՝ առաջարկելով, մասնավորապես, մի քանի լրացումներ կատարել Անուշի և Սարոյի փախուստի, ապա և Անուշի՝ գյուղ վերադառնալու տեսարաններում:

Ինչ չափով է Թումանյանն ընդառաջել Կոմիտասի ցանկությանը՝ հայտնի չէ: Պահպանվել է միայն պոեմի 1903 թ. հրատարակության մի առանձնատիպ՝ բանաստեղծի բազմաթիվ նշումներով ու լրացումներով, որոնք կապված են միաժամանակ երկու խնդրի հետ՝ օպերային լիբրետոյի ստեղծումը և պոեմի՝ 1904 թ. առանձին հրատարակության նախապատրաստումը (տե՛ս ԳԱԹ, Թֆ №3828(1354)): Այդ աշխատանքի մանրամասն նկարագրությունը տրված է բնագրային տարբերությունների բաժնում: Թումանյանը պոեմը բաժանել է չորս գործողության, նշել է գործող անձանց անունները, կատարել է կրճատումներ, ավելացրել է մի քանի քնարական հատվածներ, կազմել է բարբառային բառերի բառարան (լրացումներն ու բառերի բացատրությունները տեղ գտան 1904 թ. հրատարակության մեջ):

Թումանյանի և Կոմիտասի ստեղծագործական համագործակցությունը շարունակվեց մի քանի տարի, բայց անկանոն և մեծ ընդմիջումներով, որոնք կապված էին բանաստեղծի գերզբաղվածության, ապա նաև առաջին ձերբակալության հետ: 1908 թ. մայիսի 24-ին Թումանյանին հասցեագրած նամակում Կոմիտասը, մասնավորապես, գրել է. «Ախպեր, վաղուց է սկսել եմ և բավական բան գրել քո «Անուշից», բայց դեռ պակասավոր բաներ շատ կան, որպեսզի մի ամբողջություն դառնա: Այս գիրս ստանալուն պես գրիչդ կառնես և ինձ մի դրական բան կգրես: Այս ամառվան արձակուրդին պետք է զբաղվեմ առավելապես «Անուշ»-ով: Գրի՛ր, թե ե՞րբ կարող ես մի քանի օրով ինձ մոտ հյուր գալ և այստեղ միասին վերջացնենք և ես հանգիստ շարունակեմ...» («Խորհրդային Հայաստան», 29 մայիսի 1936

թ.): Մի քանի ամիս անց՝ 1909 թ. փետրվարի 14-ին Կոմիտասը Մարիամ Թումանյանին գրել է. «Անուշն» առաջ է գնում, էլի մի շարք նոր բաներ գրեցի: Մնացել եմ մոլորված: Հովհաննեսի բանաստեղծությունն էր պակաս, էլի կիսատ մնաց «Անուշի» երգական խմբագրությունը. հույս ունեի, որ կգար այս տոներին և վերջ կտայինք, այդ էլ այդպես մնաց» («Սովետական արվեստ», 1962, №10, էջ 55): Հետագայում՝ Կոմիտասի կյանքի դժբախտ հանգամանքների պատճառով, նրա մտահղացումը լիովին չիրականացավ. «Անուշ» օպերայից մեզ հասել են միայն առանձին մենակներ և խմբերգեր (տես Ռ. Աթայան, Կոմիտասի ձեռագրերը, «Սովետական արվեստ», 1955, №4, Ս. Գասպարյան, Կոմիտաս, Երևան, 1961, էջ 144-150):

Դարասկզբին «Անուշ» օպերա գրելու գաղափարով զբաղվել են նաև ուրիշ կոմպոզիտորներ, սակայն առանց Թումանյանի անձնական որևէ մասնակցության:

Այսպես, 1906-1909 թթ. Եղիշե Բաղդասարյանը պոեմի հիման վրա ստեղծեց մի քանի երգեր ու պատկերներ, որոնք լայն տարածում ստացան: Սարգիս Բարխուդարյանը 1917 թ. գրեց «Անուշ» սիմֆոնիկ պոեմը, իսկ 1919 թ. պոեմը բեմադրվեց Կ. Պոլսում՝ Վարդան Սարգսյանի երաժշտությամբ: Պոեմի մոտիվներով օպերա գրելու ցանկություն է ունեցել նաև ռուս կոմպոզիտոր Ա. Տ. Գրեչանինովը:

Սակայն այդ բոլոր փորձերից լիակատար հաջողությամբ պսակվեց միայն Արմեն Տիգրանյանի աշխատանքը: 1908-1912 թթ. նա ստեղծեց իր հանրահռչակ օպերայի նախնական տարբերակը, որ առաջին անգամ բեմադրվեց Ալեքսանդրապոլում, 1912 թ. օգոստոսի 4-ին: Թումանյանը հրավիրվել է մասնակցելու այդ առաջին ներկայացմանը, բայց ի վիճակի չի եղել ժամանելու Ալեքսանդրապոլ: Այդ մասին նա գրել է կոմպոզիտորի քրոջը՝ Արմենուհի Տիգրանյանին, Դսեղից, 1912 թ. օգոստոսի 2-ի նամակում, ուր նաև ասված է. «Յանկանում եմ հաջողությամբ պսակվեն պ. Արմենակի ու բոլոր մասնակցողների սերն ու ջանքերը: Սրտագին բարևներ ինձանից Անուշին, Սարոյին, Մոսնին, մեր սարերի փերիներին ու բոլոր մասնակցողներին...» (ԵԺ V, 380): Ալեքսանդրապոլից հետո Ա. Տիգրանյանի օպերան 1910-ական թթ. բեմադրվել է նաև Անդրկովկասի բազմաթիվ հայաշատ քաղաքներում (Թումանյանը դրանցից ոչ մեկին ներկա չի եղել): Հետագայում՝ 1930-ական թթ. կոմպոզիտորը հիմնովին վերամշակեց և լրացրեց «Անուշ» օպերան՝ ստեղծելով հայ ազգային երաժշտական թատրոնի դասական լավագույն երկերից մեկը:

1960-ական թթ. «Անուշ» պոեմը վերածվել է նաև թատերական ներկայացման (Երևանի դրամատիկական թատրոնում), ավելի ուշ նկարահանվել է համանուն երաժշտական ֆիլմ:

«Անուշի» առաջին հրատարակության մեջ (ԲՄ II) հեղինակը տողատակում տվել է մի շարք բառերի և արտահայտությունների բացատրությունը: Այդ ծանոթագրությունները (ընդամենը 12) սույն հատորում զետեղված են տարբերակների բաժնում պոեմի առաջին խմբագրությունից անմիջապես հետո: Ստորև ծանոթագրվում են պոեմի այդ տարբերակի մի քանի այլ տողեր նրանց համարակալման կարգով:

17 Շեն ու շրջակայք գրկել է Մորփեն

Մորփեն (Մորփեոս) ըստ հունական դիցաբանության երազատեսության աստվածն էր: Պատկերվում էր թևավոր ծերունու տեսքով, որը քաղցր քուն է պարգևում մարդկանց:

29-30 Այս ձորերումն էր, որ Բագրատունին
Բախտի հետ խաղաց իր խաղը վերջին,

Ակնարկում է Լոռու տարածքում X-XII դարերում գոյատևած Բագրատունյաց Կյուրիկյան թագավորության վերջին գահակալներից մեկին Կյուրիկե Ա Բագրատունուն (XI դար): Վերջինս ճանաչեց Գուգարք ներխուժած սելջուկների գերիշխանությունը, որի շնորհիվ մի որոշ ժամանակ պահպանեց Լոռու թագավորության կիսանկախ վիճակը:

31-32 Սեգ Տուտեորդին, Օհան Օձնեցին
Հայրենյաց պաշտպան սուսերն օրհնեցին.

Գրիգոր Տուտեորդին XII դ. վերջում և XIII-ի սկզբում եղել է Հաղպատի և Սանահինի եպիսկոպոս ու վանահայր: Հանդես է եկել բյուզանդական եկեղեցու հետ միություն կազմելու դեմ դրա մեջ տեսնելով ազգային եկեղեցու անկախության կորստյան վտանգ:

Օհան (Հովհան) Օձնեցին VIII դ. եկեղեցական գործիչ և մատենագիր է, հիմնադիրը Օձունի (Ուզունլարի) եկեղեցու:

35-40 տողերում բանաստեղծն ակնարկում է Մամիկոնյան նախարարական տան մի ճյուղի Համազասպյանների գաղթը Տարոնից Լոռի, մասնավորապես Դսեղ (X-XI դարերում): Այստեղ հիշատակվող «ճերմակ, բարձրաքաշ տաճարը» XIII դարում Մամիկոնյանների կառուցած Բարձրաքաշ Ս. Գրիգորի վանքն է Դսեղում: Տոհմական ավանդության և մի շարք պատմական աղբյուրների հիման վրա Թումանյանն իրեն համարել է սերած Լոռու Մամիկոնյաններից (մանրամասն տես Ա. Ինճիկյան, էջ 11-20):

177, 179, 181 տողերում հիշատակվող Ջաթինդաղը, Ղարախաչը, Քոշաքարը, Լալվարն ու Դվալը Լոռու սարերից են:

307-318 տողերում (XVIII գլուխ) խոսքը վերաբերում է հայոց թագավոր Արտաշեսի կողմից ալանաց արքայադուստր Սաթենիկի առևանգմանը,

որը դարձել է Գողթան երգիչների վիպական երգերի նյութ: Երիտասարդ Թումանյանը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերել Արտաշեսի և Սաթենիկի սիրավեպի նկատմամբ և, բացի այս տողերից, 1894 թ. այդ հարցին նվիրել է մի հատուկ հոդված-ուսումնասիրություն («Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ».- ԵԺ IV, 13-21):

9-12-րդ տողեր. Յոթն աղբյուրից ջուր առնելու և յոթ ծաղկից ծաղիկ քաղելու սովորույթին հանդիպում ենք նաև ժողովրդական խաղիկներում.

Ես պըճըլիկ աղջիկ մ'իմ
Եօթը աղբրկայ ջրիկ իմ.
Եօթը ծառի ճղիկ իմ,
Եօթը ծաղկի թերթիկ իմ:

(Վահան վրդ. Տեր-Մինասյան, Անգիր գպրութիւն և հին սովորույթներ, գիրք Բ, կ. Պոլիս, 1904, էջ 136):

Վահան վրդ. Տեր-Մինասյանը այսպես է ներկայացնում կատարվող արարողությունը. «Շատ կանուխէն եօթն աղջիկ անխօս, լուռ-մունչ կ'երթան եօթն աղբիւրէ կամ եօթն հորէ եօթն բուռ ջուր բղուղի մը մէջ կը լնուն, եւ եօթն տեսակ ծառէ եօթն տերեւ փրցընելով եօթն տեսակ ծաղիկի հետ կը խառնեն եւ դնէ դուռ ժուռ գալով դրկիցներէ վիճականիշներ կոճակ, մատնի, հիւլուն, ուրիշ մանր մունր բաներ առնլով կը նետեն բղուղին մէջ, եւ զայն կը դնեն վարդենիի կամ ուրիշ ծաղկի թփի մը տակ» (էջ 138):

52-56-րդ տողեր. Լոռու հսկաների Արագածի դատերը փախցնելու մասին ավանդությունը գրառել և Թումանյանին է փոխանցել Լոռիից Զաքարիա Դեմիրխանյանը (ԹԺՀ, էջ 307):

270-271-րդ տողեր. Ժողովրդական նախորինակն է Վարդավառի երգերի հետևյալ տողերը.

Քեա նապերով, քեա խորոտիկ, տիւ վիրն ես,
Աշխարհ գիտի, ալամ գիտի, տիւ իմն ես:

(Դ. Շերենց, Վանայ սազ, հտ. Ա, Թիֆլիս, 1885, էջ 41):

290-293-րդ տողեր. Անուշին հանած վիճակը կանխագուշակում է դեպքերի զարգացման հետագա ընթացքը: Նույն ձևով «Սոս և Վարդի-թերում» վիճակ հանելիս բախտը քանիցս չի ժպտում Վարդիթերին:

294-րդ տող. Համբարձման տոնի վիճակահանության ժամանակ «սև վիճակ» չէր լինում, որովհետև դա անհամատեղելի էր տոնի ուրախ տրամադրությանը: Այդ մասին Վահան վարդապետը գրում է. «Դեռատի աղջիկ մը, որ կը հանէ իւրաքանչիւրին վիճականիշը, չորեք տողեայ երգէ մը յետոյ, որուն տէրն իսկոյն կը շնորհաւորուի իբր բաղդաւոր: Զարագուշակ վիճակ չկայ, զի երգերն աւելի ուրախական են եւ սիրազեղուն, եւ ոչ երբէք

տխրական և տրրմառիթ» (էջ 140):

Պռոշյանը «Սոս և Վարդիթեր»-ում, Թումանյանը «Անուշ»-ում շեղվել են ընդունված սովորույթից հատուկ նկատառումով՝ հուշելու համար, որ դժբախտությունը կանխորոշված էր ոչ թե «վիճակով», այլ կարծրացած «ադաթով» կամ մութ բարքերով:

692-693-րդ տողեր. Ժողովրդական ողբերում մայրը որդուն դիմելով ասում է.

Կարմիր արևից ընկած, բալայ ջան,
Կանաչ տերևից ընկած, բալայ ջան:

(Ե. Լալայան, Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», X գիրք, էջ 171):

726-735-րդ տողեր. Ժողովրդական նախօրինակն է.

Ա՛յ իմ խեղճաբեր խաթուն,
Ինչ կուլաս խղճուկ ողորմած,
Թէ կուլաս ու վարդ կուզես,
Նո՛ր տի գա գարունն ու բերէ,
Թէ կուլաս ու յարդ (մայրդ) կուզես,
Գնացեր, որ ա՛լ չի տի գա:

(Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951, էջ 153):

809-820-րդ տողեր. Ժողովրդական նախօրինակն է.

Արի՛, ծով-ծով աչեր, զիս մի լացըներ,
Զիս շատ է լացուցած, դուն մի՛ լացըներ:

(Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951, էջ 409):

845-856-րդ տողեր. Ժողովրդական հավատալիքն է, որ մարմնավորվել է Լեյլիի և Մեջլումի մասին արևելյան հայտնի ավանդավեպում: Դրան բազմիցս անդրադարձել են նաև հայ գրողները: Րաֆֆին «Սալբիում» գրում է. «Բայց տարին մի անգամ, սուրբ Համբարձման գիշերը Տիրոջ հրամանով Լեյլին ու Մեջնունը անչափելի ճանապարհ կտրելով՝ մոտենում են միմյանց, գրկախառնվում և առնում են իրենց կարոտը...» (Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1953, էջ 104-105):

Համբարձման գիշերը աստվածային շողով բնության կենդանանալը գեղարվեստորեն պատկերել է նաև Պ. Պռոշյանը «Սոս և Վարդիթեր» վեպում (Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 148-151):

Ավ. Իսահակյանը ոչ միայն բանաստեղծական մշակման է ենթարկել այս ավանդությունը, այլև 1901 թ. գրում է. «Երբ Համբարձման գիշերը երկինք ու գետինք իրար համբուրում են, աստղերը իրար համբուրում են, - դրանք էլ արևելքից և արևմուտքից գալիս են, իրար հանդիպում, կեսգիշերին,

մի վայրկյան, իրար գրկում, համբուրում և էլի բաժանվում են. արևելքից եկողը գնում է արևմուտք, արևմուտքից եկողը՝ արևելք»:

Թումանյանը անկասկած նկատի է ունեցել նաև ավանդության՝ «Ազգագրական հանդեսում» 1902 թ. լույս տեսած հետևյալ տարբերակը. «Երկուքը միասին երկու աստղ կ՚ըլլան, կ՚ելնեն երկինքը, տարեկան անգամ մը շրջան կ՚ընեն երկնքի մէջ, Համբարձման հինգշաբթի գիշերը իրարու կը հանդիպեն, կը համբուրուին, ու դարձեալ կ՚երթան շրջան ընելու: Այդ անմեղ զոհերու իրար գտնելու, ուրախանալու և համբուրուելու վրայ՝ տիեզերքի բոլոր անշունչ առարկաները. աստղեր, երկրի լեռներ, ձորեր, քարեր, ծառեր և այլն մեծ ուրախութիւն կ՚ըզգան և իրենք ալ իրարու հետ կը համբուրուին» (էջ 270):

Ավանդապույցը «Անուշի» վերջերգում նոր իմաստ է ձեռք բերում՝ ձուլվելով Թումանյանական գեղագիտության ու կենսափիլիսոփայության միասնական համակարգին:

ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ
(էջ 115, 371) (ԵԼԺ 3, էջ 111)

Առաջին անգամ ՄԾ, 1903, №11, էջ 27-40, այնուհետև, ոչ մեծ շտկումներով՝ ԲԹ, էջ 143-159, ՀԳ, առաջին (1909) և երկրորդ (1914) տպագրություն, էջ 135-142, ԲՊ, էջ 163-178: Մտել է ԵԺ II, էջ 75-85: Պոեմի սևագիր տարբերակները տեղ են գտել երեք հրատարակությունների մեջ՝ հետևյալ հաջորդականությամբ. ԵԺ II (1940), 264-275, ԵԺ I (1950), 455-463, ՈՒՀ 2 (1969), 208-232:

Սույն հրատարակության մեջ իբրև հիմնական բնագիր ընդունված է ՀԳ դասագրքի 1914 թ. տպագրությունը՝ ցույց տալով ՄԾ, ԲԹ և ԲՊ տեքստային տարբերությունները: Տարբերակների բաժնում ի մի են հավաքված սևագիր հատվածները, ինչպես նաև պոեմի հետ կապված այլ նյութեր (տե՛ս ԳԱԹ, ԹՖ №43(6ա), №159 (6գ), №160 (6բ), №161(6գ), №161(3լբ), №161(100ե), №162(6գ), №163 (6ա):

«Դեպի Անհունը» Թումանյանը մտահղացել և սկսել է գրել 1890-ական թթ. առաջին կեսին: Պոեմի առաջին տարբերակն, ըստ երևույթին, ավարտվել է 1894 թ., այդ պատճառով էլ հիշյալ բոլոր հրատարակությունների մեջ իբրև գրության թվական նշվել է 1894-ը: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ աշխատանքը պոեմի վրա շարունակվել է նաև հետագա տարիներին՝ մինչև դարասկզբին վերջնական տարբերակի ստեղծումն ու հրապարակումը: Դատելով պահպանված տվյալներից՝ Թումանյանի այս պոեմը գրության

տարբեր փուլերում ունեցել է տարբեր վերնագրեր՝ «Կենդանի թաղվածը (լեթարգիա)», «Ճերմակ աղավնի», «Սրրհար», «Խավարի մեջ», «Դեպի մութը», որոնց ի վերջո հաջորդեց ստեղծագործության փիլիսոփայական բովանդակությունն արտահայտող վերնագիր՝ «Դեպի Անհունը»:

Սկզբնապես Թումանյանն իր այս պոեմը ծրագրել էր իբրև մի ստեղծագործություն, որի մեջ պիտի ցուցադրվեր և քննադատվեր նահապետական աշխարհի հետամնաց բարքերի ու պատկերացումների մի կոնկրետ դրսևորումը՝ լեթարգիկ քնի մեջ ընկած մարդկանց մահացած համարելու և կենդանի թաղելու սոսկալի երևույթը: Դա երևում է ինչպես պոեմի նախնական վերնագրերից ու սևագիր հատվածներից, այնպես էլ ժամանակակիցների հուշերից: Այդ մասին են խոսում նաև պոեմի հետ կապված այն գրառումները, որոնց մեջ հիշատակվում են Լոռու գյուղերում տարբեր ժամանակ սխալմամբ կենդանի թաղված մարդկանց անունները, դեպքի տեղն ու թվականը (տե՛ս տարբերակների բաժնում): Ժամանակագրական առումով այդ դեպքերը վերաբերում են անցյալ դարի երկրորդ կեսին և հասնում են մինչև 1900 թվականը:

Ինչպես մի զրույցի ժամանակ հիշել է Թումանյանը, «Դեպի Անհունի» առաջին տարբերակը («Ճերմակ աղավնի» վերնագրով) ինքը գրել է բանաստեղծական բարձր ոգևորության հոգեվիճակում, «1894 թվին, Նորաշենի փողոցում, Տեր-Ղևոնդյանի տանը..., մի եռոտանի, հին, կոտրած սեղանի վրա» (Ն. Թումանյան, էջ 175, 232): Նույնը հետագայում հաստատել է նաև բանաստեղծի այրին՝ Օլգա Թումանյանը (տե՛ս ԹԺՀ, 334):

Պոեմի առաջին գրավոր հիշատակության հանդիպում ենք 1894 թ. մարտի 31-ին Ժիտոմիրից Ան. Աբովյանի գրած նամակում, ուր կան այսպիսի տողեր. «Կենդանի թաղվածը» անունով նոր պոեմադ, եթե չեմ սխալվում, հենց քո կյանքից պետք է լինի. աղբաթդ խեր, մի՞թե այդ է բանաստեղծի կոչումը, ինչո՞ւ ես կյանքի հոսանքի առաջ ընկճվում և ուզում գրվածքներովդ էլ հուսահատություն ներշնչել ընթերցողների մեջ: Կյանք տուր գրվածքներովդ և եռանդ ներշնչիր ընթերցողներիդ մեջ: Նույնիսկ սեփական կյանքովդ օրինակ հանդիսացիր» (ՈՒՀ 4, 321-322): Դժվար չէ կռահել, որ Ան. Աբովյանն իր պատկերացումը կազմել է ոչ թե պոեմի ընթերցման, այլ Թումանյանի նախորդ մի նամակի (որը մեզ չի հասել) հիման վրա՝ ընդսմին սխալ հասկանալով իր նոր երկի մասին բանաստեղծի հայտնած տվյալները: Ահա թե ինչու Թումանյանը հարկ համարեց անմիջապես պատասխանել բարեկամի անիրավացի հանդիմանությանը: Նույն թվականի ապրիլի 17-ի նամակում, ժխտելով իր նոր պոեմի ինքնակենսագրական բնույթը, նա գրել է. «Կենդանի թաղվածը» դու զուր ես կարծել, թե իմ կյանքիցն է. ինչո՞ւ ես դու ինձ այդքան փոքրոգի կարծում

– որի համար հանդիմանում ես» (ԵԺ V, 94):

Սակայն ոչ 1894 և ոչ էլ հաջորդ մի քանի տարիներին Թումանյանն իր այս պոեմը հրապարակելու փորձ չի արել՝ հավանաբար այն դեռ պատրաստ չհամարելով տպագրության համար: Նա շարունակել է աշխատել պոեմի վրա, որի նոր տարբերակն, ըստ երևույթին, ավարտել է 1898 թ. սկզբին՝ այս դեպքում արդեն ներառելով նաև այն ծանր տրամադրությունները, որոնք ծնվել էին բանաստեղծի հոր՝ Տեր-Թադևոսի մահվան կապակցությամբ (մահացել է 1898 թ. հունվարի 5-ին): Այդ մասին կա Դ. Դեմիրճյանի վկայությունը, որն իր հուշերում գրել է. «Հոր մասին զրույցը Թումանյանի նվիրական նյութերից էր: Վերջում ինձ մի օր էլ նա հասկացրեց, որ «Դեպի Անհունը» պոեմի մեռած կինը նրա համար արտաքին, հնարովի պատկեր է միայն, որ նա այդ կնոջ մեջ դրել է իր որդիական սերը դեպի հայրը» (ԹԺՀ, 26):

Դարավերջին Թումանյանն իր պոեմը կարդացել է շատերի մոտ՝ ցանկանալով իմանալ նրանց տպավորությունն ու կարծիքը: Ավ. Իսահակյանը հիշում է, որ ինքը պոեմի հետ ծանոթացել է 1898 թ. սկզբներին, երբ Օդեսա աքսորվելու ճանապարհին կանգ է առել Թիֆլիսում և եղել է Թումանյանի տանը. «Երբ մնացինք մենակ, Օհաննեսը կարդաց «Դեպի Անհունը» պոեմը, որ վաղուց էր գրել, հիմա վերամշակել էր, տակավին ոչ վերջնականապես: Ասում էր, որ պոեմի նյութը վավերական է, ճշգրիտ իրողություն: Պոեմն ինձ վրա տպավորություն թողեց: Անհանգիստ դիշեր ապրեցի: Երևակայությունս հուզված էր և անհեթեթ երազներ տեսա: Առավոտյան երազներս պատմեցի Օհաննեսին: Նա էլ թե՝ «Սա լավ նշան է, որ պոեմս ազդեցություն է թողնում, բայց իմ պոեզիայի ոճին չի բռնում: Խորթ զավակ է այս պոեմն ինձ համար, նյութն էլ, գրելաձևն էլ: Բայց թող լինի, իմանան, որ ֆոլկլորից դուրս էլ կարող եմ բան գրել»: Այս միամիտ բացատրությունը շատ զվարճացրեց ինձ» (ԹԺՀ, 10):

Անշուշտ, որևէ հիմք չկա կասկածի ենթարկելու Ավ. Իսահակյանի այս վկայությունը: Սակայն պետք է նշել նաև, որ այստեղ բերված Թումանյանի խոսքերը («խորթ զավակ է այս պոեմն ինձ համար») տրամագծորեն հակադիր են 1918 թ. մի զրույցի ժամանակ ասածին. «Էդ պոեմը իմ մտածողության արդյունքն է» (Ն. Թումանյան, էջ 175): Քսան տարի անց հեղինակը կարող էր այլ կերպ (և, ավելացնենք, շատ ավելի ճիշտ) հասկանալ պոեմի կապն իր ստեղծագործության և աշխարհըմբռնման ընդհանուր համակարգի հետ:

Պոեմը խոր տպավորություն է թողել ոչ միայն Ավ. Իսահակյանի, այլև շատ ուրիշ ունկնդիրների վրա: Նրանցից ոմանք, ինչպես Հակոբ Մանանդյանը, Սիրեկան Տիգրանյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան), «Դեպի Ան-

հունը» համարել են Թումանյանի գլուխգործոցը, նրա գլխավոր երկը: Այդ մասին կա բանաստեղծի վկայությունը 1918 թ. դեկտեմբերի 15-ի զրույցի ժամանակ, ինչպես նաև խոսվում է Սերգեյ Գորոդեցկու «Իմաստուն ու նուրբ» հոդվածում, որը գրված է 1919 թ. Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ՝ զգալի չափով նրա իսկ պատմածների հիման վրա (ԹԺՀ, 893): Ղ. Աղայանը ևս, Թումանյանի վկայությամբ, «շատ էր հավանել» («նրա սիրած գրվածքն էր») «Դեպի Անհունը», որի ընթերցանությունից ավագ ընկերոջ ստացած տպավորության մասին շատ տարիներ անց նա ասել է հետևյալը. «Կարդալուց հետո լռեց. երկար վրես նայեց ու գնաց զբոսնելու: Գնաց, ման եկավ, ման, եկավ մին էլ կարդաց ու ասաց. «Գրել ես, բայց ինքդ էլ չգիտես, թե ինչ ես գրել» (Ն. Թումանյան, էջ 175):

Սակայն պոեմի ընթերցումը բարեկամների շրջանում 1890-ական թթ. վերջում պատճառ դարձավ, որ Թումանյանը էական փոփոխություններ մտցներ «Դեպի Անհունի» բուն մտահղացման, կառուցվածքի և գաղափարական բովանդակության մեջ: Մեզ որոշակիորեն հայտնի է, որ մինչև 1898 թ. պոեմը բաղկացած է եղել երկու մեծ մասերից: Առաջին մասում բացահայտվում էին քնարական հերոսի ծանր ապրումները կնոջ՝ Հասմիկի մահվան առիթով, նկարագրվում էր նրա թաղման արարողությունը: Իսկ պոեմի երկրորդ մասում նկարագրվել են կենդանի թաղված Հասմիկի տառապանքները, նրա գիշերային այցելությունները ամուսնուն, երրորդ անգամ՝ արդեն արյունոտված կրծքով: Ի վերջո պարզվում է, որ Հասմիկն իրոք լեթարգիկ քնի մեջ է եղել, բայց հետո կաղամախու ցցով սպանվել է գերեզմանի մոտով անցնող և հողի տակից լսվող ձայներից սարսափահար մարդկանց կողմից (այստեղից էլ պոեմի նախնական վերնագրերից մեկը՝ «Սրհար»): Այս պատմությունը շատ ծանր ազդեցություն է գործել ունկնդիրների վրա (Իսահակյանի խոսքերը «անհանգիստ գիշերի» և «անհեթեթ երազների» մասին, անշուշտ, այդ գրվագների հետ էին կապված): Իր իսկ գրածի տպավորության տակ «վախից ու սարսափից» անքուն գիշերներ է անցկացրել նաև հեղինակը և ի վերջո, անսալով Լևոն Շանթի խորհրդին, որոշել է ոչնչացնել այդ երկրորդ մասը: Այդ մասին Թումանյանը մանրամասնորեն պատմել է Ս. Գորոդեցկուն (տե՛ս ԹԺՀ, էջ 893-894) և դստեր գրի առած հետևյալ զրույցի ժամանակ.

«Ափսոսում էր, որ երկրորդ մասը չի տպել. պատճառը Շանթն է եղել: Պոեմը մի օր կարդացել է նրան, որի վրա պոեմի երկրորդ մասը ծանր ու ճնշող տպավորություն է թողել: «Դեպի Անհունը» գրելու ժամանակ հայրիկն այնպիսի ճնշող ապրումներ է ունեցել, որ գիշերը չի կարողացել քնել, զարթեցրել է մայրիկին: Հայրիկը պոեմի երկրորդ մասը ոչնչացրել է, առաջին մասը կրճատել է, վերջացրել կրոնական երգերով ու մի քանի

տնով պոեմը փակել՝ ի վնաս գործի ամբողջության» (Ն. Թումանյան, էջ 174, 232):

Թեև նույն աղբյուրներից իմանում ենք, որ հետագայում Թումանյանը շատ է ափսոսացել պոեմի երկրորդ մասը ոչնչացնելու և երկն անավարտ թողնելու համար, որ դրանով հայ գրականությունը զրկվել է «իր մի քանի ակնհայտ ուժեղ էջերից» և այլն, սակայն բանաստեղծի մտցրած փոփոխությունները բխում էին միանգամայն ճիշտ և առողջ գեղագիտական ըմբռնումներից: Բարեկամների և հենց իր ունեցած ծանր ապրումները համոզեցին բանաստեղծին, որ կենդանի թաղված մարդու տառապանքների նկարագրությունը ճնշող և ջլատիչ ազդեցություն կգործեր ընթերցողի հոգեբանության վրա, կներշնչեր հուսահատական տրամադրություններ: Դա կտաներ դեպի նատուրալիստական տպավորություն, որը խորթ է իսկական արվեստի կոչմանը: Այդ պատճառով Թումանյանը կտրուկ կերպով հրաժարվեց ստեղծագործության երկրորդ մասից՝ կենդանի թաղվածի սարսափելի ճակատագրի նկարագրությունից, և պոեմին տվեց ավելի լայն փիլիսոփայական բնույթ: Վերջնական տարբերակի մեջ «Դեպի Անհունի» բովանդակության հիմքը դարձավ կյանքի և մահվան մեծ առեղծվածը, մարդու և բնության, ժամանակի և հավերժության փոխհարաբերության հարցերը, որոնք պոեմում լուծվում են տարերային պանթեիստական փիլիսոփայության դիրքերից: Այս և ուրիշ գծերով «Դեպի Անհունը», իրոք, դարձավ Թումանյանի ստեղծագործության կենտրոնական հանգույցներից մեկը, ուր միավորվում և բարձր համադրությամբ արտահայտվում են նրա փիլիսոփայական և գեղագիտական ըմբռնումների կարևորագույն կողմերը:

Պոեմի «փոքրացված», բայց և գաղափարական-գեղարվեստական շատ ավելի լայն ընդգրկումների հասցված տարբերակը գոյացավ արդեն նոր դարի սկզբին «Բանաստեղծությունների» 1903 թ. ժողովածուն պատրաստելիս: «Մուրճ» ամսագրում տպագրվելուց հետո Թումանյանը նրա առանձնատիպի վրա մի քանի ոչ մեծ փոփոխություններ է մտցնում (տես տարբերակների բաժինը), որոնք տեղ գտան ԲԹ-ում: Թումանյանը ցանկացել է նաև պոեմին կցել հատուկ շափածո նախերգանք «Անմահությանը» վերնագրով, բայց ի վերջո հրաժարվել է այդ մտքից: «Մուրճի» առանձնատիպին կցված այդ նախերգանքը, իբրև ինքնուրույն բանաստեղծություն, զետեղված է սույն հրատարակության առաջին հատորի մեջ: 1903 թ. հետո պոեմն այլևս որևէ փոփոխություն չի կրել, եթե չհաշվենք ՀԳ դասագրքի տեքստում մտցրած մի քանի սճական շտկումները:

Այս հատորի տարբերակների բաժնում հրապարակվում են պոեմի այն բոլոր սևագիր մասերը, որոնք հասել են մեզ: Ինչպես երևում է այդ

նյութերից, Թումանյանը ոչնչացրել է պոեմի երկրորդ մասի մաքրագիր և ավարտուն տարբերակը, իսկ շատ սևագիր անավարտ տարբերակներ, բարեբախտաբար, պահպանվել են և կարող են որոշ պատկերացում տալ կորած մասերի վերաբերյալ: Սևագիր տարբերակները հարուստ նյութ են տալիս պոեմի ստեղծագործական պատմության պարզաբանման համար, ցուցադրում են այն հսկայական աշխատանքը, որ տարիների ընթացքում կատարվել է ստեղծագործության սյուժեի և պատկերային համակարգի, նրա կենսական և փիլիսոփայական բովանդակության կատարելագործման համար: Այդ նյութերը ներկա հրատարակության մեջ ներկայացվում են երեք բաժնով.

ա) «Կենդանի թաղվածը (լեթարգիա)» վերնագրով սևագիր հատվածը (ավելի քան 200 տող՝ բազմաթիվ մշակումներով), որն իր բովանդակությամբ համապատասխանում է նախնական տարբերակի առաջին մասին:

բ) Համեմատաբար ամբողջական մի սևագիր տարբերակ (մոտ 400 տող՝ բազմաթիվ մշակումներով), որը եղել է պոեմի երկրորդ մասի ստեղծման նախնական աստիճաններից մեկը:

գ) «Հատվածներ պոեմից» ընդհանուր վերնագրի տակ հրապարակվում են ավելի քան 500 սևագիր տող իրենց տարբերակներով: Տրվում է ընդամենը 12 հատված, որոնք համարակալված ու դասավորված են ըստ բովանդակության: Դրանցից առաջին տասը նույն հերթականությամբ ժամանակին հրապարակել է Արամ Ինճիկյանը (ՈՒՀ 2), մյուս երկուսը ավելացվել են սույն հատորը կազմողների կողմից:Իրենց բովանդակությամբ այդ հատվածները վերաբերում են ստեղծագործության բոլոր մասերին: Յուրաքանչյուր հատված ունի տողերի առանձին համարակալում:

Պոեմի սևագիր տարբերակները հրապարակվում են ըստ ԳԱԹ-ում պահվող ինքնագրերի: Նախորդ հրապարակումների համեմատությամբ մտցվել են բազմաթիվ կառուցվածքային փոփոխություններ և ընթերցման ճշտումներ:

«Դեպի Անհունի» սևագիր հատվածների, ինչպես նաև նրանց և վերջնական տարբերակի միջև կան մի շարք համընկնող տողեր և նույնիսկ մասեր: Սակայն դրանք ընդհանուր առմամբ շատ ավելի քիչ են, քան տարբերվող մասերը, և դա ուրույն արժեք ու հետաքրքրություն է հաղորդում հատվածներից ամեն մեկին: Այդ հանգամանքը ցույց է տալիս նաև, թե ինչպիսի համառ ու երկարատև ստեղծագործական աշխատանքի ճանապարհ է անցել պոեմը՝ մինչև վերջնական խմբագրությանը հասնելը:

Չափածո հատվածներից հետո առանձին բաժնում հավաքված արձակ գրառումները հրապարակվում են առաջին անգամ:

ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ
(էջ 131, 432) (ԵԼԺ 3, էջ 127)

Առաջին անգամ «Վտակ» գրական-բանասիրական ժողովածուի մեջ (խմբագրությամբ Վրթ. Փափազյանի, Թիֆլիս, 1901, էջ 64-80), «Պոետն ու Մուզան» վերնագրով և «Հատված» ենթավերնագրով: Այնուհետև, էապես վերամշակված տեսքով՝ ԲԹ, էջ 205-219, ՀԳ (1909, 1914), էջ 129-135: Հեղինակի կենդանության ժամանակ հրատարակված մյուս ժողովածուների մեջ չի մտել: Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության 2-րդ հատորում տպագրվել են ՀԳ բնագիրը իբրև հիմնական խմբագրություն (էջ 89-100), «Վտակ» ժողովածուի բնագիրն իբրև տարբերակ (էջ 340-353) և ընդարձակ հատվածներ պոեմի ձեռագիր նյութերից (էջ 385-393):

Սույն հրատարակության համար ևս հիմք է ընդունվել ՀԳ դասագրքի տեքստը: Մյուս բոլոր նյութերը զետեղվել են տարբերակների բաժնում (պահվում են ԳԱԹ, ԹՖ №165(7գ), №166(7ա), №167(12լր), №168(7դ, 12լր.), №169(19լր.) և №170(7բ):

«Պոետն ու Մուսայի» մտահղացումը, ավելի ճիշտ՝ ժամանակակից հասարակության մեջ բանաստեղծի իրական վիճակի մասին գեղարվեստական-երգիծական գործ գրելու ծրագիրը ծագել է շատ վաղ՝ դեռ 1890-ական թթ. սկզբին: Այն սկիզբ է առնում Թիֆլիսի հայոց հոգևոր կոնսիստորիայում ծառայելու տարիներին, երբ Թումանյանն ինքը ամեն քայլափոխի հանդիպել է իր բանաստեղծական ներշնչանքների նկատմամբ բիրտ-անհասկացող, նույնիսկ թշնամական վերաբերմունքի: Այդ ամենի մասին երգիծական պոեմ գրելու առաջին փորձը եղավ «Գրագիր Մուզան» (տես սևագիր և անավարտ երկերի բաժինը սույն հատորում), ուր արդեն հանդես եկավ Բանաստեղծի և նրա Մուսայի հանդիպման ու խոսակցության պայմանական հնարանքը: Հայտնվելով հոգևոր գրասենյակի պայմաններում՝ Մուսան (բանաստեղծի ոգևորությունը) ստիպված է թաքնվել մարդկանց աչքից. դրանով Թումանյանն ակնարկում էր իր կոչման և իրական վիճակի դրամատիկ հակասությունը:

«Գրագիր Մուզան» մնաց սևագիր և անավարտ, բայց արվեստագետի և հասարակության փոխհարաբերության թեման բանաստեղծին զբաղեցրել է 90-ական թթ. ամբողջ ընթացքում: Դրա վկայությունն են նաև տասնամյակի վերջում գրած այն չափածո ֆեյլիետոնները («Հայի զարմանքը», «Հայի տրտունջը», «Գրականական մազանդա», «Հայոց ապաբախտ գրողը նստած...»), որոնց մեջ երգիծական միջոցներով արծարծվում է, ըստ էության, ողբերգական մի թեմա՝ արվեստագետի տաղանդի, ոգևորության

և բոլոր գեղեցիկ ծրագրերի կործանումը շրջապատի անտարբերության և անըմբռնողության, նյութական ապահովության տարրական պայմանների բացակայության պատճառով:

«Պոետն ու Մուսան» ծնվեց այդ երկերի ստեղծագործական փորձի հիման վրա և նրանց զուգահեռ: Բայց ե՞րբ է գրվել Թումանյանի երգիծական պոեմը: Սույն հրատարակության մեջ, ինչպես հիմնավորված է այս հատորի ներածական հոդվածում, պոեմի գրության ժամանակը համարվում է 1900-1901 թվականները: Բայց դա ստեղծագործական աշխատանքի հիմնական շրջանն է, իսկ պոեմի գրությունն սկսվել է, հավանաբար, դրանից առաջ՝ 90-ական թթ. երկրորդ կեսին, և շարունակվել է նաև 1901-ից հետո, երբ «Բանաստեղծությունների» 1903 թ. ժողովածուն պատրաստելու ընթացքում, տեքստի զգալի կրճատման և ոճական շտկումների ճանապարհով, գոյացավ պոեմի վերջնական տարբերակը: Ա. Ինճիկյանը նույնիսկ ենթադրել է, որ Թումանյանի՝ 1896 թ. մի գրության մեջ, Ջալալ Տեր-Գրիգորյանի՝ 1897 թ. մարտի 21-ի նամակում և Ղ. Աղայանի՝ 1899 թ. հունվարի 30-ի և ապրիլի 19-ի նամակներում հիշատակվող «խորտակվածը» կամ «խորտակված կյանք» վերնագրով պոեմը հենց «Պոետն ու Մուսայի» նախնական տարբերակն է եղել: 1899 թ. Թումանյանն այդ պոեմը հանձնել է նախ Մ. Բերբերյանի «Կյանք», ապա Ա. Թարխանյանի «Թատրոն» հանդեսներում տպագրելու համար, բայց երկու դեպքում էլ այն հանդիպել է զանազան արգելքների (տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 488-490): Անհրաժեշտ է ավելացնել, որ դա հավանաբար եղել է պոեմի մեկ ուրիշ, մեզ անհայտ խմբագրություն, որն էական տարբերություններ է ունեցել առկա նյութերից: Այդ ասելու հիմք է տալիս, նախ և առաջ, «խորտակված կյանք» վերնագիրը. կարելի է կարծել, որ պոեմի այդ տարբերակում, երգիծական կողմերի հետ մեկտեղ (Ղ. Աղայանն իր հիշյալ նամակներից երկրորդի մեջ Թումանյանի պոեմի մասին ասում է՝ «քո սատիրան»), ավելի ուժեղ է արտահայտված եղել ճշմարտությանը ծառայելու ճանապարհին արվեստագետի կրած հալածանքների դրամատիկ, նույնիսկ ողբերգական թեման:

«Պոետն ու Մուսայի» մեզ հասած առաջին ամբողջական տարբերակը պոեմի այն խմբագրությունն է, որը 1900 թ. բանաստեղծը ներկայացրեց «Վտակ» գրական-բանասիրական ժողովածուի համար: Այդ մասին մենք ունենք Թումանյանի վկայությունը՝ Փ. Վարդազարյանին գրած մի նամակի մեջ: Բանաստեղծը հայտնում է, որ Մոսկվայի հայ ուսանողները մտադիր են մի գրական ժողովածու հրատարակել և խնդրում են մասնակցել, իսկ նրա խմբագիր Վրթ. Փափազյանը «գրում է, թե շնորհակալ կլինենք, եթե ուղարկես երգիծական պոեմդ «Բանաստեղծը և սատիրը» – այսինքն Մուսան: Արդ,– շարունակում է Թումանյանը,– ինձ մոտ չկան ոչ բանաստեղծ

և ոչ Մուսա: Կարծեմ մեկը դու ունես: Մի նայիր ու քո նկատողություններով հանդերձ ղրկիր ինձ, որ ուղղեմ ու ղրկեմ ուսանողներին» (ԵԺ V, 158: Այդ հրատարակության մեջ Փ. Վարդազարյանին հղած տվյալ նամակը ենթադրաբար վերագրված է 1899 թվականին, բայց դա ճիշտ չէ, պետք է լինի 1900 թ.): Այս տողերից կարելի է ենթադրել, որ սկզբնապես պոեմի վերնագիրը եղել է «Բանաստեղծը և սատիրը»: Բայց ավելի հավանական է Ա. Ինճիկյանի կարծիքը, որի համաձայն դա ոչ թե պոեմի անհայտ խորագիրն է, այլ «Վրթ. Փափազյանն է իր նամակում այդպես կոչել կամ կատակով և կամ իսկական անվանումը մոռացած լինելով» (Ա. Ինճիկյան, էջ 492):

Մեկ այլ աղբյուրից 1919 թ. մարտի 26-ի զրույցից իմանում ենք, որ «Պոետն ու Մուսայի» նախնական խմբագրություններից մեկը բնաբան է ունեցել Մարիա Կոնոպնիցկայայի «Պրոմեթեոս և Սիզիֆ» գրքից քաղված մի հատված (տես Ն. Թումանյան, էջ 204): Պահպանվել է այդ հատվածի թարգմանության ինքնագիրը, որ Թումանյանը նվիրել է Ֆ-ին (Փ. Վարդազարյանին): Ինչով են կապվում անտիկ դիցաբանության այդ երկու նշանավոր կերպարները հայ բանաստեղծի երգիծական պոեմի բովանդակության հետ: Մարդկանց կրակ պարգևելու համար անլուր տառապանքներ կրող Պրոմեթեոսի և անվերջանալի ապարդյուն աշխատանքի դատապարտված Սիզիֆի միջոցով Թումանյանն, անշուշտ, ցանկացել է ակնարկել արվեստագետի ճակատագրի ողբերգական իմաստը: Իզուր չէ, որ Թումանյանը թարգմանել է հատկապես այն հատվածը, ուր Պրոմեթեոսն ասում է, թե իր ցեղը Սիզիֆից էլ ավելի ծանր ճակատագրի է դատապարտված. «...Նա յուր մտքերն է ձգում դեպի բարձր, իսկ այն մտքերը գլորվում են ցած, նա բարձր է ձգում յուր կամքը – և կամքը գլորվում է ցած, նա բարձր է ձգում իր հոգին, և հոգին գլորվում է ցած» (ԵԺ I, 564): Լույսի և արդարության հաղթանակի համար արվեստագետի հավերժական մաքառման փոխաբերական զուգահեռն էր տեսնում այստեղ հայ բանաստեղծը:

Փ. Վարդազարյանից հետ ստացած պոեմի ձեռագիրը («Պոետն ու Մուսան» վերնագրով և «Նվեր հայոց գրողներին» ընծայականով) Թումանյանն ուղարկել է Մոսկվա «Վտակ» ժողովածուն կազմողներին: 1900 թ. նոյեմբերի 21-ին Մոսկվայից գրած նամակում Վրթ. Փափազյանը հայտնում էր Թումանյանին. «...Կարդացինք և վճռեցինք անփոփոխ, առանց մի բառ իսկ փոխելու տպագրել, որովհետև նրա մեջ չկա ոչինչ, որ դեմ լինի մեր ուղղության և որ կարելի լինի ջնջել... Պոեմադ բոլորիս վրա շատ լավ տպավորություն թողեց» (ԳԱԹ, ԹՖ №2303(1166)):

Սակայն մինչև ժողովածուի լույս տեսնելը (Թիֆլիս, 1901) պոեմի այդ

առաջին ավարտված և հավանության արժանացած տարբերակն արդեն չի բավարարել Թումանյանին: Ժողովածուի փորձատիպի (օտիսկի) վրա նա էական փոփոխություններ է մտցրել. կրճատվել և պոեմից հանվել է տողերի մոտ կեսը, նրանց փոխարեն ավելացվել են գրեթե նույն ծավալի նոր մասեր, բազմաթիվ ուղղումներ են մտցվել պահպանված տողերի մեջ: Ինչպես երևում է փորձատիպից, Թումանյանը ցանկացել է փոխել նաև երկի վերնագիրը՝ կոչելով «Անվերջ պոեմա (հատված)», բայց հետո նորից վերնագրել է «Պոետն ու Մուզան» և պահպանել «Հատված» ենթավերնագիրը: Այդ նշումով («Հատված») Թումանյանն, անշուշտ, նկատի ուներ ոչ թե իր երկի անավարտ կամ հատվածային բնույթը, այլ այն, որ պոեմի մեջ ներկայացվածը հայ գրողի անվերջ տառապանքների մի փոքր մասը, «հատվածն» է միայն: Այս ենթավերնագրի վրա որոշակի լույս է սփռում 1904 թ. Փ. Վարդազարյանին գրած մի ուրիշ նամակ, ուր, խոսելով կյանքի պրոզայիկ հանգամանքներում բարձր իդեալներով ապրող հոգիներին բաժին ընկնող անվերջ զրկանքների մասին, Թումանյանն ավելացրել է. «Մի խոսքով՝ պոետն ու մուզան, բայց ոչ թե իմ գրածը, այլ իմ ապրածը, այսինքն՝ ավելի մեծ չափով» (ԵԺ V, 280):

Սակայն «Վտակի» մեջ զետեղված տարբերակն էլ շուտով արդեն չբավարարեց հեղինակին: Կազմելով իր չափածո երկերի նոր ժողովածուն (ԲԹ), բանաստեղծը նորից զգալի փոփոխություններ մտցրեց պոեմի մեջ՝ կրճատելով մոտ 200 տող, ավելացնելով մի քանի ոչ մեծ հատվածներ, հղկելով որոշ տողեր: Այս բոլորի շնորհիվ ստեղծագործությունը դարձավ շատ ավելի հավաք ու նպատակասլաց: Հետագայում, պոեմը տեղադրելով ՀԳ-ի մեջ, Թումանյանը կատարել է միայն առանձին տողերի շտկումներ, բայց էական փոփոխություններ այլևս չի մտցրել:

Այսպիսով, մեզ հասած տվյալների հիման վրա կարելի է առանձնացնել պոեմի երեք հիմնական տարբերակ՝ չհաշված ստեղծագործական աշխատանքի միջանկյալ օղակները.

ա) «Վտակ» ժողովածուի համար նախապես ուղարկված տարբերակը՝ «Պոետն ու Մուսան (նվեր հայոց գրողներին)» վերտառությամբ, որը մեզ հասել է այդ գրքի համապատասխան էջերի պահպանված փորձատիպի ձևով: Պոեմի այդ տարբերակն ուներ 609 տող:

բ) «Վտակ» ժողովածուի մեջ տպագրված նոր խմբագրությունը՝ «Պոետն ու Մուզան (հատված)» վերտառությամբ, որը կազմված է 548 տողից:

գ) ԲԹ ժողովածուի մեջ և ՀԳ դասագրքում տեղ գտած վերջնական խմբագրությունը, որը նախորդից տարբերվում է հիմնականում մտցված զգալի կրճատումներով և պարունակում է ընդամենը 382 տող:

Սույն հրատարակության մեջ այդ տարբերակները և մյուս նյութերը

ներկայացվում են հետևյալ կարգով.

Իբրև հիմնական բնագիր, ինչպես արդեն նշվեց, տրվում է երրորդ տարբերակը՝ ՀԳ խմբագրությամբ (ԲԹ տարբերությունները ցույց են տրվում առանձին):

Տարբերակների բաժնում, նախ, տրվում է «Վտակ» ժողովածուի բնագիրն ամբողջությամբ (երկրորդ տարբերակ), որը թեև շատ ընդհանրություններ ունի ԲԹ և ՀԳ տեքստերի հետ, բայց և ունի կառուցվածքային և ոճական զգալի տարբերություններ, վերջնական խմբագրության մեջ չմտած հատվածներ: Դրանից հետո տրվում է «Վտակի» փորձատիպի խմբագրությունը (առաջին տարբերակ), սակայն ոչ թե ամբողջությամբ, այլ միայն այն հատվածները, որոնք չեն մտել ժողովածուի վերջնական խմբագրության մեջ կամ էական շեղումներ ունեն նրանից: Առանձին վերնագրի տակ նկարագրվում են նաև «Վտակի» փորձատիպի վրա կատարված բոլոր հավելումներն ու կրճատումները, ուղղումներն ու մշակման մյուս աշխատանքները:

Բացի «Պոետն ու Մուսայի» հիշյալ երեք հիմնական տարբերակներից, մեզ հասել են նաև պոեմի մի քանի թերի ինքնագրեր, հատվածներ և գրառումներ, որոնք նույնպես հրապարակվում են սույն հատորում: Առանձին է ներկայացվում Ա ինքնագիրը, իբրև համեմատաբար ամբողջական (բացակայում են միայն պոեմի առաջին էջերը), իսկ սևագիր հատվածները համարակալված և դասավորված են խմբագրության կողմից մեկ ընդհանուր վերնագրի տակ: Այդ բոլոր ինքնագրերը, դատելով նրանց բովանդակությունից և մշակման աստիճանից, նախորդել են առաջին և երկրորդ տարբերակներին: Թեև նրանք պարունակում են հետագա խմբագրություններին համընկնող շատ տողեր և հատվածներ, սակայն անհրաժեշտ համարվեց տպագրել նաև այդ հատվածները՝ նրանց վրա կատարված ստեղծագործական աշխատանքը և բնագրային տարբերություններն ավելի լրիվ ներկայացնելու նպատակով:

«Պոետն ու Մուսայի» մեջ ուղղակի կամ ձևափոխված տեսքով բանաստեղծը հիշատակել է մի շարք ինքնակենսագրական փաստեր, ժամանակակից հասարակական-գրական կյանքի իրողություններ: Ստորև ծանոթագրվում են այդ հիշատակությունները, ինչպես նաև պոեմում հանդիպող դիցաբանական անունները: Նախ ծանոթագրվում են պոեմի հիմնական տարբերակի համապատասխան տողերը, ապա նաև այն բառերն ու արտահայտությունները, որոնք հանդիպում են «Վտակ» ժողովածուի բնագրում, բայց չկան վերջնական խմբագրության մեջ:

Մանոթագրություններ հիմնական բնագրի

7 Պառնաս – լեռնային զանգված Հունաստանում, որի գագաթին, ըստ հունական դիցաբանության, բնակվում էին Ապոլլոնը և մուսաները: Այդ լեռան ստորոտում էր գտնվում Ապոլլոնի տաճարը:

8 Մուսա (մուսաներ) – Աստվածուհիներ, որոնք Զևսի և Մնեմոսինեի դուստրերն էին, բնակվում էին Հելիկոն և Պառնաս լեռների վրա: Ըստ Հեսիոդոսի՝ կային ինը մուսաներ, որոնք հովանավորում էին պոեզիայի, արվեստի և գիտության տարբեր բնագավառները: Փոխաբերական իմաստով՝ Մուսան բանաստեղծի (արվեստագետի) ոգևորության, ներշնչման աղբյուրն ու խորհրդանիշն է:

100-101 Ինձ մի անգամ առան-տարան
Հաշվապահի ուսումնարան:

Նկատի ունի Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ուր Թումանյանը սովորել է 1883-1886 թվականներին: Այդ տարիներին Ներսիսյան դպրոցում շատ մեծ տեղ էր հատկացվում մաթեմատիկական առարկաների, առևտրա-հաշվապահական գիտելիքների ուսուցմանը (տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 131-132): Հատուկ «հաշվապահի ուսումնարանում» Թումանյանը չի սովորել:

124 Ու պիսերի տվավ պաշտոն – Ակնարկում է Թիֆլիսի հայոց հոգևոր գրասենյակում (կոնսիստորիայում) ծառայության մտնելը, ուր իբրև գրագիր («պիսեր») Թումանյանն աշխատել է «հինգ հոգեհան տարիներ» (ԵԺ V, 64) – 1887-1892 թթ.:

140 Որ գրեցի մեծիս պարսավ – Թումանյանն ակնարկում է ինքնակենսագրական այն փաստը, որ 1892 թ. կոնսիստորիայից իր հեռացվելու առիթ էր եղել թեմական առաջնորդ Մամբրե եպ. Սանասարյանի և մյուս հոգևորականների դեմ պարսավալից բանաստեղծություններ գրելը («Զարամիտներին», «Դարձյալ նրանց», «Ազդ (Պահպանողականներին)» և այլն):

147 Հայտնի կանտոր ընկա շուտով – Այս և հաջորդ տողերում խոսվում է իբրև Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության գրասենյակապետ աշխատելու մասին: Այդ պաշտոնից, որ Թումանյանը վարել է 1892 թ. մարտից մինչև 1893 թ. հոկտեմբեր, նա ազատվել է իր դիմումի համաձայն: 1905 թ. գրած «Ինքնակենսագրության» մեջ, ի մի բերելով իր անհաջող պաշտոնավարությունները, բանաստեղծը գրել է. «Ծառայության եմ մտել մի քանի տեղ, բայց ամեն տեղ էլ չեն հավանել, այնպես որ «Ոռետն ու Մուզայի» մեջ ուղի՛ղն եմ ասել» (ԵԺ IV, 88):

164 Տերտերության տրվին խորհուրդ – Այս և հաջորդ տողերի

կենսագրական հիմքը քահանա ձեռնադրվելու խորհուրդներն են, որ 90-ական թթ. բարեկամները հաճախ տվել են Թումանյանին՝ նրան տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու նպատակով:

191 Ու գընացի խըմբագրություն – Այս տողով սկսվող հատվածում (մինչև 215 տողը) բանաստեղծը նկատի ունի «Մուրճ» ամսագիրը (սկսել է հրատարակվել 1889-ից) և նրա խմբագիր Ավետիք Արասխանյանին:

217 Դուրս եկավ էսպես մի նոր երգարան – խոսքը վերաբերում է Թումանյանի անդրանիկ գրքին («Բանաստեղծություններ», առաջին հատոր), որը լույս տեսավ 1890 թ. աշնանը Մոսկվայում:

218 Այնժամ մըտրակող մի թունդ պուբլիցիստ – Նկատի ունի «Մշակի» թղթակից Խ. Մալումյանի (Ազ-լեր) «Ակնարկներ. X» հոդվածը թերթի 1890 թ. №138-ում, որի մեջ կոպիտ ծաղրի ենթարկվեց բանաստեղծների նոր սերունդը, նրանց հետ նաև Թումանյանը: Սակայն պոեմի այս և հաջորդ տողերում (218-235, 280-297 և այլն) երգիծական միջոցներով ներկայացվում է ընդհանրապես «Մշակի» գրական քաղաքականությունը՝ սկսած թերթի խմբագիր Գր. Արծրունուց, որը 1891 թ. օգոստոսի 13-ին (№90) տպագրած ֆելիետոնում (Ասիացի ստորագրությամբ) խիստ քննադատել ու ծաղրել էր Թումանյանի «Կուրծքըս երբեմն եռ է գալիս ու հուզվում...» բանաստեղծությունը: Պոեմում «մտրակող» քննադատների անունից ասված խոսքերը՝ նոր բանաստեղծության «անիմաստ» լինելու, հին և նոր պոետների բացարձակ անհամատեղելիության, կամ «ով սովից մեռել՝ նա՛ է լավ գրել» անհեթեթ սկզբունքի մասին, գրեթե բառացի համընկնում են «Մշակի» մի շարք գրական ելույթների հետ (տես Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, 2-րդ հրատ., 1986, էջ 254-257):

245 Ավրորա – Հռոմեական դիցաբանության մեջ արշալույսի աստվածուհին (համապատասխանում է հունական Էոսին), որն ամեն առավոտ վեր է կենում օվկիանոսից և լույս է պարգևում աշխարհին:

266 Մինչև լըսեցի մի մեծ պարոնի – Այս և հաջորդ տողերում (մինչև 279) ակնարկը հայտնի կապիտալիստ Ալ. Մանթաշյանի մասին է, որը մի զրույցի ժամանակ արհամարհանքով է արտահայտվել բանաստեղծների վերաբերյալ՝ նրանց համարելով պարապ մարդիկ: Այդ մասին կա Թումանյանի մի գրառումը («Մանթաշովի ծիծաղը»), որը հրապարակվում է սույն հատորում:

274-275 Եվ խեղճ ընկերըս երբ որ սըրտացավ՝
Սա էլ պետքական մի մարդ է, ասավ...

Խոսքը վերաբերում է բանաստեղծի մտերիմ ընկեր և բարեկամ Փիլիպոս Վարդազարյանին, որը և ունեցել է հիշյալ զրույցը Ալ. Մանթաշյանի հետ:

302 Ոլիմպոս – Սրբազան լեռ Թեսալիայում, որի վրա, ըստ հին հույների պատկերացման, ապրում էին աստվածները Զևսի գլխավորությամբ:

303 Նեկտար – Ոլիմպոսի վրա ապրող աստվածների խմիչքը: Ամբրոս – աստվածների սնունդը: Նեկտարի և ամբրոսի շնորհիվ աստվածները մնում էին հավերժորեն երիտասարդ և անմահ:

Ծանոթագրություններ «Վտակ» ժողովածուի բնագրի

86-87 Ակնարկներով, օրեցօրով,
Ֆելիետոնով...

Այս բառերով արտացոլվել է այն փաստը, որ «Մշակի» էջերում Խ. Մալումյանը (Ազ-լեր) իր հոդվածները հաճախ տպագրում էր «Ակնարկներ» և «Օրեցօր» ընդհանուր վերնագրերի տակ, իսկ Գր. Արծրունին՝ «Ֆելիետոն» վերտառությամբ:

91 Միդասը այն հարուստ թագավորն էր, որ չհավանեց Ապոլլոնի երգը: Բանաստեղծության զայրացած աստվածը, պատժելու համար, իր քննադատի գլուխը զարդարեց իշիականջներով (Հ. Թումանյանի ծանոթագրությունը «Վտակ» ժողովածուի մեջ):

97 Արամազդ – Գերագույն աստվածություն հայոց դիցաբանության մեջ: Համապատասխանում էր հունական Զևսին կամ Դիոսին:

101 Հռչակավոր այն «մըտրակին» – Նկատի ունի «Մշակի» հռչակած «մտրակող ուղղությունը»՝ ազգային կյանքի արատները անխնա խարազանելու սկզբունքով:

145-146 Իսկ մենք ունենք ճոխ Հանգարան,
Պատրաստ հանգեր շարան-շարան...

Սա հավանաբար ակնարկ է Խորեն Գալֆայանի «Հանգարան կամ Բառգիրք հանգաց հայկազյան լեզվի» գրքի մասին: Այդ բառարանը հրատարակվել է 1862 թ. Թեոդոսիայում:

159-162 Յօղակն 'ի ճախր՝ յայեր ամբուռ.
Խօշիւն դուդել 'ի յամբ անկուռ.
Սաղպի արեկ՝ թնդմամբ տըրոփ.
Ջետ տիր ըռումբ՝ ազդու 'ի յոփ:

Այս քառատողը Թումանյանը քաղել է Ստեփանոս Ագոնցի «Ճարտասանութիւն» գրքից (Վենետիկ, 1775, էջ 57), իբրև անճաշակ բանաստեղծության և խրթին գրաբարի օրինակ: Քառատողի աշխարհաբար թարգմանությունը.

Անհուն օդի մեջ ճախրել ցանկացողը,
Եվ ամպերում աղմուկ հարուցանողը –
Արագորեն կըգահավիժի մեծ թնդյունով,
Ինչպես ծանր ռումբը սաստկապես ընկնում է փոսի մեջ։

164 Ձևս – Գերագույն աստվածություն հին հունական դիցաբանության մեջ (համապատասխանում է հայկական Արամազդին)։

265 Ապա ընկա հարուստ խանութ – Այս և հետագա տողերում (մինչև 280) խոսքը վերաբերում է 1886 թ. Ներսիսյան դպրոցից հեռանալուց հետո վաճառական Սալամբեգյանի խանութում իբրև «գուքնի աշկերտ» ծառայելու փորձին, որից պատանի Թումանյանը անմիջապես հրաժարվել է (տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 181-183)։

490 Հիշիր սոսկալի այն շար վիշապին – Այս և հաջորդ չորս տողերում պատմված է հրեշավոր վիշապ Պիթոնի առասպելը։ Պիթոնը հետապնդում էր երգի աստված Ապոլլոնին, բայց ի վերջո սպանվեց նրա նետից։ Այդ հաղթանակի վայրում Պառնաս լեռան ստորոտում, հիմնվեց Ապոլլոնի Դելփյան տաճարը։

ՍԵՎԱԳԻՐ ԵՎ ԱՆԱՎԱՐՏ ԵՐԿԵՐ

ԴԱՐՁ

(էջ 147) (ԵԼԺ 3, էջ 143)

Առաջին անգամ ՈՒՀ1, էջ 298-303, սևագիր ինքնագրի հիման վրա։ Տպագրվում է նույն անավարտ և անթվակիր ինքնագրից (ԴԱԹ, թղթ №164 (10ա)։

Գրված պետք է լինի 1890 թվականին՝ մինչև հուլիս ամիսը։ Դրա համար հիմք է տալիս հետևյալ փաստը։ 1890 թ. օգոստոսի 27-ին Ան. Աբովյանին գրած նամակում հիշատակվում է նրան ուղղված ոտանավոր-նամակը (տե՛ս սույն հրատ. առաջին հատորը), իսկ վերջինիս մեջ Թումանյանը հայտնում է, որ Թիֆլիսի հոգևոր կոնսիստորիայի աշխատակիցները իր դարակից տարել են «մի քանի մանր ոտանավոր» և «երկու հատ էլ պոեմա, սևագրություն «Մեհրի» և նոր «Դարձ» անունով պոեմա, որ չկա»։ Պահպանված ձեռագիրը, հավանաբար, պոեմի նախնական սևագիր և անավարտ տարբերակն է, իսկ մաքրագիր (գուցե և ավարտված) օրինակը կորել է։

«Դարձը» որոշ ինքնակենսագրական փաստերի, տպավորությունների

և հիշողությունների հիման վրա գրված ստեղծագործություն է, որի մեջ փորձ է արվում վերստեղծելու ժամանակակից երիտասարդ մարդու հավաքական կերպարը: Անավարտ պոեմում շարադրված շատ փաստեր՝ մանկական հիշողությունները, ծերերի պատմածները, գավառում (Ջալալօղլի) սովորելու և ապա մեծ քաղաք (Թիֆլիս) տեղափոխվելու պատմությունը, նույնիսկ պահպանված առաջին բանաստեղծության («Հոգուս հատոր, սրտիս կտոր...») հիշատակությունը և այլն, գրված են սեփական հուշերի հիման վրա:

Պոեմի հերոս Սուրենը, անշուշտ, բանաստեղծի «ալթեր էգոն» է: Հետաքրքիր է, որ այդ անունն է կրում նաև 1890-ական թվականների սկզբին գրած «Դեպի հայրենիք» անավարտ վիպակի, ինչպես նաև արձակ և դրամատիկական մի քանի հատվածների (<Սուրենը>, «Խավարի մեջ», «Խնջույքից հետո» և այլն) գլխավոր հերոսը: Ամենուր Սուրենը հանդես է գալիս իբրև ժամանակի առաջավոր երիտասարդության ներկայացուցիչ, ժողովրդասիրական գաղափարներով տոգորված հերոս: Ավելացնենք, որ պատանի Թումանյանին Սուրեն անունով է հանդես բերել նաև Անուշավան Աբովյանը իր «Լևոնի հեքիաթը» հուշագրական գրքում, որը լույս տեսավ 1917 թ.: Մի քանի տարի անց «Իմ հուշատետրը» ձեռագրում նա այդ մասին վկայել է. «Էս աշխատությունը գրի առնելուց առաջ հարկավոր եմ համարում հայտնել, որ «Լևոնի հեքիաթը» գրքույկիս վերջին գլուխների մեջ հիշված պատանի Սուրենը մեր հռչակավոր բանաստեղծ Թումանյանն է, որի մասին ավելի երկար եմ խոսելու սույն հատորում՝ մեջ բերելով նրա 19 հատ նամակները» (ԳԱԹ, Թֆ №711):

Այս սևագիր և անավարտ պոեմն ընդհատվում է հերոսի հոգևոր հասունացման բուն սկզբում, և դժվար է ասել, թե սյուժետային և գաղափարական ինչ զարգացում էր ունենալու ստեղծագործությունը: Սակայն «Դարձ» վերնագիրը հուշում է, որ շարունակության մեջ պատկերվելու էր այն հոգեբանական շրջադարձը, որ կատարում է հերոսը քաղաքից դեպի գյուղաշխարհ, դեպի ժողովրդի հոգսերի ու կարիքների ըմբռնում և ամոքում: Դա այն շրջադարձն է, որի մասին «Խավարի մեջ» դրամատիկական հատվածի հերոս Սուրենն ասում է. «Հա՛, այնտեղից եկել եմ այստեղ... Կգործեմ ձեր մեջ,– ինչ որ սովորել եմ, գիտեմ, փոխանակ քաղաքում իզուր մաշելու, այստեղ գործ կգնեմ ձեր մեջ, եթե ինձ համար չլինեմ, կապրեմ գոնե ձեզ համար, գոնե ձեզ օգուտ տված կլինեմ» (ԵԺ III, 442):

Այսպիսով, «Դարձը» երիտասարդ Թումանյանի գաղափարական և գեղարվեստական որոնումների շղթայի հետաքրքիր օղակներից մեկն է:

Ինչպես երևում է ինքնագրից, նրա որոշ հատվածներ արձակ

գրառումներ են, որոնք խառը կարգով հաջորդում են չափածո մասերին: Արձակ հատվածները փաստորեն պլան-կոնսպեկտի բնույթ ունեն: Դրանք հետագայում, անշուշտ, պետք է վերածվեին չափածոյի: Մենք պահպանել ենք ինքնագրի այդ յուրահատկությունը (ի տարբերություն նախորդ հրապարակման, որի մեջ արձակ մասերն էլ արհեստականորեն բաժանվել են տողերի):

Նկատի ունենալով երկի խիստ սևագիր բնույթը և չափածո ու արձակ հատվածների խառը միահյուսումը՝ տողերը համարակալված չեն, իսկ բնագրային տարբերությունները տրվում են հիմնական տեքստի մեջ (ա, բ, գ նշումներով):

ԳՐԱԳԻՐ ՄՈՒՉԱՆ
(էջ 154) (ԵԼԺ 3, էջ 149)

Տպագրվում է առաջին անգամ ԳԱԹ ԹՖ-ում և ԹԹ-ում պահպանված սևագիր պատառիկների հիման վրա (ԳԱԹ, ԹՖ №165 (7գ), ԹԹԳ1079/2-5):

Դատելով ձեռագրից և մեզ հասած մասերի բովանդակությունից՝ այս ստեղծագործական մտահղացումը նույնպես վերաբերում է 1890-ական թվականների սկզբին, երբ Թումանյանը ծառայում էր Թիֆլիսի հայոց կոնսիստորիայում (մինչև 1892 թ. մարտը), և կամ դրանից անմիջապես հետո, երբ բանաստեղծը կարող էր երգիծական հայացքով նայել իր նախկին պաշտոնավարության «հինգ հոգևոր տարիների» դեպքերին: Ինչպես և «Դարձ» սևագիր և անավարտ պոեմում, այստեղ ևս բազմազան երանգներով արտացոլվել են գրասենյակում ծառայող հոգևորականների քսու բարքերն ու մտքերը, այդ միջնորտում տառապող երիտասարդ բանաստեղծի կրած հալածանքներն ու զրկանքները: Այդ առումով «Գրագիր Մուչան» Թումանյանի առաջին գործերից է, որոնցով սկիզբ է առնում նրա պոեզիայի առաջատար գծերից մեկը՝ արվեստագետի կոչման և ժամանակակից հասարակության մեջ նրա կրած հոգևոր տառապանքների թեման:

Հատկանշական է նաև, որ առաջին անգամ այս սևագիր մտահղացման մեջ է հանդես գալիս Մուսայի կերպարը, որը բանաստեղծի երկվորյակն է, նրա ոգևորության աղբյուրը, բայց ստիպված է թաքնվել գրասենյակի մարդկանց քննախույզ հայացքից: Դրանով երիտասարդ Թումանյանն ակնարկում էր իր բանաստեղծական փորձերի նկատմամբ շրջապատի շարամիտ վերաբերմունքը: Սկսվելով այս ստեղծագործությունից՝ Պոետի և Մուսայի հանդիպագրման, նրանց զրույցի և վեճի գեղարվեստական

հնարանքը Թումանյանի միտքն զբաղեցրել է ամբողջ 90-ական թվականների ընթացքում, մինչև որ իր լավագույն մարմնավորումն ստացավ նրա երգիծական պոեմի մեջ: Այս բոլորը հիմք է տալիս տվյալ սևագիր հատվածները դիտելու իբրև «Պոետն ու Մուսան» պոեմի նախնական, ամենավաղ տարբերակը:

Նկատի առնելով այս սևագիր հատվածների անկատար բնույթը՝ տեքստային տարբերությունները տրվում են հիմնական բնագրի հետ՝ տողատակերում:

<ՄԻ ԱՆՀԱՅՏ ՊՈԵՄԻ ՍԿԻԶԲԸ>

(«Ես վայր եմ իջնում Հայոց լեռներից...»)
(էջ 163) (ԵԼԺ 3, էջ 157)

Առաջին անգամ՝ «Հորիզոն», 1915, 29 հոկտեմբերի, №243, այնուհետև՝ ԵԺ II, 263: Արտատպվում է այդ աղբյուրից:

Թերթի այդ համարում Թումանյանը տպագրել է հատուկ ծանուցում այն մասին, թե ինչ հանգամանքներում է կորել իր «Հին կռիվը» պոեմի ձեռագիրը Թիֆլիսի ժանդարմական վարչության տարած այլ թղթերի հետ (տե՛ս այդ պոեմի ծանոթագրությունը սույն հրատարակության 4-րդ հատորում): Ծանուցման մեջ նշվում է, որ բացի «Հին կռվի» հինգ մասերի ձեռագրերից, կորած նյութերի մեջ եղել են «Հազարան բըլբուլ» հեքիաթ-պոեմի սկիզբը և միջից մի քանի թղթեր»: «Իսկ երրորդը մի պոեմ է, որ էս տողերով է սկսվում»,– ավելացնում է Թումանյանը և մեջ բերում այս չորս տողերը:

Այդ կորած պոեմի մասին ուրիշ ոչ մի տեղեկություն մեզ չի հասել, հայտնի չեն ոչ նրա վերնագիրը և ոչ էլ գրության թվականը: Դատելով պահպանված քառյակից՝ դա թերևս ազգային-հայրենասիրական բովանդակության պոեմ է եղել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	բնագիր	դասընթացի	ծանոթագր.
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	7		
ՊՈԵՄՆԵՐ	9		
Մարոն	11	167	524
Լոռեցի Սաքոն	18	178	527
Ալէք	26	244	535
Մեհրի	36	246	537
Մերժած օրենք	52		539
Հառաչանք	66	249	541
Անուշ	80	257	549
Դեպի Անհունը	115	371	563
Պոեան ու Մուսան	131	432	569
ՍԵՎԱԳԻՐ ԵՎ ԱՆԱՎԱՐՏ ԵՐԿԵՐ	145		577
Դարձ	147		577
Գրագիր Մուզան	154		579
<Մի անհայտ պոեմի սկիզբը>	163		580
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	165		
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	491		
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	493		
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԷՊՈՍԸ	496		
ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ	582		

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ալեք *26*
Անուշ *80*
Գրագիր Մուզան *154*
Դարձ *147*
Դեպի Անհունը *115*
Լոռեցի Սաքոն *18*
Հառաչանք *66*
Մարոն *11*
Մեհրի *36*
Մերժած օրենք *52*
«Մի անհայտ պոեմի սկիզբը» *163*
Պոետն ու Մուսան *131*

ՀՏԴ 821.19-1Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Թ 950

Թումանյան Հովհաննես
Թ 950 Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով/
Հովհ. Թումանյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտ, 2019.
Հատոր երրորդ: Պոեմներ - 584 էջ:

ՀՏԴ 821.19-1Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)-5

Հովհ. Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորն ընդգրկում է բանաստեղծի գեղարվեստական ժառանգության կարևորագույն բաժիններից մեկի՝ պոեմների մեծ մասը («Անուշը», «Լոռեցի Սաքոն», «Հառաչանքը», «Պոետն ու Մուսան», «Դեպի Անհունը» և այլն): Հրապարակվում են նաև բոլոր պահպանված տարբերակները՝ նախնական խմբագրություններ, ձեռագիր հատվածներ և գրառումներ, տպագիր աղբյուրներում տեղ գտած բնագրային տարբերություններ:

Հատորն ունի ընդհանուր ներածական հոդված և ծանոթագրություններ:

Նախատեսվում է բանասերների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ
ՊՈԵՄՆԵՐ

Ձևավորումը և էջադրումը՝ Մանե Խաչատրյանի

Գրքի կազմը ձևավորվել է Գարեգին Երիցյանի
հեղինակային էքսլիբրիսներով:

[5000]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0678310

A II
109628



ISBN 978-9939-1-0881-0
9 789939 108810